

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» դեկտեմբերի 2009թ.

N52-Ն

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2010-2013ԹԹ. ՔԱՌԱՄՅԱ
ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին և 83-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է՝*

1. Հաստատել Երևան քաղաքի զարգացման 2010-2013թթ. քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշմամբ հաստատված Երևանի զարգացման 2010-2013թթ. քառամյա ծրագիրը ենթակա է հրապարակման «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 56-րդ և 63-րդ հոդվածներով սահմանված կարգով, իսկ ծրագրի հիմնական ցուցանիշները, վիճակագրական և գրաֆիկական տվյալները նաև առանձին տեղեկատուներով և գրքույկներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ.ԲԵԳԼԱՐՅԱՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Նախաբան	3
Երևանի զարգացման 2010-2013 թվականների ծրագրի գերակայությունները	6
Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակի բնութագիրը	10
Քաղաքաշինություն և ճարտապետություն	66
Արտաքին ձևավորում և գովազդ	70
Շինարարության և բարեկարգման, ճանապարհաշինության ոլորտ	75
Անշարժ գույքի կառավարում	93
Կոմունալ ոլորտ	104
Առևտրի և սպասարկումների ոլորտ	140
Տրանսպորտ	145
Բնապահպանություն	157
Կրթության ոլորտ	161
Առողջապահություն	175
Սոցիալական ապահովություն	185
Երեխաների իրավունքների պաշտպանություն	193
Մշակույթ, երիտասարդություն և սպորտ	197
Միջազգային համագործակցություն	210
Սփյուռքի հետ արդյունավետ աշխատանքների կազմակերպում	212
Զբոսաշրջություն	214
Պատմության և մշակույթի հուշարձաններ	220
Քաղաքացիների դիմումներ	222
Անձնակազմի կառավարում	224
Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից նախատեսվող ներդրումային ծրագրերը	227
Երևան քաղաքի վարչական շրջանների սոցիալ-տնտեսական զարգացման 2010-2013թթ. ծրագիրը	230
Աջափնյակ վարչական շրջան	230
Ավան վարչական շրջան	244

Արաբկիր վարչական շրջան	257
Դավթաշեն վարչական շրջան.....	274
Էրեբունի վարչական շրջան.....	298
Կենտրոն վարչական շրջան.....	313
Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	333
Նոր Նորք վարչական շրջան	363
Նորք-Մարաշ վարչական շրջան.....	379
Նուբարաշեն վարչական շրջան.....	390
Շենգավիթ վարչական շրջան.....	396
Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	414
Եզրափակիչ դրույթներ	429
<i>Հավելված 1 «Երևանի 2010թ. բյուջե»</i>	
<i>Հավելված 2 «Քաղաքաշինություն և ճարտարապետություն»</i>	
<i>Հավելված 3 «Երևանի վարչական շրջանների ցուցանիշները»</i>	
<i>Հավելված 4 «Երևանի քաղաքապետարանի «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲ ընկերության 2010թ. ծրագիրը</i>	

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը 2791 տարեկան է:

Էրեբունի-Երևանը հիմնադրել է Արգիշտի Առաջին թագավորը մ.թ.ա. 782 թվականին:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա: Քաղաքի կլիման խիստ ցամաքային է՝ շոգ ու չոր ամառ և համեմատաբար խստաշունչ ձմեռ:

Մայրաքաղաք Երևանը զբաղեցնում է 227,0 քառ. կմ տարածք, վարչական սահմանով հարում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին: Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: Մայրաքաղաքի բնակչությունը 1 մլն 113 հազար է, որը Հայաստանի Հանրապետության բնակչության ավելի քան 34,0% -ն է, իսկ Հայաստանի մարզերից օրական Երևան ժամանող և մեկնող քաղաքացիների թիվը կազմում է 400,0-450,0 հազար մարդ:

Երևանը Հայաստանի խոշորագույն տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է, հանդիսանում է տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային և տարանցիկ հանգույց: Հանրապետության տնտեսական ակտիվ բնակչության 29,0%-ի պայմաններում (345.9 հազար մարդ) մայրաքաղաքի տեսակարար կշիռը հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) կառուցվածքում կազմում է շուրջ 52,0%-ը, արտադրական հզորությունների գրեթե կեսը, շինարարության ոլորտի՝ 88,0%-ը շահագործման հանձնված բնակելի տների 84,0%-ը, արդյունաբերության արտադրանքի 49,0%-ը, (այդ թվում մշակող արդյունաբերության 61,0%-ը), մանրածախ ապրանքաշրջանառության 84,0%-ը, հանրային ծառայությունների ծավալի 91,0%-ը, այդ թվում հյուրանոցների ծառայությունների 89,9%-ը, տրանսպորտի ծառայությունների 89,1%-ը, ֆինանսական գործունեության 97,0%-ը, անշարժ գույքի հետ կապված գործառույթների 87,0%-ը, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի ծառայությունների 99,0%-ը, արտահանման 52,0%-ը, ներմուծման 82,0%-ը:

Երևանի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման ասպարեզում զգալի նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ այստեղ են գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Հանրապետության Ազգային ժողովն ու կառավարությունը, բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը:

Քաղաքում են գործում Գիտությունների ազգային ակադեմիան և իր էությամբ եզակի՝ հին ձեռագրերի կենտրոն Մատենադարանը, տասնյակ գիտական հաստատություններ, շուրջ 70 համալսարաններ և ինստիտուտներ, երկու տասնյակ թատրոններ և մոտ 60 թանգարան, համերգասրահներ, մարզական կենտրոններ, 21 եկեղեցի: Մայրաքաղաքում են գտնվում օտարերկրյա պետությունների 25 դեսպանատներ և 21 հյուպատոսություններ, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերը, ֆինանսական հաստատությունները:

Այսօր Երևանում ստեղծված է սփյուռքի ներուժի ներգրավման, զբոսաշրջության խթանման, ներդրումային և գործարար բարենպաստ միջավայր, իսկ Հայաստան տարեկան ժամանող շուրջ կես միլիոն զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը դարձել է հիմնական հանգրվանը: Պատմամշակութային հնագույն հարուստ ժառանգության, մայրաքաղաքի տարածքում գտնվող պատմահնագիտական արժեքների պահպանման տեսանկյունից ծրագրում առանձնապես կարևորվում է «Էրեբունի» ամրոցի վերականգնումը և այն աշխարհին պատշաճ ներկայացնելը: Այդ տեսանկյունից կարևորվում է «Էրեբունի-Երևան» տոնի համաքաղաքային ընդգրկումը Երևանի զարգացման ծրագրերում, որի հիմքը դրվեց 2009 թվականի հոկտեմբերի 11-ին՝ իր բովանդակությամբ և ծավալով աննախադեպ համաժողովրդական տոնակատարությամբ:

Երևանի զարգացման 2010-2013 թվականների ծրագրի նպատակն է Երևան քաղաքի կայուն և համաչափ զարգացման ապահովումը, բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը և աղքատության կրճատումը՝ որպես հետևանք երաշխավորելով երևանցիների կյանքի որակի էական բարելավումը: Երևանը պետք է դառնա մաքուր, կանաչ ու բարեկարգ, աշխատանքի և կարգուկանոնի,

հարմարավետ, ավանդույթների և ապագայի քաղաք, որտեղ ապահովված կլինեն հասարակության յուրաքանչյուր անդամի անվտանգ և արժանավայել կյանքը, ինքնաարտահայտման հնարավորությունը, բավարարված կլինեն սոցիալական ապահովության կարիք ունեցող քաղաքացիների նվազագույն անհրաժեշտ կարիքները:

Ծրագիրը մշակվել է հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների ծրագրի հիմնադրությունները, բովանդակում է Երևանի սոցիալ-տնտեսական վիճակը և զարգացման հիմնական ուղղությունների, տարածական պլանավորման և ենթակառուցվածքների ընդհանուր զարգացման վիճակի վերլուծությունն ու կարճաժամկետ կանխատեսումները, Երևանի վարչական շրջանների զարգացման ծրագրերը, ինչպես նաև առկա ռեսուրսները: Փաստաթղթի հիմնական ուղղություններից է Երևան քաղաքում կառավարման համակարգի բարեփոխումները, տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովումը, քաղաքային իշխանությունների և հանրության փոխադարձ վստահության մթնոլորտի ամրապնդումը:

Ծրագրի իրականացման կայուն երաշխիքներն են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Երևանի՝ որպես համայնքի նոր իրավական կարգավիճակը, Երևան քաղաքում ժողովրդավարական ընտրությունների միջոցով ձևավորված տեղական ինքնակառավարման մարմինները՝ Երևանի քաղաքապետը և Երևանի ավագանին:

Երևանի զարգացման 2010-2013 թվականների ծրագրի լիարժեք իրականացումը կարող է հիմնարար նախադրյալներ ստեղծել մայրաքաղաքի զարգացման երկարաժամկետ ծրագրերի մշակման համար:

Ե Ր Ե Վ Ա Ն Ի Ջ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն 2010-2013

Թ Վ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ի Ծ Ր Ա Գ Ր Ի

Գ Ե Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր Ը

Երևանի զարգացման 2010-2013 թվականների քառամյա ծրագրի հիմնական գերակայություններն են՝

- ✓ *Երևանի տարածական համաչափ զարգացումը և պլանավորումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում,*
- ✓ *մարդկային զարգացումը, բնակչության կենսական շահերը և զբաղվածությունը, գործազրկության և աղքատության կրճատումը՝ տնտեսական և քաղաքացիական կյանքին բնակչության մասնակցությունը խթանելու նպատակային տնտեսական և սոցիալական քաղաքականության միջոցով,*
- ✓ *կառավարման համակարգի բարեփոխումները և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովումը՝ այդ նպատակով իրավական դաշտի կատարելագործումը, համակեցության և համաքաղաքային կանոնների ընդունումն ու ներդրումը,*
- ✓ *համայնքային ծառայողների մասնագիտական որակավորման և գործունեության արդյունավետության էական բարձրացումը,*
- ✓ *մակրոտնտեսական կայունության և տնտեսական աճի տեմպերի ապահովմանը նպաստելը՝ տնտեսության կառուցվածքի անընդհատ բարելավմամբ, որը թույլ կտա կրճատել մայրաքաղաքի համայնքների միջև բնակչության եկամուտների տարբերությունը,*
- ✓ *տնտեսական գործունեության ազատությանն ու ազատ տնտեսական մրցակցությանը նպաստելը՝ բոլորի համար հավասար մրցակցային պայմանների, գործարարության և ներդրումների բարենպաստ միջավայրի ապահովմամբ,*

- ✓ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներից բխող՝ Երևանի բնակչության պաշտպանության և անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովումը,
- ✓ քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցումը և որակի էական բարձրացումը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը, դրանց հսկողության հարցում հասարակության հետ հետադարձ կապի ապահովումը,
- ✓ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, որը կապահովի համացանցի միջոցով ծառայությունների մատուցում՝ նվազագույնի հասցնելով շփումը համայնքային ծառայողի ու քաղաքացու միջև և այդպիսով էապես կրճատելով նաև կոռուպցիայի ռիսկերը.
- ✓ պետական, համայնքային և մասնավոր գործընկերության արդյունավետությունը, կորպորատիվ կառավարման ներդրումը,
- ✓ գործարարության և ներդրումային միջավայրի բարելավումը,
- ✓ Երևանի ժամանակակից չափանիշներին համապատասխան արտաքին ձևավորումը,
- ✓ Մայրաքաղաքի ջրամատակարարման, աղբահանության, սանմաքրման, կանաչապատման և բարեկարգման, բազմաբնակարան բնակելի շենքերի կառավարման ոլորտներում իրական բարեփոխումները և նախատեսված ծրագրերի արդյունավետ իրականացումը, բակային տարածքների բարեկարգման միջոցառումների շարունակականությունը,
- ✓ Երևան քաղաքում ուղևորատար տրանսպորտի զարգացման ռազմավարության ներդրումը,
- ✓ հարկային, բյուջետային և ֆինանսական ոլորտների բարեփոխումները,
- ✓ համայնքի եկամուտների հավաքագրման և տնօրինման արդյունավետության ու թափանցիկության ապահովումը և համայնքային գույքի արդյունավետ կառավարումը,
- ✓ Երևանի քաղաքացիների սոցիալական պաշտպանվածության ապահովումը, այդ նպատակով սոցիալական ծրագրերի իրագործումը՝ նաև մասնավոր հատվածի մասնակցությամբ՝ ուղղված հաշմանդամներին, ծնողազուրկ

- երեխաներին, բազմազավակ և անապահով ընտանիքներին ու փախստականներին,
- ✓ երեխաների իրավունքների պաշտպանությունը և անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը,
 - ✓ ժողովրդագրական ակտիվ քաղաքականության իրականացումը, որպես ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ և ընտանիքը համարելով համայնքի ժողովրդագրական քաղաքականության հիմնական օբյեկտ՝ ուղղված ընտանիքի ամրապնդմանը, ծնելիության մակարդակի աճին, մայրության և մանկության պաշտպանությանը, կյանքի տևողության ավելացմանը, մահացության մակարդակի նվազեցմանը, ներգաղթի խրախուսմանը,
 - ✓ հասարակության մշակութային մակարդակի և մշակութային արտադրանքի որակի բարելավումը, ազգային մշակութային հիմքերի պահպանումը,
 - ✓ մայրաքաղաքի մտավոր ներուժի զորացմանը միտված հեռանկարային քաղաքականության իրականացումը, կրթական համակարգի վերակառուցումը և համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին և մայրաքաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման կարիքներին, ուսուցման առաջատար տեխնոլոգիաների ներդրումը, կրթության որակի էական բարելավումը և կրթության հասանելիության մակարդակի բարձրացումը բնակչության անապահով խմբերի համար,
 - ✓ գիտական ներուժի և ինովացիոն ծրագրերի ներգրավումը կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ դրանց արդիականացումն արդյունավետ ապահովելու նպատակով,
 - ✓ համամարդկային ու ազգային արժեքների, ազգային ավանդույթների, հոգևոր, պատմահնագիտական ու մշակութային ժառանգության պահպանման ու դրանց վերարտադրության ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը,
 - ✓ մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիության ապահովումը,
 - ✓ քաղաքաշինության հարատև զարգացումը, ներառյալ՝ ներդաշնակ կենսատարածքի ձևավորումը և նպաստումը բնակչության տարածքային

համաչափ բաշխվածությանը, քաղաքաշինական ոլորտում գործարար ակտիվության համար բարենպաստ միջավայրի ձևավորումը,

- ✓ առողջապահության առավել արդյունավետ համակարգի ստեղծումը, որը նախատեսում է առողջ սպրեյակերպի արմատավորում, կեղծված դեղորայքի տարածման կանխում, հիվանդացության, հատկապես՝ ճառագայթային, սուր վարակիչ, համաճարակային հիվանդությունների, կենսաբանական ահաբեկչության ու թմրամոլության կանխարգելում, լայն տարածում ստացած հիվանդությունների վաղ հայտնաբերում, ախտորոշում ու բուժում, մայրության ու մանկության պաշտպանություն,
- ✓ միջազգային կապերի ընդլայնումը, քույր և գործընկեր քաղաքների միջև արդյունավետ համագործակցությունը,
- ✓ սփյուռքի հետ արդյունավետ աշխատանքների կազմակերպումը և զբոսաշրջության զարգացումը:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ժողովրդագրական իրավիճակը

2009թ. տարեկգրի դրությամբ Երևան քաղաքի մշտական բնակչությունը 227.0 քառակուսի կիլոմետր տարածքի վրա կազմել է 1111.3 հազար մարդ, իսկ բնակչության խտությունը՝ 4896 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա: Զբաղեցրած տարածքով ամենամեծ վարչական շրջաններն են՝ Էրեբունին՝ 4841 հա, Շենգավիթը՝ 4150 հա, Մալաթիա-Սեբաստիան՝ 2580 հա, Աջափնյակը՝ 2568 հա, իսկ ամենափոքր տարածք զբաղեցնում են՝ Նորք-Մարաշը՝ 460 հա, Դավթաշենը՝ 671 հա, Ավանը՝ 837 հա: Երևանի բնակչության մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն Նոր-Նորք վարչական շրջանը՝ 13,1% (145.2 հազ. մարդ), Շենգավիթը՝ 13,0% (144.6 հազ. մարդ), Մալաթիա-Սեբաստիան՝ 12,7% (141.0 հազ. մարդ), Արաբկիրը և Կենտրոնը՝ համապատասխանաբար 11,8% (131.1 հազ. մարդ) և 11,7% (130.0 հազ. մարդ): Ամենափոքր տեսակարար կշիռն ունեն Նուբարաշենը՝ 0,9%-ը (9.6 հազ. մարդ), Նորք-Մարաշը՝ 1,1% (11.3 հազ. մարդ):

Աղյուսակ¹

Երևանի վարչական շրջանների տարածքի և բնակչության դինամիկան

2009թ. հունվարի 1-ի դրությամբ

	Տարածքը, հա	Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը, %	Բնակչության թվաքանակը	Երևանի բնակչության թվաքանակում տեսակարար կշիռը, %
ք. Երևան	22700	-	1111.3	-
Աջափնյակ	2568	11,3	107.5	9.67
Ավան	837	3.7	50.9	4.58
Արաբկիր	1235	5.4	131.1	11.78
Դավթաշեն	671	2.9	40.8	3.67
Էրեբունի	4841	21.3	120.6	10.85
Կենտրոն	1420	6.2	130.0	11.7

¹ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, էջ 193

Մալաթիա-Մեքաստիա	2580	11.4	141.0	12.69
Նոր Նորք	1447	6.4	145.2	13.06
Նորք-Մարաշ	460	2.03	11.3	1.07
Նուբարաշեն	1811	7.9	9.6	0.85
Շենգավիթ	4150	18.3	144.6	13.01
Քանաքեռ-Զեյթուն	810	3.57	78.7	7.07

Աղյուսակ 2

Բնակչության թվաքանակի դինամիկան ըստ վարչական շրջանների

Հունվարի 1-ի դրությամբ, հազ.մարդ

Վարչական տարածքների անվանումը	Բնակչության թվաքանակը			
	2006	2007	2008	2009
ք. Երևան	1103.8	1104.8	1107.8	1111.3
Աջափնյակ	106.7	106.8	107.1	107.5
Ավան	50.4	50.5	50.8	50.9
Արաբկիր	131.6	131.4	131.3	131.1
Դավթաշեն	40.4	40.4	40.6	40.8
Էրեբունի	119.5	119.8	120.1	120.6
Կենտրոն	129.7	129.7	129.7	130.0
Մալաթիա-Մեքաստիա	140.9	140.6	140.6	141.0
Նոր Նորք	143.3	143.8	144.5	145.2
Նորք-Մարաշ	11.6	11.5	11.4	11.3
Նուբարաշեն	9.5	9.5	9.5	9.6
Շենգավիթ	142.2	142.8	143.8	144.6
Քանաքեռ-Զեյթուն	78.0	78.1	78.4	78.7

2008թ. Երևանում բնակչության բնական հավելաճի² և միգրացիայի ցուցանիշներում արձանագրված փոփոխությունների հետևանքով Երևանի բնակչության թվաքանակը, տարեսկզբի համեմատ, աճել է 3.5 հազարով կամ 0,32%-ով:

Աղյուսակ 3

Բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները, 2005-2008թթ.³

		2005		2006		2007		2008	
		ՀՀ	Երևան	ՀՀ	Երևան	ՀՀ	Երևան	ՀՀ	Երևան
1.	Ծնվածների թվաքանակը	37625	12242	37639	12405	40105	13423	41185	13984
2.	Բնական աճ	11255	3198	10437	3170	13275	4623	13773	4972
3.	Ծնվածների թվաքանակը 1000 բնակչի հաշվով	11.7	11.1	11.7	11.2	12.4	12.1	12.7	12.6
4.	Բնական աճը 1000 բնակչի հաշվով	3.5	2.9	3.2	2.9	4.1	4.2	4.2	4.4


² Բնակչության բնական հավելաճի գործակից՝ ծնելիության և մահացության ընդհանուր գործակիցների տարբերությունն է:

³ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Կիճակագրական ժողովածու, 2009, էջ 17-21

2005-2008թթ. նկատվել է ծնելիության մակարդակի բարձրացում ինչպես հանրապետության մակարդակով, այնպես էլ Երևան քաղաքում: Հայաստանում ծնվածների թիվը 2007 թվականի համեմատ 2008թ. ավելացել է 1080-ով կամ 2,69%, Երևանում 2008թ. նույն ցուցանիշն աճել է 4,18%-ով: Հայաստանում ծնվածների թվաքանակում Երևանի ցուցանիշը 2005թ. կազմել է 32,54%, 2006թ.՝ 32,96%, 2007թ.՝ 33,47%, իսկ 33,95%-ը: Ծնվածների թվաքանակը մայրաքաղաքում 2008թ. կազմել է 13984, որը 2007թ. համեմատ աճել է 4,2%-ով:

Գրաֆիկ 1

Բնակչության բնական աճի դինամիկան



2006-2008թթ. ընթացքում, չնայած բնակչության բնական աճը Երևան քաղաքում ունեցել է դրական միտում, սակայն այն նվազել է Արաբկիր և Նորք-Մարաշ վարչական շրջաններում:

Աղյուսակ 4

Բնակչության բնական շարժի ցուցանիշներն ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների

		2005		2006		2007		2008	
		Ծնունդներ	Բնական աճ (+, -)	Ծնունդներ	Բնական աճ (+, -)	Ծնունդներ	Բնական աճ (+, -)	Ծնունդներ	Բնական աճ (+, -)
	ք.Երևան	12281	3171	12405	3170	13423	4623	13984	4922
1.	Աջափնյակ	1052	224	1118	229	1190	306	1269	388
2.	Ավան	518	169	500	133	613	287	486	138
3.	Արաբկիր	1006	209	1010	-152	1077	-114	1039	-156
4.	Դավթաշեն	360	127	333	118	372	185	438	219
5.	Էրեբունի	1583	425	1641	437	1659	520	1828	630
6.	Կենտրոն	1241	83	1211	177	1238	210	1287	303
7.	Մալաթիա-Սեբաստիա	1887	830	1845	740	2045	1028	2234	1171
8.	Նոր Նորք	1608	621	1611	579	1781	768	1852	840
9.	Նորք-Մարաշ	83	-59	94	-39	80	-51	112	-11
10.	Նուբարաշեն	143	78	125	45	133	54	147	64
11.	Շենգավիթ	2003	700	2099	738	2317	1117	2322	981
12.	Քանաքեռ-Զեյթուն	797	182	818	165	918	313	970	355

Երևան քաղաքում վերջին տարիներին նկատվում է գրանցված ամուսնությունների աճ, որը կազմում է հանրապետության ցուցանիշի 36,0%-ը:

Աղյուսակ 5

Ամուսնությունները և ամուսնալուծությունները

		2005		2006		2007		2008	
		ՀՀ	Երևան	ՀՀ	Երևան	ՀՀ	Երևան	ՀՀ	Երևան
1.	Ամուսնությունների թիվը	16624	5965	16887	6026	18145	6578	18465	6737
2.	Ամուսնալուծությունների թիվը	2466	1213	2797	1257	2931	1238	3031	1333

Ամուսնությունների աճին զուգահեռ Երևանում աճել են նաև ամուսնալուծությունները: Այսպես, 2008թ. Երևանում արձանագրվել է 6737 ամուսնություն, որի աճը 2005թ. համեմատ կազմել է 772 (+12,9%), իսկ 2007թ. համեմատ՝ 2,7% (+159 ամուսնություն): Ամուսնալուծությունների թիվը 2008թ. կազմել է 1333, որը 2007թ. համեմատ աճել է 95-ով (+7,7%): Ամուսնալուծությունների տեսակարար կշռում Երևան քաղաքի տեսակարար կշիռը կազմել է 44.0%:

Միգրացիա

2008թ. Երևանից մեկնողների թիվը 1397-ով գերազանցել է ժամանողների թվաքանակը: Հայաստան ժամանողների թվաքանակը 2008թ. 2006թ. համեմատ ավելացել է 14,0%-ով, իսկ Երևանում նվազել է 11,2%-ով: Մեկնողների թվաքանակում Հայաստանի ցուցանիշը 2008թ. 2006թ. համեմատ նվազել է 1,34%-ով, Երևանի ցուցանիշը՝ 22,5%-ով:

Աղյուսակ 6

Միգրացիա

մարդ

		2006		2007		2008	
		ՀՀ	Երևան	ՀՀ	Երևան	ՀՀ	Երևան
1.	Ժամանողների թվաքանակը	9126	1845	9795	1849	10399	1639
2.	Մեկնողների թվաքանակը	16087	3918	15935	3603	15871	3036

Արդյունաբերություն

Երևանը հանրապետության խոշորագույն արդյունաբերական և տնտեսական կենտրոնն է: 2008թ. հանրապետության արդյունաբերության 49,0%-ը բաժին է ընկել Երևանին:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի (ներառյալ խմիչքներ) արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը: 2008թ. տվյալներով՝ Երևանն արդյունաբերական արտադրանքի ծավալի ցուցանիշների մեծությամբ 20.3 անգամ գերազանցել է Շիրակի մարզին, 8.5 անգամ Լոռու մարզին, 4

անգամ Կոտայքի մարզին, իսկ Սյունիքի մարզին՝ 3.6 անգամ: 2008թ. Երևան քաղաքում, ընթացիկ գներով, թողարկվել է 362535.7 մլն դրամի (1184.9 ԱՄՆ դոլար) արդյունաբերական արտադրանք և իրացվել է 353763.8 դրամի (1156.2 ԱՄՆ դոլար) պատրաստի արտադրանք: 2007թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ինդեքսը⁴ կազմել է 101,7%⁵:

Աղյուսակ 7

Արդյունաբերական արտադրանքի ծավալը

	ՀՀ			ք. Երևան		
	2006	2007	2008	2006	2007	2008
1. Թողարկված արտադրանքի ծավալը ⁶ , ընթացիկ գներով, մլն.դրամ	644862.5	716549.3	739291.9	287529.9	347399.6	362535.7
2. Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն.դրամ	658366.4	720168.0	729615.3	291244.1	350646.1	353763.8
3. Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %	99.1	102.6	101.7	102.6	115.7	101.7

Հայաստանի Հանրապետությունում թողարկված արտադրանքի ծավալը 2007թ. 2006 թվականի համեմատ աճել է 11,12%-ով, իսկ 2008 թվականին նախորդ տարվա համեմատ՝ 3,17%-ով, Երևանի արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 2007թ. 2006թ. համեմատ աճել է 20,82%-ով, 2008 թվականին նախորդ տարվա համեմատ՝ 4,36%-ով: Չնայած նկատելի է աճի տեմպի անկում, սակայն այդ ցուցանիշը պահպանվում է դրական մակարդակի վրա: Նույն միտումն է նկատվում նաև պատրաստի արտադրանքի իրացման ծավալների ցուցանիշում: 2008թ. Հայաստանի Հանրապետության պատրաստի արտադրանքի իրացման ցուցանիշը նախորդ տարվա համեմատ աճել է 1,31%-ով, մինչդեռ 2007թ. 2006թ.-ի համեմատ նույն ցուցանիշն աճել էր 9,4%-ով: Երևանում 2008թ. նախորդ տարվա համեմատ պատրաստի արտադրանքի իրացման ցուցանիշը աճել է 0,89%-ով: Երևան քաղաքի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքի մեջ զգալի բաժին է կազմում մշակող արդյունաբերությունը՝ 86,0%, իսկ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունն ու

⁴ Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը բնութագրում է արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկայի փոփոխությունն արժեքային արտահայտությամբ:

⁵ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, 2009, էջ 25-36

⁶ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի

բաշխումը և հանքագործական արդյունաբերությունը համապատասխանաբար կազմում են 13,1% և 0,9%:

Աղյուսակ 8

Երևանի արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների, 2008 թվականին

	Երևան	
	Թողարկված արտադրանքի ծավալը ⁷ , ընթացիկ գներով, մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն. դրամ
Ամբողջ արդյունաբերությունը	362535.7	353763.8
1. <i>Հանքագործական արդյունաբերություն</i>	3400.0	3175.9
2. <i>Մշակող արդյունաբերություն</i>	311656.1	303108.3
<i>այդ թվում՝</i>		
2.1 սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն	131836.0	131697.7
2.2 ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	9030.8	8618.0
2.3 մանածագործական արտադրություն	1181.4	1061.4
2.4 հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում	1720.4	1739.5
2.5 բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	621.0	606.1
2.6 իրատարակչական և պոլիգրաֆիկական գործունեություն, գրանցված տեղեկատվություն պարունակող կրիչների բազմացում	12969.8	12667.5
2.7 քիմիական արդյունաբերություն	12054.7	11701.0
2.8 ռետինե և պլաստմասե արտադրատեսակների արտադրություն	5802.4	6023.4
2.9 այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	10993.4	10424.3
2.10 մետաղագործական արդյունաբերություն	81666.8	75662.1
2.11 պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	13260.1	13395.2
2.12 մեքենաների և սարքավորանքի արտադրություն	3642.2	3550.4
2.13 ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	7829.9	7444.7
2.14 գործունեության այլ տեսակներ	18332.4	17797.1
3. <i>Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում</i>	47479.6	47479.6
<i>այդ թվում՝</i>		
3.1 Էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	40634.9	40634.9
3.2 ջրի հավաքում, մաքրում և բաշխում	6844.7	6844.7

Երևան քաղաքի մշակող արդյունաբերության մեջ թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալում առավել մեծ տեսակարար կշռով առանձնանում է սննդամթերքի

⁷ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի

արտադրությունը՝ 42,3%: Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը կազմում է 4,25%, հրատարակչական և պոլիգրաֆիկական գործունեությունը՝ 4,16%, քիմիական արդյունաբերությունը՝ 3,87%, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը՝ 2,9%:

Աղյուսակ 9

Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ արտադրության բաժինների, 2007-2008թթ.

Ընթացիկ գներով, մլն դրամ


		Հանքագործական արդյունաբերություն		Մշակող արդյունաբերություն		Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	
		2007	2008	2007	2008	2007	2008
1	Հայաստանի Հանրապետություն	113824.1	93265.7	477973.8	509078.9	124751.4	136977.3
2	ք.Երևան	2411.8	3400.0	298746.2	311656.1	46241.6	47479.6
3	Շիրակ	748.3	489.4	11593.1	12833.9	3831.1	4506.4
4	Լոռի	960.1	982.6	35976.2	35197.6	5710.2	6260.9
5	Սյունիք	105705.2	84359.1	6474.2	6505.8	11090.6	9169.6
6	Գեղարքունիք	364.0	203.0	5896.8	6390.2	3222.1	3755.5

2008թ. Հայաստանի Հանրապետության հանքագործական արդյունաբերության մեջ իրենց տեսակարար կշռով առաջատար են Սյունիքի մարզը՝ 90,5%, իսկ Երևանի տեսակարար կշիռը կազմում է 3,65%: Մշակող արդյունաբերության ոլորտում Երևանի ցուցանիշը կազմում է 61,2%, Լոռու մարզի ցուցանիշը՝ 6,9%, Շիրակի ցուցանիշը՝ 2,52%: Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության մեջ Երևանի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ կազմում է 34,7%:

Արդյունաբերության երեք ճյուղերում Երևանի արդյունաբերական արտադրանքի ծավալները 2008թ. նախորդ տարվա համեմատ աճել են, համապատասխանաբար կազմելով՝ Երևանի հանքագործական արդյունաբերության մեջ՝ 41,0%, մշակող արդյունաբերության մեջ՝ 4,3% և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ոլորտում՝ 2,68%:


Գրաֆիկ 2

Արդյունաբերական արտադրանքի ծավալի բաշխումն ըստ Երևան քաղաքի և մարզերի, 2008թ.



Գրաֆիկ 3

Երևանի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2008թ.



Գյուղատնտեսություն

2008թ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական համախառն արտադրանքը կազմել է 628.0 մլրդ դրամ, որը 2007 թվականի համեմատ նվազել է 0,93%-ով: Չնայած այդ ցուցանիշը Հայաստանի կտրվածքով նվազել է, այդուհանդերձ Երևան

քաղաքում գյուղատնտեսական համախառն արտադրանքը 2008թ. կազմել է 5.9 մլրդ դրամ և նախորդ տարվա համեմատ աճել է 3,5%-ով:

2008թ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական համախառն արտադրանքի 1%-ը բաժին է ընկել Երևանին:

2008թ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի 64.0%-ը բաժին է ընկնում բուսաբուծությանը, իսկ 36,0%-ը՝ անասնաբուծությանը: 2008թ. Երևանի գյուղատնտեսական համախառն արտադրանքի 50,8%-ը բաժին է ընկնում բուսաբուծությանը, իսկ 49,2%-ը՝ անասնաբուծությանը:

Աղյուսակ 10

Գյուղատնտեսական համախառն արտադրանքը, 2005-2008թթ.

		ՀՀ			Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1.	Ընդամենը, ընթացիկ գներով, մլրդ դրամ	555.9	633.9	628.0	5.5	5.7	5.9
	<i>այդ թվում՝</i>						
1.1	բուսաբուծություն	356.2	429.9	401.5	3.2	3.3	3.0
1.2	անասնաբուծություն	199.7	204.0	226.5	2.3	2.4	2.9

Շինարարություն

2005-2008թթ. ընթացքում շինարարության հիմնական միջոցների գործարկումը բնութագրող ցուցանիշը Հայաստանի Հանրապետության և Երևանի կտրվածքով ունեցել է աճման միտում: Այն Հայաստանի Հանրապետությունում 2006թ. նախորդ տարվա համեմատ աճել է 52,05%-ով, 2007թ. 2006թ. համեմատ՝ 9,39%-ով, 2008թ. 2007թ. համեմատ՝ 29,4%-ով: Երևանի կտրվածքով այդ նույն ցուցանիշը փոխվել է համապատասխանաբար՝ 2006թ. նախորդ տարվա համեմատ աճել է 57,43%-ով, 2007թ.՝ 11,36%-ով, 2008թ.՝ 27,4%-ով:

Աղյուսակ 11

Շինարարության հիմնական ցուցանիշները, ք.Երևան, 2008թ.

Ընթացիկ գներով, մլն դրամ

	ՀՀ				Երևան			
	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1. Հիմնական միջոցների գործարկումը	309683	470880	515089 ⁸	666750 ⁸	266418	419432	467095	595090
2. Շինարարություն, ընդամենը	435125	643828	671029 ⁸	858680 ⁸	354802	531115	585026	752534
այդ թվում՝								
2.1 շինման աշխատանքներ	396852	574916	609712 ⁸	785472 ⁸	324483	473707	532720	688990

2008թ. Հայաստանի Հանրապետությունում հիմնական միջոցների գործարկման, շինարարության և շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի ցուցանիշների համապատասխանաբար 89%-ը, 88%-ը և 84%-ը բաժին են ընկնում Երևանին:

Աղյուսակ 12

Բնակելի շենքերի գործարկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների

	ՀՀ				ք.Երևան			
	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1. Բնակելի շենքերի գործարկումը, մ ² ընդհանուր մակերես	353321	385735	480495	521148	262510	314314	419742	437968
այդ թվում ի հաշիվ								
1.1 պետական բյուջեի	26088	11291	63450	24645	-	1861	50400	12800
1.2 մարդասիրական օգնության միջոցների	10374	6863	3824	-	2943	37	-	-
1.3 կազմակերպությունների միջոցների	34567	65082	64342	124668	34567	65082	64342	124668
1.4 բնակչության միջոցների	282292	302499	348879	371835	11782	247334	305000	300500

Հայաստանում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը 2008թ. կազմել է 521148 քմ, որից ի հաշիվ պետական բյուջեի՝ 24645 քմ, կազմակերպությունների միջոցների հաշվին՝ 124668 քմ, բնակչության միջոցների հաշվին՝ 371835 քմ:

Երևանում 2008թ. շահագործման են հանձնվել 437968 քմ ընդհանուր մակերեսով բնակելի շենքեր, մասնավորապես՝ կազմակերպությունների միջոցների հաշվին՝ 124668

⁸ Առանց ԱԱՀ

քմ, բնակչության միջոցների հաշվին՝ 300500քմ, որոնք համապատասխանաբար կազմում են այդ ցուցանիշի 28,46%-ը և 68,61%-ը, իսկ պետական բյուջեի հաշվին՝ 2,92%: 2009թ. հունվար-հունիսին շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը կազմում է 91.389քմ, իսկ 2008թ. նույն ժամանակահատվածում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը կազմել է 121.897քմ:

2009թ. հունվարի 1-ի դրությամբ Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի քանակը կազմել է 4765⁹:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2009թ. հունվարի 1-ի դրությամբ մայրաքաղաքում կազմել է 21446.5 հազ. քմ, կամ հանրապետության բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսի 25,2%-ը:

Հայաստանում և Երևանում 2005-2009թթ. ավելացել է բնակարանային ֆոնդի մակերեսը, որը 2006թ. համեմատ 2009թ. համեմատաբար աճել է՝ ՀՀ-ում՝ 10625.7 հազ. քմ-ով կամ 14,3%-ով, իսկ Երևան քաղաքում՝ 4,8%-ով:

Աղյուսակ 13

Բնակարանային ֆոնդի ցուցանիշները

Հունվարի 1-ի դրությամբ

		ՀՀ				ք.Երևան			
		2006	2007	2008	2009	2006	2007	2008	2009
1.	Բնակարանային ֆոնդ, հազ.մ ²	74359.5	76173.3	84463.0	84985.2	20463.0	20806.1	21263.4	21446.5
2.	Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով, մ ²	23.1	23.6	26.2	26.3	18.5	18.8	19.2	19.3
3.	Բնակելի տների քանակը, միավոր	-	372556	390231	392590	-	39553	40309	42254
4.	Բազմաբնակարան շենքերի քանակը, միավոր	-	21778	21821	21673	-	4709	4734	4765
5.	Հանրակացարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը, մ ²	239570	302043	308546	255277	123621	116555	137371	109638

Հայաստանի Հանրապետությունում մեկ բնակչի ապահովվածությունը բնակարանային ֆոնդով 2009թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 26.3 մ², Երևանում՝ 19.3 մ²: Այս ցուցանիշն ունեցել է աճման միտում և՛ Հայաստանում, և՛ Երևանում:

2009թ. տարեսկզբի դրությամբ 2008թ. ՀՀ-ում բնակելի տների քանակն ավելացել է 0,6%-ով (2359 միավորով), Երևանում՝ 4,8%-ով (31 միավորով): Բազմաբնակարան

⁹ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2004-2008թթ., Վիճակագրական ժողովածու, էջ 159:

շենքերի քանակը Երևանում ավելացել է 0,7%-ով (31 միավորով): Հանրակացարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը ՀՀ-ում և Երևանում 2009թ. 2008թ. համեմատ կրճատվել է՝ համապատասխանաբար 53269 քմ-ով (17,3%-ով) և 27733 քմ-ով (20,2%-ով):

Երևանում (բացի Նորք-Մարաշից) բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գինը 1 քմ մակերեսի հաշվարկով 2008թ. կազմել է 296300 դրամ, որը 2006թ. համեմատ աճել է 50,6%-ով: Այս ցուցանիշի առավելագույն արժեքը գրանցվել է Կենտրոն վարչական շրջանում՝ 1քմ-ի դիմաց 483300 դրամ, իսկ նվազագույնը՝ Նուբարաշենում՝ 1 քմ-ի դիմաց 154500 դրամ:

Աղյուսակ 14

Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գներն ըստ վարչական շրջանների

1մ²մակերեսի հաշվարկով, դրամ

		2006	2007	2008
1.	Կենտրոն	377600	448300	483300
2.	Արաբկիր	298200	360300	403400
3.	Քանաքեռ-Զեյթուն	186100	266600	305700
4.	Նոր Նորք	171100	229300	270700
5.	Ավան	156200	220500	268900
6.	Էրեբունի	155800	227300	269800
7.	Շենգավիթ	182700	241700	277900
8.	Դավթաշեն	189400	250100	292200
9.	Աջափնյակ	171800	234600	271800
10.	Մալաթիա-Սեբաստիա	166800	223400	260500
11.	Նուբարաշեն	108000	125900	154500
	Միջինը Երևանում (բացի Նորք-Մարաշից)	196700	257100	296300

2008թ. Հայաստանում գործել է թվով 110 հյուրանոց, որոնցից 42-ը՝ Երևանում:

Ճանապարհային ցանց

2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը կազմել է 3563.3 կմ, որից 735.8 կմ¹⁰-ը կամ 20,6%-ը Երևան քաղաքում է: Երևան քաղաքի փողոցների և անցումների ընդհանուր երկարության 97,5%-ը (717.4 կմ) բարեկարգված է, իսկ 2,5%-ը (18.4 կմ)՝ բնահողային: Մայրաքաղաքում փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը 2008 թվականին 2007 թվականի համեմատ ավելացել է 11.5 կմ-ով:

Աղյուսակ 15

Փողոցների, անցումների, հրապարակների երկարությունը և մակերեսը

		Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1	Ընդամենը, կմ	3631.4	3626.2	3563.3	722.5	724.3	735.8
1.1	Բնահողային	709.4	707.1	696.0	18.4	18.4	18.4
1.2	Բարեկարգված	2922.0	2919.1	2867.3	704.1	705.9	717.4
2.	Ընդամենը, հազ. մ ²	39760.7	39621.2	39648.9	12732.0	12747.0	12914.0
2.1	Բարեկարգված	30191.6	30563.5	30575.2	11090.1	11090.1	11257.1

2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմել է 39648.9 հազ. քմ, որից 32,6%-ը Երևանում է:

2008թ. Երևան քաղաքի փողոցների, անցումների և հրապարակների մակերեսը կազմել է 12914.0 հազ. քմ, որից բարեկարգված է 11257.1 հազ. քմ:

Քաղաքաշինության ոլորտում գործարար ակտիվության մակարդակը

Երևան քաղաքում վերջին երկու տարիներին նկատվում է քաղաքաշինական բնագավառի գործարար ակտիվության տեմպերի անկում, որը բնութագրվում է կառուցապատման նպատակով իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից

¹⁰ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, վիճակագրական ժողովածու, 2009, էջ 184-185:

Երևանի քաղաքապետարան ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքների (ՃՀԱ) հայտերի, ինչպես նաև ավարտված շինարարության համար տրված շենքերի շահագործման ակտերի (ավարտական ակտեր) դիմամիկայով:

Աղյուսակ 16

Երևանի քաղաքապետարանի կողմից 2008թ. ձևակերպված շինարարության ավարտի փաստագրման ակտերի հիման վրա շահագործման հանձնված կառույցների քանակները և մակերեսները

Հ/Հ	Թաղային համայնք	Ձևակերպված ավարտական ակտերի քանակը	Շահագործման հանձնված կառույցների մակերեսներն ըստ նպատակային նշանակության (քմ)				Ընդամենը
			Բնակելի	Հասարակական	Արտադրական	Այլ նշանակության	
1	Աջափնյակ	46	14398,00	2720,00	2916,00	375,00	20409,00
2	Ավան	26	8142,00	5972,00	1498,00	52664,00	68276,00
3	Արաբկիր	100	52877,30	17766,00	0,00	3438,00	74081,30
4	Դավթաշեն	31	18971,00	3244,00	0,00	3640,00	25855,00
5	Էրեբունի	31	4417,00	3473,00	3413,00	4865,00	16168,00
6	Կենտրոն	148	234940,00	62956,00	0,00	39,00	297935,00
7	Մալաթիա-Սեփաստիա	32	4096,00	15844,00	2000,00	230,60	22170,60
8	Նոր Նորք	36	15475,00	11804,00	2886,00	65,00	30230,00
9	Նորք-Մարաշ	14	6291,70	6757,70	0,00	27,60	13077,00
10	Նուբարաշեն	2	0,00	0,00	0,00	72,00	72,00
11	Շենգավիթ	52	7264,10	5206,20	6137,90	248,11	18856,31
12	Քանաքեռ-Զեյթուն	36	21174,00	13529,70	0,00	367,00	35070,70
	Ընդամենը	554	388046,10	149272,60	18850,90	66031,31	622200,91

Այսպես, եթե 2007թ. ՃՀԱ տրամադրելու համար ներկայացվել է 1893 հայտ և տրամադրվել է 1209 ՃՀԱ, ապա 2008թ. հայտերի քանակը կազմել է 1685, որը նվազել է 208-ով (-12,0%): Նույն ժամանակահատվածում նվազել է նաև տրված ՃՀԱ-ների քանակը՝ 1209-ից կազմելով 883 (-326 կամ 37%): Այս բացասական միտումը պահպանվել է նաև 2009թ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ համապատասխանաբար 1000 ՃՀԱ-ի հայտ և տրամադրված 425 ՃՀԱ:

Ավարտված շինարարության փաստագրման ակտերի դինամիկան նույնպես ունեցել է բացասական միտում, որի արդյունքում 2008թ. տրված 554 ավարտական ակտերի դիմաց 2009թ. 9 ամիսներին տրվել է 242 ավարտական ակտ:

2008թ. Երևան քաղաքում շահագործման հանձնված 554 շենքերից, Կենտրոն վարչական շրջանում կառուցվել է 148 շենք կամ 27%-ը, Արաբկիր՝ 100 շենք (18.0%), Շենգավիթ 52 շենք (9,0%), Աջափնյակ՝ 46 շենք կամ 8,0%: 2009թ. 9 ամիսներին նշված ցուցանիշները կազմել են Կենտրոն՝ շահագործման հանձնված 84 շենք (242-ից) կամ՝ 35,0%, Արաբկիր՝ 34 շենք (14,0%), Աջափնյակ՝ 22 շենք (5,0%):

Ըստ տրված ավարտական ակտերի՝ շահագործման հանձնված շենքերի և շինությունների մակերեսը 2008թ. կազմել է 622,2 հազար քմ, իսկ 2009թ. 9 ամիսներին՝ 174,8 հազար քմ: Նշված մակերեսների կառուցվածքում շահագործման հանձնված բազմաբնակարան բնակելի շենքերի և անհատական բնակելի տների տեսակարար կշիռը 2008թ. կազմել է 62,0%, իսկ 2009թ.՝ 45,0%, հասարակական նշանակության շենքեր՝ 2008թ.՝ 24,0%, 2009թ.՝ 37,0%, արտադրական նշանակության շենքեր՝ 2008թ.՝ 3,0%, 2009թ.՝ 6,0%: Միայն Կենտրոն վարչական շրջանում 2008թ. շահագործման է հանձնվել շենքերի ընդհանուր մակերեսի 48,0%-ը, իսկ 2009թ. 9 ամիսներին՝ 38,0%-ը:

Քաղաքաշինության ոլորտում գործարար ակտիվության նվազման միտումները դրսևորվել են նաև կառուցապատման նպատակներով օտարված հողամասերում իրականացվող գործունեությունում: Այսպես, 2005-2008թթ. օտարվել են շուրջ 800 հողամասեր, սակայն 7,7% տարածքների վրա շինարարական աշխատանքներ չեն սկսվել: Այսուհետ օտարման նպատակով աճուրդ հայտարարված տարածքների գնման նախապատվությունը կտրվի հողամասերի փաստացի օգտագործողներին, իսկ վերջիններիս կողմից հրաժարվելու դեպքում կիրականացվեն աճուրդներ:

Տրանսպորտ

Բեռնափոխադրումների ծավալը 2006-2008թթ. նվազման միտում ունի. 2008թ. նախորդ տարվա համեմատ նվազել է 24,6%-ով¹¹: Չնայած այն բանին, որ

¹¹ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, 2009, էջ 49-52:

բեռնաշրջանառությունը 2008թ. նախորդ տարվա համեմատ ավելացել է 5,8%-ով, այն 2006թ.-ի համեմատ ունեցել է նվազման միտում:

Աղյուսակ 17


Ավտոմոբիլային տրանսպորտի հիմնական ցուցանիշները

		ՀՀ				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա	26086.0	42432.2	40930.8	41006.6	2700.3	9495.3	5577.3	4205.3
2.	Բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ	231.3	433.8	426.8	422.8	98.4	232.7	186.5	197.4
3.	Ուղևորափոխադրումների ծավալը, հազ.մարդ	139526.6	149582.1	148749.6	145653.6	122910.0	127428.0	125728.2	120341.3
4.	Ուղևորաշրջանառությունը, մլն. ուղևոր-կմ	1600.7	1597.7	1647.2	1606.3	1232.1	1187.6	1232.9	1138.7

2008թ. Հայաստանի բեռնափոխադրումների ծավալում Երևանի տեսակար կշիռը կազմել է 10,3%, իսկ բեռնաշրջանառության ծավալում՝ 46,69%, ուղևորափոխադրումների ծավալում՝ 82,6%, ուղևորաշրջանառության ծավալում՝ 70,9%: Բեռնաշրջանառությունը նախորդ տարվա համեմատ աճել է 5,8%-ով,


Գրաֆիկ 4

Բեռնափոխադրումների ծավալի դինամիկան



Գրաֆիկ 5


Բեռնաշրջանառության ծավալի դինամիկան



Երևանում 2008 թվականին 2006 թվականի համեմատ բեռնափոխադրումների ծավալը նվազել է մոտ 2.3 անգամ:


Գրաֆիկ 6

Ուղևորափոխադրումների ծավալի դինամիկան



Գրաֆիկ 7

Ուղևորաշրջանառության ծավալի դինամիկան



Հայաստանում ուղևորափոխադրումների ծավալը 2008թ. 2006թ. համեմատ աճել է 1.04-ով, իսկ Երևանում նվազել է 1.02-ով:

Կ ա պ

Կապի ծառայություններից ստացված հասույթը Հայաստանի Հանրապետությունում և Երևան քաղաքում վերջին տարիներին ունեցել է աճի դինամիկա: Երևան քաղաքում, օրինակ, 2008թ. այդ հասույթը, ընթացիկ գներով, առանց ավելացված արժեքի հարկի, կազմել է 156560.4 մլն դրամ¹², որը նախորդ տարվա նկատմամբ աճել է 12,1%-ով (+ 16954.5 մլն դրամ):

Աղյուսակ 18

Ընդհանուր օգտագործման կապի ծառայությունների հասույթը

Առանց ԱԱՀ, ընթացիկ գներով, մլն դրամ


	2005	2006	2007	2008
1. Հայաստանի Հանրապետություն	82579.1	126196.3	152202.9	169142.5
2. ք. Երևան	71236.4	112674.3	139605.9	156560.4

2005-2008թթ. Երևանում կապի ծառայություններից ստացված հասույթի մեծությունը Հայաստանի ընդհանուր ցուցանիշում ունեցել է աճի կայուն դինամիկա՝ համապատասխանաբար կազմելով՝ 2005թ. – 86,3%, 2006թ. – 89,3%, 2007թ. – 91,7%, 2008թ. – 93,0%:

¹² Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, 2009, էջ 53:

Գրաֆիկ 8

Ընդհանուր օգտագործման կապի ծառայությունների հասույթի դինամիկան,
2005-2008թթ.



Առևտուր և այլ ծառայություններ

2008թ. մանրածախ առևտրի շրջանառությունը Երևան քաղաքում կազմել է 894902.2 մլն դրամ¹³, որը 2007թ.-ի համեմատ ավելացել է 12,9%-ով (+ 102424 մլն դրամ):

Աղյուսակ 19

Մանրածախ առևտրի շրջանառությունը, 2005-2008թթ.

Մլն դրամ


	2005	2006	2007	2008
1. Հայաստանի Հանրապետություն	853869.0	820816.7	934376.6	1059571.2
2. ք. Երևան	739155.9	706078.4	792478.2	894902.2

2007 և 2008 թվականներին Հայաստանի մանրածախ առևտրի շրջանառության 84,8%-ը և 84,5%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին:

¹³ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, 2009, էջ 54-63:

Գրաֆիկ 9

Մանրածախ առևտրի շրջանառության դինամիկան, 2005-2008թթ.



Երևանում 2008թ. միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի տարեկան շրջանառությունը կազմել է 806508.8 դրամ, որը 2007թ. համեմատ ավելացել է 12,6%-ով: Հանրապետության կտրվածքով այդ ցուցանիշը կազմել է 327634.9 դրամ (+13,1%-ով): Երևանում մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառությունը հանրապետության միջինի նկատմամբ կազմել է 246,2%:

Աղյուսակ 20

Երևանի մանրածախ առևտրի օբյեկտների քանակը

		2005	2006	2007	2008
1.	Մանրածախ առևտրի օբյեկտների քանակը, միավոր	7326	8452	9357	10498
1.1	Խանութներ	4334	5474	6445	7589
1.2	Սպառողական ապրանքների շուկաներ	23	24	21	19
1.3	Գյուղատնտեսական օբյեկտների շուկաներ	11	11	11	11
1.4	Կրպակներ	2825	2807	2749	2743
1.5	Առևտրի այլ օբյեկտներ	133	136	131	136

Երևանում մանրածախ առևտրի օբյեկտների թվաքանակում մեծ տեսակարար կշիռ են կազմում խանութներն ու կրպակները՝ համապատասխանաբար 72,3% և 26,1%:

2005-2008թթ. այդ օբյեկտների քանակը 2008թ. նախորդ տարվա համեմատ ավելացել է 1141 միավորով՝ ի հաշիվ խանութների թվի աճի (+1144):

Հանրային ծառայություններ

Երևանում հանրային ծառայությունների ծավալը 2008թ. կազմել է 665099.6 մլն դրամ¹⁴, որը Հայաստանում արձանագրված ծառայությունների ընդհանուր ծավալի 90,9%-ն է, այդ թվում՝ հյուրանոցային ծառայությունների 89,9%-ը, տրանսպորտի՝ 89,1%-ը, զբոսաշրջության՝ 92,6%-ը, կոմունալ՝ 78,7%-ը, սոցիալական ծառայությունների 83,5%-ը, այլ ծառայությունների՝ 90,9%-ը:

Աղյուսակ 21

Հանրային ծառայությունների տեսակները, 2007-2008թթ.

	Հայաստանի Հանրապետություն	ք. Երևան					
		2007	2008	2007	տեսակարար կշիռը, %	2008	տեսակարար կշիռը, %
1.	Հյուրանոցների և ռեստորանների ծառայություններ, մլն դրամ	23712.2	28808.8	21141.6	89.2	25890.3	89.9
2.	Տրանսպորտի ծառայություններ, մլն դրամ	132094.7	163115.1	117271.2	88.8	145383.2	89.1
3.	Կապի ծառայություններ, մլն.դրամ	152310.5	169142.5	139745.2	91.8	156560.3	92.6
4.	Զբոսաշրջության գործակալությունների գործունեություն, մլն դրամ	1580.8	2344.8	1363.2	86.2	1997.6	85.2
5.	Կոմունալ ծառայություններ, մլն դրամ	5197.6	5914.5	3990.2	76.8	4654.2	78.7
6.	Սոցիալական ծառայություններ, մլն դրամ	14356.0	21184.7	11953.8	83.3	17696.0	83.5
7.	Անհատական ծառայություններ, մլն դրամ	5270.9	6260.4	4585.6	87.0	5392.8	86.1
8.	Կենցաղային արտադրատեսակների անձնական օգտագործման իրերի նորոգման ծառայություններ, մլն դրամ	1708.0	1925.8	1413.8	82.8	1735.7	90.1
9.	Ֆինանսական գործունեություն	106456.2	146641.5	103311.4	97.0	142341.4	97.1
10.	Անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, մլն դրամ	14399.6	17399.3	12835.5	89.1	15531.5	89.3
11.	Մեքենաների և սարքավորումների վարձակալման,	1925.9	1637.3	1525.9	79.2	1259.6	76.9

¹⁴ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, 2009, էջ 58-63:

	կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի վարձույթի ծառայություններ, սև դրամ						
12.	Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի ծառայություններ, սև դրամ	17754.2	20229.1	17647.8	99.4	20124.2	99.5
13.	Առողջապահության և սոցիալական ծառայություններ, սև դրամ	35943.1	42393.0	26004.4	72.3	30436.0	71.8
14.	Կրթական համակարգի ծառայություններ, սև դրամ	33151.5	37537.2	28392.1	85.6	32458.7	86.5
15.	Այլ ծառայություններ, սև դրամ	53574.4	67468.6	50984.5	95.2	63638.1	94.3
	Ընդամենը	599435.6	732002.6	542112.2	90.4	665099.6	90.9

2008թ. Երևան քաղաքի հանրային ծառայությունների ոլորտում մեծ տեսակարար կշիռ են կազմում կապի ծառայությունները՝ 23,5%, տրանսպորտի ծառայությունները՝ 21,9%, ֆինանսական գործունեությունը՝ 21,4%: Երևանում միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը 2008թ. կազմել է 599404.8 դրամ: 2006-2008թթ. ընթացքում այդ ցուցանիշն աճել է. 2007թ. համեմատ ավելացել է 92906.7 դրամով (23,4%-ով), իսկ 2008թ. 2007թ. համեմատ՝ 109426.3 (22,3%-ով):

Մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը Երևան քաղաքում հանրապետության միջինի նկատմամբ ունեցել է աճի միտում՝ 2006թ. կազմել է 256,6%, 2007թ.՝ 263,7%, 2008թ.՝ 264,8%:

Գներ և սակագներ¹⁵

2005-2008թթ. հանրապետությունում և՛ Երևան քաղաքում նկատվել է կտրվածքով գների բարձրացման միտում: 2008թ. նախորդ տարվա համեմատ Հայաստանում գները աճել են 9,0%-ով, իսկ Երևանում՝ 9,6%-ով: Բացի այդ, սպառման ապրանքների գները Երևանում աճել են 9,4%-ով, իսկ ծառայությունների գները՝ 10,1%-ով:

¹⁵ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, 2009, էջ 64-79:

Աղյուսակ 22

Սպառողական գների ինդեքսը¹⁶

Նախորդ տարվա նկատմամբ, %

		2005	2006	2007	2008
1.	Հայաստանի Հանրապետություն	100.6	102.9	104.4	109.0
2.	ք. Երևան	100.9	103.1	104.8	109.6
	<i>այդ թվում՝</i>				
2.1	սպառման ապրանքներ	101.1	103.1	104.9	109.4
2.2	ծառայություններ	100.0	103.5	104.5	110.1

2006-2008թթ. ընթացքում անհամաչափորեն են փոփոխվել պարենային ապրանքների գները: 2008թ. Երևանում նախորդ տարվա համեմատ պարենային մի խումբ ապրանքների գներն ունեցել են աճի միտում: Այսպես, միսը թանկացել է 1,7%-ով, կարագը՝ 26,6%-ով (Երևանում կարագի գինը հանրապետական միջինին գերազանցում է 13,7%-ով (328 դրամով)), շաքարավազը՝ 3,3%-ով, կաղամբը՝ 122%-ով, խնձորը՝ 10%-ով: Միաժամանակ նվազել է հետևյալ ապրանքների գները. պանրի գինը նվազել է 5,6%-ով, ձուն (տասնյակի համար)՝ 5,3%-ով, կարտոֆիլը՝ 35,1%-ով, սոխի գինը՝ 11,9%-ով

Աղյուսակ 23


Կարևորագույն պարենային ապրանքների միջին գները

Դեկտեմբերի 30-ի դրությամբ դրամ կգ-ի համար

		Հայաստանի Հանրապետություն				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Միս տավարի	1526	1527	1557	1597	1575	1563	1563	1590
2.	Պանիր	1330	1356	1507	1460	1338	1358	1548	1461
3.	Կարագ	1657	1605	2042	2388	1668	1614	2145	2716
4.	Բուսական յուղ, լիտր	626	575	893	829	632	577	909	810
5.	Ձու, տասնյակի համար	623	660	596	572	638	651	607	575
6.	Շաքարավազ	251	298	241	246	250	308	241	249
7.	Կարտոֆիլ	150	253	204	135	154	270	208	135
8.	Գլուխ սոխ	332	294	255	221	375	300	253	223
9.	Կաղամբ	98	115	96	226	85	114	98	218
10.	Խնձոր	468	487	444	444	525	500	430	473

¹⁶ Սպառողական գների ինդեքս (ՍԳԻ)՝ բնութագրում է բնակչության անձնական սպառման համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների փաստացի հաստատագրված կազմի արժեքի փոփոխությունը ժամանակի և տարածության մեջ:

Կարևորագույն պարենային ապրանքների գների դինամիկան Երևան քաղաքում, 2005-2008թթ.



Աշխատանքի շուկա¹⁷

Երևան քաղաքում աշխատանքային ռեսուրսները 2008թ. կազմել են 707,7 հազ. մարդ, որը 2007թ. համեմատ աճել է 1,56%-ով (+10.9 հազ. մարդ): Միևնույն ժամանակ աճել է նաև տնտեսապես ակտիվ բնակչությունը՝ ընդամենը կազմելով 345.9 հազ. մարդ (+4,7% կամ 10.6 հազ. մարդ): Հանրապետության աշխատանքային ռեսուրսների 32,0%-ը և տնտեսապես ակտիվ բնակչության 29,0%-ը, զբաղվածների 29,3%-ը, ինչպես նաև տնտեսապես ոչ ակտիվ բնակչության 35,8%-ը բնակվում են Երևանում:

Մայրաքաղաքում գրանցված գործազուրկների թվի ընդհանուր նվազման միտումը պահպանվել է մինչև 2007թ., իսկ 2008թ. այն ավելացել է 2,27%-ով (4 հազ. մարդ):

Տնտեսապես ոչ ակտիվ բնակչության թիվը Հայաստանում 2008թ. նախորդ տարվա համեմատ աճել է 2,3%-ով (22.7 հազ. մարդ), իսկ Երևանում նվազել է 1,3%-ով (4.7 հազ. մարդ):

¹⁷ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, էջ 80-83:


Աշխատանքային ռեսուրսների բաշխումը

Միջին տարեկան, հազ. մարդ

		Հայաստանի Հանրապետություն				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Ընդամենը ռեսուրսներ	2072.4	2112.4	2168.9	2202.6	666.5	678.6	696.8	707.7
	<i>նրանցից՝</i>								
1.1	Տնտեսապես ակտիվ բնակչություն	1195.8	1178.7	1181.9	1192.5	324.5	321.6	330.4	345.9
1.1.1	զբաղվածներ ¹⁸	1097.8	1099.0	1101.8	1117.6	300.0	301.5	312.8	328.0
1.1.2	գործազուրկներ	98.0	88.9	82.7	74.9	24.5	20.1	17.6	18.0
1.2	Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	876.6	933.5	987.4	1010.1	342.1	357.0	366.5	361.8

Գրաֆիկ 11

Երևանի տնտեսապես ակտիվ բնակչության դինամիկան, 2005-2008թթ.



¹⁸ Կրճնական կազմակերպություններում զբաղվածների թվաքանակը բաշխված չէ:

Աղյուսակ 25

Աշխատուժի առաջարկը

		Հայաստանի Հանրապետություն		ք. Երևան	
		2007	2008	2007	2008
1.	Աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակը, հազ. մարդ	89.4	90.2	17.7	20.0
	Նախորդ տարվա նկատմամբ, %	87.5	100.9	90.8	113.0
1.1	Նրանցից՝ գործազուրկներ, հազ. մարդ	75.1	74.7	16.7	18.1
	Նախորդ տարվա նկատմամբ, %	88.8	99.5	93.8	108.4

Աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը հանրապետությունում նախորդ տարվա համեմատ ավելացել է 0,9%-ով (800 մարդ), իսկ Երևանում՝ 13,0%-ով (2.3 հազ. մարդ): Հայաստանում աշխատանք փնտրող քաղաքացիների թվաքանակում գործազուրկների թիվը 2008թ. նախորդ տարվա համեմատ նվազել է 0,5%-ով (400 մարդ), սակայն Երևանում ավելացել է 8,4%-ով (1.4 հազ. մարդ):

Աղյուսակ 26

Ջրաղվաճներն ըստ տնտեսության ոլորտների

Միջին տարեկան, հազ. մարդ

		Հայաստանի Հանրապետություն		ք. Երևան	
		2007	2008	2007	2008
	Ընդամենը	1101.5	1117.6	312.8	328.0
1.	Արդյունաբերություն	135.0	127.6	67.8	67.0
2.	Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառտնտեսություն	506.9	493.5	0.6	1.1
3.	Շինարարություն	31.1	60.4	14.2	21.5
4.	Ծառայություններ	428.5	436	230.2	238.5

2008թ. Հայաստանում արդյունաբերության ոլորտում զբաղվաճները կազմել են զբաղվաճների ընդհանուր թվաքանակի 11,4%-ը, գյուղատնտեսության ոլորտում՝ 44,2%-ը, շինարարության ոլորտում՝ 5,4%-ը, ծառայությունների ոլորտում՝ 39%-ը: Հանրապետության արդյունաբերության մեջ զբաղվաճների 52,5%-ը բաժին է ընկնում


Երևանին, շինարարության ոլորտում՝ 35,6%-ը, ծառայությունների ոլորտում զբաղվածների՝ 54,7%-ը: գյուղատնտեսության ոլորտում 0,2%-ը:

2008թ. Երևանում ծառայության ոլորտում զբաղվածները կազմել են մայրաքաղաքի զբաղվածների ընդհանուր թվաքանակի 72,7%-ը, արդյունաբերության ոլորտում՝ 20,4%-ը, շինարարության ոլորտում՝ 6,6%-ը, գյուղատնտեսության ոլորտում՝ 0,34%-ը:

Գրաֆիկ 12

Զբաղվածներն ըստ տնտեսության ոլորտների, ք. Երևան, 2008թ.

հազ. մարդ



Ֆինանսական ցուցանիշներ

2005-2008թթ. ընթացքում առևտրային կազմակերպությունների հաշվեկշռային շահույթի մեծությունը հանրապետության մասշտաբով կրել է անհամաչափ փոփոխություններ. 2005թ. և 2007թ. գրանցվել են առավելագույն ցուցանիշները՝ համապատասխանաբար 189711.6 մլն դրամ և 184137.2 մլն դրամ¹⁹:

¹⁹ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, էջ 86-91:

Աղյուսակ 27

Առևտրային կազմակերպությունների հաշվեկշռային շահույթը

Զուտ շահույթ, նախքան շահութահարկի նվազումը, ընդամենը

Ըստ խոշոր և միջին կազմակերպությունների, մլն դրամ,


		2005	2006	2007	2008
1.	Հայաստանի Հանրապետություն	189711.6	159725.2	184137.2	121608.5
2.	ք.Երևան	130091.2	96758.6	139815.3	104787.8
3.	ընդհանուրի %	68.6	60.6	75.9	86.2

Չնայած 2008թ. Երևան քաղաքում գործող առևտրային ցուցանիշների հաշվեկշռային շահույթը նվազել է 25,0%-ով, 2006-2008թթ. արձանագրվել է այդ ցուցանիշի տեսակարար կշռի աճ՝ հանրապետության ընդհանուր ցուցանիշների կառուցվածքում կազմելով՝ 2006թ. – 60,6%, 2007թ. – 75,9%, 2008թ. – 86,2%:

Երևանում գործող առևտրային կազմակերպությունների հաշվեկշռային շահույթը 2008թ. կազմել է ընդհանուրի 86,2%-ը: Այս ցուցանիշն աճել է 2005-2008թթ. ընթացքում. 2008թ. 2007 թվականի համեմատ ավելացել է 10,3 տոկոսային կետով:

Գրաֆիկ 13

Առևտրային կազմակերպությունների հաշվեկշռային շահույթի դինամիկան, 2005-2008թթ.



Արտաքին առևտուր

2005-2008թթ. Հայաստանում և Երևանում արտահանման ծավալները աստիճանաբար նվազել են²⁰, իսկ ներմուծման ծավալները՝ ավելացել: ՀՀ-ում և Երևանում արտահանման ծավալները 2005 թվականի համեմատ 2006թ. համապատասխանաբար նվազել են 5,4%-ով և 20,7%-ով, 2007թ.՝ 5,5%-ով և 10,3%-ով, 2008թ.՝ 16,5%-ով և 20,08%-ով:

Աղյուսակ 28

Արտահանման և ներմուծման ծավալները, 2005-2008թթ.

Ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, առանց ֆիզիկական անձանց կողմից կազմակերպված առևտրի տվյալների, մլն. դրամ


		Հայաստանի Հանրապետություն				ք.Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Արտահանում	427318.0	404212.9	381960.5	319048.4	252215.8	200051.1	220567.0	176276.8
2.	Ներմուծում	772289.9	861689.7	1034446.2	1258865.6	539094.6	619570.8	817723.4	1032343.3

Ի տարբերություն արտահանման՝ 2005-2008թթ. Հայաստանի և Երևանի ներմուծման ցուցանիշն ունեցել է աճի միտում: Հայաստանում և Երևանում 2006թ. նախորդ տարվա համեմատ ներմուծման ծավալներն ավելացել են համապատասխանաբար 11,6%-ով և 14,9%-ով, 2007թ.՝ 20,05% և 31,9%-ով, իսկ 2008թ.՝ 21,7% և 26,2%-ով:

Հանրապետության արտահանման ընդհանուր ծավալում 2005թ. Երևանին բաժին է ընկել 59,02%-ը, 2006թ.՝ 49,5%-ը, 2007թ.՝ 57,75%-ը, 2008թ.՝ 55,3%-ը: 2005-2008թթ. ներմուծման ծավալների աճին զուգընթաց, դիտվում է Երևանի ներմուծման ծավալների տեսակարար կշռի աճ, որը Հայաստանի ներմուծման ընդհանուր ծավալում կազմել է՝ 2005թ.՝ 69,8%-ը, 2006թ.՝ 71,9%, 2007թ.՝ 79,05%, 2008թ.՝ 82,0%:

²⁰ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, էջ 92-93:

Ներմուծման ծավալների դինամիկան, 2005-2008թթ.



Մ Ո Ց Ի Ա Լ Ա Կ Ա Ն Ո Լ Ո Ր Տ

Առողջապահություն²¹

Երևան քաղաքի առողջապահական հաստատություններում աշխատում են 8849 բժիշկներ կամ հանրապետության բժիշկների 68,4%-ը, միջին բուժանձնակազմի քանակը 2008թ. կազմել է 8438 մարդ կամ Հայաստանում աշխատող բուժանձնակազմի 45,4%-ը: Հիվանդանոցային մահճակալների 59,0%-ը (7352) և ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում հաճախումների 42,0%-ը (4400.8 հազ. մարդ) նույնպես բաժին է ընկնում Երևան քաղաքին:

²¹ Ներառյալ գերատեսչությունները

Աղյուսակ 29

Առողջապահության հիմնական ցուցանիշները

		Հայաստանի Հանրապետություն				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1	Բժիշկների թվաքանակը, մարդ	12307	12388	12251	12929 ²²	8366	8457	8253	8849
2	Միջին բուժանձնակազմի թվաքանակը, մարդ	18364	18574	18595 ²³	18594	8006	8192	8375	8438
3	Հիվանդանոցային մահճակալների քանակը, հատ	14353	14276	13126	12358	7435	7393	7340	7352
4	Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը, միավոր	458	460	467	474	98	97	110	117
5	Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում, հազ.	7668.6	8508.1	9522.6	10402.6	3078.3	3277.2	3975.7	4400.8

Կենսաթոշակատուներ և նպաստատուներ

2008թ. կենսաթոշակատուների թվաքանակը Հայաստանում կազմել է 523839 մարդ (1000 բնակչի հաշվով 162.0 մարդ), Երևանում՝ 179546 (1000 բնակչի հաշվով 161.8 մարդ): Հայաստանի կենսաթոշակատուների ընդհանուր թվաքանակում Երևանի տեսակարար կշիռը 2006թ. կազմել է 33,8%, 2007թ.՝ 33,9%, 2008թ.՝ 34,3%:

Աղյուսակ 30

Կենսաթոշակատուների թվաքանակը

		2006		2007		2008	
		ընդամենը	1000 բնակչի հաշվով	ընդամենը	1000 բնակչի հաշվով	ընդամենը	1000 բնակչի հաշվով
1.	Հայաստանի Հանրապետություն	527496	163.8	522662	162.0	523839	162.0
2.	ք. Երևան	178049	161.2	177274	160.2	179546	161.8
3.	Ընդհանուրի %	33.8	-	33.9	-	34.3	-

²² Ներառյալ մասնավոր ատամնաբուժական պոլիկլինիկաների ստոմատոլոգները և ատամնաբույժները:

²³ Ներառյալ մասնավոր ատամնաբուժական պոլիկլինիկաների միջին բուժանձնակազմը:

2008թ. նպաստառու ընտանիքների քանակը Հայաստանում կազմել է 129414, Երևանում՝ 23863: Երևանում հաշվառված է Հայաստանի նպաստառու ընտանիքների 18,4%-ը, որը 2005 թվականից ունեցել է նվազման միտում, որը 2008թ. կազմել է 28,0% կամ 9142:

Աղյուսակ 31


Նպաստառու ընտանիքների քանակը

		2005	2006	2007	2008
1.	Հայաստանի Հանրապետություն	146726	139670	136917	129414
2.	ք. Երևան	33005	27542	26043	23863
3.	Ընդհանուրի %	22.5	19.7	19.0	18.4

2005-2008թթ. նվազել է նպաստառու ընտանիքների թիվը Հայաստանի կտրվածքով, նույն օրինաչափությունն է արձանագրվել նաև Երևանում, այսպես՝ 2005թ. այն կազմել է ընդհանուրի 22,5%-ը, 2006թ՝ 19,7%, 2007թ.՝ 19,0, 2008թ.՝ 18,4%:

Գրաֆիկ 15

Նպաստառու ընտանիքների քանակի դինամիկան, 2005-2008թթ.



Տնային տնտեսությունների հետազոտություն

2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում մեկ շնչի հաշվով տնային տնտեսության միջին ամսական սպառողական ծախսը կազմել է 28878²⁴ դրամ, Երևանում՝ 35082 դրամ, որը հանրապետական միջինին գերազանցել է 1.2 անգամ: Երևանում 2008 թվականին մեկ շնչի հաշվով տնային տնտեսության միջին ամսական սպառողական ծախսը կազմել է 35082 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 8,4%-ով և իր բացարձակ մեծությամբ գերազանցել է մյուս մարզերում գրանցված նույնանուն ցուցանիշին:

Հայաստանի Հանրապետությունում խոցելի խմբերի մոտ դիտվում է հետևյալ օրինաչափությունը.

- գործազուրկի գլխավորությամբ տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 25635 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 6,7%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.5 անգամ:

- բազմանդամ (6 և ավելի) տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 22893 դրամ, որը 2007 թվականին համեմատ աճել է 9,6%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.5 անգամ:

- Կենսաթոշակառուներով տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 26483 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 15,7%-ով, իսկ 2005 թվականի համեմատ՝ 1.4 անգամ:

- միայնակ կենսաթոշակառուներ՝ 2008 թվականին կազմել է 36340 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 26,4%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.3 անգամ:

- երեք և ավելի երեխաներ (0-4տ) ունեցող տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 19819 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 7,4%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.4 անգամ:

²⁴ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, վիճակագրական ժողովածու, 2009, էջ 186-188

- Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններ՝ 2008թ. կազմել է 29466 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 19,1%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.4 անգամ:

- Հինգ տարեկան և ավելի ցածր երեխաներ ունեցող տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 23958 դրամ, որը 2007թվականի համեմատ աճել է 8,7%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.4 անգամ

Աղյուսակ 32

Սպառողական ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով

Միջին ամսական, դրամ

	Հանրապետական միջին				ք. Երևան			
	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
Սպառողական ծախսերը	21109	23276	26297	28878	26294	29190	32368	35082

2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում տնային տնտեսության մեկ շնչի հաշվով սննդամթերքի վրա կատարած միջին ամսական ծախսը կազմել է 15211 դրամ: Այս նույն ցուցանիշը Երևան քաղաքում 2008 թվականին կազմել է 16458 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 4,5%-ով և իր բացարձակ մեծությամբ գերազանցել է մյուս մարզերում գրանցված նույնանուն ցուցանիշին:

Հայաստանի Հանրապետությունում խոցելի խմբերի մոտ դիտվում է հետևյալ օրինաչափությունը.

- գործազուրկի գլխավորությամբ տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 13477 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 3,6%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.3 անգամ:
- բազմանդամ (6 և ավելի) տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 11987 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 1,9%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.4 անգամ:
- կենսաթոշակառուներով տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 13607 դրամ, որը 2007 թվականին համեմատ աճել է 7,2%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.3 անգամ:

- միայնակ կենսաթոշակառուներ՝ 2008 թվականին կազմել է 21231 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 15,9%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.3 անգամ:
- երեք և ավելի երեխաներ (0-4տ) ունեցող տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 11028 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 4,3%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.3 անգամ:
- Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 15504 մարդ, որը 2007 թվականի համեմատ աճել է 12,2%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.4 անգամ:
- Հինգ տարեկան և ավելի ցածր երեխաներ ունեցող տնային տնտեսություններ՝ 2008 թվականին կազմել է 12752 դրամ, որը 2007 թվականի համեմատ աճել է 4.3%-ով, իսկ 2005 թվականի համեմատ աճել է 1.3 անգամ:

Աղյուսակ 33

Սննդամթերքի վրա կատարված ծախսերը տնային տնտեսության մեկ շնչի հաշվով

Միջին ամսական, դրամ

		Հանրապետական միջին				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Սպառողական ծախսերը	12214	13359	14316	15211	13591	14868	15744	16458

Աղքատության մակարդակը Հայաստանի

Հանրապետությունում և Երևանում²⁵

2008 թվականին Հայաստանում աղքատները կազմել են միջինում բնակչության 23,5%-ը, որից շատ աղքատ են համարվել 3,1%-ը, ոչ աղքատները՝ 76,5%-ը: 2008 թվականին Երևանի բնակչության 19,7%-ը համարվել են աղքատներ, որից շատ աղքատ՝ 3,2%, ոչ աղքատ՝ 80,3%:


2006-2008 թվականներին աղքատ բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում ունեցել է նվազման միտում թե՛ Հայաստանի և թե՛ Երևանի

²⁵ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով 2004-2008, վիճակագրական ժողովածու, էջ 188:

կտրվածքով. Հայաստանում 2006 թվականին այն կազմել է 26,5%, 2007 թվականին՝ 25,0%, 2008 թվականին՝ 23,5%, Երևանում համապատասխանաբար՝ 2006 թվականին՝ 21,0%, 2007 թվականին՝ 20,0%, 2008 թվականին՝ 19,7%:

Գրաֆիկ 16

Աղքատության մակարդակը



Կրթություն

Նախադպրոցական հաստատություններ

Երևան քաղաքում գործող 192²⁶ նախադպրոցական հիմնարկներում հաճախող երեխաների թվաքանակը 2008 թվականին կազմել է 23977, որը 2007թվականի համեմատ աճել է 4,8%-ով. (+1090): Հաճախող երեխաների աճին զուգընթաց՝ աճել է նաև մանկավարժների թվաքանակը: 2006 թվականին այն կազմել է 2074, 2007 թվականին՝ 2141, իսկ 2008 թվականին՝ 2203:

²⁶ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, վիճակագրական ժողովածու, 2009, էջ 103-126:

Նախադպրոցական հաստատություններ

		Հայաստանի Հանրապետություն				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Նախադպրոցական հաստատությունների քանակը	645	645	637	628	197	194	192	192
2.	Հաճախող երեխաների թվաքանակը	48674	48015	50491	53718	22413	22078	22887	23977
3.	Մանկավարժների թվաքանակը	5144	5059	5160	5337	2165	2074	2141	2203
4.	Մեկ ՆՀՀ միջին հաշվով հաճախում են	75	74	79	86	114	114	119	125

2008 թվականին Երևան քաղաքի նախադպրոցական հաստատությունների տեսակարար կշիռը հանրապետությունում կազմել է 30,5 %, հաճախող երեխաների թվաքանակը՝ 44,6 %, մանկավարժների թվաքանակը՝ 41,2%:

Հանրակրթական դպրոցներ

2008/2009 ուսումնական տարում Երևանի 268 հանրակրթական դպրոցներ հաճախել են 126458 աշակերտներ, որը 2007/2008 ուսումնական տարվա համեմատ նվազել է 3%-ով: Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ կա 196 դպրոց՝ միջնակարգ կրթության՝ 192, երեկոյան 1 դպրոց, հատուկ 3 դպրոց: Հատկանշական է, որ Հայաստանում գործող հանրակրթական դպրոցների 18,2%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ այդ դպրոցների մանկավարժների և աշակերտների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմում է 25,3% և 30,4%:

Հանրակրթական դպրոցներ

		Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
		2006/2007	2007/2008	2008/2009	2006/2007	2007/2008	2008/2009
1	Դպրոցների քանակը	1467	1452	1475	263	260	268
2	Աշակերտների թվաքանակը	465403	431280	414781	136265	130450	126458
3	Միջին հաշվով մեկ դպրոց հաճախում են	317.2	297.0	281.2	518.1	501.7	471.9
4	Դասարանների քանակը մեկ դպրոցում	13.7	13.1	15.8	14.9	19.8	21.5
5	Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	23.2	22.7	17.8	34.7	25.3	21.9
6	Մանկավարժների թվաքանակը	43113	41708	42601	11708	10715	10791
7	Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը	10.8	10.3	9.7	11.6	12.2	11.7
8	Մեկ դպրոցում աշխատող մանկավարժների թվաքանակը	29.4	28.7	28.9	44.5	41.2	40.3

Երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ

Հայաստանում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների թիվը կազմում է 212, որոնցից 44-ը՝ Երևանում: 2008/2009 ուսումնական տարում Երևանի նշված դպրոցներում սովորող աշակերտների թվաքանակը կազմել է 17300, որը նախորդ ուսումնական տարվա համեմատ աճել է 8%-ով (+1285), աշակերտների 46,7%-ը սովորում են վճարովի համակարգում, իսկ 2007/2008 ուսումնական տարում այդ ցուցանիշը կազմել է 43,8%:

Երևանի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները

Ուսումնական տարի	Դպրոցների քանակը	Աշակերտների թվաքանակը		
		ընդամենը	պետպատվերով	վճարովի
2006/2007	40	15887	9383	6504
2007/2008	40	16015	8999	7016
2008/2009	44	17300	9221	8079
2008/2009-ը 2007/2008-ի համեմատ (%)	-	8	2.5	15

2008/2009 ուստարում երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներում պետական պատվերով (անվճար) սովորող աշակերտների թվաքանակը 2007/2008 ուսումնական տարվա համեմատ աճել է 2,5%-ով:

Միջին մասնագիտական կրթություն

Հայաստանի 104 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից 37-ը կամ 35,6%-ը գործում են Երևան քաղաքում: 2008/2009 ուսումնական տարում այդ հաստատություններում սովորողների թիվը կազմել է 16002 ուսանող (հանրապետության 50,3%-ը), որը 5%-ով (+778) գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը, իսկ մանկավարժների թվաքանակը նվազել է 57-ով և կազմել է ՀՀ ցուցանիշի 44,9%-ը (1680 մանկավարժ):

Աղյուսակ 37

Միջին մասնագիտական կրթության ցուցանիշները

		Հայաստանի Հանրապետություն				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Միջին մասնագիտական հաստատությունների (մասնաճյուղերի) քանակը	111	108	106	104	40	39	39	37
2	Ուսանողների թվաքանակը	30818	30851	31149	31803	14490	14747	15224	16002
3	Մանկավարժների թվաքանակը	4213	3909	3757	3743	1943	1876	1737	1680
4	Ուսանողների թվաքանակը մեկ մանկավարժի հաշվով	7.3	7.9	8.3	8.5	7.5	7.9	8.8	9.5

2008թ. Երևան քաղաքի միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվել է 5898 դիմորդ և ավարտել 4186 շրջանավարտ: Եթե 2007 թվականին ընդունված դիմորդների 79,3%-ն ընդունվել են վճարովի համակարգ, ապա 2008 թվականին՝ 76,2 %-ը:

Աղյուսակ 38

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվածների և ավարտածների թվաքանակը

Տարեթիվ	Ընդունվածների թվաքանակը			Շրջանավարտների թվաքանակը		
	ընդամենը	անվճար	վճարովի	ընդամենը	անվճար	վճարովի
2006	5799	1044	4755	3584	863	2721
2007	5843	1207	4636	3764	911	2853
2008	5898	1402	4496	4186	1113	3073

Բարձրագույն ուսումնական հաստատություններ

Հայաստանի Հանրապետությունում գործող 90 բարձրագույն ուսումնական հաստատություններից 71-ը կամ 79%-ը կենտրոնացված են Երևանում, իսկ այդ բուհերի 114399 ուսանողներից 80,2%-ը (91806 ուսանողներ) սովորում են Երևան քաղաքում: Միաժամանակ, Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում պրոֆեսորադասախոսական կազմի 82,6%-ը (2118 մարդ) նույնպես աշխատում են մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատություններում: Երևանի բուհերի սովորող ուսանողների թվաքանակը 2008/2009 ուսումնական տարում ավելացել է՝ 2,7%-ով, սակայն պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակը նվազել է 1,5%-ով:

Աղյուսակ 39

Բարձրագույն ուսումնական հաստատություններ

		Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
		2006/2007	2007/2008	2008/2009	2006/2007	2007/2008	2008/2009
1	Բուհերի քանակը	87	85	90	68	67	71
2	Ուսանողների թվաքանակը	105830	112244	114399	85195	89397	91806
3	Պրոֆեսորադասախոսական անձնակազմի թվաքանակը	12521	12320	12169	10594	10205	10051

2007 թվականին բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվել է 20924 մարդ, որը 2008 թվականին աճել է 8,4%-ով, այդ թվում՝ 2008 թվականին ընդունվածների 82%-ն են ընդունվել ուսուցման վճարովի համակարգ, իսկ 2007

թվականին՝ 81%-ը: 2008 թվականին ավարտածների թվաքանակը կազմել է 20782 մարդ, որը 2007 թվականի համեմատ աճել է 42%-ով:

Աղյուսակ 40

**Երևան քաղաքի բարձրագույն ուսումնական հաստատություններ
ընդունվածները և ավարտածները**

Տարեթիվը	Ընդունվածների թվաքանակը			Ավարտածների թվաքանակը		
	ընդհանուր	անվճար	վճարովի	ընդհանուր	անվճար	վճարովի
2006	20914	3830	17084	12918	3404	9514
2007	20924	3851	17073	14645	3593	11052
2008	22686	4066	18620	20782	4591	16191

Մ Շ Ա Կ Ո Ւ Յ Թ

Թատրոններ

2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործող 26²⁷ թատերահանդիսային կազմակերպություններից 69,2%-ը կամ 18-ը Երևանում են:

Աղյուսակ 41

Թատրոնների գործունեության ցուցանիշները

	Հայաստանի Հանրապետություն				ք. Երևան			
	2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1. Թատրոնների քանակը	25	26	26	26	17	18	18	18
2. Ներկայացումների քանակը	2354	2352	2342	2364	1819	1874	1880	1963
3. Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	397.2	383.6	405.1	409.5	314.6	304.0	301.4	316.0
4. Ստացված հասույթը, հազ. դրամ	238679.1	250436.2	299249.9	323930.8	220000.7	228807.4	263502.1	292669.2

2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում թատերահանդիսային կազմակերպությունների կողմից ցուցադրվել է 2364 ներկայացում, որից 83%-ը կամ 1963-ը՝ Երևան քաղաքում: Աճը կազմել է 4,4%:

²⁷ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, վիճակագրական ժողովածու, 2009, էջ 127-140:

Հանրապետությունում 2008 թվականին ցուցադրված ներկայացումներին հաճախել է 409500 մարդ, որոնցից 316000–ը կամ 77,1%-ը՝ մայրաքաղաքում: 2008 թվականին Երևան քաղաքում ցուցադրված ներկայացումներին հաճախած մարդկանց թիվը 2007 թվականի համեմատ աճել է 4,8%-ով:

Թանգարաններ

Հայաստանում գործող 96 թանգարաններից, 57–ը կամ 59,4%-ը գտնվում են Երևանում, այդ թվում՝ 17 պատմական թանգարաններ, 31 գրական և արվեստի, 1 երկրագիտական, 6 հուշային և 2 ճյուղային:

2008 թվականին Երևան քաղաքի թանգարանների հիմնական ֆոնդի ցուցանիշների ընդհանուր քանակը 2007 թվականի համեմատ աճել է 0,65 %-ով՝ կազմելով 2021.9 հազ. միավոր: 2008 թվականին մայրաքաղաքի թանգարաններ է այցելել 673200 մարդ, որը 2007 թվականի համեմատ նվազել է 1,1%-ով: 2008 թվականին հանրապետության 96 թանգարաններ այցելած 813500 այցելուներից Երևանի թանգարաններ են այցելել 82,7%-ը կամ 673.2 հազ. մարդ:

Աղյուսակ 42

Թանգարանների գործունեության ցուցանիշները

	Հայաստանի Հանրապետություն	Զայաստանի			ք. Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1. Թանգարանների քանակը	96	96	96	57	57	57	
2. Հիմնական ֆոնդի ցուցանիշների ընդհանուր քանակը, հազ. միավոր	2290.1	2222.0	2312.1	2077.3	2008.9	2021.9	
3. Ցուցադրված նմուշների քանակը, հազ. միավոր	146.9	174.1	172.9	116.2	150.3	143.7	
4. Այցելուների թվաքանակը, հազ. մարդ	878.0	790.2	813.5	772.7	681.0	673.2	
5. Աշխատողների թվաքանակը, մարդ	1453	1412	1508	1053	1020	1006	

Երևանի թանգարաններում աշխատում է 01006 մարդ, որը ՀՀ թանգարաններում աշխատողների 67%-ն է:

Գրադարաններ

Հայաստանի Հանրապետությունում 2008 թվականին գործել են 1034 գրադարաններ, որոնցից 34–ը կամ 3,3%-ը՝ գտնվում են Երևան քաղաքում:

Աղյուսակ 36

Գրադարանների գործունեության ցուցանիշներ

		Հայաստանի Հանրապետություն				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Գրադարանների քանակը	1051	1045	1038	1034	33	33	33	34
2.	Գրքային ֆոնդը, հազ. օրինակ	19323.9	19227.0	19227.3	19249.0	8702.9	8720.8	8737.4	8779.1
3.	Ընթերցողների թվաքանակը, մարդ	650267	644714	641058	631745	136767	130302	137801	137026
4.	Սպասարկված գրականության քանակը, հազ. օրինակ	12117.0	12102.5	12432.3	12163.0	3305.8	3332.8	3606.7	3368.3
5.	Հաճախումների քանակը, հազ. մարդ	7156.1	6735.0	6732.5	6847.9	1195.0	1154.7	1215.1	1235.6

Գրադարանային ֆոնդը Հայաստանի Հանրապետությունում կազմում է 19249000, իսկ Երևանում՝ 8779100 օրինակ, որը Հայաստանի գրադարանների գրքային ֆոնդի 45,6%-ն է:

Համերգային կազմակերպություններ

2008 թվականի տվյալներով Հայաստանի Հանրապետությունում գործել են 20 համերգային կազմակերպություններ, որոնցից 18-ը գտնվում են Երևանում: 2008 թվականին մայրաքաղաքում կազմակերպվել է 471 համերգ, որը 2007 թվականի համեմատ ավելացել է 110-ով:

Աղյուսակ 43

Համերգային կազմակերպությունների գործունեության ցուցանիշները

		Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1.	Համերգային կազմակերպությունների քանակը	21	21	20	19	19	18
2.	Համերգների քանակը	554	401	496	527	361	471
3.	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	204.4	150.4	178.8	193.4	138.1	166.6
4.	Ստացված հասույթը, հազ. դրամ	53197.7	89282.9	164989.8	52697.7	88952.9	163971.0
5.	Հաճախողների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	369.0	375.0	360.5	367.0	382.5	353.6

Մայրաքաղաքի համերգասրահներ հաճախած հանդիսատեսների քանակը 2008թ. կազմել է 166.6 հազ. մարդ (ՀՀ ընդհանուր ցուցանիշի 93,2%-ը): Հանդիսատեսների

քանակը 2007թ. համեմատ աճել է 28.5 հազ. այցելուներով (+20.6%), սակայն 2006թ. համեմատ այդ ցուցանիշը 2008թ. նվազել է 26.8 հազարով (-14.0%):

Մարզական կազմակերպություններ

Հայաստանի Հանրապետությունում գործող 152 մարզական կազմակերպություններից 50–ը կամ 32,9%-ը գտնվում են Երևանում:

Երևան քաղաքում գործող մարզական կազմակերպությունների 1416 խմբերում 2008թ.մարզվել են 15812 մարզիկներ, որը կազմել է հանրապետությունում մարզվողների 39%–ը:

Աղյուսակ 44

Մարզական կազմակերպությունների գործունեության ցուցանիշները

		Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1.	Մարզական կազմակերպությունների քանակը	164	159	152	48	48	50
2.	Խմբերի քանակը	3558	3505	3568	1381	1417	1416
3.	Մարզիկների թվաքանակը, մարդ	40967	39615	40382	16001	15825	15812
4.	Մարզիչների թվաքանակը, մարդ	1764	1742	1711	636	657	653

Շրջակա միջավայր

2008թ. հանրապետությունում մթնոլորտային արտանետումները կազմել են 34362.7²⁸ տոննա, իսկ Երևան քաղաքում՝ 3054.6 տոննա (8,9%): Երևանում 2008թ. գրանցված մթնոլորտային արտանետումները 2007թ. համեմատ աճել են 2,2%–ով, իսկ 1 բնակչի հաշվով մթնոլորտային արտանետումները 2008 թվականին կազմել են 2.8կգ, որը 2007թ. համեմատ ավելացել է 0.1 կիլոգրամով:

2008թ. մթնոլորտային արտանետումները 1 քկմ հաշվով Երևան քաղաքում կազմել են 13456.4 կգ, որը 2007 թվականի համեմատ աճել է 2,2%–ով: Հանրապետությունում այդ նույն ցուցանիշը 2008թ. կազմել է 1206.2կգ: 2008թ. Երևան

²⁸ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, վիճակագրական ժողովածու, 2009, էջ 141-150:

քաղաքում գրանցված մթնոլորտային արտանետումները 1 քկմ-ի հաշվով 11.1 անգամ գերազանցել են ՀՀ նույնանուն ցուցանիշը:

Աղյուսակ 45

Մթնոլորտային արտանետումներ

		Հայաստանի Հանրապետություն				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Մթնոլորտային արտանետումներն անշարժ աղբյուրներից, տոննա	51144.3	43307.4	34239.1	34362.7	2805.8	2525.5	2989.9	3054.6
2.	Մթնոլորտային արտանետումները 1 բնակչի հաշվով, կգ	15.8	13.4	10.6	10.6	2.5	2.3	2.7	2.8
3.	1 քառ. կմ-ի հաշվով, կգ ²⁹	1714.6	1520.3	1202.1	1206.2	12360.4	11125.6	13171.4	13456.4
4.	Մթնոլորտ արտանետված փոշու քանակը, տոննա	2844.6	2944.6	2916.5	3059.6	651.0	474.0	601.9	630.1

Առաջացած թափոններ

Հայաստանի Հանրապետությունում 2008 թվականին առաջացած թափոնների ընդհանուր քանակը կազմել է 11455377.8 տոննա, որից 13933.3 տոննան կամ 0,12%-ը գրանցվել է Երևան քաղաքում: Ընդ որում, եթե Երևան քաղաքում 2007 թվականին առաջացած թափոնների քանակը կազմել է 31969.3 տոննա, ապա 2008 թվականին այն կրճատվել է 56,4%-ով և կազմել է 13933.3 տոննա:

Աղյուսակ 46

Առաջացած թափոնների քանակական և տեսակարար ցուցանիշները

		Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1.	Ընդամենը, տ.	12420720.4	13346023.9	11455377.8	352272.4	31969.3	13933.3
2.	Մեկ բնակչի հաշվով, կգ	3856.0	4136.4	3542.1	319.0	28.9	12.6
3.	Մեկ քառ. կմ-ի հաշվով, կգ ³⁰	436027.4	468567.6	402232.4	1551860.8	140833.9	61380.2

Երևան քաղաքում 2008 թվականին բնապահպանության ընթացիկ ծախսերը 2007 թվականին կատարած բնապահպանական ընթացիկ ծախսերի համեմատ աճել են 30%-ով՝ կազմելով 2151.2 մլն դրամ, որը հանրապետական նույնանուն ցուցանիշի 48,6%-ն է կազմում:

²⁹ Առանց Սևանա լճի հայելու մակերեսի

³⁰ Առանց Սևանա լճի հայելու մակերեսի

Աղյուսակ 47

Բնապահպանության ընթացիկ ծախսեր

		Հայաստանի Հանրապետություն				ք. Երևան			
		2005	2006	2007	2008	2005	2006	2007	2008
1.	Փաստացի ծախսերը, մլն դրամ	3419.9	1712.6	2945.8	4426.1	2877.2	1175.7	1652.4	2151.2
2.	Ծախսերը բնապահպանական ընթացիկ ծախսերը կատարած մեկ կազմակերպության հաշվով, հազ. դրամ	7588.7	3177.4	4624.5	6557.2	10857.4	3945.3	5163.9	6619.0

Կոմունալ տնտեսություն

Կոյուղի

2008թ. տվյալներով՝ Երևանում կոյուղու գլխավոր կոլեկտորի միագիծ երկարությունը 218.3 կմ է (ՀՀ 32.0%), փողոցային ցանցինը՝ 574.1 կմ (ՀՀ ցուցանիշի 20,6%-ը), որից փոխման կարիք ունեն 37.1-ը, միջթաղային և միջբակային ցանցի երկարությունը 266.7 կմ է (ՀՀ ցուցանիշի 58,6%-ը):

Աղյուսակ 48

Կոյուղու համակարգի միագիծ երկարությունը

Կմ

		ՀՀ			ք. Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1.	Գլխավոր կոլեկտորի միագիծ երկարությունը	924.0	936.4	683.1	217.4	217.9	218.3
2.	Փողոցային ցանցի երկարությունը	2446.2	2374.6	2785.5	573.7	574.1	574.1
2.1	փոխման կարիք ունեն	1184.2	1305.8	1310.2	315.5	344.2	372.9
3.	Միջթաղային և միջբակային ցանցի երկարությունը	452.7	455.1	455.1	266.6	266.7	266.7

Ջրմուղ

Հայաստանի Հանրապետությունում 2008 թվականին ջրատարի երկարությունը կազմել է 5408.8կմ³¹, որից 803.8կմ-ը (15%) բաժին է ընկնում Երևանին, փողոցային ցանցի երկարությունը կազմել է 6437.8կմ, որից Երևանում՝ 913.8կմ կամ 14.2), միջթաղային և միջբակային ցանցի երկարությունը կազմել է 987.0կմ, որից Երևանում՝ 405.6կմ կամ 41%:

Աղյուսակ 49

Ջրմուղի ցանցի միագիծ երկարությունը

		Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1.	Ջրատարի երկարությունը	5408.8	5355.9	5357.5	803.8	803.8	803.8
2.	Փողոցային ցանցի երկարությունը	6381.1	6436.3	6437.8	912.1	913.6	913.8
2.1	որից՝ կարիք ունեն փոխման	3853.8	3880.0	3940.2	592.0	637.6	683.3
3.	Միջթաղային և միջբակային ցանցի	923.2	986.9	987.0	405.5	405.5	405.6

Հայաստանի սպառողներին 2008 թվականին բաց է թողնվել 99.5 մլն մ³ ջուր, որից 59.5 մլն խմ կամ 60%-ը՝ Երևանում (+7.4%):

Աղյուսակ 50

Սպառողներին բաց թողնված ջրի ծավալները

		Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1.	Սպառողներին բաց թողնված ջրի ծավալը, մլն. խմ	98.3	93.7	99.5	56.8	55.4	59.5
2.	%-ով սպառողներին տրված փաստացի ջրի ընդհանուր ծավալից						
2.1	բնակչությանը	70.1	64.7	64.7	70.1	59.0	59.5
2.2	կոմունալ-կենցաղային և արտադրական օբյեկտներին	29.9	35.3	35.3	29.9	41.0	40.5

Ջրառ, ջրօգտագործում և ջրահեռացում

2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր ջրառը կազմել է 2873.5 մլն մ³, որից 15,5%-ը՝ Երևան քաղաքում: Հայաստանում ընդհանուր

³¹ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, վիճակագրական ժողովածու, 2009, էջ 181-183:

ջրօգտագործումը կազմել է 1955.1 մլն մ³, որից 6,9%-ը Երևանում: Կեղտաջրերի հեռացումը հանրապետությունում կազմել է 205.1 մլն մ³, որից 18,2%-ը՝ Երևանում:

Աղյուսակ 51

Ջրառի, ջրօգտագործման և ջրահեռացման ցուցանիշները

		Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
		2006	2007	2008	2006	2007	2008
1.	Ընդհանուր ջրառը	2826.9	3012.1	2873.5	410.2	495.1	448.0
2.	Ընդհանուր ջրօգտագործումը	1991.2	2145.2	1955.1	105.2	120.0	136.0
3.	Կորուստները տրանզիտային տեղափոխման ժամանակ	835.7	866.9	918.5	305.0	375.1	311.9
4.	Կեղտաջրերի հեռացումը	302.9	294.5	205.1	83.3	82.3	37.4

Երևան քաղաքում 2008 թվականին օգտագործվել է 49.2 մլն խմ տնտեսական և խմելու նշանակության ջուր, որը 2007 թվականի համեմատ նվազել է 10.6 մլն խմ-ով, օգտագործվել է 44.5 մլն խմ արտադրական նշանակության ջուր, որը 2007 թվականի համեմատ աճել է 15.8 մլն խմ-ով, օգտագործվել է 30.2 մլն խմ ոռոգման նշանակության ջուր, որը 2007 թվականի համեմատ աճել է 7.1 մլն խմ-ով, օտագործվել է 12.1 մլն խմ գյուղատնտեսական նշանակության ջուր, որը 2007 թվականի համեմատ նվազել է 44.9 մլն խմ-ով:

Աղյուսակ 52

Ջրօգտագործման բաշխվածությունն ըստ նշանակության

Մլն մ³

	Հայաստանի Հանրապետություն			ք. Երևան		
	2006	2007	2008	2006	2007	2008
Տնտեսական և խմելու	102.5	107.8	115.4	60.8	59.8	49.2
արտադրական	96.4	147.3	127.3	23.5	28.7	44.5
ոռոգման	1606.1	1721.1	1681.3 ³²	20.8	23.1	30.2
գյուղատնտեսական	186.2	169.0	31.1 ³³	0.1	8.4	12.1

³² Ներառված է ոռոգման, գյուղատնտեսական և ձկնաբուծության նշանակության ջրօգտագործումը:

³³ Միայն այլ նշանակության ջրօգտագործումն է՝ առանց գյուղատնտեսական նշանակության:

Գազիֆիկացում

2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը ամբողջ հանրապետությունում կազմել է 9688.64³⁴ կմ, որից 1449.62 կմ կամ 14,96%-ը բաժին է ընկնում Երևան քաղաքին, այդ թվում՝ 2007թվականի հունվարի 1-ի դրությամբ Երևան քաղաքի գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը կազմել է 1193.42կմ: Այն 2008թ. ավելացել է 174.39կմ-ով (14,6%): Աճի միտումը նկատվել է նաև 2009 թվականին՝ 81,81 կմ-ով կամ 6%-ով:

Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականին գազիֆիկացվել է 573953 բնակարան և բնակելի տուն, որոնցից 222784-ը կամ 38.8%-ը գտնվում են Երևան քաղաքում: 2007թվականի հունվարի 1-ի դրությամբ Երևան քաղաքում գազիֆիկացված է եղել 147241 բնակարաններ և բնակելի տներ, 2008 թվականին այս ցուցանիշն ավելացել է 45329-ով, 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ գազիֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը կազմել է 222784, որը 2008 թվականի համեմատ աճել է 15,7%-ով:

Աղյուսակ 53

Գազի բաշխիչ միագիծ երկարությունը և գազիֆիկացված բնակարանների ու բնակելի տների քանակը

Հունվարի 1-ի դրությամբ

	Հայաստանի Հանրապետություն					ք. Երևան				
	2005	2006	2007	2008	2009	2005	2006	2007	2008	2009
1. Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը, կմ	6161.7	7320.81	8109.12	8777.38	9688.64	677.4	937.25	1193.42	1367.81	1449.62
2. Գազիֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը, միավոր	269786	360637	438879	516272	573953	66700	109878	147241	192570	222784

³⁴ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, վիճակագրական ժողովածու, 2009, էջ 175-180:

Ե Ր Ե Վ Ա Ն Ի Ս Ո Ց Ի Ա Լ - Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

Վ Ի Ճ Ա Կ Ի Բ Ն Ո Ի Թ Ա Գ Ի Ր Ը

2009թ. հունվար-սեպտեմբերին

Ժ ն դ ն վ ը ղ ա գ ը ն լ թ յ ն լ ն

2009թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Երևան քաղաքի մշտական բնակչությունը կազմել է 1115.8 հազ. մարդ:

2009թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունում և Երևանում արձանագրվել են համապատասխանաբար 32072 և 11374 ծնվածներ, բնական հավելաձևը կազմել է 11516 և 4818 մարդ, գրանցված ամուսնությունները Երևանում կազմել են 4984 դեպք:

Արդյունաբերություն

2009թ. հունվար-սեպտեմբերին Հայաստանի Հանրապետությունում, ընթացիկ գներով, թողարկվել է 459694.6 մլն դրամի արդյունաբերական արտադրանք, որից Երևանում՝ 211000.6 մլն դրամի (ընդհանուրի՝ 45,9%-ը): Պատրաստիարտադրանքի իրացումը հանրապետությունում կազմել է 468757.8 մլն դրամ, Երևանում՝ 212864.6 մլն դրամ (ընդհանուրի՝ 45,4%-ը): 2008թ. հունվար սեպտեմբերի նկատմամբ հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է 88,6%, իսկ Երևանում՝ 88,8%:

Աղյուսակ 54

Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2009թ. հունվար-սեպտեմբերին³⁵

		ՀՀ	ք.Երևան
1.	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն դրամ	459694.6	468757.8
2.	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, մլն դրամ	211000.6	212864.6
3.	Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %	88,6	88,8

³⁵ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-սեպտեմբերին, էջ 16:

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում Երևանի տեսակարար կշիռը 2009թ. 9 ամիսներին կազմել է 45,9%-ը, Սյունիքի մարզում՝ 13,2%-ը, Կոտայքում՝ 11,3%, Արարատում՝ 8,6%, և Շիրակի մարզում՝ 2,9%:

Շինարարություն

2009թ. հունվար-սեպտեմբերին Հայաստանում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը կազմել է 235207 քմ, որը 2008թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 6,9%-ով: Երևանում բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը 202501 քմ է, որը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 100%:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով մայրաքաղաքում 2009 թվականին հատկապես նվազել են կապիտալ շինարարության ծավալները: Դրանք 2008թ. համեմատ նվազել են շուրջ 48%-ով:

Աղյուսակ 55

Շինարարության հիմնական ցուցանիշները

		ՀՀ	ք. Երևան
1.	Հիմնական միջոցների գործարկում, մլն դրամ	141272.6	120790.6
2.	Շինարարություն, ընդամենը	364646.9	274419.9
	<i>այդ թվում՝</i>		
2.1	շինմոնտաժային աշխատանքներ	278077.6	196470.3

2009թ. հունվար-սեպտեմբերին Հայաստանում հիմնական միջոցների գործարկումը կազմել է 141272.6 մլն դրամ, որի 85,5%-ը բաժին է ընկնում Երևանին (120790.6 մլն դրամ): Հանրապետությունում շինարարության ծավալները 2009թ. հունվար-սեպտեմբերին կազմել են 364646.9 մլն դրամ, որի 75,2%-ն իրականացվել է Երևանում (274419.9 մլն դրամ):

Տրանսպորտ

2009թ. հունվար-սեպտեմբերին ներհանրապետական ավտոմոբիլային բեռնափոխադրումների ծավալը կազմել է 3401.3 հազ. տոննա, Երևան քաղաքում՝ 512.0 հազ. տոննա կամ ՀՀ ցուցանիշի 15,0%-ը:

Աղյուսակ 56

Ավտոմոբիլային տրանսպորտի հիմնական ցուցանիշները 2009թ.
 հունվար-սեպտեմբերին

		ՀՀ	ք. Երևան
1.	Բեռնափոխադրումների ծավալը, հազ. տոննա	3401.3	512.0
2.	Բեռնաշրջանառությունը, մլն տոննա-կմ	108.8	50.8
3.	Ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ	164292.3	128524.4
4.	Ուղևորաշրջանառությունը, մլն ուղևոր-կմ	1874.5	1374.6

Հայաստանում ուղևորափոխադրումների ծավալը 2009թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 1,5%-ով, իսկ Երևանում՝ 0,4%-ով՝ կազմելով համապատասխանաբար 164292.3 հազ. մարդ և 128524.4 հազ. մարդ:

Հանրապետությունում 2009թ. հունվար-սեպտեմբերին ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը կազմել է 1874.5 մլն ուղևոր-կմ, որից Երևանին բաժին է ընկնում 73,3%-ը (1374.6 մլն ուղևոր-կմ):

Առևտուր և ծառայություններ

2009թ. 9 ամիսներին Երևանի մանրածախ առևտրի օբյեկտներում ընդհանուր առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 559530.2 մլն դրամ, որը կազմում է ՀՀ ցուցանիշի 80,2%-ը:

2009թ. հունվար-սեպտեմբերին հանրային ծառայությունների ծավալը հանրապետությունում կազմել է 533181.5 մլն.դրամ, որի 89,5%-ը (477003.9 մլն դրամ) բաժին է ընկնում Երևանին: Նույն ժամանակահատվածում Երևանում միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը կազմել է 428344.0 դրամ, իսկ հանրապետության կտրվածքով՝ 164460.7: Երևանում մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը հանրապետության միջինի նկատմամբ կազմում է 260,5%:

2009թ. սեպտեմբերին սպառողական գների ինդեքսը 2008թ. դեկտեմբերի նկատմամբ Երևանում կազմել է 103,0%, սպառողական ապրանքներինը՝ 100,1%, իսկ ծառայությունների սակագների ինդեքսը 109,5%:

2008թ. դեկտեմբերի նկատմամբ 2009թ. սեպտեմբերին Երևանում վառելիքը էժանացել է 10,1%-ով, դեղամիջոցները թանկացել են 30,3%-ով, գրենական պիտույքները՝ 34,6%-ով:

Երևանում 2009թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ պարենային ապրանքներից միսը թանկացել է 2,5%-ով, շաքարավազը՝ 29,4%-ով, էժանացել է բուսական յուղը՝ 32,4%-ով:

Աշխատանքի շուկայի ցուցանիշները

Տնտեսապես ակտիվ բնակչությունը հանրապետությունում 2009թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1184.8 հազ. մարդ³⁶, որի 29,2%-ը (345.8 հազ. մարդ) բաժին է ընկնում մայրաքաղաքին: Զբաղվածների թիվը Հայաստանում նույն ժամանակաշրջանում կազմել է 1104.0 հազ. մարդ, Երևանում՝ 324.0 հազ. մարդ կամ ընդհանուրի 29,3%-ը, իսկ գործազուրկներինը՝ համապատասխանաբար՝ Հայաստանում՝ 80.8 հազ. մարդ, մայրաքաղաքում՝ 21,8 կամ ընդհանուրի 27,0%-ը:

Գործազրկության մակարդակը հանրապետությունում 6,8% է. Երևանում՝ 6,3%:

2009թ. սեպտեմբերին հանրապետությունում աշխատանք փնտրողների թիվը 99.5 հազ.մարդ էր, իսկ Երևանում՝ 27.6 հազ. մարդ (27,7%):

³⁶ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-սեպտեմբերին, էջ 70:

Աղյուսակ 57

Աշխատուժի առաջարկը, 2009թ. սեպտեմբերի վերջի դրությամբ

	Աշխատանք փնտրողներ			նրանցից՝ չգրադավաճներ			որոնցից՝ գործազուրկներ		
	ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ, տարեկան		ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ, տարեկան		ընդամենը	նրանցից՝ երիտասարդներ, տարեկան	
		16-24	25-30		16-24	25-30		16-24	25-30
Հայաստանի Հանրապետություն	99.5	8.3	13.0	84.9	5.9	10.8	83.1	5.8	10.4
ք. Երևան	27.6	1.2	3.0	25.4	1.0	2.7	25.2	1.0	2.6

Աշխատանքի վարձատրություն

Միջին ամսական անվանական աշխատավարձը 2009թ. օգոստոսին հանրապետությունում կազմել է 98758 դրամ³⁷, իսկ Երևանում՝ 109674 դրամ, որը 11,1%-ով ավելի է հանրապետական միջինից: 2008թ. նույն ամսվա նկատմամբ Երևանում միջին աշխատավարձը աճել է 8,3%-ով:

Աղյուսակ 58

Միջին ամսական անվանական աշխատավարձը, ըստ տնտեսության հատվածների, 2009թ. հունվար-հունիս

	Միջին աշխատավարձը, ընդամենը, դրամ	պետական և համայնքային		մասնավոր	
		դրամ	2008թ. հունվար-հունիսի նկատմամբ, %	դրամ	2008թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
Հայաստանի Հանրապետություն	96337	80615	118.1	119450	105.9
ք. Երևան	106841	97953	116.8	128428	110.0

Հանրապետությունում 2009թ. առաջին կիսամյակում միջին աշխատավարձը կազմել է 96337 դրամ, իսկ Երևանում՝ 106841 դրամ: Պետական և համայնքային աշխատողների միջին աշխատավարձը 2008թ. նույն ժամանակաշրջանի համեմատ հանրապետությունում աճել է 18,1%-ով, իսկ Երևանում՝ 16,8%-ով, մասնավոր հատվածում՝ համապատասխանաբար՝ 5,9%-ով և 10,0%-ով:

³⁷ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվար-սեպտեմբերին, էջ 80:

Աղյուսակ 59

**Միջին ամսական անվանական աշխատավարձը, ըստ վարչական շրջանների,
 2009թ. հունվար-հունիս**

	Երևան վարչական շրջանների անվանումը	դրամ	2008թ. հունվար-հունիսի նկատմամբ, %
	ք. Երևան	106841	113.2
1.	Աջափնյակ	79907	112.1
2.	Ավան	65594	111.8
3.	Արաբկիր	102650	109.7
4.	Դավթաշեն	68982	110.9
5.	Էրեբունի	91440	123.1
6.	Կենտրոն	123434	111.1
7.	Մալաթիա-Սեբաստիա	87539	115.6
8.	Նոր Նորք	86698	122.9
9.	Նորք-Մարաշ	145132	108.5
10.	Նուբարաշեն	76065	112.1
11.	Շենգավիթ	95334	117.2
12.	Քանաքեռ-Զեյթուն	135736	107.6

Երևանի վարչական շրջաններում 2009թ. հունվար-հունիսին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճի միտում է ունեցել, ընդ որում՝ առավելագույն ցուցանիշը գրանցվել է Կենտրոն վարչական շրջանում՝ 123434 դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 11,1%-ով, իսկ նվազագույնը գրանցվել է Ավան վարչական շրջանում՝ 65594 դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է 11,8%-ով:

Արտաքին առևտուր

Աղյուսակ 60

Արտաքին առևտուրը, 2008-2009թթ. հունվար-սեպտեմբերին

(ըստ բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների, առանց ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի ծավալների)


	Արտահանում				Ներմուծում			
	2008		2009		2008		2009	
	ծավալը, հազ. դոլար	տեսակարար կշիռը, %	ծավալը, հազ. դոլար	տեսակարար կշիռը, %	ծավալը, հազ. դոլար	տեսակարար կշիռը, %	ծավալը, հազ. դոլար	տեսակարար կշիռը, %
Հայաստանի Հանրապետություն	811928.4	100.0	471605.7	100.0	2910794.6	100.0	2151579.4	100.0
ք. Երևան	458523.1	56.5	262758.7	55.7	2369304.2	81.4	1749886.6	81.3

2009թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ հանրապետությունում և Երևանում նվազել են արտահանման ծավալները համապատասխանաբար՝ 41,9%-ով և 42,7%-ով: 2009թ. հանրապետության արտահանման ծավալի 55,7%-ը բաժին է ընկել Երևանին:


Գրաֆիկ 17

Գրաֆիկ 18

Արտահանում (հազ.դոլար)



Ներմուծում (հազ. դոլար)



Ներմուծման ծավալները ևս նվազել են. 2009թ. հունվար-սեպտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ հանրապետությունում՝ 26,1%, իսկ Երևանում՝ 26,2%-ով:

Ք Ա Ղ Ա Ք Ա Շ Ի Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ե Վ

Ճ Ա Ր Տ Ա Պ Ե Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Վիճակի գնահատում

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի N 2330-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը: Այն գործողության մեջ է դրվել 2006թ-ից, որով նախանշված են քաղաքի զարգացման հեռանկարները մինչև 2020 թվականը:

ՀՀ կառավարության կողմից 2006թ-ին հաստատվել է նաև Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը՝ հստակ ժամանակացույցով, որի հիման վրա հետագա տարիների համար որդեգրվել է ծրագրավորված քաղաքաշինական քաղաքականության իրականացում, իրականացվել են միջոցառումներ, որոնք ուղղված են Երևանի հետագա քաղաքաշինական զարգացումներին, ընդհանուր վիճակի բարելավմանը, ժամանակի պահանջներին համահունչ վերակառուցման աշխատանքներին: 2006-2009 թվականների ընթացքում մշակվել են մի շարք ծրագրային քաղաքաշինական և նախագծանախահաշվային փաստաթղթեր: Մասնավորապես գոտիավորման նախագծեր են մշակվել և հաստատվել Կենտրոն, Արաբկիր, Աջափնյակ, Նորք-Մարաշ, Դավթաշեն, Շենգավիթ թաղային համայնքների և քաղաքի առանձին տարածքների համար (Տիչինայի փողոցին հարակից և Մարս գործարանին հարակից տարածքներ, ինչպես նաև Ավանի, Էրեբունու, Մալաթիա-Սեբաստիա համայնքների առանձին հատվածների): Նշված ծրագրային փաստաթղթերը սահմանում են առանձին տարածքների նպատակային օգտագործման ձևերն ու հնարավորությունները, կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով կառուցապատման համար պարտադիր պահանջները և չափորոշիչները, որոնք պարտադիր հիմք են հանդիսանում ճարտարապետա-հատակագծային առաջադրանքների ձևակերպման և տրամադրման համար:

Գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծերի հաստատված դրույթներին համապատասխան Երևանում շարունակական ձեռնարկվել են քաղաքի

առանձին տարածքների համալիր կառուցապատման, կանաչապատման, մայրուղիների տրանսպորտային հանգույցների, հետիոտն անցումների կառուցման լայնածավալ շինարարական աշխատանքներ, որոնց նպատակն է ապահովել քաղաքի ողջ տարածքում բնակվելու, աշխատանքի, հանգստի, հասարակական սպասարկման համար անհրաժեշտ քաղաքաշինական ինֆրաստրուկտուրաների հավասարաչափ զարգացում:

2006-2008թթ. ընթացքում իրականացվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրացման միջոցառումների մոնիթորինգի աշխատանքներ, որով վերահսկվել և ամրագրվել է նախանշված միջոցառումների կատարման ընթացքը: Դրա հիման վրա 2009 թվականից իրականացվում է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրացման վերլուծություն և մինչև 2020թ. շինարարության ծրագրի կազմում: Վերջինս հիմք կհանդիսանա 2010 թվականի ընթացքում գլխավոր հատակագծի մեջ վերջնական ճշտումներ իրականացնելու համար:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հիմնադրույթներին համապատասխան, մայրաքաղաքի համաչափ զարգացումը և բնակչության կենսական շահերը համարելով ռազմավարական կարևորագույն խնդիրներ, 2010-2013թթ. կիրականացվեն նպատակային համալիր ծրագրեր (Հավելված 2՝ «Գազամատակարարում», «Էլեկտրամատակարարում», «Երևան քաղաքում կառուցապատվող տարածքների ջրամատակարարումը և կոյուղին», «Երևան քաղաքի զարգացմանն ուղղված քաղաքաշինական ծրագրերի գերակայությունները 2010-2013թթ.», «Երևան քաղաքի զարգացմանն ուղղված քաղաքաշինական ծրագրերի գերակայությունները, 2010թ.»):

Այդ ծրագրերով, մասնավորապես նախատեսվում է.

- Երևան – քաղաքամերձ գոտի – ագլոմերացիա տարածքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված համատեղ նպատակահարմար քաղաքաշինական գործառույթների իրականացում և դրանց իրավական հիմքերի ստեղծում:
- Գլխավոր հատակագծի դրույթներին և գոտիավորման նախագծերում ամրագրված պահանջներին համապատասխան Երևանի կառուցապատման ամբողջականացում և արդիականացում, առանձին հատվածների

վերակառուցում և, մասնավորապես, բարոյապես մաշված, խարխուլ ֆոնդի իրացման արդյունքում քաղաքաշինական նոր կառուցապատման իրականացում:

- Երևանի Կենտրոնի ֆունկցիոնալ, տրանսպորտային գերբեռնվածության թուլացում և այդ նպատակով՝

- Գլխավոր հատակագծով նախատեսված հատակագծային գոտիներում համաքաղաքային նշանակության գործառույթներով օժտված կենտրոնների ստեղծում՝ հարակից մարզերի հետ կապող հաղորդակցության մայրուղիների շուրջ:

- Երևանի փոքր կենտրոնի անմիջապես հարակից տարածքում միջազգային մշակութային, դիվանագիտական, գործարարական նոր կենտրոնի ստեղծում:

- Կենտրոն վարչական շրջանի առանձնացում, որպես ունիկալ քաղաքաշինական միջավայրով և գործառույթներով օժտված հատակագծային գոտի:

- Երևանի կենտրոնը շրջանցող մայրուղային ցանցի զարգացում, փողոցաճանապարհային ցանցի կատարելագործում, տրանսպորտային երթևեկության կազմակերպման ավտոմատացված համակարգի ստեղծում, ավտոտրանսպորտային միջոցները փողոցներում և նրանց հարակից տարածքներում կայանելու համալիր կանոնակարգման մեխանիզմների ներդրում:

- Հետիոտն շարժման անվտանգության նկատառումներից ելնելով ստորգետնյա և վերգետնյա անցումների կառուցում:

- Մայրաքաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների բարելավում, բարեկարգում, նոր կանաչ զանգվածների հիմնում, այդ թվում գյուղատնտեսական արտադրության համար զբաղեցված տարածքների աստիճանաբար վերապրոֆիլավորմամբ:

- Բակային տարածքների (բնակչության հանգստի և ժամանցի կազմակերպման առաջին մակարդակ) բարեկարգում, կանաչապատում, սպորտային և խաղահրապարակների ստեղծում, ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում:

- Արդյունաբերական գոտիների և արտադրական օբեկտների հողային տարածքների օպտիմալացում, կանոնակարգում և ներքին վերակառուցում նորագույն տեխնոլոգիաների պահանջներին համապատասխան:

Կենտրոն վարչական շրջանի արդյունաբերական շենքերի և նրանցով զբաղված տարածքների վերապրոֆիլավորում՝ բնակելի և հասարակական բնույթի կառուցապատում իրականացնելու նպատակով:

- Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանում, վերականգնում, ժամանակակից կառուցապատման մեջ ընդգրկման և օգտագործման նպատակով սահմանված կարգով դրանց արդիականացում և վերակառուցում:
- Ինժեներական հաղորդակցուղիների և ինժեներական ցանցերի արդիականացում: Անհրաժեշտ նոր հզորությունների ստեղծում:

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

Վիճակի գնահատում

Արտաքին գովազդը Երևանում ճարտարապետական միջավայրի ձևավորման հիմնական տարրերից է: Եվրոպական մայրաքաղաքների փորձը ցույց է տալիս, որ գովազդային ձևավորմամբ զբաղվող մասնագետները վաղուց արդեն հրաժարվել են նման խոշոր չափերի գովազդային վահանակներից: Հատկապես մայրաքաղաքի փոքր կենտրոնում գովազդային վահանակները ծայրահեղ տգեղ տեսք ունեն: Տեղին է նշել քաղաքի գլխավոր փողոցի օրինակը՝ Մաշտոցի պողոտա, որը ողողված է նման վահանակներով: Այստեղ պետք է արմատապես վերանայել գիշերային լուսավորության կազմակերպման հարցը, ինչպես փողոցի երթևեկող, այնպես էլ՝ հետիոտնային հատվածների: Ծառերի սաղարթավոր մասը լուսավորությունը անարդյունավետ է դարձնում: Փողոցի հեռանկարի տեսանելիությանը խանգարում են բազմաթիվ գովազդային վահանակները, որոնք տեսողական պատենշ են իրենց գունային և ծավալային լուծումներով հանդերձ:

Մարդու համար կարևոր է, այսպես կոչված, «մերձակա գոտին», որը գտնվում է գետնից մոտ 3-4 մ ուղղազծով հատվածում և, որտեղ կենտրոնացված է քաղաքի բնակչին ուղղված տեսողական տեղեկատվության ամենամեծ քանակը: Ինչ վերաբերում է քաղաքում օրեցօր ավելացող զբոսաշրջիկներին և մայրաքաղաքի հյուրերին, ապա վերջիններս բոլորովին չեն ապահովվում անհրաժեշտ տեղեկատվությամբ հյուրանոցների, մայրաքաղաքի հիմնական մշակութային օջախների, հասարակական սննդի կետերի և զուգարանների գտնվելու վայրերի վերաբերյալ. բացակայում են խորհրդանշող վահանակները, ինչպես նաև մայրաքաղաքի մուտքերը խորհրդանշող վահանակները: Քաղաքի ձևավորման գործում առանձնակի տեղ է զբաղեցնում բնատեսք (լանդշաֆտային) ձևավորումը, այն է՝ ձևավորել տարածական պայմաններ և հագեցնել միջավայրը բնության բնական տարրերով: Այստեղ պետք է առանձնացնել նաև քաղաքի բնակերտ տարրերը՝ սիզամարգերը, ծաղկանոցները, բարձր և ցածր կանաչ գոտին մակերևույթի ռելիեֆի տատանումները, ջրամբարները և այլն:

Ձևավորման միջոցների համալիրում բաց տարածությունների կազմավորման համար նշանակալի է միջավայրը հագեցնող ճարտարապետական փոքր ձևերի դերը: Դրանց թվին են պատկանում ցանկապատերը, շատրվանները, լողավազանները, լապտերները, նստարանները, ծածկերը, տաղավարները, կրպակները և միջավայրի այլ տարրեր: Կրպակները և մանր առևտրի համար նախատեսված տաղավարները տեղադրված են քաղաքում ծայրահեղ տարերային ձևով: Հաճախ բավականին մեծ ծավալների առկայությունը չի կարող բարվոք համարվել: Փողոցների գլխավոր մայրուղիների կրպակները և տաղավարները տեղադրված են մայթերի վրա, ինչը չի նպաստում փողոցի ճարտարապետական միջավայրի տեսողական ճիշտ ընկալմանը և խանգարում է փողոցի հետիոտնային մասի մարդկանց հոսանքին:

Քաղաքի կենտրոնում գրեթե բացակայում են պասիվ հանգստի գոտիները: Գարտարապետական փոքր ձևերին ավանդաբար պատկանում են շատրվանները, ջրամբարները և լողավազանները, որոնց քանակը քաղաքում քիչ է:

Քաղաքի գեղագիտական միջավայրի կազմավորման վիճակի գնահատականը պետք է դառնա քաղաքի ձևավորման խնդիրների լուծման ելակետը:

Քաղաքային միջավայրի ձևավորման խնդիրների գիտակցումը հաջորդում է այս ոլորտում իրավիճակի վերլուծությանը: Այս կամ այն եղելության գնահատման ժամանակ պետք է հիշել, որ նոր միջավայր ստեղծելու ստեղծագործական գործընթացի հիմնական իմաստը կայանում է նյութական միջավայրի կազմավորումը և տարածության կազմակերպումն է՝ ելնելով մարդկանց, քաղաքի բնակիչների շահերից:

Երևան քաղաքի տարածքում 2009թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ տեղադրված են 1037 արտաքին գովազդային նյութեր, այդ թվում 845 գովազդային վահանակների և 192՝ հենասյուների վրա:

Երևան քաղաքում արտաքին գովազդի ոլորտում գործունեություն են ծավալում այնպիսի խոշոր կազմակերպություններ, ինչպիսին են «Նուշիկյան Ասոցիացիա», «ԷԳԱ», «Արաբելլա», «Իմէքս Գրուպ», «Գարանտ Մեդիա», «Սիլ Կոնցեռ» ՍՊԸ-ները և «Յունիքորն Գրուպ» ՓԲԸ-ն, «Վ.Վ.ԱՐՏ» դիզայն գործակալությունը և այլն, որոնք զբաղվում են գովազդային վահանակների տեղադրումով: Նշված

կազմակերպություններից մի քանիսն ունեն պաստառների մեծաչափ տպագրության հնարավորություն:

Տեղադրված գովազդային վահանակները ծավալի մասով 50%-ով գտնվում են Կենտրոն վարչական շրջանի տարածքում: Արտաքին գովազդի ոլորտը Երևան քաղաքում կարգավորվում է «Գովազդի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներով:

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի Երևանի ավագանու կողմից սահմանվել է քաղաքային նշանակություն գովազդային գոտին (քարտեզի տեսքով): Օրենքով սահմանված կարգով Երևանի քաղաքապետին վերապահված որոշ լիազորություններ Երևանի ավագանու 2009թ. նոյեմբերի 18-ի N 37-Ն որոշմամբ վերապահվել են Երևանի վարչական շրջանների ղեկավարներին:

Հիմնախնդիրներ

➤ *Երևանի գեղագիտական միջավայրի բարեփոխումներ*

Երևան քաղաքի գունագեղությունը ավանդականորեն պայմանավորված է բնական շինարարական նյութերի, գունապնակի օգտագործմամբ (տուֆ, բազալտ, ֆերգիտ, տրավերտին): Գոյություն ունեն նաև տեղանքի տարածական յուրահատկություններ, որոնք քաղաքի գունագեղ միջավայրի հիմքն են: Քաղաքի ղիգայն-նախագիծը նախորդող վերլուծությունն ընդգրկում է քաղաքի՝ տարիների ընթացքում գունային միջավայրի վերափոխումը; Քաղաքի միջավայրի գունային ձևավորման առաջարկները պետք է ընդգրկեն հետևյալ կետերը. քաղաքի գունապնակի զարգացումը և գունագեղության կառուցվածքի վերլուծությունը (նախագիծ), քաղաքի ներկա գունային միջավայրի վերլուծություն, հենակետային գունակրողների հայտնաբերում, քաղաքի բնատեսարանի կազմակերպման վերլուծություն, առաջարկներ քաղաքի մակրոկառուցվածքի և գունագեղության գունապնակի վերաբերյալ, քաղաքի «գունավոր նկարազարդումներ»:

➤ *Երևանի գեղագիտական միջավայր ստեղծելու միջոցներ*

- հարթային շինություններ

- փոքր ձևեր
- լանդշաֆտի տարր
- քանդակներ, որմնանկարներ, սուպերգրաֆիկա
- քաղաքային կահույք
- տեղեկատվական սարքավորումներ, տեսողական հաղորդակցման միջոցներ
- փողոցային սարքավորումներ
- ժամանակավոր և տոնական ձևավորում
- ժամանակավոր շինություններ և սարքավորումներ

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

▪ Կազմակերպել վարչական շրջաններում տեղադրված արտաքին գովազդի գույքագրման և չափագրման աշխատանքները, գանձման գործընթացի վերահսկումը, ապօրինի տեղադրված գովազդային վահանակների ապամոնտաժումը.

▪ Սահմանել հսկողություն գովազդային նյութերի բովանդակությանը՝ առաջնահերթությունը տալով հայերեն մեկնաբանությանը:

▪ Երևան քաղաքի էլեկտրատրանսպորտի և քաղլուսի հենասյուների վրա տեղադրված գովազդային վահանակների կանոնակարգում (մեկ բարձրությամբ և միաչափ):

▪ Սահմանել չափորոշիչներ տեղադրվող շարժական գովազդային վահանակների (հաշվի առնելով մայթերի լայնությունը, հետիոտնային անցման ապահովությունը):

▪ Կազմակերպել Երևան քաղաքում տեղեկատվական ուղեցույցների տեղադրումը (փողոցների անվանումների ցուցանակներ, շենքերի համարակալումներ):

▪ Կազմակերպել հանդիպումներ գովազդային գործակալությունների տնօրենների կամ լիազորված անձանց հետ՝ տեղեկացնելով օրենսդրական դաշտի փոփոխություններին, Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներին:

- Ապահովել մայրաքաղաքի մուտքերը խորհրդանշող (Բարի գալուստ Երևան) գովազդային նյութերի տեղադրումը (հնարավոր է ուղեկցվի նաև օտարալեզու գրվածքով):

- Արտաքին ձևավորման մասով կազմակերպել միջոցառումներ քաղաքային նշանակություն ունեցող տոնակատարությունների գովազդմանը:

- Արտաքին գովազդի ոլորտը կանոնակարգող իրավական դաշտի բարեփոխումներին ուղղված 2010թ. նախատեսվում է «Գովազդի մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներում կատարել փոփոխություններ և լրացումներ և չեղյալ համարել ՀՀ կառավարության 19.03.2002թ. «Արտադրողի (կատարողի, վաճառողի) կողմից տեղեկատվություն զետեղելու ցուցանակին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N270 որոշումը:

Շ Ի Ն Ա Ր Ա Ր Ո Ի Թ Յ Ա Ն Ե Վ Բ Ա Ր Ե Կ Ա Ր Գ Մ Ա Ն , Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Ա Շ Ի Ն Ո Ի Թ Յ Ա Ն Ո Լ Ո Ր Տ

Երրորդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքեր

Վիճակի գնահատում

1993թ.-ից ի վեր բազմաբնակարան շենքերի սեփականաշնորհման գործընթացի հետ մեկտեղ նվազել և 1996թ. դադարեցվել են Երևան քաղաքի բնակարանային ֆոնդի (թվով 4765 բազմաբնակարան բնակելի շենքեր) պահպանմանն ու վերականգնմանն ուղղված պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցները, որի հետևանքով զգալիորեն կրճատվել են շենքերի տեխնիկական պարամետրերի պահպանման աշխատանքների ծավալները, մեծացել է շենքերի մաշվածությունը:

Շենքերի տեխնիկական վիճակի վրա բացասաբար են ազդել ներքին և արտաքին ջրակոյուղատար ցանցերի մաշվածությունը, հարթ և լանջավոր տանիքների ջրամեկուսիչ շերտի քայքայվածությունը: Քիչ չեն դեպքերը նաև բնակիչների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերի կողմից իրականացված վերակառուցումների ընթացքում կառույցը կրող կոնստրուկտիվ տարրերի նկատմամբ թույլ տրված անհարկի միջամտությունները (անթույլատրելի չափերի իջեցումներ, վերակառույցներ, ոչ ճիշտ կցակառույցներ և այլն), որոնք պատճառ են հանդիսացել շենքերի սեյսմակայունության և հուսալիության մակարդակի կտրուկ նվազեցման: Ֆինանսական միջոցների սղության պատճառով շենքերի գերակշռող մասում հիմնանորոգման և ամրացման աշխատանքներ գրեթե չեն կատարվել:

3-րդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան շենքերի վերականգնման-ամրացման աշխատանքների ուշացման դեպքում դրանք աստիճանաբար կվերածվեն 4-րդ աստիճանի վթարայնության և արդյունքում կմեծանա պահանջվող ֆինանսական միջոցների չափը: Շենքերի

սեյսմակայունության ու հուսալիության ապահովման միջոցառումների իրականացման հարցում կարևորվում է շենքերի անձնագրավորումը և միաժամանակ դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ միասնական տվյալների շտեմարանի ստեղծումը, ինչն իր հերթին անհրաժեշտ հիմք կդառնա ծրագրավորված, հիմնականում կանխարգելիչ միջոցառումների հիմնավորվածությունը և արդյունավետությունը բարձրացնելու համար: Հիմնավորված և արդյունավետ միջոցառումների իրականացման արդյունքում միայն հնարավոր կլինի քիչ ծախսումներով ապահովել նման շենքերի անվտանգ շահագործումը, խուսափել վթարայնության առաջացումից և դրանով պայմանավորված բնակֆոնդի անվերադարձ կորստից:

Հիմնախնդիրներ

- *Բնակարանային ենթակառուցվածքների ոչ բավարար վիճակ,*
- *Բազմաբնակարան շենքերի շահագործման և սպասարկման իրականացում,*
- *Բնակչության բնակարանային պայմանների բարելավում,*
- *Բնակարանային ֆոնդի պահպանում՝ հիմնական և ընթացիկ նորոգում:*
- *3-րդ աստիճանի վնասվածության շենքերի ամրացում և սեյսմազինվածության ուժեղացում:*

Մինչև 2010 թվականը ամրացվել է 48 բազմաբնակարան 3-րդ աստիճանի վնասվածության շենք, այդ թվում՝ 2004թ.՝ 5 շենք, 2005թ.՝ 9 շենք, 2006թ.՝ 12 շենք, 2007թ.՝ 8 շենք, 2008թ.՝ 10 շենք, 2009թ.՝ 5 շենք:

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Հայսեյսմշին և կառուցվածքների պահպանման գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունների համաձայն՝ Երևան քաղաքում 2009թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ հաշվառված է երրորդ աստիճանի վնասվածության 79 շենք: Ըստ ծրագրի նախատեսված է շենքերի ամրացումը համապատասխան ֆինանսավորման դեպքում ավարտել 2013 թվականին:

Արտաքին լուսավորություն

Վիճակի գնահատում

Մայրաքաղաքի արտաքին լուսավորության ցանցը մոնտաժվել և հանձնվել է շահագործման 1954 թվականից:

Մինչև 1992թ. մայրաքաղաքում արտաքին լուսավորության ցանցը գործել է թվով 982 փողոցներում, պողոտաներում, հրապարակներում և այգիներում: Ցանցում եղել են 49900 հատ տարբեր մակնիշի լուսատուներ, որոնք մոնտաժված են եղել թվով 31279 հենասյուների վրա: Մալուխային ցանցը կազմել է 539,0 կմ, իսկ օդային գծերը՝ հաղորդալարերը, կազմել են 715,9 կմ:

2009թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ Երևանում լուսավորվող փողոցների թիվը կազմել է 990, իսկ լուսավորության ցանցը՝ 1174 կմ: Լուսավորվել է 1311 բակ, անցկացվել է 322.6 կմ երկարությամբ մալուխագծեր: 26178 հենասյուների վրա տեղադրված են 48222 լուսատուներ: Միայն 2009 թվականին տեղադրվել է 5304 հենասյուն և 9216 լուսատու: 2010թ. ծրագրով նախատեսված 200.0 մլն դրամով կանցկացվի 22 կմ երկարությամբ նոր մալուխագիծ, կտեղադրվի նոր՝ 250 հատ հենասյուն և 430 հատ լուսատու:

Հիմնախնդիրներ

- *Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում և հիմնանորոգում, նոր ցանցի կառուցում,*
- *կարգավարական կենտրոնական վահանակի արդիականացում,*
- *ղեկավարման վահանակների միջև կապերի վերականգնում և ընդլայնում,*
- *արտաքին լուսավորության ցանցի տեխնիկական վերազինում,*
- *էներգատար տեխնոլոգիաների կրճատում,*
- *արտաքին լուսավորության ցանցի վիճակի բարելավմանն ուղղված իրավական և տնտեսական մեխանիզմների կարգավորում,*
- *ինստիտուցիոնալ, իրավական և կառուցվածքային բարեփոխումների իրականացում:*

Երևանի քաղաքապետարանում մշակվել են փողոցների և բակերի արտաքին լուսավորության ցանցերի հիմնանորոգման աշխատանքների շուրջ 2000.0 մլն դրամի նախագծանախահաշվային փաստաթղթեր, որոնք կբաշխվեն ըստ քառամյա ծրագրի՝ 2010-2013 թվականներին:

Արտաքին լուսավորության ցանցի ամբողջ հզորությունը վերականգնելու նպատակով նախատեսված է իրականացնել գոյություն ունեցող ցանցի վերանորոգում և նոր ցանցի կառուցում: Բացի այդ, տարվելիք աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կիրականացվեն ոլորտի զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ էներգատար տեխնոլոգիաների կրճատում, ցանցի ավտոմատացում, նոր տրանսպորտային և տեխնիկական միջոցների ներդրում:

Ոռոգման ցանց

Վիճակի գնահատում

Երևան քաղաքի կարևոր բնապահպանական հիմնախնդիրներից է կանաչ գոտիների պահպանությունն ու դրանց վերականգնումը:

Երևանի գլխավոր հատակագծի իրականացման հիմնական միջոցառումների ծրագրի համաձայն 2010-2013թթ. կկանոնակարգվեն մայրաքաղաքի կանաչ զանգվածի պահպանման և նորի կառուցապատման աշխատանքները:

Կանաչ գոտիները 2009թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմում են 2732 հա, այդ թվում՝ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ՝ 832 հա, անտառային ֆոնդ՝ 1100 հա, գյուղատնտեսական հողեր՝ 800 հա:

1992թ. հետո քաղաքի կանաչ գոտիներին հասցրած վնասի հետևանքով, ներկայիս կանաչ տնկարկներով զբաղեցրած տարածքները նվազել են 2-3 անգամ, և 2009թ. մեկ բնակչին ընկնող կանաչ զանգվածների մակերեսը կազմել է 7.2 քմ: Համապատասխան խնամքի և բուժապասարկման բացակայության պատճառով մեծ է հիվանդ, ծերացած և չորացած տնկարկների քանակը: 2009թ. նոր կանաչ տարածքներ չի ավելացվել, առկա կանաչ տարածքները բարելավվել են:

2010թ. նախատեսվում է կառուցել 32 կմ երկարությամբ նոր ոռոգման գիծ: Կվերականգնվի 40 հա կանաչ տարածք, կկառուցվի 125 հա նոր կանաչ տարածք: Կծաղկապատվի 5 հա տարածք:

Կանաչապատման գործընթացի զարգացումը, հիվանդ և ծերացած տնկարկների փոխանակումը նորերով, տալիս է նաև զգալի հոգեբանական արդյունք՝ բնակիչների կողմից քաղաքի բնապահպանական վիճակի գնահատման ընթացքում:

Մայրաքաղաքի կանաչ տարածքի ոռոգման ցանցն վերջին 10-15 տարիներին չնորոգվելու հետևանքով գտնվում էր անմխիթար վիճակում:

Ներկայումս գերխնդիր է դարձել Երևան քաղաքի կանաչ զանգվածների խնամքը և պահպանումը, ոռոգման համակարգի վերականգնումն ու արդիականացումը, որի ոչ լիակատարության հետևանքով նվազում է յուրաքանչյուր քաղաքացու՝ ըստ նորմատիվի 16-18 քմ ընկնող կանաչ զանգվածը:

Ոռոգման ցանցի վերականգնման և նորի կառուցման աշխատանքներ կատարվել են ոչ միայն փողոցներում և բակային տարածքներում, այլ նաև հանգստի գոտիներում, օրինակ՝ Եղեռնի գոհերին նվիրված հուշահամալիրի տարածքում, Նոր Նորքի 2-րդ զանգվածի հանգստյան գոտում, «Հաղթանակ» զբոսայգում և այլն: Ընդհանուր առմամբ, 2005-2009թ.թ. Երևան քաղաքում կատարվել են ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքներ՝ 1800.0 մլն դրամի շուրջ 131 կմ երկարության ցանցի նորոգում, այդ թվում՝ 2005թ.՝ 35.5 կմ, 2006թ.՝ 31 կմ, 2007թ.՝ 6.6 կմ, 2008թ.՝ 13.7 կմ և 2009թ.՝ 44.5 կմ:

Վերջին 5 տարիներում կատարված աշխատանքների հետևանքով էապես ավելացել և արտաքնապես բարելավվել է քաղաքի կանաչ զանգվածը: Ներկայումս յուրաքանչյուր բնակչի հաշվով կանաչ զանգվածի մակերեսը կազմում է 7.2քմ:

Համաձայն Երևան քաղաքի ոռոգման ցանցի գլխավոր հատակագծի՝ նախատեսված է մայրաքաղաքի յուրաքանչյուր շնչի հաշվով ընդլայնել կանաչ զանգվածը, հասցնելով 16.5քմ-ի:

Հիմնախնդիրներ

- Քաղաքի կանաչ գոտիների կառավարման միասնական համակարգի մշակում,
- կանաչ տնկարկների խնամքի և պահպանման պայմանների բարելավում,
- կանաչ գոտիների վերականգնման և նորի կառուցման տնտեսական մեխանիզմների մշակում,
- ոռոգման ցանցի համակարգի հետագա ընդլայնում Երևան քաղաքի ոռոգման ցանցի գլխավոր հատակագծի դրույթներին համապատասխան,
- օրենսդրությանը համապատասխան կանաչ գոտիների պահպանման նկատմամբ փոխհամաձայնեցված և արդյունավետ հսկողության իրականացում:

2010-2013թթ. նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ, Շենգավիթ, Աջափնյակ վարչական շրջանների սնուցող մայրուղային ցանցերի կառուցման աշխատանքները, ինչպես նաև մյուս վարչական շրջանների փողոցների, այգիների, պուրակների, բակային տարածքների ոռոգման ցանցերի վերակառուցման աշխատանքները:

Ջրանցքներ

Վիճակի գնահատում

«Երևան» Ջրօգտագործողների ընկերությունը Նորագավիթի, Հին Դավմայի, Նոր Դավմայի, Նորքի միջտնտեսային ջրանցքների, Քանաքեռի, Արաբկիրի ջրատարի ընդհանուր 455 կմ երկարությամբ ոռոգման ներտնտեսային ցանցերի, ինչպես նաև 23 հատ ջրհան կայանների և 12 հատ խորքային պոմպերի շահագործմամբ սպասարկում է Երևան քաղաքի 10 վարչական շրջանների տարածքներում գտնվող 2294 հա հողատարածությունների ոռոգումը: ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի 2009թ. փետրվարի 17-ի №62 որոշման համաձայն՝ «Երևան» ՋՕԸ-ի սպասարկման տակ են անցել մայրաքաղաքին հարակից մի շարք գյուղերի վարչական տարածքներում գտնվող 879

հա հողատարածքները: Այսպիսով՝ «Երևան» ՋՕԸ-ի սպասարկման տակ է 3173 հա հողատարածքի ոռոգումը, այդ թվում՝ ինքնահոս եղանակով՝ 2133.9 հա, մեխանիկական եղանակով՝ 1039.1 հա:

Հիմնախնդիրներ

- Մայր ջրանցքների մաքրում շինարարական և կենցաղային աղբից,
- Ջրանցքների և ներտնտեսային ցանցերի ոչ բարվոք վիճակ՝ ջրի ծավալի ահռելի կորուստ,
- Ջրի մատակարարման մեխանիկական եղանակից ինքնահոս եղանակի անցման անհրաժեշտություն,
- Պոմպակայանների շահագործման համար մասնագետների պատրաստում:
- Մայրաքաղաքի ամբողջ կանաչ զանգվածի ոռոգման նպատակով ջրի ծավալի ապահովում

Շուրջ 25 տարի ջրանցքների վերանորոգման համար կապիտալ ներդրումներ չեն կատարվել: Նախատեսվում է վթարային վիճակում գտնվող ջրանցքների վերականգնման աշխատանքներն ընդգրկել «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրում:

Երևանյան լիճ

Վիճակի գնահատում

Ջրային կառույցներից առավել կարևոր նշանակություն ունի Երևանյան ջրամբարը, որի կառավարման պատասխանատուն Երևանի քաղաքապետարանի «Ջրային կառույցներ» ՓԲԸ-ն է: Այն շահագործման է հանձնվել 1967թ. և 38 տարիների ընթացքում հիմնանորոգման չի ենթարկվել: Երևանյան ջրամբարի օգտակար ծավալը կազմում է 4.7 մլն խմ: Այն նպատակ է հետապնդում կուտակել Հրազդան գետի, Գետառ, Ողջաբերդ և Ջրվեժ գետերի վտակները և ոռոգել Արարատյան դաշտավայրի հողերը: Գետերով ջրամբար էին լցվում հիմնարկ-ձեռնարկությունների, մասնավոր տնատերերի կենցաղային և շինարարական աղբը, կեղտաջրերը՝ Երևան քաղաքի և

հարակից բնակավայրերի համար ստեղծելով համաճարակների բռնկման, ինչպես նաև շրջակա միջավայրի համար վտանգավոր իրավիճակ: Գետերի բերվածքների և թափոնների հետևանքով ջրամբարի օգտակար ծավալի մի մասը լցված է թափոններով: Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվել են ջրամբարի ջրհեռ, աջափնյա հակաֆիլտրացիոն պատի և խրամուղային ջրհեռ կառուցվածքների վերանորոգման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

- *Ջրամբարի տարածքի սեյսմիկ միկրոշրջանցման աշխատանքների իրականացում:*
- *Պատվարի կայունության պարբերական ստուգումներ:*
- *Ջրհեռ, ոռոգման, աջափնյա հակաֆիլտրացիոն պատի և խրամուղային ջրհեռ կառուցվածքների ստուգում և վերանորոգում:*
- *Դավթաշենի կամրջից մինչև Երևանյան լիճ կոյուղու կոլեկտորի կառուցում:*
- *Երևանյան ջրամբարի և առափնյա տարածքների վերածում հանգստի գոտու*

Երևանյան լիճ լցվող ջրերը մաքրելու նպատակով առաջնահերթ նպատակահարմար է իրականացնել Հրազդան գետի առափնյա կոյուղու կոլեկտորի կառուցման աշխատանքները Դավթաշենի կամրջից մինչև Երևանյան լիճ:

Առաջին փուլով նախատեսվում են Հրազդան գետի առափնյա 11.5 կմ երկարության կոյուղու կոլեկտորի կառուցման աշխատանքները, 2-րդ փուլով՝ ջրամբարի հատակի տիղմի մաքրման, տեղափոխման, ջրաբերուկներից պաշտպանիչ ճաղավանդակների տեղադրման, ավիամերձ տարածքների բարեկարգման աշխատանքները:

Համապատասխան ֆինանսավորման դեպքում հնարավոր է կոլեկտորի կառուցումը ավարտել 2012թ., իսկ երկրորդ փուլով ջրամբարի հատակի տիղմի մաքրման և տեղափոխման աշխատանքներն ավարտել 2014թ.:

Ջրային կառույցներ

Վիճակի գնահատում

Ջրային կառույցները նախագծային փաստաթղթերով ունեն բնապահպանական նշանակություն, նախատեսված են մեղմելու միկրոկլիման, ամբողջացնելու քաղաքի ճարտարապետական տեսքը և համարվում են քաղաքի այցեքարտը: Դրանցից են Հանրապետության հրապարակի շատրվանները, «Կարապի լիճ» ջրավազանը, Երիտասարդական զբոսայգու 3-6-րդ հատվածների 8 շատրվանները, «Հաղթանակ» զբոսայգու արհեստական լիճը, Գետառ, Ջրվեժ և Ողջաբերդ գետերը:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում գտնվող 33 ջրային կառույցներից 5-ը շահագործման ընթացքում ֆիզիկապես և բարոյապես մաշվել են և ներկայումս չեն գործում, թվով 13 ջրային կառույցները մաքրելու և նորոգելու կարիք կա:

Մնացած ջրային կառույցների շահագործումը խիստ դժվարացել է տեխնիկական վիճակի անբավարարության պատճառով:

2006 թվականից սկսած ՀՀ պետական բյուջեից հատկացվեցին գումարներ Երևան քաղաքի հաշվեկշռում գտնվող ջրային կառույցների սպասարկման և շահագործման համար: Ջրային կառույցների հիմնանորոգման համար գումարներ չեն հատկացվել և ներկա դրությամբ անհրաժեշտություն է առաջացել մի շարք ջրային կառույցներ ընդգրկել նորոգման և հիմնանորոգման ծրագրերում: 2 ջրային կառույցներ հանձնվել են վարձակալության, որից գանձվող գումարները ևս չեն բավարարում նորոգման աշխատանքներ կատարելու համար:

Հիմնախնդիրներ

- *Ջրային կառույցների քայքայված և մաշված իրավիճակ*
- *Ջրավազաններից ջրի մեծ չափերով կորուստ*
- *Անսարք ջրային կառույցների վերագործարկում:*
- *Բնապահպանական գործառույթների իրականացում, իրավիճակի բարելավում*

Այդ նպատակով հատկացվող գումարներով կշահագործվեն և կսպասարկվեն Երևանի քաղաքապետարանի սեփականության թվով 27 ջրային կառույցները:

Կամրջային կառուցվածքներ

Վիճակի գնահատում

Երևան քաղաքի կամրջային կառուցվածքների շահագործումը երկար տարիների ընթացքում կատարվել է անխնա կերպով, որի հետևանքով այդ կառուցվածքներում առաջ են եկել հետևյալ բնորոշ թերություններն ու վնասվածքները.

- Երթևեկելի մասի ջրամեկուսիչ ու ծածկութային շերտերի համատարած քայքայման պատճառով մթնոլորտային ջրերի անարգել թափանցումը երկաթ-բետոնե կրող կոնստրուկցիաների մեջ՝ առաջացնելով բետոնի քայքայում, աշխատող ամրանի և մետաղյա տարրերի կոռոզիա:

- Մետաղե կամուրջներում տարիներ շարունակ քայքայվել են պողպատի պաշտպանիչ հակակոռոզիոն ներկի շերտերը, որի հետևանքով կոնստրուկցիաների տարրերը դրանց հեղուսային, գամային ու եռքային միացումները ենթարկվել են կոռոզիայի:

Երևան քաղաքի կամրջային կառուցվածքների շահագործման համար տասնյակ տարիներ ֆինանսական միջոցներ չի հատկացվել, որի պատճառով այդ կառուցվածքներում առաջացել են մի շարք թերություններ ու վնասվածքներ, մասնավորապես երթևեկելի մասի ջրամեկուսիչ ու ծածկութային շերտերի համատարած քայքայման պատճառով մթնոլորտային ջրերը անարգել թափանցել են երկաթ-բետոնե կրող կոնստրուկցիաների մեջ՝ առաջացնելով բետոնի քայքայում, աշխատող ամրանի և մետաղյա տարրերի կոռոզիա:

Ընդհանուր առմամբ ՀՀ պետական բյուջեից 2004-2009թ.թ. ներդրվել է 1850.0 մլն դրամ, որի շնորհիվ վերանորոգվել են Արին-Բերդի փողոցի, Կիկյան, Երևան-Սևան էստակադան, Մյասնիկյան-Աճառյան հ.1 և հ.2 ուղետարները: Վերանորոգման աշխատանքների ընթացքում փոխվում են կամրջի երթևեկելի մասի ասֆալտբետոնե ծածկը, ջրահեռացման համակարգը, վնասված կոնստրուկցիաները և այլն:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված են 27 կամուրջներ և կամրջային կառուցվածքներ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 3700 մետր:

Հիմնախնդիրներ

- *Կամրջային կառույցների շահագործման բարելավում:*
- *Ճանապարհատրանսպորտային ենթակառուցվածքի հուսալի գործունեության ապահովում:*
- *Հետիոտնի առավել կուտակումներ առաջացնող խաչմերուկներում ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում:*
- *Կամրջային կառուցվածքների արդիականացում ժամանակներին համապատասխան:*

Հաշվի առնելով երկար տարիների շահագործման հետևանքով առաջացած խնդիրները, մետաղական հենասյուների հենարանների ամրացման, հիմքերի վերանորոգման և ամրացման, ջերմային կարերի, մետաղական բազրիքների վերանորոգման և ասֆալտբետոնե ծածկի վերականգնման անհրաժեշտությունը՝ 2010թ. նախատեսվում է ավարտին հասցնել Գարեգին Նժդեհի կիսատ մնացած ուղետարի հիմնանորոգման աշխատանքները: 2011–2013թթ. նախատեսվում է իրականացնել Դավթաշենի և Հաղթանակի կամուրջների հիմնանորոգման աշխատանքները:

Փողոցների բարեկարգում

(ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում, բազրիքների, դիտահորերի նորոգում-վերականգնում)

ՀՀ Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով կարևորվում են ճանապարհային ցանցի վերականգնմանն ու ապահովմանն ուղղված աշխատանքները: Որակյալ ծածկ ունեցող ճանապարհներն ուղղակիորեն ազդում են տրանսպորտային ծախսերի վրա՝ հանդես գալով որպես տնտեսական աճի վրա ազդող գործոն:

Ճանապարհները նորմալ վիճակում պահելու անհրաժեշտ նախապայմանը նորոգման և պահպանման մշակման աշխատանքների իրականացումն է: Կարևոր հանգամանք է ճանապարհների ճաքալցման աշխատանքների իրականացումը պոլիմերային և բիտումապոլիմերային մածուցիկ նյութերով, որն էապես երկարացնում է ճանապարհի ասֆալտբետոնե ծածկի ծառայության ժամկետը:

Երևան քաղաքի փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 15,9 մլն քմ: 2002–2003թթ. ընթացքում Լինսի հիմնադրամի «Ճանապարհաշինություն ԾԻԳ» ՊՓԲԸ-ի կողմից մայրաքաղաքում բարեկարգվեց 17 փողոց և Հանրապետության հրապարակը:

Լինսի հիմնադրամի 2-րդ ծրագրով իրականացվել են 2 փողոցների վերակառուցման և Հերացու-Սարալանջի-Ավետիսյան փողոցները միացնող նոր ուղեանցի կառուցման աշխատանքները: Այդ նպատակների համար հիմնադրամի միջոցներից հատկացված գումարը կազմել է մոտ 6100.0 մլն դրամ: 2004-2009թթ. կատարվել են Բագրատունյաց-Սեբաստիա փողոցների վերանորոգման-վերակառուցման, Իսակովի պողոտայի հարող մուտքին մոտեցումների կառուցման, Սարալանջի մայրուղու շարունակության՝ Ավետիսյան փողոցից մինչև Դավթաշենի կամուրջ վերակառուցման, Արգավանդի տրանսպորտային հանգույց հ.7 ուղեկապի կառուցման, Ռիգայի փողոցի վերականգնման-վերակառուցման, Հրազդանի կիրճի (Կիկյան կամրջից մինչև Արաբկիրի այգի հատված), Արամի և Բուզանդի փողոցների, Լենինգրադյան, Սեբաստիայի, Սասունցի Դավթի, Ազատության և մի շարք այլ փողոցների վերանորոգման և վերակառուցման աշխատանքները:

2009թ. ծրագրով Արշակունյաց պողոտայի միջնամասով կառուցվել է բետոնե միջնապատ: Ընդհանուր առմամբ 35 բակերում կատարվեցին բարեկարգման աշխատանքներ: Վարչական շրջանների բակային տարածքներում տեղադրվել են 188 հատ զրուցարան, 400 նստարան, 56 մանկական խաղեր, կառուցվեց 12 հատ մինի ֆուտբոլի խաղադաշտ և վերանորոգվեց 22 խաղահրապարակ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ բյուջեից ներդրվել են 8200.0 մլն դրամ ֆինանսական միջոցներ:

2010թ. ճանապարհաշինության և ասֆալտապատման բնագավառում կներդրվի աշխատանքների իրականացման բովանդակությամբ նոր պայմանագրեր,

որով կսահմանվեն նախատեսված աշխատանքների որակի նկատմամբ գործուն հսկողության մեխանիզմներ և երաշխիքներ:

Քաղաքի փողոցների մայթերի և երթևեկելի մասերի պաստառի ու խրամուղու քանդման-վերականգնման աշխատանքներն առավել արդյունավետ և կենտրոնացված կարգով կազմակերպելու և իրականացնելու նպատակով Երևանի քաղաքապետի 19.08.09թ. հ.7776-Ա որոշմամբ հաստատվեց թույլտվություն տալու կարգը: Մինչև ս/թ. օգոստոսի 10-ը քաղաքապետարանի կողմից տրվել էր հողային աշխատանքների կատարման 105 թույլտվություններ:

Հիմնախնդիրներ

- *Երևան քաղաքի փողոցների բարեկարգում:*
- *Մայրաքաղաք մտնող ճանապարհների կառուցապատում, որպես քաղաքի այցեքարտ:*
- *«Լինսի» հիմնադրամի միջոցներով վերակառուցված փողոցների պահպանման աշխատանքների իրականացում:*
- *Հուսալի և ժամանակակից ճանապարհներ:*

Ծրագիրը շարունակական է: 2010–2013թթ. նախատեսվում է վերանորոգել զրուցարանները նստարանները, խաղահրապարակները, ինչպես նաև տեղադրել նորերը:

Փողոցների և բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման, ճաքայցման աշխատանքները կշարունակվեն 2010-2013թթ. ընթացքում: 2010թ. նախատեսվում է վերակառուցել Թբիլիսյան և Ծիծեռնակաբերդի խճուղիները: 2011-2013թ.թ. նախատեսված է վերակառուցել Թամանցիների փողոցը, Արտաշատի խճուղին (Արին-Բերդի փողոց – ՊԱՏ հենակայան) և Դավիթ-Բեկի փողոցը Տրանսպորտային միջոցների խցանումները բացառելու և հոսքը թեթևացնելու նպատակով նախատեսվում է կառուցել նաև նորերը՝ Շիրակի փողոցից երկաթգծի հատման տեղամասից մինչև Արտաշատի խճուղու՝ Նորագավիթը շրջանցող միջպետական նշանակության մայրուղին, Շիրակի փողոցից և Արշակունյաց

պողոտայի խաչմերուկից դեպի Թամանցիների փողոց մայրուղին, Դավթաշենի կամուրջ-Հալաբյան փողոց-Աշտարակի խճուղի հանգույցը:

Հենապատերի նորոգում

Վիճակի գնահատում

Երկար տարիներ չվերանորոգելու պատճառով ոչ բարվոք վիճակում են հայտնվել Երևան քաղաքի փողոցների հենապատերը. տեղ-տեղ փլվել, բացակայում են երեսպատման սալերը և թասակները, որի հետևանքով, ինչպես բուն հենապատերից, այնպես էլ լանջերից քարերը թափվում են փողոցներ՝ ստեղծելով վթարավտանգ իրավիճակ ավտոտրանսպորտային միջոցների երթևեկության համար:

2004-2009թթ. ընթացքում մայրաքաղաքի մի շարք փողոցներում կատարվել են 680.0 մլն դրամի հենապատերի նորոգման և նոր հենապատերի կառուցման աշխատանքներ, այդ թվում՝ 2004-2008թթ.՝ 640.0 մլն դրամի, իսկ 2009թ.՝ 40.0 մլն դրամի՝ Աճառյան, Մյասնիկյան, Հալաբյան, Լենինգրադյան, Թևոսյան, Թոթովենցի, Մոլդովական, Դեմիրճյան, Հրազդանի փողոցներում, Ծիծեռնակաբերդի և Սարալանջի խճուղում:

Հիմնախնդիրներ

- *Հենապատերի քայքայված, վթարային իրավիճակ:*
- *Հիմնանորոգման, վերակառուցման և նոր հենապատերի կառուցման անհրաժեշտություն:*
- *Երթևեկության անվտանգության նկատառումներից ելնելով՝ թեք լանջերից գլորվող քարերից պաշտպանիչ միջոցառումների իրականացում:*
- *Հենապատերի և ընդհանուր փողոցի պատշաճ տեսքի բերում:*

Այդ նպատակով 2010 – 2013թթ. նախատեսված է Երևանի բյուջեից հատկացվող գումարներն ուղղել Կենտրոն, Ավան, Քանաքեռ-Զեյթուն, Արաբկիր և Նոր Նորք

վարչական շրջանների տարածքների հենապատերի վերանորոգման ծրագրերի իրականացման համար:

Վերգետնյա և ստորգետնյա անցումներ

Վիճակի գնահատում

Վերջին մի քանի տարիներին կտրուկ աճել է ինչպես Երևան քաղաքում հաշվառված, այնպես էլ ամեն օր Երևանով անցնող տրանսպորտային միջոցների քանակը, որը հատկապես կենտրոնական փողոցներում բավական մեծ դժվարություններ և լարվածություն է առաջացնում հետիոտնի անվտանգ շարժի համար և առաջ է բերում տրանսպորտային խցանումներ:

Այդ տեսանկյունից կարևորված է ստորգետնյա և վերգետնյա անցումների, տրանսպորտային հանգույցների, ինչպես նաև նոր ճանապարհների կառուցումը:

2006-2009թթ. ընթացքում քաղաքապետարանի ծրագրերով կառուցվել են 14 հետիոտնային անցումներ, որից 5-ը վերգետնյա՝ Իսակովի պողոտայում, 2-ը Հերացու փողոցում և մեկական Արշակունյաց և Սեբաստիայի փողոցներում: Վերջին երկու վերգետնյա անցումները կառուցվել են 2009թ. ծրագրով:

Երևանի քաղաքապետարանում հաշվառված են 44 անցումներ, որից 22-ը գտնվում են բավարար վիճակում, 22-ում անհրաժեշտ է իրականացնել շինարարական աշխատանքներ՝ հիմնականում երեսպատման, հարդարման, ջրամեկուսացման և լուսավորության գծով: 14 ստորգետնյա անցումներում վարձակալական հիմունքներով գործում են առևտրի և սպասարկման կետեր: Վարձակալությունից գանձվող գումարները նախատեսվում է ուղղել անցումների հիմնանորոգման և լուսավորության ցանցի վերանորոգմանը: Աշխատանքներ են տարվում մյուս անցումները ևս հնարավորության դեպքում հանձնել վարձակալության, իսկ այն անցումներում, որոնք նպատակահարմար չեն տալ վարձակալության, վերանորոգման աշխատանքները կկատարվեն քաղաքապետարանի գումարների հաշվին:

Հիմնախնդիրներ

- Մայրաքաղաքի ծանրաբեռնված փողոցների թեթևացում.
- Ավտոմեքենաների խցանումների բացառում.
- Բնակչության անվտանգության ապահովում փողոցներն անցնելու ժամանակ.
- Տրանսպորտային միջոցներով ծանրաբեռնված և լայն փողոցներում երթևեկության կանոնակարգում և արագ ընթացքի կազմակերպում:
- Հուսալի և անվտանգ ենթակառուցվածքների քանակական ավելացում:

Ելնելով Երևան քաղաքի փողոցների ծանրաբեռնվածությունից՝ 2010թ.-ից սկսած ծրագրերով նախատեսված է իրականացնել հետիոտային անցումների կառուցում: 2010թ.՝ Բաղրամյան–Օրբելի խաչմերուկում, Թումանյան–Խանջյան խաչմերուկում: Հետագա 2011-2013թ.թ. նախատեսվում է կառուցել՝ Հալաբյան փողոցում–Կառավարման բարձր տեխնոլոգիաների շենքի մոտ, Չարենցի փողոցում, Լենինգրադյան փողոց–տրամվայի նախկին հավաքակայանի մոտ, Գր. Լուսավորչի փողոց–Վ. Մայակովսկու անվ. թիվ 7 դպրոցի մոտ, Արշակունյանց – Շահամիրյաններ, Սեբաստիա – Վեգներ, փողոցների խաչմերուկում՝ (վերգետնյա) և Սևակ – Ռուբինյանց փողոցների խաչմերուկում՝ ստորգետնյա հետիոտն անցումներ:

Սիլիկյան թաղամասի կոյուղու կառուցում

Թաղամասը նախկինում քաղաքամերձ գյուղ էր՝ մասնավոր տներով, որը 1980-ական թվականներին ընդգրկվեց Մաշտոցի շրջանի կազմի մեջ: Ներկայումս թաղամասն ունի 7200 բնակիչ: Իր կառուցման օրվանից թաղամասը չի ունեցել կենտրոնացված կոյուղացման համակարգ:

Կոյուղագծի կառուցման աշխատանքների իրականացումը նախատեսված է երկու փուլով: Քաղաքապետարանի ծրագրով 2009թ. իրականացվել է թաղամասի կոյուղագծի կառուցման աշխատանքների 1-ին փուլը՝ 292.0 մլն դրամի: 2010թ. նախատեսվում է իրականացնել կոյուղագծի կառուցման 2-րդ փուլը՝ 6 կմ երկարությամբ 270.0 մլն դրամ գումարի չափով:

Շենքերի ճակատային մասերի նորոգում և քարերի մաքրում

2008թ. ՀՀ նախագահի Երևանի քաղաքապետարան կատարած աշխատանքային այցի ժամանակ ՀՀ նախագահի կողմից տրված հանձնարարականի համաձայն Երևան քաղաքում շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգման և քարերի մաքրման աշխատանքները պետք է դրվեն ծրագրային հիմքերի վրա:

2008թ. իրականացվել է թվով 5 շենքերի ճակատների ընթացիկ նորոգման և քարերի մաքրման աշխատանքներ՝ 50.0 մլն դրամի չափով:

Հաշվի առնելով, որ նորոգման ենթակա հաշվառված շենքերը հիմնականում գտնվում են մայրաքաղաքի փոքր կենտրոնում և այդ շենքերի արտաքին հարդարումն իրականացված է տասնամյակներ առաջ կիրավագային շաղախով, որն ամբողջովին քայքայվել է, 2010թ. ծրագրով կիրականացվի ևս 30 շենքերի ճակատային մասերի ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ ընդամենը 220.0 մլն դրամի ծավալով:

Բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժմանը նպաստող աշխատանքներ

Վիճակի գնահատում

Բնակչության սակավաշարժ խմբերի համար շարժումը դյուրին դարձնելու նպատակով նախագծային կազմակերպություններին հանձնարարված է վերանորոգվող փողոցների խաչմերուկներում, վերգետնյա և ստորգետնյա անցումների աստիճանավանդակների նախագծերում (եթե մայթերի պարամետրները թույլ են տալիս) նախատեսել հարթակներ:

Երևան քաղաքում հաշվառված են 62500 հաշմանդամներ, որոնց զգալի մասը սակավաշարժ է:

Մինչ այժմ այդ ուղղությամբ կատարվել են փոքր ծավալի աշխատանքներ: Միայն 2008թ. 12 դպրոցներում, որտեղ տեղադրված էին ընտրատեղամասերը, բնակչության սակավաշարժ խմբերի համար կառուցվեցին հարթակներ:

Հիմնախնդիրներ

- Առկա բազրիքների և թեքահարթակների նորոգում, նորի կառուցում:
- Քաղաքային նշանակության գոյություն ունեցող և նախագծվող օբյեկտներում հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման պայմանների ստեղծում:

Պահանջ է առաջացել կառուցելու թեքահարթակներ ոչ միայն անցումներում, այլ նաև գերատեսչական հիմնարկներում, վարչական շենքերում, դպրոցներում և այլուր:

Նոր նախագծվող և կառուցվող քաղաքաշինական օբյեկտներում որպես պարտադիր պահանջ հաշվի կառնվեն նաև քաղաքացիների առաջարկները և մամուլի ահազանգերը:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Վիճակի գնահատում

Մինչև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումը Երևանի քաղաքապետարանի տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի (շենք-շինությունների) տնօրինման, վարձակալության տրամադրման, օտարման գործընթացով առանձին-առանձին զբաղվել են քաղաքապետարանի մի քանի կառուցվածքային ստորաբաժանումներ, լուծված չի եղել այդ աշխատանքների համակարգման, հաշվառման, միասնական տեղեկատվական բանկի համակարգչային ծրագրի ստեղծման և շահագործման հարցերը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 110-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 29-ի «Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը սահմանելու մասին» հ. 604-Ն որոշումը, ըստ որի Երևանի ավագանու առաջին ընտրություններից հետո գույքը սեփականության իրավունքով փոխանցվում (նվիրաբերվում) է Երևան քաղաքին:

Երևանի քաղաքապետարանի կողմից սպասարկվում է շուրջ 22 հազար հողամասերի վարձակալության և 400-ից ավելի կառուցապատման պայմանագրեր:

Կարգավորման կարիք ունի Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող բնակելի և ոչ բնակելի ոչ նպատակային նշանակությամբ փաստացի օգտագործվող տարածքների գործառական նշանակության փոփոխության հարցերը:

Հիմնախնդիրներ

- Թերություններ կան համայնքային հիմնարկներին, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի, ոչ նյութական ակտիվների, անշարժ և շարժական գույքի համատարած և ամբողջական գույքագրման, դրանց հաշվառման համակարգի կատարելագործման,

դասակարգման, գույքի նկատմամբ սեփականության իրավունքների պետական գրանցման աշխատանքների ոլորտում.

- Դեռևս կարգավորման կարիք ունի համայնքային գույքի տարբերակված գնահատման գործառույթը՝ էլնելով գույքի գործառական նշանակությունից.
- Համայնքային գույքի օբյեկտների խմբավորման և դասակարգման, դրանց պահպանման և օգտագործման գործընթացի կանոնակարգման և վերահսկման, կառավարման համակարգերի ձևավորման բնագավառում առկա են թերություններ և բացթողումներ, որոնք կարող են կարգավորվել համապատասխան իրավական ակտերի ընդունումով:

Թերացումներ կան նաև վարչական շրջանների տարածքներում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերում դեռևս չմասնավորեցված, համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանների մասնավորեցման գործընթացը ակտիվացնելու գործում:

2010 – 2011թթ. նախատեսվում է գույքի օգտագործման արդյունավետության ապահովման, գույքի արժեքի և որակական հատկանիշների պահպանման, համայնքային բյուջեի եկամուտների ավելացմանն ուղղված ծրագրային միջոցառումների իրականացում:

Երևանի սեփականություն համարվող գույքի կազմում առկա են այնպիսի շարժական և անշարժ գույքեր, որոնք տարիներ շարունակ, ընդգրկված լինելով Երևանի քաղաքապետարանի և նախկին թաղային համայնքների հաշվեկշիռներում, ենթարկվել են բարոյական և ֆիզիկական մաշվածության, ավելին դրանք պահանջում են լրացուցիչ չհիմնավորված ծախսեր կապված պահպանման, շահագործման հետ, ինչը ստիպում է իրականացնել այդպիսի անշարժ և շարժական գույքի առաջնահերթ մասնավորեցման գործընթաց:

Գույքի կառավարման միասնական քաղաքականության մշակման և իրականացման նպատակով նախատեսված է 2010 – 2013թթ. կատարել համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին ամրացված գույքի, բաժնետոմսերի (բաժնեմասերի) ոչ նյութական ակտիվների ամբողջական գույքագրում, դրանց հաշվառման համակարգի կատարելագործում, պետական գրանցման աշխատանքների ավարտում:

Գույքի պահպանման և օգտագործման գործընթացի կանոնակարգման և վերահսկման նպատակով ծրագիր կմշակվի և 2010թ. Ավագանու քննարկմանը կներկայացվի բնակելի և ոչ բնակելի տարածքների գործառնական նշանակության փոփոխությունների իրականացման կարգի նախագիծը: 2010թվականին ավագանուն կներկայացվի նաև Երևանի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագիրը և Երևանի սեփականություն համարվող գույքի կառավարման կարգը, որը բխում է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի պահանջներից:

Երևան քաղաքի 4-րդ աստիճանի վնասվածության բազմաբնակարան բնակելի շենքերի քանդման և բնակիչների վերաբնակեցման իրականացում

Վիճակի գնահատում

Երևան քաղաքի բնակարանային ֆոնդի պահպանմանն ու վերականգնմանն ուղղված, ֆինանսական միջոցների բացակայության հետևանքով կրճատվել են շենքերի տեխնիկական պարամետրերի պահպանման աշխատանքների ծավալները, մեծացել է դրանց մաշվածությունը:

Երևան քաղաքում տեղակայված շուրջ 4765 բազմաբնակարան բնակելի շենքերից 474-ը կառուցվել են 50 տարի առաջ, 877-ը՝ 40 տարի առաջ:

Շենքերի տեխնիկական վիճակի վրա բացասաբար ազդեցություն են ունեցել ներքին և արտաքին ջրակոյուղատար ցանցերի մաշվածությունը, տանիքների ջրամեկուսիչ շերտի վնասվածությունը:

Բնակիչների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերի կողմից իրականացված վերակառուցումների, կրող կոնստրուկցիաների փոփոխության ենթարկելու, տարիներ շարունակ հիմնանորոգման և ամրացման աշխատանքներ չկատարելու պատճառով ներկայումս մի շարք բազմաբնակարան և

հանրակացարանային բնակելի շենքեր ունեն 4-րդ կարգի վթարայնության աստիճան:

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Հայսեյսմշին և ԿՊԳՀԻ» ՓԲԸ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացության համաձայն՝ Երևան քաղաքում 2009 թվականի հոկտեմբերի 21-ի դրությամբ 4-րդ աստիճանի վնասնածություն ունեցող շենքերի թիվը կազմում է 8, որից 3-ը՝ հանրակացարանային բնակելի շենքեր:

Նշված խնդիրները մինչ օրս լուծվել են ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» հ. 682 որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, ինչպես նաև ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի «Երևան քաղաքի քանդման ենթակա հանրակացարանային բնակելի շենքերի բնակիչներին բնակարաններ հատկացնելու կարգ հաստատելու մասին» հ. 172-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

Երևան քաղաքի Սարի թաղի 18-րդ փողոցի հ. 33, 35, 37, 39 և 41 հասցեներում գտնվող և սողանքի հետևանքով վթարային և բնակության համար ոչ պիտանի դարձած 10 բնակելի տների բնակիչներին անվտանգությունն ապահովելու համար ընդունվել է ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 26-ի հ.204-Ն որոշումը, որի համաձայն 2009-2011 թվականների պետական բյուջեներով նախատեսվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցվող շենքերից բնակարաններ կհատկացվեն 10 ընտանիքների:

Հիմնախնդիրներ

Նախորդ տարիներին ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի հ.682 որոշման շրջանակներում վերաբնակեցվել են վթարային շենքերի բնակիչներ, քանդվել բազմաբնակարան բնակելի շենքեր: Վերջին տարիներին որոշակի աշխատանքներ են տարվել 4-րդ կարգի վթարայնության բազմաբնակարան և հանրակացարանային բնակելի շենքերից բնակիչների վերաբնակեցման ուղղությամբ:

Նոր բնակարաններ են տեղափոխվել շուրջ ընտանիքներ: Երևանի քաղաքապետի անմիջական նախաձեռնությամբ լուծվեց նաև Աերացիայի 7-րդ հանրակացարանի 58 ընտանիքների բնակարաններով ապահովման խնդիրը:

- *Նախատեսվում է 2010 թվականին ճշտել վերաբնակեցման ենթակա վթարայնության 4-րդ աստիճան ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի և հանրակացարանների քանդման և բնակիչների վերաբնակեցման առաջնահերթությունները և համապատասխան առաջարկություններ կայացնել ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ 2010-2013 թվականներին պետական միջոցների հաշվին նպատակային բնակարանային շինարարություն իրականացնելու համար:*
- *Երևանի քաղաքապետարանի տնօրինության տակ գտնվող, դեռևս չբաշխված բնակարանային ֆոնդի և 2009 թվականի դեկտեմբեր ամսին շահագործման ընդունվող 50 բնակարանանոց բնակելի շենքի հնարավորությունները հաշվի առնելով՝ նախատեսվում է 2010 թվականին վերաբնակեցնել վթարային առնվազն մեկ շենքի բնակիչների:*
- *Անհրաժեշտություն է առաջացել 2010թվականին քննարկելու վթարային, քանդման ենթակա շենքերից բնակիչների վերաբնակեցման ժամանակ բնակարանային շինարարությունը տվյալ վարչական շրջանի սահմաններում իրականացնելու հնարավորության հարցը:*
- *Նախատեսվում է 2010 - 2011 թվականներին հնարավորություններ գտնել և ՀՀ կառավարության 2009 թվականի փետրվարի 26-ի հ.204-Ն որոշման համաձայն սկսել սողանքի հետևանքով բնակության համար ոչ պիտանի դարձած՝ Սարի թաղի 18-րդ փողոցի հ. 33, 35, 37, 39 և 41 տների բնակիչների վերաբնակեցման աշխատանքները:*

Նախկին շրջխորհուրդների գործկոմների որոշումներով չկառուցված բազմաբնակարան բնակելի շենքերից բնակարանների հատկացում

Ուսումնասիրություններ չեն կատարվել Երևան քաղաքում նախկին շրջխորհուրդների գործկոմների որոշումներով քաղաքացիներին չկառուցվող բնակելի շենքերից բնակարաններ հատկացնելու մասին ընդունված որոշումների հաշվառման և վերլուծության ուղղությամբ:

Երևան քաղաքում նախկին շրջխորհուրդների գործկոմների շուրջ 2200 որոշումներով չկառուցված բազմաբնակարան բնակելի շենքերից քաղաքացիներին հատկացված բնակարանների դիմաց փոխհատուցման հետ կապված հայեցակարգի բացակայությունը հրատապ է դարձնում օր առաջ խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների իրականացումը: Դրա համար անհրաժեշտ է 2010-2011 թվականների ընթացքում կատարել նախկին շրջխորհուրդների գործկոմների որոշումներով չկառուցված բնակելի շենքերից քաղաքացիներին տրամադրված որոշումների հաշվառումը և արդյունքներից ելնելով նախապատրաստել Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնել համապատասխան առաջարկություն առկա խնդրի կարգավորման համար:

Հոդօգտագործման պայմանագրերի կնքման հաշվառման վարձավճարների գանձման ոլորտ

Վիճակի գնահատում

Երևանի քաղաքապետի 2004 թվականի փետրվարի 23-ի հ. 267-Ա որոշմամբ հողամասերի վարձակալության պայմանագրերի կնքման, հաշվառման, վարձավճարների գանձման կազմակերպումը դրվել էր Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության վրա, որն այն

իրականացնում էր «Հողի և ունեցվածքի գործառնություններ» փակ բաժնետիրական ընկերության միջոցով:

Հետագայում՝ 2005 թվականի փետրվարի 8-ի հ. 184-Ա որոշմամբ փոփոխություն է կատարվել Երևանի քաղաքապետի վերոհիշյալ որոշման մեջ և նշված գործառույթների իրականացման իրավասությունները փոխանցվել են քաղաքին համայնքներին, որոնց և հանձնվել էր նաև հողամասերի վարձակալության պայմանագրերի հետ առնչվող ողջ տեղեկատվական ու փաստաթղթային բազան:

Հիմնախնդիրներ

- *Թերություններ և բացթողումներ կան Երևանի քաղաքապետի կողմից ընդունված որոշումների հաշվառման, տեղեկատվական և վերլուծական կարիքների բավարարման՝ մասնավորապես հողամասերի նպատակային և գործառական նշանակության հաշվառման, նույն գույքային միավորների վերաբերյալ ընդունված որոշումների ժառանգականությամբ պայմանավորված փոփոխությունների ընթացքի վերաբերյալ հստակ տեղեկատվության գործում:*
- *Նախատեսվում է խիստ վերահսկողություն իրականացնել քաղաքացիներին, իրավաբանական անձանց տրամադրված պետական սեփականության հողամասերի վերաբերյալ կնքված պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման վրա:*
- *Նախատեսվում է ստեղծել վարձակալական և կառուցապատման պայմանագրերի էլակետային արխիվ, ուսումնասիրել պայմանագրերի հաշվառման, վարձավճարների գանձման վիճակը և, արդյունքներից էլնելով, առաջարկություն ներկայացնել գործող համակարգի արդյունավետության բարձրացման համար:*
- *Նախատեսվում է ընդունել ոլորտը կարգավորող՝ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներ՝ վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ վերապահելու համար:*

- Նախատեսվում է հետևողական աշխատանք տանել շարունակելու և ակտիվացնելու վարձավճարների գանձման գործընթացը՝ առանձին դեպքերում խնդիրը կարգավորելով դատական կարգով:

Երևան քաղաքի վարչական սահմաններում նախկինում սեփականաշնորհված հողամասեր

Վիճակի գնահատում

Երևան քաղաքում 1991 թվականից սկսած որպես տնամերձ, բնակարանային շինարարության համար նախկին Շահումյանի շրջխորհրդի գործկոմի հատկացվել է 16.0 հա հողամաս, Սպանդարյանի կոլտնտեսությանը՝ 3.0 հա:

«Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ նախարարների խորհրդի կողմից կազմված հողային քարտեզագրման և սեփականաշնորհման կենտրոնական հանձնաժողովի կողմից 1991 թվականից սկսած որպես տնամերձ բնակարանային շինարարության համար Երևան քաղաքի 395 ընտանիքներին հատկացված հողամասերի վերականգնման աշխատանքները կասեցվել էին 2005 թվականից:

Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ 2009թ. ապրիլ – մայիս ամիսներին լուծում տրվեց Ներքին Չարբախ թաղամասում նախկինում սեփականաշնորհված և պետական գրանցում չունեցող շուրջ 165 ընտանիքների հողօգտագործման իրավունքի վերականգնման հարցերին: Սկսվել են Նոր Խարբերդի այգեգործական տնտեսությունների հողօգտագործման իրավունքների ձևակերպումները, սակայն այս տարածքում դեռևս առկա են կարգավիճակը չճշտված շուրջ 4800 տնտեսությունների խնդիրներ, որոնց կարգավորմանն ուղղված 2010թ. կիրականացվեն համապատասխան աշխատանքներ:

Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի մյուս համայնքներում Նոր Խարբերդի տոհմային թռչնաբուծական կոլտնտեսությանը 80.0 հա, Ն.Չարբախ գյուղի 16.0 հա, Նուբարաշենի, Նորագավիթի, Հաղթանակ գյուղի նախկինում սեփականաշնորհված հողամասերի վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն չկա, նախատեսվում է

իրականացնել հաշվառում և մշակել առաջարկություններ խնդրի կարգավորման ուղղությամբ:

Հիմնախնդիրներ

Ավարտված չէ Երևան քաղաքի վարչական տարածքում նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման, գույքագրման հողօգտագործման վիճակի ուսումնասիրությունները: Դեռևս լուծված չէ Նոր Խարբերդի 4800 այգեգործական տնտեսությունների շուրջ 3000 այգեգործական նպատակով տրամադրված հողամասերի հողօգտագործման իրավունքի ձևակերպման հարցերը:

Նոր Խարբերդի այգեգործական հողամասերի պետական գրանցումը ավարտելու անհրաժեշտությամբ պայմանավորված, հարկավոր է հարց բարձրացնել ՀՀ կառավարության առջև Նոր Խարբերդում փաստացի օգտագործվող հողամասերի չափերով հողօգտագործման իրավունքի գրանցում կատարելու համար:

- *Նախատեսվում է 2010-2011 թվականներին շարունակել նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման, գույքագրման, գույքի նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման գործառույթները:*
- *2010 թվականին հաստատել ժամանակացույց որի համաձայն, վարչական շրջանների տարածքներում, կատարել հաշվառման գույքագրման աշխատանքներ, ըստ անհրաժեշտության ներգրավելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ բնապահպանության, գյուղատնտեսության, քաղաքաշինության նախարարությունների ներկայացուցիչներին:*

**Երևան քաղաքում հասցեների տրամադրում,
շենքերի և շինությունների համարակալում**

Վիճակի գնահատում

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների

անվանակազմման, անվանափոփոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գնտվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» հ. 2387-Ն որոշման համաձայն Երևան քաղաքում 2007թ. հասցեավորվել են 12786, 2008թ.՝ 9643 և 2009 թվականին թվով 14615 տներ, շենքեր, շինություններ և այլ գույքային միավորներ: Չհասցեավորված օբեկտների հասցեավորումը նախատեսվում է ավարտել մինչև 2013 թվականը:

Երևան քաղաքում առկա շենքերը և շինությունները դասակարգվում են՝ հասցե ունեցող, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման պահանջներին չհամապատասխանող, սեփականության վկայական ունեցող չհասցեավորված, հաշվառված, բայց չհասցեավորված, ինչպես նաև չհաշվառված շենք-շինություններ:

Բազմաբնակարան շենքերի ստորաբաժանված մասերի (նկուղ, կիսանկուղ, ձեղնահարկ, մանսարդ) գործառնական նշանակության ճշգրտում:

Հիմնախնդիրներ

- *Ավարտված չեն Երևան քաղաքի դեռևս չանվանակոչված և անվանափոփոխության ենթակա պողոտաների, փողոցների և հրապարակների անվանման գործընթացը տրամաբանական ավարտին հասցնելու աշխատանքներում:*
- *Հասցեավորման աշխատանքների հետագա կատարելագործում՝ համակարգչային էլեկտրոնային համակարգի ներդրում և շահագործում:*

Երևան քաղաքի հողային ֆոնդ

Վիճակի գնահատում

Երևան քաղաքի վարչական տարածքը, ըստ 2009 թվականի հունիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռի, 22659 հեկտար է, այդ թվում՝ պետական սեփականության հողերը կազմում են 14839 հա, քաղաքացիների և իրավաբանական

անձանց սեփականության՝ 7807 հա, մնացած 13 հեկտարը օտարերկրյա պետությունների սեփականություն:

Ավարտվել են Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերը Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հիմնախնդիրներ

- *Կանոնակարգված չէ հողերի ընթացիկ հաշվառման և ամենամյա հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներում՝ մասնավորապես ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներից քաղաքապետարան ներկայացվող հողերի ամենամյա գործարքների (հողերի առք ու վաճառքի և այլն) վերաբերյալ հաշվետվություններում չի տրվում կողավորումը, ինչը լուրջ դժվարություններ է առաջացնում հստակ հաշվառում իրականացնելու համար:*
- *Աստիճանաբար ճշգրտման կարիք ունեն Երևան քաղաքի վարչական տարածքում կատարված կադաստրային քարտեզագրման արդյունքները:*
- *«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն նախատեսված է 2010 թվականից իրականացնել Երևան քաղաքի վարչական սահմանները սահմանազատող հենասյուների տեղադրման աշխատանքները:*

Երևանը համայնքի կարգավիճակ ստանալու հետ կապված կներկայացվի հողաշինարարության և հողերի վերահսկողության առանձին մասնագիտական ստորաբաժանում, որը կգրավի հողերի ընթացիկ հաշվառման, հողային հաշվեկշռի կազմման, ինչպես նաև օրենսդրության համապատասխան հողային տեսչական աշխատանքներով:

Կ Ո Մ Ո Ւ Ն Ա Լ Ո Լ Ո Ր Տ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

Վիճակի գնահատում

Մայրաքաղաքում ջուրը սպառողին բաշխվում է 1320կմ երկարություն ունեցող բաշխիչ ցանցի 245 հազ. խմ տարողությամբ 23 սանիտարական գոտիներում տեղակայված օրվա կարգավորող ջրավազանների (ՕԿՁ) միջոցով:

Երևան քաղաքի ջրամատակարարման համակարգն ունի 103 կապտաժային կառույցներ, 39 արտեզյան հորատանցքեր, 5 խոշոր պոմպակայաններ, 30 խորքային հորատանցքեր և 803 կմ մայրուղային ջրատարներ: Երևան քաղաք մտնող ջրաքանակի շուրջ 47%-ը տրվում է մեխանիկական եղանակով: Երևան քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցի շուրջ 75%-ը կառուցվել է ավելի քան 25 տարի առաջ և անհրաժեշտ ներդրումների բացակայության պատճառով գտնվում է անբավարար սանիտարատեխնիկական վիճակում:

2008 թվականի համեմատ, ջրմուղի ցանցերում վթարների հաճախականությունը ավելացել է 18-22%-ը: Այս հանգամանքը պայմանավորված է ինչպես ցանցի անբավարար տեխնիկական վիճակով, այնպես էլ գոտիավորման հետ կապված ճնշումների ավելացման գործընթացով, որոնց արդյունքում ի հայտ են գալիս ցանցի գերմաշված հատվածներ ու թաքնված վթարներ:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը ակնհայտ ազդեցություն գործեց նաև «Երևան Ջուր» ՓԲԸ-ի վրա: Այն արտահայտվեց վաճառված ջրաքանակի և հասույթի կրճատմամբ, ինչպես նաև առանցքային ռեսուրսների սակագների աճով, ինչպիսին է, օրինակ, էլեկտրաէներգիայի ավելացված սակագինը:

Չնայած ստեղծված ֆինանսական անբարենպաստ իրավիճակին՝ ընկերությունը կարողացել է բարելավել մի շարք առանցքային ցուցանիշներ: Մասնավորապես՝ կատարված հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ օրվա ընթացքում «Ջրամատակարարման միջին տևողությունը» նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 72.6%-ից հասել է 80.3%-ի:

Ընդ որում, հոկտեմբեր ամսին ցուցանիշը հասել է 77.2%-ի, որից հետո այն շարունակաբար աճելով 2009թ. ապրիլին հասել է 88.95%-ի:

Ջրամատակարարման շարունակականության էական աճը հնարավոր է եղել ապահովել առանց աղբյուրներից վերցվող ջրաքանակների ավելացման: Այն փոքր ինչ նվազել է՝ նախորդ տարվա 371.8 մլն խմ-ից հասնելով 370.1 մլն խմ-ի:

Երևան քաղաքի բոլոր թաղամասերում տեղադրվել են թվով 76 լոգերներ, որոնք հնարավորություն են տալիս ճշտորեն չափել ջրամատակարարման շարունակականության ցուցանիշը:

Բացի Երևան քաղաքի վարչական շրջաններից, Երևանի «Երևան Ջուր» ՓԲ ընկերությունը սպասարկում է նաև 31 գյուղական համայնք:

Երևան քաղաքում ջրահեռացման ցանցի երկարությունը կազմում է 1060կմ, հեղեղատար ցանցինը՝ 214կմ: Երևան քաղաքում գրանցված բաժանորդների թիվը կազմում է 324485, որից՝ բնակիչ-բաժանորդների թիվը կազմում է 310443, այլ սպառողներինը՝ 14042:

Երևան քաղաքից հեռացվող կեղտաջրերի մոտ 80%-ը մուտք է գործում «Աէրացիա» մաքրման կայան: Ներկայումս կեղտաջրերի մաքրման կայանը գործում է մասնակի: Կատարվում է միայն մեխանիկական զատում 16 մմ ճաղավանդակով և ավազորսիչներով, որոնց մաքրումը իրականացվում է տարեկան 4 անգամ:

Տրվող ջրաքանակի հաշվառման նպատակով, որը նաև հանդիսանում է ցանցի գոտիավորման ծրագրի կարևոր բաղադրիչ, ներմուծվել են անհրաժեշտ ծախսաչափերը և սկսվում են տեղադրման նախապատրաստական աշխատանքները, որոնք կնպաստեն ստացվող և ծախսվող ջրաքանակի հաշվեկշռի կազմմանը, ջրակորուստների հայտնաբերմանն ու կրճատմանը:

Հիմնախնդիրներ

- ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակի բարելավում, շահագործման ու պահպանման ծախսերի օպտիմալացում,
- ջրի կորուստների էական կրճատում:

- բազմաբնակարան բնակելի շենքերի նկուղներում ջրամատակարարման և ջրահեռացման, մաշված ցանցերի նորացում,
- Երևանի «Երևան Ջուր» ՓԲ ընկերության կառուցվածքային բարեփոխումների իրականացում և կառավարման արդյունավետության բարձրացում,
- ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի ընդլայնում,
- պոմպակայանների և բակային պոմպերի նորացում և փոխարինում:
- խմելու ջրի մատակարարման շարունակականության բարելավում (95% պայմանագրային 10-րդ տարում)
- թաղամասերի ջրամատակարարման համակարգի գոտիավորման աշխատանքների իրականացում
- մակերևույթային ջրերի հեռացման համակարգի արդյունավետ շահագործում
- էլեկտրաէներգիայի և ջրառի ծախսի նվազեցում
- ջրի հաշվառման համակարգի ներդրման ավարտ, ջրամատակարար-սպառող փոխհարաբերությունների կանոնակարգում:
- «Աերացիա» մաքրման կայանի վերակառուցում
- ջրահեռացման համակարգի արդյունավետության բարձրացում, Հրազդանի կիրճ արտանետվող կեղտաջրերի հեռացում
- բազմաբնակարան շենքերի նկուղային հարկերից թվով 80 պոմպակայանների տեղափոխում բակային այլ տարածքներ

«Երևան Ջուր» ՓԲ ընկերության գործունեությունը հիմնականում համապատասխանում է բնապահպանական, առողջապահական և աշխատանքի անվտանգության նորմերին: Սակայն դեռևս առկա են բացթողումներ և ընդհանուր բնույթի թերություններ՝ ջրային օբյեկտների սանիտարական գոտիների պահպանության բնագավառում: Մասնավորապես, խախտված է տարածքների պարիսպների ամբողջականությունը, կան ամբարների հերմետիկության խախտման դեպքեր, տարածքները ապահովված չեն լիարժեք լուսավորությամբ, տարածքների պահակային հսկողության համար չկան համապատասխան պայմաններ, չի ապահովվում մակերեսային ջրերի արտահոսքը:

2008 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Երևան քաղաքը ստացավ նոր կարգավիճակ մեկ միասնական համայնքի տեսքով, որը Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման համար նոր մոտեցումներ և սկզբունքներ է առաջադրում: Նշված օրենքի հիման վրա Երևանի վարչական շրջանների շփումները խմելու ջրի սպառողների հետ ավելի անմիջական և ուղակի են:

ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին լիազորություններ վերապահելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 22-ի հ.765 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հ.1042-Ն որոշման համաձայն Երևանի «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքի ջրային համակարգերի վարձակալության մասին պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության լիազորությունները վերապահվել են Երևանի քաղաքապետին:

Երևանի քաղաքապետարանը և 12 վարչական շրջանների աշխատակազմերը՝ համատիրությունների միջոցով, տեղերում կարող են կազմակերպել նշված վարձակալության պայմանագրով «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ստանձնած պարտավորությունների կատարումը, մասնավորապես համագործակցելով «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ առավել արդյունավետ պայքարել նաև ջրագողությունների, ջրային ֆոնդի հողերի զավթումների, ջրամատակարարման համակարգի նկատմամբ ինքնակամ կառուցապատումների դեմ:

Լիազորությունների փոխանցումը կնպաստի ջրակորուստների կրճատմանը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի սեփականության հետ կապված խնդիրների արագ և արդյունավետ լուծմանը (մասնավորապես հեղեղատար համակարգի և նոր կառուցվող պոմպակայանների հողհատկացումների և այլ նմանատիպ խնդիրներ):

Երևանի քաղաքապետին լիազորություններ վերապահելու կապակցությամբ ներկա դրությամբ Երևանի քաղաքապետարանի և «Երևան Ջուր» ՓԲԸ-ի համապատասխան տնօրինությունների հետ համատեղ իրականացվում է գործընթաց՝ վարձակալության պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ, որոնք մինչև տարեվերջ կավարտվեն:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Առաջիկա տարիներին կապահովվի մայրաքաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացումը:

Տեխնիկական կառավարում

Ջրաղբյուրների կառավարում (Ջրարտադրություն)

Ջրաղբյուրներում պայմանագրային 4-րդ տարվա (2010թ.) հիմնական գործողություններն են.

1. Ինքնահոս ջրաղբյուրների վերանորոգում,
2. Ջրհավաք ավազանների և կապտաժների կապիտալ վերանորոգում,
3. Ջրհավաք ավազանի տանիքի ծածկի հերմետիկության ապահովում,
4. Առկա օդահան փականների վերանորոգում և նորերի ավելացում,
5. Անցողիկ և հենարանային մեկուսիչների փոխարինում,
6. Սանիտարական գոտու և պոմպակայանների տարածքների բարեկարգում:

Ջրատար համակարգի և բաշխիչ ցանցի կառավարում, կորուստների կրճատում

Ներկայումս համակարգում ջրի կորուստը կազմում է 83.5%, այդ թվում Ջրատարների համակարգում՝ 5.3% և Բաշխիչ ցանցում՝ 78.2%: Վերջինս իր մեջ ընդգրկում է առևտրային և տեխնիկական կորուստները:

Երևան քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցում նախատեսվում է իրականացնել գոտիավորման և հոսակորուստների կրճատման աշխատանքներ, մասնավորապես՝ Աջափնյակ, Շենգավիթ, Էրեբունի, Շահումյան և Կենտրոն տեղամասերի սպասարկման տարածքներում:

Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ինժեներական համակարգերի (ջրամատակարարման և ջրահեռացման) սպասարկմանը վերաբերող հարցերը շարունակում են մնալ կոմունալ բնագավառի հիմնախնդիրների շարքում: Ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տարիներին բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կողմից էական ներդրումներ գրեթե չեն կատարվել, ինչը հանգեցրել է համակարգերի վթարայնության և ջրակորուստների աստիճանի մեծացմանը՝ խնդիրներ հարուցելով, ինչպես սեփականատերերի, այնպես էլ ջրամատակարար կազմակերպությունների համար:

2009 թվականի հոկտեմբեր ամսվանից սկսած խմելու ջրի օգտագործման արդյունավետությունը ստուգելու, կորուստների պատճառները պարզելու, ինչպես նաև ջրի հաշվառումը հստակեցնելու նպատակով «Երևան ջուր» ՓԲԸ-ն մայրաքաղաքի մի շարք թաղամասերում իրականացնում է ստուգումներ՝ հարյուրավոր բազմաբնակարան շենքերի և առանձնատների ընդգրկմամբ:

Արդեն ավարտվել են աշխատանքները Նոր Նորքի 5-րդ զանգվածում (կորուստը՝ 48 տոկոս), Կենտրոնում (կորուստը՝ 43 տոկոս), Մալաթիա-Սեբաստիայում (կորուստը՝ 53 տոկոս):

Նոր Նորքի 5-րդ զանգվածում սպառող է հանդիսանում 60 բազմաբնակարան շենք (բնակիչ-բաժանորդների ընդհանուր քանակը 1838 է, բնակիչներինը՝ 6709): Ստուգման առավել անաչառության համար անհրաժեշտ վայրերում տեղադրվել են ջրի ծախսը ավտոմատ գրանցող սարքեր՝ լոգերներ, աշխատանքային վիճակի են բերվել շենքերի մուտքագծերի ջրաչափական հանգույցները և իրականացվել է ջրի ծախսի շուրջօրյա դիտարկումներ:

Մատակարարվող ջրի առավելագույն քանակը զանգվածում կազմել է 55լ/վ, նվազագույնը՝ 29լ/վ: Այդ նույն ժամանակ առավելագույն սպառումը տարածքում կազմել է 37 լ/վ.՝ ժ. 9.00, իսկ նվազագույնը՝ 6,6 լ/վ ժ. 4.00:

Վերլուծության համաձայն տարածքին մատակարարվող ջրի 52 տոկոսը կազմում է տեխնիկական կորուստը: Ջրի մնացած 48 տոկոսը հասնում է սպառողներին, որոնց 4 տոկոսը իրավաբանական անձինք են, իսկ 44 տոկոսը՝ ֆիզիկական անձինք: Հիմք ընդունելով վերջին 3 ամսվա ընթացքում ձևավորված

օրական միջին սպառման քանակը, հաշվարկվել է, որ բազմաբնակարան շենքեր մտնող քանակության 48 տոկոսը կամ 10 լ/վ (22-70 տոկոս տարբեր շենքերում) չի գրանցվում բնակարաններում տեղադրված չափիչ սարքերի միջոցով: Այդ պատճառով 5-րդ զանգվածում ջրի ընդհանուր կորուստը 52 տոկոսից բարձրանում է մինչև 73 տոկոս:

Ստուգման արդյունքները վերջնականապես ճշգրտելու և ընկերության՝ ջրի սպառումը կարգավորելուն ու կորուստների քանակը նվազեցնելուն ուղղված հետագա անելիքներն որոշելու հանար նախատեսվում է առաջիկայում 2 բազմաբնակարան շենքում իրականացնել մանրակրկիտ ստուգում, խնդրի լուծման նպատակով մշակել համալիր ծրագիր՝ անհրաժեշտության դեպքում բնակարաններում տեղադրելով նոր ջրաչափեր:

Հարկ է նշել նաև, որ «Երևան Ջուր» ՓԲ ընկերությունը նախատեսում է նմանատիպ ստուգումներ իրականացնել նաև առանձնատներով կառուցապատված թաղամասերում, որտեղ ջրի կորուստն առավել մեծ է: Այդ նպատակով պատվիրվել է 30 հատ հատուկ նախագծի ժամանակակից ցրտադիմացկուն դիտահոր ջրաչափի համար, որոնք պետք է տեղադրվեն բնակարանից դուրս և անաչառորեն գրանցեն ջրի իրական ծախսը տվյալ բաժանորդների մոտ:

2010 թվականին ջրամատակարարման բաշխիչ ցանցերի գոտիավորման աշխատանքներին զուգընթաց Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում կտեղադրվեն թվով 156 նոր տիպի ինքնակարգավորվող բակային պոմպեր, 50 բակային պոմպեր նախատեսվում է տեղադրել ընկերության ուժերով: Դրանք հնարավորություն կընձեռեն ապահովելու բազմաբնակարան շենքերի բարձր հարկերի բաժանորդներին ճնշման լոգերների միջոցով գրանցվող նույն շարունակականությամբ ջրամատակարարում իրականացնելու պայմանագրային պահանջը:

Հաճախորդներին մատակարարված ջրաքանակ

Պայմանագրային 3-րդ տարվա 1-ին կիսամյակում (01.06.08-30.11.08) վաճառված ջրաքանակը կազմել է 30.93 մլն խմ: Ըստ գնահատումների

պայմանագային 3-րդ տարում (01.06.08-31.05.09) խմելու ջրի վաճառքը կազմել է շուրջ 59 մլն խմ :

Պայմանագրային 4-րդ տարում (2010 թվական), նախատեսվում է վերոհիշյալ ցուցանիշի 2 մլն խմ-ով կամ 3.4 %-ով աճ:

Էներգիայի կառավարման պլան

Ջրամատակարարման ժամերի ավելացմանը զուգընթաց էլեկտրաէներգիայի ծախսերի կրճատումը «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հիմնական խնդիրներից է: Ուստի Ընկերությունը նախաձեռնել է էլեկտրաէներգիայի խնայողության օպտիմալացման գործընթաց: Ձեռնարկվում են միջոցներ խոշոր պոմպակայանների արդյունավետության բարձրացման, պոմպերի նորացման ուղղությամբ: Միայն բազմաբնակարան շենքերը սնուցող բակային պոմպերի նորացմամբ սպասվում են խնայողություններ՝ 10%-ի չափով: Ընթացող գոտիավորման աշխատանքներին զուգընթաց ակնկալվում է ջրամատակարարման ծավալների նվազեցում, ինչը հնարավորություն կտա 10%-ով կրճատել Արարատյան պ/կ-ներում պոմպերի էներգիայի ծախսը:

Արդյունքում՝ «Երևան Ջուր» ՓԲԸ-ն ծրագրում է պայմանագրային 4-րդ տարում (2010թ.) մոտ 10 %-ով նվազեցնել էլեկտրաէներգիայի ծախսը, այն հասցնելով մինչև 105 մլն կվտ.ժ-ի:

Կայուն ջրամատակարարում

Ջրամատակարարման շարունակականության հաշվարկված միջինը պայմանագրային 3-րդ տարվա առաջին կիսամյակում (01.06.08թ.-30.11.08թ.) կազմել է 74.1% կամ 17.78 ժամ, իսկ ինն ամիսների (01.06.08թ.-28.02.09թ.) համար այս ցուցանիշը հասել է մինչև 77.91%-ի կամ 18.7 ժամի: Ընդ որում, սկսված լայնածավալ գոտիավորման և ջրամատակարարման ճնշումների կառավարման աշխատանքներին զուգընթաց սկսած 2008թ. հոկտեմբեր ամսից աստիճանաբար բարելավվել է ջրամատակարարման միջին տևողությունը, այն կազմելով՝

- *Հոկտեմբեր, 2008թ.* - 77.20 % (կամ 18.50ժ)
- *Նոյեմբեր, 2008թ.* - 83.80 % (կամ 20.11ժ)

- *Դեկտեմբեր, 2008թ.* - 85.77 % (կամ 20.59ժ)
- *Հունվար, 2009թ.* - 84.80 % (կամ 20.35ժ)
- *Փետրվար, 2009թ.* - 86.00 % (կամ 20.64ժ)

Հատկապես լուրջ ուշադրություն կդարձվի քիչ ջրամատակարարման ժամեր ունեցող տարածքների վրա, որտեղ ցանցը չափազանց վնասված է և վերականգնման կարիք ունի: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում Ընկերությունը նպատակ ունի պայմանագրային 4-րդ տարվա ցուցանիշը ապահովել առնվազն 79 %-ով, իսկ հաջորդ տարիներին այն կտրուկ բարելավվել:

Կեղտաջրերի մաքրում և շրջակա միջավայրի պահպանում

Ներկայումս կեղտաջրերի մաքրման կայանը գործում է մասնակի: Կատարվում է միայն մեխանիկական զտում 16 մմ ճաղավանդակով և ավազորսիչներով, որոնց մաքրումը իրականացվում է տարեկան 4 անգամ: 3-րդ պայմանագրային տարվա ընթացքում «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից որոշակի աշխատանքներ են կատարվել գոյություն ունեցող կայանի վերանորոգման ռազմավարության հստակեցման ուղղությամբ: «Վիոլիա» ընկերության և Ֆրանսիայի ֆինանսների նախարարության տեխնիկական և ֆինանսական փորձաքննությունները հանգեցրին այն որոշման, որ 26,3 մլն եվրո վարկից 10,5 մլն-ը պետք է հատկացվի «Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանի առաջնային մաքրման կառուցվածքների վերանորոգմանը, իսկ այդ աշխատանքները դեռևս վարկավորված չեն:

Առևտրային կառավարում

Բաժանորդի հետ փոխհարաբերությունները

Բաժանորդներին մատուցվող ծառայությունների որակի, «1-85» հեռախոսային կենտրոնի կողմից ընդունված զանգերին օպերատիվ արձագանքման և բաժանորդների հետ հետադարձ կապի և բարձրացվող հարցադրումներին սպառիչ պատասխանների ապահովման արդյունավետության բարձրացումը «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կարևոր խնդիրներից մեկն է: Այս ուղղությամբ իրականացվող բարեփոխումները կշարունակվեն նաև պայմանագրային 4-րդ տարում:

Ջրաչափերի ցուցմունքների գրանցում և հաշիվների ներկայացում

Նախատեսվում է

- կրճատել գրոյական ծախսերը և ավելացնել ջրաչափով հաշվարկվող միջին ծախսը մինչև 93%,
- ավելացնել վաճառվող ծավալները՝ հասցնելով 61 մլն խմ-ի:

Միացումները համակարգին

Նախատեսվում է պայմանագրային 4-րդ տարում շարունակել ապօրինի ջրամիացումների հայտնաբերման և օրինականացման գործընթացը, տարվա ընթացքում նախատեսվում է օրինականացնել առնվազն 4500 ապօրինի միացումներ:

Բաժանորդների տեղեկատվական համակարգ - Բաժանորդների տվյալների բազա

Նախատեսվում է

- բարելավել ողջ համակարգի հուսալիությունը՝ ինչպես տվյալների ճշտության, այնպես և դրանց որակի առումներով,
- ներդնել նոր համակարգչային ծրագրեր՝ ցուցմունքների գրանցման և գանձումների վերաբերյալ ստացվող օրական և շաբաթական վերլուծական տվյալների ստացման աշխատանքները բարելավելու համար:

Ջրաչափում

Ընկերությունը շարունակելու է խթանել ջրաչափերի տեղադրումը՝ հանրության շրջանում լայնորեն լուսաբանելով այս հարցը և ընդգծելով դրա կարևորությունը բաժանորդների համար: Շարունակվելու է նման բաժանորդների բացահայտման գործընթացը, որի հիման վրա կթարմացվեն բազային տվյալները: Ձեռնարկվող միջոցառումների արդյունքում նախատեսվում է ավելացնել ջրաչափով ծախս ունեցող բաժանորդների տոկոսը՝ այն 91.7%-ից հասցնելով 93%-ի:

2010թ. ԵՁՁԾ-ով իրականացվելիք մրցույթների ցանկը

Մրցույթի անվանումը	Նախահաշիվ (ԱՄՆ դոլար)
Գյումուշի պ/կ-ի վերականգնում՝ պոմպերի տեղադրումով	250 000
Արզնի -Երևան ջ/ջ համակարգի վերականգնման շինարարական աշխատանքներ	1 480 000
Արզականի ջրաղբյուրի մոտ 50լ/վրկ ինքնահոս ջրաքանակի կապտաժավորում	55 055
Գառնու աղբյուրների, Գողթի կապտաժների և սան. գոտու վերանորոգում	110 000
Սեկտորիզացման աշխատանքներ 1-ի փուլ- Շենգավիթ տեղամասի սեկտորիզացում - մաս 2	362 900
Մարաշի ջրատարի շրջանցում	180 000
Ջրատարերի վրա ջրթող, օդահեռ, գծային փականների տեղադրում, դիտահորերի վերակառուցում	627 500
Արարատյան 3, 4-րդ հերթի հորատանցքների շինությունների վերանորոգում, փականների փոխում	280 000
Ջրամբարների աշխատանքներ- փուլ 2	900 000
Քլորացման սարքավորումների մատակարարման և տեղադրման, քլորակայանների վերակառուցման աշխատանքներ	264 000
Գարեգին Նժդեհի փողոց՝ 500 մ երկարությամբ և 1000 մմ տրամագծով բետոնե կոյուղագծի վերակառուցում - փուլ 2	198 140
Ընդամենը՝	4 707 595

Ջերմամատակարարում

ՀՀ կառավարության կողմից 13.04.2006թ. ընդունվեց «Էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների օգտագործմամբ ջերմամատակարարման համակարգերի վերականգնման առաջնային ծրագրերի մասին» հ.509 որոշումը, որով թույլատրվել է Ավան և Դավթաշեն թաղային համայնքներում իրականացնել էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության տեղակայանքների (կոգեներացիոն) օգտագործմամբ ջերմամատակարարման առաջնեկային ծրագրեր:

«Դավթաշեն էներգոկենտրոն» ՀՁ ՓԲԸ –ի կողմից իրականացվող «Դավթաշեն» ներդրումային ծրագրի գումարը կազմում է 24.7 մլն դոլար, որի իրականացման արդյունքում կջեռուցվի 173 բնակելի և հասարակական նշանակության (դպրոցներ, մանկապարտեզներ, այլ հիմնարկներ) 18 շենք: Ծրագրի տեխնիկա-տնտեսական հիմնավորման համաձայն՝ ջերմային էներգիայի սակագինը կկազմի մոտ 11 դրամ/կվտժ: Ընկերության կողմից 2007թ. ընթացքում գնվել է կոմունալ հատուկ տեխնիկա,

կատարվել է սարքավորումների ապամոնտաժման, էներգակենտրոնների, շենքային և ներթափային ջերմային ցանցերի նախագծման աշխատանքներ:

Ներկա դրությամբ ջեռուցման ծրագրի առաջին փուլի շինմոնտաժային աշխատանքների իրականացման 1.0 մլրդ ռուբլու ֆինանսավորման հարցը լուծվել է:

«ՀայՌուսկոգեներացիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող «Ավան» ներդրումային ծրագրի գումարը կազմում է 29.0 մլն. դոլար, որի իրականացման արդյունքում կջեռուցվի համայնքի թվով 218 բազմաբնակարան շենքեր: Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման համաձայն՝ ջերմային էներգիայի սակագինը կկազմի մոտ 19 դրամ/կվտժ:

«Ավան» ծրագրի իրականացման աշխատանքները սկսվել են 2007թ. 4-րդ եռամսյակում, և 2008թ. փետրվարից Վարուժան միկրոշրջանի թիվ 8, 9, 10 բնակելի շենքերի 108 բնակարաններից 34-ը ջեռուցվել և տաք ջուր են ստացել: 2008թ. ընթացքում վերականգնվել են նաև նույն միկրոշրջանի թիվ 4, 5, 6, 7 շենքերի 162 բնակարաններից 36-ի ջերմամատակարարման համակարգերը:

2009թ. դեկտեմբերի 15-ին ծրագրի առաջին փուլի շրջանակներում շահագործվեց Ավան թաղամասի Իսահակյան, Թումանյան, Նարեկացի և Քուչակ միկրոշրջանների թվով 46 բազմահարկ բնակելի շենքերի ինքնավար ջերմաէլեկտրակայանը:

«ՀայՌուսկոգեներացիա» ՓԲԸ-ի կողմից առաջիկայում կշարունակվեն Ավանի 1/2 ԿՁՀ-ի տարածքում նոր՝ 17 ՄՎտ հզորությամբ ինքնավար ջերմաէլեկտրակայանի (ԻՋԷԿ-1) շենքի կառուցման, Հովհաննիսյան և Իսահակյան թաղամասերի 1600 գծմ. երկարությամբ ջերմային բաշխիչ ցանցերի վերականգնման (փոխարինման), նույն թաղամասերի 23 շենքերի 990 բնակարաններից 285-ի ներբնակարանային ու ներշենքային համակարգերի շինհավաքակցման աշխատանքները:

Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծով նախատեսված է վերականգնել նաև Երևանի Շենգավիթ, Էրեբունի, Աջափնյակ, Հարավ-Արևմտյան և Նոր Նորք բնակելի թաղամասերի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերը:

ՀՀ Բնապահպանության նախարարության համակարգման ներքո իրականացվող ՄԱԶԾ/ԳԵՎ «Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք

ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագիրը Երևանի քաղաքապետարանի հետ կնքած համագործակցության համաձայնագրի շրջանակներում մշակել է Երևան քաղաքի վարչական շրջանների ջերմամատակարարման սխեմաները՝ իրենց տեխնիկա-տնտեսական հիմնավորումներով:

Հետագայում ջերմամատակարարման հնարավոր ներդրումային առաջարկությունների դեպքում (բյուջետային միջոցներ մասնավոր ներդրումներ, դրամաշնորհներ և այլն) նշված բնակելի թաղամասերի կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ՄԱԶԾ ԳԷՖ ծրագրի կողմից ներկայացված սխեմաների համաձայն, նմանատիպ ծրագրեր կարող են իրականացվել նաև մայրաքաղաքի մնացած վարչական շրջաններում:

Ա Ղ Բ Ա Հ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Վ Ս Ա Ն Ի Տ Ա Ր Ա Կ Ա Ն Մ Ա Ք Ր Ո Ւ Մ

Վիճակի գնահատում

Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայրերի և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 11.557.0 հազ. քմ, որի մաքրման համար 2009թ. դրությամբ սանիտարական մաքրման ընկերություններին տրվել է 2.6 մլրդ դրամ, որը թերևս բավարար չէ Երևան քաղաքում ապահովել պատշաճ սանիտարական վիճակ, քանի որ ուսումնասիրությունից պարզվել է, որ գրեթե բոլոր վարչական շրջաններում գոյություն ունի չմաքրվող փողոց հասկացողությունը, որի պատճառը հանդիսանում է ֆինանսների սղությունը՝ որի պատճառով այսօրվա դրությամբ Երևան քաղաքի շուրջ 1000-ից ավելի փողոցներից չի մաքրվում գրեթե 40-45 %-ը:

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է թվով 12 մասնագիտացված ընկերությունների

շուրջ 1430 աշխատակիցների և 360 միավոր հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների միջոցով, որոնք ներկա դրությամբ մաշված են գրեթե 75-80%-ով:

Ըստ պահանջվող նորմատիվների՝ Երևան քաղաքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար անհրաժեշտ է ևս ձեռք բերել թվով 280-300 միավոր հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմներ, այդ թվում՝ 50 միավոր ձյուն մաքրող, 55 հատուկ աղբատար (ԿՈ), 20 աղ և ավազ ցանող, 30 մայթ մաքրող, շուրջ 95 ինքնաթափ, 15 գրեյդեր, 35 ձյուն բարձող և այլ մեքենա-մեխանիզմներ: Երևան քաղաքում պատշաճ սանիտարական մաքրություն ապահովելու համար, ըստ նորմատիվների կպահանջվի շուրջ 680-700 միավոր հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմ:

Աղբահանությունը կատարվում է շուրջ 4765 բազմաբնակարան շենքերից և շուրջ 53000 մասնավոր տնատիրություններից:

Երևան քաղաքի փողոցների, մայրերի, հրապարակների, եզրաքարերի երկարությամբ սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է հիմնականում հավաքարարների՝ ձեռքով ավլելու միջոցով, որից հետո եզրաքարերի մոտ կուտակված աղբակույտերը աղբատար բանվորները բարձրում են մեքենան:

Բազմաբնակարան շենքերից և բակային տարածքներից աղբահանության աշխատանքներն իրականացվում է հատուկ նշանակության «ԿՈ» մակնիշի մեքենաներով՝ որոնք դատարկում են մեծ աղբարկղերը, իսկ շենքերի աղբամուղերը և փոքր աղբամանները տեղափոխվում են ինքնաթափ մեքենաներով, այսինքն՝ սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները կատարվում է տարբեր մակնիշների մեքենաներով:

Բազմահարկ-բազմաբնակարան շենքերում առկա աղբամուղերի քանակը՝ թվով 3901 հատ է,

- գետնից բարձր կոնաձև աղբամուղերի քանակը կազմում է շուրջ 380,
- հարթ և չբացվող հատակով աղբամուղերի քանակը կազմում է շուրջ 835
- գետնի մակարդակի հետ հավասար աղբամուղերի քանակը կազմում է շուրջ 2786: Նոր կառուցված շենքերում այսպիսի աղբամուղեր չկան:

Վերջին 2 տարում շահագործման հանձնված բազմաբնակարան շենքերի բակերում հիմնականում տեղադրված են մեծ աղբարկղեր, իսկ ընդհանուր առմամբ Երևան քաղաքի վարչական տարածքում տեղադրված է շուրջ թվով 8500 մեծ և փոքր աղբաման, որը թերևս պետք է ավելացվի մոտ 4.5-5.0 հազ. հատով: 2010թ. նախատեսված է ավելացնել 1300 աղբաման, որը կստեղծի շուրջ 250 հազ. տոննա լրացուցիչ աղբահանման հնարավորություն:

Ինչ վերաբերում է Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերում առկա աղբամուղերի վերակառուցման և ձևափոխման ֆինանսավորման աշխատանքներին, մեր կարծիքով՝ նշված հարցին կպատասխանի ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

Մայրաքաղաքի տարածքից քաղաքային աղբավայր է տեղափոխվում օրական միջին հաշվով 500-550 տոննա կամ տարեկան 185-190 հազար տոննա կենցաղային աղբ:

Նուբարաշենի աղբավայր

Ապագա զարգացում

Երևան քաղաքը Հայաստանում սպառման կոշտ թափոնների առաջացման խոշորագույն օջախ է, որտեղ կուտակվում է երկրի ընդհանուր կոշտ թափոնների շուրջ 70-75%:

Երևանի մեգապոլիսի համար մեծ նշանակություն ունի Նուբարաշենի քաղաքային աղբավայրը, որը գործարկվել է դեռևս 1950-ական թվականներին և գտնվում է մայրաքաղաքի կենտրոնից մոտ 9-10 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է շուրջ 52.3 հա տարածք:

Անցած 50 և ավելի տարիների ընթացքում Նուբարաշենի աղբավայրում կուտակվել է ավելի քան 7.5-8.0 մլն տոննա կենցաղային աղբ:

Նուբարաշենի աղբավայրի տարածքը պատկանում է Երևանի քաղաքապետարանին, իսկ աղբի ընդունումը, տեղադրումը և վնասազերծումը, Երևանի քաղաքապետի 2004թ. հուլիսի 9-ի որոշման համաձայն իրականացնում է «Էրեբունի մաքրություն» ՍՊ ընկերությունը: Ընկերությունը կենցաղային աղբը վերամշակման կամ տեսակավորման չի ենթարկում, այլ այն խտացնում և

վնասագերծում է՝ ծածկելով 25-30 սմ հողի շերտով, նրա շահագործումն իրականացվում է ոչ արդյունավետ՝ աղբի ընդունումը, տեղադրումը և վնասագերծումը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին, որն էլ աղբավայրում առաջացնում է գազերի արտանետումներ: Աղբավայրը չունի ցանկապատ, հագեցած չէ ժամանակակից հարթեցնող և գլղոնող տեխնիկայով, որի պատճառով հաճախակի աղբավայրի տարածքում տեղի է ունենում կենցաղային աղբի ինքնաբռնկում:

Աղբավայրում ջերմային գազերի արտանետումը կրճատելու նպատակով 2009թ. մարտի 10-ին Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը՝ ճապոնական «Շիմիձու» կորպորացիայի հետ Երևանի քաղաքապետարանում կնքեց համաձայնագիր՝ Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի վերաբերյալ, որը կնպաստի հատկապես բնապահպանական, շրջակա միջավայրի բարելավման և սանիտարահիգիենիկ պայմանների բարձրացմանը:

Նուբարաշենի ներկայումս գործող թափոնակուտակիչում՝ մոտ 8 հա տարածք, փորվել են հորատանցքեր, հորիզոնական գազամուղերով մխոցների միջոցով մեթան գազը պետք է մղվի կենտրոնական ուղղահայաց խողովակ (ջահ) և այրվի: Տարածքը ծածկված է հերմետիկ թաղանթով և հողի շերտով: Ծրագրի տևողությունը 16 տարի է: Պայմանագրի գործողության ժամանակահատվածում՝ մինչև 2023 թվականը, ըստ հաշվարկների, պետք է իրականացվի 512 հազար տոննա CO₂-ի համարժեք արտանետումների սերտիֆիկացված կրճատում:

Ծրագրի ֆինանսավորումը, ներառյալ բոլոր տարիներին համակարգի պահպանման և շահագործման ծախսերը, կկազմեն մոտ 5,5 մլն ԱՄՆ դոլար, կիրականացնի ճապոնական կողմը: Ներկա պահին արդեն ներդրվել է 2.75 մլն ԱՄՆ դոլար: Կառույցը հանձնվել է հայկական կողմին՝ որպես սեփականություն: Շահագործումն իրականացնելու է «Նոր բարեկարգում» ՓԲ ընկերությունը:

Երևան քաղաքի զարգացման քառամյա ծրագրով՝ Նուբարաշենի աղբավայրում նախատեսվում է իրականացնել հետևյալ բարեփոխումները.

- Տարածքում պետք է մշտապես լինի (պահպանի) անձնակազմ, որը կհետևի ու կկազմակերպի թափոնների տեղադրումը կամ կկանխի թափոնների ապօրինի տեղադրումը:

- Կեղտաջրերի առկա ավազանը պետք է անհապաղ վերանորոգվի:
- Թափոնակուտակիչի տարածքից պետք է հեռացնել կենդանիներին, իսկ թափոնակուտակիչի աշխատակազմի համար պետք է իրականացվեն առողջության պաշտպանության հիմնական միջոցառումներ (օդի ախտոտման հսկողություն):
- Տեղադրել հարթակավոր կշեռք:

Հիմնախնդիրներ

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման համակարգն իր մի շարք բացթողումներով և առկա խնդիրներով չի համապատասխանում ժամանակակից եվրոպական երկրներում գոյություն ունեցող չափանիշներին:

Երևանի աղբահանության և սանիտարական մաքրման խնդիրների համակողմանի ուսումնասիրության կազմակերպման և լավագույն լուծման նպատակով ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը դիմել է Համաշխարհային Բանկի օգնությանը՝ այս հարցում իր օժանդակությունը ցուցաբերելու խնդրանքով:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի հրամանով ստեղծված Գնահատող հանձնաժողովի կողմից թվով 16 արտասահմանյան ընկերությունների ներկայացրած հետաքրքրվածությունների հայտերը՝ կապված Երևան քաղաքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքների իրականացման հետ, մանրամասնորեն ուսումնասիրելուց հետո հանձնաժողովի կողմից ընտրվեցին 6 ընկերություններ, որից հետո կուսումնասիրվի և կներկայացվի միջազգային մրցույթի լավագույն մեկ ընկերությունը, որի գործունեությունը կհամապատասխանի եվրոպական չափանիշների պահանջներին:

Երևան քաղաքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքների հիմնախնդիրներն են.

- *օրենսդրական դաշտի համակարգի թերի վիճակ,*
- *աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման ցածր որակ,*

- վարչական շրջաններում ծառայությունների մատուցման իրարից տարբերվող մակարդակներ,
- շահագործվող հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմների ֆիզիկական մաշվածություն և անբավարար քանակ,
- վերահսկողության և մոնիթորինգի համակարգերի բացակայություն,
- աղբահանության վարձավճարների հավաքագրման թերի համակարգը և ցածր մակարդակ.
- քաղաքի տարբեր հատվածներում աղբի մեծ կուտակումների առկայություն և չնախատեսված վայրերում աղբանետումներ:

Քառամյա ծրագրի նպատակները.

- Թափոնների բնագավառին առնչվող օրենսդրական դաշտի ձևավորում:
- Սանիտարական մաքրման և աղբահանության սակագների քաղաքականության և բարեփոխումների իրականացում:
- Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա մակերեսների ճշգրտում և հաշվառում:
- Մայրաքաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման համակարգերի բարելավում և աշխատանքների որակական մակարդակի բարձրացում, համապատասխանեցնելով ներկայիս միջազգային չափանիշներին:
 - Թափոնների հավաքման և հեռացման նոր սխեմաների ներդրում:
 - Երևանի ամբողջ տարածքից կենցաղային թափոնների հեռացման նպատակով մեկ օպերատորի ներգրավում:
 - Երևան քաղաքում կենցաղային աղբի տեսակավորման և վերամշակման գործարանների հիմնում և շահագործում:

Ծրագրի սկզբունքները

- Մասնավոր օպերատորի կողմից պետք է իրականացվեն ներդրումներ և իրականացվի թափոնների հավաքում, սանիտարական մաքրում,

աղբահանություն իրականացնող ինչպես նաև պետք է իրականացնի Նուբարաշենի աղբավայրի շահագործումը:

- Օպերատորի կողմից պետք է կատարվի աղբավայրի բարեկարգմանն ուղղված ներդրումներ:

- Թափոնների հավաքումը իրականացնող մասնավոր օպերատորը պետք է ապահովի աղբարկղերի տեղադրումը, ինչպես բակերում, այնպես էլ ճանապարհների եզրերին և իրականացնի կենցաղային աղբի թափոնների հեռացումը:

- Համատիրությունների կողմից ապահովվեն թափոնների տեղադրումն աղբարկղերի մեջ (աղբախցից թափոնների ձեռքով հեռացման պրակտիկան բացառելով):

Նախատեսվող քառամյա ծրագրային միջոցառումներ

Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպման բարեփոխումների և հիմնախնդիրների համակողմանի լուծման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ԵՊՄԽԿ (Ենթակառուցվածքների պետական-մասնավոր խորհրդատվական կառույց) ֆինանսավորմամբ և ՀՀ ֆինանսների նախարարության արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնի միջոցով Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման մասնավոր օպերատորի և Նուբարաշենի աղբավայրի շահագործողի ընտրության նպատակով՝ միջազգային խորհրդատուի ընտրություն:

- Խորհրդատուն իրականացնելու և օժանդակելու է աղբահավաքման և սանիտարական մաքրման կոնցեսիաների և աղբավայրի նախատրակավորման փուլի աշխատանքներին, նախապատրաստելու է օպերատորների հետ կնքվող պայմանագրերի նախագծերը, բանակցություններ է վարելու պոտենցիալ միջազգային ներդրողների հետ:

- Օպերատորի կողմից իրականացվելու է Նուբարաշենի աղբավայրի բնապահպանական փորձաքննություն:
- Խորհրդատուն մշակելու է «Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերը:
- Իրականացվելու է Երևան քաղաքի փողոցների առաջնահերթության որոշում, ինչպես նաև սահմանվելու է դրանց մաքրման աշխատանքների իրականացման պարբերականությունը:
- Իրականացվելու է Երևան քաղաքի փողոցների և այլ հասարակական կառույցների գույքագրում և քարտեզագրում՝ օպերատորի հետ կնքվող պայմանագրում ներառելու նպատակով:
- Որոշվելու է կոնտեյներային հրապարակների կառուցման վայրերը:
- Մշակվելու և իրականացվելու է օպերատորի կողմից ծառայությունների մատուցման աշխատանքների մոնիթորինգի և վերահսկողության համակարգեր:
- Մշակվելու է առաջարկություններ Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի աղբամուղերի հետագա շահագործման և բարեփոխումների վերաբերյալ:
- Երևան քաղաքի փողոցների սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու համար առաջնահերթ նախատեսվում է ձեռք բերել ևս առնվազն թվով 50 միավոր տարբեր մակնիշների (ձյուն մաքրող, բարձող, մայթ մաքրող, ինքնաթափ, գրեյդեր) և այլ հատուկ նշանակության մեքենա-մեխանիզմներ :

Ըստ մոտավոր հաշվարկների՝ վերոնշյալ թվով 50 միավոր մեքենա-մեխանիզմների ձեռք բերման ընդհանուր գումարը կկազմի շուրջ 570-600 մլն ՀՀ դրամ:

- 2009թ, համաձայն Երևանի թաղային համայնքների և սանիտարական մաքրման ընկերությունների միջև կնքված պայմանագրերի, Երևան քաղաքի վարչական տարածքի տարեկան սանմաքրման աշխատանքների համար

հատկացվել է 2.6 մլրդ դրամ, այսինքն՝ մեկ քմ սանմաքրման տարեկան սակագինը Երևան քաղաքում կազմել է միջինը 220 դրամ, որը բավարար չէ սանմաքրման աշխատանքներն ամբողջովին կազմակերպելու համար:

- Նախատեսվել է 2010թ. Երևան քաղաքի վարչական տարածքում սահմանել 1 քմ սանմաքրման տարեկան միասնական սակագին ներկայումս առկա (220 դրամ)-ի փոխարեն դարձնելով շուրջ 250-260 դրամ, հաշվի առնելով վարչական շրջանների գոտիավորման սկզբունքը, որի դեպքում մայրաքաղաքի սանիտարական մաքրման աշխատանքների համար հատկացվող տարեկան գումարի չափը կկազմի շուրջ 3.5 մլրդ դրամ, որն իր մեջ կնդգրկի վարչական շրջանների բոլոր փողոցների և բակային տարածքների սանիտարական մաքրման աշխատանքները:

- 2010թ. սեպտեմբերին արդեն կգործի միջազգային մրցույթում հաղթող ճանաչված մասնավոր օպերատորը, որը կստանձնի Երևան քաղաքի աղբահանության, սանիտարական մաքրման և Նուբարաշենի աղբավայրի բարելավման աշխատանքների կատարումը:

Բ Ա Ջ Մ Ա Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն Շ Ե Ն Ք Ե Ր Ի

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Մ

Վիճակի գնահատում

Երևան քաղաքի բազմաբնակարան բնակարանային ֆոնդը հանդիսանում է առանցքային ակտիվներից մեկը, և պետությունը շահագրգռված է այդ ակտիվի պատշաճ շահագործման, սպասարկման և արդիականացման հարցում:

Հայաստանի անկախացումից ի վեր, այս ոլորտում իրականացված բարեփոխումների արդյունքում, ձևավորվել է ինստիտուցիոնալ միջավայր, որի բնորոշիչ հատկություններից մեկը մասնավոր սեփականության գերակայումն է՝ ներկայումս բնակարանային ֆոնդի շուրջ 95% հանդիսանում է մասնավոր սեփականություն:

Երևանում գտնվող 4765 բազմաբնակարան շենքերից 4430-ի կառավարումը իրականացվում է 372 համատիրությունների, 118-ը՝ լիազորագրային կառավարիչների, 158-ը՝ վարչական շրջանների ղեկավարների և 9-ը՝ ԿԷԶ-ի կողմից:

Բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակը գնահատվում է անբավարար: Վատթար վիճակում է գտնվում վերելակային տնտեսությունը:

Շենքերի կառավարման մարմինները (համատիրություն, լիազորագրային կառավարում, վարչական շրջանի ղեկավար) չեն իրականացնում օրենքով իրենց վերապահված լիազորությունները: Պարտադիր նորմերի կատարման մասով բավարար վերահսկողություն չի իրականացվում:

Կառավարման մարմինների աշխատանքների մասին տեղեկատվության բացակայությունը ստեղծում է անպատասխանատվության և անտարբերության մթնոլորտ, ինչպես սեփականատերերի, այնպես էլ՝ կառավարման մարմինների համար: Համակարգում մրցակցային միջավայրի բացակայությունը ստեղծում է բարենպաստ պայմաններ մասնագիտական ցածր պատրաստվածություն ունեցող, օրենքին չտիրապետող կառավարման մարմինների ղեկավարների ընտրության համար:

Ֆինանսական միջոցների հավաքագրման և ծախսման մեխանիզմները չեն համապատասխանում օրենքով սահմանված կարգին: Դրանց մեծ մասը ուղղված է ոչ թե բազմաբնակարան շենքի պարտադիր նորմերի կատարմանը, այլ կառավարման մարմինների աշխատակիցների աշխատավարձերի վճարմանը:

Ուսումնասիրության (կազմվել են բոլոր բազմաբնակարան շենքերի թերությունների ակտեր) արդյունքում պարզվել է, որ մայրաքաղաքի բազմաբնակարան շենքերի մեծ մասի հարթ, թեք-լանջավոր տանիքները, վերելակները, ջրագծերը և կոյուղագծերը վերանորոգման կարիք ունեն:

Անձնագրերի, շենքի ընդհանուր բաժնային սեփականության գրանցման, կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ սահմանային կետերի որոշման բացակայությունը կառավարման մարմինների համար ստեղծում են լրացուցիչ դժվարություններ՝ ծառայություններ մատուցող կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում:

2008 թվականին ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման բնագավառի բարեփոխումներին ուղղված միջոցառումների ծրագրի նախագիծ է մշակվել, այն քննարկվել է ՀՀ կառավարությունում և 28.04.2008թ. հ.380-Ա որոշմամբ արժանացել է կառավարության հավանությանը և հանձնարարվել է.

ՀՀ պետական գործադիր մարմինների ղեկավարներին՝ ապահովել որոշման համապատասխան հավելվածների համաձայն բնակֆոնդի կառավարման, շահագործման և պահպանման պետական աջակցության ծրագրի կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագրի կատարումը՝ նախատեսված ժամկետներում, ինչպես նաև օտարերկրյա պետությունների հետ բանակցություններ վարելու ժամանակ առաջարկել նրանց աջակցություն ցույց տալ սույն որոշմամբ հավանության արժանացած 2009-2012 թվականների միջոցառումների ծրագրերի իրականացման հարցում:

Համաշխարհային բանկի փորձագետ է հրավիրվել Երևան, փաթեթն ամբողջությամբ տրամադրվել նրան ուսումնասիրելու: Փորձագետի ներգրավման նպատակն է ուսումնասիրել երկրի բնակֆոնդի պահպանման և շահագործման ազգային ռազմավարությունը:

Ներկայացնել՝ բազմաբնակարան շենքերի կառավարման արդյունավետ ներդրման, իրավական դաշտի բարելավման, բնագավառում պետական-մասնավոր հատվածների համագործակցության խթանման, սպասարկող կազմակերպությունների մրցութային կարգով ընտրության, պրոֆեսիոնալ կառավարիչների ինստիտուտի ներդրման, կառավարման մարմինների ղեկավարներին ներկայացվող չափորոշիչների սահմանման, կառավարման մարմինների և սեփականատերերի միջև փոխհարաբերությունների հստակեցման, կառավարման գործընթացի վերահսկողության իրականացման, վերաբերյալ առաջարկություններ: Փորձագետի կողմից ուսումնասիրությունը ընթացքի մեջ է դեռևս եզրակացության ներկայացված չէ:

Հիմնախնդիրներ

- *Բազմաբնակարան շենքերի կառավարման հայեցակարգի բացակայություն:*

- Մեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման նկատմամբ անտարբերություն:
- Մաշված և կապիտալ վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն
- Ֆինանսական միջոցների՝ սպասարկման վճարների անբավարար գանձում և ոչ արդյունավետ կառավարում:
- Պայմանագրային հարաբերությունների և մրցակցային միջավայրի բացակայություն:
- Բնակիչների իրազեկվածության և իրենց լիազորությունների ու պարտականությունների տիրապետման պակաս:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Տեղեկատվական և խորհրդատվական օգնություն, հակադարձ կապի մշակում և ներդրում:
- Պարտադիր նորմերի կատարման պահանջների վերահսկողություն:
- Կառավարման մարմինների կադրերի պատրաստում և վերապատրաստում:
- Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի աջակցման համալիր ծրագրի մշակում:
- Սպասարկման վարձավճարների գանձման համակարգի բարելավում:

Վ Ե Ր Ե Լ Ա Կ Ա Յ Ի Ն Տ Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վիճակի գնահատում

Վերելակային ծառայության ապակենտրոնացումը դժվարացրեց բնակելի շենքերի վերելակների պահպանման, շահագործման, նորոգման և սպասարկման միասնական կանոնների կիրառումը: Ներկայումս բարձրահարկ բնակելի շենքերի վերելակային պարկի ցուցակային թիվը 4318 է, թվով 3120 վերելակ սպասարկվում և շահագործվում է մասնագիտացված վերելակային ծառայությունների կողմից, իսկ

մնացած 1188 վերելակների սպասարկումն ու շահագործումն իրականացվում է լիցենզիա ունեցողներ անհատ մասնագետների միջոցով:

Նախկինում գործող 95 դիսպետչերական կետերից և 25 հենակետերից գործում են 11-ը, զգացվում է փորձառու մասնագետների կարիք, իսկ ներկայումս յուրաքանչյուր մասնագետ միաժամանակ սպասարկում է մինչև 50 վերելակ:

1996 թվականից սկսած թաղային համայնքներին պատկանող վերելակները մինչև 2004թ. գրեթե չեն սպասարկվել, չեն վերանորոգվել, չեն փորձարկվել և նրանց տարերային շահագործումը հղի է բազմաթիվ վտանգներով:

Վերը նշված հանգամանքներից ելնելով՝ հրատապ անհրաժեշտություն առաջացավ հնարավոր կարճ ժամկետում լուծելու քաղաքի վերելակային տնտեսության անվտանգ շահագործման և հիմնական նորոգման խնդիրները ու կազմվեց վերելակների վերականգնման համալիր ծրագիր, որի հիման վրա, ՀՀ կառավարության 13.09.2007թ. հ.998-Ա որոշմամբ, Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման և փոխարինման նպատակով, Երևանի քաղաքապետարանին հատկացվեց 3.0 մլրդ. դրամ:

2007-2008թթ. Այդ միջոցների հաշվին իրականացվել է թվով 2464 վերելակների ընթացիկ նորոգման և թվով 35 վերելակ փոխարինվել են նորով (կցվում է 2007-2008թթ. ընթացքում կատարված աշխատանքների ժամանակացույցը):

Երևան քաղաքում չվերանորոգված թվով 1800 վերելակների վերանորոգման համար մոտավոր հաշվարկներով նախատեսվում է 2.2 մլրդ. դրամ ֆինանսական միջոցներ, որով կավարտվի վերելակային պարկի վերականգնումը:

ՀՀ կառավարության բաժնետոմսերի կառավարման լիազորություններ վերապահելու մասին 9 հուլիսի 2009թ. հ.753-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ Երևան քաղաքի «Երվերելակ» պետական փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ չնայած գոյություն ունեցող օրենսդրական հնարավորություններին, այնուհանդերձ, վերելակային

տնտեսության սպասարկման, շահագործման աշխատանքներն իրականացվում են անբավարար:

Չի իրականացվում վերելակային ծառայություններում աշխատող մասնագետների վերաորակավորում, իսկ համալրելու նպատակով՝ նոր կադրերի պատրաստում:

Հիմնախնդիրներ

- *Մաշված և կապիտալ վերանորոգման կարիք ունեցող վերելակների առկայությունը*
- *Շուրջօրյա դիսպետչարական ծառայության բացակայությունը*
- *Մասնագետ կադրերի պակասը*
- *Կառավարման մարմինների հետ չկարգավորված փոխհարաբերությունները*
- *Սեփականատերերի՝ իրենց սեփականության պահպանման նկատմամբ անտարբերությունը:*

Ե Ն Թ Ա Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Ք Ն Ե Ր

Էլեկտրամատակարարում

Վիճակի գնահատում

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունը հիմնականում զբաղվում է էլեկտրաէներգիայի բաշխմամբ և իրացմամբ, այսօր ընկերությունն ունի 12 մասնաճյուղ (որոնցից 5-ը Երևանում): Ճապոնական վարկով իրականացվում է 110 կՎ թվով 17 ենթակայանների վերակառուցման և արդիականացման ծրագիր (որից թվով 12-ը քաղաք Երևանում) 35մլն. ԱՄՆ դոլարին համարժեք դրամով: Ներկայումս պիլոտային ծրագրերի հիման վրա ներդրվում է ընկերության սպասարկման տարածքի 2%-ի վրա, ընկերությունը նախատեսում է նմանատիպ ծրագրերի հիման

վրա PLC տեխնոլոգիաների ներդրումը շարունակել՝ այն կիրառելով սպասարկման տարածքի 8-10%-ի վրա, իսկ հետագայում այն ներդնել ամբողջապես: Ցանցերի ընդհանուր երկարությունը կազմում է 36 հազ. կմ:

Հիմնախնդիրներ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության կարևորագույն խնդիրներից է Երևան քաղաքի էլ. էներգիայի անխափան մատակարարումը, էլ. էներգիայի մատակարարման հուսալիության բարձրացումը, ինչպես նաև ընկերության հաշվեկշռում գտնվող սարքավորումների արդիականացումը, որի նպատակով ընկերությունում կազմվել է ներդրումային ծրագիր և ժամանակացույց՝ սարքավորումների և մալուխային ու օդային գծերի շահագործման աշխատանքների իրականացման համար:

Նշված ներդրումային ծրագրով իրականացվում է.

- Բազմաբնակարան շենքերի երկրորդ պահուստային մալուխագծերի մոնտաժում՝ բաշխիչ սարքավորումների տեղադրումով
- Մատակարարվող էլ. էներգիայի հուսալիությունը բարձրացման նպատակով՝ բաշխիչ կետերի վերակառուցում, յուղային անջատիչների փոխարեն վակուումային անջատիչների տեղադրում՝ թվային միկրոպրոցեսորային ղեկավարման բլոկի տեղադրումով
- Անվտանգության ապահովման և բնակչության անդորրը պահպանելու նպատակով՝ բազմաբնակարան շենքերի առաջին հարկերից տրանսֆորմատորային ենթակայանների դուրս բերում:
- Տրանսֆորմատորային ենթակայանների, օդային և մալուխային գծերի անվտանգության գոտիների խախտումը, որը խոչնդոտում է շահագործման աշխատանքներին, բերում է հուսալիության նվազեցմանը և բաժանորդների բողոքներին:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունն ամենամյա ներդրումներ է նախատեսում ցանցերի վերակառուցման և զարգացման համար: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը հաստատվել է ընկերության կողմից ներկայացված 2007-2009 թվականների ներդրումային ծրագրերը, որոնցում նախատեսված է ենթակայանների սարքավորումների փոխարինում, նոր էներգետիկ օբյեկտների կառուցումը, նոր տեխնոլոգիաների ներդրում 110-35-10(6)- կՎ ցանցերում:
- ենթակայանների, մալուխային և օդային գծերի և այլ էներգետիկ օբյեկտների կառուցում, վերակառուցում և վերազինում
- Ընկերությանը Ճապոնական միջազգային համագործակցության բանկի կողմից տրամադրվել է արտոնյալ վարկ 110 կՎ թվով 13 ենթակայանների վերակառուցման համար: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև ենթակայանների հիմնական սարքավորումների փոխարինում, լարման 110-35-6(10) կՎ մակարդակների վրա
- Երևան քաղաքի մասնավոր հատվածներում 0.4կՎ օդային ցանցի կառուցում՝ ինքնատար մեկուսացված հաղորդալարերով (СИП), որը կբերի անվտանգության ապահովմանը, կորուստների նվազեցմանը և հուսալիության բարձրացմանը:

Գազամատակարարում

Վիճակի գնահատում

«Հայֆուսգազարդ» ՓԲ ընկերությունը իրականացնում է Երևանի գազամատակարարման համակարգի վերականգնման և գազիֆիկացման ծրագրեր:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ հնարավոր, փաստացի և պոտենցիալ բաժանորդների քանակը ըստ տարիների

Տարեթիվ	Հնարավոր բաժանորդներ			Փաստացի բաժանորդներ			Պոտենցիալ բաժանորդներ	
	Բաժանորդների աճը տարվա ընթացքում	Տնտեսություններ	%-ին աճ	Բաժանորդների աճը տարվա ընթացքում	Տնտեսություններ	%-ին աճ	Տնտեսություններ	%-ին աճ
2002թ.		181482			112517		68965	
2009թ.	20911	675053	3.2	57686	573955	11.2	101098	-26.7

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կողմից գազիֆիկացման նպատակով կատարված ներդրումներն ըստ տարիների (մլրդ.դրամ)

Տարեթիվ	Ընդամենը ներդրումներ	Շին. հավաքակցում	Կենցաղային գազահաշվիչներ
2002թ.	0.8	0.2	0.6
2003թ.	4.0	2.4	1.7
2004թ.	7.1	4.5	2.6
2005թ.	8.3	5.7	2.6
2006թ.	6.3	4.1	2.1
2007թ.	2.8	0.8	2.0
2008թ.	2.8	1.1	1.7
Ընդամենը	32.1	18.8	13.3

Եվրամիության INOGATE ծրագրի շրջանակներում ընկերությունում ներդրված է SCADA համակարգի առաջին հերթը, այսպիսի կապը հնարավորություն է ընձեռում.

- Արբանյակային կապի սարքավորումների օգտագործմամբ, ժամանակի իրական ռեժիմում ապահովել թվային, ձայնային և տեսատեղեկատվության փոխանցումը մայրուղային գազատարի հանգուցային կետերից Ընկերության Կենտրոնական կարգավարական վարչություն (ԿԿՎ): Այսպիսի կապը հնարավորություն է ընձեռում

- Տեղեմետրական տեղեկատվության և հիդրավլիկական հաշվարկի արդյունքների համեմատության միջոցով հայտնաբերելու գազատարի վթարավտանգ հատվածները

- Լուծելու գազափոխադրման համակարգում բնական գազի հաշվեկշռի հետ կապված հարցերը

- Ընդհանուր առմամբ գազամատակարարման և գազօգտագործման ոլորտի զարգացման մեջ նկատվում են դրական միտումներ:

Հայաստանի Հանրապետությունում կառուցված ստորգետնյա գազապահեստ կայանը (ՍԳՊԿ) ընդհանուր առմամբ հնարավորություն է տալիս առանց լուրջ հետևանքների հաղթահարել ճգնաժամերը՝ կապված մայրուղային գազամուղների վրա տեղի ունեցող վթարների կամ հանրապետություն բնական գազի մատակարարման սահմանափակումների հետ: Վերջին 15 տարիների ընթացքում ՍԳՊԿ-ի տեխնիկական վիճակը զգալիորեն վատթարացել է, քանի որ աղաջրի հիմնական սպառող հանդիսացող «Նաիրիտ» գործարանը փաստացի դադարել է գործարկումը: Աղաջրի հեռացման անհնարինիությունը կտրուկ սահմանափակել է գազահորերում վերանորոգման և վերականգնման աշխատանքների իրականացումը, որի հետևանքով էլ վատթարացել են ստորգետնյա հորերի տեխնիկական բոլոր չափորոշիչները: Վերջին տարիներին «Պողգեմգազարոմ» ԲԲԸ ակտիվ մասնակցությամբ մեծածավալ աշխատանքներ են իրականացվել գազահորերի ախտորոշման և վերանորոգման ուղղությամբ: Բացի այդ «ՀայՌուսգազարդ» ընկերությունը ձեռնարկել է աղաջրի պահեստարանի կառուցման շինարարությունը Զովունի գյուղի տարածքում: Նշված միջոցառումները հնարավորություն են ստեղծել ՍԳՊԿ-ի պահեստավորման փաստացի ծավալները հասցնել մինչև 100 մլն խ/մ, և հուսադրող հիմքեր կան, որ բնական գազի պահեստավորման ծավալները առաջիկա երկու տարվա ընթացքում կհասցվեն մինչև 145-150 մլն խ/մ-ի: Ընդհանուր առմամբ ՍԳՊԿ-ի վերակառուցումը պահանջում է մեծ կապիտալ ներդրումներ: ՍԳՊԿ-ի զարգացման բիզնես պլանի համաձայն պահանջվող ներդրումները գերազանցում են 25 մլն ԱՄՆ դոլարը. ընդ որում վերը նշված ծավալներն ապահովվելու համար անհրաժեշտ է 5 մլն ԱՄՆ դոլար, մինչև 200-220 մլն խ/մ ընդլայնելու դեպքում՝ անհրաժեշտ է 7-10 մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումար, կոմպրեսորային կայանի ֆիզիկական մաշվածությունը վերափոխելու համար՝ 12-13 մլն ԱՄՆ դոլար:

Գազափոխադրման համակարգը վերակառուցելու և ընդլայնելու, ինչպես նաև թողունակությունը բարձրացնելու նպատակով «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն 2007-2009

թվականներին իրականացրել է 52.0 միլիարդ դրամ (մոտ 150 միլիոն ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարով ներդրումներ:

2009 թվականի ընթացքում Երևան քաղաքում գազիֆիկացվել են Սիլիկյան թաղամասի Նորվեգական քոթեջներ, Տիգրան Մեծ, Խորենացի, Նար-Դոս փողոցներով պարփակված թաղամաս, Խորենացի հ.209, հ.211, Արշակունյաց հ.30, հ.32, Ե.Քոչար հ.27, Բրյուսովի հ.23, Շիրակի հ.7/2, Փարպեցի հ.9^ա, Շահամիրյան հ.10, , Դավթաշենի 3-րդ թաղամաս հ.6, 7, 7/2, 4-րդ հ.53 շենքեր, Սահմանադրական Դատարանի, Անվտանգության Խորհուրդի, Քաղաքացիական Խորհուրդի շենքեր, Հայ-գերմանական «ԷԼԲԱՏ» մարտկոցների գործարան:

Գերակա խնդիրներից է Երևանի մի շարք տարածքներում, այդ թվում՝ Խորենացու 4-րդ նրբ, Նորագյուղ թաղ. հ.94, 94ա, 94բ, 94գ և 147, 340, 321 հասցեներ, թվով 119 առանձնատներ, Սարի թաղի 8-րդ, 9-րդ, 10-րդ շարքերի թվով 250 առանձնատներ, Աջափնյակ վարչական շրջանի Սպանդարյան կայարանի տարածք, Փիրումյան միկրոշրջանի (Սիլիկյան թաղ.) առանձնատների, Նոր Նորքի 7-րդ գանգվածի 2/5, Հ.Ավետիսյան հ/տարածքի թիվ 2, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12 առանձնատների գազիֆիկացումը, գազամատակարարումը:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

2010թ. գազային համալիրի վերականգնման և զարգացման ծրագրի իրականացման ուղղությամբ Երևան քաղաքում նախատեսվում է իրականացնել շուրջ 3.7 մլրդ. դրամի աշխատանքներ: Բնական գազի տեղափոխման և բաշխման փուլերում նրա հաշվառման համակարգերի կատարելագործման ուղղությամբ ընկերության կողմից տարվող տեխնիկական քաղաքականությունն ուղղված է ժամանակակից բարձր ճշտության դասով ծախսաչափերի ներդրմանը, որոնց համար որպես հիմք ծառայում են փոփոխական ճնշման անկումով աշխատող միկրոպրոցեսորային ծախսաչափային համալիրները, ռոտացիոն և տուրբինային հաշվիչներն ու մեմբրանային կենցաղային հաշվիչները, ինչը և հնարավորություն կտա հսկելու գազի ծախսը:

Ընկերությունը նախատեսում է ներդնել.

- Հայաստանի Հանրապետության մուտքում («Пьетро – Фиорентини» ֆիրմայի ժամանակակից բազմաֆունկցիոնալ ծախսաչափային համալիր)
- Գազատրանսպորտն ու գազի պահեստավորումն ապահովող «Տրանսգազ» ՍՊԸ-ի Գծային շահագործման մասնաձյուղերի սահմանազատման կետերում (ժամանակակից ծախսաչափային համալիրներ, «Суперфлоу», «Армфлоу», «Флоубос»)
- «Տրանսգազ» ՍՊԸ մասնաձյուղերի և Գազիֆիկացման ու գազամատակարարման մասնաձյուղերի (ԳԳՄ) սահմանազատման կետերում տեղադրված գազաբաշխման կայաններում (ԳԲԿ) (ժամանակակից ծախսաչափային համալիրներ, «Суперфлоу», «Армфлоу», «Флоубос» հայկական «Ա-2» և ֆրանսիական «Актарис» ընկերությունների կողմից արտադրվող էլեկտրոնային ճշտիչներով կահավորված տուրբինայի և ռոտացիոն հաշվիչներ)

Էլեկտրոնային հեռահաղորդակցություն

Վիճակի գնահատում

Հայաստանի Հանրապետությունում հեռախոսային կապի ծառայությունների մատուցումը իրականացվում է հանրային համակցված հաղորդակցության ցանցի միջոցով: Հեռահաղորդակցության աշխարհում թվային տեխնոլոգիաների տարածմանը համահունչ վերջին տասնամյակում Հայաստանում ևս որպես զարգացման ուղենիշ ընտրվեց անցումը հաղորդակցության անալոգային ցանցերից՝ թվայինի:

Աղյուսակ 1

Երևանի հեռախոսակապի («ԱրմենՏել») ծառայությունները բնութագրող ցուցանիշներ

Տարածք	Տեսակ	1998թ.	1999թ.	2000թ.	2001	2002	2003թ.
Երևան	Անալոգային	232.700	196.100	180.400	180.400	171.400	125.000
	Թվային	58.600	98.600	125.600	125.600	135.600	186.400
	Ընդհանուր	291.300	294.700	306.000	306.000	307.000	311.400
	Թվայնացում	20.1%	33.5%	41.0%	41.0%	44.2%	59.9%

Հեռախոսակապի ծառայությունների հասանելիությունը բնութագրող կարևոր ցուցանիշ է հանդիսանում հեռախոսությունը՝ յուրաքանչյուր 100 բնակչին տրամադրված և շահագործվող հեռախոսագծերի քանակը:

Հեռախոսակապի զարգացման հիմնախնդրի լուծումը պահանջում է համալիր միջոցառումների իրականացում.

ա) Արմենտելի կողմից Երևան քաղաքի անալոգային ԱՀԿ-ների թվայնացում, ընդլայնում, նշված պարտավորության իրականացման նկատմամբ հսկողության լծակների խստացում, իսկ դրա չկատարման դեպքում՝ հարկադրանքի միջոցների կիրառում:

բ) ADSL տեխնոլոգիայի վրա հիմնված ինտերնետ ծառայությունների մատուցում, ենթակառուցվածքի հետագա զարգացում (լարային և ոչ լարային տեխնոլոգիաներ):

գ) Նորակառույց շենքերի հեռախոսաֆիկացում:

դ) Տվյալների ցանցի արդիականացում:

Հայաստանի Հանրապետությունում մատուցվում են շարժական GSM բջջային կապի, արբանյակային Iridium համակարգի, ռադիոհորոնման «Փեյջեր» համակարգի, ռադիոկապի Ալթայ համակարգի ծառայությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շարժական կապի ծառայությունների շուկայում GSM բջջային կապի սպառողական պահանջարկը հանդիսանում է գերակշռող:

Շարժական կապի շուկայի ազատականացումը, ցանցերի փոխկապակցման պարտավորության իրականացումը և արդար մրցակցության երաշխիքների ապահովումը հարկադրում է ձեռնարկել համարժեք միջոցներ շարժական կապի զարգացման համար, այդ թվում նոր օպերատորների մուտքը Հայաստան «Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերությունը ՎիվաՍել-ՄՏՍ բրենդի ներքո 2005 թվականից և Ֆրանս Տելեկոմ Խմբի մասը կազմող «Օրանժ Արմենիա» ՓԲ ընկերությունը հաղթող ճանաչվելով ՀՀ կառավարության հայտարարած միջազգային բաց մրցույթում Հայաստանում հեռահաղորդակցման ծառայություններ մատուցելու լիցենզիա է ստացել 2008թ. նոյեմբերի 19-ից:

Orange ընկերության ծառայությունների մատուցումը Հայաստանի ամբողջ տարածքում մեկնարկել է 2009թ. նոյեմբերի 5-ից՝ առաջարկելով շարժական հեռախոսակապի և ինտերնետի ծառայություններ: Այսպիսով, Հայաստանը միացել է 30 այն երկրներին, որտեղ գործունեություն է ծավալում Ֆրանս Տելեկոմը Orange ապրանքային նշանի ներքո՝ ամբողջ աշխարհում սպասարկելով շուրջ 126 միլիոն շարժական կապի բաժանորդի: Orange-ը Հայաստանում մատուցելու է շարժական հեռախոսակապի և ինտերնետի ծառայություններ իր 3G+ գերժամանակակից ցանցի շնորհիվ: 2009թ. նոյեմբեր ամսվա դրությամբ Հայաստանում արդեն կատարվել են 90 միլիոն դոկարի ներդրումներ՝ ուղղված ցանցի և վաճառքի ուղիների կառուցմանը, ապրանքների ու ծառայությունների մշակմանը: Մեկ տարուց էլ քիչ ժամանակահատվածում Orange-ը Հայաստանում դարձել է մեծ ընտանիք իր 300 աշխատակիցներով, ֆրենչալիզի մոդելով աշխատող գործընկերներով և անուղղակիորեն ստեղծված մյուս աշխատատեղերով. ավելի քան 800 հոգի ներկայումս ուղղակի կամ անուղղակի կերպով աշխատում է Orange-ի գործունեության տարբեր ոլորտներում: Երևանում 13 և մարզերում 24 խանութների և հազարավոր ավելի փոքր վաճառակետերի շնորհիվ Orange-ը մշտապես մոտ կլինի իր հաճախորդներին և նրանց կառաջարկի սպասարկման նոր մոտեցումներ: Orange-ը հաճախորդին է ներկայանում որպես մարդկային բրենդ, ինչն արտացոլվում է ընկերության գործունեության բոլոր ոլորտներում. սպասարկման սիրալիր և ընկերական վերաբերմունք, պարզ ու հասկանալի ապրանքներ և ծառայություններ, որոնք հարմար կլինեն Հայաստանում յուրաքանչյուրին: Բացի միջազգային բրենդի մեծ փորձից և բարձր որակից, Orange-ը Հայաստան կրերի նաև բազմաթիվ աշխարհահռչակ ընկերությունների հետ գործընկերության արդյունքը:

Հայաստանում տուրիզմի և միջազգային առևտրի զարգացման համար կարևորագույն գործոն է հանդիսանում նաև GSM բջջային կապի համակարգի կողմից ռոումինգի ծառայության մատուցումը: Ներկայումս ՎիվաՄեկ-ՄՏՄ-ը 177 երկրներում գործող 373-ից ավելի ռոումինգային գործընկերների, Orange-ը ավելի քան 130 երկրներում գործող գործընկերների, իսկ Արմենտելը 55 երկրների 105 օպերատորների հետ ռոումինգի պայմանագրերի շնորհիվ հնարավորություն են տալիս հայ բաժանորդներին կապ պահպանելու հայրենիքի հետ, որտեղ էլ որ լինեն:

Մեկնարկին Orange-ն արդեն ծածկույթ է ապահովում Հայաստանի բնակչության 83%-ին, ՎիվաՍելի բջջային կապի ծածկույթը Հանրապետության տարածքում կազմում է 80%, Արմենտելինը 35 %:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Կապի և տեղեկատվայնացման ոլորտի ներկա վիճակը, առկա հիմնախնդիրների լուծման մոտեցումները և վերլուծումը առաջարկում և ամրագրում է ոլորտի զարգացման համաշխարհային միտումներից բխող ռազմավարական նոր ուղենիշերը (քաղաքականությունը) ըստ առանձին սեգմենտների (մասնավորապես՝ հեռախոսակապ, տվյալների փոխանցում), միաժամանակ տրված են ոլորտի ամբողջական զարգացման ռազմավարական ուղենիշերը(անհրաժեշտ սարքավորումների և նյութերի ձեռք բերում, սարքավորումների տեղակայման աշխատանքներ, բաժանորդային հեռախոսագծերի վերամիացման աշխատանքներ և այլն):

Հեռախոսակապի զարգացման հիմնախնդրի լուծումը պահանջում է համալիր միջոցառումների իրականացում.

- Երևան քաղաքի անալոգային ԱՀԿ-ների թվայնացում, ընդլայնում, նշված պարտավորության իրականացման նկատմամբ հսկողության լծակների խստացում, իսկ դրա չկատարման դեպքում՝ հարկադրանքի միջոցների կիրառում:

- ADSL տեխնոլոգիայի վրա հիմնված ինտերնետ ծառայությունների մատուցում, ենթակառուցվածքի հետագա զարգացում (լարային և ոչ լարային տեխնոլոգիաներ):

Զարգացման հաջող ընթացքի դեպքում, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները կարող են լինել ոչ միայն տնտեսության մրցունակությունն ապահովող կարևոր գործոններից մեկը, այլ նաև հիմքը դառնալ տարածաշրջանային ավելի ակտիվ համագործակցության և միասնական տնտեսական տարածության ձևավորման:

Նշված ծրագրային միջոցառումներով ըստ էլեկտրոնային հեռահաղորդակցության օպերատորների՝ նախատեսված է.

ՎիվաՄեյ-ՄՏՄ

- Փակ տարածքների համար որտեղ արտաքին կայանների ծածկույթը անբավարար է վերահաղորդիչ սարքերի տեղադրում, ստեղծելով որակյալ ծածկույթ
- Նորակառույց շենքերի հեռախոսաֆիկացում
- Տվյալների ցանցի արդիականացում
- 137 հատ 3G նոր սերնդի կայանների տեղակայում
- 20 հատ նոր կայանների և վերահաղորդիչ սարքերի տեղադրում Երևան քաղաքի այն թաղամասերում, որտեղ ծածկույթը որոշակի թերություններ ունի

Արմենտել

- 93 օբյեկտների, այդ թվում 38 նորակառույց շենքերի հեռախոսաֆիկացում
- 25, 34, 35, 77 ԱՀԿ թվայնացման աշխատանքների ավարտ
- Բոլոր հեռախոսային հանգույցներում 17000 գծի համար լայնաշերտ հասանելիությամբ ինտերնետի մատուցման հնարավորության ընդլայնում՝ հիմնված ADSL տեխնոլոգիայի վրա
- Տվյալների փոխանցման ցանցի արդիականացման աշխատանքների ավարտ
- ADSL տեխնոլոգիայի լայնաշերտ հասանելիությամբ ինտերնետի մատուցման հնարավորության ընդլայնում 20 000 հեռախոսային գծերի համար
- 47 ԱՀԿ թվայնացման և ցանցի վերակառուցման նպատակով նախագծաշինարարական, ինչպես նաև նորակառույց շենքերի հեռախոսաֆիկացման աշխատանքներ
- 20 հատ բազային կայանների, 21 հատ 3G նոր սերնդի կայանների տեղակայում և բջջային ցանցի արդիականացում

Օրանժ Արմենիա

- 140 հատ ռադիո կայանների տեղակայում
- 20 հատ կայանների տեղակայում

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Վիճակի գնահատում

Երևան քաղաքում գործում են առևտրի 11036 օբյեկտներ, սպառողական ապրանքների 18, գյուղատնտեսական արտադրանքի 11 շուկաներ, հանրային 911 և կենցաղային ծառայություններ մատուցող 892 օբյեկտներ: Առևտրի օբյեկտների 60,0%-ը, հանրային սննդի կազմակերպման օբյեկտների 73,5%-ը և կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 60,6%-ը կենտրոնացված է Կենտրոն, Արաբկիր, Էրեբունի և Նոր Նորք վարչական շրջաններում:

Մայրաքաղաքի բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվում է խանութներում և սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի միջոցով: Եթե առևտրի այդ տեսակի շրջանառությունը մանրածախ առևտրի ողջ ծավալում 2008թ. կազմել է 82,5%, իսկ 2009թ. 1-ին կիսամյակում՝ 81,7%, ապա գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, տաղավարների ու կրպակների միջոցով շրջանառությունն ունի չնչին տեսակարար կշիռ՝ նշված ժամանակաշրջանում համապատասխանաբար կազմելով 3,9% և 5.0%:

Երևանում առևտրի շրջանառության ծավալի մոտ 84,7%-ը բաժին է ընկնում Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններին, չնայած նշված վարչական շրջաններում ապրում է քաղաքի բնակչության ընդամենը 60%-ը: Դա բացատրվում է այդ վարչական շրջաններում առևտրի խոշոր կազմակերպությունների առկայությամբ: Մնացած 7 վարչական շրջանների տարածքներում իրականացվող առևտրի շրջանառությունն առանձին-առանձին վերցրած կազմում է 0,1%-ից մինչև 5,9%:

Բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը 2008թ. Կենտրոն վարչական շրջանում կազմել է 2615.6 հազ. դրամ, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ 1179.9, Արաբկիր վարչական շրջանում՝ 908.5 հազ. դրամ, իսկ մնացած 9

վարչական շրջաններում այդ ցուցանիշը Երևան քաղաքի միջին ցուցանիշից (806.5 հազ. դրամ) ցածր է:

Երևան քաղաքի խանութներում փոքր և միջին բիզնեսի ոլորտում զբաղված աշխատողների տեսակարար կշիռը կազմում է 63,3%, իսկ 36,7%-ն աշխատում են խոշոր բիզնեսի ոլորտում: Փոքր և միջին բիզնեսի կողմից իրականացվող առևտրի շրջանառությունը կազմում է ընդհանուրի նկատմամբ 44,1%, իսկ խոշոր բիզնեսինը՝ 55,9%:

2009թ. 1-ին կիսամյակի կտրվածքով սպառողական ապրանքների շուկաներում մանրածախ առևտրով զբաղված մարդկանց տեսակարար կշիռը կազմում է 18,8%, իսկ իրականացվող առևտրի շրջանառությունը կազմում է ընդհանուրի նկատմամբ 40,2%:

Երևան քաղաքում կանոնակարգված չէ բոլոր տեսակի պարենային, ոչ պարենային ապրանքների և գյուղմթերքների բացօթյա առևտուրը, անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի, սպասարկման ծառայություններ մատուցող և զվարճանքի օբյեկտները, իսկ տասնյակ փողոցներին հարող, տարածքներ գերհագեցած են տեղադրված կրպակներով ու տաղավարներով, որոնցից շատերն արդեն իսկ վերածվել են կրպակաշարերի կամ ծառայում են բացօթյա ապօրինի առևտուր իրականացնողների համար որպես պահեստ և կարիք ունեն կանոնակարգման ու վերակառուցման: Քիչ են նաև հասարակական զուգարանները, ինչը հարիր չէ մայրաքաղաքին:

Հիմնախնդիրները

- *Երևան քաղաքում ուսումնասիրված չէ առևտրի և սպասարկման ծառայություններ մատուցող օբյեկտների տեղաբաշխումը և բացակայում են բնակչության առաջարկի և պահանջարկի տվյալները, որոնք հանգեցնում են շուկայի տարերային ձևավորմանը:*
- *Կանոնակարգված չէ զվարճանքի օբյեկտների՝ հատկապես գիշերային ակումբների և բացօթյա սրճարանների գիշերային գործունեությունը:*

- *Բավարար հսկողություն չի իրականացվում վաճառվող ապրանքների որակի, ժամկետանց ու խոտան ապրանքների վաճառքի արգելման ուղղությամբ:*
- *Բարվոք վիճակում չի գտնվում բացօթյա առևտուրը այն դեպքում, երբ Երևան քաղաքում գործում են շուրջ 1500 բացօթյա առևտրի կետեր:*

Արդյունքում Երևանում գործող գյուղմթերքների արտադրանքի շուկաներն աշխատում են թերձանրաբեռնվածությամբ, որոնց միջոցով իրականացվող առևտրի շրջանառության տեսակարար կշիռը 2008թ. կազմել է ընդամենը 1,3%, իսկ 2009թ. 1-ին կիսամյակում՝ 1,7%: Ոլորտում առևտուրը կանոնակարգելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կազմակերպելու գյուղմթերքների արտադրանքի ինչպես մեծածախ շուկա, այնպես էլ մանրածախ նոր շուկաներ և անասնաշուկա:

- *Հեռու է քաղաքակիրթ ձևերից ստորգետնյա անցումներում իրականացվող առևտուրը:*
- *Ապամոնտաժման կամ արդիականացման կարիք ունեն Երևան քաղաքի փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների) մեծ մասը, ինչպես նաև բացօթյա փոքրածավալ շուկաներն ու տոնավաճառները:*
- *Կանոնակարգված չէ ծաղիկների, ձմերուկի, սեխի, գործարանային փաթեթավորմամբ պաղպաղակի, զովացուցիչ ջրերի բացօթյա վաճառքը:*
- *Հսկողությունը խստացնելու անհրաժեշտություն կա առևտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների՝ առևտրի օբյեկտից դուրս ցուցադրումը արգելելու ուղղությամբ:*
- *Երևան քաղաքում անասունների սպանդանոցներ չկան:*

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ներկայացում, այդ թվում՝ առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտում գործունեության լրացուցիչ կանոնների և պայմանների մշակում:

- Հանրային սննդի, զվարճանքի օբյեկտներում, այդ թվում՝ գիշերային ակումբներում և բացօթյա սրճարաններում հնչեցվող երաժշտության վերաբերյալ կանոնակարգող իրավական ակտերի ընդունում:
- Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում, հատկապես՝ բացօթյա, քաղաքացիներին զուգարաններից անվճար օգտվելու վերաբերյալ կանոնակարգող իրավական ակտի ընդունում:
- Երևանի քաղաքապետի 2009 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրին աջակցելուն ուղղված միջոցառումների շրջանակներում, Երևան քաղաքում առկա առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների տեղաբաշխումը կանոնակարգելու, տեղափոխելու կամ արդիականացնելու միջոցով՝ դրանց արտաքին տեսքը մայրաքաղաքին ներկայանալի դարձնելու մասին» N1843-Ս որոշման պահանջները կատարելու նպատակով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների հաշվառում, կանոնակարգման վերաբերյալ առաջարկությունների ձևավորում, առևտրի և սպասարկման օբյեկտների տեղաբաշխման և ոլորտի զարգացման ծրագրի և սխեմայի մշակում:
- Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում:
- Երևանի բոլոր վարչական շրջաններում գյուղատնտեսական մթերքների նոր շուկաների կազմակերպում:
- Գյուղատնտեսական մթերքների մեծածախ առևտրի և կենդանի անասունների շուկաների, ինչպես նաև անասունների սպանդանոցների ստեղծման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում:
- Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի կանոնակարգում, այդ գործում սեփականատերերի և վարձակալների համաձայնեցված գործառույթների ապահովում:
- Թափառող կենդանիների վնասազերծման իրավական դաշտի ձևավորում («Կենդանիների մասին», «Կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակում, Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու քաղաքային կանոնների սահմանում և այլն), արդյունավետ

կառավարման մեխանիզմների մշակում, թափառող կենդանիների կացարանների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կացարանների կառուցում:

- Հասարակական զուգարանների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և մասնավոր գործընկերության ներգրավմամբ հասարակական զուգարանների կառուցում:

N	Ծրագրային միջոցառումների անվանումը	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
1.	Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ներկայացում, այդ թվում՝ առևտրի, հանրային սննդի և սպասարկման ոլորտում գործունեության լրացուցիչ կանոնների և պայմանների մշակում	+	+	+	+
2.	Հանրային սննդի, զվարճանքի օբյեկտներում, այդ թվում՝ գիշերային ակումբներում և բացօթյա սրճարաններում հնչեցվող երաժշտության վերաբերյալ կանոնակարգող իրավական ակտերի ընդունում	+	+	-	-
3.	Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում, հատկապես բացօթյա քաղաքացիներին զուգարաններից անվճար օգտվելու վերաբերյալ կանոնակարգող իրավական ակտի ընդունում	+	-	-	-
4.	Երևանի քաղաքապետի 2009 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին բիզնեսի զարգացման ծրագրին աջակցելուն ուղղված միջոցառումների շրջանակներում, Երևան քաղաքում առկա առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների տեղաբաշխումը կանոնակարգելու, տեղափոխելու կամ արդիականացնելու միջոցով՝ դրանց արտաքին տեսքը մայրաքաղաքին ներկայանալի դարձնելու մասին» N 1843-Ս որոշման պահանջները կատարելու նպատակով առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների հաշվառում, առաջարկությունների ձևավորում և ներկայացում Երևանի քաղաքապետին	+	+	+	+
5.	Առևտրի և ծառայությունների ոլորտում համակարգված և արդյունավետ հսկողության իրականացում	+	+	+	+
6.	Առևտրի և սպասարկման օբյեկտների տեղաբաշխման և ոլորտի զարգացման ծրագրի և սխեմայի մշակում	+	+	-	-
7.	Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	+	+	+	+
8.	Երևանի բոլոր վարչական շրջաններում գյուղատնտեսական արտադրանքի նոր շուկաների կազմակերպում, ինչպես նաև փոքրածավալ շուկաների ստեղծում	+	+	+	+
9.	Գյուղատնտեսական մթերքների մեծածախ առևտրի և կենդանի անասունների շուկաների, ինչպես նաև անասունների սպանդանոցների ստեղծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	+	+	-	-
10.	Երևան քաղաքում կենդանի կենդանիների շուկաների կառուցման նպատակով հողամասերի առանձնացում, նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կենդանի անասունների շուկաների ու սպանդանոցների կառուցում	-	+	+	+
11.	Ստորգետնյա անցումներում իրականացվող առևտրի կանոնակարգմանն ուղղված առաջարկությունների փաթեթի մշակում	+	+	-	-
12.	Թափառող կենդանիների վնասագերծման աշխատանքների իրականացում	+	+	+	+
13.	Թափառող կենդանիների վնասագերծման ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում («Կենդանիների մասին», «Կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակում, Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու քաղաքային կանոնների սահմանում և այլն)	+	+	+	+
14.	Երևան քաղաքում թափառող կենդանիների կացարանների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և կացարանների կառուցում:	-	+	+	+
15.	Հասարակական զուգարանների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում	+	+	+	+
16.	Հասարակական զուգարանների կառուցում	+	+	+	+
17.	Մասնավոր ներդրումների հաշվին հասարակական զուգարաններ կառուցելու նպատակով քաղաքաշինական փաթեթի մշակում և կառուցապատողներին ծրագրային փաթեթների օտարում՝ աճուրդային կամ մրցութային կարգով:	+	+	+	+

Տ Ր Ա Ն Ս Պ Ո Ր Տ

Վիճակի գնահատում

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի քաղաքապետը կազմակերպում է Երևանում հասարակական տրանսպորտի աշխատանքը:

Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի ոլորտում դեռևս առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծման համար նախատեսվում է աշխատանքների իրականացում Երևան քաղաքի զարգացման 2010-2013 թվականների ծրագրի շրջանակներում:

Հիմնախնդիրներ

- *համալրված չէ քաղաքի ավտոբուսային հավաքակազմը.*
- *ներքաղաքային երթուղիները գերհագեցած են միկրոավտոբուսներով.*
- *համալրված չէ քաղաքի տրոլեյբուսային հավաքակազմը.*
- *քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի տնտեսությունը գտնվում է վատ վիճակում.*
- *սահմանափակ են Երևանի մետրոպոլիտենի հնարավորությունները.*
- *ցածր է մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության մակարդակը.*
- *կանոնակարգման անհրաժեշտություն է առաջացել քաղաքային հասարակական տրանսպորտի ուղևորափոխադրման սակագների սահմանման հարցում.*
- *ցածր է քաղաքի ճանապարհային երթևեկության կազմակերպման մակարդակը.*
- *հասարակական տրանսպորտի կանգառները բարեկարգված և կահավորված չեն.*
- *ցածր է երթուղիները սպասարկող կազմակերպությունների պատասխանատվությունը.*

- բավարար չէ հաշմանդամների տրանսպորտային սպասարկման մակարդակը.
- բավարար չէ հսկողությունը տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի նկատմամբ.
- ցածր է ուղևորների սպասարկման մակարդակը.
- կանոնակարգման անհրաժեշտություն է առաջացել տրանսպորտային միջոցների կայանատեղերի կազմակերպման և գործունեության հարցերում.
- կանոնակարգման անհրաժեշտություն է առաջացել մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղերի կազմակերպման հարցում.
- հասարակական տրանսպորտի երթակարգավարական կետերը բարեկարգված և կահավորված չեն.
- ներքաղաքային վերգետնյա ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցը ենթակա է վերանայման և լրամշակման.
- կանոնակարգման անհրաժեշտություն է առաջացել Երևանի վարչական տարածք մուտք գործող միջնարգային երթուղիների, «ուսանողական» ավտոբուսների աշխատանքի կազմակերպման հարցում:

Ավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրելու նպատակով 2004թ.-ից սկսած մայրաքաղաք է ներկրվել 384 հատ նոր, փոքր և միջին տեղատարության ավտոբուս, այդ թվում՝ 265 հատ «Բոգդան» մակնիշի, 52 հատ «ՊԱԶ» մակնիշի, 55 հատ «ԶՈՆԴԱ» մակնիշի, 12 հատ «Նեման» մակնիշի (167 հատը մասնավոր կազմակերպությունների կողմից): Չնայած դրան ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ներքաղաքային ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մնում է ցածր՝ կազմելով ընդամենը 12.0%:

Երևան քաղաքում փաստացի գործում են թվով 32 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 270-280 միավոր շարժակազմ: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են թվով 14 մասնավոր կազմակերպություններ:

Երևան քաղաքում անբավարար է ավտոբուսային երթուղիների շահագործման արդյունավետությունը. վերգետնյա ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցում ընդգրկված 52 երթուղիներից 20-ը անհրաժեշտ մայրաքաղաքում այսօր անհրաժեշտ քանակի ավտոբուսների բացակայության պատճառով ընդհանրապես չի սպասարկվում, իսկ երթուղիների մի մասը համալրված է մասնակիորեն:

Մայրաքաղաքի բնակչության կանոնավոր տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար 2010-2013թթ. անհետաձգելի խնդիր է դարձել ավտոբուսային հավաքակազմի համալրումը փոքր և միջին տեղատարողության, քաղաքային մոդիֆիկացիայի ավտոբուսներով և դրան զուգահեռ՝ միկրոավտոբուսների քանակի կրճատումը:

Միկրոավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքում գործում են թվով 116 միկրոավտոբուսային երթուղիներ, որոնք համալրված են տարբեր մակնիշների մոտ 2730 միավոր շարժակազմով: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման համար անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված 64 մասնավոր կազմակերպություններ:

Վերջին տարիներին մայրաքաղաքում ուղևորափոխադրումների հիմնական մասն իրականացվում է միկրոավտոբուսներով, որոնց բաժին է ընկնում ընդհանուր ծավալի մոտ 76%-ը: Որոշակիորեն բարելավվել է միկրոավտոբուսային երթուղիների որակական կազմը: 2005-2007թթ. ընթացքում անցկացված մրցույթների, ինչպես նաև հետագայում երթուղիների շարժակազմերի համալրման (փոխարինման) գործընթացների արդյունքում ներկայումս ներքաղաքային երթուղիներում շահագործվում են 2006-2009թթ. արտադրության մոտ 560 «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուսներ, որոնք հիմնականում փոխարինել են հին «ՌԱՖ» և «ԵՐԱԶ» մակնիշների միկրոավտոբուսներին: Կտրուկ աճել է «ԳԱԶԵԼ» մակնիշի միկրոավտոբուսների տեսակարար կշիռը, կազմելով մոտ 73,0% (2004թ.՝ 32,9%) և նվազել «ՌԱՖ» մակնիշի միկրոավտոբուսների տեսակարար կշիռը՝ կազմելով մոտ 16,0% (2004թ.՝ 51,5%): Չնայած միկրոավտոբուսային երթուղիների աշխատանքի կազմակերպման գործընթացում արձանագրված դրական տեղաշարժերին՝ մայրաքա-

ղաքի բնակչության տրանսպորտային սպասարկման իրականացումը հիմնականում միկրոավտոբուսներով անընդունելի է:

Այսօր երթուղային ցանցը գերհագեցած է միկրոավտոբուսային երթուղիներով, որոնցում շահագործվող շարժակազմի մեծ քանակությունը, մայրաքաղաքի ճանապարհափողոցային ցանցի և կանգառատեղերի փոքր թողունակության պայմաններում, լուրջ դժվարություններ է ստեղծում երթևեկության կազմակերպման առումով, ուստի ուղևորափոխադրումների գործընթացում միկրոավտոբուսների քանակի կրճատումը և դրանց փոխարինումը փոքր և միջին տեղատարության ավտոբուսներով այլընտրանք չունի:

Երևան քաղաքի զարգացման գլխավոր հատակագծի պահանջներին համապատասխան՝ նախատեսվում է 2010-2013թթ. նվազեցնել ինչպես միկրոավտոբուսային երթուղիների, այնպես էլ դրանց սպասարկմանը ներգրավված շարժակազմի թվաքանակը, ինչից բխում է տրանսպորտային լիարժեք սպասարկման ապահովման նպատակով ավտոբուսների հետագա ձեռքբերման անհրաժեշտությունը:

Վերգետնյա էլեկտրատրանսպորտ

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է թվով 100 տրոլեյբուս (2-ը տեխ. օգնության տրոլեյբուսներ են):

Ընկերության կողմից ներկայումս սպասարկվում են թվով 6 տրոլեյբուսային երթուղիներ:

Երևանի վերգետնյա էլեկտրատրանսպորտի գործունեության վերջին մի քանի տարիների վերլուծությունը ցույց է տվել, որ տարեցտարի նվազում է տրանսպորտի այդ տեսակի շահագործման արդյունավետությունը, մրցունակությունը տրանսպորտի մյուս տեսակների հետ: Նվազում է տրոլեյբուսներով տեղափոխվող ուղևորների քանակը, որոնց տեսակարար կշիռը ներքաղաքային ընդհանուր ուղևորափոխադրումներում կազմում է ընդամենը 1,8% (2004թ. մոտ 3%):

Կարևորելով քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի դերը ներքաղաքային ուղևորափոխադրումների գործընթացում և ստեղծված իրավիճակը բարելավելու նպատակով 2006թ.-ից վերականգնվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-

ի սուբսիդավորումը ՀՀ պետբյուջեից: 2006-2008թթ. հատկացվել է տարեկան 276.0 մլն դրամ սուբսիդիա, նույն չափի սուբսիդիա է նախատեսվել նաև 2009թ. համար:

Վերջին մի քանի տարիներին որոշակի աշխատանքներ են տարվել մայրաքաղաքի տրոլեյբուսային հավաքակազմը համալրելու ուղղությամբ: 2005-2006թթ. մայրաքաղաք է ներկրվել ֆրանսիական «Ռենո» մակնիշի թվով 11 տրոլեյբուս (նախկինում շահագործված), իսկ 2007-2008թթ.՝ ռուսական արտադրության թվով 36 «ԼԻԱԶ» մակնիշի նոր տրոլեյբուս: Երևան քաղաքի զարգացման գլխավոր հատակագծի պահանջներին համապատասխան նախատեսվում է առաջիկա տարիներին (2010-2013թթ.) պետական աջակցությամբ ձեռք բերել ևս 60 հատ նոր տրոլեյբուս:

Որոշակի աշխատանքներ են տարվել նաև տրոլեյբուսների հպակային ցանցի վիճակի բարելավման ուղղությամբ: Բացի կատարված ընթացիկ նորոգումներից, 2006-2009թթ. տեղակայվել են մոտ 330 հատ նոր հենասյուներ, ամբողջովին նորերով են փոխարինվել հպակային լարերը Մաշտոցի, Տիգրան Մեծի պողոտաներում, Գր. Լուսավորչի, Չարենցի փողոցներում, Գայի պողոտայի՝ սկզբնամասից մինչև Հովհաննիսյան փողոցն ընկած հատվածում, Ռուբինյանց փողոցի՝ Զեյթունի տրամվայի օղակից մինչև Ավանի կամուրջն ընկած հատվածում, Չարենցի փողոցում (բարձրացող կողմը):

2010-2013թթ. ևս նախատեսվում է իրականացնել տրոլեյբուսների, հպակային և մալուխային ցանցերի, քարշի ենթակայանների հիմնանորոգման, հպակային ցանցի որոշակի նոր հատվածների կառուցման, քարշի ենթակայանների վերակառուցման ու վերագործարկման, տրոլեյբուսային տնտեսության արտադրատեխնիկական վերազինման (ավտոաշտարակների, ավտոկռունկի ձեռքբերում և այլն), ինչպես նաև տրոլեյբուսների շահագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

Մետրոպոլիտեն

Երևանի մետրոպոլիտենում առկա է թվով 70 վագոն: Աշխատանքային օրերին գիծ է դուրս բերվում 26 վագոն (13 շարժակազմ), իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ 24 վագոն (12 շարժակազմ):

Վերջին տարիներին (2003-2006թթ.) մետրոպոլիտենից օգտվող ուղևորների թիվը զգալիորեն նվազել էր, ինչը հետևանք էր վերգետնյա ուղևորատար տրանսպորտի աշխատանքի կարգավորման և, հիմնականում, ավտոբուսների և միկրոավտոբուսների քանակների ավելացման, ինչպես նաև մետրոպոլիտենի գործող գծի սահմանափակ հնարավորության:

Դրա հետ մեկտեղ, վերջին 3 տարիներին մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում նկատվում է կայունացման և աճի միտում: 2008թ. մետրոպոլիտենով տեղափոխվել է 18.9 մլն ուղևոր, տեսակարար կշիռը ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում կազմել է մոտ 9,1% (2007թ.՝ 17.3 մլն ուղևոր, 8,3%, 2006թ.՝ 15.4 մլն ուղևոր 7,4%): Չնայած այդ հանգամանքին՝ մետրոպոլիտենը մնում է ծանր ֆինանսական վիճակում և այսօր դեռևս հնարավորություն չկա ամբողջ ծավալով և պատշաճ մակարդակով իրականացնելու մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության ապահովման նախատեսված աշխատանքները:

Երևանի մետրոպոլիտենի կայուն աշխատանքն ապահովելու և կառավարման համակարգը բարեփոխելու նպատակով 2004թ. փետրվար ամսից ընկերության կառավարումը ՀՀ կառավարության որոշման համաձայն իրականացվում է տնօրենների խորհրդի կողմից:

Մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալների աճ կարող է տեղի ունենալ միայն գործող գծի ընդլայնման, նոր կայարանների կառուցման և շահագործման, ինչպես նաև վերգետնյա ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցի վերանայման և կարգավորման դեպքում:

Ստեղծված իրավիճակը բարելավելու նպատակով ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, ՀՀ կառավարության 17.01.2008թ. հ.23-Ն որոշմամբ Երևանի մետրոպոլիտենին լրացուցիչ հատկացվել է 1776.4 մլն դրամ սուբսիդիա և 2008թ. սուբսիդիայի ընդհանուր գումարը կազմել է 2685.8 մլն դրամ:

2009թ. ՀՀ պետ. բյուջեից հատկացվել է 1840.0 մլն դրամ սուբսիդիա, և 860.0 մլն դրամ՝ ենթակառուցվածքների նորոգման համար:

Նշված գումարների հաշվին 2008թ. և ընթացիկ տարվա 9 ամիսներին կատարվել են 1977.2 մլն դրամի հիմնանորոգման աշխատանքներ: Մասնավորապես,

կատարվել են վագոնների (41 հատ), անվագույզերի (72 հատ), շարժասանդուղքների հիմնանորոգման, ընթացային ռելսերի, փայտակոճերի փոխարինման, մետրոպոլիտենի կայարանների, մուտքային դռների, նախասրահների արդիականացման, շենքերի տանիքների վերանորոգման և այլ աշխատանքներ, ներդրվել են ուղեվարձի գանձման ավտոմատ, քարտային համակարգեր, զգալիորեն բարձրացվել է մետրոպոլիտենի աշխատակիցների միջին աշխատավարձը (65.0 հազ. դրամից մինչև 109.0 հազ. դրամ):

2010-2013թթ. նախատեսվում է սկսել նաև մետրոպոլիտենի գծի երկարացման, նոր կայարանների նախագծման և կառուցման աշխատանքները, ինչպես նաև իրականացնել մետրոպոլիտենի անխափան աշխատանքի և շահագործման ու երթևեկության անվտանգության ապահովման հետ կապված առաջնահերթ միջոցառումներ և աշխատանքներ:

Մասնավորապես, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել ծրագիր, որը նպատակ է հետապնդում բարելավելու Երևանի մետրոպոլիտենի ծառայությունների անվտանգ և ապահով իրագործումը: Ծրագիրը բաղկացած է հետևյալ ներդրումային բաղադրիչներից՝ շարժակազմի արդիականացում, ռելսային գծերի վերականգնում, էլեկտրասնուցման վերականգնում և վերանորոգում, սպասարկման ծառայությունների և ենթակառուցվածքների արդիականացում, ջրի ներհոսքի վերացում: Ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը կազմում է 15.0 մլն եվրո:

Համաշխարհային բանկի աջակցությամբ խորհրդատվական ծառայություններ

Համաշխարհային բանկի աջակցությամբ Ճապոնիայի կառավարության դրամաշնորհի միջոցով 2007-2008թթ. խորհրդատվական կազմակերպությունների ներգրավմամբ տրամադրվել է խորհրդատվական ծառայություն հիմնական երկու ուղղություններով՝ «Աջակցություն Երևանի քաղաքապետարանին ուղևորատար տրանսպորտի բնագավառում» և «Աջակցություն Երևանի քաղաքապետարանին երթևեկության կառավարման համար»: Նշված աշխատանքների ավարտից հետո քաղաքապետարանին են տրամադրվել վերջնական հաշվետվությունները:

Երթևեկության կառավարման աշխատանքների հետ կապված՝ նախատեսվում էր իրականացնել մայրաքաղաքի լուսացուցային կարգավորմամբ խաչմերուկներում լուսացույցների արդիականացման ծրագիր, որին ՀՀ կառավարության կողմից ընթացք չի տրվել:

Հասարակական տրանսպորտի կանգառներ

Երևանի ներքաղաքային հասարակական տրանսպորտի կանգառների կահավորման նպատակով 2006-2008թթ. ՀՀ պետությունից հատկացումների հաշվին, մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի կանգառներում տեղադրվել են թվով 298 կանգառասրահներ (տիպային նախագծերի հիման վրա) և կանգառանշաններ, կատարվել են համապատասխան գծանշումներ:

2010-2013թթ. ընթացքում ևս նախատեսվում է շարունակել հասարակական տրանսպորտի կանգառների կահավորման աշխատանքները՝ տեղադրելով կանգառասրահներ և հիմնականում կանգառանշաններ՝ կատարելով համապատասխան գծանշումներ, իրականացնել հին կանգառասրահների վերանորոգման աշխատանքներ:

Երթուղային ցանց

Երևան քաղաքում 2004թ. ընթացքում կատարված ուղևորահոսքերի ուսումնասիրության հիման վրա մշակված և Երևանի քաղաքապետի 19.04.2005թ. հ.825-Ս որոշմամբ հաստատված՝ Երևանի վերգետնյա ուղևորատար տրանսպորտի երթուղային ցանցում ընդգրկված են եղել թվով 46 ավտոբուսային, թվով 125 միկրոավտոբուսային և թվով 7 տրոլեյբուսային երթուղիներ:

Մայրաքաղաքում հասարակական տրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների գործընթացի և երթևեկության կազմակերպման ու անվտանգության ապահովման աշխատանքների կանոնակարգման անհրաժեշտությունից ելնելով՝ Երևանի քաղաքապետարանի պատվերով 2007-2008թ.թ. ընթացքում «Մամասու» ՍՊԸ-ի կողմից մշակվել է նոր, հեռանկարային երթուղային ցանց, որը հիմնականում նպատակ է հետապնդել զգալիորեն ավելացնելու ավտոբուսային երթուղիների և ավտոբուսների քանակը դրան զուգահեռ

կրճատելով միկրոավտոբուսների թիվը, մի շարք միկրոավտոբուսային երթուղիներ փոխարինելու ավտոբուսայինով՝ բեռնաթափելու մայրաքաղաքի կենտրոնը:

Նոր երթուղային ցանցը հաստատվել է Երևանի քաղաքապետի 30.12.2008թ. հ. 6493-Ա որոշմամբ, սակայն այն չի ներդրվել, քանի որ այդ պարագայում կիսափանվեին ուղևորափոխադրումների կազմակերպման աշխատանքները՝ մասնավոր կազմակերպությունների կողմից ավտոբուսների ներկրման գործընթացում առաջացած բարդությունների և ֆինանսական խնդիրների հետևանքով:

Ներկայումս Երևանի քաղաքապետի համապատասխան կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից լրամշակվում է երթուղային ցանցը և 2010թ. իրականացվելու է ծրագիր երթուղային ցանցի ներդրման ուղղությամբ՝ նպատակ հետապնդելով ամբողջովին վերանայելու Երևանի փոքր կենտրոնում ուղևորափոխադրումների կազմակերպման գործընթացը, որոշակիորեն նվազեցնելու միկրոավտոբուսների քանակը, մեծացնելու տրոլեյբուսների դերը ներքաղաքային ուղևորափոխադրումներում:

Երթուղային ցանցի լրամշակման աշխատանքների ընդհանուր համատեքստում, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ համատեղ քննարկվում է և 2010թ. ընթացքում իրականացվելու է Երևանի վարչական տարածք մուտք գործող միջմարզային երթուղիների կանոնակարգման ծրագիր՝ նպատակ հետապնդելով սահմանափակել դրանց մուտքը Երևանի վարչական տարածք և աշխատանքները կազմակերպել ավտոկայարաններից (Հյուսիսային, Կենտրոնական) և սահմանված երթակարգավարական կետերից: Նույն ծրագրով են դիտարկվելու նաև մայրաքաղաքի վարչական տարածք մուտք գործող «ուսանողական» ավտոբուսների աշխատանքի և դրանց կայանատեղերի կանոնակարգման խնդիրները:

Ավտոկայանատեղեր

Երևան քաղաքում տրանսպորտային միջոցների կայանատեղերի ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ դրանց միայն մի մասն է գործում Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումների հիման վրա,

ավտոկայանատեղերի զգալի մասը ձևավորվել են տարերայնորեն և գործում են առանց որևէ թույլտվություն:

Մայրաքաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման հարցը լուրջ հիմնախնդիր է և այն կանոնակարգելու նպատակով տեղի են ունեցել քննարկումներ, նախատեսվում է վերանայել օրենսդրական դաշտը և սահմանել ավտոկայանատեղերի կազմակերպման նոր կարգ: Արդեն մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Ավտոկայանատեղերի տուրքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որից հետո կմշակվեն օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր, որոնց հիման վրա կիրականացվեն գործնական միջոցառումներ և կազմակերպչական աշխատանքներ՝ ավտոկայանատեղերի գործունեության կանոնակարգման նպատակով:

Մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղեր

Մայրաքաղաքում մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանման խնդիրը կարգավորելու նպատակով, Երևանի քաղաքապետի համապատասխան որոշմամբ, հաստատվել է Երևան քաղաքում մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղերի ցանկը, հատկացվել են տարածքներ՝ տաքսիների կայանման համար:

Կայանատեղերում տեղադրվել են համապատասխան ճանապարհային նշաններ, կատարվել գծանշումներ, սակայն դեռևս հստակեցված չէ օրենսդրական դաշտը:

Հաշմանդամների տրանսպորտային սպասարկում

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի քաղաքապետն իրականացնում է հասարակական տրանսպորտը հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու ծրագիր:

Քաղաքային հասարակական տրանսպորտի ծառայություններից օգտվելու հաշմանդամների մատչելիության ապահովման նպատակով Երևանի քաղաքապետարանի «Ավտոբուս» ՓԲԸ-ին պատկանող «Ռենո-SC10» մակնիշի մեծ տեղատարության թվով 2 ավտոբուսների վրա կատարվել են կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում դրանք հարմարեցվել են հաշմանդամների

բարձրանալ-իջնելուն: Այդ ավտոբուսների առավել արդյունավետ և նպատակային շահագործումն իրականացնելու համար Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով դրանք հանձնվել են Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միությանը և «Ունիսոն» հասարակական կազմակերպությանը:

Բացի այդ, 2007-2008թթ. մայրաքաղաք ներկրված թվով 36 նոր «Լիազ» մակնիշի տրոլեյբուսներից 2-ը, որոնք ներկայումս շահագործվում են ներքաղաքային երթուղիներում, իրենց կառուցվածքով հարմարեցված են հաշմանդամների տրանսպորտային սպասարկումն իրականացնելու համար: Առաջիկա տարիներին մայրաքաղաք ներկրվելիք տրոլեյբուսների խմբաքանակներում ևս նախատեսված է նմանատիպ տրոլեյբուսների ներառումը:

Հաշմանդամների տրանսպորտային ապահովման ուղղությամբ կատարված աշխատանքները դեռևս անբավարար են, և 2010-2013թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել կոնկրետ ծրագրային միջոցառումներ՝ հաշմանդամների սպասարկման համար հարմարեցված տրանսպորտային միջոցների քանակն ավելացնելու նպատակով:

Երթակարգավարական կետեր

Երևան քաղաքում առկա են թվով 38 երթակարգավարական կետեր, որոնց միջոցով կարգավորվում է ներքաղաքային ավտոբուսային, միկրոավտոբուսային և տրոլեյբուսային երթուղիների աշխատանքը: Նշված կետերում հիմնականում տեղակայված են տաղավարներ, որոնք ենթակա են վերանորոգման, բացի այդ՝ անհրաժեշտություն կա երթուղիների վերջնակետերում նոր տաղավարների տեղակայման: Երթակարգավարական կետերի մոտ հիմնականում չկան սան. հանգույցներ, ինչը խնդիրներ է առաջացնում երթակարգավարների և վարորդների աշխատանքի կազմակերպման հարցերում: Սան. հանգույցների կառուցման, տեղակայման հարցը լուրջ և մոտակա տարիներին լուծում պահանջող հիմնախնդիր է:

2010-2013թթ. ընթացքում նախատեսվում է նոր երթակարգավարական կետերի և սանհանգույցների կառուցման և տեղակայման աշխատանքների իրականացում:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Փոքր և միջին տեղատարողության նոր, քաղաքային ավտոբուսների ձեռքբերում.
- Միկրոավտոբուսների քանակի աստիճանաբար կրճատում.
- Նոր տրոլեյբուսների ձեռք բերում.
- Տրոլեյբուսային տնտեսության բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում.
- Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում.
- Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանների նախագծում և կառուցում.
- Երևանի մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:
- Երևանի ներքաղաքային վերգետնյա ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի հաստատում և ներդնում.
- ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման մրցույթների կազմակերպում և անցկացում.
- ավտոկայանատեղերի կանոնակարգմանն առնչվող օրենսդրական և կազմակերպչական միջոցառումների իրականացում.

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիճակի գնահատում

Երևան քաղաքի 2010-2013թթ. բնապահպանական հիմնախնդիրների հիմքում «ՀՀ շրջակա միջավայրի պահպանության գործողությունների երկրորդ ազգային ծրագիրն» է:

2009 թվականի գույքագրման տվյալների համաձայն՝ Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը կազմում է 832.3 հա, որից փողոցների սիզամարգեր՝ 145.8 հա, զբոսայգիներ՝ 146.2 հա, պուրակներ՝ 34.5 հա, անտառ-պուրակներ՝ 257.7 հա, Հրազդանի կիրճ՝ 248.1 հա: Ընդհանուր ծառերի թիվը 338 հազարից ավելի է, ծաղկային մակերեսը՝ 4.2 հա, ծաղկասածիլների քանակությունը՝ մոտ 1.3 մլն հատ:

2009 թվականին կատարվել են շուրջ 4500 ծառերի երիտասարդացման աշխատանքներ, ձեռք է բերվել 25 տոննա հանգած կիր և մայրաքաղաքում կրապատվել է 27000 հատ ծառ, սիզամարգերի բարելավման համար ներկրվել է 5150 խմ բուսահող և 400 խմ կարմիր շլակ, ձեռք է բերվել 20 տոննա խոտի սերմ, որից վարչական շրջաններին բաշխվել է 4250 կգ, իսկ ուսումնական հաստատություններին՝ 1125 կգ:

Իրականացվել են 15,0 հա սիզամարգերի բարելավման և ցանքսի աշխատանքներ: Հոլանդիայից ներմուծվել է 100 000 հատ ծաղկասածիլ: Ընդհանուր առմամբ Երևանում ծաղկապատվել է 4,2 հա տարածք, տնկվել է 7 հազ. ծառ և 10 հազ.թուփ, թվով 9 կամուրջների հենասյուների վրա տեղադրվել են ծաղկամաններ (տարբեր տեսակի ծաղկասածիլներերով), կատարվում են ծաղկամանների տեղադրման աշխատանքներ շենքերի պատշգամբների վրա:

2010 թվականին նախատեսվում է Երևան քաղաքում ևս 125 հա կանաչ տարածքների հիմնում՝ այդ թվում՝ Էրեբունի վարչական շրջանի տարածք՝ 100 հա, Աջափնյակ՝ 15 հա և Շենգավիթ՝ 10 հա:

2010 թվականին կապահովվի 832,3 հա կանաչ տարածքների խնամքի և սպասարկման աշխատանքների կազմակերպումը, կկատարվի 20 000 ծառատունկ,

5,0 հա ծաղկային տարածքների ձևավորում և 50 հազ. ծառերի կրապատում, կիրականացվի և 30 կմ երկարությամբ նոր ոռոգման ցանցի կառուցում:

2010 թվականին 3000 քմ-ի վրա Երևանի քաղաքապետարանի տնկարանում կկառուցվեն 3 ջերմոցներ, որտեղ Երևանի ծաղկապատման համար տարեկան կաճեցվեն 500-600 հազ. հատ ծաղկասածիլներ:

Հաշվի առնելով, որ Երևան քաղաքը հանդիսանում է էկոլոգիապես խիստ ծանրաբեռնված բնակավայր, որտեղ անբարենպաստ բնակլիմայական պայմանները, շինարարության ծավալները, տրանսպորտային միջոցների խիստ ավելացումն իրենց ազդեցությունն են թողնում շրջակա միջավայրի վրա, ներկայումս գերակա խնդիր է դարձել Երևան քաղաքի կենտրոնական հատվածի զանգվածային կանաչապատումը:

Հիմնախնդիրները

- Շրջակա բնական միջավայրի տարրերի (օդ, ջուր, հող) աղտոտվածության նվազեցմանն ուղղված մեխանիզմների և միջոցառումների մշակում և իրականացում.
- Բնական պաշարների արդյունավետ օգտագործում.
- Նոր կանաչ տարածքների հիմնման և պահպանման միջոցառումների իրականացում.
- Ըստ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մեկ բնակչին հասնող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ցածր ցուցանիշ (16-17 քմ/մարդ, փոխարենը՝ 7.5 քմ/մարդ).
- Կենցաղային և շինարարական թափոնների կառավարման անբավարար մակարդակ.
- Քաղաքի տարածքում բնական ջրավազանների ջրերի աղտոտվածություն՝ պայմանավորված հիմնականում արտադրական և կենցաղապասարկման օբյեկտներից չմաքրված կամ ոչ բավարար մաքրված կեղտաջրերի արտահոսքերով.
- Որպես հանգստյան գոտի էկոլոգիապես անբավարար վիճակում է Երևանյան լճի և Հրազդանի կիրճի ափամերձ և հարակից տարածքը:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Հրազդանի կիրճում և նրան հարակից տարածքներում թափոններից մաքրման աշխատանքների կազմակերպում և համակարգում.
- Երևանյան լճի ավիամերձ տարածքում սանիտարական մաքրման՝ աղբակույտների վերացման և աղբահանության աշխատանքների կազմակերպում.
- ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ միջոցառումների իրականացում (Հոդ. 64. 1-4).
- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով Երևան քաղաքին հատկացվող մասհանումներով վնասակար ազդեցության ենթարկվող վարչական շրջաններում նախատեսվող բնապահպանական ծրագրի գծով ՀՀ ֆինանսների նախարարություն հայտի ներկայացում (կանաչ տարածքների վերականգնում և ընդլայնում, ռոռզման ցանցի բարելավում).
- 2010-2013թթ. սոցիալական զարգացման տնտեսական քառամյա ծրագրերում նախատեսվում է 396,3 հա նոր կանաչ տարածքների հիմնում՝ համաձայն 2007թ. հաստատված մայրաքաղաքի գլխավոր հատակագծի: Այդ թվում նախատեսվում է հիմնել 125 հա կանաչ տարածքներ 2010 թվականին (100 հա Էրեբունի, 15 հա Աջափնյակ, 10 հա Շենգավիթ վ/շրջաններում) և 2011թ. 70.0 հա (Նուբարաշեն վ/շրջանում), որոնց համար առկա են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ հաշվարկված և հաստատված «ՀԳՇՆ» ինստիտուտի կողմից: Նախատեսվում է նոր կանաչ տարածքներ հիմնել 2012 թվականին Նորք-Մարաշ վ/շրջանում 23.1 հա և Մալաթիա-Սեբաստիա վ/շրջանում 77.0 հա, ինչպես նաև 2013 թվականին Նոր Նորք վ/շրջանում 24.6 հա, Դավթաշեն վ/շրջանում 46.6 հա և Մալաթիա-Սեբաստիա վ/շրջանում 30.0 հա:

- Նախատեսվում է կատարել 2010թ. 20000 հատ ծառի

Երևան քաղաքը հանդիսանում է էկոլոգիապես խիստ ծանրաբեռնված բնակավայր, որտեղ անբարենպաստ բնակլիմայական պայմանները, շինարարության

ծավալները, տրանսպորտային միջոցների խիստ ավելացումն իրենց ազդեցությունն են թողնում շրջակա միջավայրի վրա: Այդ պատճառով սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման ընթացքում կարևոր խնդիրներից է հնարավորինս նվազեցնել կամ բացառել շրջակա միջավայրի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով բնապահպանական նորմատիվային պահանջներն ու սահմանափակումները:

Այդ առումով ներկայումս գերակա խնդիր է դարձել Երևան քաղաքի կենտրոնական հատվածի զանգվածային կանաչապատումը:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի, «Հաղթանակ» զբոսայգու և Եռաբլուր պանթեոնի տարածքների կանաչապատման ծրագիրը հնարավորություն կընձեռնի ընդհանուր առմամբ լուծելու ոչ միայն մայրաքաղաք ներթափանցող փոշու, ծանր մետաղներով աղտոտվածության նվազեցման, քամիների մեղմման խնդիրը, այլև ունենալ գործնականում առողջ, գեղագիտական առումով գեղեցիկ և ժամանակակից նորմատիվներին համապատասխանող կանաչ զանգվածներ:

Կ Ր Թ Ո Ւ Թ Յ Ա Ն Ո Ւ Ո Ր Տ

Հանրակրթություն

Վիճակի գնահատում

ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարության հիմնական գերակայություններից է հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ինքնությանն ու բարոյական արժեքներին սպառնացող երևույթների կանխարգելումը: Ելնելով այս պահանջից՝ կարևորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու կրթության և դաստիարակության ապահովումը:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 201 կրթական հաստատություններ՝ 193 հանրակրթական և 3 հատուկ դպրոցներ, 5 արհեստագործական ուսումնարաններ:

Կրթական հաստատությունները ներկայացվում են ըստ վարչական շրջանների.

Հ/Հ	Վարչական շրջան	Դպրոցների թիվը	Աշակերտների թիվը	Մանկավարժ. թիվը
1	Աջափնյակ	20	10066	799
2	Արաբկիր	22	12351	1010
3	Ավան	8	4056	303
4	Դավթաշեն	6	3449	264
5	Էրեբունի	22	12473	1001
6	Կենտրոն	33	16410	1450
7	Մալաթիա-Սեբաստիա	17	13141	881
8	Նոր Նորք	19	12148	996
9	Նորք-Մարաշ	4	604	75
10	Նուբարաշեն	2	1273	89
11	Շենգավիթ	29	14911	1083
12	Քանաքեռ-Զեյթուն	14	6767	613
13	Ուսումնարան	5	853	154
				42-ը՝ արտադրական ուսուցման վարպետ
	Ընդամենը	201	108502	8718

Երևան քաղաքում գործում են թվով 46 ոչ պետական հանրակրթական հաստատությունները:

Հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

Երկրի տնտեսական զարգացմանը զուգընթաց շարունակվում է հանրակրթության ոլորտի բարեփոխումը: Գործողության մեջ է մտել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը:

12-ամյա կրթությամբ առաջին դասարանցիների համար ստեղծվել են համապատասխան պայմաններ: Կազմակերպվել և անցկացվել են նոր ծրագրերով ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Գործընթացը շարունակական է: Սովորողները ապահովված են անհրաժեշտ դասագրքերով, ուսուցիչները՝ առարկայական ծրագրերով և մեթոդական ուղեցույցներով:

Պետության կողմից համակարգին հատկացվող ֆինանսական ներդրումների ավելացման շնորհիվ բարձրանում է կրթության որակը:

2009թ. ՀՀ պետբյուջեից քաղաքապետարանի դպրոցներին տարրական, հիմնական և միջնակարգ (ընդհանուր) կրթություն իրականացնելու համար հատկացվել է 16206.91 մլն դրամ:

Դպրոցական թվով 59 շենքերի վերանորոգման համար պետբյուջեից լրացուցիչ հատկացվել է 4572.06 մլն դրամ, սակայն ՀՀ կառավարության մարտի 20-ի հ. 302-Ն որոշման համաձայն՝ թվով 16 դպրոցներում գումարները կասեցվել են:

Երևանի քաղաքապետարանի համաքաղաքային կապիտալ ծախսերով կառուցվել է 16 կաթսայատուն (9 դպրոց, 8 մանկապարտեզ, 1 երաժշտական դպրոց՝ 700.40 մլն դրամ արժողությամբ: Թվով 201 կրթական հաստատություններից 165-ը ջեռուցվում են, իսկ 36-ը՝ ոչ, 162 նախադպրոցական ուսումնական հաստատություններից ջեռուցվում են 56-ը, իսկ 106-ը՝ ոչ:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի հաշվին 3 դպրոցների համար հատկացվել է 135.10 մլն դրամ:

Պետբյուջեի միջոցներով և տարբեր ծրագրերով իրականացվում է դպրոցական գույքի նորացում:

Կատարված են ֆինանսական ներդրումներ, սակայն տասնյակ դպրոցական շենքեր կարիք ունեն հիմնանորոգման:

Գերակայությունները

- ✓ Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:
- ✓ Ջեռուցման համակարգի բարելավում, տեղային կաթսայատների կառուցում:
- ✓ Երևանի քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների մարզադահլիճների և մարզահրապարակների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:
- ✓ Մանկավարժական կադրերի մասնագիտական հետևողական վերապատրաստում և ատեստացիայի իրականացում:
- ✓ Մանկավարժների գործունեության խրախուսում, մրցույթների անցկացում:
- ✓ Համակարգի նորմատիվային դաշտի կատարելագործում:
- ✓ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող համալիր աշխատանքների կազմակերպում, դպրոցների մանկավարժական համակազմի համալրում համապատասխան մասնագետներով:
- ✓ Ներառական կրթություն իրականացնող դպրոցների և միջազգային կազմակերպությունների համագործակցության ընդլայնում:
- ✓ Հատուկ դպրոցների սննդի ռացիոնի հարստացում: Երեխաների առողջության պահպանմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորում, երեխաների խնամքի ծառայությունների որակի բարելավում:
- ✓ Քաղաքապետարանի հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով ապահովում, և ընդգրկում «Կրթական համալիր էջ» ինտերնետային պորտալ (համացանց):
- ✓ Դպրոցները ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագիտական կարիքների վրա հենված վերապատրաստմամբ և խորհրդատվությամբ ապահովում:

- ✓ Դպրոցների գրադարանային ֆոնդի համալրում գեղարվեստական, մեթոդական և մասնագիտական գրականությամբ: Էլեկտրոնային գրադարանների ստեղծում:
- ✓ ՀՀ քաղաքացու համակողմանի զարգացմանը նպաստող համաքաղաքային միջոցառումների անցկացում, քաղաքացիական կրթության ապահովում:
- ✓ Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ անհրաժեշտ նյութատեխնիկական հենքով, դիդակտիկ նյութերով, լաբորատոր սարքավորումներով, մարզագույքով ապահովում, ինչպես նաև գործող սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան դպրոցական գույքի ձեռքբերում:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ

- Անմխիթար վիճակում գտնվող հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի հիմնանորոգում:
- Անհատական կաթսայատների կառուցում:
- Ներառական կրթություն իրականացնող դպրոցների շենքային պայմանների համապատասխանեցում սովորողների ֆիզիկական պահանջներին, ինչպես նաև վերոնշյալ դպրոցների մանկավարժական համակազմի՝ համապատասխան մասնագետներով համալրում :
- Դպրոցական գույքի նորացում, համապատասխան նյութատեխնիկական բազայով ապահովում:

Վերանորոգման կարիք ունեցող ուսումնական հաստատությունների ցանկ

Հ/Հ	Վարչական շրջան	Հիմնանորոգում (դպրոցի համարը)	Տանիք	Սանհանգույց	Ղուռ, պատուհան	Մարզադահլիճ, հանդիս. դահլիճ	Միջանցք, դասասենյակներ
1	Աջափնյակ	հհ. 94, 102, 109, 111, 118, 126, 138, 146, 156	-	հ. 22, 122, 188	հհ. 122, 153, 188	հհ. 22	հհ. 122, 153, 188
2	Արաբկիր	հհ. 21, 36, 37, 128, 148, 149, 151, 172,	հհ. 54, 76, 77, 83, 128	հհ.78, 54, 151	հհ. 51, 54	հհ.82	հհ. 54, 145, 151
3	Ավան	հ.124	-	-	-	-	-
4	Դավթաշեն	հհ. 199, 200	-	-	-	հհ. 192,	հհ. 192,
5	Էրեբունի	հհ.16,34, 47, 49, 64, 68, 70, 107, 119, 120, 123, 178	հ.167	հ. 35	հհ. 60, 167, 35,45	հհ. 35, 43, 60, 167	հհ. 35, 45, 60
6	Կենտրոն	հհ.2, 3, Հ.Վոջոյան, 23, 25, 40, 41, 42, 72, 81, 182	հ.4	հ.10	հ.5	-	հհ.1, 5, 4, 7, 20, 29, 33, 53, 57
7	Մալաթիա-Մեքաստիա	հհ.91, 105, 152, 162, 176, 179, 184, 190, 191	հ.11, 113, 116	հհ.113, 116, 121	հ.113, 116	հ. 116	հ.116
8	Նոր Նորք	հհ.133, 134, 159, 141, 187, 142, 186	հհ.88, 135, 139, 163, 164, 166	հհ.88, 163, 164	հհ.62, 88, 135, 139, 143. 163, 186, 164, 166	հ.139. 163,	հհ.139,163, 164, 166
9	Նորք-Մարաշ	հհ.61,157	-	-	-	-	-
10	Նուբարաշեն	հհ.95,175	-	-	-	-	-
11	Շենգավիթ	հհ. 46, 50, 66, 74, 140, 144, 169, 173	հհ.18, 27, 31, 38, 65, 75, 154, 161	հհ.12, 27, 31, 38, 65, 86	հհ.86,137, 12, 18, 65, 27, 31, 38	հհ.38, 154,	հհ.12, 18, 66, 65, 97, 137, 161
12	Քանաքեռ-Զեյթուն	հհ.9, 30, 44, 59, 85, 103, 127,	հհ.48	-	հհ.48, 147	հհ.48, 147	հհ.48, 147

Իրականացման ուղիները

Թվով 201 կրթական հաստատություններից 36-ը չունի անհատական կաթսայատուն, որից թվով 27-ի նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրված են, որոնք 2010-2013թթ. նախատեսվում է իրականացնել ՀՀ պետական բյուջեով և ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն, այդ թվում՝ ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի անցած դպրոցների, կույրերի երեկոյան դպրոցի, հատուկ ընդհանուր կրթության դպրոցների, արհեստագործական ուսումնարանների և ներառական ուսուցման գծով պետական պատվերը՝ օրենսդրությանը համապատասխանեցման ապահովումը (պետբյուջե):
- Մանկավարժական կադրերի կանոնավոր մասնագիտական վերապատրաստում:

- Մանկավարժների գործունեությանը խրախուսելու նպատակով «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի անցկացում:
- Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերի անցկացում (քաղաքային, հանրապետական փուլ):
- Սովորողների XIX մարզական խաղերի անցկացում:
- Առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային և հանրապետական փուլերի կազմակերպում և անցկացում:
- Ուսումնական հաստատությունների համալրումը տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներով (S2S), ինչպես նաև ապահովումը համացանցով:
- Ավարտել Երևան քաղաքում ավագ դպրոցների ստեղծման գործընթացը:

Նախնական մասնագիտական արհեստագործական ուսումնարաններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության ներքո գործում են թվով 5 նախնական մասնագիտական արհեստագործական ուսումնարաններ.

1. Հ.4-սպասարկման ոլորտ (խոհարար, վարսահարդար, դերձակ, ավտովերանորոգող-փականագործ մասնագիտությամբ).
2. Հ.5-զարդակիրառական (գորգագործություն, ասեղնագործություն, ոսկերչություն, փայտի գեղարվեստական մշակում, մետաղի գեղարվեստական մշակում մասնագիտությամբ).
3. Հ.7-պոլիգրաֆ (գործավար, հաշվետար, գործավար-ռեֆերենտ մասնագիտությամբ).
4. Հ.9-սպասարկման ոլորտ (խոհարար, վարսահարդար, դերձակ, ավտովերանորոգող-փականագործ մասնագիտությամբ).
5. Հ.10-երկաթուղային (էլեկտրաքարշի մեքենավար մասնագիտությամբ) և զարդակիրառական (գորգագործություն, ասեղնագործություն,

ոսկերչություն, փայտի գեղարվեստական մշակում, մետաղի գեղարվեստական մշակում մասնագիտությամբ)։

Նախորդ տարիների համեմատությամբ՝ 2006 թվականից ի վեր բարձրացել է նախնական մասնագիտական արհեստագործական ուսումնարանների դերը հասարակության մեջ: Դա են վկայում ստորև ներկայացված տվյալները:

Խ/Խ	Թվական	Պետպատվերով նախատեսված տեղերի քանակը	Ընդունելություն	Ընդհանուր սովորողների թիվը	Շրջանավարտների թիվը
1	2006	245	221	625	183
2	2007	340	292	724	207
3	2008	320	290	770	208
4.	2009	320	320	882	208

Գերակայությունները

- ✓ Երևանի քաղաքապետարանի ենթակայության նախնական արհեստագործական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:
- ✓ Ջեռուցման համակարգի բարելավում, տեղային կաթսայատների կառուցում:
- ✓ Արդի շուկայի պահանջարկից էլնելով՝ նոր մասնագիտությունների ստեղծում:
- ✓ Ֆինանսական միջոցների ներդրում սովորողների կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների բարելավման և նյութատեխնիկական բազայի հարստացման, ժամանակակից տեխնիկական միջոցների, մեթոդական գրականության ձեռքբերման, ինչպես նաև գույքի նորացման նպատակով:
- ✓ Մանկավարժական կադրերի կանոնավոր մասնագիտական վերապատրաստում և ատեստացիայի իրականացում:
- ✓ Համակարգի նորմատիվային դաշտի կատարելագործում:
- ✓ Նախնական արհեստագործական ուսումնարանների սովորողների ընդունելության տեղերի ավելացում:

Նախադպրոցական կրթություն

Երեխայի բնականոն և համակողմանի զարգացման ապահովման գործում կարևոր է նախադպրոցական կրթության դերը, որի նկատմամբ պետական հոգածությունը Հայաստանի Հանրապետությունում առաջնային է:

Վիճակի գնահատում

Ներկայացվում են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 162 համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունները՝ ըստ վարչական շրջանների.

Հ/Հ	Վարչական շրջան	ՆՈՒՀ-ի թիվը	Երեխաների թիվը	Աշխատողների թիվը
1	Աջափնյակ	16	2694	633
2	Արաբկիր	13	2367	444
3	Ավան	7	1353	190
4	Դավթաշեն	5	897	209
5	Էրեբունի	13	1437	371
6	Կենտրոն	21	1901	396
7	Մալաթիա-Սեբաստիա	22	3276	654
8	Նոր Նորք	23	3488	627
9	Նորք-Մարաշ	4	242	94
10	Նուբարաշեն	1	164	25
11	Շենգավիթ	22	3307	728
12	Քանաքեռ-Զեյթուն	15	1680	308
	Ընդամենը	162	22806	4679

Առանձին վարչական շրջաններում արձանագրված ֆինանսավորման աճի և զարգացման միտումները և մանկապարտեզներին կատարվող հատկացումների ավելացումը, սակայն, բավարար չեն անհրաժեշտ պայմանների ստեղծման համար (Նոր Նորք, Շենգավիթ, Էրեբունի վարչական շրջաններում մանկավարժների աշխատավարձը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին):

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների վերապատրաստումը արմատական բարելավման կարիք ունի: Հարստացման կարիք ունեն երեխաների ուսուցման մեթոդները:

Շենքային պայմանները չեն համապատասխանում ժամանակակից պահանջներին, ջեռուցումն իրականացվում է հիմնականում էլեկտրական սարքերով (փայտե վառարաններից են օգտվում Շենգավիթի, Նոր Նորքի, Մալաթիա-Սեբաստիայի, Աջափնյակի մի շարք մանկապարտեզներ), կաթսայատուն ունի ընդամենը 54 մանկապարտեզ:

Երեխաների սնունդը կազմակերպվում է հիմնականում ծնողների մուծումների հաշվին: Վարչական տարբեր շրջաններում դրանք տարբեր են: Սննդաբաժնում գերակայում են մակարոնեղենը և կարտոֆիլը, որոնք համեմատաբար էժան են:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ունեն փափուկ և կոշտ գույքի թարմացման, համապատասխան դիդակտիկ նյութերի, ժամանակակից տեխնոլոգիաների, խաղային միջոցների կարիք:

Գործում են 18 ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

ՀՀ կառավարությունը նախադպրոցական կրթության ծրագրերում սահմանում է նախադպրոցական կրթության նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև պահանջները՝ երեխաների կրթությունն ու խնամքն իրականացնող կազմակերպություններին և անձանց:

Նախադպրոցական կրթության գլխավոր նպատակն է

- երեխայի ֆիզիկական, բարոյական, մտավոր զարգացման հիմքերի ստեղծում,
- մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովում,
- վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացում,
- դպրոցական ուսուցմանը նախապատրաստում:

Պետությունը կարևորում է երեխաների ընդգրկվածության աճը նախադպրոցական ուսումնական հաստատություն և օժանդակում է հաստատությունների հզորացմանը: Ավելացվում են ներդրումները, ամրագրվում են

նպատակային գումարներ՝ ուղղված երեխաների խնամքի և կրթության կազմակերպմանը, նախադպրոցական կրթության մատչելիությանը:

Գերակայությունները

- ✓ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:
- ✓ Ջեռուցման համակարգի բարելավում, տեղային կաթսայատների կառուցում:
- ✓ Սոցիալապես անապահով երեխաների՝ նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման նպատակով ֆինանսական միջոցների ներդրում:
- ✓ Մանկաբաժնի հարստացում: Երեխաների առողջության պահպանման ծրագրերի ֆինանսավորում, երեխաների խնամքին ուղղված ծառայությունների որակի բարելավում:
- ✓ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատավարձի՝ օրենսդրությանը համապատասխանեցման ապահովում:
- ✓ Մանկավարժական կադրերի մասնագիտական հետևողական վերապատրաստում և ատեստավորում:
- ✓ Մանկավարժների գործունեության խրախուսում, մրցույթների անցկացում:
- ✓ Համակարգի նորմատիվային դաշտի կատարելագործում:
- ✓ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման համակարգի բարելավում:
- ✓ «Յունիսեֆ», «Քայլ առ քայլ», «Փրկեք երեխաներին», «Առդա», «Վորլդ Վիժն» և այլ միջազգային ծրագրերի ու հիմնադրամների հետ համագործակցության ընդլայնում:
- ✓ Նախադպրոցական ավագ տարիքային խմբի երեխաներին՝ պարտադիր ընդգրկում նախադպրոցական կրթության համակարգ:
- ✓ Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում և ընդգրկում ՆՈՒՀ:

✓ Նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար «Կրթական համալիր էջ» ինտերնետային պորտալի (համացանց) ստեղծում:

Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ

- Անմխիթար վիճակում գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգում:
- Անհատական կաթսայատների կառուցում:
- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատավարձի՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցում:
- Համայնքային բյուջեում ծախսային ուղղությունների նախատեսում երեխաների կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների բարելավման և հարստացման, մեթոդական գրականության ձեռքբերման, ինչպես նաև փափուկ և կոշտ գույքի նորացման նպատակով:
- Համայնքի նախադպրոցական կրթության ոլորտում միասնականության սկզբունքի քաղաքականության ապահովում:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի վերանորոգում (2010-2013թթ.)

Հ/Հ	Կատարվող աշխատանքներ	2010 /ԼՈՒՆ-ի համարը/	2011 /ԼՈՒՆ-ի համարը/	2012 /ԼՈՒՆ-ի համարը/	2013 /ԼՈՒՆ-ի համարը/
Աջափնյակ					
1	Հիմնանորոգում	39/166/, 40/188/, 43/225/, 45/243/, 48/310/, 50/Կրթահամալիր/	35/107/, 36/108/, 41/197/, 42/198/, 46/265/	38/156/, 47/278/, 49/311/	37/109/, 44/233/
	Տանիք	37/109/, 40/188*/, 43/225*/, 45/243*/	-	-	-
	Սանհանգույց	37/109/, 40/188*/, 43/225*/, 45/243*/	-	-	-
Արարկիր					
2	Հիմնանորոգում	24 /3/, 26 /5/	23/2/, 30/9/, 32 /11/	25 /4/, 33 /12/,	22 /1/
	Տանիք	22/1/, 23/2/, 24/3/, 25/4/, 26/5/	-	-	-
	Սանհանգույց	22/1/, 23/2/, 29/8/, 30/9/, 31/10/, 32/11/	-	-	-
Ավան					
3	Հիմնանորոգում	-	-	-	-
	Տանիք	53/4/, 55/6/	-	-	-
	Սանհանգույց	56/9/, 53/4/	-	-	-
Դավթաշեն					
4	Հիմնանորոգում	58/146*, 61/ 312*, 62/ 318/	59/172/, 60/219/	-	-
	Տանիք	59/172/, 61/ 312/	-	-	-
	Սանհանգույց	58/146/, 59/172/, 61/ 312/	-	-	-
Էրեբունի					
5.	Հիմնանորոգում	65/32/	75/Մուշական/, 74/Զրաշեն/, 63/4/,	90/67/, 91/68/, 206/71/	100/69/, 291/72/, 86/66/

**Երևանի զարգացման 2010-2013թթ. ծրագիր
Կրթության ոլորտ}**

		64/28/, 70/203/, 73/292/,		
Տանիք	63/4/, 65/32/, 66/86/, 70/203/, 73/292/, 74/Զրաշեն/, 75/Մուշակյան/	-	-	-
Սանհանգույց	74/Զրաշեն/, 75/Մուշակյան/	-	-	-

Կենտրոն					
6.	Հիմնանորոգում	4/20/	1/1/, 2 /6/, 11/62/, 15/131/, 8/47/, 17/193/, 18/200/	3/19/, 5/33/, 6/35/, 7/40/, 9/49/, 19/204/, 21/283/	10/59/, 12/66/, 13/70/, 14/96/, 16/163/, 20/256/
	Տանիք	1/1/, 2/6/, 4/20/, 11/62/, 15/131/, 17/193/,18/200/	-	-	-
	Սանհանգույց	1*/1/,4*/20/, 8/47/,18*/200/	-	-	-

Մայրիկա-Սերաստիկ					
7	Հիմնանորոգում	76/11*, 82/117/, 83/167/, 87/220/, 92/288/	77գ/օ /17գ/օ/, 78/74/, 80/115/, 81/116/, 84/169/, 90/276/, 96/Հեքիաթ/	85/212/, 87/220/, 88/241/, 93/296/, 94/303/, 95/305/	79/105/, 86/215/, 91գ/օ /279գ/օ/, 97/Նարինե/
	Տանիք	76/11/, 78/74/, 79/105/, 90/276/, 91գ/օ/279գ/օ/, 96/ Հեքիաթ/	-	-	-
	Սանհանգույց	76/11/, 79/105/, 83/167/, 84/169/, 86/215/, 88/241/, 91գ/օ/279գ/օ/, 92/288/, 94/303/, 95/305/, 97/Նարինե/	-	-	-

Նոր Նորք					
8	Հիմնանորոգում	108/13/, 115/22*/	99/3/, 100/4/, 101/6/, 109/14/, 111/16/, 112/17/, 113/19/, 116/23/, 120/28/, 118/25/	98/2/, 102/7/, 103/8/, 104/9/, 105/10/, 106/11/, 107/12/, 110/15/, 119/27/, 114/20/, 117/14/	-
	Տանիք	99/3/, 100/4/, 101/6/, 104/9/, 105/10/, 106/11/, 107/12/, 109/14/, 111/16/, 112/17/, 113/19/, 114/20/, 115/22*, 118/25/, 119/27/, 120/28/	-	-	-
	Սանհանգույց	99/3/, 100/4/, 101/6/, 103/8/, 105/10/, 107/12/, 109/14/, 110/15/, 113/19/, 114/20/, 115/22*, 16/23/, 119/27/, 120/28/	-	-	-

Նորք-Մարաշ					
9	Հիմնանորոգում	122 /57/	121 /53/, 123 /142/	124/168/	-
	Տանիք	121/53/, 122/57*/	-	-	-
	Սանհանգույց	121/53/	-	-	-

Նուբարաշեն					
10	Հիմնանորոգում	125/Նուբ.մանկ./	-	-	-
	Տանիք	125/Նուբ.մանկ./	-	-	-
	Սանհանգույց	125/Նուբ.մանկ./	-	-	-

Շենգավիթ					
11	Հիմնանորոգում	128 /75/, 130 /111/,135 /174/,137 /177/, 138/179/, 144 /255/	126 /7/,129 /97/, 139 /195/, 141 /202/, 143 /244/,145 /264/	127 /9/,131 /113/, 132/143/, 146 /298/, 133/150/,134/1 70/,136/175/, 140/196/, 142 /230/ ,147 /301	
	Տանիք	126/7/, 128/75*, 130/111*, 131/113/	-	-	-

		137/177*, 138/179*, 139/195/, 143/244/			
	Սանհանգույց	126/7/,129/97/, 131/113/,143/244/, 134/170/, 137/177*, 138/179*, 141q/o/202 q/o/, 142/230/, 143/244/,146/298/, 147/301/	-	-	-
Քանաքեռ-Զեյթուն					
12	Հիմնանորոգում	148/1/,149/2/, 155/8/, 159/12/	150 /3/, 151/4/, 157/10/,158/11/, 161/14/	152/5/, 154/7/, 156/9/, 160/13/, 162/15/	-
	Տանիք	148/1*,150/3/, 153/6/,157/10/, 161/14/,162/15/	-	-	-
	Սանհանգույց	148/1*,151/4/, 153/6/, 155/8*, 157/10/,158/11/, 159/12*/	-	-	-

*Հիմնանորոգում չլինելու դեպքում

Իրականացման ուղիները

ՆՈՒՀ-երի հիմնանորոգումը բյուջետային նպատակային միջոցներով, իսկ տանիքները և սանհանգույցները՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններից անհատույց տրված տարածքների օգտագործումը օրենսդրական դաշտ տեղափոխելով և հավաքված գումարը վերոնշյալ նպատակին ծառայեցնելով:

Թվով 47 նախադպրոցական ուսումնական հաստատություններում վարձակալությամբ տեղակայված է 106 կազմակերպություն, որոնցից 56-ը տարածքն օգտագործում է անհատույց, 31-ի գումարը տնօրինում են վարչական շրջանները, 14-ինը՝ համապատասխան նախադպրոցական ուսումնական հաստատությունները, 5-ինը անհայտ է:

2010-2013թթ. կառուցվելիք անհատական կաթսայատներ

Հ/Հ	2010թ	2011թ	2012թ.	2013թ
Արաբկիր				
1	հ. 29/8/	հհ.23/2/, 25/4/	հհ.26/5/, 32/11/	-
Աջափնյակ				
2	-	հհ. 39/166/, 40/188/, 41/197/, 12/198/, 47/278/, 45/243/, 49/311/	հհ.35/107/, 36/108/, 37/109/, 38/156/	
Ավան				
3	հհ.53/4/, 55/6/, 56/9/	-	-	-
Դավթաշեն				
4	հ.59/172/	հհ.61/312/, 62/318/	հհ.58/146/, 60/219/	
Էրեբունի				
5	հհ. 63/4/, 65/32/, 66/86/ /հ.47 դպրոցի հետ/,	հհ.64/28/, 75/Մուշական/, 70/203/,	հհ.69/100/,71/206/, 73/292/	հհ.67/90/, 68/9/

	74 /Ջրաշեն /h.107 դպրոցի հետ/			
Վենտրոն				
6	-	հհ.1/1/,2/6/, 3/19/, 4/20/, 5/33/, 11/62/, 17/193/, 21/283/	հհ.6/35/, 7/40/, 9/49/, 10/59, 18/200/	հհ.12/66/, 14/96/, 16/163/, 20/256/
Մալաթիա-Մեբաստիա				
7	-	հհ. 76/11/, 77գո/17գո/, 83/167/, 84/169/, 88/241/, 92/288/	հհ.80/115/, 82/117/, 93/296/, 87/220/, 95/305/, 97/Նարինե/	-
Նոր Նորք				
8	հհ. 108/13/, 109/14/, 118/25/, 119/27/, 120/28/, 113/19/, /h.159 դպրոցի հետ/	99/3/, 100/4/, 103/8/, 106/11/	111/16/, 112/17/	-
Նորք-Մարաշ				
9	h.124/168/	-	-	-
Շենգավիթ				
10	հհ. 127/9/, 133/150/, /h.144 դպրոցի հետ/ 141/202/, 143/264/, 147/301/	հհ.128/75/, 129/97/, 130/111/131/113/, 139/195/, 146/298/	հհ.135/174/, 136/175/, 137/177/, 138/179/, 144/255/	հհ.134/170/, 140/196/, 142/230/, 143/244/
Քանաքեռ-Զեյթուն				
11	հհ.151/4/, 158/11/	հհ.148/1/, 152/5/, 161/14/, 162/15/	-	-

Վերևում թվարկված մանկապարտեզների կաթսայատների կառուցումը նախատեսված է եղել իրականացնել 2009 թվականին:

Նախադպրոցական ուսումնական բոլոր հաստատություններում սեղմ ժամանակահատվածում անհատական կաթսայատներ կառուցելու գործում առաջարկվում է ներգրավել տեղական և արտերկրի գործարարներին:

Ելնելով միասնականության սկզբունքի ապահովման քաղաքականությունից՝ երեխաներին սահմանված նորմատիվներին համապատասխան սնունդով ապահովելու նպատակով մատակարարների ընտրությունը կատարել մրցույթով և սահմանել վերահսկողություն:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ներքին հարդարման նախահաշիվ ունեցող աշխատանքներ

h/h	Կազմակերպության անվանումը	Գումարի չափը
Շենգավիթ		
1	h.7 մուր-մանկապարտեզ	1888,90
2	h.75 մուր-մանկապարտեզ	1727,30
3	h.111 մուր-մանկապարտեզ	1165,60
4	h.170 մուր-մանկապարտեզ	1907,60
5	h.195 մուր-մանկապարտեզ	6454,10
6	h.255 մուր-մանկապարտեզ	3614,00
	Ընդամենը	16757,50

Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Առողջապահության համակարգը դեռևս գտնվում է բարեփոխումների շրջանում, որի հետ կապված ընթանում են փոփոխություններ ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում, մշակվում են նոր հայեցակարգեր, ռազմավարական ծրագրեր, որոնք ուղղված են աշխատանքների արդյունավետության բարձրացմանը: Աշխատանքներ են տարվում ուժեղացնելու առաջնային օղակը՝ բուժասպասարկումը դարձնել որակյալ և մատչելի, ավելի մոտեցնել բնակչությանը, մեծացնել կանխարգելիչ և ամբուլատոր բուժօգնության աշխատանքները: Բնակչության համար պետական նպատակային ծրագրերի հասցեականության բարձրացման և որպես գերակա ուղղություն է դիտվում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա:

Վիճակի գնահատում

Երևան քաղաքում բնակչության ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է 98 առողջապահական կազմակերպությունների կողմից:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվում են թվով 25 առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններ՝ 5 հիվանդանոց, 15 պոլիկլինիկա, 2 բուժսանմաս, 2 դիսպանսեր և շտապբուժօգնության ծառայությունը:

Երևան քաղաքի առողջապահական կազմակերպություններում աշխատում է 8867 բժիշկ և 8447 բուժքույր, որից Երևանի քաղաքապետարանի ենթակա ընկերություններում՝ 2282 բժիշկ, 3379 բուժքույր: 2008թ. հիվանդանոցային բուժօգնություն է ստացել շուրջ 161 հազար հիվանդ, ամբուլատոր-պոլիկլինիկական այցելությունները կազմել են 3.4 մլն այց, շտապ օգնության կանչերի քանակը կազմել է 158 հազար կանչ:

Առաջնային բուժօգնությունը մատուցվում է ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում, որտեղ գործում է տեղամասատարածքային սկզբունքը,

բուժօգնությունը ցուցաբերվում տեղամասային թերապևտների, մանկաբույժների և ընտանեկան բժիշկների և նեղ մասնագետների կողմից:

Երևան համայնքի ենթակայության և Երևան քաղաքում տեղակայված ոչ պետական առողջապահական ընկերությունների միջոցով կիրականացվի բնակչության բուժօգնությունը 2010-2013թթ. պետական նպատակային ծրագրերի և մատուցվող վճարովի ծառայությունների շրջանակներում:

2010-2013թթ. ընթացքում Երևան համայնքի բյուջեի միջոցներով նախատեսվող միջոցառումների ծրագիրը ներկայացված է հավելվածում:

ՀՀ կառավարության 19.04.2007թ. «Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան բժիշկների անհատական և խմբային անկախ պրակտիկաների իրականացման կարգը հաստատելու մասին» հ.497-Ն որոշման համաձայն նախատեսվում է անկախ պրակտիկայի ներդրումը:

ՀՀ կառավարության 30.03.2006թ. «Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ գրանցման կարգը հաստատելու մասին» հ. 420-Ն որոշման համաձայն կշարունակվի առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ գրանցման գործընթացը, որով անցում կկատարվի տեղամասային սկզբունքից բժշկի ազատ ընտրությանը: Եռամակարդակ բնակչության գրանցման ավտոմատացված համակարգի միջոցով կշարունակվի բնակչության գրանցման վերլուծությունը, կրկնությունների հայտնաբերումը և բազայի պարբերաբար թարմացումը: Նախատեսվում է ընդլայնել ընկերություններից ստացվող հաշվետվական ձևերը՝ ներառելով ֆինանսական և բնակչության առողջությունը բնութագրող ցուցանիշներ:

ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած Տուբերկուլյոզի դեմ պայքարի 2007-2015թթ. ազգային ծրագրի համաձայն պոլիկլինիկաների տուբերկուլյոզի դեմ պայքարի կաբինետների գործունեության ապահովում:

Ֆրանսիական ԲԱՍ կազմակերպության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ կշարունակվեն բազմադեղորայքակալուն տուբերկուլյոզով հիվանդների վաղ հայտնաբերման և բուժման աշխատանքները:

Գերակայություններ

Առողջապահական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների, պայմանների և մատչելիության բարելավում

- ✓ Երևանի ենթակայության առողջապահական հիմնարկների տեղային ջեռուցման համակարգերի ներդրման աշխատանքների ավարտում.
- ✓ Առողջապահական ընկերությունների շենքային պայմանների բարելավում.
- ✓ Առողջապահական ընկերություններ – քաղաքապետարան համակարգչային ցանցի ստեղծում.
- ✓ Առաջնային օդակի առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների արդիականացում.
- ✓ Երևան քաղաքի շտապ օգնության ծառայության արդիականացում և զարգացում.
- ✓ Երևան քաղաքի գյուղատիպ և ծայրամասային թաղամասերում ընտանեկան բժշկության գրասենյակների ստեղծում.
- ✓ Առողջապահության համակարգի կառավարման արդյունավետության և վերահսկելիության բարձրացում.

Առողջության բարելավմանն ուղղված ծրագրեր

- ✓ առողջապահական տեղեկատվական-վերլուծական, մոնիտորինգի բաժնի ստեղծում.
- ✓ ոչ վարակիչ հիվանդությունների, մասնավորապես սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի և քաղցկեղի կանխարգելման նպատակով քաղաքային միջոցառումների իրականացում.
- ✓ առողջ սպրեյակերպի քարոզչության խրախուսում և առողջության պահպանմանն ու ամրապնդմանն ուղղված քաղաքային ծրագրերի իրականացում.
- ✓ կանանց, երեխաների և դեռահասների առողջության պահպանմանն ուղղված քաղաքային ծրագրերի իրականացում՝ օր. ընտանիքի առողջության տարի, ամիս.

- ✓ առողջության առաջնային պահպանման ոլորտում բուժօգնության որակի ապահովում.
- ✓ սոցիալապես անապահով խմբերում չընդգրկված որոշակի խմբերի բուժօգնության, հետազոտությունների և դեղորայքի տրամադրման կազմակերպում:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Առողջության առաջնային պահպանման ոլորտ

Նախատեսվում է պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում առողջապահության տեսակարար կշիռը 2013թ. հասցնել 11%-ի: Հաշվի առնելով առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության մատչելիության ավելի բարձր մակարդակը և բնակչությանը (տարածքային առումով) հասանելիության ավելի մեծ աստիճանը՝ պետական բյուջեի կառուցվածքում ավելացվելու է առաջնային բուժօգնության բաժինը՝ ի հաշիվ հիվանդանոցային բուժօգնությանը տրամադրվող միջոցների տեսակարար կշռի կրճատման: Ծրագրվում է առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության բաժինը առողջապահության բնագավառի ծախսերի կառուցվածքում մինչև 2013թ. հասցնել 48%-ի:

Բյուջետային հատկացումների աճը հիմնականում ուղղվելու է բժիշկների և միջին բժշկական անձնակազմի աշխատավարձի բարձրացմանը, համակարգի՝ դեղորայքով և համապատասխան սարքավորումներով ապահովմանը:

Շարունակվելու է ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը, ինչը ենթադրվում է ընտանիքի ամբուլատոր սպասարկում մեկ կառույցի կողմից և աստիճանաբար տեղամասային մանկաբույժների, թերապևտների և նեղ մասնագետների փոխարինում ընտանեկան բժիշկներով: Ընտանեկան բժշկության անհատական (խմբային) պրակտիկայի ներդրումը սկզբնական շրջանում նախատեսվում է կազմակերպել Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող գյուղական բնակավայրերում և տարածքային առումով առանձնացված թաղամասերում՝ ձևավորելով ընտանեկան բժշկության գրասենյակներ, որոնց համար հիմք կարող են հանդիսանալ նաև գործող պոլիկլինիկաները: Այնուհետև

ընտանեկան բժշկության գրասենյակների կարող են վերածվել փոքր թվով բնակչություն սպասարկող պոլիկլինիկաները: Աստիճանաբար պետք է ստանան ինքնուրույն կարգավիճակ՝ հիմնված ըստ սպասարկվող (գրանցված) բնակչության թվի ֆինանսավորման, ռեսուրսների անկախ տնօրինման և բուժօգնության կազմակերպման գործում ինքնուրույն որոշումներ ընդունելու սկզբունքների վրա:

ԱԱՊԲ (Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների) ծրագրի հետ համատեղ Երևանի քաղաքապետարանի ենթակա ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններում նախատեսվում է ներդնել հաշվապահական, հաշվառման և հաշվետվական ծրագրային փաթեթներ:

Առողջության առաջնային պահպանման ծառայությունների բարելավման գործում անհրաժեշտ է ապահովել նաև ախտորոշիչ ծառայությունների մատչելիությունը:

Կշարունակվի առողջության առաջնային պահպանման ոլորտում բուժօգնության որակի ապահովման գործընթացը:

ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած Տուրերկույոզի դեմ պայքարի 2007-2015թթ. ազգային ծրագրի համաձայն՝ պոլիկլինիկաների տուրերկույոզի դեմ պայքարի կաբինետների գործունեության ապահովում:

Տրանսիական ԲԱՍ կազմակերպության և ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ կշարունակվի բազմադեղորայքակայուն տուրերկույոզով հիվանդների վաղ հայտնաբերման և բուժման աշխատանքները:

Երևան քաղաքի ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների կողմից զբաղեցրած շինությունների մեծ մասում վերջին հիմնանորոգումը իրականացվել է մինչև 1995թ.: Շենքերի պահպանմանն ու վերականգնմանն ուղղված ֆինանսական սուղ միջոցների հետևանքով զգալիորեն կրճատվել են շենքերի տեխնիկական պարամետրերի պահպանման աշխատանքների ծավալները, մեծացել է շենքերի մաշվածությունը: Շենքերի տեխնիկական վիճակի վրա բացասաբար են ազդել ջրակոյուղատար ցանցերի և տանիքների մաշվածությունը: Նախատեսում ենք ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում իրականացնել հիմնական և մասնակի շինվերանորոգման աշխատանքներ և ստեղծել ջեռուցման համակարգեր:

Շտապօգնության ծառայության ոլորտում նախատեսվում է սերտացնել համագործակցությունը առաջնային օղակի և ստացիոնարների հետ, բարձրացնել մատուցվող օգնության որակը: Նախատեսվում է բուժսարքավորումների, կապի համակարգի և ավտոմոբիլային հավաքակազմի նորացում: Քրոնիկ հիվանդների դիսպանսեր հսկողության արդյունավետության բարձրացման և աշխատանքների գնահատման նպատակով նախատեսվում է ստեղծել տվյալների ավտոմատացված բազա:

Ստացիոնար բուժօգնության հիվանդանոցային համակարգում կշարունակվի բարձրացնել բուժման որակը՝ ժամանակակից բուժման մեթոդների և սարքավորումների կիրառմամբ, որի արդյունքում կնվազի նաև բուժման միջին տևողությունը և կբարձրանա մահճակալի շրջապտույտը:

Հիվանդանոցային բուժօգնության մակարդակում արդյունավետության բարձրացման առանցքային ուղղություն է հանդիսանալու առկա սահմանափակ պետական միջոցների կենտրոնացումը հնարավորին չափ փոքր թվով բուժօգնության կետերում:

Առողջապահության բնագավառում առողջապահական տեղեկատվական համակարգի կարևորությունն անգնահատելի է, քանի որ տեղեկատվական համակարգն է հնարավորություն տալիս պատկերացում կազմելու այնպիսի կարևոր ցուցանիշների մասին, ինչպիսիք են հիվանդացությունը, մահացությունը, դրանց պատճառային կապը սոցիալական վիճակի հետ, աշխարհագրական տեղանքի հետ և այլն: Այդ նպատակով նպատակահարմար է ստեղծել առողջապահական ընկերություններ-քաղաքապետարան համակարգչային ցանց: Բացի այդ, նպատակահարմար կլինի ստեղծել առողջապահական տեղեկատվական-վերլուծական, մոնիտորինգի բաժին, որը կվերլուծի և կգնահատի բնակչության առողջության ցուցանիշները:

Երևան քաղաքում Հանրային առողջության և հիգիենիկ ու հակահամաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քաղաքականության շրջանակներում նպատակահարմար է իրականացնել վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր, որն ընդգրկում է ժամանակակից

ախտահանման մեթոդների կիրառմամբ հիգիենիկ ու հակահամաճարակային միջոցառումների կազմակերպում և ինֆեկցիոն անվտանգության ապահովում:

Մոր և մանկան առողջության պահպանում

Կանանց և երեխաների առողջության պահպանմանը, այդ թվում՝ վերարտադրողական առողջության խնդիրներին համարժեք ուշադրության ցուցաբերումը սկզբունքային նշանակություն ունի առողջ սերունդ ունենալու, հետևաբար՝ բնակչության առողջական վիճակի բարելավման տեսանկյունից: Կապահովվի հղիների, կերակրող մայրերի և 0-5 տարեկան երեխաների սնուցման շարունակական բարելավումը, կրճճով սնուցման խրախուսումը, հղիների նախաձննդյան խնամքի և շուրջձննդյան որակյալ բուժօգնության տրամադրումը: Երեխաների բուժօգնության հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների և երեխայի առողջ աճի ու զարգացման ծրագրերի իրականացումը:

Տարափոխիկ հիվանդություններ

Անհրաժեշտ է ընդլայնել տարափոխիկ հիվանդությունների՝ տուբերկուլյոզի (պալարախտ), սեռավարակների և ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ հայտնաբերման և լիարժեք բուժման աշխատանքները:

Ոչ ինֆեկցիոն հիվանդություններ

Միրտ-անոթային հիվանդությունների, չարորակ նորագոյացությունների, կանխարգելման միջոցառումների ձեռնարկում, վաղ հայտնաբերում, ամբողջ ծավալով բուժօգնության մատուցում:

Առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են լինելու ոչ ինֆեկցիոն հիվանդությունները: Վերջին տարիների առողջապահության ոլորտի հիմնական ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած տարեցտարի աճող ֆինանսավորմանը, դեռևս բավարար չէ բնակչության առողջության այնպիսի

հիմնական ցուցանիշների բարելավման առումով, ինչպիսիք են սիրտ անոթային, ուռուցքային, շաքարային դիաբետի, մարսողական օրգանների հիվանդություններից մահացությունը:

Միրտ-անոթային հիվանդություններ

2008թ. վարչության կողմից իրականացված ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններում սրտաբանական կաբինետների դիսպանսեր հիվանդների վարման ու բուժման որակի, սարքավորումներով և կադրերով հագեցվածության ուսումնասիրության շնորհիվ արձանագրվել են մի շարք կազմակերպչական և մասնագիտական բացթողումներ, որոնց լուծումը կբարձրացնի սրտաբանական ծառայության որակը, կնվազեցնի այս հիվանդություններից մահացությունը, բարդությունների առաջացումը և հաշմանդամության հավանականությունը:

Այս ուղղությամբ նախատեսվում է.

- մշակել և ներդնել սիրտ-անոթային հիվանդությունների վարման ուղեցույցներ. հիվանդությունների շարունակական հսկողության կանոնակարգ, որի պարտադիր կիրառումը կբարձրացնի սրտաբանական ծառայության որակը և կդրվի կանխարգելիչ սրտաբանության հիմքը.
- հնարավորության սահմաններում նոր սարքավորումներով վերազինում.
- ԱԱՊ բժիշկների և սրտաբանների համար շարունակական ուսուցողական սեմինարների կազմակերպում՝ ուղղված սիրտ-անոթային հիվանդությունների ախտորոշման և բուժման ժամանակակից մոտեցումներին, դեղորայքի ճիշտ ընտրության և դեղորայքի ու առավելագույն դեղաչափերի կիրառությանը և այլն.
- սիրտ-անոթային հիվանդություններով տառապող հիվանդների լիարժեք լաբորատոր գործիքային հետազոտությունների կազմակերպում.
- սիրտ-անոթային հիվանդություններով տառապող հիվանդների բուժման ընթացքում ներառել նաև ոչ դեղորայքային բուժումը՝ ուղղված կառավարելի ռիսկի գործոնների նվազեցմանը.

- բնակչության շրջանում սիրտ-անոթային հիվանդությունների, ռիսկի գործոնների և կանոնավոր բուժմանն ուղղված տեղեկատվության տրամադրում:

Շաքարային դիաբետ

Այս ուղղությամբ կգնահատվի՝

- շաքարային դիաբետով հիվանդությունների ախտորոշման և բուժման համար անհրաժեշտ սարքավորումներով և կադրերով հագեցվածությունը.
- շաքարային դիաբետով տառապող հիվանդների հետազոտման կարգը և հաճախականությունը առաջնային բժիշկների կողմից.
- նեղ մասնագետների կողմից կատարված խորհրդատվությունների հաճախականությունը.
- շաքարային դիաբետով հիվանդությունների ռիսկի գործոնների բացահայտմանը և կանխարգելմանն ուղղված գործունեության արդյունավետությունը,

կիրականացվի՝

- հիվանդների և, անհրաժեշտության դեպքում, հարազատների համար ուսուցողական և կրթական ծրագրերի իրականացում շաքարային դիաբետի դպրոցում և առաջնային օղակում.
- Հեռուստահաղորդումների միջոցով հանրության իրազեկման բարձրացում ուղղված շաքարային դիաբետի կանխարգելմանը (ռիսկի գործոններ, առողջ ապրելակերպ և այլն):

Ստամոքսի և տասներկուամատնյա աղու խոցային հիվանդություններ

- ուսումնասիրել ստամոքսի և տասներկուամատնյա աղու խոցային հիվանդությունների կոնսերվատիվ բուժման արդյունավետությունը և վիրաբուժական միջամտությունների հիմնավորվածությունը.
- կրթական միջոցառումներով այս հիվանդությունների բուժումը կոնսերվատիվ եղանակով հասցնել առավելագույնի:

Առողջապահության համակարգի կառավարման արդյունավետության և վերահսկելիության բարձրացում: Օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների շրջանակներում պետք է մեծացվի առողջապահության համակարգի կառավարման գործում պետության և համայնքի կարգավորիչ և վերահսկիչ դերը: Մասնավորապես, անհրաժեշտ է մշակել և սկսել բուժօգնության որակի վերահսկման չափանիշների, ինչպես նաև վերանայված սանիտարական նորմերի ու կանոնների ներդրման գործընթացը:

Հիմնախնդիրներ

- *Երևանի ենթակայության ընկերությունների տեղային ջեռուցման համակարգերի ներդրման աշխատանքների ավարտում.*
- *Առողջապահական ընկերությունների շենքային պայմանների բարելավում.*
- *Առաջնային օղակի առաջնահերթ համարվող բժշկական սարքավորումների արդիականացում.*
- *Երևան քաղաքի շտապ օգնության ծառայության արդիականացում և զարգացում.*
- *Երևան քաղաքի գյուղատիպ և ծայրամասային թաղամասերում ընտանեկան բժշկության գրասենյակների ստեղծում.*
- *առողջապահական տեղեկատվական-վերլուծական, մոնիտորինգի բաժնի ստեղծում:*

Ս Ո Ց Ի Ա Լ Ա Կ Ա Ն Ա Պ Ա Հ Ո Վ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Վիճակի գնահատում

Սոցիալական ապահովության բնագավառում Երևանի քաղաքապետարանի ռազմավարությունը ուղղված է քաղաքացիների իրավունքների, տնտեսական, սոցիալական և իրավական երաշխիքների պաշտպանությանն ու իրականացմանը, սոցիալական ռիսկերի արդյունավետ կառավարմանը և դրանց նվազեցմանը: Հաշվի առնելով, որ հասարակության ավելի կարիքավոր կամ աղքատ խավը, որպես կանոն ավելի շատ է ենթակա ռիսկերի, քանի որ դրանց դիմակայելու համար չունի անհրաժեշտ չափով ռեսուրսներ, ուստի Երևանի զարգացման 2010-2013թթ. ծրագրում նախատեսված միջոցառումները նպատակաուղղված են ռիսկերի կրճատմանն ու կանխարգելմանը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կյանքի դժվարությունները հաղթահարելու կամ մեղմելու, նրանց հիմնական պահանջմունքները բավարարելու, հասարակությանն ինտեգրվելու, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու նպատակով տրամադրվող սոցիալական ծառայությունների մատուցմանը:

Առաջիկա տարիներին սոցիալական նշված ծառայությունների հիմնական ուղղություններն են լինելու կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց խորհրդատվական, իրավաբանական, վերականգնողական, դրամական և բնաիրային օգնության տրամադրումը, ժամանակավոր օթևանի հատկացումը, խնամքի կազմակերպումը, օրենքով չարգելված սոցիալական այլ ծառայությունների մատուցումը:

Սոցիալական աջակցության համակարգը բազմաբնույթ է և ներառում է.

Պետական սոցիալական օժանդակության ծրագրեր՝ դրամական վճարումների ձևով՝ ինչպիսիք են, օրինակ, ընտանեկան նպաստները, երեխայի ծննդյան միանվագ նպաստները, մինչև 2 տարեկան երեխաների խնամքի նպաստները և այլն:

Պետական սոցիալական ապահովության ծրագրեր, որոնք բաղկացած են կենսաթոշակներից, ինչպես նաև ժամանակավոր անաշխատունակության և կամ հղիության հետ կապված նպաստներից:

Տարեցների և հաշմանդամների սպասարկման ծրագրեր՝ ինչպես տնային, այնպես նաև պետության ամբողջական խնամքի ներքո, նաև՝ սոցիալական ծրագրեր՝ տուն-ինտերնատների, մանկատների, գիշերօթիկ դպրոցների պահպանման նպատակով:

Զբաղվածության ծրագրեր՝ գործազուրկների վերապատրաստում և աշխատանքի տեղավորում, ինչպես նաև հասարակական աշխատանքներ և նմանատիպ ծրագրեր, ներառյալ գործազրկության նպաստները (սրանք մեզ մոտ վճարվում են ՀՀ սոցիալական ապահովագրական հիմնադրամի միջոցներից):

Փոխհատուցումներ

ՀՀ-ում (ըստ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի հ.207-Ն որոշման) կիրառվում են միայն հայրենական պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց համար՝ փոխհատուցում՝ 4500 դրամի չափով և պատվով՝ 20.000 դրամի չափով: Հայրենական պատերազմի հաշմանդամների համար՝ 6800 դրամ փոխհատուցում և 20.000 դրամ պատվով՝:

Դրամական օգնության տրամադրում

Վերջին տարիների սոցիալ-տնտեսական ճգնաժամի և բնակչության զգալի մասի սոցիալական պայմանների կտրուկ վատթարացման հետևանքով, կիրառվել է նաև քաղաքացիներին *կանխիկ դրամական օգնություն*: Այս մոտեցումը, թերևս, ժամանակի պահանջ է եղել և իրական ազդեցություն է ունեցել կարիքավոր քաղաքացիների առօրյա սոցիալական խնդիրների լուծման հարցում, սակայն, ընդհանրական առումով, նշանակալի ազդեցություն չի ունեցել այդ մարդկանց և ամբողջությամբ վերցրած՝ հասարակության կենսամակարդակի բարելավման վրա: Ուստի, սոցիալական սպասարկման ծառայությունների համակարգի ընդլայնման և արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ուղղակի դրամական օգնությունների փոխարեն, հիմք դնել Երևանի քաղաքային նպաստների և փոխհատուցումների սոցիալական քաղաքականության (Երևանի բյուջեի միջոցների հաշվին), որը բխում է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության՝ բարեկեցության ոլորտում ամրագրված՝ խոցելի խմբերի պաշտպանվածությունն

ապահովող սոցիալական քաղաքականության իրագործումից և կնպաստի Երևան քաղաքում ժողովրդագրական ցուցանիշների բարելավմանը, ինչպես նաև որոշակի սոցիալական խմբերի սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը:

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում սոցիալական ռիսկերի հնարավոր գոյացմանն ընդդեմ՝ քաղաքապետարանը, անկախ այն բանից, թե ինչպիսի ազդեցություն ունի ֆինանսական ճգնաժամը մյուս ոլորտների վրա, նախատեսում է մշակել և իրականացնել սոցիալական հատուկ ծրագրեր՝ կատարելով իր սոցիալական պարտականությունները Երևան քաղաքի կարիքավոր բնակչության հանդեպ:

Երևանի քաղաքապետարանի սոցիալական ոլորտի զարգացման ծրագիրը նպատակային սոցիալական քաղաքականության ազդեցիկ գործիք է՝ աղքատության հաղթահարման և մայրաքաղաքի բնակչության կենսամակարդակի զգալի բարձրացման համար:

Հիմնախնդիրները

Սոցիալական ապահովության համակարգը դեռևս գտնվում է բարեփոխումների շրջանում, քանի որ փոփոխություններ են կատարվում ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտում:

Սոցիալական ապահովության ոլորտի պետական և Երևանի քաղաքային բյուջեի ֆինանսավորման ծավալների աստիճանական աճը և իրականացվող քաղաքականության արդյունավետության բարձրացումը դիտվելու է որպես առաջնահերթ խնդիր, որը նպատակաուղղվելու է *առկա, ներքոհիշյալ հիմնախնդիրների լուծմանը՝*

- *Աղքատության և հասարակության բևեռացվածության նվազեցում.*
- *Պետական նպաստների հասցեականության մեծացման, աղքատության գնահատման չափորոշիչների կատարելագործման, մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարելավում.*

- *Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրում (առկա՝ պետական կենսաթոշակային համակարգ, ներդրվող՝ կուտակային ապահովագրական կենսաթոշակային համակարգ).*
- *Հաշմանդամ անձանց շրջանում աղքատության և սոցիալական մեկուսացման հաղթահարում, նրանց՝ հասարակությանը աստիճանական ինտեգրման, նրանց զբաղվածության խնդիրների աստիճանական կարգավորում.*
- *Փորձագրկության բարձր մակարդակի (հատկապես երիտասարդների և կանանց շրջանում) նվազեցում.*
- *Ծնելիության դեռևս անբավարար ցուցանիշների և վաղ տարիքի երեխաների մշտական թերսնման խնդրի լուծում.*
- *Տարեցների, Արցախյան պատերազմի հաշմանդամների, վետերանների և սահմանափակ կարողություններով (հաշմանդամ) անձանց համար սոցիալ-վերականգնողական ծառայությունների ստեղծում.*
- *Անտուն և անօթևան անձանց, կարիքավոր բազմազավակ ընտանիքների, երիտասարդ ընտանիքների, հաշմանդամներից կազմված և երեխաներ ունեցող ընտանիքների բնակարանային խնդիրների լուծում:*

Գերակայություններ

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ ներքին սպառնալիքներից է դիտվում հասարակության բևեռացվածությունը, սոցիալական արդարության պետական արդյունավետ երաշխիքների ոչ բավարար լինելը, աղքատության մակարդակը, սոցիալական ծառայությունների ոչ բավարար մատչելիության մակարդակը: Ուստի աղքատության հաղթահարումը, հասարակության բևեռացվածության նվազեցումը և բնակչության սոցիալական կենսամակարդակի բարձրացումը սոցիալական ապահովության ոլորտի հիմնական գերակայություններն են, որոնք ուղղակիորեն առընչվում և համընկնում են ՀՀ կառավարության ընդունած աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գերակայություններին:

Սոցիալական օժանդակության ոլորտում

1.1 Պետական նպաստների համակարգի կատարելագործումը և հասցեականության մեծացումը. պետական նպաստների շարքում հատկապես ընտանեկան նպաստների համակարգը՝ որպես աղքատության հաղթահարման արդյունավետ գործիք, կարիք ունի կատարելագործման, որը մեր կողմից առաջարկվելու է նաև որպեսզի 2010 թվականից, անկախ կարիքավորության միավորից, Արցախյան պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակիցների ընտանքիներին առանձնահատուկ մոտեցմամբ (նրանց տալով առանձին սոցիալական խումբ, որը կբարձրացնի ընտանիքի անապահովության միավորը) ևս ընդգրկել պետական նպաստների համակարգում:

1.2 Սոցիալական նպատակային որակյալ ծառայությունների մատուցում. անհրաժեշտ է զարգացնել և իրականացնել բնակչության հատուկ պաշտպանություն պահանջող խմբերին մատուցվող սոցիալական սպասարկման ծառայությունների ձևերն ու մեթոդները: Սոցիալական ապահովության ոլորտում պատշաճ սպասարկում ապահովելու համար անհրաժեշտ է նոր, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և միջոցների կիրառման ոլորտի ընդլայնում, մատուցվող սոցիալական ծառայությունների որակի բարելավում:

Պետական կենսաթոշակային ապահովագրության ոլորտում

Կենսաթոշակային համակարգը պետք է բարեխոյվի՝ անցում կատարելով բազմաստիճան կենսաթոշակային համակարգին: Գերակա է լինելու կենսաթոշակների նվազագույն չափի համապատասխանեցումը կենսաբանական պահանջմունքների նվազագույն չափին, ինչպես նաև աշխատանք ունեցող անձանց և կենսաթոշակառուների (ներառյալ հաշմանդամների) կենսաթոշակների տարբերության նվազեցումը, կապահովի աշխատավարձերի և կենսաթոշակների միջև եղած անհամաչափության մեղմումը) ներդրման հետ կապված՝ կենսաթոշակային բարեփոխումների լուսաբանման հանրային իրազեկման և քաղաքացիական հասարակության մասնակցության գործընթացի ծրագրային միջոցառումների իրագործումը:

Զբաղվածության քաղաքականության ոլորտում

Զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրեր միջոցով աշխատաշուկայում անմրցունակ խմբերի հասարակություն ներգրավելու նպատակով նախատեսվում է ՀՀ կառավարության 29.12.2004թ. հ.1854-Ն որոշմամբ իրականացվող «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրերը նպատակաուղղել վարչական շրջանների մեծամասշտաբ ծրագրերի իրականացմանը: Այս ոլորտում անհրաժեշտ է գործուն քաղաքականության իրականացում և արդյունավետության բարձրացում: 2008թ. ցուցանիշներով Երևան քաղաքում աշխատանք փնտրող անձանց թիվը 20019 է, որից 16000-ը կին, 4017-ը՝ տղամարդ, գործազուրկների թիվը՝ 18086, որից 14555-ը՝ կին, 5640-ը՝ տղամարդ: 2009թ. 8 ամսվա տվյալներով աշխատանք փնտրող անձանց թիվը 27268 է, որից 19819-ը՝ կին, 7449-ը՝ տղամարդ, գործազուրկների թիվը՝ 24866, որից 19226-ը՝ կին, 5640-ը՝ տղամարդ:

Հաշմանդամների աղքատության և սոցիալական մեկուսացման հաղթահարում

Մայրաքաղաքում կան խնդիրներ՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ներառման հետ, որոնց առումով անհրաժեշտ է.

- ✓ *հատուկ ուշադրություն դարձնել միջոցառումներին՝ ուղղված սահմանափակ կարողություններով անձանց կյանքի որակի բարձրացմանը,*
- ✓ *վերականգնողական և այլ ծառայություններից օգտվելու խիստ անբավարար մակարդակի հաղթահարում,*
- ✓ *քաղաքային ենթակառուցների և սոցիալական ոլորտի հիմնարկներում հաշմանդամների համար հատուկ նշանակության պայմանների, սարքերի և սարքավորումների ներդրում:*

Երևանի քաղաքապետարանը, առաջնորդվելով «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարության» պահանջներով, 2010թ. ձեռնարկելու է հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու հաշմանդամների ֆիզիկական մատչելիությունը և նրանց լիարժեք մասնակցությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: 2010թ. նախատեսվում է հայրենական պատերազմի

հաշմանդամների և վետերանների համար հանգստի և սոցիալ-վերականգնողական ծրագրերի իրագործում:

Ծնելիության մակարդակի բարձրացում

Հայաստանի Հանրապետությունը որպես ազգային անվտանգության սպառնալիք է դիտում ցածր ծնելիությունը, կյանքի միջին տևողության ու որակի ոչ բավարար ցուցանիշները: Ուստի Երևանում անհրաժեշտ է ծնելիության խթանման նպատակով երեխաներ ունենալու և մեծացնելու համար ստեղծել բարենպաստ պայմաններ: Ծնելիության ցածր ցուցանիշը պայմանավորող գործոններից մեկն էլ ամուսնությունների դեռևս ոչ բավարար մակարդակն է, որի վրա ուղղակի ազդեցություն ունեն նյութական, բնակարանային, կենցաղային պայմանների հետևանքով ամուսնության ժամկետի հետաձգումը կամ դրանից հրաժարումը: Այս հանգամանքները ազդեցություն ունեն նաև ամուսնալուծությունների վրա: Հաշվի առնելով ժողովրդագրական բացասական միտումների սպառնալիքը 2010 թվականին կմշակվեն հատուկ ծրագրեր: Այս նպատակով հատկապես կարևորվում է՝ որպես ծնելիության խթանման համալիր ծրագրի բաղկացուցիչ՝ անհրաժեշտ է երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակարանային ապահովման և զբաղվածության ծրագրեր իրականացնել (բնակարանների ձեռքբերման համար կարելի է նաև այդ նպատակով 3-4% երկարաժամկետ հիփոթեք տրամադրել): Անհրաժեշտ է նաև հանդես գալ համապատասխան (օրենսդրական կամ կառավարության որոշում) նախաձեռնությամբ, որպեսզի յուրաքանչյուր զերատեսչական հիմնարկ, գործարանատեր, և այլն, իր միջոցներով 3-4% երկարաժամկետ հիպոտեքով բնակարաններ կառուցի իր աշխատակից երիտասարդ ընտանիքների համար:

Բնակարանային քաղաքականության ոլորտում նախատեսվում է նաև բնակարանի կարիք ունեցող փախստականների հաշվառում և նրանց բնակարանային խնդիրները լուծելու նպատակով ծրագրերի իրագործում փախստականների և միգրացիայի վարչության հետ: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անտուն և անօթևան մարդկանց համար անհատույց օգտագործման իրավունքով բնակարաններ կկառուցվեն Շվեյցարիայի «Դիակոնիա» ԲՀ-ի հետ. նախատեսվում է կառուցել 4 առանձնատուն՝ մշակված չափորոշիչներին

համապատասխան կարիքավոր 8 ընտանիքների համար (3, 4, 5 սենյականոց բնակարաններով) և դպրոց՝ Հույսի ավան թաղամասում: Ծրագրի արժեքը 360,0 մլն դրամ է: Բացի այդ՝ նախատեսվում է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ԲՀ-ի հետ համատեղ Վարդաշենում կառուցել և ավարտին հասցնել անօթևան մնացած մարդկանց ժամանակավոր կացարանը: Ծրագրի բյուջեն կազմում է 15,2 մլն. դրամ, որից հիմնադրամի ներդրումը 5,0 մլն դրամ է, իսկ 10,2 մլն դրամի ֆինանսավորման աղբյուրները դեռևս ճշտված չեն:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

Սոցիալական օժանդակության ոլորտում՝

Երևանցիների սոցիալական պաշտպանության ծրագրային միջոցառումների ընդունումը. սննդի, արդյունաբերական ապրանքների (հատկապես մանկական), տրանսպորտային միջոցների, կոմունալ վարձավճարների գների պայմաններում անհրաժեշտ է, որ Երևանի քաղաքապետարանը ինքնուրույն ընդունի և իրականացնի երևանցիների սոցիալական պաշտպանությանն ուղղված նպաստների, փոխհատուցումների լրացուցիչ սոցիալական աջակցության ծրագրեր: Մասնավորապես՝

- ✓ Արցախյան պատերազմի 1-ին խմբի հաշմանդամների համար ամենամսյա նպաստների վճարում 93 անձանց համար ամսական 10.000 դրամի չափով:*
- ✓ Հայրենական պատերազմի վետերանների և կարիքավոր 2-րդ խմբի հաշմանդամների համար՝ առողջարանային և սոցիալ-վերականգնողական կենտրոններում բուժման ծրագրեր, որոնցում նախատեսվում է ընդգրկել 70 անձ:*
- ✓ Սոցիալական զբոսաշրջության ծրագրեր՝ շուրջ 120 տարեցների և հաշմանդամների համար՝ որպես ծերության կանխարգելման և սոցիալական մեկուսացման հաղթահարման միջոց:*
- ✓ Պարենային աջակցության ծրագրեր՝ միայնակ տարեցների, հաշմանդամների բազմազավակ և կարիքավոր ընտանիքների համար: Այս ուղղությամբ նախատեսվում է 3500 ընտանիքների Դիակոնիա Բ/Կ-ի կողմից ամենամսյա պարենային աջակցության ցուցաբերել:*

Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր Ի Ի Ր Ա Վ Ո Ի Ն Ք Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ի Թ Յ Ո Ի Ն

Վիճակի գնահատում

Սոցիալական և տնտեսական իրավիճակի փոփոխությունները, որպես կանոն, բացասաբար են անդրադառնում հասարակության ամենախոցելի խմբերից մեկի՝ երեխաների վրա՝ նվազեցնելով նրանց մշակութային կրթություն և գեղագիտական դաստիարակություն ստանալու մատչելիության և հավասար հնարավորություններից օգտվելու պայմանները:

Երևան քաղաքում անչափահասների կողմից մուրացիկության, թափառաշրջիկության, իրավախախտումների դեպքերի առկայությունը վկայում է, որ այս ոլորտում բարեփոխումները հնարավոր են երեխաների ազատ ժամանցի արդյունավետ կազմակերպման, նրանց մարզական, մշակութային խմբակներում ընդգրկման, ազգային և հայրենասիրական ոգով դաստիարակման միջոցով:

Երեխաների առողջության պահպանման և բարելավման ուղղությամբ վերջին տարիներին իրականացվել են մի շարք ծրագրեր, սակայն դեռևս մտահոգիչ է մնում բնածին արատներով, հաշմանդամ երեխաների թիվը և հատուկ կարիքներով երեխաների թվի աճը, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների թերսնուցման և թերաճի խնդիրները և այլն: Հաշմանդամ երեխաների վաղ հայտնաբերումը, վաղ միջամտությունը, վերականգնողական բուժումը և նրանց ինտեգրումը հասարակությանը կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների առողջության առաջնային պահպանման հիմնաքարն է:

Տնտեսական ճգնաժամը, ընտանիքներում առկա կոնֆլիկտային իրավիճակները, միաձնող ընտանիքների թվի ավելացումը, որոշակի թվով ընտանիքների մշտական բնակության վայր չունենալն էապես ազդում են երեխաների հոգեկան առողջության վրա: Մտահոգիչ է նաև, որ երեխաների հոգեկան առողջության պահպանման ոլորտում հետազոտություններ և վիճակագրական հավաստի տվյալներ չկան, որոնք թույլ կտային գնահատել իրավիճակի ծանրության

աստիճանը: Ուստի երեխաների հոգեկան առողջության վրա ազդող գործոնների ուսումնասիրության, բացահայտված հոգեկան խնդիրների լուծման համար պատասխանատու մասնագիտացված ծառայությունների ստեղծման և անվճար տրամադրման կարիք կա:

Անբավարար է երեխաների իրավունքների վերաբերյալ դեռահասների տեղեկացվածությունը. նրանք բավարար տեղեկացված չեն տարրական առողջապահական գիտելիքների, հիգիենայի և սեռական դաստիարակության, սեռավարակների կանխարգելման հարցերում: Թրաֆիքինգի, առողջ ապրելակերպի, վնասակար սովորությունների վերաբերյալ իրազեկվածության պակասը արտահայտվում է նրանց վարքագծում և հետագայում դրսևորվում նրանց առողջական հարցերում: Ակնհայտ է դեռահասների վերարտադրողական առողջության պահպանման և առողջապահական կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը Երևան քաղաքում:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում գործում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները: Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում կան հասարակական հիմունքներով գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներ: Դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների և ընտանիքների պաշտպանություն ու նրանց համապատասխան սոցիալական աջակցություն ապահովելու գործում դրանց դերը կարևոր է, քանի որ ունեն առավել մեծ հնարավորություն ռիսկային խմբի երեխաներին հայտնաբերելու համար՝ որպես տվյալ շրջանի բնակչության հետ անմիջապես առնչվող առաջին օղակ:

Համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի՝ խնամակալության և հոգաբարձության մարմիններն են պատասխանատու և լիազորված երեխաների իրավունքների պաշտպանության համար: Կարևոր է այդ մարմնի լիազորություններն իրականացնող օղակի՝ վարչական շրջանի ղեկավարի դերը, քանի որ շրջանի ղեկավարը ավելի տեղյակ է շրջանի բնակիչների խնդիրներին, նրանց հասցեական օգնություն տրամադրելու հնարավորություններին: Կրթական, առողջապահական և սոցիալական ծառայությունները կենտրոնացված են վարչական շրջանում և

նախատեսված են կոնկրետ այդ շրջանի բնակիչների համար, հետևաբար վարչական շրջանների դերը վերը նշված խնդիրների լուծման գործում, առավել էական է:

Հիմնախնդիրներ

Առաջնահերթ կարիք կա՝

- *Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաներին ուղղված բազմամասնագիտական ծառայությունների զարգացման, հոգեբանական և մանկավարժական ծառայություններ մատուցող կազմակերպությունների, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների ստեղծման,*
- *նախադպրոցական կրթադաստիարակչական համակարգի ընդլայնման և ճկուն գրաֆիկով ծառայությունների մատուցման, մարզամշակութային անվճար գործող խմբակների ավելացման, ինչպես նաև հատուկ կարիքներով երեխաների ստեղծագործական կենտրոնների ստեղծման,*
- *մայրաքաղաքի մի շարք թաղամասերում խաղահրապարակների, ֆուտբոլի դաշտերի կառուցման, նոր խաղամիջոցների տեղադրման,*
- *երեխաների և դեռահասների շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության խնդրի կարևորության և դերի բարձրացման, առողջ ապրելակերպի, թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվության ապահովման*
- *առկա է ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայությունների ցանկի և պետպատվերի շրջանակներում խոցելի խմբերին տրամադրվող ծառայություններն ընդլայնելու կարիք:*

Նախատեսված ծրագրային միջոցառումներ

- «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2005թթ. ազգային ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 16-ի N1745-Ն որոշման հիմնադրույթների հիման վրա նպատակային ծրագրերի իրականացում.
- Երևան քաղաքում ավելացնել կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաների համար մարզական և մշակութային կենտրոնների թիվը, ինչպես

նան երաժշտական, պարարվեստի, մարզական և այլ մշակութային անվճար գործող խմբակների թիվը:

- Աջափնյակ վարչական շրջանի առկա օրինակով յուրաքանչյուր վարչական շրջանում երեխաների սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների կազմակերպում:
- Հատուկ կարիքներով երեխաների ստեղծագործական կենտրոնների հիմնադրում մասնագիտական հմտությունների ձեռքբերման համար:
- Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայությունների ցանկի և պետպատվերի շրջանակներում խոցելի խմբերին տրամադրվող ծառայությունների ընդլայնում:
- Հանրակրթական դպրոցներում, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններում երեխաների իրավունքների, թրաֆիքինգի, թմրամոլության հետևանքների, առողջ ապրելակերպի վերաբերյալ սեմինարների կազմակերպում:
- Դեռահասների շրջանում ազգային և հայրենասիրական դաստիարակությանն ուղղված ծրագրի մշակում և իրականացում:
- Երեխաների պաշտպանության միջազգային օրվան և Կանանց միջազգային տոնին նվիրված ամենամյա մշակութային միջոցառումների իրականացում:

Մ Շ Ա Կ Ո Ւ Յ Թ, Ե Ր Ի Տ Ա Ս Ա Ր Դ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ե Վ Ս Պ Ո Ր Տ

Վիճակի գնահատում

Գրադարաններ

Երևան քաղաքում գործում են 34 գրադարաններ, որոնցից 18-ը՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ: 2006թ. ընդհանուր գրքի ֆոնդը կազմել է 8720,8 հազ. կտոր, քաղաքապետարանի ենթակայության գրադարաններում՝ 1650,6 հազ. կտոր: Ընթերցողների թիվը կազմել է 130302 մարդ, որից 76800-ը՝ քաղաքապետարանի ենթակայության գրադարաններում: 2007թ. ընդհանուր գրքի ֆոնդը կազմել է 8737,4 հազ. կտոր, քաղաքապետարանի ենթակայության գրադարաններում՝ 1625,9 հազ. կտոր: Ընթերցողների թիվը կազմել է 137801 մարդ, որից 75700-ը՝ քաղաքապետարանի ենթակայության գրադարաններում: 2008թ. ընդհանուր գրքի ֆոնդը կազմել է 8779,1 հազ. կտոր, քաղաքապետարանի ենթակայության գրադարաններում՝ 1620,3 հազ. կտոր: Ընթերցողների թիվը կազմել է 137026 մարդ, որից 76700-ը՝ քաղաքապետարանի ենթակայության գրադարաններում: 2009թ. նոյեմբերի 1-ի դրությամբ Ավ. Իսահակյանի անվան գրադարանում գրանցվել է 26681 ընթերցող, հաճախել է 192821 ընթերցող:

2009թ. գրադարաններում անց են կացվել գրական, գրական-երաժշտական, հուշ-երեկոներ՝ նվիրված հայտնի մարդկանց, հանդիպումներ արվեստի անվանի գործիչների հետ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, Ազգային գրադարանային շաբաթ: Կազմակերպվել են 88 գրքային ցուցահանդեսներ և տարբեր բնույթի 48 միջոցառումներ:

Թանգարաններ

Երևան քաղաքում գործում են 57 թանգարաններ, որոնցից 4-ը՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ՝ Երևան քաղաքի պատմության, Ժամանակակից արվեստի, Կարեն Դեմիրճյանի և Պատմահնագիտական

թանգարանների՝ իրականացնելով հետևյալ մշակութային գործունեությունը. ժամանակակից և միջին սերնդի արվեստի գործերի ցուցադրություն, գիտական, կրթական գործունեություն, Երևան քաղաքի պատմությունը, կենցաղն ու մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրում:

Երևան քաղաքի թանգարանային հավաքածուներում 2006թ. ընդգրկված էր 2077,3 հազ. ցուցանմուշ, 2007թ.՝ 2008,9 հազ., 2008թ.՝ 2021,9 հազ. ցուցանմուշ: Երևանի քաղաքապետարանի ենթակայության թանգարաններում 2006թ. ընդգրկված էր 78,3 հազ. ցուցանմուշ, 2007թ.՝ 78,8 հազ., 2008թ.՝ 80,1 հազ. ցուցանմուշ:

2009թ. մայրաքաղաքի թանգարանները հանդես են եկել նոր ցուցադրություններով և կազմակերպել են բազմաթիվ նկարիչների ցուցահանդեսներ:

Թատրոններ

Կարևոր խնդիրներից է ազգային թատերարվեստի, օպերային և բալետային արվեստի ավանդույթների պահպանումը և զարգացումը:

Երևանում գործում են 18 թատրոններ, որոնցից 3-ը գործում են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ՝ Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական, Պատանի հանդիսատեսի և «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոնները:

Թատրոնների հիմնական նպատակը ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանումն է, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրումը: Ծառոնները հանրությանը հաղորդակից են դարձնում հայ և համաշխարհային դասական լավագույն ստեղծագործություններին:

Թատրոնների խաղացանկը տարեկան համալրվում էր մեկ-երկու, լավագույն դեպքում՝ երեք նոր և վերականգնվող ներկայացումներով:

Երաժշտական և արվեստի դպրոցներ

Երևան քաղաքում գործում են երաժշտական և արվեստի 26 դպրոցներ: Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են երաժշտական 25 դպրոցներ, որոնցում սովորում են 6968 աշակերտներ: Այդ դպրոցներն իրականացնում են արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն,

նախնական մասնագիտական կրթություն, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, նախապատրաստում են օժտված և տաղանդավոր երեխաներին՝ համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար: Երաժշտական և արվեստի դպրոցների լավագույն սաները մասնակցել են մի շարք միջազգային մրցույթների, փառատոների, ինչպես նաև ցուցահանդեսների՝ ցուցաբերելով լավագույն արդյունքներ:

2009թ. երաժշտական և արվեստի դպրոցների լավագույն սաները մասնակցել են մի շարք հանրապետական և միջազգային փառատոների, ինչպիսիք են՝ «Վերածնունդ» միջազգային մրցույթ, Ա. Բաբաջանյանի պատանի դաշնակահարների մրցույթ, «Նոր անուններ» միջազգային մրցույթ, Ազգային նվագարանների և ժողովրդական երգի անհատ կատարողների հանրապետական մրցույթ, «Նոան հատիկ» հանրապետական մանկապատանեկան թատերական փառատոն, «Տիեզերքը և մենք» մրցույթ-փառատոն, Է. Խաչատրյանի անվան մրցույթ-փառատոն, Ա. Սպենդիարյանի անվան երաժիշտ-կատարողների մրցույթ-փառատոն, Ա. Գաբրիելյանի և Ս. Ասլամազյանի անվան պատանի ջութակահարների և թավջութակահարների մրցույթ-փառատոն, «Երգող Հայաստան» հանրապետական մրցույթ, «The muse» միջազգային մրցույթ, Սկրյաբինի անվան 8-րդ միջազգային մրցույթ, «Щелкунчик» և այս մրցույթներում շատերը դարձել են դափնեկիրներ:

Մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 16 մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ, որոնք ապահովում են դպրոցականների նախասիրությունների, ունակությունների զարգացումը: Գործում են 355 խմբեր, որտեղ ընդգրկված են 6925 սովորողներ:

Այլ մշակութային կազմակերպություններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են «Հայաստանի փոքրիկ երգիչներ» և Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը: Մանկական ֆիլհարմոնիաները միավորում են

երաժշտական, արվեստի դպրոցների երաժշտական ձայնային բացառիկ ընդունակություններով օժտված երեխաներին, տալիս են անհատական և խմբակային թեքում, օժանդակում գործող երաժշտական և արվեստի դպրոցներում լավագույն ուժերի բացահայտմանը և նրանց ունակությունների զարգացմանը: «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլիհարմոնիան բազմիցս մասնակցել է միջազգային մրցույթների և փառատոների, միշտ նվաճել մրցանակային տեղեր կամ ճանաչվել լավագույնը: 2001թ. երիտասարդական երգչախմբերի եվրոպական ֆեդերացիայի կողմից «Փոքրիկ երգիչներին» շնորհվել է «Մշակույթի դեսպան» տիտղոսը և այն ընդգրկվել է եվրոպական միության կազմում: 2003թ. սկսած Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլիհարմոնիան յուրաքանչյուր տարի մասնակցում է Ղրիմում կայացող Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների մանկական ստեղծագործության փառատոնին և արժանացել մրցանակների:

«Երևան» փողային նվագախումբն իրականացնում է համերգային գործունեություն, հասարակությանը մատչելի է դարձնում դասական և ժամանակակից երաժշտությունը:

Երևանի կենդանաբանական այգի

Հայաստանի Հանրապետության միակ կենդանաբանական այգին գործում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ: Այգու նպատակը վայրի կենդանիների պահպանումն է, վերացող կենդանիների բազմացումը և ցուցադրումը: Այգում ավելանում ինչպես կենդանիների տեսականին, այնպես էլ գլխաքանակը: Ավելացումը տեղի է ունենում բնական աճի, նոր կենդանիների ձեռքբերման և փոխանակման հաշվին: Այգին նաև զբոսանքի վայր է, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին ծանոթանալու վայրի բնաշխարհին, իրականացնում է նաև մշակութային և լուսավորչական գործառույթ՝ այգի հաճախող երեխաներին տալիս է ինչպես բնապահպանական դաստիարակություն, այնպես էլ ձևավորում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և մարդասիրական վերաբերմունք: Եվրասիայի կենդանաբանական այգիների ասոցիացիայի անդամ է և մասնակցում է կազմակերպության աշխատանքներին:

Հիմնախնդիրներ

Գրադարաններ

Գրադարաններում դեռևս ցածր է ժամանակակից ընթերցողական պահանջարկին համապատասխան համալրվող գրականության, էլեկտրոնային սպասարկմանն անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերումների քանակը: Անհրաժեշտ է ֆինանսական միջոցներն ուղղել գրադարանների նյութատեխնիկական հենքի վերազինման, արդի ժամանակաշրջանի գրականության համալրման, գրադարանային հավաքածուների պահպանման գործընթացներին:

Թանգարաններ

Թանգարանների կարևորագույն հիմնախնդիրներն առնչվում են թանգարաններում պահվող մշակութային ժառանգության պահպանությանը և հանրության պատշաճ ներկայացմանը, որոնց իրականացման կարևոր միջոցառումներից են թանգարանների շենքերի վերանորոգումը, մշտական ցուցադրությունների կազմակերպումը, ցուցասրահներում և ֆոնդապահոցներում կայուն ջերմաստիճանի ապահովումը, թանգարանային նմուշների անվտանգության ապահովումը:

Երաժշտական և արվեստի դպրոցներ

1980-ական թվականներից սկսած երաժշտական և արվեստի դպրոցների շենքերը չեն վերանորոգվել, որոշ դպրոցներում առկա են ջեռուցման համակարգերի ներդրման խնդիրներ: Անհրաժեշտ է ապահովել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը, որը կնպաստի գեղագիտական կրթության էական բարելավման և կրթության հասանելիության ապահովումը բնակչության բոլոր խմբերի համար: Առօրյա խնդիր է դարձել ծրագրերի ընդլայնումը, որոնք ուղղված կլինեն հաշմանդամներին, ծնողագուրկ երեխաներին, բազմազավակ և անապահով ընտանիքների երեխաներին ընդգրկելու մշակույթի բոլոր ոլորտներում: Անհրաժեշտ է ապահովել երաժշտական և արվեստի դպրոցների մանկավարժների

կենսամակարդակի բարձրացում՝ աշխատավարձերի չափի հավասարեցում հանրակրթական դպրոցի մանկավարժների աշխատավարձի չափերին:

Մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ

Առկա խնդիր է դարձել մշակույթի օջախների շենքային պայմանների բարելավումը, հիմնանորոգումը և ընթացիկ վերանորոգումը, ինչպես նաև ջեռուցման համակարգերի ներդրումը: Այս աշխատանքների իրականացումը կնպաստի գեղագիտական կրթության էական բարելավմանը, այդ կրթության հասանելիության ապահովմանը բնակչության բոլոր խմբերի համար:

Երևանի կենդանաբանական այգի

Կենդանաբանական այգու հիմնական խնդիրներից են գիշատիչների կացարանների կառուցումը, փղանոցի տարածքի ընդլայնումը, գետածիու երկրորդ ջրավազանի և ձմեռանոց-կացարանի կառուցումը, գիշատիչ թռչունների ազատավանդակի կառուցումը, ջրավազանների մաքրման համակարգերի ներդրումը: Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ծրագրով նախատեսված է նաև նոր կենդանաբանական այգու կազմակերպում:

Մշակութային ծրագրեր

2009թ. մայրաքաղաքում անց են կացվել մի շարք միջազգային մշակութային միջոցառումներ՝

Մանկապատանեկան ֆիլմերի միջազգային 5-րդ կինոփառատոն, «Հայ-Ֆեստ» միջազգային թատերական փառատոն, «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոն, «Վերածնունդի հեռանկարներ» 10-րդ միջազգային փառատոն, Երևանյան միջազգային 3-րդ փառատոն:

Մշակույթի ոլորտում իրականացվող և նախատեսվող ծրագրերը նպատակ ունեն բարձրացնելու մշակույթի դերը, պահպանելու ազգային մշակութային ժառանգությունը, խթանելու անհատի և հասարակության ստեղծագործական ներուժը, ապահովելու ազգային մշակութային ավանդական ձևերի զարգացումը և

ինտեգրումը միջազգային մշակութային կառույցներին և մշակութային միջոցառումների իրականացումը:

2010թ. Երևանի պատմության թանգարանը հրատարակության է պատրաստել «Երևանի հուշարձանները» ալբոմը, որտեղ ներկայացված են ամբողջ քաղաքի արձանները: 2010-2013թթ. ընթացքում հրատարակության կպատրաստվի «Երևան քաղաքի պատմության թանգարանի գեղանկարների հավաքածու» կատալոգը, որի նպատակն է հանրությանը ծանոթացնել թանգարանի կերպարվեստի հարուստ նմուշներին, հատկապես երևանյան թեմաներով ստեղծագործություններին, «Թանգարանների լավագույն ցուցանմուշները» կատալոգը, որը հանրությանը կծանոթացնի ոչ միայն ցուցադրությունում ընդգրկված արժեքներին, այլև քաղաքի պատմությանը, կենցաղն ու մշակույթը ներկայացնող այն արժեքներին, որոնք պահվում են ավանդապահոցներում:

2010թ. ծրագրում ընդգրկված է Պատանի հանդիսատեսի թատրոնի մասնակցությունը Ռուսաստանի Դաշնությունում կայանալիք Շեքսպիրյան փառատոնին: 2010–2013թթ. ծրագրերում յուրաքանչյուր տարի նախատեսվում է 10-12 նոր պիեսների բեմականացում:

Քառամյա ծրագրերում յուրաքանչյուր տարի նախատեսվում է երաժշտական և արվեստի դպրոցներում համերգների, մրցույթների, փառատոների կազմակերպում և մասնակցություն՝ Ա. Գաբրիելյանի և Ս. Ասլամազյանի անվան մրցույթ–փառատոներին: Նախատեսվում է Ա. Սպենդիարյանի անվան պատանի երաժիշտ–կատարողների հանրապետական երրորդ մրցույթ–փառատոնի կազմակերպում յուրաքանչյուր տարվա մայիսի 21-ից մինչև 31-ը: Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում՝ մայիսից մինչև օգոստոս կկազմակերպի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ–փառատոն, որտեղ լավագույն տասնյակում ընդգրկված դպրոցները կարժանանան տարբեր մրցանակներ: Արամ Խաչատրյանի տուն–թանգարանում կանցկացվեն Ա.Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ–փառատոնը՝ երաժշտական դպրոցների շնորհաշատ սաների մասնակցությամբ: Քառամյա ծրագրերով կկազմակերպվեն նաև «Ուսուցչի օր», «Գրադարանավարի օր» և հիշարժան տարեթվերին նվիրված միջոցառումներ: 2010թ. կկազմակերպվեն Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանի

հիմնադրման 75, Ավ. Իսահակյանի ծննդյան 135 և Ավ. Իսահակյանի անվամբ գրադարանի անվանակոչության 55-ամյակներին նվիրված միջոցառումները:

2010-2013թթ. նախատեսվող մշակութային միջոցառումներ

Ազգային տոներ և հիշատակի օրեր. յուրաքանչյուր տարի կազմակերպվում են պետական և ազգային տոներ, հիշատակի օրեր: Նախատեսվում է կազմակերպել հետևյալ միջոցառումները՝

Ամանոր, Մայրության և գեղեցկության տոն, Թատրոնի միջազգային օր, Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, «Սուրբ զատիկ», դպրոցականների «Վերջին զանգ» միջոցառում, Երեխաների իրավունքների պաշտպանության օր, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոն, ՀՀ Անկախության օր, «Էրեբունի-Երևան» տոնակատարություն:

Ավանդական միջոցառումներից բացի 2010-2013թթ. նախատեսվում են նաև ազգային տոների վերականգնմանն ու անցկացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, որոնք նախատեսվում են կազմակերպել Հյուսիսային պողոտայում, քանի որ այդ տարածքը նպատակահարմար է և չի խանգարում տրանսպորտային երթևեկությանը: Յուրաքանչյուր ամիս նախատեսվում է տոների անցկացում՝ ավանդույթների և ժողովրդի մեջ արմատավորված սովորույթների պահպանմամբ: Դրանք են՝ «Սուրբ Սարգիս» (Սիրահարների օր), «Տեառն ընդառաջ», «Բարեկենդան», «Ծաղկազարդ», «Վարդավառ», «Համբարձման տոն», «Նավասարդյան խաղեր», «Խաչվերաց», «Գինու տոն», «Խաղողօրհներք», «Գրքի տոն», «Երաժշտության օր»: Կկազմակերպվեն նաև շքերթներ, դիմակահանդեսներ, ցուցահանդես-վաճառք, կապահովվի բնակչության անմիջական մասնակցությունն այդ միջոցառումներին:

Կիրականացվեն ծրագրեր՝ ուղղված Երևանում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկական ինքնության պաշտպանության ապահովմանն ու ինքնաարտահայտմանը, կստեղծվեն անհրաժեշտ պայմաններ՝ ազգային փոքրամասնությունների կրթական ծրագրերի իրականացման համար:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Վիճակի գնահատում

Երևան քաղաքում տեղակայված են 4 մարզական միություններ, 12 մարզական ակումբներ, 14 լողավազաններ, 11 ֆուտբոլի մարզադաշտեր, 24 թենիսի կորտեր, 3 հրաձգարաններ, 5 ստադիոններ, 37 մարզադահլիճներ, 1 նետաձգարան, 1 աթլետիկական մանեժ, 1 հեծանվահրապարակ, 3 թիավարության ու վինդսերֆինգի ջրամբարներ, 2 մարզամշակութային կենտրոններ, հավաքական թիմերի ուսումնամարզական 1 կենտրոն, 1 ձիարշավարան, 30 բազմագործառության փոքր դաշտեր, շուրջ 120 պարզ տիպի մարզահրապարակներ և 52 մարզադպրոցներ (տարբեր գերատեսչությունների ենթակայությամբ): Երևան քաղաքում նշանակալի մարզական կառույցներ են «Մարզահամերգային» համալիրը, «Հրազդան» և «Հանրապետական» մարզադաշտերը, Տ. Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տունը: Երևանի քաղաքապետարանի և 12 վարչական շրջանների ենթակայությամբ գործում են 25 մարզադպրոցներ ու 2 մարզամշակութային կենտրոններ (Նուբարաշենի և Նոր Նորքի վարչական շրջաններում):

Հանրապետությունում գործում են մարզական ֆեդերացիաներ գրեթե բոլոր մարզաձևերից, սակայն որպես ինքնուրույն կազմակերպություններ Երևանում գործում են աթլետիկայի և վոլեյբոլի Երևան քաղաքի ֆեդերացիաները:

Յուրաքանչյուր տարի անցկացվում են 35 մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ, որոնցից ՀՀ պետական բյուջեից Երևանի քաղաքապետարանի համաքաղաքային նշանակության ծախսերով ֆինանսավորվում են 20 մարզաձևերի առաջնություններ, 3 զանգվածային միջոցառումներ և մարզական բակային 1 փառատոն:

Հիմնախնդիրները

- *Երևանի բնակչության մեջ արմատավորված չէ ֆիզիկական կուլտուրան և առողջ սպրեյակերպը: Մեծ տոկոս է կազմում ծխողների քանակը: Դպրոցահասակ երեխաների շրջանում տարածված են ողնաշարային*

շեղումները (լորդոզ, կիֆոզ, սկոլիոզ): Մեծահասակների մոտ պակասում է շարժունակությունը:

- Երևանում պետական, համայնքային, հասարակական և մասնավոր մարզական կազմակերպությունների փոխհարաբերությունները մեծամասամբ հստակեցված չեն:
- Մայրաքաղաքի ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության մակարդակը պատշաճ մակարդակի չէ:
- Տարածաշրջանային և միջազգային մարզական շարժման հետ կապերի բացակայությունը:
- Մեթոդական ցուցումների, չափորոշիչների և համապատասխան ֆինանսավորման բացակայության հետևանքով մարզական ոլորտի մայրաքաղաքում միասնական կառավարման բացակայությունը:
- Լայն զանգվածների համար մատչելի մարզաբազաների (աթլետիկական վազբուղիներ, լողավազաններ, մարզադահլիճներ և այլն) բացակայությունը:
- Մարզադպրոցների մի մասի մարզաբազա չունենալու ու մյուս մասի մարզաբազաների անմխիթար վիճակում գտնվելու հանգամանքը:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- 2010 թվականին կսկսվեն Շենգավիթ վարչական շրջանի Ձևավոր չմշկասահքի մարզադպրոցի վերակառուցման և վերականգնման աշխատանքները, Կարապի լճի օրինակով սահադաշտեր կկառուցվեն Երևանի բոլոր վարչական շրջաններում:
- Առաջնորդվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով՝ նախատեսել՝ Երևանի բակերում պարզ տիպի խաղահրապարակների (յուրաքանչյուր 50 շենքերի համար 1 խաղահրապարակ կառուցելու ծրագիրը ընդգրկված է Երևանի գլխավոր հատակագծում) և արհեստական խոտածածկով մարզադաշտերի կառուցում:
- Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռին վերադարձված «Հրազդան» փակ մարզադահլիճի (Այասի փող. 1) նորոգում, ժամանակակից մարզագույքով վերազինում և մարզական միջոցառումների կենտրոնի վերածում:

- Համայնքի 25 մարզադպրոցներից 5-ի ժամանակակից մարզագույքով ապահովում և «Ավագ մարզադպրոց» ՀՈԱԿ-ների վերածում («Խաղային», «Մենապայքարային», «Զանգվածային», «Մարզատրամաբանական» և «Արևելյան» մարզաձևերի ավագ դպրոցներ), համագործակցելով ՀՀ հավաքականների կենտրոնի հետ:
- «Հրազդան» մարզադաշտից Հաղթանակի կամուրջն ընկած հատվածում խաղային մարզաձևերի խաղահրապարակներով, թիավարության ջրուղով, ժայռամագլցման ուղով և այլ մարզաառողջարարական համալիր կենտրոնի կառուցման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստում (ծրագիրն ընդգրկված է Երևանի գլխավոր հատակագծում):
- Հանրապետական և միջազգային մրցաշարերին պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով երևանցի մարզիկների և Երևանի թիմերի համար բարձրակարգ մարզաբազաներում ուսումնամարզական հավաքների կազմակերպում:
- «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի վերածում միջազգայինի՝ համագործակցելով Երևանի քույր քաղաքների հետ:
- Հանրապետական, միջազգային մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսում:
- Ծրագրային միջոցառումների իրականացման նպատակով բյուջետային համապատասխան ֆինանսավորման հատկացում:
- Երևան քաղաքում ռազմավարության տեսակետից անհրաժեշտ մարզաբազաների կառուցման համար պահանջվող նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում մասնագիտացված ստորաբաժանումների միջոցով:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Վիճակի գնահատում

Երիտասարդության հարցերի ոլորտի միակ իրավական նորմատիվային փաստաթուղթը երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգն է, որը սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները: Մայրաքաղաքի երիտասարդական կյանքի զարգացման գործում ակտիվ մասնակցություն ունեն հասարակական կազմակերպությունները, բուհերի ուսանողական խորհուրդները: ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված ՀԿ-ների հիսուն տոկոսը երիտասարդական է, կամ գրադվում է երիտասարդության խնդիրներով, դրանց մեծամասնությունը գործում է Երևան քաղաքում:

Հիմնախնդիրներ

- *Բավարար համագործակցություն չի ծավալվել մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ:*
- *Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի, հոգևոր-մշակութային, հայրենասիրական դաստիարակության, ազգային և համամարդկային մշակույթի նկատմամբ բարձրաճաշակ պատկերացումների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները պատշաճ մակարդակի չեն:*
- *Երևանի վարչական շրջաններում չկան երիտասարդական կենտրոններ:*

Նախատեսվող ծրագրային միջոցառումներ

- Երիտասարդների իրավաքաղաքական իրազեկվածության, աշխատանքային, սոցիալական խնդիրների ուսումնասիրման,

առաջարկությունների, ծրագրերի քննարկման, տեղեկատվության տրամադրման նպատակով Երևանի բուհերի ուս. խորհուրդների, երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբերի ստեղծում:

- Երևանի վարչական շրջաններում երիտասարդական կենտրոնների հիմնում:
- Հաշմանդամ երիտասարդներին մայրաքաղաքի երիտասարդական կյանքում ընդգրկելու նպատակով սերտ համագործակցության ծավալում հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ :
- Ազգային և համամարդկային մշակույթի նկատմամբ բարձրաճաշակ պատկերացումների ձևավորմանն ուղղած միջոցառումների իրականացում, տեղեկատվական երիտասարդական ծրագրերի մշակում:
- Մայրաքաղաքի երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպատակաուղղված զանգվածային մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպում :
- Երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության մասին իրազեկության ապահովմանը և կանխարգելմանն ուղղված զանգվածային մարզական, մշակութային միջոցառումների, քարոզարշավների, կլոր սեղանների կազմակերպում, տեղեկատվական ծրագրերի մշակում:
- Տաղանդավոր երիտասարդների ստեղծագործական ցուցահանդեսների, համերգների կազմակերպում:
- Երևանի, քույր քաղաքների և Հայաստանի Հանրապետության այլ համայնքների երիտասարդների համատեղ մարզամշակութային միջոցառումների կազմակերպում:

Մ Ի Ջ Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 30 քաղաքների և 5 միջազգային կազմակերպությունների հետ՝ ունենալով լայն պայմանագրային դաշտ և համատեղ իրականացվող ծրագրեր: Վերջին շրջանում ծավալվող գործողություններն ուղղված են Երևանի քույր և գործընկեր քաղաքների միջև արդյունավետ համագործակցությանը և միջազգային կապերի ընդլայնմանը: Երևան քաղաքը համագործակցության առավել լայն ծրագրեր է իրականացնում Մոսկվայի, Լիոնի, Դոնի Ռոստովի, Սանկտ Պետերբուրգի և այլ քաղաքների հետ, իսկ շուրջ 10 քաղաքների և միջազգային կազմակերպությունների հետ երկկողմ հարաբերությունների զարգացումները կարտացոլվեն 2010 թվականին և առաջիկա տարիներին՝ հիմքում ունենալով հարաբերությունների առկա մակարդակը, ծավալները և այդ հարաբերությունների ընդլայնման միտումները:

Արտաքին կապերի ոլորտում վերջին տարիներին ակտիվացել են նաև երկկողմ փոխայցելությունները տարբեր ձևաչափերով: Ակտիվ հարաբերությունների վկայությունն է «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը մասնակցելու նպատակով Երևան ժամանած պատվիրակությունների թվաքանակը, որը նախորդ տարիների համեմատ զգալիորեն աճել է: Ընդլայնվել է նաև Երևանի միջազգային համագործակցության ինչպես բովանդակությունը, այնպես էլ աշխարհագրությունը: Այսպես, նոր կապեր են հաստատվել Սոֆիայի, Դելիի և Կալինինգրադի հետ, նորովի կապեր են ստեղծվել Կարաբայի, Մոնրեալի հետ: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում Վարշավայի, Շիրազի և Լոնդոնի հետ՝ կապեր հաստատելու համար: Մեծ է նաև աշխատանքը ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների հետ՝ կապված տարբեր ոլորտներում առկա խնդիրների հետ, որոնք լուծվում են ՀՀ պետական կառավարման և այլ մարմինների հետ համատեղ:

Աճել է հետաքրքրությունը մայրաքաղաքի նկատմամբ նաև Սփյուռքում, որը խթան է հանդիսանում նոր գործընկերներ գտնելու և արդյունավետ փոխհամագործակցություն հաստատելու համար՝ հատկապես Երևան քաղաքի ներդրումային դաշտն ընդլայնելու և նոր ֆինանսական միջոցներ ներգրավելու համատեքստում:

Միջազգային համագործակցության ոլորտում 2010 թվականին Երևանի քաղաքապետարանի գործունեության հիմնական ուղղություններն են.

- Երևանի քույր և գործընկեր քաղաքների միջև զարգացող համագործակցության շարունակականության ապահովումը և նոր կապերի ստեղծումը, ակտիվ համագործակցությունը միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում,
- միջազգային և տարածաշրջանային ծրագրեր իրականացնելու համար բավարար միջավայրի նպատակային օգտագործումը,
- Երևան քաղաքի պատմությանը, մշակույթին և սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող տեղեկատվության ներկայացումը և գովազդային բազայի ընդլայնումը, Երևան քաղաքի մասին հզոր տեղեկատվական շտեմարանի ստեղծումը և տարածումը,
- Երևան քաղաքի՝ իբրև տարածաշրջանային խոշոր կենտրոնի ներկայացումը համաշխարհային հանրության,
- Երևան քաղաքում միջազգային համաժողովների, սեմինարների, կլոր սեղանների և այլ ձևաչափերի հանդիպումների կազմակերպումը և անցկացումը,
- Առկա միջազգային փորձի, իրականացվող ծրագրերի և նախագծերի ուսումնասիրումը, համագործակցության դաշտի ընդլայնումը գործունեության առաջնահերթ ուղղություններով,
- Երևան քաղաքում օտարերկրյա ներդրումների ներգրավումը, միջազգային համատեղ ծրագրերի իրականացումը,
- Զբոսաշրջության զարգացման խթանումը:

Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ի Հ Ե Տ Ա Ր Դ Յ Ո Ւ Ն Ա Վ Ե Տ Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ն Ե Ր Ի Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ

Սփյուռքահայության կենսունակության գրավականը հայրենիքի հետ նրա բազմաբնույթ շարունակական հարաբերություններն են:

Հայաստան - Սփյուռք գործակցության հայեցակարգի համաձայն՝ Սփյուռքը Հայաստանի համար համարվում է համաշխարհային ինտեգրման հուսալի և արդյունավետ կամուրջ:

Տարբեր ուղղություններով զարգացող Հայաստան-Սփյուռք փոխադարձ կապերի ակտիվացումն առավել արտահայտիչ է զբոսաշրջության, և սփյուռքահայերի կողմից ներդրումների ակտիվացմամբ, ավանդական դարձած համահայկական մշակութային, մարզական, գիտակրթական, երիտասարդական և այլ միջոցառումների անցկացմամբ:

Հաշվի առնելով, որ այս միջոցառումների գերակշիռ մասը կազմակերպվում է Երևանում, ինչպես նաև ռազմավարական նպատակ ունենալով Հայաստան - Սփյուռք կապերի և գործակցության առավել ազգանպաստ ապահովումը, գերակա խնդիր է դառնում Երևանում սփյուռքի հետ իրականացվող աշխատանքների համակարգումը, որը և կդառնա Երևանի քաղաքապետարանում ստեղծվելիք կառույցի՝ Սփյուռքի հետ կապերի ծառայության աշխատանքների գլխավոր ուղղությունը:

Գերակայություններ

- ✓ *Երևանի և սփյուռքի հետ գործակցության հայեցակարգի մշակումը՝ նպատակաուղղված Երևանի զարգացման ծրագրերին սփյուռքահայության ներուժի առավել ակտիվ մասնակցությանը,*
- ✓ *Օժանդակություն համահայկական միասնական տեղեկատվական դաշտի ձևավորմանն ու զարգացմանը,*
- ✓ *Բնագավառում ներգրավված ՀՀ պետական մարմինների, հայաստանյան և միջազգային կազմակերպությունների և Երևանի քաղաքապետարանի միջև*

արդյունավետ և գործնական համագործակցության համակարգման մեխանիզմների մշակումը և ապահովումը,

- ✓ Քաղաքապետարանի տարբեր ստորաբաժանումների գործունեության ծրագրերում ոլորտին համապատասխան սփյուռքի հետ համագործակցության գերակա խնդիրների դասակարգումը և դրանց ներառումը գործունեության ծրագրերում,
- ✓ Շահագրգիռ մարմինների հետ ոլորտի վիճակի ուսումնասիրության արդյունքների հիման վրա Երևանում զբոսաշրջության, գիտակրթական, մարզական, մշակութային և այլ ուղղությունների զարգացմանը նպաստող ներդրումային ծրագրերի փաթեթների մշակմանը և այդ ծրագրերի իրականացմանն ուղղված միջոցառումների համակարգումը,
- ✓ Երևան քաղաքում սփյուռքահայ գործարարների ներդրումային գործունեության աջակցության հայեցակարգի մշակումը և համակարգումը:

Զ Բ Ո Ս Ա Շ Ր Ջ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վիճակի գնահատում

2003թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունել է «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը, իսկ ՀՀ կառավարության կողմից զբոսաշրջությունը ճանաչվել է տնտեսության զարգացման գերակա ճյուղ՝ ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված զբոսաշրջության զարգացման հայեցակարգի (2008թ. փետրվարի 13-ին):

Զբոսաշրջությունը 2009-ին կազմել է ՀՀ համախառն ներքին արդյունքի 4,7%-ը: Զբոսաշրջիկների մեծ մասը Ռուսաստանից (34,0%), Վրաստանից (28,1%), Իրանից (7.8%), ԱՄՆ-ից (4,5%), Ֆրանսիայից (3,5%), Գերմանիայից (2,9%), Ուկրաինայից (2,0%) են:

Շնորհիվ Հայաստանի Հանրապետության կողմից զբոսաշրջության ոլորտում իրականացվող հետևողական և ակտիվ քաղաքականության, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք կապերի աշխուժացման, վերջին տարիներին Երևանում գրանցվել է զբոսաշրջիկների 20-25% աճ, սակայն այդ աճը կրում է սեզոնային բնույթ, զբոսաշրջիկների մեծ մասն այցելում է Հայաստան մայիս-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Ըստ հետազոտություններով ձևավորված փորձագիտական գնահատումների՝ 2009թ. հունվար-սեպտեմբերին հանրապետություն են ժամանել 422807 զբոսաշրջիկներ՝ 2008թ. նույն ժամանակաշրջանի 399691 զբոսաշրջիկների դիմաց կամ աճի տեմպը կազմել է 105,8%: 2009թ. զբոսաշրջության նպատակով ՀՀ-ից մեկնել է 396560 մարդ կամ 2008թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ աճի տեմպը կազմել է 101,2%:

Հիմնախնդիրները

Հայաստանում, զբոսաշրջության զարգացման հայեցակարգի համաձայն, ոլորտն ունի սոցիալական, մշակութային, բնապահպանական, քաղաքական

նշանակություն, որոնց հիման վրա էլ կառուցվել են Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրներն ու ուղղությունները:

- *Իրավական ոլորտ. Երևան քաղաքի զբոսաշրջային գործունեության և դրա առաջնային ուղղությունների զարգացման համար ստեղծված չեն բարենպաստ իրավական, տնտեսական, և կառուցվածքային պայմաններ:*
- *Արտաքին կապեր. զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ծրագրերի ապահովումը պատշաճ մակարդակի չէ:*
- *Սպասարկման ոլորտ. Երևան քաղաքում սպասարկման որակը բավարար չէ:*
- *Երևան քաղաքի վարչական շրջանները զարգացած չեն զբոսաշրջության տեսանկյունից:*

Գերակայություններ, հիմնական նպատակներ և միջոցներ

- ✓ *զբոսաշրջիկների՝ Երևանում շրջանում ընթացքում ծագած իրավունքների ապահովման համակարգի ստեղծմամբ կկանոնակարգվեն քաղաք ժամանած զբոսաշրջիկների խնդիրները.*
- ✓ *զբոսաշրջության այնպիսի համակարգի ստեղծում, որը կնպաստի Երևան քաղաքի բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ձևավորմանը.*
- ✓ *միջազգային կապերի ընդլայնման, քույր և գործընկեր քաղաքների միջև արդյունավետ համագործակցության միջոցով, ինչպես նաև համատեղ ծրագրերի մշակմամբ կընդլայնվեն Երևան քաղաքի միջազգային կապերը.*
- ✓ *քաղաքի կենտրոնի սրճարանների, ռեստորանների, հյուրանոցների համապատասխան կադրերի վերապատրաստմանն ուղղված միջոցառումները կբարելավեն սպասարկման ոլորտը Երևան քաղաքում.*
- ✓ *Երևան քաղաքի վարչական շրջաններում զբոսաշրջիկների համար միջոցառումների, նրանց նկատմամբ ցուցաբերած հյուրասիրությունը կնպաստի համայնքի սոցիալական աշխուժությանը.*

- ✓ «Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալություն» ՓԲ ընկերության, ինչպես նաև ոլորտում ճանաչում ունեցող հայաստանյան և օտարերկրյա կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակների ընդլայնում:

Երևան քաղաքում զբոսաշրջության զարգացման ծրագրային միջոցառումները

Իրավական-կազմակերպական ոլորտ

- հայեցակարգի կամ երկարատև զարգացման ծրագրի մշակում՝ Երևանի քաղաքապետի կամ ավագանու կողմից հաստատելու նպատակով.
- հայեցակարգի կամ զարգացման ծրագրի հաստատումից հետո քաղաքապետարանի շահագրգիռ ստորաբաժանումներից ներգրավելով մեկական ներկայացուցիչ ստեղծել հանձնաժողով՝ փորձի փոխանակման, բյուջեի կազմման, մեխանիզմների մշակման նպատակով.
- Երևան քաղաքի պատմամշակութային արժեքների գույքագրում՝ համապատասխան մասնագետների մասնակցությամբ.
- Երևան քաղաքի զբոսաշրջության ոլորտի հետազոտությունների և վերլուծությունների ապահովում՝ համագործակցելով սոցիոլոգիական կազմակերպությունների հետ.
- Երևանի ներկա իրավիճակի գնահատում՝ համեմատական տալով միջազգային փորձի հետ.
- Երևան այցելող զբոսաշրջիկների համար Երևան քաղաքապետարանի կողմից գրանցման մեխանիզմների մշակում, քարտի կամ գրանցման որևէ այլ փաստաթղթի տրամադրում, ինչը կտա որոշակի արտոնություններ՝ Երևան քաղաքում սպասարկման ոլորտից օգտվելու դեպքում (ապահովագրում, սրճարանների, խանութների, ռեստորանների զեղչեր և այլն):

Տեղեկատվական ոլորտ

- Երևան քաղաքում տեղեկատու համակարգի ներդրում.

- Երևան քաղաքի կանգառներում տեղեկատվական վահանակների մշակում և տեղադրում.
- Երևան քաղաքի փոքր կենտրոնում տեղեկատվական սարքավորումների տեղադրում, որտեղ մի քանի լեզվով զբոսաշրջիկը կարող է ստանալ տարաբնույթ տեղեկատվություն (քաղաքի երթուղիներ, գվարճանքի կենտրոններ, քարտեզ և այլն).
- Երևանի փողոցներում առավել կարևորություն ներկայացնող տեսարժան վայրերի և պատմամշակութային վայրերի ու կենտրոնների անվանումների վահանակների ամրացում, ինչպես նաև ցուցանակների ու նկարների ավելացում՝ մատնանշելով ճանապարհային ուղղությունները.
- Երևանով հատուկ երթուղու մշակում, որը կկիրառվի ուղեկցորդների և զբոսավարների կողմից՝ որպես պարտադիր ծրագիր Հայաստան ժամանած զբոսաշրջիկների համար.
- Երևան քաղաքում ֆորումների կազմակերպում՝ Երևան քաղաքի հետ համագործակցող բոլոր քաղաքներում գործող շահագրգիռ ճամփորդական կազմակերպությունների մասնակցությամբ՝ Երևանը ներկայացնելու և գովազդելու նպատակով.
- Երևանի մասին գովազդային տեսահոլովակի և ֆիլմի նկարահանում՝ մարքեթինգային գործողությունների ծրագիրն իրականացնելու համար.
- տարբեր լեզուներով բուկլետի ու բրոշյուրի տպագրում, որտեղ կնկարագրվեն Երևանի տեսարժան ու գվարճանքի բոլոր վայրերը, պատմամշակութային արժեքները, ինչպես նաև առաջին անհրաժեշտության հեռախոսահամարները (շտապ օգնություն, փրկարար ծառայություն, ոստիկանություն, թեժ գիծ և այլն):
- քաղաքապետարանում ստեղծել «թեժ» գիծ զբոսաշրջիկների առաջարկների և գանգատների համար.
- առաջարկել Երևանի բոլոր քույր և գործընկեր քաղաքներին իրենց վեբ-կայքերում տեղադրել հղում դեպի Երևանի վեբ-կայք (www.yerevan.am):

Միջազգային և տեղական համագործակցության ոլորտ

▪ Ծրագրի շրջանակներում համատեղ նախագծերի իրականացում ՀՀ Էկոնոմիկայի, սփյուռքի, մշակույթի նախարարությունների հետ՝ փորձի փոխանակում, ծրագրերի պատրաստում.

▪ միջազգային կազմակերպությունների հետ (Համաշխարհային բանկ, USAID, UNESCO) համագործակցություն՝ ֆինանսական միջոցների ներգրավում, դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն.

▪ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին Երևան քաղաքի մասնակցության ապահովում, գովազդային և տեղեկատվական նյութերի մշակում.

▪ բնակչության թվաքանակով և աշխարհագրական դիրքով նմանատիպ մի քանի քաղաքների հետ համագործակցություն, փորձի փոխանակում հետևյալ հարցերի շուրջ՝ զբոսաշրջությունից ստացվող եկամուտների հաշվառման, համայնքային բյուջե մուտքերի ապահովման մեխանիզմների ուսումնասիրության, ենթակառուցվածքների աշխատանքների ուսումնասիրության.

▪ Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի տարբերակով օտարերկրյա հայաշատ մի շարք քաղաքներում (դրանցից են՝ Կիև, Մինսկ, Ռոստով, Եկատերինբուրգ, Կրասնոդար, Փարիզ, Լիոն, Մարսել, Աթենք, Դուբայ և այլն) նշանակել Երևանի քաղաքապետի կողմից լիազորված ներկայացուցիչներ (լիազորությունները կվերահաստատվի կամ կնշանակվի 3 տարին մեկ), որոնց հիմնական գործառույթը կլինի ներկայացնել Երևան քաղաքը, կազմակերպել տվյալ քաղաքներում աշխատանքային հանդիպումներ ճամփորդական կազմակերպությունների մասնակցությամբ: Սանկտ Պետերբուրգի օրինակով կազմակերպել օտարերկրյա հայաշատ քաղաքների զբոսաշրջային կազմակերպությունների ներկայացուցիչների այցը Երևան՝ ծանոթացնելով տեսարժան վայրերին, ծառայությունների որակին և այլն: Տարին մեկ Երևանի քաղաքապետարանում հրավիրել Երևանի ներկայացուցիչների նիստ (ծրագրի իրականացման համար նախատեսվում է 7 մլն դրամ).

▪ Հաշվի առնելով Հայաստան–Սփյուռք արագ զարգացող կապերը՝ տարաբնույթ համաժողովների, հավաքների, մշակութային այլ միջոցառումների միջոցով զարգացնել Երևան քաղաքի կապերը տարբեր երկրներում գտնվող

գաղթօջախների հետ, ինչպես նաև այս ոլորտի շրջանակում համագործակցել Սփյուռքի նախարարության հետ:

Մշակութային միջոցառումներ

- Զբոսաշրջության միջազգային օրվա ամենամյա նշում և միջոցառումների կազմակերպում (սեպտեմբերի 27) – այդ օրը նախատեսվում է անցկացնել տոնական միջոցառումներ, ֆոտոցուցահանդես «Երևանը իմ աչքերով», որը կանցկացվի երևանաբնակների և Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների մասնակցությամբ, կլոր սեղան, որն էլ կամփոփվի երեկոյան համերգով արտերկրից հրավիրված խմբի մասնակցությամբ (ծրագրի համար նախատեսվում է 6 մլն դրամ).

- թանգարանների աշխատանքային ռեժիմի կանոնակարգում՝ հատկապես տարվա առավել ակտիվ սեզոնին. թանգարանները գործեն հատկապես հանգստյան օրերին: Դա կխթանի ներքին զբոսաշրջությունը Երևանում.

- ՀՀ-ում հավատարմագրված դեսպանատների հետ համագործակցելով՝ կազմակերպել ցուցահանդեսներ, փառատոներ, համապատասխան երկրների մշակութային օրեր.

- Սպասարկման ոլորտը Երևան քաղաքում բարելավելու նպատակով, նախատեսվում է անցկացնել ամենամյա մրցույթ-փառատոն, որտեղ համապատասխան ժյուրին կորոշի քաղաքի լավագույն ռեստորանային համալիրը, սրճարանը, բարմենը, խոհարարը, մատուցողը, հյուրանոցը և այլն (Ծրագրի համար նախատեսվում է 2 մլն դրամ).

- յուրաքանչյուր տարի անցկացնել հանդիպում-կլոր սեղան Երևան քաղաքի զբոսաշրջային կազմակերպությունների տնօրենների մասնակցությամբ (ծրագրի համար նախատեսվում է 300.000-500.000 դրամ).

- «Արվեստի փառատոն», որը կանցկացվի բոլոր քույր և գործընկեր քաղաքների միջև: Ծրագրի նպատակն է համախմբել և ակտիվացնել քույր քաղաքների միջև եղած մշակութային, մարզական և երիտասարդական կապերը: Նախատեսվում է անցկացնել մրցույթներ երգի, պարի, գեղանկարչության, լուսանկարչության, նորաձևության և մի շարք այլ ոլորտներում:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն Ե Վ Մ Շ Ա Կ Ո Ւ Յ Թ Ի Հ Ո Ւ Շ Ա Ր Ձ Ա Ն Ն Ե Ր

Երևան քաղաքի տարածքում հաշվառված է պատմության և մշակույթի 401 հուշարձան, որից 288-ը՝ պետական սեփականության, իսկ 113-ը՝ Երևանի համայնքային սեփականության: Պետական սեփականություն համարվող հուշարձանների ցանկը հաստատված է ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 385-Ն որոշմամբ:

Աղյուսակ 1

Երևան քաղաքի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձաններ

Հ/Հ	Երևանի վարչական շրջան	Ընդամենը հուշարձանների քանակը	Այդ թվում՝	
			Պետական սեփականություն	Երևանի համայնքային սեփականություն
1.	Աջափնյակ	18	16	2
2.	Ավան	27	27	-
3.	Արաբկիր	27	19	8
4.	Դավթաշեն	1	1	-
5.	Էրեբունի	37	28	9
6.	Կենտրոն	145	119	26
7.	Մալաթիա- Սեբաստիա	21	9	12
8.	Նոր Նորք	64	25	39
9.	Նորք-Մարաշ	2	2	-
10.	Նուբարաշեն	5	1	4
11.	Շենգավիթ	36	33	3
12.	Քանաքեռ-Զեյթուն	18	8	10
	Ընդամենը	401	288	113

Թվով 145 հուշարձաններ (36,2%) տեղադրված են Կենտրոն վարչական շրջանի տարածքում, որից 119-ը՝ պետական սեփականության: Երևանի տարածքում

հաշվառված պատմության և մշակույթի հուշարձաններից 155-ը առանձին կանգնած հուշարձաններ են, 33-ը՝ քարայր-կացարաններ, 20-ը՝ խաչքարեր, 20-ը՝ հուշաղբյուրներ, 19-ը՝ հուշակոթողներ, 11-ը՝ տուն-թանգարաններ, 6-ը՝ եկեղեցիներ (Աղյուսակ 1):

Հաշվի առնելով, որ «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն հուշարձանների պահպանության և անվթարության ապահովման պարտավորությունները դրված են հուշարձանների սեփականատերերի վրա, Երևանի քաղաքապետարանը նշված աշխատանքներն իրականացնելու է միայն իր սեփականություն հանդիսացող 113 հուշարձանների մասով, իսկ ՀՀ մշակույթի նախարարության հաշվեկշռում գտնվող 288 հուշարձանների պահպանության և անվթարության ապահովման պարտավորությունները պետք է իրականացնի նախարարությունը:

Երեբունի ամրոցի պատմական, մշակութային և գիտական արժեքներն առավելագույնս բացահայտելու և Երեբունիին Երևանի այցեքարտ դարձնելու նպատակով Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ մշակվել է հուշարձանի վերականգնման և վերակառուցման ծրագիր, որի իրականացումը նախատեսված է սկսել 2010 թվականին:

Կիրականացվեն միջոցառումներ Երևան քաղաքի տարածքում գտնվող առավել վտանգված հուշարձանների ամրակայման և պահպանման ուղղությամբ:

Երևանի գլխավոր պողոտայի տարածքում մոտ 2.2 հա մակերես կազմող Աբովյան, Փ.Բուզանդի, Ե.Կողբացի և Արամի փողոցներով կիրականացվի «Հին Երևան» պատմաճարատարապետական միջավայրը:

Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի Ն Ե Ր Ի Դ Ի Մ Ո Ի Մ Ն Ե Ր

2009 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանը մշտական ուշադրության կենտրոնում է պահել քաղաքացիների ընդունելության կազմակերպման և նրանց դիմումների քննարկման խնդիրները: Հունվար-հոկտեմբեր ամիսներին քաղաքապետարանում մուտք է արվել քաղաքացիների 46883 դիմում (2008թ. նույն ժամանակահատվածում՝ 46324):

2009 թ. դիմումները ըստ գործունեության տարբեր ոլորտների

N/N	Ստացված դիմումները ըստ ոլորտների	Դիմումների քանակը	Տեսակարար կշիռը %
1	Ընդամենը դիմումներ, որից՝	46883	
2	Կենցաղ-կոմունալ բնագավառ	11748	25.0
3	Գույքային հարցեր	9376	20.0
4	Քաղաքաշինության ոլորտ	8438	18.0
5	Իրավունքների գրանցում	7228	15.0
6	Սոցիալական և առողջապահական ոլորտ	4219	9.0
	Իրավաբանական հարցեր	2579	5.5
	Հողամասի վարձակալության ժամկետի երկարացում	1728	4.0
9	Կրթության և առողջապահության բնագավառ	468	1.0
10	Տրանսպորտի ոլորտ	187	0.01
11	Այլ ոլորտներ	705	2.0

2009թ. մարտ-նոյեմբեր ամիսներին կատարվել են ծավալուն աշխատանքներ անհատական բնակելի տների նկատմամբ քաղաքացիների իրավունքների վերականգնման ուղղությամբ: Այդ ընթացքում կայացվել են Երևանի քաղաքապետի 6280 որոշումներ, որոնք կազմում են ընդունված 7291 որոշումների (որից 167-ը՝ իրացման գոտիներում) 86,0%-ը:

«Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո՝ 2008թ. մայիսի 15-ից մինչև 2009թ. նոյեմբերի 15-ը ժամանակահատվածում:

Նշված որոշումների համաձայն՝ մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի տները, դրանցով զբաղեցրած, ինչպես նաև այդ տներին կից 300,0 քմ հողամասերը անհատույց կարգով տրամադրվել են քաղաքացիներին: Երևանի քաղաքապետի կողմից 2009թ. մարտի 10-ից հետո ընդունված որոշումներով ընթացք տրվեցին 2008 թվականից անպատասխան թողնված քաղաքացիների 6500-ից ավելի դիմումներին: Այդ ամիսներին լուծվեցին նաև հողամասերի վարձակալության ժամկետների երկարացման վերաբերյալ նախկինից կուտակված՝ քաղաքացիների մոտ 1700 դիմումներին:

Քաղաքացիների դիմումների քննարկման գործընթացները կանոնակարգելու նպատակով 2010 թվականին Երևանի քաղաքապետարանում և վարչական շջաններում կներդրվի փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային նոր համակարգ:

Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Ջ Մ Ի Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Ո Ւ Մ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը վերակազմավորվեց ՀՀ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկի, 12 թաղային համայնքները վերանվանվեցին վարչական շրջանների, համայնքային ենթակայության կազմակերպություններն անցան Երևանի քաղաքապետարանի ենթակայության, որի արդյունքում Երևանի քաղաքապետարանի կառուցվածքում և աշխատակիցների թվաքանակում տեղի ունեցան զգալի փոփոխություններ:

Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը հաստատվելուց հետո Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների թվով 1934 աշխատակիցներ վերահրամանագրվեցին համայնքային ծառայության պաշտոններում, իսկ թափուր պաշտոնների համար այլ անձանց հետ կնքվեցին ժամկետային աշխատանքային պայմանագրեր:

Այսօր անձնակազմի կառավարման բաժինը վարում է թվով 1900-ից ավել համայնքային ծառայողների, 500-ից ավելի տնօրենների և մոտ 350 սպասարկող անձնակազմի անձնական գործեր, մշակում է համայնքային ծառայողների և տնօրենների մրցույթներ և ատեստավորում անցկացնելու համար գրավոր և բանավոր հարցաշարերի կազմման աշխատանքները:

Նախատեսվող մրցույթներն ու ատեստավորումները պատշաճ մակարդակով և որակով անցկացնելու համար անձնակազմի կառավարման բաժինը կապահովվի ժամանակակից համակարգչային տեխնիկայով և համապատասխան համակարգչային ծրագրերով:

Համայնքային ծառայողների մասնագիտական որակավորումը էականորեն բարձրացնելու համար նախատեսվում է պարբերաբար կազմակերպել վերապատրաստման տեսական և գործնական դասընթացներ, սեմինարներ և գործուղումներ՝ օգտագործելով միջազգային ժամանակակից առաջավոր փորձը:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր համայնքային ծառայող երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման:

Համայնքային ծառայության յուրաքանչյուր պաշտոնի անձնագրով սահմանվող համայնքային ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների, ինչպես նաև կառավարչական հմտությունների կատարելագործման նպատակով, ըստ մասնագիտական ոլորտների (բնագավառների) և կոնկրետ թեմաների, կմշակվեն վերապատրաստման համապատասխան ծրագրեր և դրանք կներկայացվեն ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատմանը՝ հետագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ուսումնական հաստատությունների ընտրության մրցույթներ անցկացնելու համար:

2010 թվականի ընթացքում բյուջետային միջոցների հաշվին ենթակա են վերապատրաստման շուրջ 300 համայնքային ծառայողներ՝ հաշվի առնելով, որ նախկինում քաղաքացիական ծառայողների համար 72 դասաժամերով իրականացվող վերապատրաստման դասընթացների դեպքում մեկ համայնքային ծառայողի համար նախատեսվող գումարը կազմել է 12800 ՀՀ դրամ, որից 2400 ՀՀ դրամը դասախոսի 1 ժամվա վարձավճարն է:

Վերապատրաստման դասընթացների արդյունավետությունն ու օգտակարությունը բարձրացնելու համար նախատեսվում է մշակել և ներդնել ծրագրեր ոչ միայն համապատասխան թեմաներով, այլև կիրառել այնպիսի մոդել, որով համայնքային ծառայողը պարտադրված լինի ամենայն լրջությամբ ունկնդրելու դասախոսությունները՝ վճարված դասաժամերի համար և ստացած տեղեկատվությունն ու գիտելիքները հաղորդի համանման գործառույթներ իրականացնող այլ համայնքային ծառայողների:

Կառուցվածքային, առանձնացված ստորաբաժանումների, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների կադրային գործի վարման միասնական համակարգ ապահովելու համար Երևանի քաղաքապետարանի, վարչական շրջանների և համայնքային ենթակայության

կազմակերպությունների միջև կստեղծվի համակարգչային ցանց՝ աշխատակիցների անձնական տվյալների ամբողջական բազա ապահովելու նպատակով:

Նախատեսվում է նաև ներդնել անձնակազմի էլեկտրոնային կառավարման համակարգ, որը կնպաստի համայնքային ծառայողների գործունեության արդյունավետության բարձրացմանը, արդի ծրագրերի ներդրմամբ կկատարելագործվի կադրային, արխիվային և անձնական գործերի վարման աշխատանքները:

Կմշակվի և Երևանի քաղաքապետարանի էլեկտրոնային կայքում պարբերաբար կտեղադրվի համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրով սահմանված իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանների գործառույթների վերաբերյալ տեղեկատվություն:

Համայնքային ծառայության ինստիտուտի զարգացման և հասարակությանը առավել իրազեկ դարձնելու նպատակով կստեղծվի համայնքային ծառայության առջև ծառայած խնդիրների ու վարվելակերպի (էթիկայի) կանոններին առնչվող ուսումնական ծրագիր, որը համապատասխան մարմինների աջակցությամբ կներդրվի կրթական համակարգում՝ առանձին դասընթացների, ապա նաև մասնագիտության ձևով:

Հասարակության և համայնքային բնակչության իրավագիտակցության բարձրացման նպատակով կկազմակերպվեն հանդիպում-դասախոսություններ բնակչության համար, ինչպես նաև կկազմվեն հաշվետվություններ կատարված կազմակերպչական և դասախոսական աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Կսահմանվեն «լավագույն» և այլ տիտղոսներ համայնքային ծառայության ոլորտում արժանավոր անձանց համար:

Մ Ի Ջ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ֆ Ի Ն Ա Ն Ս Ա Կ Ա Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր Ի Կ Ո Ղ Մ Ի Ց Ն Ա Խ Ա Տ Ե Ս Վ Ո Ղ Ն Ե Ր Դ Ր Ո Ի Մ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ր Ե Ր Ը

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ Երևանի քաղաքապետարանի վարած բանակցությունների շնորհիվ, 2010-2011թթ. Երևանում կսկսվի մի շարք ներդրումային խոշոր ծրագրերի իրականացումը, այդ թվում.

1. Ճանապարհային հանգույցների շինարարություն.

ա) Արգավանդը Շիրակի փողոցին կապող ճանապարհի շինարարություն՝ 1,5կմ, 12,5 մլն ԱՄՆ դոլար՝ Ասիական զարգացման բանկ-վարկային ծրագիր (հուշագիր).

բ) Շիրակի փողոցը Արտաշատի խճուղուն կապող ճանապարհի շինարարություն՝ 2,8 կմ, 12,9 մլն ԱՄՆ դոլար՝ Ասիական զարգացման բանկ.

գ) Դավթաշենի կամուրջը Աշտարակի խճուղուն կապող ճանապարհի շինարարություն՝ 3,0կմ, 21,6 մլն ԱՄՆ դոլար՝ Ասիական զարգացման բանկը (հուշագիր).

2. Մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանի նոր մուտքի կառուցում Սայաթ-Նովայի պողոտայից (նախկին լեզվի ինստիտուտի մոտից)՝ մոտ 35 մլն ԱՄՆ դոլար՝ Ասիական զարգացման բանկ.

3. Քաղաքային կոշտ թափոնների կառավարման՝ պետություն-մասնավոր համագործակցության ծրագիր՝ Համաշխարհային բանկի հետ մասնավոր օպերատոր.

ա) աղբահանության օպերատորի մրցույթ՝ ներդրումներ 20 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ աղբահանող մեքենաների, տարաների տեսքով.

բ) թափոնակուտակչի օպերատորի մրցույթ՝ ներդրումներ 5 մլն ԱՄՆ դոլարի չափով՝ Նուբարաշենի աղբավայրում միջազգային չափանիշներին համապատասխանող նոր թափոնակուտակչի կառուցման համար.

4. Բիոգազերի հավաքման և այրման ծրագրի շարունակություն ճապոնական «Շիմիձու» ընկերության հետ. ծրագիրն սկսվել է 2009թ.:

5. Մետրոպոլիտենի անվտանգության միջոցառումների ներդրումային ծրագիր՝ 15 մլն եվրո, որից 5 մլն եվրոն՝ դրամաշնորհ՝ Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ:

6. Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման նպատակով Համաշխարհային բանկի կողմից տրամադրված արտոնյալ վարկը կազմում է 20.0 մլն ԱՄՆ դոլարը, իսկ ՀՀ կառավարության մասնակցության մասնաբաժինը՝ 2.0 մլն ԱՄՆ դոլար:

Պայմանագրի մեկնարկի սկզբից իրացվել է ամբողջ գումարի 50%-ը: Մնացած գումարը կծախսվի 2010թ. ընթացքում՝ շինարարական աշխատանքների կատարման, ապրանքների ու սարքավորումների ձեռքբերման, ինչպես նաև խորհրդատվական աշխատանքների համար:

Ֆրանսիայի կառավարության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է 24.9 մլն եվրո վարկ, որից 10.5 մլն-ը կհատկացվի Աերացիայի կեղտաջրերի մաքրման կայանի առաջնային մաքրման կառուցվածքների վերանորոգմանը: ՀՀ կառավարության մասնակցության մասնաբաժինը կազմում է 2.4 մլն եվրո:

Միջազգային կազմակերպությունների հետ ներդրումային ծրագրերի շուրջ ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն միջնաժամկետ, սկսած 2009 թ.-ից 4 տարի տևողությամբ, հատվածում իրականացման ենթակա են ներքոհիշյալ ենթածրագրերը.

1. Նուբարաշենում բիոգազերի հավաքման և այրման ծրագիր: Ծրագրի ընդհանուր տևողությունը 15 տարի է: Քառամյա ժամկետում կիրացվի 5,5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ներդրումներից մոտ 3,0 մլն ԱՄՆ դոլարը: Մոտ 2,5 մլն ԱՄՆ դոլար ներդրումներ արդեն իրականացվել են: Ըստ կանխատեսումների և CO₂ գազից կվերածվի և կայրվի 197 հազ. տոննա համարժեք գազեր:

2. Մետրոյի անվտանգության ծրագիր:

Ծրագրի արժեքը 15,0 մլն եվրո՝ որից 10 մլն Երվո՝ վարկ, 5 մլն եվրո՝ դրամաշնորհ:

Ծրագրի բաղադրիչները ներկայացված են կից աղյուսակում, այն ամբողջությամբ պետք է ավարտվի մինչև 2012թ.:

Ծրագրի առաջին փուլի ընթացքում պետք է իրականացվեն նաև նախապատրաստական աշխատանքներ, 2-րդ փուլի ընթացքում՝ դրենաժային թունելի շինարարության ուղղությամբ:

3. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ նախատեսված ծրագրերի՝ ճանապարհային 3 հանգույցների շինարարության և Երիտասարդական մետրոյի նոր մուտքի կառուցման (ներկայացված է մանրամասն նախորդ գրության մեջ) համար նախատեսված է իրականացման 5 տարի ժամկետ, սկիզբը՝ 2010թ.: Կախված որոշակի օբյեկտիվ հանգամանքներից՝ ծրագիրը սկսելու իրատեսական ժամկետ է համարվում 2011թ.-ը:

Ներդրումների ծավալը մոտ 82 մլն ԱՄՆ դոլար

4. Քաղաքային կոշտ թափոնների կառավարում:

Ծրագիրը սկսելու նախնական ժամկետն է 2010թ. 2-րդ կիսամյակը: Ոլորտը մրցույթի կարգով կառավարման է հանձնվելու օպերատորի 8-10 տարի ժամկետով:

Ներդրումները, մոտ 20 մլն ԱՄՆ դոլար, ամբողջությամբ կիրականացվեն առաջիկա 1-2 տարիների ընթացքում:

5. Բանակցություններ են տարվում և առաջիկա 4 տարիների համար ներդրումային ծրագրեր սկսելու խնդիրներ են դրված հետևյալ ոլորտներում.

ա) մետրոյի ընդլայնում դեպի Աջափնյակ

բ) ավտոկայանատեղիների կոնցեսիոն կառավարում

գ) վերգետնյա տրանսպորտային պարկի նորացում, անցում խոշոր տարողության տրանսպորտային տեսակների:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2010-2013ԹԹ. ԾՐԱԳԻՐԸ

ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աջափնյակ վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին: Այն Երևան քաղաքի հյուսիսարևմտյան թաղամասն է, որը կազմավորվել է 1950-ական թվականներին, ունի ընդամենը կեսդարյա պատմություն: Աջափնյակը զբաղեցնում է 2568 հա տարածք, փողոցների երկարությունը՝ 77,5 կմ, փողոցների մակերեսը՝ 940 հազ. քմ (մանրամասները տե՛ս «Աջափնյակ վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Աջափնյակ վարչական շրջանը զբաղեցնում է Երևանի նախկին Մաշտոցի շրջանի տարածքի հիմնական մասը՝ առանց Դավթաշեն վարչական շրջանի չորս զանգվածի և գյուղի: Աջափնյակը գտնվում էր Երևանի հյուսիս արևմտյան մասում, Հրազդան գետի աջ ափին, որից էլ ստացել է իր անվանումը:

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Վարչական շրջանի բնակչությունը 01.01.2009թ. դրությամբ կազմել է 107,5 հազ. մարդ 38, այդ թվում՝ 46,7 տոկոս տղամարդիկ և 53,3 տոկոս կանայք: Ծնվածների թիվը 2008թ.՝ 1269, վարչական շրջանում բնակվում են մոտ 1,2 հազ. փախստականներ:

³⁸ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

Վիճակի նկարագիր

Վարչական շրջանի տարածքում գործում են հանրապետական նշանակության 5 հիվանդանոց, 1 ամբուլատոր պոլիկլինիկա, 20 հանրակրթական դպրոց, 3 բուհ, արհեստակցական 1 ուսումնարան, մասնավոր 2 վարժարան, նախադպրոցական 16 հիմնարկներ, 1 գիշերօթիկ կրթահամալիր, արտադպրոցական 1 հիմնարկ՝ ՄՊՄԿ, 2 երաժշտական դպրոց, 1 գեղարվեստի դպրոց, 2 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 գրադարանային կենտրոնացված համակարգ (3 մասնաճյուղով), 1 մանկապատանեկան համալիր մարզադպրոց, մասնավոր 1 մանկապարտեզ, 4 գիտահետազոտական ինստիտուտներ, 21 արդյունաբերական, 6 շինարարական, 1 տրանսպորտային, 3 գյուղատնտեսական ձեռնարկություններ: Աջափնյակում գրանցված են մոտ 1700 արտադրական և ոչ արտադրական մասնավոր ձեռնարկություններ և անհատ ձեռներեցներ:

Անմիփթար վիճակում է գտնվում վարչական շրջանի վարչական շենքը, անհրաժեշտ է եղած գույքի նորացում, թարմացում:

Զեռուցման համակարգը վարչական շրջանում արդեն 18 տարի չի գործում: Գազամատակարարումը վերականգվում է վարչական շրջանի սեփական տներում, ցածրահարկ և բարձրահարկ բնակելի շենքերում: Կանաչապատման և ոռոգման բնագավառում կանաչ տարածքների ընդլայնման, ոռոգման ջրագծերի կապիտալ վերանորոգման և նորերի անցկացման խիստ պահանջ կա:

Սանմաքրման և աղբահանության մեքենայական պարկը կազմում է 28 միավոր մեքենա-սարքավորում, որոնցից շահագործման համար առայժմ պիտանի են 20-ը, խիստ կարիք է զգացվում թարմացման և նորոգման: Մաքրման ենթակա տարածքը՝ 739427 քմ, տեղափոխվող աղբի քանակը՝ 19 հազ. խմ (մանրամասները տե՛ս «Աջափնյակ վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Վարչական շրջանի ճանապարհային ցանցի (77,5 կմ, 1150 հազ. քմ) բարեկարգման մշտական պահանջ կա:

Երևանի վթարային շենքերի հիմնական մասը գտնվում է Աջափնյակում:

Աջափնյակ վարչական շրջանում առկա 419 բազմաբնակարան շենքերի վթարային ֆոնդն ունի հետևյալ կառուցվածքը՝

- երկրորդ կարգի վնասվածության 64 շենք,
- երրորդ աստիճանի վնասվածության 51 շենք,
- չորրորդ աստիճանի վնասվածության 7 շենք:

416 շենքերից 148-ը բարձրահարկ են (9-16 հարկանի), որտեղ կան 303 վերելակներ, որոնցից հիմնական վերանորոգման կարիք ունեն 46-ը, իսկ ընթացիկ վերանորոգման՝ 130-ը:

Վարչական շրջանն ունի անավարտ, մինչև 30%-ով կառուցված տասնյակ բնակելի շենքեր, որոնք հիմնականում տեղաբաշխված են Նորաշեն և Գ-3 թաղամասերում:

Համատիրությունների գործունեության կազմակերպումը վարչական շրջանում ընթանում է դժվարություններով՝ օրենսդրական բացի պատճառով:

Վարչական շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների 680 փոքր և միջին օբյեկտներ: Վարչական շրջանի տարածքում չկա ինչպես գյուղատնտեսական մթերքների մեծ շուկա, այնպես էլ առևտրա-արդյունաբերական ապրանքների տոնավաճառ, որի պատճառով սահմանափակ են առևտրի և սպասարկումների օբյեկտներից գանձվող տեղական տուրքերից և նրանց զբաղեցրած հողի վարձավճարներից գոյացող մուտքերը:

Մանկապարտեզները հիմնականում ապահովված են տիպային շենքերով, որոնք կարիք ունեն ընթացիկ կամ կայիտալ վերանորոգման, կոշտ և փափուկ գույքի թարմացման:

Կրթահամալիրի շենքը տեղակայված է 16-րդ թաղամասում գտնվող նոր տիպային մանկապարտեզի շենքում, զգացվում է հիմնական վերանորոգման, փափուկ և կոշտ գույքի, լաբորատոր սարքավորումների կարիք: Մշակութային հիմնարկներում (գրադարանային կենտրոնացված համակարգ, «Մ. Միրզոյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ, «Ա. Ցիցիկյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ) անհրաժեշտ է կատարել հիմնական վերանորոգման և լոկալ ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքներ:

«Աջափնյակ» գեղագիտական դաստիարակության կենտրոնում անհրաժեշտ է անցկացնել լոկալ ջեռուցման ցանց:

Վարչական շրջանում գործող միակ մարզադպրոցի շենքային պայմանները չեն բավարարում բնակչության մարմնակրթության և սպորտի զարգացման պահանջներին, մարզադպրոցը չունի դահլիճ: Տարիներ շարունակ պարապմունքներն անցկացվում են վարչական շրջանի հանրակրթական տարբեր դպրոցներում:

Իրականացվելիք միջոցառումների ներկայացում և գնահատում

Աջափնյակի սոցիալ-տնտեսական զարգացման համար մեծ նշանակություն կունենա Երևանի մետրոյի՝ Աջափնյակում կառուցվող կայարանի շինարարության ավարտումը, որի շահագործումն էապես կթեթևացնի Աջափնյակի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը:

Համաձայն ՀՀ կառավարության 25.10.2000թ. հ. 682՝ «ՀՀ տարածքում (բացառությամբ աղետի գոտու) վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» որոշման՝ Երևանում ծրագրի իրականացման պետական լիազորված մարմին է հանդիսանում Երևանի քաղաքապետարանը, որի ջանքերով ակնկալվում է շարունակել վարչական շրջանի 4-րդ կարգի վթարային շենքերի քանդման և բնակիչների վերաբնակեցման գործընթացը:

Վարչական շրջանում չկան մարզաբազաներ: Սպորտային հակումներ ունեցող երեխաները չունեն մարզվելու, մարզական վարպետությունը բարձրացնելու հնարավորություն: Դրությունը որոշ չափով շտկելու նպատակով առաջարկվում է Նազարբեկյանի անվան «Գ-3» թաղամասում կառուցել մարզադպրոց, որի վերաբերյալ հարցը բարձրացվել է ՀՀ վարչապետի 15.04.07թ. 10 մարզեր կատարած այցելությունների ընթացքում:

Աջափնյակ վարչական շրջանում 2010թ կիրականացվեն ծրագրեր 1436584.7 հազ. դրամ գումարի չափով (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Զարգացման ռազմավարությունը և հիմնական նպատակները

Վարչական շրջանի 2010թ. ռազմավարությունն է հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել վարչական շրջանի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, վարչական շրջանը դարձնել մաքուր, բարեկարգ, կանաչապատ և գրավիչ բնակավայր:

2010-2013թթ. վարչական շրջանի հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

- *մշակել նոր մոտեցումներ վարչական շրջանի անավարտ բնակելի շենքերի կառուցապատման և առանձին շենքերի շահագործման համար,*
- *շարունակել վարչական շրջանի 4-րդ կարգի վթարային շենքերի քանդման, բնակիչների վերաբնակեցման և 3-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքները՝ համագործակցելով ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի հետ,*
- *շարունակել բազմաբնակարան բնակելի շենքերի գազիֆիկացումը,*
- *Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպել վարչական շրջանում անհատական բնակարանային շինարարության գործընթացը, կառուցել նոր վարչական շենք,*
- *ապահովել վարչական շրջանի բնակելի շենքերի պահպանումը, շահագործումը և նորոգումը՝ աջակցելով վարչական շրջանի տարածքում գործող համատիրություններին ,*
- *ապահովել նոր ձեռքբերումներ վարչական շրջանի բնակարանային-կոմունալ տնտեսության, հանգստի և բնակելի շենքերի բակային տարածքների բարեկարգման բնագավառներում,*
- *ապահովել վարչական շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների զբաղեցրած շենքերում ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ,*

- վարչական շրջանի տարածքում զարգացնել փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությունը, պայմաններ ստեղծել նոր աշխատատեղեր ստեղծելու համար,
- շարունակել ոռոգման ցանցի ընդլայնման աշխատանքները,
- միջոցներ ձեռնարկել վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների սոցիալական, բնակարանային-կոմունալ, կենցաղային պայմանների բարելավման համար,
- բարելավել Երևան քաղաքի բյուջեի եկամուտների հավաքագրման աշխատանքները, բարձրացնել վարչական շրջանի բնակչությանը մատուցվող ծառայությունների մակարդակը և որակը:

Կրթություն, մշակույթ, սպորտ

Վարչական շրջանի թիվ 108, 109, 156, 166, 188, 197, 198, 233, 225, 243, 265, 310, 311 մսուր-մանկապարտեզները և կրթահամալիրը գտնվում են շենքային անբավարար վիճակում, որը չի համապատասխանում պահանջվող սանիտարահիգիենիկ նորմերին: Առաջնահերթ անհրաժեշտություն է ուշադրություն դարձնել շենքերի տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերանորոգման խնդրին:

2010-2013թթ. նախատեսվում է.

- հիմնովին վերանորոգել թիվ 310 մ/մանկապարտեզը, որի իրականացման համար անհրաժեշտ է 120,0 մլն դրամ և թվով 13 մսուր-մանկապարտեզների մասնակի վերանորոգում, որի ընդհանուր գումարը կազմում է 85,0 մլն դրամ:

- 2010թ. վարչական շրջանում նախատեսվում է կազմակերպել 15-20 մշակութային զանգվածային միջոցառում, որի համար նախատեսվում է հատկացնել 20 մլն դրամ գումար: Վարչական շրջանում մշակութային զանգվածային միջոցառումներ կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել լուսային և տեխնիկական սարքավորումներ:

- Երեխաների առողջության պահպանման նպատակով նախատեսվում է իրականացնել տարատեսակ մարզական միջոցառումներ: Կազմակերպվեն տարբեր բնույթի սպարտակիադաներ, բակային փառատոներ, ավանդական մրցաշարեր: Նախատեսվում է կազմակերպել 10 սպորտային միջոցառում, որից 4-ը սեփական նախաձեռնությամբ: Սպորտային միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ է 5.000.000 դրամ գումար:

- Կրթության, մշակույթի, հանգստի կազմակերպման, կրոնի և սպորտի համար 2010 թվականին Երևանի բյուջեից նախատեսվում է Աջափնյակ վարչական շրջանին տրամադրել 650 400.0 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը),

Առողջապահություն

Առողջապահության բնագավառում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել սոցիալապես անապահով բնակչությանը բուժման և բուժապասարկման համար ֆինանսական աջակցություն, անվճար դեղորայքի հատկացում: Աջափնյակ վարչական շրջանի տարածքում գործող առողջապահական հիմնարկների հետ համատեղ իրականացնել սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների ծրագիր:

Սոցիալական ապահովություն և ծրագրեր

2010-2013թթ. Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը Գերմանական կարմիր խաչի, Հայկական կարմիր խաչի ընկերության և «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ համագործակցությամբ համատեղ կշարունակի «Գթության խոհանոց» բարեգործական 2 ճաշարանների գործարկման ծրագրերը՝ համայնքի թվով 360 սոցիալապես անապահով բնակիչների համար:

Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի կողմից նախատեսվում է իրականացնել տարբեր սոցիալական ծրագրեր՝ ի նպաստ համայնքի սոցիալապես խոցելի խմբերին, մասնավորապես Աջափնյակ վարչական շրջանում գործող

բարեգործական 2 ճաշարանների շահառուների, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանը և բարելավմանը: Կազմակերպել և անցկացնել տոնական միջոցառումներ բարեգործական ճաշարանների շահառուների համար:

Կատարել դպրոց չհաճախող, թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների հաշվառում:

Պարբերաբար ճշտել վարչական շրջանի սոցիալապես անապահով խավի ցուցակը, իրականացնել հաշվառում: Հաշվառման արդյունքների հիման վրա նրանց ընդգրկել Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի կողմից իրականացվող սոցիալական օգնության ծրագրերում:

Ֆինանսական աջակցություն հատկացնել սոցիալապես առավել կարիքավոր ընտանիքներին:

- ֆինանսական օգնություն և ծրագրերի իրականացում - 20.000.000 դր.,
- առողջապահական օգնություն (դեղորայքի հատկացում) - 1.600.000 դր.,
- առողջապահական ծառայություն (բուժ. պրոֆիլ. սպասարկում) - 3.800.000 դրամ,
- բարեգործական ճաշարանների պահպանման ծախսեր - 6.000.000 դր.:

Աջափնյակ վարչական շրջանի սոցիալական պաշտպանության համար Երևանի բյուջեից նախատեսվում է հատկացնել 52 069.3 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Բնակարանային-կոմունալ տնտեսություն

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն

2010-2013թթ. նախատեսվում է.

- քանդել և բնակիչներին վերաբնակեցնել Սիսակյան փ. 3, Շինարարների փ. 15, Շինարարների փ. 352. 1-3 մուտքերի հասցեներով 4-րդ կարգի վթարային շենքերը, որի համար ՀՀ պետական բյուջեից պահանջվում են համապատասխան միջոցներ:

- նախատեսվում է ամրացման աշխատանքներ կատարել համայնքի երրորդ կարգի վթարային 5 շենքերում՝ Շինարարների փ. 3, Շինարարների փ. 11, Շինարարների փ. 27, Աբելյան փ. 5 և Արզումանյան 8ա, որոնց համար Երևան քաղաքի բյուջեից անհրաժեշտ կլինի հատկացնել համապատասխան միջոցներ:
- Նախատեսվում է նաև կատարել Հալաբյան-Լենինգրադյան փողոցների խաչմերուկում գտնվող գետնանցումի ամրացման և վերանորոգման աշխատանքներ:
- 2010թ. այս ոլորտում աշխատանքներ կտարվեն հետևյալ հիմնական ուղղություններով՝
- բազմաբնակարան բնակելի շենքերի լանջավոր տանիքների վերանորոգում՝ 2300քմ ընդհանուր մակերեսով, որի գումարը կազմում է 21,0 մլն դրամ,
- բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների վերանորոգում՝ որի գումարը կազմում է 22.5 մլն դրամ,
- շքապատշգամբների և շքամուտքերի ծածկասալերի վերանորոգում որոնց ընդհանուր գումարը կազմում 3.0 մլն. դրամ,
- Նախատեսվում է նաև նախագծահետազոտական աշխատանքների համար հատկացնել 2 մլն դրամ:

Բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավում

Այս բնագավառում վարչական շրջանն իր մասնակցությունն ու աջակցությունը հանդես կբերի շրջանի ջրամատակարարման և ջրահեռացման, գազամատակարարման և ջեռուցման համակարգերում ու ծառայություններում բարեփոխումներ իրականացնելու գործում:

Վարչական շրջանի հրատապ լուծում պահանջվող խնդիրներից է շենքերի խմելու ջրի և կոյուղու ջրագծերի հիմնական վերանորոգումը: Գազամատակարարման բնագավառում «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն արդեն ավարտել է վարչական շրջանի այն թաղամասերի գազիֆիկացումը, որտեղ գերակշռում են մասնավոր տները (Անաստասավան, Լուկաշին, Սիլիկյան): Գազիֆիկացված չէ վարչական շրջանի Սիլիկյան թաղամասի Սպանդարյան արդյունաբերական

հանգույցը: 2003թ.-ից սկսվել են և կշարունակվեն վարչական շրջանի բնակելի շենքերի գազիֆիկացման աշխատանքները:

Անհամեմատ բարդ խնդիր է համայնքի ջեռուցման համակարգի վերականգնումը: Հատկապես 16-րդ թաղամասի թվով 32 շենքերի և Բաշինջաղյան փողոցի թվով 4 շենքերի ջեռուցման խնդիրը, որոնք գազիֆիկացված չեն: Այստեղ է, որ պետք է մշակել համալիր ծրագիր և ֆինանսական միջոցներ այդ խնդիրն իրագործելու համար:

Աղբահանություն և փողոցների մաքրում

2010թ. վարչական շրջանի փողոցների սանիտարական մաքրման աշխատանքների արժեքը 1 քմ մաքրվող տարածքի համար, ըստ նախնական հաշվարկի, կկազմի մոտ 250 դրամ, իսկ 1 տ աղբի հավաքման և տեղափոխման համար կպահանջվի մոտ 3500 դրամ: Փողոցների և բնակելի շենքերի բակային տարածքների մաքրման գծով նախատեսվում է ավելացնել մաքրման ենթակա տարածքը՝ հասցնելով այն 1285 հազ. քմ մակերեսի:

Աղբահանությունը կկատարվի բնակչության և համայնքի ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ կնքած պայմանագրերի հիման վրա գանձվող վարձավճարների հաշվին:

Նախատեսվում է նաև բարձրացնել «Մաքուր Աջափնյակ» ՓԲԸ մեքենայական պարկի օգտագործման մակարդակը և հնարավորության դեպքում թարմացնել այն ժամանակակից տեխնիկայով:

Անհրաժեշտ են հետևյալ մեքենա-սարքավորումներ՝

- ջրի մեքենա - 2 հատ,
- կամազ KO - 1 հատ,
- մայթ մաքրող մեքենա - 2 հատ,
- փոշեկուլ մեքենա - 1 հատ,
- պոչավոր աղբահան մեքենա - 1 հատ,
- աղ ցանող մեքենա - 1 հատ,
- ձյուն հավաքող մեքենա - 1 հատ:

Կանաչ տարածքների խնամք և ոռոգում

2010-2013թթ. նախատեսվում է վարչական շրջանում ընդարձակել կանաչ տարածքները: Դրա համար անհրաժեշտ է ընթացիկ և հիմնական վերանորոգման ենթարկել գործող ոռոգման համակարգը, անցկացնել ոռոգման նոր ջրագծեր:

Նախատեսվում է խիտ բնակեցված թաղամասերում բակային այգիների վերանորոգում, փողոցների գազոնային տարածքի վերականգնման ծաղկային տարածության ընդարձակում, ծառատունկ, թփերի տնկում, ծառերի երիտասարդացում, ծառերի և թփերի բուծում՝ տարվա մեջ 2 անգամ: Նախատեսվում է նաև չոր և առավել վտանգավոր ծառերի հատում:

Բարեկարգում

Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի փողոցների երթևեկելի և մայթերի, բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ 77,0 հազ. քմ ընդհանուր մակերեսով: Նախատեսվում է վերանորոգել և ուղղել փողոցների եզրաքարերը մոտ 6250զծմ երկարությամբ:

Նախատեսվում է վարչական շրջանում իրականացնել կառուցապատման աշխատանքներ՝ մոտ 17600 քմ, կառուցել նոր այգիներ Լենինգրադյան փ. 50շ. բակում՝ 70 քմ, Սիսակյան փ. 6 և 10 շենքերի հարևանությամբ՝ 700 քմ, Հալաբյան փ. 49, 53, 57 շենքերի և 198 մ/մանկապարտեզի հարևանությամբ՝ 3000քմ, Գ-3 թաղամասի 11, 13, 14 շենքերի հարևանությամբ՝ 300քմ, Մարգարյան փ. 20/2 և 20/3 շենքերի հարևանությամբ՝ 7100քմ, ինչպես նաև Գ-3 թաղամասի անավարտ ծառուղու կառուցումը՝ 7000քմ մակերեսներով:

Տարածքային զարգացում և քաղաքաշինություն

Այս բնագավառում 2010-2013թթ. նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

- Մարգարյան կառուցում «Նազարբեկյան» (Գ-3) թաղամասում:

Հարցը բարձրացվել է ՀՀ վարչապետի 15.04.07թ. 10 մարզեր կատարած այցելությունների ընթացքում: Կազմվել է էսքիզային նախագիծ:

- Ստորգետնյա կամ վերգետնյա անցումներ`
- Լենինգրադյան 50շ. դիմաց,
- Հասարթյան փող. «Շիրակ» հանրախանութի հաստվածում,
- Շիրազի փող. հհ. 20-26 շենքերի դիմաց,
- Ֆուչիկ-Մարգարյան փողոցների խաչմերուկին հարող հաստվածում:
- Լենինգրադյան-Սեբաստիա-Հասարթյան փողոցների հատման մասում ավտոճանապարհային ժապավենների էստակադային անցում,
- Գ-1 թաղամասում կոմունիկացիոն գծերի (ջրամատակարարում, կոյուղի, էլեկտրամատակարարում) անցկացում,
- Գ-1 թաղամասում միջթաղամասային ճանապարհների կառուցում,
- Բակային տարածքներում ավտոտնակների վերակառուցում ստորգետնյա տարբերակով` երեխաների համար խաղահրապարակներ ձևավորելու նպատակով,
- Հալաբյան - Մարգարյան փողոցների խաչմերուկին հարող հանգստի գոտում բեմահարթակի և նստատեղերի կառուցում:

Առևտրի և սպասարկման ոլորտ

Վարչական շրջանի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը մասնավոր բիզնեսի ընդլայնումն է, որը ներկա պահին նոր աշխատատեղեր ստեղծելու լավագույն բնագավառն է: Նախատեսվում է մարդկանց ամեն տեսակի օժանդակություն ցույց տալ ազատ ձեռներեցությամբ զբաղվելու համար:

Ելնելով վարչական շրջանի բնակչության սպասարկման կուլտուրայի բարելավման անհրաժեշտությունից` նախատեսվում է վարչական շրջանի տարածքում կազմակերպել առևտրի և սպասարկումների հստակ կանոնակարգում և մշտական վերահսկողություն` համաքաղաքային կանոններին համապատասխան:

Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ

Աջափնյակ վարչական շրջանի բոլոր ուղղություններով տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ստեղծումը վաղուց դարձել է հրատապ ու արդիական խնդիր:

Աշխատակազմում ներդրվել է համակարգչային լոկալ ցանց, որի մեջ ընդգրկված են սերվերը՝ իր 26 համակարգիչներով, 19 տպիչներ, այլ սարքավորումներ: 2010թ. նախատեսվում է ձեռք բերել համակարգչային սարքավորումներ:

Աշխատակազմում Երևանի քաղաքապետարանի օժանդակությամբ առաջիկայում կստեղծվի տեղեկատվական-վերլուծական կենտրոն, աշխատանքներ կտարվեն Երևանում ստեղծելու բոլոր վարչական շրջանները փոխկապակցող քաղաքային միասնական տեղեկատվական համակարգ: Նախատեսվում է ապահովել համացանցային մշտական կապ:

Ընդհանուր բաժնի արդյունավետությունն է ապահովում նաև գործավարության ասպարեզում ներդրված «Էլփաս» համակարգը:

Աշխատակազմի տեղեկացված լինելուն նպաստում են նաև տեղեկագրերի, լրագրերի, ամսագրերի բաժանորդագրությունը, համացանցը, համագործակցությունը տարբեր հեռուստաընկերությունների հետ:

Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն

2010-2013թթ. Երևան քաղաքի փրկարարական վարչության Աջափնյակ համայնքային բաժինը այս բնագավառում նախատեսում է իրականացնել հետևյալ գործառնությունները՝

- *ապահովել համայնքում օպերատիվ շուրջօրյա հերթապահություն,*
- *աջակցել վարչական տարածքում գործող «Մպիտակ» փրկարարական ջոկատի գործունեությանը:*

Հարկային եկամուտների հավաքագրում

Աջափնյակ վարչական շրջանում իրականացվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող փոխադրամիջոցների, շենք-շինությունների գույքահարկի և հողի հարկի հավաքագրման աշխատանքներ: Կատարվում է վարչական շրջանի ֆիզիկական և իրավաբանական անձանց շինությունների գույքագրում և տարբեր գերատեսչությունների կողմից տրամադրված տվյալների համադրում: Նախատեսվում է շարունակել համագործակցությունը Հարկային տեսչության, Անշարժ գույքի կադաստրի, Պետավտոտեսչության, Պետական ռեգիստրի գործակալության և այլ մարմինների հետ տեղեկատվություն փոխանակելու, հարկային բազայում տվյալներ համադրելու ուղղությամբ:

Նախատեսվում է գույքահարկի հավաքագրման ցուցանիշը հասցնել մինչև 100%-ի, հողի հարկի հավաքագրման ցուցանիշը՝ 90%-ի:

ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ավան վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների սահմանագծերի հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Վարչական շրջանը զբաղեցնում է 837 հա տարածք: Ավան վարչական շրջանի տարածքը տեղակայված է Երևան քաղաքի հյուսիսարևելյան մասում: Հեռավորությունը կենտրոնից 6,8 կմ է, տարածքի բարձրությունը ծովի մակերևույթից 1270մ է: (մանրամասները տե՛ս «Ավան վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Ավան բնակավայրը հիշատակվում է մ.թ. 4-րդ դարից: 588-602 թվականներին այն եղել է Հայաստանի բուզանդական մասի աթոռանիստը: Նշանավորվել է իր պատմական հուշարձաններով, որոնցից առանձնանում է վաղ միջնադարում կառուցված կենտրոնագմբեթ և այժմ էլ կիսավեր վիճակում պահպանվող Կաթողիկե հինգ գմբեթանի տաճարը, որը մշակութային անգնահատելի արժեք է:

Պարսկական տիրապետության ժամանակաշրջանում երբեմնի շեն բնակավայրն ամբողջովին քարուքանդ է եղել: 1828-29թթ. ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմներից հետո սկսվում է Ավանի 2-րդ վերածնունդը:

Հիշատակվում է, որ 1931թ. Ավանն ուներ 174 բնակիչ, որի հիմնական մասը գաղթել էր պատմական Հայաստանի Մարաղայի և Ուրմիայի գավառներից: Բնակիչների հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն էր:

1837թ. վերակառուցվում է Սբ. Աստվածածին եկեղեցին, որը հետագայում կարևոր ազդեցություն է ունենում Ավանի գյուղաքաղաքի ղեկավարման գործում: Հայտնի է, որ այդ ժամանակաշրջանում ծաղկում են ապրում ոչ միայն առևտուրն ու արհեստները, այլև կրթությունն ու լուսավորությունը:

1915թ. Մեծ եղեռնից հետո Կոտայքի շրջանի Ավան գյուղի բնակչությունը համալրվում է 314 գաղթականներով: Խորհրդային ժամանակաշրջանում Ավանը մտնում է Երևանի կազմի մեջ: 1996թ. նոյեմբերի 20-ին Ավանն ստանում է Երևան քաղաքի թաղային համայնքի կարգավիճակ, ապա 2009թ-ից՝ վարչական շրջանի:

Ավան վարչական շրջանի քառամյա զարգացման ծրագիր

Զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է վարչական շրջանում առկա խնդիրների լուծման առաջնահերթության պահպանում: Ավան վարչական շրջանի համար առաջնահերթ է լուծել բնակչության կոմունալ տնտեսական, բնակֆոնդի նորոգման, կրթամշակութային, սոցիալական ապահովության խնդիրներ: Շրջանում գործում են թվով 6 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք տարեցտարի ընդլայնվում ու զարգանում են, համապատասխանաբար մեծանում է այդ հիմնարկներին հատկացվող դրամաշնորհների չափը: Զարգացման ծրագիրը նպատակ ունի բարելավելու շրջանի բնակչության կենցաղային պայմանները, բարձրացնելու կենսամակարդակը:

Զարգացման ծրագրում նախատեսվում են միջոցառումներ, որոնց իրականացումը պահանջում է կապիտալ ծախսեր: Ամեն տարի կապիտալ ծրագրերում ընդգրկվում են փողոցների նորոգման, տանիքների վերանորոգման, արտաքին լուսավորության համակարգի ընդլայնման, խաղահրապարակների և պուրակների կառուցման, ընթացիկ վերանորոգման, կապիտալ գույքի ձեռքբերման և այլ աշխատանքներ:

2010-2013թթ. համար նախատեսվում է կապիտալ ծրագրեր իրականացնել նաև ֆինանսավորման այլ աղբյուրների ներգրավման միջոցով (դոնոր կազմակերպություններ, արտաքին ներդրողներ, պետական նպատակային հատկացումներ, հիմնադրամներ և այլն):

Ավան վարչական շրջանում 2010թ. կիրականացվեն ծրագրեր 895340.2 հազ. դրամ գումարի չափով (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Վարչական շրջանի բնակչությունը 01.01.2009թ. դրությամբ մոտ 51 հազ. մարդ է³⁹, այդ թվում՝ 46,7 տոկոս տղամարդիկ և 53,3 տոկոս կանայք: Ծնվածների թիվը 2008թ.՝ 486 (մանրամասնությունները տե՛ս «Ավան վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Վիճակի նկարագիր

Ավան վարչական շրջանը բարեկարգ է, մաքուր, ասֆալտապատված են բոլոր փողոցները, նրբանցքները, ներբակային տարածքները:

Արտաքին լուսավորության ցանցը վերականգնված է և ընդլայնված, լուսավորված են բոլոր բակերն ու խաղահրապարակները, պուրակներն ու այգիները:

Խիստ ուշադրություն է դարձվում բնակֆոնդի պահպանմանը. շրջանի բոլոր բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերը վերանորոգված են:

Հիմնովին կամ մասնակի վերանորոգված են բոլոր շենքերի հարթ տանիքները և վերելակները:

Վերականգնվել և ընդլայնվել են մայթեզրերը, գազոնները: Ավան վարչական շրջանում կա 28 խաղահրապարակ, 7 մինի ֆուտբոլի դաշտ:

Շրջանն ապահովված է 24-ժամյա ջրամատակարարմամբ, գազիֆիկացումը 100 % է, աղբահանությունը կատարվում է 2-օրյա ժամանակացույցով:

Ավան վարչական շրջանում նշվում են ազգային, պետական բոլոր տոները և միջոցառումները, աջակցություն է ցուցաբերվում եկեղեցուն և եկեղեցական միջոցառումների անցկացմանը:

Մշտական ուշադրության կենտրոնում է պահվում սոցիալապես անապահով խավի հոգսերն ու խնդիրները: Հիշարժան օրերին ազատամարտիկներին, հաշմանդամներին, բազմազավակ ընտանիքներին, վետերաններին, տարեցներին,

³⁹ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

միայնակ ծերերին ցուցաբերվում է դրամական և ֆինանսական օգնություն: Կազմակերպվում է նշված խավի երեխաների հանգիստը ճամբարներում, հոգում սեպտեմբերի 1-ի հոգսերը:

Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտ

Ավան վարչական շրջանում գործում են թվով 7 նախադպրոցական հիմնարկ, 7 հանրակրթական և 2 հատուկ դպրոց, 2 բուհ, 1 գրադարան, 1 մարզադպրոց, 1 մշակույթի տուն, 1 արվեստի դպրոց, 1 շախմատի մասնագիտացված մարզադպրոց:

Կրթություն

Կրթության, մշակույթի և սպորտի բաժինը, սերտ համագործակցելով համայնքի մյուս բաժինների հետ, կազմակերպում է բյուջետային հիմնարկների գործունեությունը, աջակցում և համագործակցում է այլ կրթական և առողջապահական հիմնարկների հետ հայեցի դաստիարակման, մարմնակրթական և առողջապահական, գեղագիտական զարգացման բնագավառներում:

Բաժինը, համագործակցելով վարչական շրջանի հանրակրթական և հատուկ դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների հետ կազմակերպում է՝

- միջդպրոցական օլիմպիադաներ,
- բակային միջոցառումներ,
- ՀՀ պետական և եկեղեցական տոների, ծեսերի և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ՝
- Հայոց բանակի օր,
- Աշխատանքի օր,
- Մահմանադրության օր,
- Մուրբ Զատիկի օր,
- Կանանց միջազգային տոն,
- Ցեղասպանության զոհերի հիշատակի օր,
- Հաղթանակի և խաղաղության տոն,
- Հանրապետության տոն,

- Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր,
- Սուրբ Աստվածածնի վերափոխման տոն՝ Խաղողօրհներք,
- Գիտելիքի, գրի և դպրության տոն,
- Անկախության տոն,
- Ուսուցչի օր,
- «Վերջին գանգ»,
- Նախադպրոցական հաստատությունների ավարտական միջոցառումներ,
- Մպորտային միջոցառումներ,
- Ամանոր և Սուրբ ծնունդ:
- Ավանի մանկապարտեզներ ՀՈԱԿ

Թվով 7 ն/դ հիմնարկներ անվճար հաճախում են շուրջ 1400 երեխաներ՝ ընդամենը 45 խմբերում: ՀՀ ԿԳ նախարարության Կրթության ազգային ինստիտուտի կրթական բարեփոխումների կենտրոնում պարբերաբար իրականացվում է մասնագետների վերապատրաստում: Նախադպրոցական հիմնարկներում ուսումնամեթոդական գործընթացի անխափան աշխատանքը կազմակերպելու նպատակով կազմակերպվում և վերահսկվում են մանկապարտեզների աշխատակիցների բժշկական ու երեխաների հետ շփման իրավունքի վկայականի և արտոնագրերի ձեռքբերման աշխատանքները:

Համագործակցելով վարչական շրջանի տարածքում գործող թիվ 12 պոլիկլինիկայի և ՀՀ Համաճարակային կենտրոնի հետ՝ «Ավանի մանկապարտեզներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից վերահսկողություն է սահմանվում մանկապարտեզներում երեխաների համար էկոլոգիապես մաքուր, անհրաժեշտ կալորիականությամբ սննդի ձեռքբերման և խնամքի կազմակերպման հարցերում: Մանկապարտեզներում կրթադաստիարակչության բնագավառում աշխատանքներ են տարվում երեխաների ուսուցումը նորովի, ազատ, անկաշկանդ անհատականության դրսևորման պայմաններում, նրանց գեղագիտական ունակությունների զարգացումը ըստ տարիքային խմբերի և դպրոցական կյանքին լիարժեք նախապատրաստելու ուղղությամբ: «Ավանի մանկապարտեզներ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի շրջանակներում իրականացրել է մեծածավալ

վերանորոգման ու շրջակայքի բարեկարգման աշխատանքներ: Մանկապարտեզները ֆինանսատնտեսական գործունեության ոլորտում համագործակցելով վարչական շրջանի ֆինանսական և հաշվապահական հաշվառման և բնակարանային, կոմունալ տնտեսության, շինարարության և համատիրությունների աշխատանքները համակարգող բաժինների հետ, կազմակերպվում են ստուգայցեր, ճշգրտվում են երեխաների ցուցակային թվերը և փաստացի հաճախումները, ճաշացուցակների համապատասխանությունը սննդամթերքի տեսականու սահմանված նախահաշիվներին, կալորիականությանը: Կատարվում են մանկապարտեզների շենքերի, խմբասենյակների, սանհանգույցների, էլեկտրասարքավորումների, սառնարանների, տարածքների բարեկարգման, կառուցապատման աշխատանքներ:

2010 թվականին կշարունակվեն՝

- մանկապարտեզների ջեռուցման համակարգերի վերականգման աշխատանքները,
- մանկապարտեզների խմբասենյակների, բակային խաղերի և զրուցարանների վերանորոգման աշխատանքները,
- մանկավարժների վերապատրաստման և ատեստավորման գործընթացը,
- նախադպրոցական կրթության, ծառայությունների մատչելիության ապահովման և երեխաների ընդգրկման հետագա աճի ապահովումը: Նախատեսվում է թիվ 4 մանկապարտեզում մեկ լրացուցիչ խմբի բացում,
- պետական կրթական չափորոշիչների աստիճանական ներդրման աշխատանքները,
- նախադպրոցական կրթության այլընտրանքային (լրացուցիչ) ֆինանսավորման աղբյուրների ընդլայնման աշխատանքները, մասնավորապես՝ միջազգային, հասարակական կազմակերպությունների և մասնավոր գործարարների ներգրավման ուղղությամբ աշխատանքները,
- հաստատությունների կառավարման համակարգի հետագա բարելավման միջոցառումները,
- ընտանիք-նախադպրոցական հաստատություն-դպրոց կապի ամրապնդման միջոցառումները,
- ծնողական տարբեր համալսարանների կազմակերպումը,

- մանկապարտեզների գույքային և ուսումնանյութական պայմանների հետագա բարելավման աշխատանքները:

Մշակույթ

«Ավանի մշակույթի տուն» ՀՈԱԿ

Ավանի մշակույթի տան նպատակը բնակչության հանգստի կազմակերպումն ու երեխաների գեղագիտական դաստիարակությունն է: Մշակույթի տան շենքը հիմնովին վերանորոգվել է և ձեռք է բերվել նոր գույք: Ավանի մշակույթի տունը գործունեությունը ծավալում է 3 ոլորտներով՝ թատերական, գեղագիտական, երաժշտական: Մշակույթի տունն ունի 380 սան, 25 աշխատող, որից 12-ը՝ խմբավար: 2010 թվականին մշակույթի տանը նախատեսվում է՝

- ներդնել ջեռուցման համակարգ,
- ստեղծել թատերական, խեցեգործության, բատիկայի, գորելենի և տիկնիկային խմբեր:

«Գ. Բուդաղյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ

Գևորգ Բուդաղյանի անվան արվեստի դպրոցը մեծ դեր ունի երեխաների գեղագիտական համակողմանի դաստիարակության գործում: Արվեստի դպրոցը գործում է 7-ամյա և 5-ամյա կրթությամբ՝ 10 մասնագիտություններով (դաշնամուր, ջութակ, թավջութակ, կլառնետ, շվի-դուդուկ, քանոն, կիթառ, նկարչություն, երգեցողություն (վոկալ), զգեստի մոդելավորում): Դպրոցի սաների թիվը կազմում է մոտ 207: Արվեստի դպրոցի ընդհանուր աշխատողների թիվը կազմում է 36, որից՝ ուսումնամեթոդական աշխատանքներն իրականացնում են 24 մասնագետներ:

2010 թվականին արվեստի դպրոցում նախատեսվում է՝

- ստեղծել սինթեզատորի դասարան,
- ազգային նվագարանների զարգացում՝ ստեղծել ժողովրդական գործիքների դասարան,
- ստեղծել ջազային խմբակ:

«Ավանի թիվ 1 գրադարան» ՀՈԱԿ

Ավանի գրադարանն իրականացնում է ազգաբնակչության գրադարանային սպասարկումը: Մեկ տարվա կտրվածքով գրքաշրջանառությունը կազմում է 22996 գիրք: Գրադարանի գրքային ֆոնդը կազմում է 24113 կտոր գիրք՝ 2.451.009 դրամ արժողությամբ:

2010 թվականին նախատեսվում է ներդնել ջեռուցման համակարգ, ստեղծել ինտերնետ կապ և շարունակել գրքային ֆոնդի հարստացումը:

Մպորտ

«Թիվ 1 մարզադպրոց» ՀՈԱԿ

Մարզադպրոցն իրականացնում է առողջ ապրելակերպ և ակտիվ հանգիստ: Մինչ վերակառուցման աշխատանքների սկիզբը՝ 2007թ. դեկտեմբերի 18-ը, մարզադպրոցը գործում էր 9 մարզաձևով (Ֆուտբոլ, վոլեյբոլ, սպորտային մարմնամարզություն, գեղ. մարմնամարզություն, կարատ», սեղանի թենիս, թեթև աթլետիկա, բոդի-բիլդինգ):

Մարզադպրոցն ունի 26 աշխատակից, որից 13-ը մարզիչ:

2008 թվականին մարզադպրոցը հիմնովին վերանորոգվել է: Հեռանկարային մարզիկների հայտնաբերման ուղղությամբ 2010-2013թթ. թվականին նախատեսվում է՝

- ներդնել ջեռուցման համակարգ
- ստեղծել ձյուղո, բասկետբոլ, ծանրամարտ, ըմբշամարտ մարզաձևեր
- ստեղծել վարժասարքերի սրահ (համապատասխան սարքավորումներով)
- ստեղծել ինտերնետ կապ
- անցկացնել համայնքային և միջհամայնքային մի շարք մարզաառողջարարական ու զանգվածային սպորտային միջոցառումներ:

**«Ավանի շախմատի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց»
ՀՈԱԿ**

2007թ. ստեղծվեց «Շախմատի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:

Մարզադպրոցն ունի շուրջ 160 սան և 9 հաստիքային աշխատող:

Շախմատի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոցում նախատեսվում է՝

- ներդնել ջեռուցման համակարգ
- անցկացնել բակային շաշկու, շախմատի, ռենձյու և նարդու մրցաշարեր
- անցկացնել Կարեն Ասրյանի հիշատակին նվիրված շախմատի բաց առաջնություն:

Կրթության, մշակույթի, հանգստի կազմակերպման, կրոնի և սպորտի համար 2010 թվականին Երևանի բյուջեից նախատեսվում է Ավան վարչական շրջանին տրամադրել 271 500.0 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը)

**Սոցիալական ապահովություն և
առողջապահություն**

Ավան վարչական շրջանի բնակչության սոցիալական խնդիրների լուծման նպատակով սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինն առաջարկում է շարունակել աշխատանքները հետևյալ հարցերում.

Առողջապահության ոլորտ

- Աջակցություն ազգաբնակչության սանիտարական վիճակի բարելավմանը, սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացմանը
- Համագործակցություն առողջապահական հիմնարկների հետ սոցիալապես անապահով խավերին անվճար բուժօգնություն ցուցաբերելու ուղղությամբ՝ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ միջնորդագրերով

- պետպատվերի շրջանակներում կազմակերպելու բնակիչների բուժհետազոտությունը, բուժումը և վիրահատությունը
- բուժիմնարկներում կազմակերպել «Բաց դռների օրեր» խորհրդատվություններ, մասնակի հետազոտություններ
 - նպատակային է կազմակերպել սիրտանոթային կամ նմանատիպ բարդ հիվանդությունների վիրահատությունները պետպատվերի շրջանակներում
 - նախադպրոցական հիմնարկների աշխատակազմի բուժպրոֆիլակտիկ հետազոտություններ
 - աջակցություն վարչական շրջանի սոցիալապես անապահով և հաշմանդամության կարգ ունեցող բնակիչներին, ՀՀ-ում գործող առողջարանների ուղեգրեր տրամադրելու հարցում
 - ի շահ ազգաբնակչության առողջության բարելավման նպատակահարմար է երեխաների մանկական հիվանդությունների կանխարգելիչ ախտորոշումների պարտադիր անցկացում, «Շտապ օգնություն» ծառայության տարածքային կենտրոնի կազմակերպում

Սոցիալական ոլորտ

Ավան վարչական շրջանի բնակչության սոցիալական պաշտպանվածության խնդիրներ իրականացնող հիմնարկ-ձեռնարկությունների հասարակական, ինչպես նաև մի շարք բարեգործական կազմակերպությունների հետ իրականացնել տեղական նշանակության բարեգործական ծրագրեր.

- շրջանի բնակչության սոցիալական խնդիրների լուծման համար նախատեսել նյութական օգնությունների տրամադրում (դրամական, բուժման, դեղորայքի, ուսման ծախսերը մարելու օգնություններ)
- ՀՀ տոների և հիշատակի օրերի կապակցությամբ դրամական, նյութական աջակցություն ցուցաբերել պատերազմի, աշխատանքի, ոստիկանության վետերանների, միայնակ տարեցների, զոհված և վիրավոր ազատամարտիկների, հաշմանդամ երեխաների միություններին և նման այլ կազմակերպություններին

- շարունակական դարձնել ՀՀ կառավարության «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագիրը, ինչը ժամանակավոր աշխատատեղերով է ապահովում Ավան վարչական շրջանի զբաղվածության տարածքային կենտրոնում գրանցված գործազուրկներին
- կազմակերպել սոցիալական ռիսկի խմբի ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգիստ հանրապետության տարբեր ճամբարներում
- նոր ուսումնական տարվա կապակցությամբ աջակցել վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին գրենական պիտույքների տրամադրման հարցում
- աջակցություն Ավան վարչական շրջանի Գ. Բուդաղյանի անվան արվեստի դպրոցում, բարձրագույն և այլ ուսումնական հաստատություններում գերազանց առաջադիմություն ունեցող կարիքավոր ընտանիքների երեխաներին ուսման վարձավճարից մասնակի ազատելու հարցում
- աջակցություն առավել կարիքավոր ընտանիքներին՝ հուղարկավորության ծախսերի մասնակի կազմակերպման հարցում, այդ նպատակի համար 2010 թվականին նախատեսել 1,0 մլն դրամ

Ավան վարչական շրջանի սոցիալական պաշտպանության համար Երևանի բյուջեից նախատեսվում է 2010թ. հատկացնել 31 390.3 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Առևտրի և սպասարկումների ոլորտ

Բաժնի հիմնական գործունեությունից է՝ վարչական շրջանի տարածքում ստուգայցեր իրականացնելու միջոցով «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով ամրագրված նորմերի պահպանման վերահսկումը, վարչական տարածքում առևտրի և սպասարկումների իրավախախտումների կանխարգելումը:

Վարչական շրջանի տարածքում գործում են 155 առևտրի օբյեկտներ, որոնք իրականացնում են ոգելիչ խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառք: Դրանցից 110-ը հիմնական շինություններ են, իսկ 45-ը՝ ոչ հիմնական շինություններ: Վարչական շրջանի տարածքում գործում են հեղուկ վառելիքի 12 լցակայաններ,

ինչպես նաև հասարակական 16 օբյեկտներ և կենցաղային սպասարկման 15 օբյեկտներ:

Ըստ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում 27.02.2007 թվականի փոփոխության.

- Վարչական շրջանի ղեկավարի կողմից տրվում են յուրաքանչյուր տարվա համար ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվությունները:

- Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվություն:

- Առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղեր և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:

- Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, մանրախախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն:

2010-2013թթ թվականի ընթացքում նախատեսվում է.

- յուրաքանչյուր կիսամյակ կատարել հիմնական և ժամանակավոր օբյեկտների և տնտեսվարող սուբյեկտների հաշվառում և գույքագրում
- ամենօրյա աշխատանքներ տանել վարչական շրջանի տարածքում բացօթյա առևտուրը կանոնակարգելու ողողությամբ
- վարչական շրջանի տարածքում առևտրի և սպասարկման ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտներին «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների մասին համապատասխան բացատրական աշխատանքներ տանել:

Մանրածախ առևտրի և սպասարկումների ոլորտի օբյեկտների հիմնական մասը չի համապատասխանում քաղաքաշինության և գեղագիտական պահանջներին:

Երևանի քաղաքապետի որոշմամբ կազմվել է 2008-2011 թվականների կառուցապատման և արդիականացման քառամյա ծրագիր, որի շրջանակներում, ըստ ժամանակացույցի, ապամոնտաժման կենթարկվեն փակ և լքված, մայթերում և կանաչ տարածքներում (գազոն) տեղադրված կրպակները և տաղավարները:

Մշտական ուշադրության կենտրոնում կլինի առևտրական, հասարակական սննդի և կենցաղ-սպասարկման օբյեկտների աշխատակիցների մասնակցությունը շրջապատի սանմաքրման աշխատանքներին:

Դրան զուգընթաց պետք է նպաստավոր հիմքեր ստեղծել վարչական շրջանի տարածքում առևտուրը զարգացնելու համար, որը կնպաստի թե բյուջեի հարստացմանը, թե աշխատատեղերի ստեղծմանը:

Վարչական շրջանի տարածքում գործող կենցաղային սպասարկման ձեռնարկությունները բավարար են, սակայն ծրագրվում է նրանց տեղաբաշխումը տարածքում և բեռնվածությունը համապատասխանեցնել բնակչության պահանջներին:

Գովազդի ոլորտ

Վարչական շրջանի տարածքում տեղակայված են 40 գովազդային վահանակեր: Աշխատանքներ կտարվեն դրանք լիովին օգտագործելու և վճարները հավաքագրելու ուղղությամբ:

Ա Ր Ա Բ Կ Ի Ր Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն

Արաբկիր վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Ավան Դավթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Արաբկիրը հանդիսանում է մայրաքաղաքի հյուսիսարևելյան արվարձանը: Այն զբաղեցնում է 1235 հա տարածք (մանրամասները տե՛ս «Արաբկիր վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Արաբկիրը քաղաք է Փոքր Հայքում (այժմյան Մալաթիայի վիլայեթում), Մալաթիա քաղաքից 70 կմ հյուսիս՝ Եփրատի վտակ Արաբկիր գետի ափին: 1021–1022թթ. Վասպուրականից Սեբաստիայի գավառ գաղթած հայերը Արաբրակնուա հին հռոմեական բերդաքաղաքի մոտակայքում հիմնում են իրենց քաղաքը՝ Արաբկիր անունով:

Նոր Արաբկիրը նախատեսված էր հազար տան համար: Արդեն 1926թ. նոյեմբերի 8-ին Հին Արաբկիրից (Թուրքիա) Նոր Արաբկիր հասավ հայրենադարձների առաջին քարավանը՝ 82 հոգի, մեկ տարի անց՝ ևս 78 հոգի: «Նոր Արաբկիրը» Հայաստանի առաջին հայրենադարձ հայաքաղաքն է:

1933թ. Նոր Արաբկիրը ուներ 1800 բնակչություն, որի մեծագույն մասը գաղթել էր Հին Արաբկիրից: 1937թ. բնակչության թիվը հասնում էր 2500-ի, որոնք ապրում էին 325 բնակարաններում: 1939թ. սկսվեց կանոնավորապես աշխատել ավտոբուս՝ Նոր Արաբկիր-Երևան երթուղով: 1940թ. Արաբկիրի բնակչության թիվը հասնում էր 6000-ի:

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հիմնադրվում են այլումինի և ժամացույցի գործարանները, կահույքի ֆաբրիկան, հետագայում բացվում են էլեկտրաճշգրիտ սարքերի, ֆրեզերային հաստոցների, լուսատեխնիկական, շամպայն-գինիների, լամպերի, ավտոների գործարանները, կոշիկի ու գլխարկների ֆաբրիկան՝ դառնալով ոչ միայն Արաբկիրի, այլև ամբողջ հանրապետության նշանավոր արտադրական ձեռնարկությունները: 1962թ. կառուցվեց հագուստի քիմիական մաքրման ֆաբրիկան, որը հետո դարձավ արտադրական միավորում: Տարիների ընթացքում ավանը աճելով միացել է

Երևանին՝ կազմելով նրա թաղային համայնքներից, այժմ՝ վարչական շրջաններից մեկը:

Արաբկիր վարչական շրջանում 2010թ կիրականացվեն ծրագրեր 2229091.7 հազ. դրամ գումարի չափով (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Ըստ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2009թ. հունվարի 1-ի դրությամբ Արաբկիր վարչական շրջանի բնակչությունը կազմում է 131.1 հազ. մարդ է⁴⁰, որից տղամարդիկ՝ 53 տոկոս, իսկ կանայք՝ 47 տոկոս: Ծնվածների թիվը 2007թ.-ին կազմել է 1039:

Ռազմավարությունը և հիմնական նպատակները

Վարչական շրջանի 2010-2013թթ. ռազմավարությունն է հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, Արաբկիրը դարձնել մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր:

Համայնքի 2010-2013թթ. հիմնական նպատակներն են՝

- *հետևողական քայլեր իրականացնել բյուջեի կայուն աճի ապահովման ուղղությամբ,*
- *համապատասխան քայլեր ձեռնարկել հիմնահարցերի լուծմանը՝ տարածքի հիմնարկներին, կազմակերպություններին, ձեռնարկություններին և հաստատություններին մասնակից դարձնելու համար,*
- *տարածքում կոմունիկացիաների (ջրատարներ, գազատարներ, ճանապարհներ) շինվերանորոգման աշխատանքներն իրականացնել առավելագույնս համակարգված՝ ըստ նախապես փոխհամաձայնեցված ժամանակացույցների,*

⁴⁰ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

- հիմնախնդիրները լուծելիս գործնականորեն կարևորել բնակչության կարծիքը, անհրաժեշտության դեպքում նախաձեռնել հասարակական հարցումներ,
- իրականացնել բազմաբնակարան շենքերի շքամուտքերի և աղբատարների սանմաքրման, վերելակների, տանիքների, կոմունալ ներքին ցանցի, սիզամարզերի ռոտզման համակարգերի վերանորոգման և բարեկարգման համալիր ծրագրեր,
- բակերում ստեղծել ակտիվ հանգստի և ժամանցի պատշաճ պայմաններ,
- ապահովել փողոցների ասֆալտապատումն ու արտաքին լուսավորությունը,
- համակարգված կերպով աջակցել մուր-մանկապարտեզների, կրթական, մշակութային, մարզական և առողջապահական հաստատությունների առջև ծառայող հիմնախնդիրների հաղթահարմանը,
- նպաստել արաբկիրցի գործարարների ակումբի ստեղծմանը, որն իր բուն գործառույթներից բացի, ըստ առկա հնարավորությունների, կգրադվի նաև աշխատատեղերի ավելացման և համայնքի երիտասարդ մասնագետների զբաղվածության խնդիրներով,
- ամռան ամիսներին կազմակերպել բակային ճամբարներ, որտեղ երեխաներն ապահովված կլինեն անվճար սննդով, նաև՝ մարզական և մշակութային միջոցառումներին լիարժեքորեն մասնակցելու հնարավորությամբ, իսկ մանկավարժները՝ համապատասխան վարձատրությամբ,
- օժանդակել վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին, թոշակառուներին, հաշմանդամներին և անվճարունակ հիվանդներին, Հայրենական և Արցախյան պատերազմների մասնակիցներին և զոհվածների ընտանիքներին,
- աջակցել վարչական շրջանի տարածքում գործող հասարակական կազմակերպություններին և, օգտագործելով նրանց ներուժը, ներգրավել հիմնախնդիրների լուծման գործընթացում,

- ապահովել համայնքի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների զբաղեցրած շենքերում հիմնական վերանորոգման և գույքի ձեռքբերման աշխատանքներ,
- բարձրացնել վարչական շրջանի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը՝ բարելավելով բյուջեի եկամուտների հավաքման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները:

Կրթություն, մշակույթ, սպորտ

Կրթություն

Արաբկիր վարչական շրջանում գործում են 21 հանրակրթական դպրոց, 13 նախադպրոցական հիմնարկ, 4 մարզադպրոց, որոնք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ են, ինչպես նաև 2 գրադարան: Նախադպրոցական հիմնարկներում գործում է 80 խումբ՝ 2367 երեխա-հաճախումով, 440 աշխատողներով: Վարչական շրջանի թիվ 1, 2, 4, 10, 11 և 12 մանկապարտեզները գտնվում են տիպային շենքերում, թիվ 3, 5, 9՝ եռահարկ առանձին հարմարավետ շենքերում, թիվ 6, 7, 8 մանկապարտեզները զբաղեցնում են 5 հարկանի բնակելի շենքերի 1-2 հարկերի որոշակի տարածք, թիվ 13 մանկապարտեզը՝ Երևանի թիվ 1 գիշերօթիկ դպրոցի 1-ին հարկը: Թիվ 1, 9 և 12 մանկապարտեզներն ունեն տեղային ջեռուցում, որոնցից թիվ 9-ը և թիվ 12-ն ունեն իրենց կաթսայատները, իսկ թիվ 1-ի կաթսայատունը վարչական շրջանի թիվ 51 դպրոցի հետ համատեղ է: Թիվ 6, 7 մանկապարտեզներում և թիվ 11 մանկապարտեզի երկու խմբերում տեղադրված է ջեռուցման համակարգ, մնացած մանկապարտեզները տաքացվում են էլեկտրական սալիկներով:

Մանկապարտեզները կնքել են կոմունալ ծառայություններն ապահովող կազմակերպությունների (Է.Էներգիայի, ջրմուղ-կոյուղու, հեռախոսի, աղբահանության) հետ պայմանագրեր, մատուցվող ծառայությունները բավարար են:

Որոշ մանկապարտեզներ վերանորոգվել են, մի քանիսն էլ ունեն հիմնանորոգման կարիք (թիվ 3, 4, 5, 7):

Վարչական շրջանի բոլոր մանկապարտեզներն ապահովված են մասնագիտական կադրերով, որոնք էլ ապահովում են հիմնարկների աշխատանքային նորմալ ընթացքը:

Արաբկիր թիվ 1 և «Ա. Գրիգորյանի անվան օլիմպիական հերթափոխի սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ները գտնվում են առանձին հարմարավետ շենքերում, թիվ 3 մարզադպրոցը՝ վարչական շրջանի թիվ 149 հանրակրթական դպրոցի, իսկ մարզական խաղերի մարզադպրոցը՝ Կոմիտաս 30 հասցեում գտնվող ոստիկանությանը պատկանող «Դինամո» ընկերության շենքերում, որի պատճառով մարզումներն անց են կացվում վարչական շրջանի հանրակրթական դպրոցների սպորտային դահլիճներում: Թիվ 1 մարզադպրոցը գազիֆիկացված է և հիմնանորոգված, մյուսներն ունեն վերանորոգման կարիք: Մարզադպրոցներում գործող 102 խմբերում ընդգրկված են 1452 սաներ, մարզաձևերի թիվը 13 է: Մարզադպրոցներն ապահովված են մասնագիտական որակյալ կադրերով:

Վարչական շրջանում գործող թիվ 5 և 6 գրադարանները գտնվում են 5 հարկանի բնակելի շենքերի կիսանկուղային և 1-ին հարկերում, գրական ֆոնդը՝ 51670, աշխատողների թիվը՝ 13: Գրադարաններն ունեն վերանորոգման, գույքի և նոր գրքերի կարիք:

Արաբկիր վարչական շրջանը չունի մշակույթի պալատ, որի առկայությունը կխթաներ մանկապատանեկան ստեղծագործական խմբակների աճը:

Հանրապետությունում դեռևս անբավարար է կրթական համակարգի աշխատողների սոցիալական վիճակը, հատկապես առաջնային է կրթական օջախի դերի վերականգնումը և մանկավարժի աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը:

Կրթության ոլորտի ծրագրերի իրականացման համար Երևանի բյուջեից 2010 թվականին նախատեսվում է հատկացնել 637 329.1 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Նախադպրոցական հիմնարկներ

Նախատեսվում է պարբերաբար անցկացնել ստուգումներ վարչական շրջանի բոլոր նախադպրոցական հիմնարկներում՝ ճշտելու երեխաների, խմբերի թիվը, հաճախելիությունը, ըստ այդմ ճշտելու այդ հիմնարկների հետագա պահպանության ծախսերը, աշխատողների թվաքանակը, հաստիքացուցակները: Արված խնայողությունների հաշվին նախատեսվում է ավելացնել մուր-մանկապարտեզի մեկ երեխայի հաշվով սննդի օրական բյուջետային ծախսը, բարձրացնել սննդի որակը, կալորիականությունը, և ընդհանրապես, ավելացնել նախադպրոցական հիմնարկներին հատկացվող բյուջետային ծախսերը՝ տնտեսագիտական դասակարգման բոլոր ուղղություններով:

Հիմնանորոգման կարիք ունեն թիվ 3, 4 և 5 մանկապարտեզները, իսկ մասնակի վերանորոգման՝ թիվ 1, 2, 6, 9, 10, 11, 12:

Թիվ 1, 2, 3, 4, 5, 9, 10, 11 մանկապարտեզների բակերն ունեն բարեկարգման կարիք:

Թիվ 4 մանկապարտեզում առկա է տեղային ջեռուցման անցկացման խնդիր:

Մանկապարտեզներում եղած էլեկտրական սալիկները (1965թ. արտադրության), կոշտ և խոհանոցային գույքը հին են ու բազմաթիվ անգամ վերանորոգված, ուստի անհրաժեշտ են թվով 12 էլեկտրական սալիկներ, 10 սառնարան, 7 լվացքի մեքենա, 1500 մանկական և 300 մեծ աթոռ, 350-400 մանկական սեղան, 100 գրասեղան, 300-400 մահճակալ, զգեստապահարաններ ու խոհանոցային սպասք: Անհրաժեշտություն կա նաև փափուկ գույքի:

Վարչական շրջանի մանկապարտեզներում երեխաների թվի մեծ աճ է նկատվում՝ մոտ 2000-2400 երեխա-հաճախում, և եղած խաղալիքները, որոնք ևս շատ հին են ու հնաոճ, անհրաժեշտ է փոխել նորով:

Մշակույթ

Արաբկիրում գործող գրադարանային կենտրոնացված համակարգի գծով աշխատանքներ կկատարվեն գրքային ֆոնդի հաշվառման, պահպանման և բնակչության սպասարկման ուղղությամբ:

Թիվ 5 և թիվ 6 գրադարանները համայնքի ենթակայությանը հանձնված օրվանից չեն նորոգվել, նոր գույք և գրքեր չեն ստացել: Անհրաժեշտ է նորոգել տարածքը և գրքերը պահպանելու նպատակով պահպանել անհրաժեշտ ջերմային ռեժիմ, գրադարանային գույք և պարագաներ:

Մշակույթի ոլորտին նախատեսվում է տրամադրել Երևանի 2010թ. բյուջեից «Մշակույթ, հանգիստ և կրոն» հոդվածով 61 368.8 հազ.դրամ (մանրամասները տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը) :

Մարմնակրթություն, սպորտ

Մուսերամարտի մարզադպրոցի տարածքը 240 մ² է, այն 35 տարի չի նորոգվել, գույքը շատ հին է ու ջարդված, ուստի կարիք ունի հիմնանորոգման, ջեռուցման համակարգի տեղադրման և նոր գույքի հատկացման (գրասեղաններ, աթոռներ, վարագույրներ, մարզագույք):

Թիվ 3 մարզադպրոցը գտնվում է թիվ 149 հանրակրթական դպրոցի նախկին շենքի 1-ին հարկում` զբաղեցնելով 370 մ² տարածք, որն անմխիթար վիճակում է, գույք գրեթե չունի, եղածն էլ հին է ու մաշված, տաքացվում է էլեկտրական սալիկներով: Անհրաժեշտ է հատկացնել նոր գույք (գրասեղաններ, աթոռներ, վարագույրներ, մարզագույք):

Մարզական խաղերի մարզադպրոցը զբաղեցնում է «Դինամո» ընկերությանը պատկանող շենքի 1-ին հարկի 144 մ² տարածք, որը կարիք ունի վերանորոգման, գազիֆիկացման և նոր գույքի հատկացման (գրասեղաններ, աթոռներ, վարագույրներ, մարզագույք):

Աջակցություն ՏԻ բնագավառի հասարակական կազմակերպություններին

Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել Տեղական ինքնակառավարման բնագավառում ՀՀ-ում գործող հասարակական կազմակերպություններին, մասնավորապես Հայաստանի համայնքների միությանը, «Հայաստանի ավագանիներին», Համայնքների ֆինանսիստների միավորմանը, Տեղեկատվական

համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնին, որը հնարավորություն կտա համայնքի ՏԻՄ-երին ակտիվ մասնակցություն ցուցաբերել վերոհիշյալ հասարակական կազմակերպությունների գործունեությանը:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Բացի բյուջեով նախատեսված միջոցներից՝ «Արաբկիր» բարեգործական հիմնադրամի ներգրաված միջոցներով նախատեսվում է պարբերաբար դրամական և այլ օգնություն ցուցաբերել կարիքավոր ընտանիքներին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, հաշմանդամներին և բնակչության սոցիալապես անպաշտպան այլ խավերին:

Սոցիալական պաշտպանության ոլորտին 2010թ. Երևանի բյուջեից նախատեսվում է տրամադրել 59 125.3 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Ճարտարապետության և հողօգտագործում

Վարչական շրջանի տարածքում շատ են կարմիր գծերի խախտումները: Կան տեղամասեր, հիմնականում ցածրահարկ թաղամասերում, որտեղ ընդհանրապես բացակայում է կառուցապատման գիծ հասկացությունը:

Գոյություն ունեն խառը կառուցապատված թաղամասեր, որտեղ պարագծային կառուցապատված բազմաբնակարան շենքերով պարփակված են անհատական բնակելի տներն իրենց օժանդակ կառուցվածքներով: 4-6-հարկանի բնակելի շենքերի պարագծային կառուցապատումը տեղ-տեղ ընդհատված է անհատական 1-3- հարկանի առանձնատներով: Վերջիններս հիմնականում կառուցապատված են սկզբնապես հատկացված հողամասերում, սակայն քաղաքաշինական կանոնների համատարած խախտումներով: Առանձնատները հիմնականում վերանորոգված են կամ վերակառուցված:

Վարչական շրջանի բակերը մեծ մասամբ անկանոն կառուցապատված են ավտոտնակներով: Շատ տեղերում ռելիեֆի թեքության շնորհիվ կառուցվել են

կիսաստորգետնյա անշուք ավտոկայանատեղեր, որոնց վրա տեղադրված են ավտոտնակներ, կամ ասֆալտապատ խաղահրապարակներ, որոնք ներկայիս քաղաքաշինական չափանիշներին չեն համապատասխանում:

Վերջին տարիների իրականացվող ակտիվ շինարարության հետևանքով ավելի շատ են խառը կառուցապատված հատվածները: Որպես կանոն պակասել են կանաչապատ հատվածները, ջրածածկ մակերևույթներ գրեթե չկան: Բնակելի շենքերի ներբակային տարածքներում ավտոտնակների և այլ շինությունների անկանոն կառուցապատման հետևանքով առաջացել է բարեկարգման և կանաչապատման խիստ անհրաժեշտություն: Տրանսպորտային միջոցների քանակի ավելացման պատճառով շրջանի մի շարք հատվածներում կարիք կա նոր տրանսպորտային հանգույցների և հետիոտնային անցումների ստեղծման: Մանսարդային հարկերի ձևավորման միջոցով, վերակառուցելով անմխիթար վիճակում գտնվող տանիքները, ստանալ նոր բնակելի մակերեսներ՝ պահպանելով շենքերի ճարտարապետական ոճն ու կառուցվածքը:

Տարածքային զարգացում և քաղաքաշինություն

Արաբկիր վարչական շրջանի առևտրի և բնակչությանը մատուցվող ծառայությունների ծավալները պահպանելու, փոքր և միջին բիզնեսի զարգացմանը հնարավորինս աջակցելու նպատակով, առկա ճարտարապետական փոքր ձևերով արտահայտված ժամանակավոր կառույցների (տաղավարներ, կրպակներ և այլն) տեղաբաշխումը կանոնակարգելու, տեղափոխելու կամ արդիականացնելու միջոցով դրանց արտաքին տեսքը մայրաքաղաքին ներկայանալի դարձնելու համար, առաջարկում ենք 2010-2013թթ. կատարել տաղավարների և կրպակների արդիականացում:

Հաշվի առնելով բնակչության սոցիալական վիճակը և փողոցային բացօթյա առևտուրը կանոնակարգելու նպատակով առաջարկվում է շրջանի տարբեր փողոցների ճարտարապետական նորմերին համապատասխան վայրերում կազմակերպել փոքր շուկաներ՝ տեղադրելով թեթև կառուցողական տարրերով բացօթյա տաղավարներ՝ փողոցի կողմից երեսպատված գովազդային

վահանակներով: Աշխատողները կունենան արտահագուստ և մոտակայքում կլինի շարժական սանհանգույց:

Առաջարկվում է Քանաքեռի ջրանցքի աջ ափին կազմակերպել 10,0 հա մակերեսով գերեզմանոց, որը նախատեսվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հայեցակարգով:

Ստորգետնյա ավտոկայանատեղերի համար նախատեսված բակային տարածքներից 4-ում (Կիևյան 10 շենքի բակ, Շիրվանզադեի փող. 2 շենքի բակ, Կոմիտաս 39, 41 և 43 շենքերից մինչև Մամիկոնյանց 35 շենքի բակային հատվածը և Կոմիտաս 23/1 և Վ. Փափազյան 22 շենքերի բակային հատված) իրականացնել կառուցապատման աշխատանքներ:

Տրանսպորտի աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով իրականացնել Հ. Էմինի փողոցը Արդուրյան փողոցին միացնող տրանսպորտային հանգույցի կառուցումը, որը նախատեսված է Արաբկիր վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագծով:

Վերակառուցել Արաբկիր վարչական շրջանը Կոտայքի մարզին կապող Հրազդան գետի վրա և Շրջանցիկ թունելում գտնվող կամուրջները: Վերջինիս վերակառուցումը կարևորվում է նրանով, որ նշված կամուրջը կապ է հանդիսանալու նաև Արաբկիր վարչական շրջանի տարածքում նախատեսվող գերեզմանոց տանող ճանապարհի հետ, որի կառուցումը նախատեսված է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի հայեցակարգում:

Հետիոտնի ավելի անվտանգ տեղաշարժման նպատակով շրջանի մի շարք փողոցներում իրականացնել հետիոտնային վերգետնյա անցումներ կամուրջի տեսքով՝ հատկապես ուշադրություն դարձնելով շրջանի դպրոցներին հարող տարածքներին, որտեղ, ինչպես հայտնի է, հետիոտների տեղաշարժը ավելի մեծ է, իսկ օրվա որոշ ժամերին՝ ավելի մարդաշատ: Օրինակ՝ Ազատության պողոտայի Լ.Տոլստոյի անվ. դպրոցի դիմաց, Ավետիսյան փողոցի բանուկ հատվածում հ.148 դպրոցի մոտակայքում, Բաղրամյան պողոտայում N 172 դպրոցի մոտ և Կոմիտասի պող. հ. 58,62 հասցեում:

Կանաչ տարածքների խնամք և ոռոգում

Նախատեսվում է վարչական շրջանում ընդարձակել կանաչ տարածքները, որն իրագործելու համար անհրաժեշտ է ընթացիկ և հիմնական վերանորոգման ենթարկել գործող ոռոգման համակարգը, կառուցել նոր խողովակաշարեր:

Նախատեսվում է խիտ բնակեցված թաղամասերում նոր այգիների, պուրակների ստեղծում, գազոնային տարածքի վերականգնում, ծառերի և թփերի տնկում, ծաղկային տարածության ընդարձակում, ծառերի երիտասարդացում, ծառերի և թփերի բուժում՝ տարեկան 2 անգամ:

Արտաքին լուսավորություն

Արաբկիր վարչական շրջանում կենտրոնական բոլոր փողոցներում առկա է արտաքին լուսավորությունը և նախատեսվում է ապահովել բոլոր փողոցների և բակերի արտաքին լուսավորությունը:

Ճանապարհային տնտեսություն

Նախատեսվում է իրականացնել փողոցների երթևեկելի և մայթերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ: Խնդիր է դրվում նաև նորոգել փողոցների եզրաքարերը (տարեկան մոտ 800 գծմ), մայթերի սալերը և դիտահորերը (տարեկան մոտ 35 հատ):

Բնակարանային-կոմունալ տնտեսություն

Բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի շահագործում և վերանորոգում

2010-2013թթ. այս ոլորտում նախատեսվում է կատարել աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- հիմնական և մասնակի վերանորոգման ենթարկել բնակելի շենքերի հարթ և թեք լանջավոր տանիքները,
- ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի վերելակային տնտեսությունում,

- վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցերում, ջրհորդան խողովակների վրա, շքամուտքերում, աստիճանավանդակներում,
- բարեկարգել բնակելի շենքերի բակային տարածքները,
- միջամտել վթարային պատշգամբների վերանորոգման,
- վերականգնել բարձրահարկ բնակելի շենքերի պատերից թափված երեսպատման սալիկները,
- խիստ հսկողություն սահմանել համատիրությունների գործունեության նկատմամբ՝ նրանց աշխատանքները բարելավելու և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Աղբահանություն և փողոցների սանիտարական մաքրում

Նախատեսվում է ավելացնել վարչական շրջանի բնակչության կողմից արտադրվող կենցաղային աղբի և փոշու հավաքման և տեղափոխման հաճախականությունը: Կենցաղային աղբի տեղափոխումը կկատարվի ռիթմիկ՝ ըստ մշակված աշխատանքային երկհերթ ժամանակացույցի:

Փողոցների և բնակելի շենքերի բակային տարածքների մաքրման գծով տարեցտարի կավելացվեն մաքրման ենթակա տարածքները:

Առևտուր և սպասարկումներ

Արաբկիր վարչական շրջանում այսօրվա դրությամբ գոյություն ունի 850 հատ առևտրի և բնակչությանը սպասարկող կրպակներ ու տաղավարներ, որոնց որոշ մասի արտաքին տեսքը և տեղադրման վայրը չեն համապատասխանում այսօրվա պահանջներին:

2006թ. մարտի 10-ի «Երևան քաղաքում գործող առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների արդիականացման 2006-2008թթ. ծրագիրը հաստատելու մասին»՝ Երևանի խորհրդի թիվ 3/1 որոշմամբ սահմանված գործողության ժամկետը սպառվել է, սակայն մինչ օրս Արաբկիր վարչական շրջանում արդիականացվել է 3 փողոց (Կոմիտաս, Վրացական և Գյուլբենկյան):

Արաբկիր վարչական շրջանի գրեթե բոլոր փողոցներում գործում է փողոցային առևտուր: Բացօթյա առևտուրը չի համապատասխանում սանիտարական նորմերին և ՀՀ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի պահանջներին:

Վարչական շրջանը չունի գերեզմանոց, և բնակչությունը հուղարկավորության ժամանակ ստիպված է լինում օգտվել տարբեր վարչական շրջաններում տեղաբաշխված գերեզմանոցներից, որն առաջացնում է լրացուցիչ դժվարություններ հեռավորության և տրանսպորտի հարցերում:

Արաբկիրի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը մասնավոր բիզնեսի ընդլայնումն է, որը ներկա պահին նոր աշխատատեղեր ստեղծելու լավագույն բնագավառն է: Նախատեսվում է մարդկանց ամեն տեսակի օժանդակություն ցույց տալ ազատ ձեռներեցությամբ զբաղվելու համար:

Ելնելով վարչական շրջանի բնակչության սպասարկման կուլտուրայի բարելավման անհրաժեշտությունից՝ Արաբկիրի տարածքում նախատեսվում է կազմակերպել առևտրի և սպասարկումների հստակ կանոնակարգում և մշտական վերահսկողություն: Այս ոլորտում առաջնահերթ են հետևյալ խնդիրները՝

- *կարգավորել առևտրի և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխումը վարչական շրջանի տարածքում՝ ուշադրություն դարձնելով նրանց հեռավորությանը կանգառներից, արտաքին տեսքին և համաչափությանը փողոցի ընդհանուր կոլորիտին,*
- *չսահմանված վայրերում արգելել փողոցային առևտուրը,*
- *Ոստիկանության Արաբկիրի բաժնի և հիգիենիկ հակահամաճարակային ծառայության աշխատակիցների հետ համատեղ կազմակերպել ստուգայցեր՝ առևտրի կանոնակարգման և սանիտարական նորմերի ապահովման համար:*

Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ

Դրված նպատակներին հասնելու, խնդիրներն իրականացնելու և ճիշտ որոշումներ կայացնելու համար վարչական շրջանի ղեկավարն իր տրամադրության տակ պետք է ունենա ստույգ և որակյալ տեղեկատվություն իրավիճակի վերաբերյալ:

ՏԻ բոլոր ուղղություններով վարչական շրջանում տեղեկատվական-վերլուծական համակարգչային կենտրոնի ստեղծումը վաղուց դարձել է հրատապ և արդիական խնդիր, որը հնարավորություն կտա ավտոմատիզացնել և արագացնել ՏԻ աշխատատար շատ գործընթացներ, մասնավորապես՝

- զարգացման ծրագրեր մշակելու և իրագործելու գործընթացի առավել արդյունավետ կազմակերպում,
- տեղական ինքնակառավարման լիազորությունների շրջանակում ըստ բնագավառների տվյալների բազաների ստեղծում (բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի, հողատարածքների, կրթության և մշակույթի հիմնարկների, առևտրի և սպասարկումների օբյեկտների և այլնի վերաբերյալ):

Նախատեսվում է բյուջեում միջոցներ հատկացնել համակարգիչների պահպանման և տեխնիկական սպասարկման, նոր համակարգիչներով համալրման, համակարգչային ցանցին միացման և շահագործման համար:

Շրջակա միջավայրի պահպանություն

Վարչական շրջանում գործում է խմելու ջրի ջրամատակարարման և կոյուղու կենտրոնացված համակարգ: Այս ծառայությունների սպասարկման ոչ բավարար մակարդակը առաջին հերթին ցանցի մաշվածության հետևանք է: Ջրի և կոյուղու խողովակների մաշվածության պատճառով կեղտաջրերը կարող են թափանցել ջրամատակարարման համակարգ՝ հարուցելով աղիքային հիվանդություններ:

Չնայած խմելու ջրի մատակարարումը կատարվում է ընդհատումներով, սակայն վերջին տարիներին անընդհատ բարձրանում է մեկ շնչին հասանելիք խմելու ջրի միջին քանակը, ավելանում է ջրամատակարարման ժամանակի տևողությունը: Վարչական շրջանի շատ մասերում արդեն անցել են 24-ժամյա ջրամատակարարման:

Վարչական շրջանի 216 բարձրահարկ շենքերում կենցաղային աղբը կուտակվում է այդ շենքերի 363 մուտքերի աղբախցերում, իսկ մնացած շենքերի կենցաղային աղբը կուտակվում է վարչական շրջանի տարածքում հավասարաչափ

տեղաբաշխված ավելի քան 700 աղբարկղերում: Կուտակված աղբն ամեն օր աղբատար մեքենաները տեղափոխում են աղբավայր:

Աղբահանությունը տարեկան կազմում է մոտ 100 հազար տոննա, որն իրականացվում է վարչական շրջանի տարածքից: Այսօրվա պահանջներին համապատասխան՝ աղբահանություն կազմակերպելու համար անհրաժեշտ է առնվազն 100 մասնագիտացված ավտոմեքենա:

Սպասարկվում է 52 հա կանաչ տարածք, այդ թվում՝ 38.85 հա այգիներ, 6.35 հա պուրակներ, 6.8 հա սիզամարգեր, որտեղ առկա են 26740 հատ հատատունկ ծառեր: Ոռոգման ցանցի երկարությունը 710000 գծմ է, որից տարեկան մասնակի կամ հիմնական վերանորոգման է ենթարկվում 4000-5000 գծմ-ը (մանրամասները տե՛ս «Արարկիր վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն

Վարչական շրջանի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում ապահովելու համար 2010-2013թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ առաջնահերթ խնդիրները՝

- *հաշվառել վարչական շրջանում առկա քաղաքապաշտպանության ընթացիկ ապահովման գույքը,*
- *վերանորոգել առկա և ձեռք բերել նոր ազդարարման և կապի միջոցները,*
- *ապամոնտաժել տարածքում առկա վթարային վերամբարձ կռունկները,*
- *վերանորոգել, համապատասխան կապի միջոցներով ու գույքով ապահովել ԱԻ և ՔՊ պահեստային կառավարման կետը,*
- *կազմակերպել տարածքում ընկնելու վտանգ ներկայացնող բարդի տեսակի ծառերի հատման աշխատանքներ:*

Վարչական շրջանը գտնվում է երկրաշարժերի օջախի Արարատյան տարածքում: Ըստ սեյսմիկ կանխագուշակման տվյալների՝ վարչական շրջանը ենթակա է 8-10 բալ ուժգնության երկրաշարժի:

Շենքերի և կառույցների մեծ մասը կառուցված են 70-80-ական թթ., հաշվարկված են 7-8 բալ ուժգնության համար, իսկ կամուրջներն ու ուղեկամուրջները՝ 8-9 բալ ուժգնության համար:

Արաբկիր վարչական շրջանում առկա են բնակելի ֆոնդի 418 շենքեր, որոնցից 83-ը բարձրահարկ են, 25 շենքեր համարվում են 2-րդ կարգի վթարային:

Տարածքում առկա են 2 խոշոր կամուրջներ (Կիևյան կամուրջ՝ երկարությունը 352մ, լայնությունը՝ 26մ, բեռնատարությունը՝ 60տ և Լամբադա կամուրջ՝ երկարությունը 180մ, լայնությունը՝ 50մ, բեռնատարությունը՝ 60տ):

Վարչական շրջանի տարածքով անցնում է 142 կմ երկարությամբ գազամուղի ցանց, որից բարձր ճնշման 10.8 կմ, միջին՝ 28.9 կմ և ցածր՝ 102.5 կմ երկարությամբ:

Արաբկիր վարչական շրջանի ջրամատակարարումը իրականացվում է 4 աղբյուրից Արզնի 1, Արզնի 2՝ մոտ 1000 լ/վ, Գյումուշ-Արզական՝ 520 լ/վ և Կաթնաղբյուր՝ 350 լ/վ, մոտ 1600 լ/վ ընդհանուր ելքով: Ջուրը տարածքում բաշխվում է 25 գլխավոր փականների միջոցով: Ջրմուղ ցանցի մագիստրալ գծերի ընդհանուր երկարությունը 200 կմ է: Վարչական շրջանում գործում է 3 ջրամբար՝ Կովկասյան փողոցում 5000՝ մ³, Քանաքեռ ՀԷԿ 3000 մ³ և Գրանդ-Սան գործարանի մոտ՝ 7000 մ³ տարողությամբ:

Տարածքում առկա է քիմիական 1 վտանգավոր օբյեկտ՝ «Գրանդ-Սան» ՍՊԸ, որում առկա է 28տ խտացրած ազոտական թթու:

Վարչական շրջանն ունի 26 ապաստարան, ընդհանուր 11350 մարդ տարողունակությամբ, նկուղներ՝ 153652 մարդ տարողունակությամբ, որոնք հարմարեցված են մարդկանց պատսպարելու համար:

Քաղաքի այս տարածքում առկա է ՔՊ 62 օբյեկտ, որոնցից 34-ն ուսումնական հաստատություններ են, 11-ը՝ բուժ հիմնարկություններ, իսկ մնացածը՝ արտադրական և այլ հիմնարկ-ձեռնարկություններ:

Արաբկիր վարչական շրջանն ունի 1 էլեկտրակայան (Քանաքեռ ՀԷԿ), 17 բաշխիչ և 300 տրանսֆորմատորային ենթակայաններ, 21 բարձր լարման և 1200 ցածր լարման հենասյուներ, որոնք 100%-ով ապահովում են վարչական շրջանի էլեկտրաէներգիայի պահանջարկը:

Բնակչությանն ազդարարելու համար վարչական շրջանն ունի Ծ-40 տիպի շշակներ:

Ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Վարչական շրջանի նպատակային գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել ֆինանսական միջոցների գնահատման, կանխատեսման և հայթայթման ճկուն մեխանիզմներ: Արաբկիրն ունի զգալի կարիքներ և սահմանափակ ֆինանսական հնարավորություններ:

Բյուջեի հիմնական սեփական մուտքերը գոյանում են հարկային եկամուտներից՝ հողի հարկ, գույքահարկ և ոչ հարկային եկամուտներից՝ ոչ բնակելի տարածքներից, ավտոտնակների զբաղեցրած տարածքներից գանձվող վարձավճարներից:

Ֆինանսական սեփական բազայի ամրապնդմանն էապես կնպաստի նաև տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման ճկուն մեխանիզմների մշակումը:

2010-2013թթ. նախատեսվում է մշակել և իրականացնել սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք կոնկրետ ծրագրեր, որոնց ֆինանսավորման նպատակով կծավալվի համագործակցություն ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների հետ:

Դ Ա Վ Թ Ա Շ Ե Ն Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն

Դավթաշեն վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ ու Արաբկիր վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Ձևավորվել է 1996թ., իսկ որպես վարչական շրջան վերակազմավորվել է 2009թ-ին: Դավթաշեն վարչական շրջանը գտնվում է ծովի մակերևույթից մոտ 1100մ բարձրության վրա, զբաղեցնում է 686 հա տարածություն Հրազդան գետի աջ ափին: Փողոցների երկարությունը 22,24 կմ է, փողոցների մակերեսը՝ 50 հազ. քմ (մանրամասները տե՛ս «Դավթաշեն վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Դավթաշենի ներկա տարածքը եղել է քարքարոտ և ամայի: Այս տարածքով է անցել «մայր առուն», որը, սկիզբ առնելով Քանաքեռից, կյանք ու շունչ է տվել այդ տարածքին՝ վերջանալով Սպանդարյան՝ այժմյան 4-րդ գյուղում: Այս առվի բերքառատ ափերին են կազմվել 4-րդ և 1-ին գյուղերը: Գյուղի հիմնական բնակիչները 1938 թվականին գաղթել են Ապարանի շրջանի տարբեր գյուղերից և հիմնականում ապրել են գետնափոր հյուղակներում: Մոտ 214 ընտանիք ապրել է Հրազդան գետի աջ ափին, որտեղ տնկված մրգատու ծառերը եղել են սննդի և վառելիքի աղբյուր: Տարածքը հարուստ է եղել նաև տուֆ հանքաքարով, որի հարուստ պաշարով էլ կառուցվել է գյուղը: 1939 թվականին Հայաստանում մեծ շուքով տոնվեց «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակը: Դավթի անունով առաջին գյուղը վերանվանվեց Դավթաշեն, որով էլ առ այսօր ամբողջ տարածքը կրում է այդ գեղեցիկ անունը: 1983-1984 թվականներին գյուղին է միանում նորակառույց թաղամասը, իսկ 1986 թվականից նաև բնակեցվել է՝ դառնալով Երևան քաղաքի Դավթաշեն համայնքի կենտրոնը: Դավթաշեն վարչական շրջանի տարածքը տեղակայված է Երևան քաղաքի արևմտյան մասում:

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Վարչական շրջանի բնակչությունը ներկայումս կազմում է մոտ 40.8 հազ. մարդ⁴¹, այդ թվում՝ 48,1 տոկոս տղամարդիկ և 51,9 տոկոս կանայք: Ծնվածների թիվը 2008թ. 438-ը, որոնք բնակվում են Դավթաշեն գյուղում և բնակելի 4 թաղամասերում: Աշխատունակ է ընդհանուր բնակչության մոտ կեսը, որից զբաղվածների թիվը՝ մոտ 30%: Գործազուրկների մեծամասնությունը կանայք են և նկատվում է այդ թվի հետագա աճի միտում: Աշխատունակ տարիքի կանանց կեսից ավելին ունեն նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխա: Վերջին տարիներին նկատվում է 65 տարեկանից բարձր բնակչության ընդհանուր թվի նվազում, երեխաների թվի աճ: Համայնքի թոշակառուների թիվը ընդհանուր բնակչության մոտ 9%-ը: Կտրուկ նվազել է ընտանիքներով երկարաժամկետ արտագնա աշխատանքների մեկնողների թիվը:

Վիճակի գնահատում

Դավթաշեն վարչական շրջանի առավել վատ վիճակում են գտնվում կոմունալ տնտեսության ցանցերը: Կենտրոնացված ջեռուցման համակարգ գոյություն չունի: Ավարտական փուլում են գտնվում մասնավոր հատվածում և բազմաբնակարան շենքերում գազիֆիկացման աշխատանքները:

Վարչական շրջանի տարածքում ճանապարհային ցանցի ընդլայնման և բարեկարգման պահանջ կա: Արդեն 8 տարի է ինչ գործում է հանրապետական նշանակության Դավթաշենի կամուրջը:

Դավթաշենում գործում են 2 պոլիկլինիկա, 35 արտադրական, 1 տրանսպորտային, 2 սպասարկման ընկերություն-ձեռնարկություններ, 2 կապի հանգույց, 3 բաղնիք, 6 հանրակրթական և 1 երաժշտական դպրոց, 1 մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, 1 գրադարան, 5 մանկապարտեզ, հրշեջ ծառայության 2, առևտրի ու սպասարկման փոքր և միջին օբյեկտներ, հանգստի

⁴¹ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

2 փոքր զբոսայգի, 1 առևտրային փոքր շուկա և այլն (մանրամասնությունները տե՛ս «Դավթաշեն վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Վերջին տարիների ընթացքում համայնքում արտադրությունն աշխուժացել է, անհատ ձեռներեցությամբ է զբաղվում մոտ 500 քաղաքացի:

Վարչական շրջանի ռազմավարությունը

Վարչական շրջանի 2010-2013թթ. ռազմավարությունն է հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել շրջանի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, Դավթաշենը դարձնել մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր: Վարչական շրջանի 2010թ. հիմնական նպատակներն են՝

- *ճշտել վարչական շրջանի գլխավոր հատակագիծը, գոտիավորման քարտեզը և հողօգտագործման սխեման,*
- *կազմակերպել վարչական շրջանում անհատական բնակարանային շինարարության գործընթացը՝ իրականացնելով հողերի վաճառք ազատ տարածքներում,*
- *ապահովել վարչական շրջանի բնակելի շենքերի պահպանումը, շահագործումը և նորոգումը՝ աջակցելով վարչական շրջանի տարածքում գործող համատիրություններին,*
- *ապահովել խոշոր կապիտալ ներդրումներ վարչական շրջանի բնակարանային-կոմունալ տնտեսության, ճանապարհային տնտեսության, հանգստի և բակային տարածքների բարեկարգման բնագավառներում,*
- *ապահովել վարչական շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների անխափան և նպատակային գործունեությունը, այդ կազմակերպությունների զբաղեցրած շենքերում իրականացնել հիմնական վերանորոգման և գույքի ձեռքբերման աշխատանքներ,*
- *վարչական շրջանի տարածքում աջակցել փոքր և միջին ձեռնարկատիրությանը, գյուղատնտեսությանը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր մասնավոր հատվածում,*

- կանոնակարգել գյուղատնտեսական անհատական տնտեսություններին ռոտզման ջրի մատակարարումը, օժանդակել նրանց արտադրած գյուղմթերքների իրացման հարցում,
- միջոցներ ձեռնարկել վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների սոցիալական, բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման համար,
- մշակել համալիր ծրագիր սոցիալապես անապահով ընտանիքների, հաշմանդամների և միայնակ թոշակառուների համար,
- բարձրացնել վարչական շրջանի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը, որակը և մատչելիությունը՝ բարելավելով վարչական շրջանի բյուջեի եկամուտների հավաքագրման աշխատանքները և նպատակային օգտագործելով բյուջեի միջոցները:

Նպատակների առաջադրում և առաջնահերթ խնդիրների ձևակերպում

Դավթաշեն վարչական շրջանի բոլոր հատվածների մանրամասն հատակագծային նախագծերը ՄՀՆ մշակված են բարձրահարկ պետական շինարարության տեսանկյունից, դրանք հնացած են և այսօրվա համար ոչ կիրառելի: 2011թ.-ից սկսած «Երևաննախագիծ» ՊՓԲԸ հետ համատեղ աշխատանքներ կտարվեն Դավթաշենի գլխավոր հատակագծի ճշտման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման ուղղությամբ: Ներկայումս, նոր տնտեսական իրավիճակում, գլխավոր հատակագծի շրջանակներում անհրաժեշտ կլինի վերամշակել գոտիավորման քարտեզը, հողօգտագործման սխեման և բոլոր հատվածների ՄՀՆ-երը: Վարչական շրջանի գլխավոր հատակագծի մակարդակով կճշտվեն քաղաքաշինական, արդյունաբերական նպատակներով օգտագործվող հողերի մակերեսները: Դեռևս խնդիր է բնակարանային ապահովվածությունը:

Դավթաշեն վարչական շրջանում 2010թ կիրականացվեն ծրագրեր 641 528.9 հազ. դրամ գումարի չափով (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Դավթաշենի սոցիալ-տնտեսական զարգացման համար մեծ նշանակություն ունի Երևանի մետրոպոլիտենի «Դավթաշեն» կայարանի կառուցումը: Վարչական շրջանի զարգացման համար ռազմավարական նշանակություն ունի նաև արդեն 9 տարի գործող Դավթաշենի կամուրջը, որի շահագործումն էապես թեթևացնում է քաղաքի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը:

Քաղաքային նշանակության կապիտալ մեծ ներդրումներ պահանջող կարևոր օբյեկտ է Երևան-Եղվարդ մայրուղու վրա գտնվող հանգստի գոտու անավարտ կառույցը, որը կարող է ծառայել ինչպես վարչական շրջանի, այնպես էլ ամբողջ քաղաքի բնակչության առողջապահական, ֆիզիկական կուլտուրայի պահանջներին և մարզական միջոցառումների կազմակերպմանը: Նախատեսվում է Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի քննարկմանը դնել 2010թ կապիտալ նորոգման աշխատանքները (հիմնականում՝ տանիքներ, մարզադահլիճ, սանհանգույցներ)՝ իրականացնելով համայնքի թվով 6 հանրակրթական դպրոցներում և 5 մսուր մանկապարտեզներում:

Վարչական շրջանի տարածքում կառուցվում է «Հույսի ավան» թաղամասը, որը զբաղեցնելու է 15.9 հա տարածք: Կառուցապատումն իրականացվում է քոթեջային տիպի ցածրահարկ շենքերով: Թաղամասը բաղկացած է լինելու թվով 200 1-2-հարկանի տներից, սոցիալ-մշակութային, առևտրի և հանգստի օբյեկտներից: Առաջիկա երեք տարիներին կավարտվի ամբողջ աշխատանքները: Այս աշխատանքները դրական ազդեցություն են թողնում նաև Դավթաշենի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Այն բերել է աշխատատեղերի ստեղծման, որի շնորհիվ լուծվել է մասամբ վարչական շրջանի բնակչության զբաղվածության խնդիրը:

Առանձնահատուկ ուշադրության ու լուծման կարոտ է բնակարանային հիմնախնդիրը:

Գլխավոր հատակագծում կարևոր տեղ պետք է հատկացնել հանգստի գոտիների և բակային տարածքների կազմակերպմանը, հնարավորինս զարգացնելով դրանք: Կարելի է նշել մի քանի կարևոր հանգույցներ, որոնց բացակայությունը վարչական շրջանին զրկում են կենսունակությունից: Չնայած Երևանի հյուսիսային սահմանային դարպաս լինելու հանգամանքին, վարչական շրջանի տնտեսական ոչ

բավարար զարգացման հիմնական պատճառներից մեկը աշխարհագրական դիրքի առավելությունից օգտվել չկարողանալն է: Հետևաբար, պետք է կառուցել մուտքային զարգացած մի հանգույց, որը Երևան մտնող բեռների կուտակչի դեր կկատարի, ապահովելով բեռնատար փոխադրամիջոցների սպասարկումը, բեռների պահեստավորումը, մեծածախ շուկայի կազմակերպումը: Այդպիսի տերմինալի կառուցման համար նախատեսվում է ներգրավել մասնավոր կազմակերպությունների ներդրումներ:

Հաջորդ կարևոր հանգույցը մանրածախ առևտրի զարգացած և ծավալուն գոտու ստեղծումն է: Ամենահարմար տեղը մագիստրալային Աշտարակի և Եղվարդի մայրուղին է, որոնք ունեն իրենց կից չկառուցապատված զգալի տարածքներ: Գլխավոր հատակագծի կարևոր տարր է թաղամասի տրանսպորտային համակարգը՝ փողոցային ցանցի կառուցապատման և վերանորոգման տեսանկյունից: Գլխավոր հատակագծի մակարդակով դեռևս չլուծված խնդիր է մնում բնակարանային հիմնախնդիրը: 2011թ. թաղամասի գլխավոր քաղաքաշինական հատակագծին համապատասխան կկազմվի հողերի օգտագործման սխեման, կճշտվեն քաղաքաշինական, արդյունաբերական նպատակներով օգտագործվող հողերի մակերեսները:

Դավթաշեն վարչական շրջանի մի յուրօրինակ մասն է Դավիթաշեն գյուղը: Այս գյուղատնտեսական միավորի կենսագործունեության պահպանման, նրա և մնացած թաղամասի փոխգործակցության ու կապի ապահովման համար խիստ կարևորվում է համալիր կառուցապատումը: Առաջիկա տարիներին առաջնային նշանակություն կտրվի վարչական շրջանում քաղաքաշինական նորմերի աստիճանական վերականգնմանը: Անկանոն տեղադրված առևտրի ժամանակավոր օբյեկտները կփոխարինվեն կրպակաշարերով, որոնք ներդաշնակորեն կձուլվեն փողոցի համայնապատկերին:

2010-2013թթ. առաջնահերթ խնդիրների թվում են՝

- *վարչական շրջանի տարածքում տեղադրված գովազդների և շինարարական աշխատանքների թույլտվությունների դիմաց ապահովել վարչական բյուջեի մուտքերը տեղական տուրքերի և վճարների գծով,*

- կազմել նախագծեր բնակելի շենքերի բակերի բարեկարգման, բակային ճամբարների կազմակերպման աշխատանքների իրականացման համար,
- մշակված նախագծերի հիման վրա հեղինակային հսկողություն սահմանել վարչական շրջանի տարածքում իրականացվող աշխատանքների նկատմամբ,
- ուժեղացնել հսկողությունը ապօրինի շինարարության նկատմամբ և հասնել դրա իսպառ վերացմանը,
- առաջարկություններ ներկայացնել հողհատկացումներ կատարելու վերաբերյալ՝ վարչական շրջանի բնակելի թաղամասերի տարածքներում խտացման տարբերակով անհատական բնակարանային շինարարության համար,
- երթուղային տրանսպորտի կուտակումները ծանրաբեռնված փողոցներում կանխելու նպատակով օժանդակել վերջնականգառի ձևավորման աշխատանքներին,
- կառուցել մարզամշակութային կենտրոն,
- շարունակել վարչական շրջանի տարածքում տեղադրված առևտրի և սպասարկումների ոլորտի կրպակների և տաղավարների արտաքին տեսքի արդիականացման գործընթացը, կազմաքանդել փողոցների վրա գտնվող չգործող և անհրապույր տեսք ունեցող ժամանակավոր օբյեկտները,
- բենզինի և գազի լիցքավորման կետերի աշխատանքի անվտանգությունը ապահովելու և բնակչության սպասարկման մակարդակը բարձրացնելու նպատակով աստիճանաբար վերացնել ժամանակավոր փոքր կետերը և աջակցել ստացիոնար կետերի ստեղծմանը:

Վարչական շրջանի ուժեղ կողմերը.

- Դավթաշեն վարչական շրջանի աշխարհագրական դիրքը բարենպաստ է հեռանկարային զարգացման համար,
- Վարչական շրջանն ունի գիտաարտադրական մեծ պոտենցիալ,

- Դավթաշենի երիտասարդ զբոսայգու հնարավորությունները թույլ են տալիս կազմակերպել բնակիչների հանգիստը բազմաբնույթ միջոցառումներով:

Վարչական շրջանի թույլ կողմերը.

- Վերջին տարիներին բնակարանային շինարարության բնագավառում պետական միջոցներ ընդհանրապես չեն հատկացվում,
 - Անմխիթար վիճակում են գտնվում վարչական շրջանի կոմունալ-կենցաղային ինժեներական ցանցերի որոշ մասը (Ջրամատակարարման, ջրահեռացման, ջեռուցման, ոռոգման, գազամատակարարման),
 - Կապիտալ վերանորոգման կարիք են զգում վարչական շրջանի կրթության և նախադպրոցական օջախները,
 - Վարչական շրջանում չկա առևտրաարդյունաբերական ապրանքների տիպային կահավորված տոնավաճառ,
 - Շրջանում մեծ թիվ են կազմում գործազուրկները,
 - Գերակշիռ մաս են կազմում վարչական շրջանի ցածր եկամուտ ունեցող բնակիչները,
 - Դեռևս վերջնական լուծում չեն ստացել փախստականների բնակարանային և սոցիալական ապահովության հիմնահարցերը,
 - Վարչական շրջանի ձեռնարկությունների ու կազմակերպությունների թերի ծանրաբեռնվածությամբ աշխատանքը դժվարություններ է առաջացնում քաղաքի բյուջե մուտքագրվող հողի հարկի և գույքահարկի գանձման գործին:
- Ցածր է վարչական շրջանի տարածքում գործող համատիրությունների գործունեության արդյունավետությունը: Այս համակարգը զգալի աջակցության և բարեփոխումների կարիք է զգում:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Վարչական շրջանում գործում է 5 նախադպրոցական հիմնարկ, 6 հանրակրթական դպրոց, 1 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն, 1 երաժշտական դպրոց և 1 գրադարան: Նախադպրոցական հիմնարկներում գործում է

52 խումբ՝ 926 երեխա հաճախելիությամբ, 189 հաստիքային միավորով: Դպրոցներում սովորում է 3590 աշակերտ: Վարչական շրջանի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկները հիմնականում ապահովված են մասնագիտական կադրերով, որոնց շնորհիվ հաջողվել է պահպանել այդ հիմնարկների աշխատանքային ռիթմը: Դպրոցի հոգաբարձուների խորհուրդներում ներգրավված են վարչական շրջանի աշխատակազմի 6 ներկայացուցիչներ:

Դավթաշեն վարչական շրջանում գործող հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտների թիվը 3590 է: Հանրապետությունում աստիճանաբար կարգավորվում է կրթական համակարգի աշխատողների սոցիալական վիճակը: Առաջնային է համարվում կրթական օջախի դերի վերականգնումը և մանկավարժի աշխատանքի նկատմամբ պետության արժանապատիվ վերաբերմունքը: Դպրոցական խորհուրդներում վարչական շրջանի ներկայացուցիչների մասնակցությունը բերում է կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Մանկական նախադպրոցական հիմնարկներ

Վարչական շրջանի թվով 5 նախադպրոցական հիմնարկներում հաճախում է 926 երեխա: Վարչական շրջանի կոմունալ բաժնի կողմից մշակվել է ծրագիր, որի համաձայն նախատեսվում է կապիտալ ներդրումներ կատարել վերը նշված մտր-մանկապարտեզների շենքերի տանիքների հիմնական կամ մասնակի վերանորոգման, տեղային ջեռուցման, հարդարման, բակերի բարեկարգման համար: Ծրագիրը ներկայացվելու է ՀՄՆՀ, այն նախատեսվում է իրականացնել 2010-2013թթ. ընթացքում:

Արտադպրոցական հիմնարկներ

Դավթաշենում գործող մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը (ՄՊՄԿ) տեղակայված է թիվ 22 երաժշտական դպրոցի առանձին մասնաշենքում: Այստեղ հաճախում է մոտ 800 աշակերտ, իսկ աշխատողների թիվը 57 է: Կառույցը գտնվում է անմխիթար վիճակում: Նախատեսվում է ՄՊՄԿ-ի զբաղեցրած տարածքում իրականացնել վերանորոգման և հարդարման աշխատանքներ:

Մշակույթ և սպորտ

Այս բաժնի գործունեության հիմնական նպատակն է անհատի հոգևոր և ֆիզիկական հատկությունների ի հայտ բերումը, ձևավորումը և դաստիարակումը նրա ակտիվ հանգստի ժամանակ: Վարչական շրջանում գործում է Ավետ Տերտերյանի անվան երաժշտական դպրոցը, ուր սովորում է շուրջ 175 աշակերտ: Աշխատողների թիվը 37 է: Այսօր վարչական շրջանը չունի երիտասարդության և ընդհանրապես բնակչության ազատ ժամանակի կազմակերպման, ըստ հետաքրքրությունների և նախասիրությունների ձևավորման կենտրոններ՝ մշակույթի և սպորտի տիպային կառույցներ (բաց ամֆիթատրոն, կինոդահլիճ, մարզադպրոց և այլն): Վարչական շրջանի մշակութային և սպորտային գործունեությունը նպատակալաց և արդյունավետ կազմակերպելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Տիգրան Պետրոսյանի կիսանդրու մոտակայքում սեղանների և նստարանների տեղադրում շախմատային խաղեր կազմակերպելու համար,
- Մարզամշակութային կենտրոնի ստեղծում,
- Կառուցված ֆուտբոլի դաշտերի բարեկարգում,
- Կրոնական ծիսական տոների կազմակերպում,
- Մշակութային միջոցառումների կազմակերպում,
- Սպորտային միջոցառումների կազմակերպում,
- Տարեց մարդկանց ակումբի ստեղծում:

Մարզադպրոց չունենալու պատճառով տարիներ շարունակ մարզական խմբերի պարապմունքներն անցկացվում են վարչական շրջանի տարածքի հանրակրթական դպրոցների մարզադահլիճներում:

Վաղուց հասունացել է վարչական շրջանում մարզադպրոց հիմնելու հարցը, սակայն վարչական շրջանի բյուջեի սղության պատճառով անհրաժեշտություն է առաջանում փնտրել լրացուցիչ ներդրումներ:

Վարչական շրջանում գործում է թիվ 40 գրադարանը, որը օրական սպասարկում է մոտ 80-100 ընթերցողի՝ իր 10 աշխատողներով և 4500 գրքային ֆոնդով: Գրադարանը գտնվում է անմխիթար վիճակում: Մշակվել է ծրագիր և

արժանացել է վարչական շրջանի ղեկավարի համաձայնությանը: 2011թ.-ից կսկսվեն վերանորոգման աշխատանքները:

Կրթության, մշակույթի, հանգստի կազմակերպման, կրոնի և սպորտի համար 2010 թվականին Երևանի բյուջեից նախատեսվում է Դավթաշեն վարչական շրջանին տրամադրել 228 958.5 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Բնակչության սոցիալական պաշտպանություն

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում 2010թ.-ից ևս վարչական շրջանը շարունակելու է իրականացնել պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը՝ վարչական շրջանի տարածքում կկազմակերպի սոցիալական օգնության ծառայության գործունեությունը: Մեր ժամանակին համահունչ է բարեգործական միջոցառումների ձեռնարկումը բնակչության սոցիալապես անապահով խավերին ինչ-որ չափով նեցուկ կանգնելու համար: Հատուկ հոգածության են արժանի վետերանները և հաշմանդամները, որոնց բնակարանային և աշխատանքի հիմնախնդիրները վարչական շրջանի մշտական հսկողության տակ կլինեն:

Դավթաշեն վարչական շրջանի սոցիալական պաշտպանության համար Երևանի բյուջեից նախատեսվում է հատկացնել 20 014.6 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե»):

Կոմունալ տնտեսության ոլորտ

Բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի շահագործում և վերանորոգում

Վարչական շրջանն ունի 183 բնակելի շենք, որոնցից 7-ը 1-ին և 2-րդ կարգի վթարային շենքեր են: Վաղուց հասունացել է շենքերի ամրացման, վերանորոգման աշխատանքները սկսելու անհրաժեշտությունը:

Բնակֆոնդի շահագործումն ու պահպանումը վարչական շրջանի ներկայիս ֆինանսական սուղ պամաններում լուրջ խնդիր է գոնե մասնակիորեն այն լուծելու համար: Վարչական շրջանի բնակարանների ընդանուր մակերեսը 583 հազար քմ է,

որից 349 հազար քմ-ը՝ բնակելի մակերես:Շրջանում առկա 8322 բնակարանների մեծ մասը սեփականաշնորհված է:

Ներկայումս վարչական շրջանում գործող 24 համատիրություններին են հանձնված 140 շենքեր: Փորձը ցույց է տալիս, որ գործող համատիրություններում շենքերի ֆիզիկական վիճակը չի բարելավվել, բնակչությունից գանձվող սպասարկման վարձը բավականացնում է միայն համատիրության վարչական ծախսերի ու որոշ չափով ընթացիկ մասնակի վթարավերականգնման աշխատանքներին: Համատիրությունների աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար մշակվել է համալիր ծրագիր, որի գործունեության ընթացքում կստեղծվեն համատիրությունների միավորումներ: Այսինքն, համատիրությունները կհզորանան ֆինանսապես, և կլայնանա լիազորությունների շրջանակը, ինչը և կբերի ոլորտի առողջացման:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող վարչական շրջանի բազմաբնակարան բարձրահարկ շենքերի վերելակների վերանորոգման ծրագիրը մեծ աջակցություն էր շենքերի կառավարման մարմիններին: Շրջանի 183 բարձրահարկ շենքերում կան 384 վերելակներ, որոնցից 266-ը վերանորոգվեցին այդ ծրագրի շրջանակում:

Բնակարանային ֆոնդի պահպանումը, շահագործումը և նորոգումը վարչական շրջանում իրականացվում է համատիրությունների կողմից: Մշակվել է ծրագրային փաթեթ, որի շնորհիվ կստեղծվեն համատիրությունների միավորումներ: Այն թույլ կտա ժամանակակից խնդիրները, պրոբլեմները լուծել օպտիմալ և արդյունավետ: Մրցակցության պայմաններում ի հայտ կբերվի այս կառույցների գործունեության արդյունավետությունը: Քայլեր կձեռնարկվեն բնակելի ֆոնդի պահպանումն ու շահագործումն ավելի բարձր մակարդակի հասցնելու համար:

2010-2013թթ. այս ոլորտում նախատեսվում է լուծել հետևյալ առաջնահերթ խնդիրները՝

- *հիմնանորոգել բնակելի շենքերի հարթ տանիքները՝ աստիճանաբար ավելացնելով տարեկան աշխատանքների ծավալները,*
- *մասնակի և հիմնական վերանորոգման աշխատանքներ կատարել շենքերի վերելակային տնտեսությունում,*

- վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցերի, սանհանգույցների վրա,
- ապահովել վարչական շրջանի բյուջեի մուտքերը ոչ բնակելի և ավտոտնակների զբաղեցրած տարածքներից,
- ապահովել Փիրումյան փողոցի և վարչական շրջանի բակային տարածքների արտաքին լուսավորությունն ամբողջությամբ, Դավթաշեն սեփական սեկտորի (գյուղի) 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ փողոցների, Դավթաշեն վարչական շրջանի 16-րդ թաղամասի դիմաց աճուրդային հողակտորների, Ազատամարտիկների, Ձոր-1, Ձոր-2, Ձոր-3 թաղամասերի, 3-րդ թաղամասի մասնավոր սեկտորի արտաքին լուսավորության ցանցի ստեղծումը,
- խիստ հսկողություն սահմանել համատիրությունների գործունեության նկատմամբ՝ նրանց աշխատանքները բարելավելու և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով,
- հաշվառման վերցնել քաղաքացիների դիմումները հողհատկացման, ինքնակամ շինությունների օրինականացման, բնակարանների վարձակալական քարտերի անվանափոխման, կոոպերատիվ բնակելի շենքերի փայտերերի անվանափոխման և այլնի վերաբերյալ,
- վարչական շենքի «Բ» մասնաշենքի վերանորոգում,
- Տիգրան Պետրոսյան փողոցում՝ թիվ 189 միջն. դպրոցի հարևանությամբ, վերգետնյա անցումի կառուցում (տվյալ խնդրի լուծման համար ակնկալում ենք ֆինանսական օգնություն դռնոր կազմակերպություններից),
- Սասնա Ծռերի փողոցում՝ Սուրբ Նահատակաց եկեղեցու հարևանությամբ, վերգետնյա անցումի կառուցում (տվյալ խնդրի լուծման համար ակնկալում ենք ֆինանսական օգնություն դռնոր կազմակերպություններից),
- գրադարանի վերանորոգում ,
- մանկապարտեզների վերանորոգում,
- մանկապարտեզների տեղային ջեռուցում,
- կոմունիկացիոն ցանցի ստեղծում ` Սկսած 1997թ.-ից Դավթաշենի տարածքում իրականացվել են մենատնային շինարարության համար

նախատեսված թաղամասերի հողատարածքների աճուրդային վաճառքներ:
Սակայն մինչև օրս նշված թաղամասերում չկա կոմունիկացիոն ցանց:
Անհրաժեշտ է իրականացնել 2որ-1, 2որ-2, 2որ-3, Դավթաշենի 3-րդ
թաղամաս, 16-րդ թաղամասի դիմաց աճուրդային հողակտորների,
Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերի հարևանությամբ աճուրդային
հողակտորների կոմունիկացիոն ցանցի ստեղծում (ջուր, կոյուղի,
էլեկտրականություն):

Դավթաշեն վարչական շրջանում օրինակելի բակային տարածքների ստեղծման նպատակով նախատեսվում է մշակել համայնքի 5 բակային տարածքների բարեկարգման և կառուցապատման ծրագիր և ներկայացնել Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ (ՀՄՆՀ)՝ ֆինանսավորումն ապահովելու նպատակով:

Բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավում

Բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման նպատակով վարչական շրջանն իր մասնակցությունն ու աջակցությունը հանդես կբերի շրջանի ջրամատակարարման և ջրահեռացման, գազամատակարարման և ջեռուցման համակարգերում բարեփոխումներ իրականացնելու գործում: Այժմ Դավթաշեն վարչական շրջանն ունի 18- ժամյա ջրամատակարարում:

Գազամատակարարումը, լինելով անհամեմատ էժան էլեկտրամատակարարումից, զգալի չափով կթեթևացնի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները: 2008թ. այդ ուղղությամբ արդեն բավականին աշխատանքներ են կատարվել: «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն 2010-2013թթ. ծրագրով նախատեսում է ավարտել Դավթաշեն վարչական շրջանի բնակելի շենքերի գազամատակարարման աշխատանքները:

Անհամեմատ բարդ խնդիր է ջեռուցման համակարգի հիմնական վերանորոգումն ու վերականգնումը, որն ընդգրկում է 1 կաթսայատուն, 13 ջերմային հանգույցներ, 13 կմ երկարությամբ խողովակաշարերի մեծ ցանց, 180-ից ավելի ջեռուցվող օբյեկտներ, այդ թվում՝ բնակելի շենքեր, նախադպրոցական հիմնարկներ, դպրոցներ և այլ օբյեկտներ: Հիմնական վերանորոգման համար կպահանջվեն

ահռելի ծախսեր, որոնց հնարավորությունը համապատասխան կազմակերպությունը (ջեռուցման գրասենյակը) չունի: Այստեղ է, որ մշակվել է ռեալ համալիր ծրագիր, որի հիմքում ընկած է տեղային ջեռուցման համակարգերի կառուցումն և ներդրումը: Ծրագրի շնորհիվ վարչական շրջանի հանրակրթական դպրոցներն անցել են արդեն տեղային ջեռուցման:

Աղբահանություն և փողոցների մաքրում

Նախատեսվում է ավելացնել վարչական շրջանի բնակչության կողմից արտադրվող կենցաղային աղբի և փոշու հավաքման ու տեղափոխման հաճախականությունը: Կենցաղային աղբի տեղափոխումը կկատարվի ռիթմիկ, ըստ մշակված աշխատանքային երկհերթ ժամանակացույցերի, 1 երթուղիով: 2010-2013թթ. «Դավթաշենի սանտեխսպասարկում» ՍՊԸ սանիտարական մաքրման աշխատանքների արժեքը 1քմ մաքրվող տարածքի համար, ըստ նախնական հաշվարկի, կկազմի մոտ 200-350 դրամ, իսկ 1 խմ աղբի տեղափոխման համար կպահանջվի մոտ 3000-4500 դրամ, տեղափոխվող աղբի կշիռը տարեկան կկազմի 32-42 հազար խմ:

«Դավթաշենի սանտեխսպասարկում» ՍՊԸ 2010-2013թթ. նախատեսվում է մեքենայական պարկի օգտագործման մակարդակը ներկայիս 0,4%-ից հասցնել 0,7%, նոր աղբահարթակների կառուցում՝ 12 տեղում, աղբարկղերի թարմացում և ավելացում տարեկան 40 հատով, ինչպես նաև ձեռնարկության մեքենայական պարկի թարմացում 8 միավորով, այժմ առկա է 15 միավոր, տեղափոխվում է 28 հազ. խմ աղբ: Նախատեսվում է պահպանել հիմնական աշխատողների թվաքանակը՝ մարդ, ավելացնելով աշխատանքների ծավալները և աշխատակիցների աշխատավարձը: Փողոցների և բնակելի շենքերի բակային տարածքների մաքրման գծով նախատեսվում է ավելացնել մաքրման ենթակա տարածքները:

Կանաչ տարածքների խնամք և ոռոգում

2010-2013թթ. նախատեսվում է վարչական շրջանում ընդարձակել կանաչ տարածքները շուրջ 3 հա-ով: Այդ նպատակով անհրաժեշտ է ընթացիկ և հիմնական վերանորոգման ենթարկել գործող ոռոգման համակարգերը, կառուցել և վերանորոգել

խողովակաշարեր Փիրույան փողոցում՝ 2300զժմ և Տիգրան Պետրոսյան փողոցում՝ 2600զժմ երկարությամբ: Դավթաշեն վարչական շրջանի ոռոգման ցանցի երկարությունը կազմում է 26700զժմ: Նախատեսվում է թաղամասերում նոր այգիների ստեղծում, գազոնային տարածքի վերականգնում, ծառատնկում՝ 400 ծառ, ծառերի երիտասարդացում՝ 500 ծառ, թփերի տնկում՝ 600 թուփ, ծաղկային տարածության ընդարձակում 400 քմ-ով, ծառերի և թփերի բուծում՝ տարեկան 2 անգամ: Նախատեսվում է նաև բարեկարգման աշխատանքներ իրականացնել վարչական շրջանում գործող ՄԱԿ-Ի օժանդակությամբ հիմնադրած այգում:

Արտաքին լուսավորություն

2008թ. ապահովվել է Տիգրան Պետրոսյան, Սասնա Ծռերի փողոցների արտաքին լուսավորությունը՝ 5000զժմ ընդհանուր երկարությամբ: Արտաքին լուսավորության ցանցի ամբողջ հզորությունը վերականգնելու նպատակով անհրաժեշտ է շարունակել գոյություն ունեցող ցանցի վերակառուցման և նոր ցանցերի կառուցման աշխատանքները: Բացի այդ, կատարվելիք աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ոլորտի ինտենսիվ զարգացման ուղղված մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝ էներգատար տեխնոլոգիաների կրճատում, ցանցի ավտոմատացում, նոր տրանսպորտային և տեխնիկական միջոցների ներդրում: 2010-2013թթ. նախատեսվում է ամբողջությամբ ապահովել Փիրույան, Աղաբաբյան փողոցների և վարչական շրջանի բակային տարածքների արտաքին լուսավորությունը, Դավթաշեն սեփական սեկտորի (գյուղի) 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ փողոցների, Դավթաշեն վարչական շրջանի 16-րդ թաղամասի դիմաց աճուրդային հողակտորների, Ազատամարտիկների, Ձոր-1, Ձոր-2, Ձոր-3 թաղամասերի, 3-րդ թաղամասի մասնավոր սեկտորի արտաքին լուսավորության ցանցի ստեղծումը:

Ճանապարհային տնտեսություն

Նախատեսվում է 2010-2013թթ. վարչական շրջանում իրականացնել փողոցների երթևեկելի հատվածի և մայրերի ասֆալտե ծածկույթի ընթացիկ և

կապիտալ վերանորոգման աշխատանքներ: 1քմ ասֆալտապատման աշխատանքների արժեքը կտատանվի 3750-4500 դրամի սահմաններում:

Խնդիր է դրվում նաև նորոգել փողոցների եզրաքարերը (տարեկան 250զձմ)՝ մայթերի սալեր, դիտահորեր (տարեկան մոտ 12 հատ) բարեկարգել մայթերին հարող սիզամարգեր:

Գերակա խնդիր է Տիգրան Պետրոսյան փողոցում՝ թիվ 189 միջն. դպրոցի հարևանությամբ, վերգետնյա անցումի կառուցումը և Սասնա Ծոերի փողոցում՝ Սուրբ Նահատակաց եկեղեցու հարևանությամբ, վերգետնյա անցումի կառուցումը (տվյալ խնդրի լուծման համար ակնկալում ենք ֆինանսական օգնություն դոնոր կազմակերպություններից):

Գյուղատնտեսություն և շրջակա միջավայրի պահպանություն

Վարչական շրջանում գործում է ջրի և կոյուղու կենտրոնացված համակարգ: Այս ծառայությունների սպասարկման առայժմ բավարար մակարդակը հետևանք է մասնակի իրականացված վերանորոգման աշխատանքների: Խմելու ջրի մատակարարումը, ճիշտ է, կատարվում է, որոշ ընդհատումներով, ջրի օրական միջին ծախսը բոլոր նպատակների համար մեկ անձի հաշվարկով վերջին տարիների ընթացքում անընդհատ նվազում է, սակայն օրական արդեն 15-18-ժամյա ջրամատակարարում է իրականացվում:

Մեկ շնչին ընկնող պինդ թափոնների քանակը վերջին տարում կազմել է 1.5խմ: Հեռացվող պինդ թափոնները տեղափոխվում են քաղաքի ծայրամասում գտնվող բացօթյա աղբավայր: Աղբահանությունը տարեկան կազմում է մոտ 28 հազ. խմ, այդ թվում բնակչությունից մոտ 24 հազ. խմ:

Շրջանը կանաչապատման կազմակերպության կողմից սպասարկվում է 18.4հա տարածք:

Դավթաշենի գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են վարչական շրջանի արևմտյան մասը, ձգվում են հյուսիսից հարավ, տարածված են կիսաանապատային գորշ և բաց շագանակագույն հողերի գոտում: Գտնվելով չոր

կլիմայական գոտում և բնական թեքությունների վրա, բնականից աղքատ լինելով հումուսով՝ 1-2 տարի չմշակվելու դեպքում նրանք շատ արագ ենթարկվել են կլիմայական գործոնների ազդեցությանը:

Ներկայումս վարչական շրջանի սեփական սեկտորի պտղատու այգիները ծերացել են ժամանակին ագրոտեխնիկական միջոցառումներ չստանալու պատճառով (ոռոգում, բուժում, պարարտացում, երիտասարդացում, լրացում և այլն), կորցրել են կենսունակությունը, նվազել է 1հա-ի հաշվով միջին բերքատվության ցուցանիշը:

Այս բնագավառի զարգացումը Դավթաշենի վարչական շրջանը տեսնում է պիտանի պահուստային հողերը վարձակալությամբ բնակչությանը հանձնելու մեջ, հնարավորության սահմաններում օգնելով նրանց ձեռք բերել շուկայականից ցածր գներով սերմեր և թունաքիմիկատներ:

2010-2013թթ. նախատեսվում է լուծել հետևյալ միջոցառումները՝

- կազմակերպել վարչական շրջանի գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառում, փաստագրում և պայմանագրային հիմունքներով բնակչությանը վարձակալությամբ հողհատկացում,
- գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության նոր պայմանագրերի կնքում, օգտագործման դիմաց վարձավճարների գանձում,
- անհատական գյուղատնտեսական տնտեսություններին ոռոգման ջրով ապահովելու նպատակով աջակցել վարչական շրջանի ջուր օգտագործողներին կնքելու պայմանագիր «Ոռոգում» ՊՓԲԸ-ի հետ, սահմանել ոռոգման ցանցից օգտվելու կանոնակարգ և վերահսկողություն,
- համապատասխան մասնագիտացված կազմակերպության հետ համատեղ կատարել վարչական շրջանի գյուղատնտեսական նշանակության հողերի նոր գնահատում, ճշտել յուրաքանչյուր հողակտորի կարգը, կադաստրային արժեքը, կազմել վարչական շրջանի հողերի նոր քարտեզները,
- ոռոգման ջրի կորուստները նվազեցնելու նպատակով կատարել վարչական շրջանի ոռոգելի հողատարածքների ներտնտեսային ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքներ,

- աջակցել շրջակա միջավայրի առողջացմանը և սանիտարական մաքրությանը,
- կազմակերպել շրջակա միջավայրի պահպանությունը,
- կատարել վարչական շրջանի տարածքի էկոլոգիական հետազոտում, կազմել էկոլոգիական միջոցառումների պլան:

Առևտրի և սպասարկումների ոլորտ

Վարչական շրջանում գործում են առևտրի և սպասարկումների 150 փոքր և միջին օբյեկտներ, որոնցից 9-ը բենզինի և գազի լիցքավորման կետեր են: Ներկայումս համայնքի բյուջեի սեփական եկամուտների զգալի մասը գոյանում է առևտրի և սպասարկումների օբյեկտներից գանձվող տուրքերից և վարձավճարներից:

Դավթաշեն վարչական շրջանի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը մասնավոր բիզնեսի ընդլայնումն է, որը ներկա պահին նոր աշխատատեղեր ստեղծելու լավագույն բնագավառն է: Վարչական շրջանում այսօր չկա քիչ թե շատ մեծ, ինչպես գյուղատնտեսական մթերքների շուկա, այնպես էլ առևտրաարդյունաբերական ապրանքների տոնավաճառ: Այս կարևոր խնդրի լուծումը բնակչությանը կազատի հասնելու Արաբկիր կամ Մալաթիա ամենաանհրաժեշտ գնումներ կատարելու համար, կթեթևացնի քաղաքային տրանսպորտի ծանրաբեռնվածությունը: Մեր գնահատմամբ՝ այս խնդրի լուծումը հնարավորություն կտա զգալի չափով ավելացնել բյուջեի մուտքերը, ներդրվող ֆինանսական միջոցները արագ կփոխհատուցվեն:

Ելնելով վարչական շրջանի բնակչության սպասարկման կուլտուրայի բարձրացման անհրաժեշտությունից՝ Դավթաշենի տարածքում նախատեսվում է կազմակերպել առևտրի և սպասարկումների հստակ կանոնակարգում և մշտական վերահսկողություն: Այս բնագավառում շրջանն իր առջև դնում է հետևյալ առաջնահերթ խնդիրները՝

- *կարգավորել առևտրի և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխումը վարչական շրջանի տարածքում՝ ուշադրություն դարձնելով նրանց*

հեռավորությանը կանգառներից, արտաքին տեսքին և համաչափությանը փողոցի ընդհանուր կոլորիտին,

- կատարել պարբերաբար ստուգումներ տեղի թույլտվության, ժամանակին մուծումներ կատարելու և կրպակների չափերի համապատասխանության նպատակով,
- կազմակերպել տարածքում հեղուկ գազի, բեռնատար ավտոմեքենաներից շինանյութի, կոշտ վառելիքի և գյուղատնտեսական մթերքների վաճառքը, բացօթյա առևտուրը,
- արգելել փողոցային առևտուրը, անօրինական օբյեկտների տեղադրումը վարչական շրջանի տարածքում,
- ապահովել քաղաքային բյուջեի մուտքերը վարչական շրջանի ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարների, տեղական տուրքերի և վճարների գծով:

Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն

Վարչական շրջանում քիմիական վտանգավոր օբյեկտներ չկան, առկա է թվով 4 բենզալցակայան (հրդեհապայթյունավտանգ), թվով 3 գազալցակայան (պայթյունավտանգ) և թվով 2 գազալցման շարժական կետ (պայթյունավտանգ):

Վարչական շրջանի իսկելու ջուրը մատակարարվում է երկու ջրատարներով՝ Ապարանից միջին հոսքը 800 լ/վրկ և Քասախից օրվա կարգավորման ջրամբար (ՕԿՁ) միջին հոսքը 150 լ/վրկ հզորությամբ:

Դավթաշենի էլեկտրամատակարարումն իրականացվում է թվով 3 ենթակայանների միջոցով՝ «Զովունի- 220 ԿՎ», «Դավթաշեն-110 ԿՎ» և «Աջափնյակ 1-35 ԿՎ»: Բարձր լարման հոսանքը ապահովվում է վարչական շրջանի տարածքում տեղադրված 58 տրանսֆորմատորային ենթակայանների միջոցով: Սնուցումն ապահովվում է 62 387մ մալուխային (ստորգետնյա) և 2 710մ օդային գծերի միջոցով:

Վարչական շրջանն ունի 2՝ «Արաքս» գործարանի տարածքում-2550 մարդ/տարողությամբ և «Հայֆիլմ» կինոստուդիայի տարածքում-450 մարդ/տարողությամբ ապաստարաններ, որոնք գտնվում են ոչ բարվոք վիճակում, չեն համապատասխանում ինժեներատեխնիկական գործող նորմերին: Բնակչության պատասպարման համար օգտագործվում են նաև բնակելի շենքերի և սեփական տների նկուղները: Որպես պահեստային կառավարման կետ ընտրված է «Արաքս» գործարանի ապաստարանը, որը կարիք ունի վերանորոգման և ժամանակակից տեխնիկայով հագեցման:

Բնակչության ազդարարման համար վարչական շրջանում առկա են U-40 տիպի 1 էլեկտրաշչակ, նախատեսվում է տեղադրել ևս 4-ը:

Աղետների ժամանակ բնակչության տարհանման համար ստեղծված են 6 տարհանման հավաքակայաններ (ՏՀԿ), որոնք տեղակայված են հիմնականում հանրակրթական դպրոցներում, իսկ ժամանակավոր տարհանման կետեր (ԺՏԿ) հանդիսանում են թվով 5 մտուր- մանկապարտեզները:

Վարչական շրջանի տարածքում առկա են թվով 12 գործող վերամբարձ կռունկներ:

Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

Դավթաշենի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով աշխատակազմում պարբերաբար կկազմակերպվեն վարչական շրջանի ղեկավարի և ավագանու անդամի ընդունելության օրեր, որի շնորհիվ բնակչությունը հնարավորություն կունենա բարձրացնելու իրեն հուզող հարցերը, մասնակցելու վարչական շրջանի կառավարմանն ու զարգացմանը:

Վարչական շրջանի իրավաբանական բաժինը վարչական շրջանի քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների համար կկատարի իրավախորհրդատվական աշխատանք, կքննարկի նրանց իրավունքների խախտումների վերաբերյալ գանգատներն ու դիմումները, կաջակցի նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Աշխատանքներ կկատարվեն վարչական շրջանի կողմից կնքվող պայմանագրերի, ավագանու և քաղաքապետի որոշումների օրինականությունն ապահովելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում վարչական շրջանի շահերը կներկայացվեն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դրանք կպաշտպանվեն դատարանում (հայցվոր, պատասխանող, երրորդ անձ):

Համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ

Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել ՀՀ-ում գործող հասարակական կազմակերպություններին, մասնավորապես՝ «Հայաստանի համայնքների միությանը», «Հայաստանի ավագանիներին», «Համայնքների ֆինանսիստների միավորմանը» «Հուսո աստղին», Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնին, որը հնարավորություն կտա վարչական շրջանին ակտիվ մասնակցություն հանդես բերելու վերոհիշյալ հասարակական կազմակերպությունների գործունեությանը: Դավթաշեն վարչական շրջանում գործում է «Հուսո աստղ» հասարակական կազմակերպությունը: Այն աջակցում է շրջանի հաշմանդամ երեխաներին: Կազմակերպում է անհատական պարապմունքներ, թույլ լսող և լեզվական արատ ունեցողների համար:

Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություններ

Դրված նպատակներին հասնելու, խնդիրներն իրականացնելու և ճիշտ որոշումներ կայացնելու համար վարչական շրջանի ղեկավարն իր տրամադրության տակ պետք է ունենա ստույգ և որակյալ տեղեկատվություն վարչական շրջանի իրավիճակի վերաբերյալ: Վարչական շրջանում տեղեկատվական-վերլուծական համակարգչային կենտրոնի ստեղծումը վաղուց դարձել է հրատապ ու արդիական խնդիր, որը հնարավորություն կտա ավտոմատացնել և արագացնել աշխատակազմի աշխատատար շատ գործընթացներ, մասնավորապես՝

- ընտրություններ և հանրաքվեներ անցկացնելու համար վարչական շրջանի բնակչության ընտրական ցուցակների նախապատրաստում,
- վարչական շրջանի գործավարության կազմակերպում,

- Դավթաշեն վարչական շրջանի բյուջետային գործընթացի արդյունավետ կազմակերպում,
- զարգացման ծրագրեր մշակելու և իրագործելու գործընթացի առավել արդյունավետ կազմակերպում,
- վարչական շրջանի լիազորությունների շրջանակում ըստ բնագավառների տվյալների բազաների ստեղծում (բնակելի և ոչ բնակելի ֆոնդերի, հողատարածքների, կրթության և մշակույթի հիմնարկների, առևտրի ու սպասարկումների օբյեկտների և այլնի վերաբերյալ),
- լրացուցիչ համակարգչային ծառայության մատուցում:

2010-2013թթ. նախատեսվում է Համայնքների ֆինանսիստների միավորման, Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի և այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ ձեռք բերել և ներդնել վարչական շրջանի բնագավառի համակարգչային համապատասխան ծրագրային ապահովում (ընտրական ցուցակների նախապատրաստում, գործավարության կազմակերպում, համայնքային ծրագրային բյուջետային գործընթացի ներդրում, բնակչության ռեգիստր, քաղաքաշինական քարտեզագրություն և այլն), ստեղծել շրջանային տեղեկատվական- վերլուծական կենտրոն:

2010թ. նախատեսվում է վարչական շրջանի բյուջեում միջոցներ հատկացնել համակարգիչների պահպանման և տեխնիկական սպասարկման (պայմանագրային եղանակով), նոր համակարգիչներով համալրման, համացանցից միացման և շահագործման համար:

2010թ. նախատեսվում է վարչական շրջանում ստեղծել լրատվական կենտրոն, ձեռք բերել տեսախցիկ և այլ սարքավորումներ՝ համայնքի գործունեության վերաբերյալ առավել օպերատիվ լրատվություն հավաքելու և լուսաբանելու նպատակով: Նոր օրենսդրական և ենթօրենսդրական ակտերը ժամանակին ստանալու համար ծրագրվում է բաժանորդագրվել պաշտոնական տեղեկագրեր, մասնագիտական և հասարակական-քաղաքական թերթեր ու ամսագրեր:

Վերոհիշյալ խնդիրների լուծումը հնարավորություն կտա բարձրացնել վարչական շրջանի աշխատակազմի գործունեության հրապարակայնությունն ու

թափանցիկությունը, իսկ շրջանի բնակիչներին՝ առավել ակտիվորեն մասնակցել վարչական շրջանի կառավարմանն ու բարգավաճմանը:

Վարչական շրջանի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Վարչական շրջանի նպատակային գործունեությունն ապահովելու համար կմշակվի ֆինանսական միջոցների գնահատման, կանխատեսման և հայթայթման ճկուն մեխանիզմներ: Դավթաշեն վարչական շրջանն ունի զգալի կարիքներ և սահմանափակ ֆինանսական հնարավորություններ:

Դավթաշեն վարչական շրջանի բյուջեի հիմնական սեփական մուտքերը գոյանում են ոչ հարկային եկամուտներից՝ առևտրի և սպասարկումների ոլորտի օբյեկտներից, ոչ բնակելի տարածքներից, ավտոտնակների զբաղեցրած տարածքներից գանձվող վարձավճարներից:

Վարչական շրջանի ֆինանսական սեփական բազայի ամրապնդմանը նպաստեց նաև տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման ճկուն մեխանիզմների մշակումը:

Բյուջեի մուտքերի զգալի մասը կկազմի ֆինանսական համահարթեցման սկզբունքով ՀՀ պետական բյուջեից հատկացվող դոտացիան:

2010-2013թթ. նախատեսվում է մշակել և իրականացնել սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք կոնկրետ ծրագրեր, որոնց ֆինանսավորման նպատակով կծավալենք համագործակցություն ՀՀ-ում գործող տարբեր հիմնադրամների (ՀՄՆՀ, «Փրկեք երեխաներին» և այլն) հետ, իսկ վարչական շրջանի բյուջեում կնախատեսվեն վարչական շրջանի կողմից պահանջվող ներդրումները:

Չնախատեսված ծախսերի և արտակարգ իրավիճակների համար վարչական շրջանի բյուջեում կնախատեսվի պահուստային ֆոնդ, որի ծախսային ուղղությունները կընդունվեն քաղաքապետի և ավագանու որոշումներով: Պահուստային ֆոնդի մի զգալի մասը նախատեսվում է մասհանում անել ֆոնդային բյուջե՝ կապիտալ ներդրումներ և վերանորոգման աշխատանքներ իրականացնելու համար:

Է Ր Ե Բ ՈՒ Ն Ի Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն

Էրեբունի վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Կենտրոն, Նորք-Մարաշ, Նոր Նորք, Շենգավիթ և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի և Արարատի մարզերին:

Էրեբունի վարչական շրջանը զբաղեցնում է 4880 հա տարածք, երկարությունը 86.5 կմ է, փողոցների մակերեսը՝ 2,375 հազ. քմ (մանրամասները տե՛ս հավելված):

Վարչական շրջանի տարածքով անցնում են Գետառ, Ջրվեժ և Ողջաբերդ գետերը:

Էրեբունի ուրարտական քաղաքը հիմնադրվել է մ.թ.ա. 782թ-ին, ուրարտական թագավոր Արգիշտի Ա-ի օրոք, Արին-բերդ բլուրի շուրջը: Այն ռազմավարական հենակետ էր և իր հզոր զինվորական կայազորով կոչված էր ամրապնդելու երկրի դիրքերը հյուսիսային սահմանների հատվածում:

Միջնաբերդն ունեցել է որոշակիորեն արտահայտված երեք հիմնական մասեր՝ պալատական, պաշտամունքային և տնտեսական:

Էրեբունին Հին Արևելքի այն եզակի քաղաքներից է, որտեղ հանդիպելով հանգուցվում են երկու հինավուրց մշակույթներ՝ ուրարտական և աքեմենյան-պարսկական: Մյուս կողմից Էրեբունիի կառույցները հայկական դասական ճարտարապետության կարևոր ու հիմնական ելակետ են հանդիսացել:

Էրեբունիում կյանքը շարունակվել է նաև հետագա դարերում, ընդհուպ մինչև ժամանակակից Երևանը, նույն անվամբ, միայն դարերի ընթացքում փոխակերպված ձևով՝ Էրեբունի, Երևան:

Տարածքն առավել արժևորվում է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գոյությամբ: Երևանի հարավարևելյան արվարձանում՝ Արին-բերդ բլրի ստորոտին 1968թ. կառուցված «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը բացվել է նույն տարվա հոկտեմբերի 20-ին՝ Երևանի 2750-ամյա հոբելյանի տոնակատարության օրը: Արգելոց-թանգարանը ներկայացնում է մ.թ.ա. 782թ. հիմնադրված Էրեբունի քաղաք-ամրոցի պատմությունն ու մշակույթը:

Բացօթյա թանգարանը զբաղեցնում է ավելի քան 2 հա տարածք: Այն ներկայացնում է ռազմական, տնտեսական ու կրոնական համալիրների

ամբողջություն: Դրանց մեծ մասը հողագերծվել է 1960-ականների վերջին կատարված պեղումների ժամանակ:

Ցուցասարահներում ներկայացված են Էրեբունի, Կարմիր բլուր հնավայրերի և Երևանի մ. թ. ա. VIII դ. ուրարտական դամբարանի պեղումներից հայտնաբերված բարձրարվեստ նյութեր: Դրանց մեջ հատկապես առանձնանում են կարմիր անգոբապատ ցլազուլի և առյուծազուլի կավանոթները, Սարդուրի II-ի բրոնզե սաղավարտը, Էրեբունիի որմնանկարների հատվածները, արծաթե եղջերազավաթները և այլ արժեքներ:

Ցուցադրության օրգանական շարունակությունն է Արին-բերդ բլրի գագաթին պեղված միջնաբերդն իր պալատական, կրոնական ու տնտեսական շինություններով: Այստեղ է գտնվում նաև հուշարձանի ամենակարևոր գտածոն՝ Էրեբունի քաղաք-ամրոցի հիմնադրման մասին սեպագիր արձանագրությունը: Այն հնամենի Էրեբունի - Երևանի անձնագիրն է:

Թանգարանային հավաքածուի բացառիկ արժեքները բազմիցս ցուցադրվել են Լուվրում (Ֆրանսիա), Մետրոպոլիտեն թանգարանում (ԱՄՆ), Էրմիտաժում (Ռուսաստան), Բրիտանական թանգարանում (Մեծ Բրիտանիա) և հանրահայտ այլ մշակութային օջախներում:

Էրեբունին մինչ վարչական շրջան դառնալը 1939թ. հուլիսի 20-ից եղել է Մոլոտովյան շրջան, իսկ տեղական իշխանության մարմինը՝ Հայկական ԽՍՀ աշխատավորների դեպուտատների Երևան քաղաքի Մոլոտովյան շրջսովետ:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1957թ. սեպտեմբերի 25-ի հրամանագրով Մոլոտովյան շրջանը վերանվանվել է Լենինյան շրջանի: Իսկ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ նախագահության 1961թ. նոյեմբերի 13-ի հրամանագրով, Լենինյան շրջանը վերանվանվել է Օրջոնիկիձեի շրջանի:

ՀՀ վարչապետի 23.02.1996թ. որոշմամբ շրջխորհրդի գործկոմները լուծարվել են և 04.03.1996թ. որոշումով ստեղծվել է Երևանի քաղաքապետարանի Էրեբունու (տարածքային) բաժինը, 1997թ.-ից՝ Էրեբունու թաղապետարանը (թաղային համայնք), 2008թ. դեկտեմբերի 28-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ դարձել է Էրեբունի վարչական շրջան:

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Վարչական շրջանի բնակչությունը կազմում է մոտ 120.6 հազ. մարդ⁴²՝ այդ թվում 46,7 տոկոս տղամարդիկ և 53,3 տոկոս կանայք, ծնվածների թիվը 2008թ. եղել է 1828:

Էրեբունի վարչական շրջանի տարածքում գործում են հանրապետական նշանակության «Էրեբունի» և «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնները, որոնք ընդգրկում են 2 ծննդատուն, 6 ամբուլատոր պոլիկլինիկա: Վարչական շրջանում գործում է 22 հանրակրթական դպրոց, 1 արհեստակցական ուսումնարան, 1 արտադպրոցական հիմնարկ, 13 մանկապարտեզ, 1 մարզադպրոց, 1 արվեստի տուն, 37 արդյունաբերական ձեռնարկություն, 15 շինարարական կազմակերպություն, 20 տրանսպորտային ձեռնարկություն, առևտրային և սպասարկման 700-ից ավելի փոքր ու միջին օբյեկտ (մանրամասները տե՛ս «Էրեբունի վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Վիճակի նկարագիր

Էրեբունի վարչական շրջանում մեծ է անապահով, ուշադրություն և հոգատարություն պահանջող բնակիչների թիվը:

Հիմնական և մասնակի նորոգման ու բարելավման կարիք ունի վարչական շրջանին պատկանող ճանապարհային ցանցը՝ 41.5 կմ երկարությամբ: Այս ոլորտի հետ կապված բարդությունը պայմանավորված է սողանքային տարածքների մակերեսի մեծությամբ, որի հետևանքով ավելանում են ոչ միայն վթարային շենքերի, այլ նաև ճանապարհների վթարային հատվածների թիվը: Ուստի, 2010-2013թթ. ճանապարհների ընթացիկ վերանորոգման ծավալը կկազմի մոտ 100000թ/մ: Ասֆալտապատման աշխատանքներ կկատարվեն վարչական շրջանի ավելի քան 50

⁴² Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

փողոցներում: 8 մլն դրամ հատկացումով կվերանորոգվեն ճանապարհների շուրջ 400ք/մ հենապատերը:

Սանիտարական մաքրման աշխատանքների համար նախատեսվում է ծախսել 1մլրդ. 535 մլն դրամ: Կոնտեյներային եղանակով աղբահանության կազմակերպման համար անհրաժեշտ է ձեռք բերել ավելի քան 200 կոնտեյներ, որի համար կտրամադրվի 6 մլն դրամ: Կկազմակերպվեն ոչ միայն սանիտարական մաքրման շաբաթօրյակներ ու միամսյակներ, այլև շարունակական աշխատանքներ՝ ներգրավելով վարչական շրջանի հիմնարկ-ձեռնարկություններին և ազգաբնակչությանը:

Ջրային կառույցների պահպանման և շահագործման, այդ թվում նաև՝ հեղեղատար ցանցի և գետերի հունների (5200-5400խ/մ) մաքրման ամենամյա աշխատանքների համար նախատեսվում է 68 մլն դրամ:

Շրջակա միջավայրի, մարդու կենսագործունեության համար առավել վճռական դեր խաղացող գործոններից մեկը կանաչ զանգվածի առկայությունն է: Բնապահպանական այս կարևոր գործոնը կարգավորելու համար նախատեսվում է վերականգնել և ընդլայնել վարչական շրջանի կանաչ տարածքները (Էրեբունի արգելոց թանգարանի այգին, կենտրոնական փողոցներին հարող կանաչ տարածքները), որի համար անհրաժեշտ է վերականգնել ոռոգման ցանցի 60-70%-ը:

«Վարդավառ» և «Տնկարան» («Ազատամարտիկների») զբոսայգիները նախատեսվում է համալրել ժամանցի ժամանակակից միջոցներով՝ վարչական շրջանի բնակչության հանգիստը բարձր մակարդակով կազմակերպելու համար: 2010-2013թթ. կանաչ տարածքների պահպանման և նոր կանաչ գոտիների ստեղծման, այդ թվում՝ ոռոգման ցանցի (11500գ/մ) նորոգման, ծառատունկի (4000 հատ), այգիների ընթացիկ նորոգման և այգու շատրվանների նորոգման նպատակով նախատեսվում է 401 մլն դրամ:

Շարունակվելու են վարչական շրջանի փողոցների արտաքին լուսավորության ցանցի վերանորոգման և շահագործման աշխատանքները: Այդ ուղղությամբ 2010-2013թթ. նախատեսվում է փողոցների և բակերի լուսավորության ցանցի շուրջ 50000գ/մ նորոգում և շահագործում՝ 322 մլն դրամ ֆինանսավորմամբ:

Վարչական շրջանի բնակչության կենսապահովման կարևորագույն խնդիրներից է նաև ջրամատակարարումը: Կշարունակվեն Նոր Արեշ, Սարի Թաղ, Բութանիա թաղամասերն ինքնահոս ճանապարհով ջրամատակարարման շուրջօրյա գրաֆիկով ապահովելու ուղղությամբ տարվող աշխատանքները:

Էրեբունի վարչական շրջանի բնակֆոնդի պահպանման և շահագործման ուղղությամբ 2010-2013թթ. նախատեսվում է հիմնական հիմնանորոգել և շինությունների հարթ և թեք լանջավոր տանիքները (15000 քմ - 84 մլն դրամ), ապակեպատել շենքերի մուտքերն ու աստիճանավանդակները՝ 450 քմ - 2 մլն դրամ, նորոգել մուտքերն ու աստիճանավանդակները (3000 քմ – 12.7 մլն դրամ), ջրագծերն ու կոյուղագծերը՝ (7000գ/մ – 24.8 մլն դրամ), նորոգել վերելակները՝ 42 մլն դրամ:

Մեծ ուշադրություն է դարձվելու բակային տարածքների բարեկարգման, նորոգման (8700ք/մ - 42 մլն դրամ), ինչպես նաև խաղահրապարակների կառուցման և նորոգման աշխատանքներին՝ 71 մլն դրամ:

Մշակույթի, կրթության և սպորտի բնագավառում նույնպես բավական անելիքներ կան: Առաջնահերթ պետք է նորոգվեն նախադպրոցական հաստատությունների շենքերը և տանիքները (19000 ք/մ – 118 մլն դրամ):

Ավելացվելու է մսուր-մանկապարտեզների մեկ երեխայի հաշվով սննդի օրական բյուջետային ծախսը, բարձրացվելու է սննդի որակը և կալորիականությունը: 2010-2013թթ. վարչական շրջանում կկազմակերպվեն ազգային-եկեղեցական տոներին նվիրված, ինչպես նաև մշակութային, սպորտային 66 միջոցառում (86.0 մլն դրամ), այդ թվում Մայրության և գեղեցկության տոնին, Զատիկի տոնին, Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին, Ծաղկազարդին, Հաղթանակի և Խաղաղության օրվան, Վերջին զանգ՝ին, Վարդավառ՝ին, Գիտելիքի օրվան, Հայաստանի անկախության, Էրեբունի-Երևան տոնին, Ամանորին և այլ տոներին նվիրված միջոցառումները:

Էրեբունի վարչական շրջանում մեծ աշխատանքներ են կատարվելու բնակչության առևտրի և կենցաղային սպասարկման որակը բարձրացնելու նպատակով, Էրեբունի զանգվածում, Վարդաշենում, կայարանամերձ հրապարակում կազմակերպվում են գյուղմթերքների վաճառքի շուկաներ: Վաղուց հնացած առևտրի կրպակները փոխարինվում են նորառճ, ժամանակակից կրպակներով ու

խանութներով: Մեծ ուշադրություն է դարձվելու փողոցային առևտուրն ի սպառ վերացնելու ուղղությամբ տարվող աշխատանքներին:

Ներկայիս սոցիալ-տնտեսական պայմաններում հարկ է, որ տեղական իշխանությունները իրենց հնարավորությունների չափով նեցուկ կանգնեն բնակչության սոցիալապես անապահով խավերին: Նախատեսվում է կազմակերպել օգնություններ զոհված և վիրավոր ազատամարտիկների, բազմազավակ անապահով ընտանիքներին, Հայրենական պատերազմի վետերաններին, միայնակ տարեցներին և բնակչության սոցիալապես անապահով այլ խավերին:

2010 -2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով նախատեսվում է 51.5 մլն. դրամ հատկացնել հարազատ չունեցող մարդկանց թաղման, նյութապես կարիքավոր ընտանիքների միանվագ օգնության, նաև բուժման ծախսերի նպատակով:

Նշված տարիների վարչական շրջանում դեռատիզացիոն ծախսերի համար նախատեսվում է հատկացնել 12.5 մլն դրամ:

Նպատակների առաջադրում և առաջնահերթ խնդիրների ձևակերպում

Էրեբունի վարչական շրջանի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը վարչական շրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծությունն է և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային հնարավորությունների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթը, որը նախատեսում է 2010-2013թթ. կտրվածքով վարչական շրջանի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացումը:

Առաջիկա տարիներին վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ռազմավարական քաղաքականությունը պետք է ուղղված լինի հետևյալ խնդիրների լուծմանը՝

- իր իրավասության շրջանակում պաշտպանել վարչական շրջանի բնակչության իրավունքներն ու օրինական շահերը,
- միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ,
- վարչական շրջանի տարածքում նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- վարչական շրջանի ղեկավարի լիազորությունների շրջանակներում կայացրած որոշումներով խթանել տնտեսական գործունեություն նախաձեռնողների ծրագրերի իրականացմանը, նպաստել ու օժանդակել վարչական շրջանում նրանց առավել արդյունավետ գործունեություն ծավալելուն,
- ձեռք բերելով նոր մեքենաներ և սարքավորումներ՝ բարելավել վարչական շրջանի բնակավայրերի սանիտարական մաքրման և աղբի տեղափոխման աշխատանքները.
- պահպանել և վերականգնել վարչական շրջանի կանաչ տարածքները,
- իրականացնել վարչական շրջանի տարածքների, բակերի բարեկարգման, ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ,
- աջակցել վարչական շրջանի տարածքում գտնվող համատիրություններին՝ բազմաբնակարան շենքերում վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով,
- անմիջական վերահսկողություն իրականացնել հողերի, շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետական հատակագծային առաջադրանքների, քաղաքաշինական պահանջների նկատմամբ,
- կրթության, մշակույթի և երիտասարդության հետ աշխատանքների բնագավառում աջակցել արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը,
- նպաստել վարչական շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնել նոր սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծել հանգստի գոտիներ,

- օրենքով սահմանված կարգով կազմակերպել գույքահարկի ու հողի հարկի գանձումը, ինչպես նաև կազմակերպել տեղական տուրքերի և վճարների, վարչական շրջանի սահմաններում գտնվող՝ վարչական շրջանի և պետական սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը,
- վարչական շրջանի ղեկավարի լիազորությունների շրջանակներում կիրառել համապատասխան միջոցներ հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ:

Էրեբունի վարչական շրջանում 2010թ կիրականացվեն ծրագրեր 1 383 975.8 հազ.դրամ գումարի չափով:

Վարչական շրջանի թույլ կողմերը

- Վերանորոգման կարիք ունեն համայնքի տարածքում գտնվող նախադպրոցական հաստատությունների շենքերը և տանիքները,
- վարչական շրջանը սպասարկող ջրմուղ-կոյուղու ներքին և արտաքին ցանցը,
- շատ են կապիտալ և մասնակի վերանորոգման ենթակա բնակելի մասնավոր տնատիրությունները, շենքերն ու շինությունները,
- անհրաժեշտ է բարելավել փողոցների արտաքին լուսավորության ցանցը.
- վարչական շրջանում մեծ թիվ են կազմում միայնակ թոշակառուները, սոցիալապես անապահով ընտանիքները, ցածր եկամուտ ունեցողները,
- վարչական շրջանի տարածքում գտնվող համատիրությունների համակարգը զգալի աջակցության և բարեփոխումների կարիք ունի:

Կրթություն, մշակույթ, սպորտ

Մշակույթի և սպորտի բնագավառում պետական քաղաքականությունն ուղղված է մշակութային ժառանգության պահպանմանն ու փոխանցմանը հետագա սերունդներին, գեղարվեստական-ստեղծագործական գործունեությանն աջակցելուն, բնակչության առողջության և աշխատունակության պահպանմանը նպաստելուն:

Վարչական շրջանի տարածքում գործում է՝ 22 հանրակրթական դպրոց, 13 մանակապարտեզ, 4 գրադարան, Մանկապատանեկան ստեղծագործության 1 կենտրոն, 1 մարզադպրոց:

Մշակույթի ոլորտում 2010- 2013թթ. վարչական շրջանի ղեկավարի հիմնական խնդիրներն են՝

- կազմակերպել գրադարանների, կրթական և մշակութային այլ հաստատությունների գործունեությունը, աջակցել դրանց կառուցման, շահագործման և նորոգման աշխատանքներին,
- առաջնային և հրատապ համարել ՄՊՄԿ-ի համերգային դահլիճի նորոգումը, պատուհանների և դռների վերանորոգումը, շենքի ջեռուցումը, նոր խմբերի ձևավորումը (համակարգչային դասընթացներ, սպորտային խմբեր, վարսահարդարի մասնագիտության ուսուցում):

Վարչական շրջանի տարածքում գտնվող գրադարաններին աջակցել հետևյալ հարցերում՝

- գրքային ֆոնդի համալրման,
- պարբերական մամուլի բաժանորդագրման,
- համակարգիչներ ձեռքբերելու,
- մանկապարտեզ-գրադարան-դպրոց կապն ամրապնդելու,
- գրական ցերեկույթներ, ասմունքի երեկոներ, պոեզիայի ժամեր կազմակերպելու,
- դպրոցների հետ համատեղ՝ անվանի գրողների, դերասանների, հայտնի հասարակական գործիչների կյանքին և գործունեությանը նվիրված միջոցառումներ անցկացնելու,
- Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ կազմակերպելու հարցերում:

Վարչական շրջանի տարածքում գտնվող նախադպրոցական հաստատություններին օժանդակել հետևյալ հարցերում՝

- մանկապարտեզների կապիտալ վերանորոգման,
- նախադպրոցական ոլորտի մանկավարժների որակավորման բարձրացման,

- ջեռուցման համակարգի անցկացման՝ (բացի թիվ 90, 291 մանկապարտեզներից, որտեղ խնդիրը լուծված է),
- խաղահրապարակների բարեկարգման,
- բուժկաբինետի վերանորոգման, ժամանակակից սարքավորումների ձեռքբերման՝ (բացի 203 մանկապարտեզից, որտեղ խնդիրը լուծված է),
- համակարգիչների ձեռքբերման, ժամանակակից տեխնիկական սարքավորումներով համալրման.
- երեխաների համար ամառային հանգիստ-ճամբարի կազմակերպման հարցերում:

Վարչական շրջանի տարածքում գործող մարզադպրոցին օժանդակել հետևյալ հարցերում՝

- վերանորոգման աշխատանքների,
- խաղադաշտի վերանորոգման համար համապատասխան միջոցներ տրամադրելու,
- գազիֆիկացման,
- համապատասխան գույք և օժանդակ սարքավորումներ (համակարգիչ), մարզիկների համար մարզահագուստ ձեռք բերելու,
- բժշկական գործիքներ և դեղորայք ձեռք բերելու,
- համապատասխան մարզական գրականություն ձեռք բերելու,
- հնարավորության սահմաններում մարզիկների ամառային հանգիստը սպորտային բազաներում անցկացնելու,
- մարզական խաղերի և տարբեր սպորտային մրցաշարերին մասնակցության գործում:

Կրթության, մշակույթի, հանգստի կազմակերպման, կրոնի և սպորտի համար 2010 թվականին Երևանի բյուջեից նախատեսվում է Էրեբունի վարչական շրջանին տրամադրել 449 031.0 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե»):

Առողջապահություն

Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակը բնակչության առողջության պահպանմանն ուղղված խնդիրներն են՝ բժշկական ծառայությունների մատուցման իրավական, տնտեսական և կազմակերպչական պայմանների ստեղծումը, ոլորտի գերակայությունների հիմնավորումը, բժշկական օգնության որակի բարձրացումը մատուցված բժշկական ծառայությունների դիմաց հատուցման բազմաձևության (պետ. պատվեր, բժշկական ապահովագրություն, վճարովի ծառայություններ և այլն) ներդրման ապահովումը և այլն:

Առողջապահության ոլորտում 2010-2013թթ. վարչական շրջանի տարածքում նախատեսվում է աջակցել՝

- բնակչության առողջությանն ուղղված միջոցառումների բարելավմանը,
- բնակչության պոլիկլինիկական սպասարկմանը,
- բնակչության շրջանում պրոֆիլակտիկ աշխատանքների անցկացմանը,
- բնակչությանն առողջացման ծրագրերին՝ «Առողջ կենսաձև», «Պայքար ծխելու և հարբեցողության դեմ» և այլն,
- բնակչության շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկվածության աստիճանի բարձրացմանը, վարակի տարածման կանխարգելմանը:
- Համագործակցել՝
- առողջապահական մարմինների հետ՝ սանիտարահիգիենիկ, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների իրականացման գործում,
- Կարմիր խաչի ուսումնադաստիարակչական կենտրոնի հետ՝ արտակարգ իրավիճակներում առաջին օգնության կազմակերպման դասընթացներ անցկացնելու գործում:
- Ծրագրվում է նաև՝
- վարչական շրջանի՝ տեսողության հետազոտման կարիք ունեցող անապահով բնակիչների աչքերի ստուգում՝ շրջանի տարածքում գործող բուժհիմնարկների միջոցով,

- աջակցություն հաշմանդամ կարիքավոր բնակիչներին՝ սայլակների տրամադրման հարցում,
- վարչական շրջանի անապահով բնակիչների անվճար ատամնաբուժական ծառայությունների մատուցում՝ շրջանի տարածքում գործող ստոմատոլոգիական պոլիկլինիկաների միջոցով:

Աշխատանք և սոցիալական ծառայություններ

Վերլուծական համեմատությունը ցույց է տվել, որ նախորդ տարիներին բնակչությանը հուզել է բարեգործական ճաշարանի, դրամական օգնության, գույքահարկի զիջման, ձմռան վառելիքի, բուժ. օգնության և սոցիալական բնույթի այլ խնդիրներ:

Այդ պատճառով 2010-2013թթ. նախատեսվում է առանձնակի ուշադրություն դարձնել բարեգործական ճաշարանի գործարկմանը, գույքահարկի զիջման հարցում բնակչության անապահով խավերին աջակցելու, գոհված ազատամարտիկների, բազմազավակ ընտանիքների, միայնակ թոշակառուների, հաշմանդամների, պատերազմի մասնակիցների բուժման և նրանց ֆինանսական օգնության տրամադրման կենսական նշանակություն ունեցող հարցերին:

Սոցիալական պաշտպանության ոլորտում 2010-2013թթ. վարչական շրջանի տարածքում նախատեսվում է՝

- նպաստել պետական քաղաքականության և որոշակի ռիսկերին դիմագրավելու կամ կարիքներ հոգալու հնարավորությունների ընդլայնմանն ու դրանց կարգավորման նվազեցմանը,
- բնակչության խոցելի խմբերին սոցիալական կյանքում ներգրավվելու դժվարությունների հաղթահարմանը,
- ծնողազուրկ երեխաների սոցիալական օժանդակությանն ու պաշտպանությանը,
- սոցիալական մեկուսացվածության վերացմանը՝ խոցելի բնակչությանն ուղղված ծրագրերի միջոցով,

- համապատասխան հիմքերի առկայության դեպքում՝ սոցիալապես խոցելի առանձին խմբերի սոցիալական կարիքների բավարարմանը:
 - Գործազուրկներին աշխատանքով ապահովելու նպատակով նախատեսվում է՝
 - վարչական շրջանի տարածքում նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը,
 - համագործակցելով ՀՀ զբաղվածության կենտրոնի հետ՝ բնակչությանն առավել շատ մասնակից դարձնել և ընդգրկել զբաղվածության ծրագրերում:
- Ծրագրվում է՝
- 2010-2013թթ. նախատեսել 51.5 մլն դրամ՝ հարազատ չունեցող մարդկանց թաղման, նյութապես կարիքավոր ընտանիքներին միանվագ օգնության, բուժման ծախսերի նպատակով,
 - վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների պատանիների և երիտասարդների համար անվճար օտար լեզվի և համակարգչային դասընթացների կազմակերպում,
 - վարչական շրջանի ծնողազուրկ և անապահով ընտանիքների 7-13 տարեկան 60-ից ավելի երեխաների ամառային հանգստի կազմակերպում՝ ճամբարում:

Սոցիալական պաշտպանության համար 2010թ. Երևանի բյուջեով նախատեսվում է շրջանին հատկացնել 41 133.6 հազ. դրամ:

Առևտրի և սպասարկումների ոլորտ

Առևտրի և սպասարկման տարածքային կազմակերպումն ներառում է հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝

- կազմակերպել առևտրի և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխումը վարչական շրջանի տարածքում՝ ուշադրություն դարձնելով նրանց հեռավորությանը կանգառներից, համապատասխանությանը փողոցի արտաքին տեսքին,

- շինանյութի, հեղուկ գազի, վառելիքաքսայուղերի, կոշտ վառելիքի և գյուղատնտեսական մթերքների վաճառքը համապատասխանացնել մշակված և հաստատված առևտրի կանոններին,
- արգելել փողոցային ապօրինի առևտուրը, ինչպես նաև անօրինական կրպակ-տաղավարների տեղադրումը,
- ապամոնտաժել կամ արդիականացնել տարածքում գտնվող չօգտագործվող, լքյալ և հնաոճ տեսք ունեցող ժամանակավոր կրպակ-տաղավարները, կանոնակարգել բացօթյա առևտուրը,
- բնակչության առևտրի և կենցաղային սպասարկման որակը բարձրացնելու նպատակով՝ Էրեբունի զանգվածում, Վարդաշենում, կայարանամերձ հրապարակի մերձակայքում կազմակերպել գյուղմթերքների վաճառքի շուկաներ:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն և կանաչապատում

Վարչական շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ոլորտներից է, որն ընդգրկում է փողոցների և բակերի բարեկարգման, տարածքների սանիտարական մաքրման և աղբահանության, կանաչապատման և վարչական շրջանը բարեկեցիկ դարձնելուն ուղղված այլ աշխատանքներ:

2010 - 2013թթ. ընթացքում ոլորտում իրականացվելու են՝

- վարչական շենքերի պահպանման աշխատանքներ,
- ճանապարհների ընթացիկ նորոգման և բարեկարգման աշխատանքներ,
- սանմաքրման և աղբահանության աշխատանքներ,
- կանաչ տարածքների պահպանման և կանաչապատման աշխատանքներ,
- այգիների ընթացիկ նորոգման աշխատանքներ,
- ոռոգման ցանցերի, պոմպակայանների ընթացիկ նորոգման աշխատանքներ,
- հուշարձանների պահպանման աշխատանքներ,
- արտաքին լուսավորության ցանցի վերանորոգման աշխատանքներ,

- դեռատիզացիոն աշխատանքներ (մասնավոր տնտեսությունների համար),
- շենքերի, շինությունների տանիքների, աստիճանավանդակների ընթացիկ նորոգման աշխատանքներ,
- վերելակների ընթացիկ նորոգման աշխատանքներ:
- Վարչական շրջանի բնակֆոնդի պահպանման և շահագործման ուղղությամբ նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝
- ամրացնել վթարային շենքերը և վթարային կախովի պատշգամբները, վերանորոգել թեք և հարթ տանիքները,
- բարեկարգել բակային տարածքները, այդ թվում՝ ասֆալտապատել, նորոգել ոռոգման ցանցեր, կառուցել խաղահրապարակներ,
- ապակեպատել շենքերի մուտքերն ու աստիճանավանդակները,
- այլ աշխատանքներ:

Բնակչության իրավունքների պաշտպանություն

Վարչական շրջանի բնակիչների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով կազմակերպվում են վարչական շրջանի ղեկավարի ընդունելության օրեր, որի շնորհիվ բնակչությանը հնարավորություն է ընձեռվում ներկայացնելու իրենց հուզող հարցերը և մասնակցելու վարչական շրջանի կառավարմանը:

Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում վարչական շրջանի բնակիչների համար կազմակերպվում է՝

- իրավախորհրդատվական աշխատանք՝ աջակցելով քաղաքացիների իրավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահմանված պաշտպանությանը,
- բնակչության շրջանում իրականացվում է նորմատիվ և այլ իրավական ակտերի, փաստաթղթերի և տեղեկությունների պարզաբանում,
- աջակցություն է ցուցաբերվում վարչական շրջանի տնտեսական և սոցիալական խնդիրների, ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Կ Ե Ն Տ Ր Ո Ն Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն

Երևանի Կենտրոն վարչական շրջանը ընդհանուր սահմաններ ունի Քանաքեռ-Զեյթուն, Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ վարչական շրջանների սահմանների հետ: Զբաղեցնում է 1420 քմ տարածք, փողոցների թիվը 89 է, երկարությունը՝ 68,8 կմ, փողոցների մակերեսը՝ 259,6 հազ. քմ է, բարձրությունն ծովի մակերևույթից՝ 1000 – 1050 մ:

1996թ. Մյասնիկյան և Սպանդարյան շրջանների և որոշ տարածքների՝ Շահումյան, Արաբկիր և Էրեբունի շրջանների միավորումից («Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք) ստեղծվեց Երևանի Կենտրոն թաղային համայնքը:

2009թ. տեղի ունեցան Երևանի ավագանու ընտրություններ, որից հետո Կենտրոն թաղային համայնքը վերանվանվեց Երևանի Կենտրոն վարչական շրջան:

Կենտրոն վարչական շրջանը ընդգրկում է Ծիծեռնակաբերդի բլուրը, Կիլիկիան, Նորագյուղը՝ Պասկևիչի բլուրով, Շիլաչին, Ծխախոտագործների թաղամասը, Այգեստանը, Անտառայինն ու Օրթոց ձորը:

Տարածքով հոսում են Գետառ և Հրազդան գետերը: Հյուսիս արևելքում Գետառի կիրճով բաժանված են Քանաքեռի և Նորքի սարավանդները: Հյուսիս արևմուտքում Հրազդանի կիրճով (120-150մ խորություն) բաժանված են Ծիծեռնակաբերդի և Կոնդի բլուրները: Գետառը սելավաբեր է, վերցված է արհեստական հունների մեջ, որի շնորհիվ սելավային հոսքերը վնասագերծվել են:

Երևանի կենտրոնը քաղաքի հին բնակավայրերից է, որն իր պատմության ընթացքում կրելով բազում դժվարություններ՝ վերածվել է գեղեցիկ, հարմարավետ և բարեկարգ բնակավայրի:

Պատմագրության մեջ 7-րդ դարի կեսերից Երևան ասելով նկատի է առնվել ներկայիս Երևանի Կենտրոն վարչական շրջանը, որը տարբեր ժամանակահատվածներում պաշարվել ու նվաճվել է, ապա ազատագրվել, 1264թ. Անիի առևտրականներից մեկը գնել է Երևանը, որն ընդգրկել է առավելապես ներկայիս կենտրոնի տարածքը: 1900թ. կառուցվում է Դոկտորական՝ այժմ Թումանյան, Թարխանովի՝ Պուշկինի, Նազարովի՝ Ամիրյան, Նահանգական՝ Հանրապետության, Ներկարարների՝ Տերյան, Տեր-Ղուկասովի՝ Նալբանդյան,

Ցարական՝ Արամի փողոցները: 1918թ. հռչակվում է Հայաստանի առաջին հանրապետությունը: Ազգային խորհուրդը ժամանում է Երևան, որի նստավայրը ևս գտնվել է ներկայիս Կենտրոն վարչական շրջանի տարածքում:

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Վարչական շրջանի բնակչությունը 01.01.2009թ. դրությամբ մոտ 130 հազ. մարդ է, այդ թվում՝ 45,1 տոկոս տղամարդիկ և 54,9 տոկոս կանայք: Ծնվածների թիվը 2008թ. 1287: Աշխատունակ են ընդհանուր բնակչության կեսից ավելին, որից 78921 զբաղված է աշխատանքով: Գործազուրկների մեծամասնությունը կանայք են և նկատվում է այդ թվի հետագա աճի միտում: Վերջին տարիներին նկատվում է 65 տարեկանից բարձր բնակչության ընդհանուր թվի նվազում, երեխաների թվի աճ: Շրջանի թոշակառուների թիվը ընդհանուր բնակչության մոտ 21.2 տոկոսն է կազմում (մանրամասները տե՛ս «Կենտրոն վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Վիճակի գնահատում

Վերջին տարիների ընթացքում շրջանի տարածքում իրականացված կառուցապատման և ճանապարհային ցանցի ընդլայնման աշխատանքները՝ շրջանը դարձրել են ավելի գրավիչ, գեղեցիկ և հարմարավետ (Հյուսիսային պողոտա և այլ կառուցապատ տարածքներ, թունելներ, նոր ճանապարհներ, գետնանցումներ և հետիոտն կամուրջներ): Շրջանի տարածքում շատ են խարխուլ սեփական տնատիրությունները: Վարչական շրջանում կան անապահով, ուշադրություն և հոգատարություն պահանջող բնակիչներ: Վատ վիճակում են շրջանը սպասարկող ջրմուղ-կոյուղու և հեղեղատար ցանցերը, շատ են կապիտալ և մասնակի վերանորոգման ենթակա շինությունները, ճանապարհները: Մեքենաների ծանրաբեռնվածության պատճառով բարձր է օդի աղտոտվածության աստիճանը:

Վարչական շրջանի տարածքում գործում է 27 առողջապահական հիմնարկ, 5 ամբուլատոր պոլիկլինիկա, 33 հանրակրթական դպրոց, 35 բուհ, 21

նախադպրոցական հիմնարկ, 4 արտադպրոցական հիմնարկ՝ ՄՊՄԿ, 7 երաժշտական դպրոց, 1 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 24 գրադարան, 8 մասնավոր մանկապարտեզ: Կենտրոնում գրանցված են շուրջ 540 առևտրի և սպասարկման փոքր և միջին օբյեկտներ (մանրամասները տե՛ս «Կենտրոն վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Վարչական շրջանի ռազմավարությունը

Հիմք ընդունելով Երևանի ավագանու ընտրությունների «ՔԵԶ ՀԱՄԱԸ, ԵՐԵՎԱ՛Ն» նախընտրական ծրագրերի կարգախոսը՝ Երևանի Կենտրոն վարչական շրջանի զարգացման ռազմավարությունն է հետևողականորեն բարելավելով բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները՝ շրջանը բնապահպանական առումով դարձնել մաքուր, կանաչ, աշխատանքի, բարեկարգ, կարգուկանոնի, հարմարավետ շրջան՝ հայկական հինավուրց մշակութային ավանդույթների վերածնման և վերահաստատման միջոցով հանրապետության մասշտաբով դարձնել տուրիզմի և սպասարկման օրինակելի կենտրոն:

Նպատակների առաջադրում և առաջնահերթ խնդիրների ձևակերպում

Երևանի Կենտրոն վարչական շրջանը կենտրոն է ոչ միայն մայրաքաղաքում գրաված իր դիրքով, այլև քաղաքական, մշակութային, բուհական ու գիտական միջավայրի խիտ հավաքականությամբ:

Պետությունը կոչված է լուծելու հասարակության համընդհանուր շահերն արտահայտող մեծածավալ խնդիրներ՝ ազգային անվտանգություն, պաշտպանություն, արդյունաբերական և այլն, որից կախված է յուրաքանչյուր քաղաքացու բարեկեցությունը:

Այնուամենայնիվ, բնակչի առջև կանգնած առօրյա շատ խնդիրներ ունեն տեղական նշանակություն՝ ջրամատակարարում, աղբահանություն, լուսավորություն, կանաչապատում, ճանապարհների և բակերի բարեկարգում և այլն: Այս խնդիրները հուզում են յուրաքանչյուրին և դրանից է կախված մարդու

կենսամակարդակը: Այդ խնդիրները Երևանի տարբեր վարչական շրջաններում տարբեր ծավալներով և կարևորությամբ են դրված:

2010-2013թթ. ռազմավարական քաղաքականությունը պետք է ուղղված լինի հետևյալ խնդիրների լուծմանը՝

- իրավասության շրջանակում պաշտպանել շրջանի բնակչության և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը,
- միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ,
- համայնքի տարածքում նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը, կազմակերպել վճարովի հասարակական աշխատանքներ,
- ձեռք բերելով նոր մեքենաներ և սարքավորումներ՝ բարելավել շրջանի բնակավայրերի սանիտարական մաքրման և աղբի տեղափոխման աշխատանքները,
- պահպանել, վերականգնել և ավելացնել վարչական շրջանի կանաչ տարածքները,
- համագործակցելով գործատուների և զբաղվածության տարածքային կենտրոնի հետ՝ միջոցներ ձեռնարկել աշխատանք փնտրողներին աշխատանքի տեղավորելու համար,
- իրականացնել շրջանի տարածքների, բակերի բարեկարգման, ճանապարհների և մայրերի ասֆալտապատման աշխատանքներ,
- ֆինանսական աջակցություն ցուցաբերել շրջանի տարածքում գտնվող համատիրություններին՝ բազմաբնակարան շենքերում վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով,
- անմիջական վերահսկողություն իրականացնել հողերի, շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետական հատակագծային առաջադրանքների, համայնքի քաղաքաշինական կանոնադրության պահանջների նկատմամբ,

- կրթության, մշակույթի բնագավառում աջակցել արհեստների, ժողովրդական ստեղծագործության և գեղարվեստական ինքնագործունեության զարգացմանը,
- նպաստել շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը, իրականացնել նոր սպորտային հրապարակների և մարզական այլ կառույցների շինարարություն, ստեղծել հանգստի գոտիներ,
- օրենքով սահմանված կարգով կազմակերպել գույքահարկի ու հողի հարկի գանձումը, ինչպես նաև կազմակերպել տեղական տուրքերի և վճարների, շրջանի սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը,
- լիազորությունների շրջանակում կիրառել համապատասխան միջոցներ՝ հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ:

Կենտրոն վարչական շրջանում 2010թ. կիրականացվեն ծրագրեր 3039049.0 հազ. դրամ գումարի չափով (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Վարչական շրջանի ուժեղ կողմերը

Շրջանը՝ գտնվելով մայրաքաղաքի կենտրոնական մասում, մյուս բոլոր վարչական շրջանների նկատմամբ գրավում է խաչմերուկային դիրք:

Վարչական շրջանի աշխարհագրական դիրքը բարենպաստ է հեռանկարային զարգացման համար:

Շրջանի տարածքում շատ են կառավարական, գիտական, սոցիալ-մշակութային, մարզական, առևտրական կենտրոնները, բարձրագույն ուսումնական հաստատությունները:

Կենտրոն վարչական շրջանում են գտնվում բազմաթիվ հյուրանոցներ, և վերջիններիս առկայությունը բարենպաստ պայմաներ է ստեղծում տուրիզմը զարգացնելու համար:

Անցած տարիների ընթացքում բազմաբնակարան շենքերի բակերում կատարված բարեկարգման և խաղահրապարակների կառուցման աշխատանքները

նպաստել են բնակիչների բարեկեցությանը, ինչպես նաև երեխաների առօրյայի ակտիվ և ապահով անցկացմանը:

Տեղական ինքնակառավարումը թույլ է տալիս անընդհատ վերանայել ու կատարելագործել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի և նրա ենթակայության կազմակերպությունների աշխատանքը:

Վարչական շրջանի թույլ կողմերը

Մեքենաների հոսքի ծանրաբեռնվածության հետևանքով բարձր է միջավայրի աղտոտվածության աստիճանը:

Վերանորոգման կարիք են զգում շրջանի տարածքում գտնվող կրթական օջախները:

Ոչ բարվոք վիճակում է շրջանը սպասարկող արտաքին և շենքերի ներքին ջրմուղ-կոյուղու ցանցը:

Կան հիմնական և մասնակի վերանորոգման ենթակա բնակելի մասնավոր տնատիրություններ, շենքեր և շինություններ:

Անհրաժեշտ է բարելավել շրջանային նշանակության փողոցների արտաքին լուսավորության ցանցը:

Շրջանում շատ են միայնակ թոշակառուները, սոցիալապես անապահով ընտանիքները, ցածր եկամուտ ունեցողները:

Վարչական շրջանի տարածքում գտնվող համատիրությունների համակարգը զգալի աջակցության և բարեփոխումների կարիք է զգում (անհրաժեշտ է սուբսիդավորել):

Անհրաժեշտ է ներբակային և երկրորդական փողոցների (նրբանցքներ, փակուղիներ) բարեկարգում, լուսավորում, ասֆալտապատում:

Առկա է ներբակային տարածքների անկանոն կառուցապատում, կանաչապատման բացակայություն:

Մոցիալ-տնտեսական առանձնահատկություններն ըստ առանձին բնագավառների՝ իրենց տարեկան ծրագրային դրույթներով

Մշակույթ, կրթություն, սպորտ

Մշակույթի, կրթության և սպորտի բնագավառում քաղաքականությունը ուղղված է լինելու մշակութային ժառանգության պահպանմանն ու փոխանցմանը հետագա սերունդներին, գեղարվեստական-ստեղծագործական գործունեությանն աջակցելուն, բնակչության առողջության և աշխատունակության պահպանմանը նպաստելուն:

Այդ նպատակով անհրաժեշտ է.

- մշակել և իրագործել զանգվածային գեղարվեստական ստեղծագործության զարգացման, այդ թվում՝ ժողովրդական ստեղծագործությունների նմուշների խրախուսման և տարածմանն ուղղված միջոցառումներ,
- խրախուսել ժողովրդական արվեստի կենտրոնների ստեղծմանն ու զարգացմանը,
- կազմակերպել մշակույթի տների, ակումբների, գրադարանների, կրթական և մշակութային այլ ձեռնարկությունների և կազմակերպությունների գործունեությունը, աջակցել դրանց կառուցման, շահագործման և նորոգման աշխատանքներին:

Մանկական նախադպրոցական հիմնարկներ

Ազգի ապագան բնորոշող հրատապ խնդիրների լուծումը իրականություն է դառնում անընդհատ կրթության համակարգի բոլոր օղակների աստիճանական զարգացման, նրանց ներդաշնակ փոխկապակցության միջոցով: Այդ համակարգի առաջին և կարևորագույն օղակը՝ նախադպրոցական կրթությունն է, որի բովանդակությունը նախատեսվում է այնպես, որ նրա հիմքի վրա կառուցվեն անընդհատ կրթության համակարգի մյուս օղակները:

Վարրական շրջանում առկա է երեխաթվի կտրուկ աճ և դա հետևողական աշխատանքի արդյունք է: Երեխաների սննդի որակի և բազմազանության վրա մեծ ուշադրություն է դարձվում, մանկապարտեզները համագործակցում են ծնողական համայնքի հետ, մասնակից են դառնում իրենց առօրեական հոգսերին և դրանց լուծմանը, ի օգուտ երեխաների, ուստի, արդյունքում շահում են երեխաները: Ավելի նպատակային և ճիշտ կլինի, որ մեծ ուշադրություն դարձնեն այն օղակի վրա, որը դառնալու է վաղվա ապագան: Եթե մանկուց երեխան չստանա այն ամուր հիմքը, որի վրա պիտի կառուցի իր «վերնաշենքը», ապա ապագայի մասին խոսք լինել չի կարող:

Նախատեսվում է.

- Բարձրացնել նախադպրոցական ոլորտի մանկավարժների որակավորումը, արդի պահանջներին համապատասխան՝ կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ, սեմինար պարապմունքներ, բաց դասեր:

- Պարտադիր ատեստավորման ներկայացնել նախադպրոցական հիմնարկների տնօրեններին՝ նրանց որակավորումը բարձրացնելու նպատակով:

- Մանկապարտեզներում ուսումնա-դաստիարակչական, մեթոդական աշխատանքների բովանդակային խորությունը ապահովելու նպատակով՝ տրամադել նախադպրոցական կրթական ծրագրերին համապատասխան մեթոդական գրականություն և չափորոշիչներ:

Նախադպրոցական դաստիարակության հիմնական խնդիրներն են. կազմակերպել երեխայի մանկությունը, նպաստել նրա ընդունակությունների բացահայտմանը և բնականոն զարգացմանը, խրախուսել նախաձեռնությունը, ձևավորել շրջապատի հետ շփման եզրեր գտնելու, սեփական կարծիքն արտահայտելու և վարքագիծը կառավարելու տարրական կարողություններ: Նշված աշխատանքները մանկապարտեզներում կազմակերպելու, համակարգելու նպատակով բոլոր մանկապարտեզները ապահովվել են համապատասխան ծրագրերով և ծրագրային նյութերով: Լայն հնարավորություններ են ընձեռվել դաստիարակների ստեղծագործական մտքի զարգացմանը, համալիր պարապմունքների կազմակերպ-

մանր: Մանկապարտեզներում շատ ավելի մեծ տեղ է տրվել կերպարվեստային գործունեությանը և երաժշտական պարապմունքներին:

Շարունակել ազգային ժողովրդական մշակույթի ուղղությամբ տարվող աշխատանքները՝ սեմինարների, բաց դասերի և համընդհանուր տոնախմբությունների կազմակերպման միջոցով:

Մանկապարտեզների բազայի վրա ստեղծել մշակույթի և արվեստի կենտրոն, որտեղ մանուկները հնարավորություն կստանան առնչվել ոչ միայն ազգային, այլև համաշխարհային դասական արվեստի նմուշներին, նվագարաններին, կերպարվեստի տարրական տեխնիկային:

Երեխաների մտավոր զարգացման հնարավորությունները արտակարգ մեծ են, բայց ոչ միատեսակ, և նրանց դաստիարակությամբ զբաղվողների խնդիրն է նպաստել դրանց բացահայտմանն ու զարգացմանը՝ միաժամանակ չխախտելով այդ զարգացման նշանակությունը:

Երբ վերանորոգվում են մանկապարտեզները ավելի լայն հնարավորություններ են ստեղծվում երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքները բավարար հիմքերի վրա դնելու համար: Հիգիենիկ ունակությունների դաստիարակման և ամրապնդման հարցում դեռևս կան չլուծված խնդիրներ: Ուստի անհրաժեշտ է վերանորոգել մանկապարտեզների սանհանգույցները, ամանեղենի լվացման կետերը և խոհանոցները՝ տարբեր տիպի վարակներից զերծ մնալու և անհատականությունը պահպանելու համար: Ապահովել մանկապարտեզները հոսող տաք ջրով և լոկալ ջեռուցման կետերով:

Մանկապարտեզներում հետին պլան է մղվել ֆիզկուլտուրայի պարապմունքները, որոնք ավելի շատ մասնագետի կարիք ունեն՝ երեխաների կեցվածքը շտկելու և նրանց ֆիզիկական լիարժեք զարգացմանը նպաստելու համար, ուստի մանկապարտեզներում պետք է ունենալ ֆիզկուլտուրայի մասնագետներ:

Արտադպրոցական կրթություն

Շրջանի տարածքում գործում են՝ 21 նախադպրոցական հիմնարկ՝ շրջանային ենթակայության, 4 արտադպրոցական հիմնարկ, որից 1-ը շրջանային

ենթակայության (ՄՊՄԿ), 7 երաժշտական դպրոց, որից 2-ը շրջանային ենթակայության, 1 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 24 գրադարան՝ որից 1-ը շրջանային ենթակայության, 8 մասնավոր մանկապարտեզ:

**2010-2013 թթ ընթացքում կրթության, մշակույթի և սպորտի
բնագավառներում նախատեսվող միջոցառումներ**

- Ամանորի նվերներ մանկապարտեզների երեխաներին,
- Կանանց միջազգային տոնի՝ Մարտի 8-ի կապակցությամբ միջոցառում,
- Գիտության և կրթության նախարարության կողմից առաջարկվող մեթոդական ձեռնարկների ձեռքբերում,
- Մանկապարտեզների տարեվերջյան հանդեսներ (նվերներ ավարտական խմբերի սաներին),
- «Վերջին զանգ»,
- Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում,
- Նոր ուսումնական տարվա նախաշեմին մանկապարտեզների սաներին գրենական պիտույքների նվիրատվություն,
- Գիտելիքի օրվա կապակցությամբ վարչական շրջանի 1-ին դասարանցիներին պայուսակների և գրենական պիտույքների նվիրատվություն,
- «Ուսուցչի օր»,
- Շրջանի դպրոցների հոբելյանական տարելիցների շնորհավորում,
- Վարչական շրջանի մանկապարտեզների երաժշտության ղեկավարների մանկական երգերից կազմված «Մանկություն» երգարանի հրատարակում (1000 օրինակ),
- «Բանակի օր»,
- Մանկական ժողովրդական պարերգերի 2-րդ և 3-րդ հատորների հրատարակում (յուրաքանչյուրից 1000 օրինակ),
- «Մայրության և գեղեցկության օր»,
- «Մեծ եղեռն»

- Շրջանի մանկապարտեզների սաների ուժերով «Հեքիաթի օր» (ծախսերը դահլիճի, երաժշտական և լուսային տեխնիկայի տրամադրման համար),
- Բ. Կանաչյանի անվան երաժիշտ կատարողների քաղաքային մրցույթ-փառատոն (ծախսերը դահլիճի, տեխնիկայի, մրցանակների և պատվոգրերի համար),
- Հաղթանակի օր,
- Մանկավարժական եռօրյա կոնֆերանս՝ (ծախսերը դահլիճի կամ սրահի տրամադրման, ֆուրշետի, թղթապանակների համար),
- Մանկական երաժշտական նվագարանների ձեռքբերում շրջանի մանկապարտեզների համար,
- «Էրեբունի - Երևան»,
- «Ուսանողների միջազգային օր»,
- Սպորտային միջոցառումների կազմակերպում:

Կրթության, մշակույթի, հանգստի կազմակերպման, կրոնի և սպորտի համար 2010 թվականին Երևանի բյուջեից նախատեսվում է Կենտրոն վարչական շրջանին տրամադրել 687727.3 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Սոցիալական ապահովության և առողջապահության ոլորտ

Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում 2010թ.-ից ևս վարչական շրջանը շարունակելու է իրականացնել պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները՝ վարչական շրջանի տարածքում կկազմակերպվի սոցիալական օգնության ծառայության գործունեությունը:

Ոլորտում կիրականացվեն հետևյալ ծրագրերը, որոնք կթեթևացնեն անապահով բնակչության հոգսերը:

Առողջապահական ծրագրեր՝

Համագործակցելով Հայաստանի Հանրապետությունում գործող բարեգործական կազմակերպությունների հետ՝ նրանց ներգրավել շրջանի

առողջապահական խնդիրների լուծման թեթևացմանը՝ իրականացնելով հետևյալ աշխատանքները.

- կազմակերպել անապահով բնակիչների աչքերի հետազոտություններ և անհրաժեշտության դեպքում վիրահատություններ,
- հաշմանդամ կարիքավոր բնակիչներին տրամադրել սայլակներ,
- կազմակերպել շրջանի անապահով բնակիչների ատամների բուժում և հեռացում (Աճեմյան հիմնադրամ):

Բարեգործական ճաշարան՝

Բարեգործական ճաշարանից օգտվելու են թվով 200 շահառուներ՝ կնքված պայմանագրերի համաձայն («Առաքելություն Հայաստանին» Հ/Կ):

Դրամական օգնության բաշխում՝

Դրամական օգնություններ կտրամադրվեն շրջանի աշխատակազմ դիմած անապահով ընտանիքներին՝ 10000 - 20000 դրամի չափով:

Ուշադրության կենտրոնում կլինեն Հայրենական մեծ պատերազմի վետերանները, աջակցություն կստանան հաշմանդամները:

Բարեգործական բաղնիք՝

Բարեգործական բաղնիքից կօգտվեն շրջանի անապահով բնակիչները՝ կնքված պայմանագրի համաձայն (ամսական 500 բնակիչ):

Ձմեռային ծրագիր՝

- Վառելափայտի բաշխում (յուրաքանչյուր ընտանիքին 1իւմ),
- Անապահով ընտանիքներին ամանորյա նվերների բաշխում:

Այլ ծրագրեր՝

- Բարեգործական բեռների ստացում և բաշխում:
- Հայաստանում գործող, բեռներ ներմուծող կազմակերպություններից ստացված հումանիտար օգնության բաշխման ծրագրից կօգտվեն շրջանի աշխատակազմ դիմած անապահով բնակիչներն ու կազմակերպությունները:

- Համագործակցելով շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ սոցիալապես խոցելի խմբերի համար ստեղծել հատուկ առևտրային կետեր՝ անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման համար:

Սոցիալական և առողջապահության ոլորտի ծրագրերը ֆինանսական հիմնավորումներով նայել հավելված

Կենտրոն վարչական շրջանի սոցիալական պաշտպանության համար Երևանի բյուջեից նախատեսվում է հատկացնել 84611.0 հազ.դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Ճարտարապետություն և քաղաքաշինություն

Քաղաքաշինության բնագավառի հիմքում դրված է շրջանի ճարտարապետական և քաղաքաշինական կերպարի զարգացումը, բակային տարածքների բարեկարգման ու կանաչապատման աշխատանքների շարունակումը, գոյություն ունեցող կրպակների արդիականացման վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրում և նոր կրպակաշարերի էսքիզային տարբերակների առաջարկում, սեփական հողամասում անհատական բնակելի տների վերակառուցման վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրում, ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրում և ներկայացված նախագծերի ուսումնասիրում:

Հաշվետու ժամանակահատվածում անհրաժեշտ է իրականացնել իրացման գոտիների քանդման և կառուցապատման աշխատանքներ՝ կենտրոնը դարձնելով ավելի մաքուր և բարեկարգ:

**Բնակարանային-կոմունալ տնտեսություն,
աղբահանություն և կանաչապատում**

Ոլորտը շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ոլորտներից է, որն ընդգրկում է փողոցների և բակերի բարեկարգման, տարածքների սանիտարական մաքրման և աղբահանության, կանաչապատման աշխատանքները:

Շրջանի փողոցների և բակերի մեծ մասը լուսավորված է:

Սանիտարական մաքրման ենթակա մակերեսը կազմում է 3162566 քմ, տեղափոխվող աղբի քանակը՝ 266,8 հազ խմ, առկա սանիտարական մաքրման մեքենա-սարքավորումների քանակը՝ 100:

Առաջիկա տարիներին նախատեսվում է՝

- ավելացնել սանիտարական մաքրման և աղբահանության համար նախատեսված մեքենաների քանակը, որոնք ավելի կբարձրացնեն այդ ծառայության որակը՝ կենտրոնը դարձնելով բնակիչների համար ավելի մաքուր և գրավիչ,
- նախատեսվում է ավելացնել աղբամանների քանակը,
- նախատեսվում է կատարել շենքերի և փողոցների հասցեավորում և ցուցանակների տեղադրում,
- բակերում նախատեսվում է տեղադրել զրուցատաղավարներ,
- կատարել փողոցների, մայթերի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ, ինչպես նաև ավելացնել ծաղկաշատ կանաչ տարածքները,
- բակերում և այգիներում կառուցել թվով 44 խաղահրապարակներ,
- բարելավել շրջանի սանմաքրման և աղբի տեղափոխման աշխատանքները,
- նախատեսվում է ավարտին հասցնել շրջանային ենթակառուցվածքային փողոցների արտաքին լուսավորության անցկացումը,
- նախատեսվում է իրականացնել մանկապարտեզների վերանորոգման աշխատանքներ:

Շրջանի կանաչապատ տարածքը կազմում է 162 հա՝ որից 120 հեկտարը Ծիծեռնակաբերդի բլրի անտառապատ տարածքն է:

Շրջանի տարածքների թողարկված գազաբաշխիչ ցանցի երկարությունը 109 կմ է: Բնական գազից օգտվում է 26421 բաժանորդ:

Ոլորտների աշխատանքները իրականացնելու համար շրջանի 2010թ. բյուջեից նախատեսվում է.

- տարածքների բարեկարգում - 270000.0 հազ. դրամ
- սանիտարական մաքրման աշխատանքներ – 859500.0 հազ. դրամ
- արտաքին լուսավորություն – 26000.0 հազ. դրամ
- կանաչապատում – 200000.0 հազ. դրամ

- մանկապարտեզների վերանորոգում – 100000.0 հազ. դրամ

Համայնքի բազմաբնակարան շենքերի կառավարման ոլորտ

Շրջանի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 2056013 քմ:

Կենտրոնն ունի բնակելի 694 շենք, որից՝ գերատեսչական 14 շենք, վթարային 2 շենք:

Բազմաբնակարան շենքերի կառավարումը հանձնված է համատիրություններին (թվով 19 և 9 լիազորագրային կառավարման), որոնք բարեփոխումների և ֆինանսական աջակցության կարիք ունեն:

Բազմաբնակարան շենքերում և բակերում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- հարթ տանիքների նորոգում – 15000.0 հազ դրամ
- թեք տանիքների նորոգում - 15000.0 հազ դրամ
- զրուցատաղավարների տեղադրում – 8500.0 հազ. դրամ

Բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման և վերանորոգման համար շրջանի 2010-2013թթ. բյուջեներից նախատեսվում է տրամադրել ֆինանսական աջակցություն (սուբսիդիա) համատիրություններին, որը հնարավորություն կտա իրականացնել հետևյալ աշխատանքները՝ (շրջանի 2010թ. բյուջեից՝ 252000.0 հազ. դրամ).

- շքամուտքների վերանորոգում,
- վերելակների վերանորոգում,
- ջրթափ խողովակների վերանորոգում,
- շքամուտքերի պատուհանների ապակեպատում,
- ջրմուղ-կոյուղու ներքին ցանցի վերանորոգում,
- կախովի պատշգամբների վերանորոգում:

Առևտուր և սպասարկումներ, գովազդ

Առևտրի և սպասարկումների ոլորտն այն բոլոր ճյուղերի, գործունեության տեսակների ամբողջությունն է, որոնց գործառական նշանակությունն արտահայտվում է սպասարկման արտադրության և իրացման մեջ:

Առևտրի և սպասարկման տարածքային կազմակերպումն իր մեջ ներառում է հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝

- որոշակիացնել և հաստատել կանոնակարգման նոր մեխանիզմներ, որոնք համապատասխանում են ներկա ժամանակների պահանջներին,
- կազմակերպել առևտրի և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխումը վարչական շրջանի տարածքում՝ ուշադրություն դարձնելով նրանց հեռավորությանը կանգառներից, համաչափությանը փողոցի արտաքին տեսքին,
- շինանյութի, հեղուկ գազի, վառելիքաքսայուղերի, հեղուկ վառելիքի և գյուղատնտեսական մթերքների վաճառքը համապատասխանեցնել մշակված և հաստատված առևտրի համայնքային կանոններին,
- արգելել ապօրինի առևտուրը, ինչպես նաև անօրինական կրպակ-տաղավարների տեղադրումը՝ սահմանելով ամենօրյա հսկողություն,
- վերահսկել վարչական շրջանում տեղական տուրքերի, վճարների, ինչպես նաև ժամանակավոր օգտագործման տրված հողատարածքների վարձակալության վարձավճարների մուտքերը,
- հիմնաքանդել և արդիականացնել վարչական շրջանի տարածքում գտնվող չօգտագործվող, լքյալ և հնաճ տեսք ունեցող ժամանակավոր կրպակ-տաղավարները,
- կազմակերպել աշխատանքի ռացիոնալ ռեժիմի ընտրություն՝ բարձրացնելով առևտրի և սպասարկման կուլտուրան:

Առևտրի և սպասարկման ոլորտի զարգացման և տարածքային կազմակերպման խնդիրների լուծման ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հիմնական սկզբունքները.

• *վարչական շրջանում առավելություն տալ փոքր և միջին կազմակերպությունների ցանցի զարգացմանը,*

• *բնակավայրերում ստեղծել նպատակահարմար պայմաններ՝ բնակչության սպասարկման նկատմամբ ունեցած պահանջունքները տեղում բավարարելու համար,*

- անհրաժեշտ է դիտարկման կարգով ուսումնասիրել այն բաղադրատարրերը, որտեղ հնարավոր է ստեղծել գյուղատնտեսական մթերքների փոքր շուկաներ,
- ապահովել սպասարկման տարածքային համակարգերի հեռանկարային բնույթը և համապատասխանեցումը միջավայրի կանխատեսվող փոփոխություններին:
- Ապրանքների և սպասարկման տարածքային շուկայի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝
 - որոշել կոնկրետ շուկաների տարածքային և ապրանքային սահմանները,
 - գնահատել համայնքի բնակչության վճարունակ պահանջարկի ընդհանուր ծավալն ու կառուցվածքը՝ առանձին ապրանքների սպասարկման նկատմամբ,
 - ուսումնասիրել վարչական շրջանի բնակչության պահանջարկի սեզոնային, ինչպես նաև տարածքային տատանումները,
 - գնահատել պահանջմունքների բավարարման աստիճանը այս կամ այն ապրանքի և սպասարկման նկատմամբ, ինչպես նաև որոշել վարչական շրջանի շուկայի հագեցվածությունը,
 - ուսումնասիրել տվյալ շուկայի մենաշնորհացման աստիճանն ու մրցակցության սրության աստիճանը,
 - ձևակերպել շուկայական հարաբերությունների կարգավորման մեխանիզմները:

Գ ո վ ա գ դ

Նախատեսվում է գովազդային վահանակների թույլտվության և համապատասխան պայմանագրերի կնքման ծրագրերի զարգացման և կատարվող մշտական վերահսկման և հաշվառման արդյունքների համադրման միջոցով գովազդային գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների գույքագրման արդյունքների հետ հայտնաբերել լքյալ, ժամկետանց որոշումներով գործող և չգործող, առանց համապատասխան թույլտվությունների և պայմանագրերի, ապօրինի գործող գովազդային վահանակների դաշտը և մշակել նշվածների

օրինականացման և հիմնաքանդման համապատասխան ծրագիր՝ իրավաբանական բաժնի հետ համատեղ:

Շարունակվելու է հսկողությունը Կենտրոն վարչական շրջանի տարածքում տեղադրվող գովազդների որակի նկատմամբ, արդիականությունը և համապատասխանությունը «Գովազդի մասին» ՀՀ օրենքին: Ստեղծվում և մշտապես համալրվում է համակարգչային շտեմարանը, որտեղ գրանցվում են Կենտրոն վարչական շրջանի տարածքում գովազդային գործունեություն ծավալած բոլոր տնտեսվարող սուբյեկտների հետևյալ տվյալները.

- *վարչական շրջանի տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման թույլտվությունները՝ տեղի ունեցող փոփոխություններով,*

- *ֆինանսական բաժնի կողմից տրվող տեղեկանքների հիման վրա տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարած վճարումները՝ տեղական տուրքերի մասով,*

- *գովազդային նյութերի բովանդակությունը,*
- *գովազդի մակերեսը,*
- *թույլտվության սկիզբը և ավարտը:*

Բաժնի աշխատակիցների կողմից ամենօրյա կազմակերպվող ստուգայցերի միջոցով հայտնաբերել և իրավական դաշտ բերել տնտեսվարող սուբյեկտների կողմից առանց համապատասխան փաստաթղթային ձևակերպումների տեղադրված գովազդային նյութերը:

Նախատեսվում է պարբերաբար կազմակերպվող ստուգայցերի ժամանակ կազմել «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին համապատասխան վարչական իրավախախտումների մասին արձանագրություններ այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնք բազմիցս զգուշացվելուց հետո հրաժարվում են օրինականացնել և (կամ) ապամոնտաժել իրենց կողմից տեղադրված ապօրինի գովազդային նյութերը:

Արտակարգ իրավիճակներ և քաղաքացական պաշտպանություն

Ծրագրի նպատակը՝ «Բարձրացնել արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ Կենտրոն վարչական շրջանի բնակչության պաշտպանվածության աստիճանը»:

Ծրագրի հիմնական խնդիրները՝

- Շրջանը ապահովել կապի և ազդարարման ժամանակակից միջոցներով, կենտրոնացված ազդարարման համակարգով, ապահովելու համար արտակարգ իրավիճակներում բնակչությանը սպառնացող վտանգի մասին անհապաղ իրազեկումն ու վարվելակերպի կանոններին ծանոթացումը,
- Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ շրջանի պահեստային կառավարման կետի պատրաստականության բարձրացման և անհրաժեշտ տեխնիկական միջոցներով համալրված շարժական կառավարման կետի ստեղծման ուղղությամբ,
- ՔՊ ծառայությունների համապատասխան մասնագետների ուժերով ստեղծել շուրջօրյա պատրաստականության շարժական վթարային խումբ,
- Ճշգրտել շրջանում ստեղծված առաջին կանչի ուժերն ու միջոցները և ձեռնարկել գործուն միջոցներ դրանց պատրաստականության ապահովման ուղղությամբ,
- Կատարելագործել շրջանի տարածքում արտակարգ իրավիճակների (դեպքերի) կամ դրանց առաջացման սպառնալիքի մասին տեղեկությունների յուրաժամկետ ընդունման և հետագա գործողությունների կանոնակարգման աշխատանքները,
- Ապահովել օպերատիվ հերթապահության և քիմիական վտանգավոր օբյեկտների դիսպետչերների միջև ուղիղ կապ,
- Թարմացնել և հարստացնել առաջին կանչի մեխանիզացված խմբի սարքերը և սարքավորումները, ԱԻ դեպքում անհրաժեշտ հրատապ փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքներն իրականացնելու համար,

- Իրականացնել միջոցառումներ շրջանի տարածքում, սելավավտանգ, Գետառ գետի հունի մաքրման ուղղությամբ,
- Հաշվառել շրջանի տարածքում առկա քաղաքացիական պաշտպանության ընթացիկ ապահովման գույքը և իրականացնել միջոցառումներ դրանց անհրաժեշտ համալրման համար,
- Կանխարգելել Հրազդանի կիրճում և շրջանի այլ տարածքներում հնարավոր քարաթափումների վտանգը.

Բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների

իրավունքների և օրինական շահերի

պաշտպանություն

Կենտրոն վարչական շրջանի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում կազմակերպվում են շրջանի ղեկավարի և ստորաբաժանումների ղեկավարների ընդունելության օրեր, որի շնորհիվ բնակչությանը հնարավորություն է ընձեռվում ներկայացնելու իրեն հուզող հարցերը և մասնակցելու շրջանի խնդիրների լուծմանը: Իրավաբանական բաժինը համայնքի բնակիչների համար կատարում է իրավախորհրդատվական աշխատանք՝ աջակցելով քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի իրավաբանական բաժնի աշխատակիցները մասնակցում են բաժնի առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրների լուծմանը և որոշումների ընդունմանը, ներկայացնում վարչական շրջանի շահերը համապատասխան մարմիններում, պատասխանում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական անձանց և քաղաքացիների գրություններին և դիմումներին, նախապատրաստում է հայցադիմումներ, վճիռների դեմ բողոքներ, իրավական ակտերի նախագծեր, տեղեկանքներ, զեկուցագրեր և իրականացնում դրանց հետ կապված այլ աշխատանքներ:

Մ Ա Լ Ա Թ Ի Ա - Ս Ե Բ Ա Ս Տ Ի Ա Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն

Մալաթիա–Սեբաստիա վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին:

Վարչական շրջանը Երևան քաղաքի հարավ-արևմտյան դարպասն է: Թաղամասը, հիմնադրվել 1927 թվականին, Սովետական Հայաստանի կառավարության որոշմամբ: Շրջանը զբաղեցնում է 2539 հա տարածք, փողոցների երկարությունը՝ 78,5 կմ, փողոցների մակերեսը՝ 115,5 հազ. քմ (մանրամասները տե՛ս «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Արգիշտի թագավորի սեպագիր արձանագրություններից մեկում ասված է, որ Էրեբունի քաղաքը հիմնադրելիս նա 6000 զինվոր է բերել Շուկանի երկրից Էրեբունի ամրոցը կառուցելու համար: Շուկանի երկիրը հայոց Շոփքն է, Շոփաց աշխարհը, որը տարածվել է Եփրատ գետի ափին՝ Մալաթիայի և Խարբերդի դաշտերում: Այսպիսով՝ Երևանի առաջին բնակիչները Արգիշտիի զինվորների հետ միասին եղել են նաև Մալաթիացիները:

1927թ., երբ մալաթահայերի քարավանը, մյուս սփյուռքահայերի հետ ներգաղթեց Խորհրդային Հայաստան, Երևան քաղաքի ծայրամասերից մեկում նրանք հիմնեցին մի գողտրիկ թաղամաս, որը անվանվեց Նոր Մալաթիա:

1946-1948թթ. դարձյալ ներգաղթեցին մալաթիացիներ և սեբաստացիներ: Եկան նաև վերաբնակներ՝ Արամուսից, Կապանից, Մարտունուց, Լիբանանից, Սիրիայից, Ֆրանսիայից, Եգիպտոսից, Հունաստանից և այլ երկրներից:

1953թ. Մալաթիայի Բերիայի անունը կրող շրջանը վերանվանվեց Շահումյանի շրջան: 1965թ. Շահումյանի շրջանը ուներ 200 հազար բնակչություն: 1996թ. ձևավորվեցին համայնքները, և շրջանը վերանվանվեց Մալաթիա – Սեբաստիա թաղային համայնք, 2009թ. վերանվանվեց Մալաթիա – Սեբաստիա վարչական շրջան:

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Շրջանի բնակչությունը 01.01.2009թ. դրությամբ 140,9 հազ. մարդ է ⁴³: Ծնվածների թիվը 2008թ. 2234: Արցախյան ազատամարտին մասնակցել են 917 մարտիկներ: Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցների թիվն է 179 (մանրամասները տե՛ս «Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Վիճակի նկարագիր

Շրջանում են գտնվում «Մետաքս», «Անուշ», «Տոսպ», «Ալֆա», «Մարս» և այլ արդյունաբերական ձեռնարկություններ, գործում են «Մալաթիա» ԲԿ, «Արմենիկում» ԲԿ, «Սուրբ Աստվածամայր» ծննդատունը, թվով 6 պոլիկլինիկաներ, որից 2-ը՝ ատամնաբուժական, 20 հանրակրթական դպրոցներ, 25 նախադպրոցական հիմնարկներ, «Մխիթար Գոշ» համալսարանը, «Ամիրդովլաթ Ամասիացի» բժշկական ինստիտուտը, «Սուրբ Երրորդություն» և «Սուրբ Մարիամ Աստվածածին» եկեղեցիները, 7 այգիներ և պուրակներ՝ 86317 քմ ընդհանուր մակերեսով, 8 արձաններ, 2 կիսանդրի, 1 հուշատախտակ, 13 պատմամշակութային հուժարձաններ, 14 կամուրջներ, կապի հանգույցներ (71;72; 73; 74; 77 ԱՀԿ-ներ) և հավասարաչափ բաշխված առևտրի և սպասարկումների 340 օբյեկտներ, 10 սուպերմարկետներ:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում 2010թ. կիրականացվեն ծրագրեր 1 733 305.9 հազ.դրամ գումարի չափով:

Վարչական շրջանի ուժեղ կողմերը

Շրջանի աշխարհագրական դիրքը բարենպաստ է հեռանկարային զարգացման համար:

Մալաթիա-Սեբաստիան ունի գիտա -արտադրական մեծ պոտենցիալ:

⁴³ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

Շրջանն ունի գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության պահուստային հողեր, որոնք կարող են հատկացվել բնակչությանը ինչպես գյուղատնտեսական, այնպես էլ քաղաքաշինական նպատակներով:

Վարչական շրջանում հիմնականում պահպանվել են նախադպրոցական հիմնարկների տիպային շենքերը:

Շրջանում ակտիվ է առևտրային գործունեությունը:

Վարչական շրջանի թույլ կողմերը

Ցածր է շրջանի տարածքում գործող համատիրությունների գործունեության արդյունավետությունը: Բազմաբնակարան շենքերի պահպանումը և շահագործումը զգալի բարեփոխումների կարիք է զգում, հակառակ դեպքում վտանգված է շրջանի բնակֆոնդի պահպանումը:

Անմխիթար վիճակում են գտնվում շրջանի կոմունալ տնտեսության (ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղու և ոռոգման) ցանցերը, ճանապարհային տնտեսության որոշ մասը:

Կապիտալ նորոգման և բարեկարգման կարիք են զգում շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառի կազմակերպությունների շենքերն ու շինությունները:

Թույլ է շրջանի ղեկավարի աշխատակազմի և նրա ենթակա կառույցների նյութատեխնիկական բազան, նրա հզորացումը պահանջում է ֆինանսական խոշոր ներդրում:

Շրջանում ավելացել է գործազուրկների քանակը, առկա է թաքնված գործազրկության և զբաղվածության խնդիր:

Շրջանում մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները, միայնակ թոշակառուները, ցածր եկամուտ ունեցողները:

Ռազմավարություն

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի էական բարձրացումը, դրանց հսկողության հարցում բնակչության հետ հետադարձ կապի ապահովումը,

- շրջանի բնակչության և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերի պաշտպանումը,
- շրջանի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավումը, բակային տարածքներում ժամանցի և հանգստի բարեկարգ գոտիների կազմակերպումը,
- շրջանի բնակելի շենքերի և այլ շինությունների պահպանման, շահագործման և նորոգման ապահովումը,
- շրջանի տարածքում նոր աշխատատեղերի ստեղծումը, փոքր և միջին բիզնեսի և գյուղատնտեսության զարգացումը,
- հատուկ ուշադրություն դարձնել կրթության, մշակույթի և մարզական օջախների արդյունավետացմանը և նպատակային գործունեությանը, ապահովել բնակչության ներգրավվածությունը ֆիզիկական կուլտուրայի և մշակութային զանգվածային միջոցառումներին,
- շրջանի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը,
- շրջանի ֆինանսական կացության բարելավումը՝ հարկային և ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի և վճարների սահմանման և զանձման ճկուն քաղաքականության իրականացմամբ,
- վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի (այսուհետև՝ աշխատակազմ) աշխատանքային արդյունավետության բարձրացումը:

Կրթություն, մշակույթ, սպորտ

Շրջանում գործում է 20 հանրակրթական դպրոց, 1 համալսարան, 25 նախադպրոցական կազմակերպություն, 1 կրթահամալիր, 3 մարզադպրոց, 1 մարզական ակումբ, 1 գրադարանային համակարգ՝ 2 մասնաճյուղով, 1 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 2 մշակութային կենտրոն:

Նախադպրոցական հիմնարկներից մեկը մասնավոր է, մեկը՝ գերատեսչական, երկուսը պայմանագրային կառավարման է հանձնված, մնացած քսաներկուսը ՀՈԱԿ են:

Երեխաների համակազմը 22 համալիր մանկապարտեզում 3220 է:

Միջին հաճախելիությունը՝ 2600-2700 երեխա: Կոմպլեկտավորված է 122 խումբ, որից 28-ը՝ մսուրային: 22 համալիր մանկապարտեզում աշխատակիցների թիվը 707 է:

Բոլոր համալիր մանկապարտեզներն ապահովված են մասնագիտական կադրերով:

Թիվ 74, 276 համալիր մանկապարտեզները վերանորոգվել են «Փրկենք երեխաներին» ծրագրով: Թիվ 74, 276 և «Նարինե» համալիր մանկապարտեզներում իրականացվում է ներառական կրթություն:

Համալիր մանկապարտեզները գործում են տիպային շենքերում, ապահովված են էլեկտրաէներգիայով, ջրով, կայուն գրաֆիկով կատարվում է աղբահանություն և դեռատիզացիա:

2007 թ-ից ամբողջությամբ կիրառության մեջ է «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 30 հոդվածի 5-րդ կետը:

2009թ-ի հունվարից համալիր մանկապարտեզներում աշխատող սան. դայակների աշխատավարձի մեկ դրույքը դարձել է 45.0 հազ. դրամ:

2006-2009թթ-ին ջեռուցման ամբողջական համակարգ է կառուցվել թիվ 74, 279 համալիր մանկապարտեզներում, մասնակի համակարգ՝ 212, 215 և 266 համալիր մանկապարտեզներում՝ յուրաքանչյուրում երկուական խումբ:

2007-2009 թթ-ին վերանորոգվել են գրադարանային համակարգի 2 մասնաճյուղերը, կառուցվել է արվեստի դպրոցի դահլիճը:

Շրջանի տարածքում կառուցվել է 9 փոքր ֆուտբոլի մասնագիտացված դաշտ՝ սպորտը տարածելու, երիտասարդության զբաղվածության ու ժամանցի համար:

2008-2009թթ-ին կառավարության ծրագրով դպրոցների հետ համատեղ ջեռուցման համակարգ են ընդգրկվել թիվ 116, 105, 303 և «Հեքիաթ» համալիր մանկապարտեզները:

Թիվ 74, 105, 276, 279 և 303 համալիր մանկապարտեզներն ունեն կաթսայատուն, թիվ 116 և «Հեքիաթ» համալիր մանկապարտեզները ջեռուցվում են հարևանությամբ գործող դպրոցների կաթսայատներից:

2009թ-ի ընթացքում թիվ 11, 167, 296 հ/մանկապարտեզներում հիմնանորոգման է ենթարկվել մեկական խումբ, 17-ում՝ 4 խումբ:

288-ում վերանորոգման ընթացքի մեջ են գործող խմբերի սանհանգույցները:

266-ում մասնակի ջեռուցումը ընդլայնվում է 2 խմբից մինչև մեկ մասնաշենք:

12 համալիր մանկապարտեզում տեղային ջեռուցման համակարգի ստեղծման կարիք կա:

Էլ. էներգիայով հ/մանկապարտեզների ջեռուցումը լուրջ խնդրի առջև է կանգնում՝ մալուխագծերի հզորության պակասի և մաշվածության պատճառով:

Անմիջիցսար վիճակում են բոլոր մանկապարտեզների ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերը, մասնակի նորոգումները, որոնք իրականացվում են գրեթե բոլոր տարիներին, ձմռան սեզոնից հետո, այլևս անարդյունավետ են, ծախսերը՝ չարդարացնող:

20 և ավելի տարիներ համալիր մանկապարտեզներում չի իրականացվել հիմնանորոգում, չի կատարվել փափուկ և կոշտ գույքի ձեռքբերում: Եղած գույքը հնամաշ է, պիտանելիության ժամկետը սպառած:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության՝ նախադպրոցական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար մատչելի դարձնելու ռազմավարությունը.

Նախատեսվում է.

- 2010-2013թթ. ընթացքում հիմնանորոգել թիվ 117, 167, 266 համալիր մանկապարտեզները (ջեռուցման համակարգի ստեղծումը և ամբողջացումը ներառյալ):
- Տեղային կաթսայատուն և ջեռուցման համակարգ կառուցել թիվ 17, 115, 241, «Նարինե» մանկապարտեզների համար:
- Ընդլայնել մասնակի ջեռուցվող թիվ 212, 215 համալիր մանկապարտեզների ջեռուցման ցանցը:
- 169 համալիր մանկապարտեզում կառուցել ջեռուցման ներքին ցանց և միացնել արդեն լոկալ կաթսայատուն ունեցող 105 հ/մանկապարտեզի կաթսայատանը:
- Երեխաների հաճախելիության պահանջարկը բավարարելու համար լրացուցիչ խմբեր բացել թիվ 17-4 խումբ, 117-7 խումբ, 266-4 խումբ, 212 -3 խումբ

և 105, 116, 241, 279, «Նարինե» համալիր մանկապարտեզներում մեկական խումբ (ընդհանուր թվով՝ 23 խումբ):

- Նոր բացվող խմբերը ապահովել փափուկ և կոշտ գույքով (ընդհանուր հաշվարկով՝ 24 խումբ):
- Տեղային կաթսայատներ չունեցող համալիր մանկապարտեզներում փայտի վառարաններով ջեռուցումը բացառելու համար մանկապարտեզներին տրամադրել էլեկտրական մարտկոցներ՝ ընդհանուր թվով 102 հատ:
- Մասնակի վերանորոգում իրականացնել համալիր մարզադպրոցում՝ մարզումների ժամանակակից պահանջներին համապատասխան միջավայր ստեղծելու նպատակով:

Կրթության, մշակույթի, հանգստի կազմակերպման, կրոնի և սպորտի համար 2010 թվականին Երևանի բյուջեից նախատեսվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանին տրամադրել 640 545.1 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Խնամակալություն և հոգաբարձություն

Շրջանում գործում է խնամակալության հանձնաժողով, որի նախագահը շրջանի ղեկավարն է: Կազմում ընդգրկված են ոստիկանության անչափահասների գործերի բաժնի, սոցիալական ծառայության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, իրավաբան, հոգեբան, աշխատակազմի անդամներ:

Խնամակալության հանձնաժողովի մարմնի և մանկապարտեզների, դպրոցների, ծննդատների, սոցիալական ծառայության, համատիրությունների միջև կա սերտ համագործակցություն: Կատարվում է համատեղ բացահայտված, դժվարին իրավիճակում հայտնված անչափահասների կյանքի հետազոտություն, հավաքագրում և տեղավորում խնամակալական կազմակերպություններում:

Դատական մարմիններում խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչը հանդես է գալիս որպես անչափահասի իրավունքների պաշտպան:

2006-2009թթ. տասնութ տարին լրացած առանց ծնողական խնամքի մնացած և բնակարանի կարիք ունեցող 3 երեխա ընդունվել է բնակարանային հաշվառման: 39 անչափահաս հանձնվել է խնամակալության:

Առանց ծնողական խնամքի մնացած 3 նորածին տեղավորվել է մանկատանը, 2-ը՝ ժամանակավոր խնամակալական հաստատությունում:

Սկզբնական հաշվառման մեջ է առանց ծնողական խնամքի 25 երեխա և առանց ծնողական խնամքի թվին պատկանող 22 երեխա:

Ազգային ժողովի պատգամավոր Ս. Ալեքսանյանի կողմից կատարվում է հովանավորություն շրջանի թիվ 17 և 279 հ/մանկապարտեզներ հաճախող ծնողագուրկ և կարիքավոր բոլոր երեխաներին:

Ամառային արձակուրդներին առանց ծնողական խնամքի մնացած և կարիքավոր 100 երեխա հանգստացել է ճամբարում:

ԽՀՀ-ի կատարած աշխատանքները 2006-2009թթ.

h/h	Հանձնաժողովի կատարած աշխատանքի անվանումը	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.
1.	Խնամ. և հոգաբարձություն	62	58	34	39
2.	Խնամ. կազմակերպ. հանձնում	10	3	5	2
3.	Տեսակցություն	11	13	9	16
4.	Անչափահասի և անգործունակի գույքի նկ. խնամակալություն և տնօրինում	8	12	6	7
5.	Պատրոն (օգնական)	2	2	-	1
6.	Խնամակալ. անգործունակի նկ.	12	20	7	9
7.	Խնամք և դաստիարակություն	2	4	1	2
8.	Անչափահասի ազգան. փոփ.	-	3	3	-

Հիմնախնդիր է շրջանում խնամատար ընտանիքների ձևավորման ծրագրի անկատարությունը, խնամակալներին ոչ լիարժեք աջակցությունը:

Գերակա խնդիր է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակարանով ապահովելու դանդաղ ընթացքը և այդ առումով սոցապ. նախարարության և շրջան հետադարձ կապի բացակայությունը:

Նախատեսվում է

- Հանդիպումներ և քննարկումներ մանկապարտեզների, դպրոցների տնօրենների, համատիրությունների նախագահների, սոցձառայության

աշխատողների, ՆԳ աշխատակիցների հետ՝ ընտանեկան դժվարին իրավիճակներում հայտնված անչափահասների բացահայտման և աջակցության նպատակներով:

- Այցելություն խնամակալական ընտանիքներին՝ նրանց խնդիրների բացահայտման և աջակցության կազմակերպման նպատակով:
- Աջակցել խնամատար ընտանիքների ձևավորման և ներդրման ծրագրերին:
- Ավելի սերտ դարձնել համագործակցությունը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի» և քաղաքապետարանի «Երեխաների իրավունքների պաշտպանության» բաժինների հետ:

Առողջապահություն և սոցիալական ապահովություն

Շրջանում բնակչությունը ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բժշկական օգնություն ստանում է շրջանն սպասարկող 6 պոլիկլինիկաներում, 2 ծննդատներում և «Մալաթիա» ԲԿ-ում: Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը՝ անհրաժեշտություն է առաջացել սերտացնելու աշխատակազմի ու բուժիմնարկների և կազմակերպությունների միջև աշխատանքային հարաբերություններն ու փոխադարձ կապը: Այս ուղղությամբ նախատեսվում է հատկացնել 10000.0 հազ. դրամ:

Ինչպես նշվել է վերևում, նպաստառու ընտանիքների թիվը շրջանում կազմում է 2511, որոնք գրանցված են շրջանի ՄՕՏԲ-ում: Անհրաժեշտություն է առաջացել ակտիվացնել սոցիալական աջակցության խորհրդի աշխատանքները, դրանք դարձնելով ավելի բաց ու թափանցիկ: Այս ուղղությամբ նախատեսվում է հատկացնել 15000.0 հազ. դրամ:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի սոցիալական պաշտպանության ոլորտին նախատեսվում է տրամադրել 65 730.3 հազ.դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե»):

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառ

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառի գերակայություններն են.

- ✓ *Բնակֆոնդի պահպանումը*
- ✓ *Միջթաղային ճանապարհների վերակառուցումը և վերանորոգումը*
- ✓ *Մանկապարտեզների տարածքների բարեկարգումը և վերանորոգումը*
- ✓ *Փողոցների արտաքին տեսքի ձևավորումը*
- ✓ *Սյգիների, հանգստի գոտիների և բակերի վերջնական ձևավորման խնդիրները*
- ✓ *Հուշարձանների պահպանությունը*

Շրջանի 2010–2013թթ. առաջնահերթ խնդիրների թվում են.

- *շրջանի տարածքում տեղադրված գովազդների և շինարարական աշխատանքների թույլտվությունների դիմաց բյուջեի մուտքերի ապահովումը` տեղական տուրքերի և վճարների գծով,*
- *բնակելի շենքերի բակերի բարեկարգման աշխատանքների իրականացման համար նախագծերի կազմումը,*
- *ապօրինի շինարարության նկատմամբ հսկողության ուժեղացումը և դրա իսպառ վերացումը,*
- *շրջանի բնակելի թաղամասերի տարածքներում խտացման տարբերակով անհատական բնակարանային շինարարության համար հողհատկացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը,*
- *ծանրաբեռնված փողոցներում երթուղային տրանսպորտի կուտակումները կանխելու նպատակով վերջնական գառների ձևավորման աշխատանքներին օժանդակումը,*
- *շրջանի տարածքում տեղադրված առևտրի և սպասարկումների ոլորտի կրպակների և տաղավարների արտաքին տեսքի արդիականացման գործընթացի շարունակումը, կենտրոնական փողոցների վրա գտնվող չգործող և անհրապույր տեսք ունեցող ժամանակավոր օբյեկտների ապամոնտաժումը,*

2010–2013թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- «Մալաթիա» պուրակում Նարեկացու հուշարձանից դեպի Ռ. Մելիքյանի փողոց տանող հետիոտն ճանապարհի կառուցում,
- «Փարոս»-ի այգու ստորոտում, Միքայելյան փողոցին կից հանգստի գոտու և մարզական համալիրի կառուցում,
- «Իտալական» այգու լանջի բարեկարգում, խաղային համալիրի տեղադրում,
- Վ. Ջատիկյանի անվան այգում ընթացիկ նորոգում, խաղային համալիրի և պուրակային զրուցատաղավարների տեղադրում,
- Մայրության այգում ընթացիկ նորոգում, խաղային համալիրի տեղադրում,
- Միրո ու հավատի այգու ընթացիկ նորոգում,
- հասարակական զուգարանների կառուցում՝ Չինարի այգում, Վ. Ջատիկյանի անվան այգում,
- բակային տարածքների բարեկարգում՝ թվով 36 բակ,
- միջբակային փողոցների բարեկարգում,
- բնակֆոնդի պահպանման միջոցառումներ (սալվաճքի, մուտքերի հանգույցների, աղբախցիկների նորոգում),
- մանկապարտեզների տարածքների բարեկարգում,
- դպրոց տանող ճանապարհների բարեկարգում,
- անվանակոչված դպրոցներում կիսանդրիների տեղադրում (այլ աղբյուրների ֆինանսավորմամբ),
- Բ-1 թաղամասում թիվ 183 դպրոցին կից լանջի բարեկարգում,
- փողոցներին կից առևտրի սրահների և այլ օբյեկտների արտաքին տեսքի կարգավորում,
- կախովի աղբախցիկների փոխարինում ստացիոնար աղբախցիկներով,
- Հաղթանակ թաղամասի ակումբին կից տարածքի բարեկարգում,
- Բարաջանյան փողոցի վերգետնյա անցման կառուցում,
- «Մալաթիա» հուշարձանի վերանորոգում,
- ՀՄՊ 40–ամյակի այգու բարեկարգում, վերանորոգում և վերակառուցում (մրցութային եղանակով, այլ աղբյուրների հաշվին),

- վերգետնյա ավտոտնակների տեղափոխում ստորգետնյա տարածքներ,
- բակային տարածքներում խաղահրապարակների կառուցում,
- կենտրոնական փողոցներից շուկաների տեղափոխում,
- ժամանցային կենտրոնների ստեղծում,
- բակային տարածքների արտաքին լուսավորության ապահովում,
- նոր կանաչ տարածքների ստեղծում:

Բնակարանային-կոմունալ տնտեսություն

Շրջանն ունի 575 բազմաբնակարան բնակելի շենք. 492-ը բարձրահարկ են (9-16 հարկանի), որոնցից միայն 5-ն են նորակառույց, մյուսները կառուցվել են 1970-1980-ական թվականներին: Վաղուց հասունացել է բնակելի շենքերի գնահատման, ամրացման, վերանորոգման աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունը: Շրջանի 575 բնակելի շենքերից 522-ը սպասարկվում են 33 համատիրությունների կողմից, 47-ը՝ լիազորագրային կառավարմամբ, 6-ը՝ աշխատակազմի կողմից: Շրջանի բնակֆոնդի ընդհանուր մակերեսը 1738.4 հազ. քմ է: Շենքերի բնակարանների ընդհանուր քանակը 26903 է, այդ թվում՝ համատիրությունների կողմից սպասարկվում է 24330-ը, լիազորագրային կառավարիչների կողմից՝ 2300 և աշխատակազմի կողմից՝ 283 բնակարաններ:

Բազմաբնակարան շենքերից 83-ի տանիքները թեք լանջավոր են, կառուցվել են 1965-1970-ական թվականներին, ընդհանուր մակերեսը մոտ 57,0 հազ. քմ է: Մնացյալ 492-ը հարթ տանիքով շենքեր են՝ մոտ 224,5 հազ. քմ ընդհանուր մակերեսով:

Փորձը ցույց է տալիս, որ գործող համատիրություններում շենքերի ֆիզիկական վիճակը հիմնականում չի բարելավվում, ինչը հանգեցնում է բնակչության արդարացի դժգոհությանը:

Շրջանի 492 բարձրահարկ շենքերում կան 960 վերելակներ, որոնցից 7-ը չեն աշխատում թալանված լինելու պատճառով, 12-ը կիսաթալանված են, 2-ը՝ վթարային-անսարք:

Վարչական շրջանի տարածքում հաշվառված են 2378 օրինական և 5863 ինքնական կառուցված ավտոտնակներ՝ ընդամենը զբաղեցնելով մոտավորապես 165000 քմ մակերես:

2010-2013թթ. ընթացքում այս ոլորտում նախատեսվում են կատարել աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

- ապահովել բյուջեի մուտքերը շրջանի ոչ բնակելի և ավտոտնակների զբաղեցրած տարածքներից,
- հիմնական և մասնակի վերանորոգման ենթարկել բնակելի շենքերի հարթ և թեք լանջավոր տանիքները,
- ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի վերելակային տնտեսությունում,
- վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցերում, ջրհորդան խողովակների վրա, շքամուտքերում, աստիճանավանդակներում,
- բարեկարգել բնակելի շենքերի բակային տարածքները,
- վերականգնել բարձրահարկ բնակելի շենքերի պատերից թափված երեսպատման սալիկները,
- մշտական ուշադրության կենտրոնում պահել համատիրությունների գործունեությունը՝ նրանց աշխատանքները բարելավելու և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2010-2013թթ. բազմաբնակարան շենքերի պահպանման համար առաջարկվում է հետևյալ աշխատանքային ծրագիրը՝

- Բազմաբնակարան, թվով 492 շենքերի հարթ տանիքներ պատված են փափուկ ծածկույթով՝ իզոգամով, որոնց պիտանիության միջին ժամկետը 5-7 տարի է: Նմանատիպ շենքերի տանիքների վերանորոգման նպատակով առաջարկվում ենք 2010թ. վերանորոգել 25,0 հազ. քմ հարթ տանիք, որի համար անհրաժեշտ ծախսերը կկազմեն մոտ 83,5 մլն դրամ:
- Թեք լանջավոր տանիքները և ջրհորդանները հիմնականում հին են, քայքայված: Այդ շենքերի բնակիչներին 2009թ. օգնության կարգով հատկացվել է

շուրջ 8000 քմ ազբոհերցաքար: 2010թ. համար առաջարկում ենք վերանորոգել ևս 8000 քմ տանիք, որի համար անհրաժեշտ կլինի մոտ 36,8 մլն դրամ:

- 2005-2008թթ. ընթացքում բազմաբնակարան շենքերի շքամուտքերում տեղադրվել են 300 նոր դռներ: 2010թ-ին առաջարկվում է տեղադրել ևս 70-ը, որի համար անհրաժեշտ է մոտ 4,7 մլն դրամ:

- Առաջարկում ենք 2010թ. ծրագրում նախատեսել 5,0 մլն դրամ շենքերի մոտ 2000 գմ ջրամատակարարման խողովակների վերանորոգման համար:

- Շրջանում գտնվող 83 ցածրահարկ (4-5 հարկանի) շենքերի ջրահեռացման համակարգի վերանորոգման համար առաջարկում ենք նախատեսել 9,25 մլն դրամ (շուրջ 2500 գծմ):

- Բազմաբնակարան բարձրահարկ շենքերի անձրևատար խողովակների վերանորոգման և վերականգնման համար առաջարկվում է նախատեսել 4,4 մլն դրամ (շուրջ 2000 գծմ):

- Կոյուղու ներքին ցանցի վերանորոգման համար առաջարկվում է նախատեսել 5,2 մլն դրամ, կվերանորոգվի շուրջ 2000 գծմ:

- Բազմաբնակարան բարձրահարկ շենքերի աղբատար խողովակների աղբապատուհանների (աղբալցման կետերի) վերանորոգման և նորերի տեղադրման համար կպահանջվի շուրջ 8,0 մլն դրամ:

- Շրջանի բարձրահարկ շենքերի կախովի աղբախցիկների վերանորոգման և վերակառուցման համար կպահանջվի 17,5 մլն դրամ:

- Բազմաբնակարան շենքերի կոմունիկացիոն գծերի ջերմամեկուսացման համար առաջարկվում է ձեռք բերել 2000 գծմ ապակեբամբակյա մեկուսիչ, որի համար անհրաժեշտ կլինի շուրջ 4,2 մլն դրամ:

- Շրջանի շենքերի շքամուտքերի վերանորոգման համար առաջարկվում է նախատեսել 6.4 մլն դրամ, որի դեպքում կվերանորոգվի շուրջ 3500 քմ տարածք:

- Շքամուտքերի քայքայված բետոնե ծածկերի վերականգնման համար առաջարկում ենք նախատեսել 7,35 մլն. դրամ, որը հնարավորություն կտա վերանորոգելու շուրջ 500 քմ ծածկ:

- Բազմաբնակարան շենքերի վերելակների պահպանման և վերանորոգման համար առաջարկում ենք նախատեսել 55,0 մլն դրամ, որից՝ 35,0 մլն՝ մարդատար, իսկ 20,0 մլն՝ բեռնատար վերելակների համար:

- Ընդհանուր առմամբ՝ 2010-2013թթ. շրջանի բազմաբնակարան շենքերի պահպանման և վերանորոգման համար առաջարկվում է նախատեսել 250,4 մլն դրամի աշխատանքային ծրագիր:

2010-2013թթ. կոմունալ տնտեսության, բարեկարգման, արտաքին լուսավորության բնագավառում նախատեսվում է կատարել ստորև նշվող աշխատանքները.

- Բազմաբնակարան շենքերի թվով 36 բակերի համար նախատեսվում է իրականացնել մի շարք բարեկարգման աշխատանքներ՝ եզրաքարերի շարում (1535 գմ), հողի լիցք (680 խմ), խաղահրապարակներում կարմիր ավազի տեղադրում (32 խմ), բետոնյա սալիկների վերանորոգում (170 քմ), անցուղիների ասֆալտապատում (1000 քմ), խաղահրապարակների ցանկապատում և այլ աշխատանքներ, որոնց իրականացման համար անհրաժեշտ է 74830.0 հազ. դրամ:

- Փողոցների և բակերի ասֆալտապատման համար նախատեսվում է իրականացնել 143690 քմ մակերեսով աշխատանքներ, որի արժեքը կազմում է 790295.0 հազ. դրամ:

- Փողոցների և բակերի արտաքին լուսավորության վերանորոգման-վերականգնման համար նախատեսված է անցկացնել 26300 գմ էլեկտրական ցանցեր՝ տեղադրելով 939 հենասյուն, որն արժե 280507.0 հազ. դրամ:

- Մեծարենցի փողոցին հարակից «Ստորին Հրազդան» ջրանցքի վրա հետիոտն կամրջի կառուցում (12 մ երկարությամբ և 2,5 մ լայնությամբ), որը կազմում է 4383.94 հազ. դրամ:

- Հասարակական զուգարանների կառուցում (նախագծով) Վ. Ջատիկյանի անվան այգում, ընդամենը 10785.0 հազ. դրամ արժողությամբ:

- Կանաչ տարածքների խնամք և պահպանում-նախատեսվում է շրջանի կանաչ տարածքների 77 հա անտառ պուրակների, այգիների, սիզամարգերի խնամքի, բարեկարգման և ընդլայման աշխատանքներ 118000.0 հազ. դրամ:

- Փողոցների տարածքների սանիտարական մաքրում. նախատեսված է 1087194 քմ ծավալի աշխատանքներ, որի համար կպահանջվի 273746.0 հազ. դրամ:
- Բաբաջանյան փողոցի վրայով հետիոտնային վերգետնյա անցման կառուցում (նախագծով)՝ Հ/Ա Բ-4 թաղ. դեպի Հ/Ա Բ-1 թաղ. 52712.1 հազ. դրամ արժողությամբ:
- Շենքերի բակերում գտնվող անսարք խաղային համալիրների վերանորոգում. անհրաժեշտ գումարը կազմում է 2200.0 հազ. դրամ:
- Այգիներում գտնվող նստարանների վերանորոգում և նորերի տեղադրում–նախատեսվում է կոտրված, վնասված նստարանները վերանորոգել (440.5 հազ. դրամ) և տեղադրել 132 հատ նոր նստարաններ (9372.0 հազ. դրամ):
- Կենտրոնական փողոցների եզրաքարերի վերանորոգում. նախատեսված է վերանորոգել բազալտյա 2121.2 գմ (10393.9 հազ. դրամի), շարել նոր բազալտյա 625 գմ. (7106.3 հազ. դրամի):
- ՀՄՊՀ-ի 40-ամյակի այգու դիմացի հենապատի բազալտյա սալիկների տեղադրում. նախատեսված է նշված հենապատի վրայի կոտրված բազալտյա սալիկների փոխարեն շարել նորերը՝ 140 քմ, որի անհրաժեշտ գումարը կազմում է 3900.0 հազ. դրամ:
- Ոռոգման ցանցերի վերանորոգում և անցկացում. նախատեսված է նոր ոռոգման ցանց անցկացնել 11110 գմ (89461.2 հազ. դրամի) կանաչ տարածքների այն հատվածներում, որտեղ ընդլայնման աշխատանքներ են ընթանալու (նաև շենքերի բակային տարածքներ) և կանխատեսվում է վերանորոգել գործող, բայց անսարք 3839 գմ (5695.9 հազ. դրամի) ոռոգման ցանցեր:
- Նախատեսվում է Բաֆֆու փողոցի սիզամարզի վերանորոգում (Անդրանիկի փողոցից մինչև Շերամի փողոցի հատումը, սալիկապատում (անցուղու կառուցում) 110 քմ՝ 1500.0 հազ. դրամ արժողությամբ:

Բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավում

Բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման նպատակով աշխատակազմն իր մասնակցությունն ու աջակցությունը կրեթի շրջանի ջրամատակարարման և ջրահեռացման, գազամատակարարման համակարգերում բարեփոխումներ իրականացնելու գործում: Ջրամատակարարման բնագավառում խնդիր է դրվում բնակչությանը ապահովել բավարար քանակությամբ խմելու ջրով՝ նպատակ ունենալով, ողջ շրջանի տարածքը ապահովել շուրջօրյա ջրամատակարարմամբ, կանխել ջրի կորուստները և արտահոսքը արտաքին միջավայր:

2010թ. ընթացքում նախատեսվում է շրջանի գազամատակարարման աշխատանքները հասցնել ավարտին:

Աղբահանություն և փողոցների մաքրում

Նախատեսվում է ավելացնել շրջանի բնակչության կողմից առաջացող կենցաղային աղբի և փոշու հավաքման և տեղափոխման հաճախականությունը: Կենցաղային աղբի տեղափոխումը կկատարվի ռիթմիկ, ըստ մշակված աշխատանքային գրաֆիկների:

2010թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել 273746.0 հազ. դրամի սանիտարական մաքրման աշխատանքներ, ընդգրկելով 1087194 քմ տարածք:

2011-2013թթ. նախատեսվում է կատարվելիք աշխատանքների ծավալի աճ:

Կանաչ տարածքների խնամք և ոռոգում

2010-2013թթ. նախատեսվում է շրջանում ընդարձակել կանաչ տարածքները 10 հա-ով, որն իրագործելու համար անհրաժեշտ է ընթացիկ և հիմնական վերանորոգման ենթարկել գործող ոռոգման համակարգերը՝ 18786 գմ երկարությամբ, կառուցել նոր խողովակաշարեր: Նախատեսվում է խիտ բնակեցված թաղամասերում 7 հա նոր այգիների, պուրակների ստեղծում, սիզամարգային տարածքի

վերականգնում, 3500 ծառերի և թփերի տնկում, ծաղկային տարածության ընդարձակում՝ 10000 քմ, սիզամարգերի ավելացում՝ 16 հա-ով, ծառերի երիտասարդացում՝ 5000 ծառ, ծառերի և թփերի բուծում՝ տարեկան 2 անգամ:

Արտաքին լուսավորություն

Շրջանի փողոցների և բակերի արտաքին լուսավորման ցանցի երկարությունը կազմում է 82.34 կմ, հենասյուների քանակը՝ 2504, իսկ լուսատուների քանակը՝ 3375: 2010-2013թթ. նախատեսվում է կատարել արտաքին լուսավորության ցանցի վերականգնման, վերանորոգման և ընդլայնման աշխատանքներ: 2010թ. ոլորտի ծախսը կկազմի 280507.0 հազ. դրամ:

Ճանապարհային տնտեսություն

Շրջանն ունի 88 փողոցներ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 78.5 կմ: Դրանց ընդհանուր մակերեսը կազմում է 1157459 քմ, երթևեկելի մասի մակերեսը՝ 1036616 քմ: Ճանապարհների ասֆալտբետոնե ծածկույթի մակերեսը կազմում է 1144859 քմ: 2010թ. նախատեսվում է կատարել 143690 քմ ասֆալտբետոնե ծածկերի վերանորոգման աշխատանքներ՝ 790295.0 հազ. դրամ արժողությամբ:

Գյուղատնտեսություն և շրջակա միջավայրի պահպանություն

Շրջանի գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են շրջանի արևելյան և արևմտյան մասը, ձգվում են հյուսիսից հարավ՝ զբաղեցնելով 335.9 հա տարածություն: Շրջանի բնակավայրի հողերի մակերեսը 1228.6 հա է, որից 180 հա՝ տնամերձ:

Շրջանի բազմամյա տնկարկների զբաղեցրած մակերեսը 430.4 հա է, որից 100 հա՝ տնամերձ: Բազմամյա տնկարկներում գերակշռում է խաղողը՝ 325.1 հա, իսկ պտուղներն ու հատապտուղները՝ 105.3 հա:

Ներկայումս խաղողի և պտղատու այգիները ձերացել են, ժամանակին չստանալով ագրոտեխնիկական միջոցառումներ (ոռոգում, բուծում, պարարտացում,

երիտասարդացում, լրացում և այլն), կորցրել են կենսունակությունը, նվազել է 1 հա-ի հաշվով միջին բերքատվությունը: Ոռոգման ջրի մատակարարը «Ոռոգում» ՊՓԲԸ Երևանի մասնաճյուղն է, որի հետ համատեղ կազմակերպվում է հողերի վարձակալներին ոռոգման ջրով ապահովելու հարցը:

2010-2013թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

- կատարել շրջանի գյուղատնտեսական նշանակության հողերի նոր գնահատում, ճշտել յուրաքանչյուր հողակտորի կարգը, կազմել շրջանի հողերի նոր հաշվեկշիռը,
- շրջանի գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության նոր պայմանագրերի կնքում՝ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման հիման վրա, հողօգտագործման դիմաց վարձավճարների գանձում,
- ոռոգման ջրի կորուստները նվազեցնելու նպատակով մաքրել, վերանորոգել և շահագործել ներշրջանային ոռոգման ցանցը,
- սահմանված կարգով տալ շրջանի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվություն և կատարել դրանց ամենամյա հաշվառում,
- կազմակերպել շրջանի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները,
- կազմակերպել շրջանի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումներ, կենդանիների հիվանդությունների կանխման և ագրարային այլ կանոնների պահպանման աշխատանքներ,
- աջակցել շրջանի տարածքում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը,
- աջակցել տոհմային և սերմնաբուժական աշխատանքներին,
- կատարել շրջանի տարածքի բնապահպանական հետազոտում, կազմել բնապահպանական միջոցառումների պլան,
- ապահովել հողերի պահպանությունը հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

Վարչական շրջանի կարևոր հիմնախնդիրներից է շրջակա միջավայրի պահպանումը, որի համար անհրաժեշտ է գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների կազմակերպումը և աջակցումը անհրաժեշտ պատրաստուկների ձեռքբերմանը:

Մալաթիա-Սեբաստիայի տարածքով է անցնում ստորին Հրազդանի ջրանցքը՝ գրադեցնելով մոտ 13 հա տարածություն: Ունենալով գյուղատնտեսության համար կարևոր նշանակություն, մինևույն ժամանակ, ջրանցքի սանիտարական վիճակը աշուն-գարուն շրջանում լինում է անմխիթար: Շրջակա միջավայրի պահպանման և վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելման նպատակով շատ կարևոր է ջրանցքի պարբերական, ամենամյա մաքրման աշխատանքների պատշաճ կազմակերպումը: Բավարար չէ նաև ջրանցքի տեխնիկական վիճակը, ինչը և պատճառ է դառնում ոռոգման ջրի անտեղի կորստի և, երբեմն, մերձակա տների և հողամասերի հեղեղման: Շրջանում գործում է խմելու ջրի ջրամատակարարման և կոյուղու կենտրոնացված համակարգ: Այս ծառայությունների սպասարկման անբավարար մակարդակը հետևանք է ջրամատակարարման ցանցի մաշվածության: Ջրմուղի և կոյուղու խողովակների մաշվածության պատճառով կեղտաջրերը կարող են թափանցել ջրամատակարարման համակարգ՝ հարուցելով աղիքային հիվանդություններ: Խմելու ջրի մատակարարումը սեփական տների հատվածում կատարվում է ժամային գրաֆիկով, բազմաբնակարան շենքերում՝ շուրջօրյա: Ջրի օրական միջին ծախսը մեկ շնչի հաշվով վերջին տարիների ընթացքում անընդհատ աճում է:

Շրջանի 492 բարձրահարկ շենքերում կենցաղային աղբը կուտակվում է այդ շենքերի 1161 մուտքերի աղբախցերում, իսկ մնացած 83 շենքերի կենցաղային աղբը կուտակվում է շրջանի տարածքում հավասարաչափ տեղադրված 273 աղբարկղների մեջ, որոնցից 120-ը համեմատաբար լավ վիճակում են, 52-ը տեղադրվել են 2009 թվականին: Կուտակված աղբը ամեն օր սահմանված գրաֆիկով «Կռունկ» ՓԲԸ-ի աղբատար ավտոմեքենաներով տեղափոխվում է Սասունիկի աղբավայր: Աղբահանությունը տարեկան կազմում է 136.0 հազ. խմ, այդ թվում բնակչությունից՝ 32.0 հազ. խմ: Մաքրման ենթակա ընդհանուր տարածքը 1046.0 հազ. քմ է, այդ թվում 906.0 հազ քմ՝ կենտրոնական, 140 հազ քմ՝ շրջանային նշանակության փողոցներ և

այլ տարածքներ: Սանմաքրման աշխատանքները կատարվում են ամեն օր, մեքենայացված և ձեռքի միջոցով: Շրջանի «Կոունկ» ՓԲԸ-ի առկա մեքենայական պարկը կազմում է 37 միավոր մեքենա-մեխանիզմ, որոնցից շահագործման պիտանի են 35-ը:

Ամբողջ շարժակազմը ժամկետանց է, գտնվում է բարոյապես և ֆիզիկապես մաշված վիճակում, կարիք է զգում թարմացման և վերանորոգման: Նորոգման կարիք է զգում նաև փողոցներում և բակերում տեղադրված 273 աղբարկղների մեծ մասը:

Շրջանի կանաչապատման «Ուռենի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է 93.8 հա տարածք, այդ թվում 33.0 հա՝ քաղաքային նշանակության, 60.8 հա՝ շրջանային նշանակության: Շրջանում առկա են 79900 ծառ և 34500 թուփ:

Ոռոգման ջրագծերի ընդհանուր երկարությունը կազմում է 18786 գմ: Այս բնագավառում կանաչ տարածքների ընդլայնման և ոռոգման ջրագծերի հիմնական վերանորոգման աշխատանքների պահանջ կա:

Կարևոր հիմնախնդիր է նաև շրջանի տարածքում կենդանիներ պահելու թույլտվություն տալու գործընթացում հետևողական մոտեցում ցուցաբերելը, դրանց ամենամյա հաշվառումը, հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը և անհրաժեշտ դեղամիջոցների ձեռքբերումը, անասնաբուժական ծառայությունների և կենդանիների հիվանդությունների կանխման աշխատանքների ժամանակին և ճիշտ կազմակերպումը:

Նկատի ունենալով այն փաստը, որ շրջանում 2009թ-ին հայտնաբերվել է խոզերի «Աֆրիկական ժանտախտ» հիվանդությունը, որի կանխարգելման ճիշտ և ժամանակին կատարված հակահամաճարակային միջոցառումների արդյունքում հիվանդությունը տարածում չի ստացել, անհրաժեշտություն է առաջացել շրջանում հատուկ տարածք հատկացնել կենդանիների գերեզմանոցի համար: 2010-2013թթ. նախատեսվում է կառուցել կենդանիների գերեզմանոց:

Վարչական շրջանի կարևոր հիմնախնդիրներից է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալական պայմանագրերի հաշվառումը, գրանցումը, պայմանագրերի չգրանցման պատճառների ուսումնասիրումը և անհրաժեշտ աշխատանքներ կատարելը վարձակալությամբ տրամադրված ամբողջ տարածքի հողօգտագործողների հետ պայմանագրերի կնքման և օրինականացման

գործընթացում: Կարևորվում է վարձակալությամբ հանձնված հողերի վարձավճարների գանձման ճիշտ կազմակերպումը:

Նախատեսվող ծրագրային միջոցառումներից առաջնահերթը ոռոգման ցանցի վերանորոգումն ու ճիշտ ժամանակին մաքրումն է: Նախատեսվում է ոռոգելի, անջրդի, անօգտագործելի և չորացվող հողերի վիճակի, պետական սեփականություն հանդիսացող հողերի շարժի և փոխակերպման (տրանսֆորմացիայի) ավելի հետևողական ուսումնասիրում, նոր անտառատնկումներ և սանիտարական անտառահատումներ: Նախատեսվում է կազմակերպել գյուղատնտեսական հողերի քիմիական և հիդրոտեխնիկական մելիորացիա, աջակցել հողօգտագործողներին գյուղատնտեսական մեքենաների, թունաքիմիկատների և պարարտանյութերի ձեռք բերման աշխատանքներին:

2010-2013թթ. նախատեսվում է բնապահպանության և սոցիալական ազդեցության ոլորտում փորձի փոխանակման համար կազմակերպել հանդիպում «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի փորձագետների հետ:

Առևտուր և սպասարկումներ

Շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների 340 օբյեկտներ, բենզինի և գազի լիցքավորման 30 կետեր: Հիմնականում կարգավորված են այդ օբյեկտների տեղաբաշխման և արտաքին համաչափության հարցերը: Համայնքի բյուջեի սեփական եկամուտների զգալի մասը գոյանում է առևտրի և սպասարկումների օբյեկտներից գանձվող տեղական տուրքերից և նրանց զբաղեցրած հողի վարձավճարներից:

Շրջանի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը մասնավոր բիզնեսի ընդլայնումն է, որը ներկա պահին նոր աշխատատեղեր ստեղծելու լավագույն բնագավառն է:

Կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ առևտրի և սպասարկման օբյեկտների կենտրոնացման և խոշորացման պարագայում նվազում է կրպակների և բացօթյա առևտրի կետերի թվաքանակը, որն իր հերթին բերում է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի և բացօթյա առևտրի թույլտվության համար գանձվող տուրքերի

նվազմանը: Չնայած վերոգրյալին, 2008թ. համեմատ, 2009թ-ին ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի տուրքերը բյուջեում ավելացել են: Բնակչության կենսամակարդակի աճի հետ ավելացել է ժամը 24-00-ից հետո գործող զվարճանքի և հանրային սննդի օբյեկտների քանակը: Այս մասով տուրքերի աճը կանխատեսելի է:

Ստորև ներկայացվում է 2006-2010թթ. տուրքերի աճի դինամիկան՝

Հ/Հ	Հաշվետու տարին	Հավաքված տուրքերի չափը (մլն. դրամ)
	2006թ.	6.2
	2007թ.	11.4
	2008թ.	21.2
	2009թ.	26.4
	2010թ.	28.0

Փոքր և միջին բիզնեսը խթանելու և հավասար մրցակցային դաշտ ձևավորելու համար գտնում ենք, որ ոգելից խմիչքների և ծխախոտի, ինչպես նաև բացօթյա առևտրի տուրքերի դրույքաչափերը անհրաժեշտ է կարգավորել, կախված նրանց գտնվելու վայրից (գոտիավորումից), իսկ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի պարագայում, նաև առևտրի կետի շրջանառության ծավալներից (անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն):

Ներկայումս աշխատանքներ են տարվում փողոցային առևտուրը կանոնակարգելու ուղղությամբ: Անդրանիկի փողոցի վերջնամասում, որտեղ հատկապես շատ է գյուղմթերքների փողոցային առևտուրը, կազմակերպվել է գյուղմթերքների փոքր շուկա, որտեղ կան գեղեցիկ և հարմարավետ վաճառատեղեր և սահմանված են մատչելի վարձավճարներ և արտոնություններ: Նման շուկա նախատեսվում է նաև Օհանով փողոցում, որտեղ նույնպես փողոցային առևտրի կետեր կան:

Չնայած այս ուղղությամբ կատարված աշխատանքներին՝ դեռ կան բազմաթիվ ապօրինի կառուցված կրպակներ և այլ շինություններ, որոնք խաթարում են շրջակա միջավայրի տեսքը, նրանց գործունեությունը դժվար վերահսկելի է, տրանսպորտային և սանիտարահիգիենիկ խնդիրներ են առաջացնում: Աշխատակազմի կողմից գույքագրվել են նշված օբյեկտները, կազմվել է ապամոնտաժման իրատեսական

Ժամանակացույց և դրա մասին տեղեկացվել է այդ օբյեկտները շահագործողներին: Ներկա պահին տարվում են նախապատրաստական աշխատանքներ: Նախատեսում ենք մինչև 2010-2013թթ. շրջանն ազատել նման ապօրինի կրպակներից և կառույցներից:

Բյուջեի համալրման համար կարևոր է նաև օրենքով չարգելված վճարովի ծառայությունների ներգրավումը (ավտոկանգառ, փոքր շուկաներ և այլն):

Ելնելով շրջանի բնակչության սպասարկման որակի բարելավման անհրաժեշտությունից՝ շրջանում նախատեսվում է կազմակերպել առևտրի և սպասարկումների հստակ կանոնակարգում և մշտական վերահսկողություն, ինչն անմիջականորեն կապված է բնակչության անվտանգության և սպառողների շահերի պաշտպանության հետ: Կարևոր է վարչական տույժերի կիրառումը: Նպատակահարմար ենք գտնում տույժերի խստացումը և այդ տույժերի գանձման ավելի պարզ և արագ մեխանիզմի ներդրումը: 2009թ. առաջին կիսամյակում մեր կողմից ստուգվել են 40 առևտրի և սպասարկումների օբյեկտներ և նշանակվել է 323.0 հազ. դրամի վարչական տույժ:

Ոլորտի 2010-2013թթ. առաջնահերթ խնդիրներն են.

- կարգավորել առևտրի և սպասարկումների օբյեկտների տեղաբաշխումը շրջանի տարածքում, ուշադրություն դարձնելով նրանց հեռավորությանը կանգառներից, արտաքին տեսքին և համաչափությանը փողոցի կառուցապատմանը,
- ավելացնել քաղաքակիրթ առևտրի և սպասարկման օբյեկտները,
- վերջնականապես արգելել փողոցային առևտուրը, առևտրի, սպասարկումների և բենզինի լիցքավորման անօրինական և անշուք օբյեկտների տեղադրումը շրջանի տարածքում,
- ոստիկանության Մալաթիայի բաժնի և Հիգենիկ-հակահամաճարակային տեսչության աշխատակիցների հետ համատեղ կազմակերպել ստուգայցեր՝ առևտուրը կանոնակարգելու և սանիտարական նորմերն ապահովելու համար,
- ապահովել բյուջեի մուտքերը շրջանի ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարների, տեղական տուրքերի ու վճարների գծով:

Հարկային մուտքերի հավաքագրում

Գույքահարկի հաշվառումն ու գանձումը Երևան քաղաքի վարչական շրջանների կողմից (01.06.2009թ. շրջաններ) սկսվել է 2003թ. 2-րդ կիսամյակից, իսկ հողի հարկինը՝ 2007թ. 4-րդ եռամսյակից:

Գույքահարկի փաստացի գանձման ցուցանիշները, ըստ տարիների կազմել են՝

Հ/հ	Հաշվետու տարին	Հավաքված գումարը (հազ. դրամ)
1.	2004թ.	215000.8
2.	2005թ.	249000.3
3.	2006թ.	259000.7
4.	2007թ.	330000.7
5.	2008թ.	360000.7

Տարեկան միջին աճը կազմում է 30000.0 հազ. դրամ (33.4%):

2009թ. անցած 8 ամիսների արդյունքների համադրումը 2008թ. նույն ժամանակահատվածի հետ ցույց է տալիս, որ աճի միտումը պահպանվել է (2008թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ 45000.0 հազ. դրամ կամ 23.3%):

Հողի հարկի գանձման ցուցանիշները համապատասխանորեն կազմում են 2007թ.-51000.9 հազ. դրամ, 2008թ.-69000.1 հազ. դրամ, 2009թ. 8 ամիսներինը՝ 50000.4 հազ. դրամ, աճի տոկոսները նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 33% (2008թ.) և 24.4 % (2009թ. նախորդ տարվա 8 ամիսների նկատմամբ):

Հարկային եկամուտների գանձման բարելավման ծրագիրը վարչարարական, կազմակերպչական մեթոդների և զուտ տեխնիկական միջոցների համալիր է, որոնց իրականացումը կհանգեցնի գանձման ցուցանիշների բարելավման և պլանավորվող բյուջետային առաջադրանքների իրատեսական կանխորոշման, այդ թվում

1. Նկատի ունենալով տեղեկատվական բազայի հավաստիության կարևորությունը ուշադրության կենտրոնում պահել անշարժ գույքին և փոխադրամիցոցներին վերաբերվող տվյալների ճշտման աշխատանքները, քառամյա ժամկետի վերջում ապահովելով 90-95% հավաստիությունը: Միայն 2009թ. անցած ժամանակահատվածում բազայից հանվել է շուրջ 400.0 մլն. դրամ չհիմնավորված ապառք:

2. Ապահովել բազայի շահագործման ծրագրային միջոցների խստիվ համապատասխանությունը օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխություններին:

3. Թույլ չտալ եռամյա, տարեկան և ամենամյա վերագնահատումների, նշանակության փոփոխության, սեփականության օտարման և տեղեկատվական բազայում անհրաժեշտ գրանցում պահանջող այլ տեղեկությունների՝ հարկատուների ծանուցման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետների ուշացման դեպքեր:

4. Նպատակաուղղված անընդհատ աշխատանք տանել ժամկետանց ապառքների գանձման ուղղությամբ, յուրաքանչյուր տարի ապահովել վճարման ենթակա չհավաքված ցուցանիշների նվազեցում նախորդ տարվա համեմատությամբ:

5. 2010-2013թթ. և հետագա տարիների հարկային եկամուտների գանձման գործընթացում ընթացիկ տարվա բազային ցուցանիշների ծածկույթը հասցնել 80%-ի, աստիճանաբար այն ավելացնելով մինչև 90%, իրավաբանական անձանց մասով՝ 100%-ի:

6. Ապահովել պարտավորությունները ժամանակին և պատշաճ մակարդակով չկատարող հարկատուների նկատմամբ օրենքով սահմանված հարկադիր գանձման միջոցների կիրառման համար անհրաժեշտ հիմնավորումների և փաստաթղթերի լրամշակումն ու տրամադրումը:

7. Ապահովել օրենսդրությամբ սահմանված գույքահարկի արտոնությունների ճիշտ կիրառումը:

8. Պատշաճ մակարդակի վրա պահել բնակչության սպասարկման հետ կապված հարցերը, թույլ չտալ դժգոհության առաջացման դեպքեր, լայն ուշադրություն դարձնել հարկատուների շրջանում տարվող բացատրական աշխատանքին:

9. Ուշադրության կենտրոնում պահել և ապահովել բաժնի աշխատակազմի մասնագիտական որակների բարձրացման խնդիրները:

Գ ո վ ա զ ղ

2010-2013թթ. շրջանի տարածքում արտաքին գովազդի ստեղծման և տարածման, ինչպես նաև զարգացման համար անհրաժեշտ է պայմաններ ապահովել հասարակության, գովազդ սպառողների, գովազդատուների, գովազդակիրների շահերին համապատասխան:

Շրջանում 2010-2013թթ. արտաքին գովազդը խթանելու և հավասար մրցակցային դաշտ ձևավորելու համար նպատակահարմար ենք գտնում, որպեսզի տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանվեն ըստ նրանց գտնվելու վայրի (գոտիականության), որը կբերի շրջանի տարածքում արտաքին գովազդի համաչափ զարգացման:

2009թ.-ի բյուջեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար նախատեսված է 75000 հազ. դրամ, որը 2008թ. համեմատ ավելացել է մոտավորապես 40%-ով: Աճը պայմանավորված է նաև արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քմ տեղական տուրքի դրույքաչափի փոփոխությամբ՝ 2008թ-ի 1.5 հազ. դրամի փոխարեն 2009թ-ին սահմանվել է 1.95 հազ. դրամ: Շրջանում արտաքին գովազդի զբաղեցրած մակերեսը 2008թ-ի համեմատ մնացել է անփոփոխ՝ 3435 քմ:

2010-2013թթ. շրջանում նախատեսվում է գովազդային վահանակների նոր տեղերի ավելացում, ինչը կբերի գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրքի մուտքերի մոտավորապես 10000 հազ. դրամի ավելալացում:

Շրջանի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Շրջանի ֆինանսական հնարավորությունները սահմանափակ են, իսկ կարիքները՝ մեծ: Շրջանի զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել ֆինանսական միջոցների օբյեկտիվ գնահատման, կանխատեսման և գանձման արդյունավետության բարձրացման ճկուն մեխանիզմներ: Անհրաժեշտ է ավելի արդյունավետ կազմակերպել քաղաքացիների շարժական և անշարժ գույքի (ավտոմեքենաներ, բնակարաններ, անհատական տներ, ավտոտնակներ,)

գույքագրման, հողի հարկի և գույքահարկի գանձման աշխատանքները: Շրջանի ֆինանսական բազայի ամրապնդմանը էապես կնպաստի նաև տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման ճկուն մեխանիզմների մշակումը: Ինչպես նախորդ տարիներին, 2010-2013թթ. նույնպես, շրջանի մուտքերի զգալի մասը կկազմի ֆինանսական համահարթեցման սկզբունքով ՀՀ պետական բյուջեից հատկացվող դոտացիան:

Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

Շրջանի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով՝ աշխատակազմում կշարունակվեն պարբերաբար կազմակերպվել շրջանի ղեկավարի և տեղակալների ընդունելության օրեր, որի շնորհիվ բնակչությունը հնարավորություն կունենա բարձրացնել իրեն հուզող հարցերը, մասնակցելու շրջանի կառավարմանն ու զարգացմանը:

Աշխատակազմի իրավաբանական բաժինը շրջանի քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների համար կկատարի իրավախորհրդատվական աշխատանք, կքննարկի նրանց իրավունքների խախտումների վերաբերյալ գանգատներն ու դիմումները, կաջակցի նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Լուրջ աշխատանքներ կկատարվեն աշխատակազմի կողմից կնքվող պայմանագրերի և շրջանի ղեկավարի որոշումների օրինականությունը ապահովելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում շրջանի շահերը կներկայացվեն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դրանք կպաշտպանվեն դատարանում:

Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն

Շրջանում գործում են բենզալիցքավորման և գազալիցքավորման 54 հրդեհապայթուցավտանգ օբյեկտներ: Շրջանի խմելու ջուրը մատակարարվում է 3 ջրատարներով՝ 1-ից 380 լ/վրկ, 2-ից 800 լ/վրկ, 3-ից 50 լ/վրկ հզորությամբ: Շրջանի

կոյուղու ցանցը միավորված է օդահագեցված կայանին: Ջրամատակարարման և կոյուղու ցանցի մաշվածության պատճառով առաջացող վթարները կարող են առաջ բերել համաճարակներ և հիվանդություններ: Շրջանի գազամատակարարումը կատարվում է 130.244 կմ երկարությամբ գազատարների միջոցով, այդ թվում ստորգետնյա՝ 15.188 կմ (ցածր ճնշման՝ 0.85 կմ, միջին ճնշման՝ 14.823 կմ), վերգետնյա՝ 115.056 կմ (ցածր ճնշման՝ 73.233 կմ, բարձր ճնշման՝ 41.823 կմ): Գազի մատակարարման կարգավորման համար շրջանում կա 51 գազաբաշխիչ կայաններ: Շրջանի էլեկտրամատակարարումը իրականացվում է 10 ԿՎ երկու օդային գծով և 6 ԿՎ չորս մալուխային գծով: Բարձր լարման հոսանքն ապահովում է շրջանի տարածքում տեղադրված 2 տրանսֆորմատորային ենթակայանների միջոցով:

Վարչական շրջանն ունի 19 ապաստարան՝ 6040 մարդ տարողությամբ, որոնցից բարվոք վիճակում են 7-ը, սակայն ինժեներատեխնիկական գործող նորմերին չեն համապատասխանում ոչ մեկը: Բնակչության պատասպարման համար օգտագործվում են նաև բնակելի շենքերի և սեփական տների նկուղները: Որպես պահեստային կառավարման կետ ընտրված է «Անուշ» ապաստարանը, որը կարիք ունի վերանորոգման և ժամանակակից տեխնիկայով հագեցման:

Բնակչության ազդարարման համար շրջանում առկա են Y-40 և Y-23 տիպի 12 էլեկտրաշչակներ, այդ թվում աշխատող՝ 10 անսարք՝ 2: Աղետների ժամանակ բնակչության տարհանման համար ստեղծված են 13 տարհանման հավաքակայաններ, որոնք տեղակայված են հիմնականում հանրակրթական դպրոցներում:

Շրջանի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում ապահովելու համար 2010թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ առաջնահերթ խնդիրները.

- շրջանում կազմակերպել շուրջօրյա օպերատիվ հերթապահություն,
- հաշվառել շրջանի տարածքում առկա քաղաքաշտպանության ընթացիկ ապահովման գույքը,
- վերանորոգել առկա ազդարարման և կապի միջոցները,
- ձեռք բերել նոր ազդարարման, կապի միջոցներ,

- շրջանի գործող ազդարարման և կապի միջոցները միացնել Երևան քաղաքի կենտրոնացված համակարգին,
- կազմակերպել և անցկացնել շրջանի արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ուժերի հրամանատարա-շտաբային ուսումնավարժանքներ,
- արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բաժնին ապահովել անհրաժեշտ գրասենյակային գույքով և գրենական պիտույքներով,
- արտակարգ իրավիճակներում կազմակերպել բնակչության պաշտպանության միջոցառումներ,
- շտաբային ուսումնավարժություն «Երևանի թիվ 113 դպրոցում ահաբեկչական գործողությունների դեպքում շրջանային բաժնի արձագանքը» թեմայով,
- հատուկ տակտիկական ուսումնավարժանք «Ուժեղ երկրաշարժի դեպքում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը» թեմայով,
- շրջանի շտաբային վարժանք «Մալաթիա-Մեքսսոխա վարչական շրջանի առաջին կանչի ուժերի ազդարարման և պատրաստականության ուղղությամբ» թեմայով:

Երևան քաղաքի 2010-2013թթ. հիմնական աշխատանքների պլանում ընդգրկված են հետևյալ միջոցառումները՝

- շտաբային ուսումնավարժության «Ուժեղ երկրաշարժի դեպքում Երևան քաղաքի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների գուրծունեության կազմակերպումը» թեմայով,
- շտաբային վարժանք «Վտանգավոր տարածքից բնակչության տարհանման կազմակերպումը» թեմայով,
- վարժանքներ Երևան քաղաքի առաջին կանչի ուժերի ազդարարման և պատրաստականության բերման ուղղությամբ:

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նոր Նորք վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Ավան, Էրեբունի, Կենտրոն, Նորք–Մարաշ և Քանաքեռ–Զեյթուն վարչական շրջանների հետ:

Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Այն կազմավորվել է 1960-ական թվականներին և գտնվում է Երևան քաղաքի հյուսիս-արևելքում: Նոր Նորքը զբաղեցնում է 1385.0 հա տարածք, փողոցների երկարությունը 66,4 կմ է, փողոցների մակերեսը՝ 929,4 հազ. քմ (մանրամասները տե՛ս «Նոր Նորք վարչական շրջանից ցուցանիշները» հավելվածը):

1972 թվականի մարտի 31-ին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունն ընդունեց որոշում՝ Երևան քաղաքում նոր շրջան կազմելու, վերջինս Սովետական անվանելու և շրջանի սահմանները կազմելու մասին, որը ստորագրությամբ հաստատեցին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության քարտուղար Ռ. Սվետլովան:

Սոցիալ–տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Վարչական շրջանի բնակչությունը 01.01.2009թ. դրությամբ մոտ 145,2 հազ. մարդ է⁴⁴, այդ թվում՝ 44,8 տոկոս տղամարդիկ և 55,2 տոկոս կանայք: Ծնվածների թիվը 2008թ. 1852 (մանրամասները տե՛ս «Նոր Նորք վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Վիճակի նկարագիր

Մայրաքաղաքի ամենաբարձր կետը գտնվում է Նոր Նորք վարչական շրջանում՝ 5-րդ զանգվածի Սուրբ Սարգիս եկեղեցուն հարակից բլուրի վրա, որը տեղակայված է ծովի մակարդակից 1315մ բարձրության վրա: Վարչական շրջանում

⁴⁴ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

են գործում «Ջրաշխարհ», «Ավանգարդ Մոթորս», «Հայ կոլա», «Գապեքս», «Գաջ» ԲԲԸ, «Ավտոմատիկան», «Վան», «Կոմեկտ», «Էլեկտրոմաշ», «Պրոգրես», «Լազերային տեխնիկա», «Էլտ» պիրկալ», «Սիգարոն», «Նեյրոն», «Մելենա» և այլ գործարաններ ու ձեռնարկություններ, որոնք թվով 124 են: Վարչական շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկման 265 փոքր և միջին օբյեկտներ (մանրամասները տե՛ս «Նոր Նորք վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Առաջին շենքը շահագործման է հանձնվել 1966թ.-ին: Առկա է 671 բազմաբնակարան շենք, որոնցից բարձրահարկ են 301-ը, հանրակրթական 21 ուսումնական հաստատություն, որտեղ սովորում են 12773 աշակերտ: 1 հատուկ գիշերօթիկ դպրոց, Անանիա Շիրակացու անվան ճեմարան, 23 մանկապարտեզ, որոնք հիմնականում ապահովված են տիպային շենքերով և կարիք ունեն ընթացիկ կամ կապիտալ վերանորոգման, կոշտ և փափուկ գույքի թարմացման: 2 քուլեջ, 1 ատաղձագործների ուսումնարան, կենտրոնական գրադարան, մշակույթի կենտրոն, 2 երաժշտական և 1 արվեստի կենտրոն, ուսումնական հանրակացարան՝ բաղկացած 2 մասնաշենքից, Վ Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա, 2 մարզադպրոց, որտեղ գործում են 14 մարզաձևեր, 97 խմբեր՝ 1188 սան, 38 մարզիչ: Մարզաառողջարարական կենտրոն, մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործական կենտրոն, «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն՝ 500 մահճակալով և 6 համաբուժարան: Ինչպես նաև գործում են 2 գիտահետազոտական ինստիտուտ, շինարարական 54 և տրանսպորտային 34 ձեռնարկություն, 11 կապի հանգույց, 4 գետնանցում, 3 լողավազան, 19 մարզահրապարակ, 24 ապաստարան և 3 բաղնիք: Գրանցված են նաև շուրջ 2039 արտադրական և ոչ արտադրական առևտրային ձեռնարկություններ:

Նոր Նորք վարչական շրջանում առկա են պատմամշակութային արժեքներ, այստեղ իրենց ուրույն տեղն են գտել 28 հուշարձան, 10 կոթող, 15 արձան, 6 տապանաքար, 4 խաչքար և 1 ջրանցք: 2010թ. Նոր Նորք վարչական շրջանում նախատեսվում է տեղադրել ևս 5 հուշարձան:

Վարչական շրջանի տարածքում գործում են հանրապետական նշանակության 1 հիվանդանոց, 6 ամբուլատոր պոլիկլինիկա, 20 հանրակրթական դպրոց, 3 բուհ, 1

արհեստակցական ուսումնարան, 2 մասնավոր վարժարան, 16 նախադպրոցական հիմնարկ, 2 երաժշտական դպրոց, 1 գրադարան, 2 մասնավոր մանկապարտեզ:

Ջեռուցման համակարգը վարչական շրջանում արդեն 18 տարի չի գործում: Կանաչապատման և ոռոգման բնագավառում կանաչ տարածքների ընդլայնման, ոռոգման ցանցի ընդարձակման և ջրագծերի հիմնական վերանորոգման պահանջ կա:

Վարչական շրջանի սանմաքրման և աղբահանության մեքենայական հավաքակալանը կազմում է 33 միավոր մեքենա-սարքավորում, սանմաքրման ենթակա տարածքը՝ 777,3 քմ, տեղափոխվող աղբի քանակը 165 հազ խմ: Ամբողջ շարժակազմը ժամկետանց է, գտնվում է բարոյապես և ֆիզիկապես մաշված վիճակում, խիստ կարիք է զգացվում թարմացման և նորոգման: Նոր Նորք վարչական շրջանի ճանապարհային ցանցի բարեկարգման մշտական պահանջ կա:

Շրջանում առկա բազմաբնակարան շենքերի վթարային ֆոնդն ունի հետևյալ կառուցվածքը.

1. երկրորդ աստիճանի վնասվածության 2 շենք,
2. երրորդ աստիճանի վնասվածության 1 շենք,
3. չորրորդ աստիճանի վնասվածության 1 շենք:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործում է թվով 587 վերելակ, որոնցից 54-ը՝ 1-ին զանգվածում, 82-ը՝ 2-րդ զանգվածում, 14-ը՝ 3-րդ զանգվածում, 29-ը՝ 4-րդ զանգվածում, 36-ը՝ 5-րդ զանգվածում, 12-ը՝ 6-րդ զանգվածում, 94-ը՝ 7-րդ զանգվածում, 85-ը՝ 8-րդ զանգվածում, 147-ը՝ 9-րդ զանգվածում, 34-ը՝ Ջրվեժում: Վերելակներից հիմնական վերանորոգման կարիք ունեն 19-ը, պայմանագրային են 436-ը:

Զարգացման միտումները և կարճաժամկետ

կանխատեսումները

Համաձայն ՀՀ կառավարության 25.10.2000թ. հ. 682 «ՀՀ տարածքում (բացառությամբ աղետի գոտու) վերականգնման առաջնահերթ ծրագրում ընդգրկված բնակավայրերի քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային խնդիրները լուծելու մասին» որոշման՝ Երևանում ծրագրի

իրականացման պետական լիազորված մարմին է հանդիսանում Երևանի քաղաքապետարանը, որի ջանքերով ակնկալվում է վարչական շրջանի Ջուղայի 5 հասցեում գտնվող 4-րդ կարգի վթարային շենքի ապօրինի զբաղեցրած բնակիչների վտարման և քանդման գործընթացը:

Նպատակների առաջադրում և առաջնահերթ խնդիրների ձևակերպում

2010-2013թթ. Նոր Նորք վարչական շրջանի հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

- *Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ մշակել նոր մոտեցումներ վարչական շրջանի անավարտ բնակելի շենքերի կառուցապատման և առանձին շենքերի շահագործման համար.*
- *շարունակել վարչական շրջանի 4-րդ կարգի վթարային շենքի քանդման և 3-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքները՝ համագործակցելով ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի հետ.*
- *Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպել վարչական շրջանում անհատական բնակարանային շինարարության գործընթացը.*
- *ապահովել վարչական շրջանի բնակելի շենքերի պահպանումը, շահագործումը և նորոգումը, աջակցելով վարչական շրջանի տարածքում գործող համատիրություններին.*
- *վարչական շրջանի տարածքում զարգացնել փոքր և միջին առևտուրը.*
- *միջոցներ ձեռնարկել վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների, փախստականների սոցիալական բնակարանային-կոմունալ, կենցաղային պայմանների բարելավման համար.*
- *բարելավել Երևան քաղաքի բյուջեի եկամուտների հավաքագրման աշխատանքները, բարձրացնել վարչական շրջանի բնակչությանը մատուցվող ծառայությունների մակարդակը և որակը.*

- կազմակերպել շաբաթօրյակներ և սանիտարական մաքրման ու բարեկարգման միջոցառումներ՝ ապահովելով համայնքի բնակչության ակտիվ մասնակցությունը.
- մշտապես իրականացնել բազմաբնակարան շենքերի տեխնիկական վիճակի մոնիտորինգ: Վճռական ջանքեր ներդնել բազմաբնակարան շենքերի պահպանության հարցերը համապետական հոգացության առարկա դարձնելու համար.
- վարչական շրջանի աշխատակազմի աշխատանքները կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է դուրս գրել երկու հնամաշ ծառայողական մեքենա, փոխարենը ձեռք բերել չորսը:

Նոր–Նորք վարչական շրջանում 2010թ. կիրականացվեն ծրագրեր 1 783 957.7 հազ. դրամ գումարի չափով (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե»):

Վարչական շրջանի ուժեղ և թույլ կողմերը

Ելնելով Նոր Նորք վարչական շրջանի աշխարհագրական դիրքից՝ այն բարենպաստ է հետագա զարգացման համար և ունի գիտաարտադրական մեծ պոտենցիալ:

Վարչական շրջանն ունի նաև թույլ կողմեր, մասնավորապես հիմնանորոգման և բարեկարգման կարիք են զգում կրթության, մշակույթի և սպորտի բնագավառի կազմակերպությունների շենքերն ու շինությունները, բակային տարածքները: Ինչպես նաև թույլ է վարչական շրջանի և նրա ենթակա կառույցների նյութատեխնիկական բազան, որի հզորացման համար պահանջվում է ֆինանսական խոշոր միջոցների ներդրում: Մեծ թիվ են կազմում նաև սոցիալապես անապահով ընտանիքները, ցածր եկամուտ ունեցողները, միայնակ թոշակառուները և գործազուրկները: Նշենք նաև, որ ցածր է վարչական շրջանում գործող համատիրությունների գործունեության արդյունավետությունը բնակֆոնդի շահագործման և պահպանման բնագավառում:

Կրթություն, մշակույթ, սպորտ

Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառներում վարչական շրջանն ունի բավականին լուրջ խնդիրներ:

Վարչական շրջանի թ.թ. 3, 4, 10, 11, 13, 16, 22, 25 մանկապարտեզները գտնվում են շենքային անբավարար վիճակում, ինչը չի համապատասխանում պահանջվող սանիտարահիգիենիկ նորմերին: 2010-2013թթ. նախատեսվում է հիմնովին վերանորոգել թիվ 4, 16, 22, 25 մանկապարտեզները, թիվ 6, 8, 19, 23, 27 և 28 մանկապարտեզները ևս կարիք ունեն մասնակի վերանորոգման:

2010-2013թթ. վարչական շրջանում նախատեսվում է կազմակերպել մշակութային զանգվածային միջոցառումներ:

Երեխաների առողջության պահպանման նպատակով նախատեսվում է իրականացնել տարատեսակ մարզական միջոցառումներ: Կազմակերպվեն տարբեր բնույթի սպարտակիադաներ, բակային միջոցառումներ, ավանդական մրցաշարեր:

Սոցիալական ապահովություն, առողջապահություն և ծրագրեր

Վարչական շրջանի առաջնահերթ խնդիրներից է նաև սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի ոլորտի աշխատանքները:

Նոր Նորք վարչական շրջանում ազգաբնակչության ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է 8 առողջապահական կազմակերպությունների կողմից:

Ոլորտի պետական ֆինանսավորման ծավալների աճը և արդյունավետության բարձրացումը ծրագրային ողջ ժամանակահատվածում դիտվել է որպես առաջնահերթ խնդիր:

2010-2013թթ. Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի կողմից նախատեսվում է իրականացնել տարբեր սոցիալական ծրագրեր՝ ի նպաստ համայնքի սոցիալապես խոցելի խմբերի, մասնավորապես վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանների շահառուների, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական խնդիրների լուծմանը և բարելավմանը: Կազմակերպել և անցկացնել տոնական միջոցառումներ բարեգործական ճաշարանների շահառուների համար:

Առողջապահության բնագավառում նախատեսվում է կազմակերպել և իրականացնել սոցիալապես անապահով բնակչության բուժման և բուժապասարկման համար ֆինանսական աջակցություն, անվճար դեղորայքի հատկացում և անվճար վիրահատություններ: Վարչական շրջանի տարածքում գործող առողջապահական հիմնարկների հետ համատեղ իրականացնել սանիտարահիգիենիկ, համաճարակային և կարանտինային միջոցառումների ծրագիր:

2010-2013թթ. նախատեսվում է ծախսերի կառուցվածքում բարձրացնել առողջապահությանը հատկացվող միջոցների տեսակարար կշիռը:

Սոցիալական ապահովության ոլորտի առավել կարևոր և առաջնային քայլերից են.

- *հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանվածությունը,*
- *բնակչության զբաղվածության պետական կարգավորման խնդիրների ապահովումը,*
- *զոհված ազատամարտիկների, ծնողազուրկ, բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքների համար միջոցառումների կազմակերպումը:*

Վերը նշված խնդիրների լուծման նպատակով Երևանի Նոր Նորք վարչական շրջանի 2010-2031թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում, ընդհանուր առմամբ, առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառում ՀՀ պետական բյուջեի միջոցների, առողջապահական կազմակերպությունների ներքին ռեզերվների և այլ աղբյուրների հաշվին նախատեսվում է իրականացնել 34 մլն դրամի աշխատանք:

Նոր Նորք վարչական շրջանի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրով առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառում նախատեսված աշխատանքների ֆինանսական նկարագիրը ներկայացված է ստորև.

- ֆինանսական օգնություն և ծրագրերի իրականացում՝ 12 մլն դրամ
- առողջապահական օգնություն (դեղորայքի հատկացում)՝ 3 մլն դրամ
- առողջապահական ծառայություն (բուժ. պրոֆիլ. սպասարկում)՝ 7 մլն դրամ
- բարեգործական ճաշարանների պահպանման ծախսեր՝ 12 մլն դրամ:

Վերը նշված ոլորտներին 2010թ տրամադրվում է 8 91683.6 հազ.դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե»):

Բնակչության բնակարանային, կոմունալ – կենցաղային պայմանների բարելավում

Վարչական շրջանում օրակարգի խնդիր է դարձել բնակչության բնակարանային և կոմունալ-կենցաղային պայմանների բարելավումը:

Այս բնագավառում վարչական շրջանն իր մասնակցությունն ու աջակցությունը հանդես կբերի շրջանի ջրամատակարարման և ջրահեռացման, գազամատակարարման և ջեռուցման համակարգերում ու ծառայություններում բարեփոխումներ իրականացնելու գործում:

Նոր Նորք վարչական շրջանի հրատապ լուծում պահանջվող խնդիրներից է շենքերի կոյուղու և ներքին ջրագծերի հիմնանորոգումը:

Բարդ խնդիր է վարչական շրջանի ջեռուցման համակարգի վերականգնումը, հատկապես այն շենքերում, որոնք գազիֆիկացված չեն: Անհրաժեշտ է ներդնել ֆինանսական միջոցներ այդ խնդիրներն իրականացնելու համար:

2010-2013թթ. նախատեսվում է ամրացման աշխատանքներ կատարել վարչական շրջանի վթարային շենքերում:

2010-2013թթ. այս ոլորտում աշխատանքներ կկատարվեն հետևյալ հիմնական ուղղություններով.

- բազմաբնակարան բնակելի շենքերի լանջավոր տանիքների վերանորոգում,
- բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների վերանորոգում,
- շքապատշգամբների և շքամուտքերի ծածկասալերի վերանորոգում,

Նախատեսվող բոլոր աշխատանքների նկատմամբ կիրականացվի հսկողություն, պահանջվող որակ ապահովելու համար:

Նախատեսվում է և ըստ տարիների կիրականացվի նաև նախագծահետազոտական համապատասխան աշխատանքների:

Աղբահանություն և փողոցների մաքրման աշխատանքներ

Համաձայն 01.06.2009թ. Նոր Նորք թաղապետարանի և «Ես Դու Նա» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի՝ վերոհիշյալ ՍՊԸ-ն իրականացնում է Նոր Նորք վարչական շրջանի տարածքում սանիտարական մաքրման աշխատանքները:

2010-2013թթ. ըստ աշխատանքային պլանի կիրականացվեն վարչական շրջանի փողոցների սանիտարական մաքրման աշխատանքներ՝ ավելացնելով փողոցների և բնակելի շենքերի բակային տարածքների մաքրման մակերեսները:

Աղբահանությունը վարչական շրջանում կիրականացվի բնակչության և ձեռնարկությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա:

Նախատեսվում է նաև բարձրացնել մեքենայական հավաքակայան նպատակային օգտագործման մակարդակը և հնարավորության դեպքում թարմացնելով այն:

Անհրաժեշտ են հետևյալ մեքենա-սարքավորումները՝

- ջրի մեքենա,
- կամազ KO,
- մայթ մաքրող մեքենա,
- փոշեկուլ,
- պոչավոր աղբահան,
- աղ ցանող մեքենա:

Վանաչ տարածքների խնամք և ոռոգման աշխատանքներ

Վարչական շրջանում առկա է խնդիր՝ կապված ոռոգման համակարգի վերանորոգման և կանաչ տարածքների խնամքի հետ:

2010-2013թթ. նախատեսվում է վարչական շրջանում ընդարձակել կանաչ տարածքները: Դրա համար անհրաժեշտ է ընթացիկ և հիմնական վերանորոգման ենթարկել գործող ոռոգման համակարգը, անցկացնել ոռոգման նոր ջրագծեր:

Նախատեսվում է խիտ բնակեցված թաղամասերում վերանորոգել բակային այգիները: Իրականացնել ծառատունկ, թփերի տնկում, ծառերի երիտասարդացում, ծառերի և թփերի բուժում: Նախատեսվում է նաև չոր և առավել վտանգավոր ծառերի հատում: Խնդիր է դրված հիմնել վարդանոցներ և սիզամարգեր:

Հսկողություն սահմանել Գայի պողոտային հարող տարածքում շատրվանների գործարկման նկատմամբ ողջ սեզոնի ընթացքում:

Ճանապարհային տնտեսություն, բարեկարգում

Վարչական շրջանի կարևորագույն խնդիրներից են ճանապարհային տնտեսության, ինչպես նաև բարեկարգման աշխատանքները:

Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի փողոցների երթևեկելի և մայթերի, բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտե ծածկույթի ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ:

Նախատեսվում է նաև վերանորոգել և ուղղել փողոցների եզրաքարերը: Ինչպես նաև կշարունակվեն վարչական շրջանում ընթացող կառուցապատման աշխատանքները:

Տարածքային զարգացում և քաղաքաշինություն

Այս բնագավառում 2010-2013թթ. նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

- տեղային ջեռուցում անցկացնել հ.հ. 3, 13, 14, 25, 27, 28 մանկապարտեզներում.
- հանգստի գոտի կառուցել 5-րդ և 9-րդ զանգվածներում.
- վերանորոգել և վերակառուցել վթարված հենապատերը, աստիճանները, փողոցները և եզրաքարերը.
- ընդլայնել և հիմնովին վերանորոգել վարչական շրջանի արտաքին լուսավորվածությունը՝ Դավիթ Բեկի, Լվովյան, Վիլնյուսի, Միկոյան, Թոթովենցի, Գյուրջյան փողոցների և եկեղեցու տարածքի.
- վերանորոգել և վերականգնել այգիներում ոռոգման ցանցը ամբողջությամբ.
- ապահովել ոռոգման ցանցի ընդլայնումը ներբակային ճյուղավորմամբ.

- պարբերաբար ապահովել Գետառի հունի 2000 գծամետր հաստվածի մաքրումը.
- ավարտել բնակելի շենքերի գազիֆիկացման աշխատանքները.
- ստուգել վարչական շրջանի վթարային շենքերի սեյսմիկ կայունությունը.
- ավարտել բնակելի շենքերի ջրագծերի ներքին ցանցի վերանորոգման աշխատանքները և ապահովել շուրջօրյա ջրամատակարարում.

Առևտուր և սպասարկում

Վարչական շրջանի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը մասնավոր բիզնեսի ընդլայնումն է, որը ներկա պահին նոր աշխատատեղեր ստեղծելու լավագույն բնագավառն է: Նախատեսվում է մարդկանց օժանդակություն ցուցաբերել ազատ ձեռներեցությամբ զբաղվելու համար:

Նախատեսվում է սեփականաշնորհված խանութների և առևտրի կետերի տնօրենների հետ համատեղ իրագործել օբյեկտների շրջակայքի մաքրման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքները, ինչպես նաև սահմանել մշտական հսկողություն Սան-Էպիդ նորմերին համապատասխան բացօթյա առևտրի կանոնակարգման բնագավառում, ինչպես նաև շուտ փչացող, չփաթեթավորված ապրանքների վաճառակետերում:

Ելնելով շրջանի բնակչության սպասարկման կուլտուրայի բարելավման անհրաժեշտությունից՝ նախատեսվում է վարչական շրջանի տարածքում կազմակերպել առևտրի և սպասարկումների հստակ կանոնակարգում և մշտական վերահսկողություն՝ համաքաղաքային կանոններին համապատասխան, ըստ ամենայնի նպաստելով սպառողների շահերի պաշտպանությանը:

Հարկային եկամուտների հավաքագրումը, բյուջետային և ֆինանսական ոլորտների բարելավումը

Հարկային եկամուտների հավաքագրումը եղել է և մնում է վարչական շրջանի առաջնային խնդիրը:

Նոր Նորք վարչական շրջանում իրականացվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող փոխադրամիջոցների, շենք-շինությունների գույքահարկի և հողի հարկի հավաքագրման աշխատանքներ: Կատարվում է վարչական շրջանի ֆիզիկական և իրավաբանական անձանց շինությունների գույքագրում և տարբեր գերատեսչությունների կողմից տրամադրված տվյալների համադրում: Նախատեսվում է շարունակել համագործակցությունը Հարկային տեսչության, Անշարժ գույքի կադաստրի, Պետավտոտեսչության, Պետական ռեգիստրի գործակալության և այլ մարմինների հետ տեղեկատվություն փոխանակելու, հարկային բազայում տվյալներ համադրելու ուղղությամբ:

2010-2013թթ. նախատեսվում է գույքահարկի և հողի հարկի հավաքագրման ցուցանիշները ավելացնել՝ հասցնելով առավելագույնի:

Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն

Այս բնագավառում 2010-2013թթ. նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

Նոր Նորք վարչական շրջանում նախատեսվում է իրականացնել օպերատիվ հերթապահություն (4 հոգի), իրավիճակային դահլիճի գործունեության կազմակերպում՝ համակարգչային տեխնիկա (ծրագրային և տեխնիկական ապահովում), որոնց մեկ հատի արժեքը կազմում է 40000 դրամ, իսկ ընդհանուր գումարը՝ 5300000 դրամ: Անհրաժեշտ է նաև անցկացնել ազդարարման շջակների վերանորոգում և տեղադրում (8 հատ), մեկ հատի արժեքը կազմում է 528000 դրամ, իսկ ընդհանուր գումարը՝ 4224000 դրամ:

Աշխատանքներ կկատարվեն Նոր Նորք վարչական շրջանի տարածքում առկա ինժեներական պաշտպանական կառույցների վերանորոգման համար (6 ապաստարան), մեկ հատի արժեքը 2000000 դրամ, իսկ ընդհանուր գումարը՝ 12000000 դրամ:

Գետառ գետի հունի մաքրման համար անհրաժեշտ են իրականացնել հակասելավային միջոցառումներ (2000 գծամետր), ընդհանուր առմամբ՝ 3 մլն. դրամ:

Նոր Նորք վարչական շրջանի տարածքում առկա են վթարային շենքեր, որոնք գնահատվում են ըստ իրենց վթարայնության աստիճանի (83 շենք), մեկ հատի արժեքը՝ 400000 դրամ, իսկ ընդհանուր գումարը՝ 33200000 դրամ: Նաև անհրաժեշտ է անցկացնել Միկոյան 25 2-3-կարգի, Գալշոյան 12 2-րդ կարգի, Մատի 12 2-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքներ:

Վարչական շրջանի տարածքում առկա է մեկ քարաթափման օջախ, այդ պատճառով նախատեսվում է իրականացնել հիմնական կանխարգելիչ միջոցառումներ:

ՀՀ կառավարության թիվ 134-ն որոշման հիման վրա՝ ընդունված 30.01.2003թ., (ՀՀ Կառավարության որոշումը արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին) անցկացվելու են տարբեր մակարդակների հրամանատարաշտաբային և այլ ուսումնավարժություններ, որոնց նախապատրաստման համար անհրաժեշտ է 3 մլն դրամ:

Վարչական շրջանի փրկարարական բաժնին կտրամադրվի համակարգչային տեխնիկա (համակարգչային աքսեսուարներ, քարթրիջ), որի արժեքը կկազմի 200 հազ. դրամ, ինչպես նաև գրասենյակային պիտույքներ և պարագաներ, ընդհանուր 200 հազ. դրամ արժողությամբ:

Ընդհանուր առմամբ, Նոր Նորք վարչական շրջանում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի միջոցառումների ապահովման համար անհրաժեշտ է հատկացնել 61124000 դրամ:

Էլեկտրոնային կառավարման համակարգի

ներդրումը

Նոր Նորք վարչական շրջանի բոլոր ուղղություններով տեղեկատվական-վերլուծական կենտրոնի ստեղծումը վաղուց դարձել է արդիական խնդիր:

Աշխատակազմում ներդրվել է համակարգչային տեղային ցանց, որի մեջ ընդգրկված են սերվերը՝ իր 32 համակարգիչներով, 22 տպիչներով և այլ սարքավորումներով:

Աշխատակազմում, Երևանի քաղաքապետարանի օժանդակությամբ, առաջիկայում կստեղծվի տեղեկատվական-վերլուծական կենտրոն, աշխատանքներ կտարվեն բոլոր վարչական շրջանները փոխկապակցող քաղաքային միասնական տեղեկատվական համակարգ ստեղծելու ուղղությամբ: Նախատեսվում է ապահովել մշտական համացանց և ստեղծել www.nor-norq.am հասցեում տեղադրված վարչական շրջանի վեբ կայքը:

Ընդհանուր բնույթի ծառայություններ

Նոր Նորք վարչական շրջանում պլանավորվում է ստեղծել խորհուրդ, որում նախատեսվում է ընդգրկել կրթության, գիտության և մշակույթի ականավոր գործիչների, ինչպես նաև Երևանի Նոր Նորք վարչական շրջանի պատվավոր քաղաքացիների: Այդ խորհրդի ստեղծման նպատակն է աջակցել համայնքի կրթական, գիտական և մշակութային կյանքի զարգացմանը՝ մեծացնելով զարգացած և գիտակ սերունդ:

Խորհուրդը կունենա հասարակական կարգով գործող հանձնաժողովներ, որոնք կնպաստեն կրթական, գիտական, մշակութային միջոցառումների ծրագրերի ստեղծմանը: Մշակութային միջոցառումների միջոցով նոր սերնդի մեջ կսերմանեն հայկական մշակույթը՝ պահպանելով նրա ակունքները և հարգանք սփյուռքի մեր հայրենակիցների նկատմամբ: Կազմակերպելով ժողովներ՝ կփորձեն բարձրացնել կրթական և գիտական մակարդակը, որը կդրվի բարձր հիմքերի վրա՝ նպաստելով համայնքի հետագա զարգացմանը:

Խորհրդի գործունեությունը կհամակարգի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարը:

Երևանի Նոր Նորք վարչական շրջանի 2010-2013թթ. ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Երևանի Նոր Նորք վարչական շրջանի քառամյա ծրագրի ռազմավարությունն է հետևողականորեն բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով բարելավել վարչական շրջանի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները, Նոր Նորք վարչական շրջանը դարձնել բարեկարգ և գրավիչ բնակավայր:

Համատիրությունների հետ իրագործել ծրագրեր ապահովելու վարչական շրջանի բազմաբնակարանային շենքերի պահպանումը, շահագործումը և նորոգումը:

Նպաստել վարչական շրջանի տարածքում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը՝ ստեղծելով նոր աշխատատեղեր:

Կանոնակարգել ռոռոգման ցանցը՝ հասցնելով միջբնակային տարածքներ:

Միջոցներ ձեռնարկել վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, բնակարանային, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ:

Բարձրացնել վարչական շրջանի բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակն ու որակը:

Գույքագրել վարչական շրջանի տարածքում տեղակայված կրպակները, ներկայացնել առաջարկություններ դրանց արդիականացման ուղղությամբ:

Աջակցել վարչական շրջանի կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների կազմակերպությունների նպատակային գործունեությունը, իրականացնել այդ կազմակերպությունների զբաղեցրած շենքերում վերանորոգման և գույքի ձեռք բերման աշխատանքներ:

Ծրագրի կատարման հաշվետվությունը և հրապարակայնության ապահովումը

Ծրագրի կատարման հաշվետվության ոլորտում նախատեսվում է ամիսը մեկ անգամ անդրադառնալ ծրագրի կատարման ընթացքին:

Եռամսյակը մեկ ներկայացնել հաշվետվություն ծրագրի կատարման մասին:

Ինչպես նշվեց, Նոր Նորք վարչական շրջանում՝ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրում բաժնում, նախատեսվում է ստեղծել համացանց, որտեղ և կտեղադրվի վարչական շրջանի վեբ կայքը, որում կարելի է ծանոթանալ Նոր Նորք վարչական շրջանի ծրագրին, կատարման ընթացքին, ինչպես նաև այլ հետաքրքրող հարցերի:

ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նորք-Մարաշ վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի, Կենտրոն և Նոր-Նորք վարչական շրջանների հետ: Այն զբաղեցնում է 460 հա տարածք, փողոցների երկարությունը 22,5 կմ, փողոցների մակերեսը՝ 303,3 հազ. քմ (մանրամասները տե՛ս «Նորք-Մարաշ վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Երևան քաղաքի Նորք-Մարաշ համայնքը կազմավորվել է 1997թ.: Համաձայն «Երևան քաղաքում տեղեկան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ 2009թ. հուլիս ամսից այն վերակազմավորվեց Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի:

Մինչև 1990-ական թվականները համայնքի վարչական տարածքը Երևան քաղաքի այլ տարածքներից առանձնացել է իր անտառապատ ծածկույթով, որն էլ դարձել է այս տարածքում հանգստյան գոտիների և հատուկ նշանակության բուժհիմնարկների կառուցման հիմնական գրավականը: Վարչական շրջանում ներկայումս գործում են այնպիսի կարևորագույն հիմնարկ-ձեռնարկություններ, ինչպիսիք են՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնը (սրտաբանական), «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտահետազոտական ինստիտուտը», ինֆեկցիոն, հոգեբուժական հիվանդանոցները, Մանկան տունը, Նորքի տուն-ինտերնատը և այլն, որոնց կառուցման համար իզուր չէր ընտրվել այս շրջանը:

Ներկայումս էլ Նորք-Մարաշ վարչական շրջանը մյուս շրջաններից առանձնանում է իր հանգստությամբ. շրջանում չկան գործող արտադրական ձեռնարկություններ, չկան ծանրաբեռնված աղակոտ փողոցներ, որը մեր քաղաքացիների համար շրջանում սեփական առանձնատուն ունենալու գրավականն է:

Նորք-Մարաշ վարչական շրջանում է գտնվում Սբ. Աստվածածին եկեղեցին, որը, ինչպես և Հայաստանի մնացած բոլոր եկեղեցիները, առանձնանում է իր վեհությամբ և գեղեցկությամբ:

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Վարչական շրջանի բնակչությունը առ 01.01.2009թ. դրությամբ մոտ 11,3 հազ. մարդ է⁴⁵, այդ թվում՝ 51,8 տոկոս տղամարդիկ և 48,2 տոկոս կանայք: Ծնվածների թիվը 2008թ. 112:

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի քառամյա ծրագիրն ըստ բնագավառների

Նորք-Մարաշ վարչական շրջանում 2010թ. կիրականացվեն ծրագրեր 362 888.2 հազ. դրամ գումարի չափով (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե»):

Կրթություն, մշակույթ, սպորտ

Կրթություն

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում է 4 մսուր-մանկապարտեզ, ուր հաճախում է 245 երեխա: Մսուր-մանկապարտեզները ապահովված են մանկավարժական 31 կադրերով, և 61 հոգանոց տեխնիկական սպասարկող անձնակազմով:

Բոլոր մանկապարտեզներն ունեն հիմնանորոգման կարիք: Կարիք կա հիմնովին փոխելու կոշտ գույքը:

2007թ. ջեռուցման նոր համակարգ անցկացվեց թիվ 53 և 57 մսուր-մանկապարտեզներում, իսկ 2009թ.՝ Երևանի քաղաքապետարանի կողմից թիվ 61 դպրոցի կաթսայատանը միացվեց թիվ 142 մսուր-մանկապարտեզը:

2009թ. բուստոնցի բարերարների կողմից հիմնանորոգվեց Նորք-Մարաշ վարչական շրջանի թիվ 168 մսուր-մանկապարտեզի տանիքը: Նույն բարեգործների

⁴⁵ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

կողմից ներկայումս նորոգվում է թիվ 142 մսուր-մանկապարտեզի խոհանոցն ու սանհանգույցը: Նախատեսված է աշխատանքները վերջացնել մինչև տարեվերջ:

2010թ. ծրագրավորված է հիմնանորոգել թիվ 53 մսուր-մանկապարտեզի տանիքը, գազիֆիկացնելու և անցկացնելու թիվ 168 մսուր-մանկապարտեզի ջեռուցման համակարգը:

Նախատեսվում է բոլոր մանկապարտեզներում կոշտ գույքը փոխարինել նորով:

Թիվ 53 մսուր-մանկապարտեզի հիմնանորոգման (առանց տանիքի), 57 մսուր-մանկապարտեզի հիմնանորոգման, թիվ 142, թիվ 168 մսուր-մանկապարտեզների մասնակի վերանորոգման աշխատանքները նախատեսվում է ծրագրավորել Երևան քաղաքի 2011-2013թթ. բյուջեներով:

Առաջարկ

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի թիվ 53 մսուր-մանկապարտեզի տանիքի հիմնանորոգում: Ծրագրի իրականացման ժամանակաշրջանը՝ 2010-2013թթ.: Արդյունքը՝ երեխաների խնամքի պահպանման անհրաժեշտ պայմանների ստեղծում և ապահովում:

Նորք-Մարաշ վարչական շրջանի թիվ 168 մսուր-մանկապարտեզի գազիֆիկացում և ջեռուցման համակարգի կառուցում: Ծրագրի իրականացման ժամանակաշրջանը՝ 2010-2013թթ.: Արդյունքը՝ երեխաների խնամքի պահպանման անհրաժեշտ պայմանների ստեղծում և ապահովում:

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանում է գործում թիվ 1 մարզադպրոցը, որն ապահովված է 13 մարզչական անձնակազմով և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմով՝ 15 մարդ: Մարզադպրոց են հաճախում 305 մարզիկ 7 մարզաձևերում: Նշված մարզադպրոցը միշտ ունեցել է նվաճումներ, մասնավորապես՝

2008թ. ՀՀ հունա-հռոմեական ազատ ոճի ըմբշամարտի ոսկե մեդալակիր,

2008թ. ՀՀ բռնցքամարտի պատանիների ոսկե մեդալակիր,

2008թ. ՀՀ հանդբոլի առաջնության արծաթե մեդալակիր,

2009թ. Եվրոպայի ազատ ոճի ըմբշամարտի բրոնզե մեդալակիր,

2009թ. ՀՀ բռնցքամարտի պատանիների արծաթե մեդալակիր:

2007-2008թթ. Նորք-Մարաշ համայնքի բյուջեի միջոցներով հիմնովին փոխվեց մարզադպրոցի մարզագույքը, անցկացվեց կենտրոնական ջեռուցման համակարգ, մասնակի վերանորոգվեցին դպրոցի դահլիճները: Սակայն խնդիրներ դեռևս առկա են:

2010-2013թթ. նախատեսվում է ձեռք բերել ըմբշամարտի գորգ, հիմնովին վերանորոգել դպրոցի ողջ տարածքը: Նշված միջոցառումները հնարավորություն կտան դպրոցին էլ ավելի լավացնելու մարզական ձեռքբերումները:

Վարչական շրջանում գործում է մեկ գրադարան՝ 23837 գրքային ֆոնդով, որի արժեքը կազմում է 1436,1 հազար դրամ:

Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում են չորս հանրակրթական դպրոցներ, ուր հաճախում է 973 երեխա:

Մշակույթ

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանը յուրահատուկ է իր բնակչության սովորույթներով, ավանդույթների պահպանմամբ: Ավանդաբար այստեղ նշվել են և հոգևոր, և ազգային տոները, որոնք նպատակ են ունեցել ժողովրդի մեջ պահպանելու ազգայինը, հոգևորը և դրանցով դաստիարակելու նոր սերնդին: Յուրաքանչյուր տարի մեծ շուքով նշվում են Մբ. ծնունդը, Տեառնընդառաջի, Մբ. Զատկի, Վարդավառի, Համբարձման, Մբ. Աստվածածնի ավետման հոգևոր տոները, և անկախության ու պետական այլ տոներ:

2010-2013թթ. նախատեսվում է իրականացնել մշակութային հետևյալ միջոցառումները՝

- Տեառնընդառաջի տոն՝ նորապսակների օրհնություն և շնորհավորանք: Միջոցառման անցկացման ժամանակը՝ փետրվարի 13-ին,
- «Մարտի 8» կանանց միջազգային տոն: Միջոցառման անցկացման ժամանակը՝ մարտ ամիս,
- Մբ. Զատկի տոնակատարություն: Միջոցառման անցկացման ժամանակը՝ ապրիլ ամիս,
- «Մայիսի 9» հաղթանակի տոն: Միջոցառման անցկացման ժամանակը՝ մայիս ամիս,

- Երեխաների պաշտպանության միջազգային տոն: Միջոցառման անցկացման ժամանակը՝ հունիս ամիս,
- «Ցտեսություն, մանկապարտեզ» ավանդական փառատոն: Միջոցառման անցկացման ժամանակը՝ հունիս-հուլիս ամիսներ,
- Վարդավառի տոն: Միջոցառման անցկացման ժամանակը՝ հուլիս ամիս:
- «Սեպտեմբերի 1»՝ գիտելիքի օր: Միջոցառման անցկացման ժամանակը՝ սեպտեմբեր ամիս:
- Անկախության օր: Միջոցառման անցկացման ժամանակը՝ սեպտեմբեր ամիս: Ուսուցչի օր: Միջոցառման անցկացման ժամանակը՝ հոկտեմբեր ամիս:
- «Էրեբունի-Երևան» տոնակատարություն: Միջոցառման անցկացման ժամանակը՝ հոկտեմբեր ամիս:
- Ամանորյա միջոցառումներ: Միջոցառման անցկացման ժամանակը՝ դեկտեմբեր ամիս:

Սպորտ

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանում սպորտի զարգացման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել մարզական միջոցառումներ, մասնավորապես՝

- «Առողջ սերունդ» պաշտպանված հայրենիք: Միջոցառման անցկացման ժամանակահատվածը՝ հունիս-սեպտեմբեր ամիս:
- Ազգային ժողովի գավաթի խաղարկություն: Միջոցառման անցկացման ժամանակահատվածը՝ հուլիս-օգոստոս ամիս:
- ՀՀ անկախության 18-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 19-րդ մարզական խաղեր: Միջոցառման անցկացման ժամանակահատվածը՝ օգոստոս-սեպտեմբեր:
- Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 9-րդ մարզական խաղեր: Միջոցառման անցկացման ժամանակահատվածը՝ օգոստոս-հոկտեմբեր ամիս:
- Լավագույն մարզական ընտանիք: Միջոցառման անցկացման ժամանակահատվածը՝ մայիս-հուլիս ամիս:

- Նախագինակոչային և զինակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր: Միջոցառման անցկացման ժամանակահատվածը՝ ապրիլ-հուլիս ամիս:

Կրթության, մշակույթի, հանգստի կազմակերպման, կրոնի և սպորտի համար 2010 թվականին Երևանի բյուջեից նախատեսվում է Նորք-Մարաշ վարչական շրջանին տրամադրել 140 713.7 հազ. դրամ (տե՛ս «Նորք-Մարաշ վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Բնակչության սոցիալական պաշտպանություն

Օգնություն ստանալու ակնկալիքով վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ են դիմում տարբեր սոցիալական խմբի մարդիկ՝ թոշակառուներ, հաշմանդամներ, գործազուրկներ և այլն: Նրանցում կան այնպիսիք, որոնք լիովին ընդունակ են աշխատանքի, և նրանց համար նման կերպ գումար հայթայթելը դարձել է վատ սովորույթ, և կան այնպիսիք, որ ի վիճակի չեն կատարելու ոչ մի տեսակի աշխատանք, իսկ նպաստները կամ թոշակները չեն բավարարում առօրյա խնդիրների բարելավմանը:

Նորք-Մարաշ վարչական շրջանի 2010թ. սոցիալական ապահովության և առողջապահության ծրագրերի նախահաշվային արժեքը կազմում է 14243.2 հազար դրամ:

Առաջարկ՝

Ծրագիր N1 - Միանվագ օգնություններ

Դրամական օգնություններ սոցիալապես անապահով, հաշմանդամ ունեցող, վետերանների և զոհված ազատամարտիկների ընտանիքներին, որից.

- միանվագ դրամական օգնություններ սոցիալապես անապահով և զոհված ազատամարտիկների ընտանիքներին:
- վետերաններին աջակցություն, մասնավորապես, մայիսի 9-ի տոնակատարության օրը Հայրենական մեծ և Արցախյան պատերազմների վետերաններին ֆինանսական աջակցության ցուցաբերում.

Ընդամենը միանվագ օգնություններ. Ծրագիր N1` 2420,0 հազար դրամ - 242 մարդ

Ծրագիր N2 - Սոցիալապես անապահով, դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին գրենական պիտույքներ ձեռք բերելու համար նախատեսվող ծախսեր

Ծրագիր N3 - Ամանորյա օգնություններ

Ամանորյա տոների կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքներին, վետերաններին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին բնամթերքով օգնության հատկացում:

Ծրագիր N4 - սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ուսման վարձերի մասնակի փոխհատուցում, մասնավորապես, սոցիալապես անապահով միակողմանի ծնողագուրկ, հրատապ օգնության և նպաստի համակարգում ընդգրկված ընտանիքների, ազատամարտիկների և զոհված ազատամարտիկների ընտանիքների և այլ խիստ անապահով ընտանիքների երեխաներին:

Ծրագիր N5 - ճամբար մեկնող երեխաների տրանսպորտային ծախսեր.

Տրանսպորտային ծախսեր 60 երեխա տեղափոխելու նպատակով:

Ծրագիր N6 - թաղման ծախսերի մասնակի փոխհատուցում.

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել սոցիալապես անապահով այն ընտանիքներում որտեղ տեղի է ունեցել մահ:

Ծրագիր N7 - սոցիալապես անապահով թաշակառուներին դեղորայքի տրամադրում.

Սոցիալական պաշտպանության ոլորտի համար Երևանի 2010թ. բյուջեից նախատեսվում է հատկացնել 14 213.7 հազ. դրամ:

Կոմունալ տնտեսություն

Նորք-Մարաշ համայնքի բյուջեների զգալի մասը միշտ հատկացվել է շրջանի կոմունալ տնտեսության պահպանմանը, սակայն այսօր այս բնագավառի վիճակը բարվոք համարել չի կարելի: Դա պայմանավորված է եղել նրանով, որ համայնքը ֆինանսական միջոցներով երբևէ հարուստ չի եղել, իսկ առկա միջոցներով հնարավոր է եղել իրականացնելու միայն ընթացիկ վերանորոգումներ, չեն

իրականացվել հիմնանորոգման աշխատանքներ: Նաև հարկ ենք համարում նշել, որ շրջանի տարածքն առայսօր ընդգրկված չի եղել Երևան քաղաքի վերակառուցման կամ հիմնանորոգման ծրագրային որևէ աշխատանքների մեջ: Հետևանքն այն է, որ շրջանում գործող համակարգերը մաշված են և ունեն հիմնանորոգման կարիք:

Առաջարկ՝

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի նոր ոռոգման ինքնահոս ջրագծի անցկացում: Ծրագրի մոտավոր արժեքն է 450000,0 հազար դրամ, իրականացման ժամանակահատվածը՝ 2011-2012թթ.: Արդյունքը՝ խմելու ջրագծերի ծանրաբեռնվածության թեթևացում, խմելու ջրի հատկացման ժամանակացույցի ավելացում, կանաչապատ տարածքների պահպանում և ավելացում:

Նորք-Մարաշ վարչական շրջանի փողոցների հիմնանորոգում և պահպանում: Ծրագրի իրականացման ժամանակաշրջանը՝ 2011-2013թթ.: Արդյունքը՝ բարեկարգ և անվտանգ երթևեկության համար նախատեսված փողոցներ:

Վարչական շրջանի փողոցների արտաքին լուսավորության ցանցի հիմնանորոգում: Ծրագրի իրականացման ժամանակահատվածն է՝ 2011-2012թթ.: Արդյունքը՝ բարեկարգ, լուսավոր և անվտանգ երթևեկության համար նախատեսված փողոցներ:

Առևտուր և սպասարկում

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանը սեփական տնատիրությունների շրջան է, այստեղ չկան խոշոր արդյունաբերական և գործարար կենտրոններ, այդ իսկ պատճառով շրջանը հարուստ չէ առևտրային և այլ օբյեկտներով: Շրջանում գործում են հանրային սննդի 7, առևտրային՝ 40, կենցաղային ծառայության՝ 10 օբյեկտներ, 4 բենզալցակայան, որոնք իրենց ֆինանսական շրջանառությամբ ոչ մեծ ֆինանսական օբյեկտներ են:

Խնդիրներ կան առկա առևտրային օբյեկտները (կրպակները) արդիականացնելու ժամանակակից կառույցներով:

Ի տարբերություն Երևան քաղաքի այլ շրջանների՝ Նորք-Մարաշ վարչական շրջանում չկան մեծ գովազդային վահանակներ, սակայն մեր կարծիքով դրանց

կարիքը կա նաև Նորք-Մարաշում: Շրջանը հնարավորություն ունի գովազդային մեծ վահանակների տեղադրման համար, որոնք առաջարկվում է տեղադրել շրջանի կենտրոնական (Ա. Արմենակյան և Գ. Հովսեփյան) փողոցներում: Դրանց տեղադրումը լրացուցիչ եկամտի աղբյուր կհանդիսանա Երևան քաղաքի բյուջեի համար:

Ճարտարապետություն և քաղաքաշինություն

Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքի հեռանկարային զարգացման քաղաքաշինական ու ճարտարապետական խնդիրները մանրամասնորեն արծարծված են գոտիավորման հաստատված նախագծում: Ներկայումս վարչական տարածքում առկա են բազմաբնույթ խնդիրներ՝ կապված ճանապարհային ցանցի վերականգնման ու արդիականացման, կանաչապատ տարածքների ստեղծման ու զարգացման, բնակչության հանգստի կազմակերպման, մշակույթի ու սպորտի օբյեկտների հիմնադրման, առևտրի ու սպասարկման առավել արդիական ու առաջավոր ձևերին համապատասխանող կենտրոնների ստեղծման հետ:

Վարչական տարածքում ներկայումս գոյություն չունեն հասարակական նշանակության հանգստի կանաչ գոտիներ՝ այգիներ, պուրակներ, ուր հնարավոր կլինի կազմակերպել բնակչության հանգիստը: Բացառություն է կազմում Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակա տարածքը, որը դեռևս գտնվում է անավարտ վիճակում: Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1990-ական թվականներին՝ վարչական շրջանի բնակիչների և այլ բարերարների ուժերով և միջոցներով: Սակայն նշված շինության տարածքի բարեկարգումը, որը պահանջում է զգալի ֆինանսական միջոցների ներդրում, մնացել է անավարտ: 2010-2013թթ. նշված ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի հասարակական հանգստի գեղեցիկ և հարմարավետ վայր, որը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը և Երևան քաղաքում կանաչ տարածքների ավելացմանը:

Վարչական շրջանում չկան նաև սպորտային հրապարակներ, լողավազաններ՝ բացառությամբ մեկ ֆուտբոլային դաշտի, որը նույնպես անավարտ է: Նշված դաշտը կառուցվեց և ցանկապատվեց համայնքի միջոցների հաշվին: Սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով աշխատանքները մնացին անավարտ:

անհրաժեշտություն կա տեղադրելու նստարաններ, կարգավորելու լուսավորության համակարգը, տեղադրելու անհրաժեշտ խոտածածկ:

Շինարարություն և բարեկարգում

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանն այն տարածքներից է, որտեղ այսօր չկան հասարակական նշանակության հանգստի կազմակերպման վայրեր: Զբոսաշրջիկների այցելությունը Նորք-Մարաշ վարչական շրջան հիմնականում ուղղվում է Սբ. Աստվածածին եկեղեցի, սակայն տարածքում կանաչ գոտու բացակայությունն անավարտ է թողնում եկեղեցու ամբողջականության պատկերը:

Առաջարկ՝ Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի Սբ. Աստվածածին եկեղեցու շրջակա տարածքում այգու կառուցում: Ծրագրի արժեքն է 73690,0 հազար դրամ, իրականացման ժամանակաշրջանը՝ 2010-2011թթ.: Արդյունքը՝ զբոսաշրջության զարգացում, հանգստի կազմակերպման պայմանների ստեղծում, էկոհամակարգի բարելավում: Սույն ծրագիրն առաջարկվում է ընդգրկել Երևան քաղաքի կանաչապատման և բարեկարգման միասնական ծրագրում:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջիկների այցելությունը Նորք-Մարաշ վարչական շրջան հիմնականում ուղղվում է Սբ. Աստվածածին եկեղեցի, որը, ինչպես և Հայաստանի մնացած բոլոր եկեղեցիները, առանձնանում է իր վեհությամբ և գեղեցկությամբ, սակայն տարածքում կանաչ գոտու բացակայությունն անավարտ է թողնում եկեղեցու ամբողջականության պատկերը:

Առաջարկ՝ Սբ. Աստվածածին եկեղեցու շուրջը գեղեցիկ, կանաչապատ և բարեկարգ զբոսայգու կառուցում, որը կնպաստի զբոսաշրջիկների հետաքրքրության բարձրացմանը և այցելությունների քանակի ավելացմանը, ինչպես նաև կնպաստի շրջանի բնակչության հանգստի լիարժեք կազմակերպման պայմանների ապահովմանը և Երևան քաղաքի էկոհամակարգի բարելավմանը:

Նորք-Մարաշ վարչական շրջանում տեղակայված «Նաիրի» հյուրանոցային համալիրն ունի շատ գրավիչ դիրք, որը կարող է նպաստել Երևան քաղաքում

զբոսաշրջության զարգացմանը: Սակայն այսօր համալիրը մեծամասնությամբ բնակեցված է Ադրբեջանից գաղթած փախստականներով, որը խոչընդոտում է նրա զարգացմանը:

Առաջարկ՝ մշակել «Նաիրի» հյուրանոցային համալիրի զարգացման առանձին ծրագիր, որի տնտեսական գործունեությունը կնպաստի ինչպես Երևան քաղաքում զբոսաշրջության զարգացմանը, այնպես էլ Երևան քաղաքի բյուջե օրենքով սահմանված լրացուցիչ եկամուտների հոսքերի ավելացմանը:

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նուբարաշեն վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի մարզին: Նուբարաշենը զբաղեցնում է մոտ 1811 հա տարածք, փողոցների երկարությունը 25,2 կմ է, փողոցների մակերեսը՝ 269,5 հազ. քմ: (մանրամասները տե՛ս «Նուբարաշեն վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Հայ բարեգործական ընդհանուր միության հիմնադիր նախագահ եգիպտահայ բարերար Պողոս Նուբար Նուբարյանի աջակցությամբ և հովանավորությամբ 1930 թվականին որոշում է կայացվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծել Նուբարաշեն ավան, որի հատակագիծը հանձն է առնում կազմել հայ նշանավոր ճարտարապետ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը: 1932 թվականին հիմնվում է Նուբարաշենը՝ դռները բացելով առաջին ներգաղթող քարավանի առջև՝ Հունաստանից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, Լիբանանից, Սիրիայից հայրենիք վերադարձող ընտանիքների համար:

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Վարչական շրջանի բնակչությունը 01.01.2009թ. դրությամբ մոտ 9,6 հազ. մարդ է⁴⁶, այդ թվում՝ 44 տոկոս տղամարդիկ և 46 տոկոս կանայք: Ծնվածների թիվը 2008թ.՝ 147 երեխա:

Նուբարաշենի տարածքում գործում են հանրապետական նշանակության 1 հիվանդանոց, 1 պոլիկլինիկա, 2 հանրակրթական դպրոց, 1 նախադպրոցական հիմնարկ, 2 գիշերօթիկ կրթահամալիր, 1 երաժշտական դպրոց, 1 գրադարան, 1 արդյունաբերական, 2 տրանսպորտային, 6 գյուղատնտեսական ձեռնարկություններ: (մանրամասները տե՛ս «Նուբարաշեն վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

⁴⁶ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

Նուբարաշեն վարչական շրջանում 2010թ. կիրականացվեն ծրագրեր 162 766.1 հազ. դրամ գումարի չափով (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե»):

Մշակույթ

- Համայնքի զբոսայգիներում և կրթօջախներում կազմակերպել մրցույթներ, ստուգատեսներ, հանդիպումներ, հիշատակի և տոն օրերի միջոցառումներ:
- Բարելավել մանկապարտեզի, մշակույթի տան, գրադարանի, երաժշտական դպրոցի աշխատանքները:
- Խրախուսել և հովանավորել շնորհաշատ երեխաներին:
- Սերտ կապի մեջ լինել հանրակրթական, օժանդակ, հատուկ, գիշերօթիկ դպրոցների հետ:

Սպորտ

- Կազմակերպել մարզական ամենամյա միջոցառումներ:
- Աջակցել սպորտի զարգացմանը, հովանավորել լավագույն ցուցանիշներ ունեցող մարզիկներին:

Կրթության, մշակույթի, հանգստի կազմակերպման, կրոնի և սպորտի համար 2010 թվականին Երևանի բյուջեից նախատեսվում է Նուբարաշեն վարչական շրջանին տրամադրել 63 503.8 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Սոցիալական ոլորտ

- Բարելավել անապահով բնակչության սոցիալական պայմանները:
- Ուշադրության կենտրոնում պահել ծնողագուրկ և անապահով երեխաներին:
- Պատշաճ հոգատարություն ցուցաբերել միայնակ ծերերի, փախստականների, կենսաթոշակառուների և հաշմանդամների նկատմամբ:
- Հարազատի հուղարկավորություն կատարելու ժամանակ աջակցել անապահով բնակիչներին:
- Աջակցել ՄՕՏԳ-ի աշխատանքների բարելավման գործընթացներին:

Սոցիալական պաշտպանության ոլորտին 2010թ. նախատեսվում է տրամադրել 7 917.2 հազ. դրամ:

Ջրամատակարարում, ջրահեռացում

- «Երևան-Ջուր» ՊՓԲԸ-ի և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համատեղ սկսել կառուցապատվող Նուբարաշեն վարչական շրջանի Ա, Բ, Գ, Դ, Ե, Ջ և Է թաղամասերի խմելու ջրի մատակարարման համակարգի աշխատանքները:

Արդյունքը՝ նորակառույց թաղամասերը կապահովվեն խմելու ջրով:

- Ոռոգման ջրով ապահովել 15,16,17, 18, 20–րդ փողոցների բնակչությանը, 11–րդ փողոցին հարող այգու ողջ տարածքը և այգու հարևանությամբ տնտեսվարող կազմակերպություններին:
- Ընդլայնել 1-ին փողոցի ջրահեռացման համակարգ, ներգրավելով «Է» թաղամասի տարածքը

Արդյունքը՝ կբարելավվի վերոնշյալ տարածքների ոռոգման ջրի մատակարարումը:

Գազամատակարարում

- Աջակցել Նուբարաշեն վարչական շրջանի Ա, Բ, Գ, Դ, Ե, Ջ, Է թաղամասերում գտնվող տների գազամատակարարման աշխատանքներին:

Արդյունքը՝ նորակառույց թաղամասերը կապահովվեն երկնագույն վառելիքով:

Սանիտարական մաքրում, աղբահանություն

- Ընդլայնել սանմաքրում իրականացվող փողոցների ցանկը
- Բարելավել աղբահանության աշխատանքների կազմակերպումը:
- Նորակառույց թաղամասերում տեղադրել աղբամաններ:

Արդյունքը՝ վարչական շրջանում կապահովվի ամենօրյա պատշաճ սանիտարական վիճակ:

Կանաչապատում

- Բարեկարգել 11-րդ փողոցին հարող զբոսայգին:
- Կազմակերպել համայնքի կանաչ տարածքների ընդլայնումը, խնամքն ու պահպանությունը:

Արդյունքը՝ ունենալ հնարավորինս մեծ մակերեսով խնամված կանաչ տարածք:

- Վերանորոգել և ընդլայնել ռոռզման գործող ցանցը

Արդյունքը՝ ունենալ անկորուստ ռոռզման ցանց, բարելավել ռոռզման ջրի մատակարարումը:

Փողոցների բարեկարգում

- Վերանորոգել համայնքի փողոցների ասֆալտբետոնե ծածկույթը:
- Իրականացնել ճանապարհների եզրաքարերի և այլ տարրերի վերանորոգման – վերականգնման աշխատանքներ:

Արդյունքը՝ համայնքում ունենալ բարեկարգ փողոցներ:

- Կառուցել և բարեկարգել համայնքի բակային խաղահրապարակները:

Արդյունքը՝ ունենալ բարեկարգ բակային խաղահրապարակներ:

Արտաքին լուսավորություն

- Պահպանել և շահագործել արտաքին լուսավորության ցանցը:
- Ավելացնել լուսավորվող փողոցների քանակը:

Արդյունքը՝ ունենալ ընդլայնված արտաքին լուսավորության ցանց:

Բնակարանային տնտեսություն,

քաղաքաշինություն

Բնակարանային տնտեսություն

- Իրականացնել Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի և ոչ բնակելի տարածքների պահպանությունն ու շահագործումը:

Արդյունքը՝ ունենալ վարչական շրջանի տարածքում գտնվող բնակելի և ոչ բնակելի տարածքների ամբողջական պատկեր:

- Բարեկարգել բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքները:

Արդյունքը՝ ունենալ բազմաբնակարան շենքերի բարեկարգ ընդհանուր օգտագործման տարածքներ:

- Հսկողություն իրականացնել վարչական շրջանի ընդհանուր օգտագործման տարածքների, գույքի և ինժեներական կոմունիկացիաների խնամքի, անվտանգ շահագործման և պահպանման նորմատիվների ապահովման ուղղությամբ:

Քաղաքաշինություն

- Մարզամշակութային կենտրոնի խմբակների ընդլայնում, կենտրոնի մարզական մասի կահավորում:

Արդյունքը՝ դպրոցահասակ երեխաների ակտիվ հանգստի և ազատ ժամանցի կազմակերպում:

- Աջակցել մայրաքաղաքի ճարտարապետության վարչությանը, անշարժ գույքի կառավարման Երևանի և Էրեբունու վարչություններին:

Գյուղատնտեսություն

- Կատարել կենդանիների ամենամյա հաշվառում:
- Աջակցել անասնապահությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին և անհատ քաղաքացիներին:
- Խթանել այգիների և բանջարանոցների ընդլայնման և վնասատուների դեմ պայքարի աշխատանքները:
- Կազմակերպված պայքար տանել կենդանիների և թռչունների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:

Արդյունքը. Կապահովվի գյուղմթերքների բարձր արտադրողականություն, իրացում, կորուստների նվազում:

Այլ ոլորտներ

- Բարելավել բնակչության առևտրի և տրանսպորտային սպասարկման աշխատանքները:
- Համայնքի ամբողջ տարածքում սահմանել էկոլոգիական հսկողություն:
- Շարունակել համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:
- Համագործակցել զինվորական մասի հետ, աջակցել զորահավաքներին և զորակոչերին:
- Համագործակցել Փրկարարական ծառայության Նուբարաշենի տարածքային ստորաբաժանման հետ, զանգվածային աշխատանք տանել ԱԻ ժամանակ բնակչության պաշտպանվածության և տարհանման աշխատանքները սահմանված նորմերին համապատասխան կազմակերպելու նպատակով:
- Աջակցել բնակչության բուժսպասարկման աշխատանքներին:
- Աջակցել օրինապահ մարմիններին:
- Աջակցել ձեռնարկատիրության և գործարարության զարգացմանը:
- Աջակցել նոր աշխատատեղերի ստեղծման աշխատանքներին:
- Ապահովել վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատանքների թափանցիկությունը, անելիքների և արդյունքների մասին իրազեկել բնակչությանը, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից պահանջել օպերատիվություն, ապահովել աշխատակազմի մասնակցությունը վերապատրաստման և ուսուցման նպատակով կազմակերպվող դասընթացներին: Ապահովել «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառումը:
Արդյունքը՝ ապահովել բնակչության բնականոն կյանքի պայմաններ:

Շ Ե Ն Գ Ա Վ Ի Թ Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն

Շենգավիթ վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է ՀՀ Արարատի մարզին: Այն գտնվում է Երևանի կենտրոնից հարավ արևմուտք: Շրջանն ընդգրկում է Խարբերդ, Վ. Չարբախ, Ն. Չարբախ, Վ. Շենգավիթ, Ն. Շենգավիթ, Աերացիա, Գ. Նժդեհ, Բագրատունյաց, Արշակունյաց, Արտաշիսյան, Նորագավիթ բնակելի զանգվածները:

Շրջանը զբաղեցնում է 4150 հա տարածք, փողոցների թիվը՝ 137, երկարությունը՝ 99,5 կմ, փողոցների մակերեսը՝ 2130,2 հազ. քմ (մանրամասները տե՛ս «Շենգավիթ վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Անհիշելի ժամանակներից մեզ է հասել Երևանի Շենգավիթ վարչական շրջանի անվանումը: Բնակավայրը շուրջ 6000-ամյա պատմություն ունի: Երևանի հարավ-արևմտյան մասում՝ Հրազդան գետի ձախ ափին գտնվող Շենգավիթ պատմամշակութային հուշարձանի պեղումների ժամանակ (1936-38թթ. և 1958-80թթ.) հայտնաբերվել է մթա 4-2 հազարամյակի սկզբին վերաբերող նեոլիթի և էնեոլիթի բոլոր 4 մշակութային շերտերի ընդհանրությունը:

Հնեաբանական նյութերը ցույց են տալիս, որ Շենգավիթը եղել է երկրի հնագույն և ճարտարապետական տեսակետից ամենակատարյալ կառույցներից մեկը: Նրա ճարտարապետությունն ընդհանուր գծերով հիշեցնում է Միջագետքի, Իրանի, Փոքր Ասիայի հնագույն հուշարձանները:

Հուշարձանների պեղումները սկսել են 2000թ., հայտնաբերվել են նոր, բարձրարժեք գտածոներ: Պակաս ուշագրավ չէ Շենգավիթ վարչական շրջանի տարածքում գտնվող մեկ այլ մշակութային հուշարձան՝ Կարմիր բլուրը, որը ուշ բրոնզե դարի (մթա 2-րդ հազարամյակ) քաղաքատեղի դամբարանադաշտ է: Նշված հուշարձանները ներկայացնում են պատմական մեծ արժեք և պահպանվում են պետության կողմից:

ՀՍՍՀ կենտրոնական գործադիր կոմիտեի 14.10.1935թ. որոշմամբ՝ Երևան քաղաքը բաժանվել է 2 շրջանի՝ Քաղաքային և Ստալինյան, որում ընդգրկվել է նաև ներկայիս Շենգավիթ վարչական շրջանը:

1961թ. Ստալինյան շրջանը վերանվանվել է Լենինյան շրջան, այնուհետ 1991թ. վերանվանվել է Շենգավիթի շրջանի, որն էլ, ՀՀ 1996թ. հունիսի 30-ի օրենքի համաձայն, վերանվանվել է Շենգավիթ համայնք, 2009 թ. հունիսից՝ Շենգավիթ վարչական շրջան:

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Շրջանի բնակչությունը 01.01.2009թ. դրությամբ կազմում է շուրջ 144,6 հազար մարդ⁴⁷, այդ թվում 46,3 տոկոս՝ տղամարդիկ և 53,7 տոկոս՝ կանայք: Ծնվածների թիվը 2008թ. 2322 երեխա (մանրամասնությունները տե՛ս «Շենգավիթ վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Վիճակի նկարագիր

Վարչական շրջանում են գտնվում արդյունաբերական այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են «Նաիրիտ», «Հայէլեկտրո», «Սահակյանշին», «Արմեն-Կարպետ», «Գրանդ Քենդի», «Գրանդ Տոբակո», Երևանի արևելյան արտադրանքի կոմբինատը և այլ ձեռնարկություններ:

Շրջանում գործում են 11 բուժօգնականներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, այդ թվում՝ «Շենգավիթ», «Երևան», Սուրբ Աստվածամոր անվան մանկական, «Դենտա-Էլիտա» ատամնաբուժական կլինիկան, ինչպես նաև «Օն-կլինիկ Անի» հայ-իսրայելական բարեգործական կազմակերպությունները:

Համայնքում գործում են 29 հանրակրթական դպրոցներ, 22 նախադպրոցական հաստատություններ, «Քվանտ» վարժարանը, 6 քոլեջներ, այդ թվում՝ Մշակույթի պետական, Ալ. Բակունցի անվ. պետական մանկավարժական, Փ. Թերլեմեզյանի անվ. գեղարվեստի և Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջները: Գործում են նաև «Մետրո» թատրոնը, մշակութային կենտրոններ՝ Ստ. Ջրբաշյանի անվան թիվ 8 և Տիգրանյանի

⁴⁷ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009 էջ 194

անվ. երաժշտական դպրոցները, պատանեկության ստեղծագործական կենտրոնը, տեխնիկական ստեղծագործական կենտրոնը, թիվ 5 մշակույթի կենտրոնը և 4 գրադարան, 1 արհեստակցական ուսումնարան, 3 արտադրարկայական հիմնարկ, 1 մանկապատանեկան համալիր մարզադպրոց:

Վարչական շրջանի ենթակայությամբ է գործում նաև հանրապետության միակ՝ Ձևավոր չմշկասահքի դպրոցը, ինչպես նաև թիվ 1 մարզադպրոցը, «Հայաստան» մարզական միության սուսերամարտի դպրոցը, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության հեծանվային սպորտի մարզադպրոցը:

Շրջանում կա երկու եկեղեցական համալիր՝ Նորագավիթի Սբ. Գևորգ և Չարբախ գյուղի Սբ. Խաչ եկեղեցիները, կան խաչքարեր, բարձրաքանդակներ, կիսանդրիներ (հիմնականում՝ համանուն դպրոցների բակերում), 4 հուշատախտակներ, 4 կամուրջներ, հուշարձաններ, այդ թվում՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի, Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակին: Շենգավիթի վարչական տարածքում է գտնվում Կոմիտասի անվան պանթեոնը: Շրջանի տարածքում է գտնվում նաև Կարմիր Բլուր, Շենգավիթ պատմամշակութային հուշարձանները:

Կապի հանգույցներն են՝ 42,44,46,48 ԱՀԿ-ները: Հավասարաչափ բաշխված են առևտրի և սպասարկումների շուրջ 310 օբյեկտներ, սուպերմարկետներ:

Շրջանի 135 բարձրահարկ շենքերում կենցաղային աղբը կուտակվում է այդ շենքերի մուտքերի աղբախցերում, իսկ մնացած 492 շենքերի կենցաղային աղբը կուտակվում է շրջանի տարածքում հավասարաչափ տեղադրված 412 աղբարկղների մեջ, որոնցից 220-ը համեմատաբար լավ վիճակում են, 165-ը տեղադրվել են 2009 թվականին: Կուտակված աղբն ամեն օր սահմանված գրաֆիկով «Կանաչ» ՓԲԸ-ի աղբատար ավտոմեքենաներով տեղափոխվում է Նուբարաշենի աղբավայր:

Վարչական շրջանի մաքրման ենթակա ընդհանուր տարածքը կազմում է 2130.2 հազ քմ, որից մաքրվում է 1184.0 հազ. քմ, այդ թվում 972.2 հազ քմ՝ կենտրոնական, 213 հազ քմ՝ շրջանային նշանակության փողոցներ և այլ տարածքներ: Սանմաքրման աշխատանքները կատարվում են ամեն օր, մեքենայացված և ձեռքով: Շրջանի

«Կանաչ» ՓԲԸ-ի առկա մեքենայական պարկը կազմում է 27 միավոր մեքենա-
սարքավորում:

Նպատակների առաջադրում և առաջնահերթ խնդիրների ձևակերպում

2010-2013թթ. շրջանի զարգացման ծրագրային հիմնական ուղղություններն են.

- *վարչական շրջանի բնակֆոնդի և այլ շինությունների պահպանման, շահագործման և նորոգման ապահովումը,*
- *շրջանի տարածքում նոր աշխատատեղերի ստեղծումը, փոքր և միջին բիզնեսի, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացումը,*
- *կրթության, մշակույթի և մարզական կենտրոնների նպատակային գործունեության ապահովումը, ինչպես նաև դրանց հատուկ ուշադրության կենտրոնում պահելը,*
- *շրջանի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավմանն ուղղված միջոցների ձեռնարկումը,*
- *վարչական շրջանի ֆինանսական կացության բարելավումը:*

Շենգավիթ վարչական շրջանում 2010թ. կիրականացվեն ծրագրեր 1 666 601.2 հազ. դրամի գումարի չափով:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Շենգավիթ վարչական շրջանում գործում են 8 մշակութային հիմնարկներ՝ Պատանեկության ստեղծագործական կենտրոն, թիվ 5 մշակույթի կենտրոն, Ստ. Զրբաշյանի անվան թիվ 8 երաժշտական դպրոց և թվով 4 գրադարաններ:

Ստ. Զրբաշյանի անվան թիվ 8 երաժշտական դպրոցը եզակի դպրոցներից է, որտեղ 271 աշակերտներից 185-ը սովորում են պետպատվերով: Նախընտրելի է, որ պետպատվերի սահմաններն ընդլայնվեն: Շրջանում գործող բոլոր մշակութային հիմնարկների նյութատեխնիկական բազան հնամաշ է, երկար տարիներ չեն ստացել կոշտ և փափուկ գույք, տեխնիկա, երաժշտական գործիքներ, տնտեսական միջոցներ:

Մշակութային հիմնարկներում հնարավորությունների դեպքում կավելանան մեծ թվով երեխաներ: Բոլոր կենտրոնները կարիք ունեն լոկալ ջեռուցման, տանիքների վերանորոգման: Չեն համապատասխանում սանհանգուցային պայմանները, հնամաշ են ջրագծերը, հոսանքալարերը:

Շենգավիթ վարչական շրջանում գործում է թվով 22 նախադպրոցական հիմնարկներ՝ խմբերի թիվը 132, որտեղ հաճախում է 3545 երեխա:

Նախադպրոցական հիմնարկների նյութատեխնիկական բազան հնամաշ է, երկար տարիներ չեն ստացել կոշտ և փափուկ գույք, տեխնիկա, խաղալիքներ, տնտեսական միջոցներ:

Առաջիկայում նախատեսված է ավելացնել խմբերի թիվը, թիվ թիվ 143, 298, 195, 170, 244 նախադպրոցական հիմնարկներում, որտեղ կհաճախեն ևս մոտ 300 երեխաներ:

Նախադպրոցական հիմնարկները կարիք ունեն լոկալ ջեռուցման, տանիքների վերանորոգման:

Սանհիգենիկ վիճակը թույլ է, չի համապատասխանում նորմատիվներին, էլեկտրական վահանակները և հոսանքագծերը փոխելու կարիք ունեն, ջրագծերը հնամաշ են:

Նախադպրոցական 22 հիմնարկների շենքերի ընթացիկ նորոգման համար 2010-2013.թթ. համար պահանջվում է 127 900.0 հազ դրամ, նույն թվում 2010թ. համար 10000.0 հազ դրամ;

Նախատեսված աշխատանքների անվանումը	Նախատեսված աշխատանքների ծավալը 2010թ.	Նախատեսված գումարը /հազ. դրամ/
Նախադպրոցական հիմնարկների - տանիքների վերանորոգում. - ներքին հարդարման աշխատանքներ. - ջրագծերի, կոյուղագծերի և սանհանգույցների հիմնանորոգում	741.5 քմ 2 հիմնարկ 3 հիմնարկ	2016.8 5618. 3 2364.9
Նախատեսված աշխատանքների անվանումը	Նախատեսված աշխատանքների ծավալը 2011թ.	Նախատեսված գումարը /հազ. դրամ/
Նախադպրոցական հիմնարկների՝ - տանիքների վերանորոգում. - ներքին հարդարման աշխատանքներ. - ջրագծերի, կոյուղագծերի և սանհանգույցների հիմնական վերանորոգում	4156.3 6 հիմնարկ 4 հիմնարկ	13300.0 15000.0 11700.0
Նախատեսված աշխատանքների անվանումը	Նախատեսված	Նախատեսված գումարը

	աշխատանքների ծավալը 2012թ.	/հազ. դրամ/
Նախադպրոցական հիմնարկների - տանիքների վերանորոգում. - ներքին հարդարման աշխատանքներ. - ջրագծերի, կոյուղագծերի և սանհանգույցների հիմնանորոգում	3200 քմ 4 հիմնարկ 4 հիմնարկ	14500.0 12000.0 13500.0
Նախատեսված աշխատանքների անվանումը	Նախատեսված աշխատանքների ծավալը 2013թ.	Նախատեսված գումարը /հազ. դրամ/
Նախադպրոցական հիմնարկների - ներքին հարդարման աշխատանքներ. - ջրագծերի, կոյուղագծերի և սանհանգույցների հիմնանորոգում	6 հիմնարկ 2 հիմնարկ	31200.0 6700.0

Շենգավիթ վարչական շրջանում գործում են չորս մարզադպրոցներ՝

Թիվ 1 մարզական դպրոց՝ ՀՈԱԿ

- մարզվողների թիվը՝ 403,
- ուսումնական խմբերի թիվը՝ 32:

Մարզադպրոցում գործում են հետևյալ մարզական խմբերը՝ հանդբոլի, շախմատի, բասկետբոլի, սանդա-ուշուի, մականախաղի, բռնցքամարտի, լողի:

Շրջանի մարզադահլիճները երկար տարիներ չեն վերանորոգվել, անմխիթար վիճակում են, վերանորոգման կարիք ունի շենքի տանիքը, ջրագծերը, ջրհորդանները:

Մարզադահլիճների վերանորոգումից հետո հնարավորություն է ընձեռնվում ավելացնելու ուսումնամարզական խմբերի թիվը՝ թվով 4-6 խումբ:

Երկար տարիներ ձեռք չեն բերվել մարզագույք և մարզահագուստ:

Վերակառուցման կարիք ունեն մարզահրապարակները:

Մարզադահլիճները չեն ջեռուցվում:

Ձևավոր չմշկասահքի ուսումնամարզական դպրոց՝ ՀՈԱԿ

- մարզվողների թիվը՝ 218,
- ուսումնական խմբերի թիվը՝ 21:

Մարզադպրոցում գործում են գեղասահքի 18 և տափակօղակով հոկեյի 3 խմբեր:

Ներկա պահին չի գործում սահադաշտը, որի հետևանքով մարզումներն անցկացվում են մարզադահլիճում և մարզահամերգային համալիրում: Շարքից դուրս են եկել սահադաշտի սառեցնող համկարգը, խողովակները:

Մարզադպրոցի վարչական շենքը գտնվում է անմխիթար վիճակում: Մարզագույքի և հանդերձանքի շատ խիստ պակաս է զգացվում: Նախատեսվում է խմբերի թիվը ավելացնել 5 խմբով:

Ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մարզադպրոց՝

- մարզվողների թիվը՝ 206,
- ուսումնական խմբերի թիվը՝ 26:

Մարզադպրոցում գործում են ակրոբատիկայի 22 և գեղ. մարմնամարզության 4 խմբեր:

Մարզումներն իրագործվում են թիվ 1 մարզադպրոցի մարզադահլիճում, որը խիստ վերանորոգման կարիք ունի, շարքից դուրս է եկել մարզագորգը:

Անմխիթար վիճակում է մարզադպրոցի վարչական շենքը:

Նախատեսվում է առաջիկայում խմբերի թիվն ավելացնել 3-ով:

Սեղանի թենիսի և թենիսի ուսումնամարզական դպրոց՝ ՀՈԱԿ

- մարզվողների թիվը՝ 173,
- ուսումնական խմբերի թիվը՝ 25:

Մարզադպրոցում գործում են սեղանի թենիսի 11 խմբեր:

Մարզումներն անցկացվում են թիվ 1 մարզադպրոցի, (Մպարտակ՝ մարզահամալիրի մարզադահլիճներում և «Արարատ» թենիսի ակումբի կորտերում:

Մարզադպրոցի միակ վարչական սենյակը տեղավորված է թիվ 1 մարզադպրոցի տարածքում:

Մարզագույքի և մարզահագուստի կարիք կա:

Կրթության, մշակույթի, հանգստի կազմակերպման, կրոնի և սպորտի համար 2010 թվականին Երևանի բյուջեից նախատեսվում է Շենգավիթ վարչական շրջանին տրամադրել 795 266.9 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե» հավելվածը):

Սոցիալական անապահովություն և առողջապահություն

Շենգավիթ վարչական շրջանի բնակչության մեջ մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով մարդիկ, առաջարկվում է այդ մարդկանց սոցիալական վիճակի բարելավման նպատակով տարվա ընթացքում հատկացնել ֆինանսական օգնություններ՝ տասը մլն դրամ:

Վարչական շրջանում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ ֆինանսական աջակցությամբ գործում է բարեգործական ճաշարան, որից 2009թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ օգտվում են 102 սոցիալապես անապահով բնակիչներ (հիմնականում՝ միայնակ թոշակառուներ): Անհրաժեշտ է ստեղծել նյութական պայմաններ՝ բարեգործական ճաշարանի գործունեությունը բարելավելու համար՝ երեք մլն դրամ:

Հատկացնել որոշակի գումար, կնքել պայմանագիր համայնքի վարչական տարածքում գործող որևէ դեղատան հետ՝ վարչական շրջանի առավել սոցիալապես անապահով խավին անհատույց կարգով դեղամիջոցներ տրամադրելու համար՝ երեք մլն դրամ:

Թույլատրել շարունակելու պայմանագիրը Երևանի «Լեբեն» ՍՊԸ բժշկական կենտրոնի հետ՝ սոցիալապես անապահով խավի մարդկանց առողջական խնդիրները որոշ չափով հոգալու համար՝ վեց մլն դրամ:

Ձեռնարկել միջոցներ, որ վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների անդամները, զոհված, վիրավոր ազատամարտիկները, միայնակ և տարեց թոշակառուները հնարավորություն ունենան տարվա ընթացքում բուժումներ ստանալ համապատասխան առողջարաններում և ուղեգրեր ձեռք բերեն հանգստյան տներում հանգստանալու համար՝ չորս մլն դրամ:

Ավելացնել զոհված, հաշմանդամ ազատամարտիկների և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար ամառվա ընթացքում հատկացվելիք հանգստյան տների և ճամբարների ուղեգրերի քանակը՝ հինգ մլն դրամ:

Վարչական շրջանի անապահով խավին հնարավորինս քաղաքի մշակութային կյանքին մասնակից դարձնելու համար ստեղծել հնարավորություն՝ ձեռք բերելու

կինոյի, թատրոնի, համերգների և այլ մշակութային միջոցառումների անհատույց կարգով տրվելիք տոմսեր՝ հինգ մլն դրամ:

Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմին տրամադրել ֆինանսական միջոցներ՝ տարվա ընթացքում վարչական շրջանի անապահով խավին պատկանող ընտանիքների դպրոցահասակ երեխաներին անհրաժեշտ հագուստ և գրենական պիտույքներ տրամադրելու համար՝ հինգ մլն դրամ:

Ստեղծել պայմաններ և տրամադրել առողջարանների և հանգստյան տների ուղեգրեր զեղչերով՝ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի, ենթակա կազմակերպությունների աշխատողների համար՝ իրենց հասանելիք հանգիստն անցկացնելու նպատակով:

Սոցիալապես անապահով ընտանիքների համար ստեղծել պայմաններ և տրամադրել անվճար կտրոններ՝ վարչական շրջանի որևէ բաղնիքում անվճար լողանալու համար:

Կազմակերպել միջոցառումներ և ֆինանսապես աջակցել վարչական շրջանի տարածքի պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի վետերաններին, որոնք շուրջ 1200 հոգի են:

Վարչական շրջանի տարածքից արցախյան պատերազմում զոհված և վիրավոր ազատամարտիկների թվով 1200 ընտանիքների Ամանորի, Հաղթանակի օրվա և որոշակի այլ առիթներով, ինչպես նաև կանանց միջազգային օրվա համար տրամադրել համապատասխան ֆինանսական օգնություն և նվերներ:

Հատուկ ուշադրության կենտրոնում պահել երկրապահ կամավորականների միության անդամներին և ժամանակ առ ժամանակ նյութապես աջակցել նրանց:

Դրամական խրախուսանք տալ վարչական շրջանի տարածքում Ամանորի գիշերը ծնված առաջին հինգ երեխաների մայրերին, ինչպես նաև երեք և ավելի երեխաներ ունեցող բազմանդամ ընտանիքներին՝ երկու մլն դրամ:

Տրանսպորտի կտրոններ տրամադրել վարչական շրջանի խիստ անապահով ընտանիքներին՝ անվճար երթևեկելու Երևան քաղաքի տարածքում, իսկ հասարակական կազմակերպությունների համար միջոցառումների ժամանակ համապատասխան գործառույթով ձեռք բերել ավտոբուսներ և տրամադրել նրանց անվճար՝ երկու մլն դրամ:

Ձեռնարկել միջոցներ շրջանի տարեց բնակիչների ժամանցը լավագույն ձևով կազմակերպելու համար:

Սոցիալապես անապահով ընտանիքներում մահացած անձանց, ինչպես նաև միայնակ թոշակառուների հուղարկավորությունը կատարելու համար նախատեսել՝ երեք մլն դրամ:

Ընդհանուր առմամբ՝ Շենգավիթ վարչական շրջանում սոցիալական ապահովության և առողջապահության ծրագրերի 2010թ. աշխատանքային գործունեությունն իրականացնելու համար նախատեսվում է տրամադրել 46 633.6 հազ. դրամ:

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառ

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառի գերակայություններն են.

- ✓ բնակֆոնդի պահպանումը,
- ✓ միջթաղային ճանապարհների վերակառուցումը,
- ✓ նախադպրոցական հիմնարկների տարածքների վերակառուցումը,
- ✓ փողոցների արտաքին տեսքի ձևավորումը,
- ✓ այգիների, հանգստի գոտիների և բակերի վերջնական ձևավորման խնդիրները,

Շրջանի 2010թ. առաջնահերթ խնդիրների թվում են.

- շրջանի տարածքում տեղադրված գովազդների և շինարարական աշխատանքների թույլտվությունների դիմաց բյուջեի մուտքերի ապահովումը,
- ապօրինի շինարարության նկատմամբ հսկողության ուժեղացումը,
- ծանրաբեռնված փողոցներում երթուղային տրանսպորտի կուտակումները կանխելու նպատակով վերջնական գառների ձևավորման աշխատանքների օժանդակումը,
- շրջանի տարածքում տեղադրված առևտրի և սպասարկումների ոլորտի կրպակների և տաղավարների անհրապույր տեսք ունեցող ժամանակավոր օբյեկտների ապամոնտաժումը:

2010-2013թթ. ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Գ. Նժդեհի հրապարակի շատրվանների հիմնական վերանորոգում,
- «Շողակաթ» հ/ը հարևանությամբ գտնվող շատրվանների հիմնական վերանորոգում և այգու բարեկազմում,
- Սմբատ Զորավարի փողոցի հասարակական զուգարանի հիմնական վերանորոգում,
- Թամանցիների փողոցի հենապատի հիմնական վերանորոգում և հարող տարածքի բարեկարգում,
- Թամանցիների փողոցի ստորգետնյա հետիոտն անցման հիմնանորոգում,
- Սևանի փողոցի հենապատի կառուցում,
- Միջբակային փողոցների բարեկարգում,
- Բնակֆոնդի պահպանման միջոցառումներ (մուտքերի դռների տեղադրում, տանիքների, ջրագծերի, կոյուղագծերի. անձրևատար խողովակների և շքերթային պատշգամբների վերանորոգում),
- նախադպրոցական հիմնարկների տարածքների բարեկարգում,
- դպրոց տանող ճանապարհների բարեկարգում,
- Նոր Խարբերդ թաղամասի փողոցի ասֆալտապատում և արտաքին լուսավորություն,
- շրջանի փողոցների եզրաքարերի հիմնական նորոգում:

Բազմաբնակարանային-կոմունալ տնտեսություն

Շրջանն ունի 627 բազմաբնակարան բնակելի շենք, 135-ը բարձրահարկ են (9-16 հարկանի), թվով 56 շենք կառուցվել է մինչև 1950թ., 354 շենք՝ 1950-1970թթ., 215-ը՝ 1970-1990թթ. և 2 շենք կառուցվել է 1990թ. հետո: Անհրաժեշտ է կազմակերպել բնակելի շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրության, ամրացման և վերանորոգման աշխատանքներ: Շրջանի 627 բնակելի շենքերից 565-ը սպասարկվում է 43 համատիրությունների կողմից, 5-ը սպասարկվում են լիազորագրային կառավարմամբ, 13-ը՝ աշխատակազմի և 44-ը՝ թաղային լիազորների կողմից:

Փորձը ցույց է տալիս, որ գործող համատիրություններում շենքերի ֆիզիկական վիճակը հիմնականում չի բարելավվում, ինչը հանգեցնում է բնակչության արդարացի դժգոհությանը: Այդ պատճառով նախատեսվում է 2010 թ. շրջանի համատիրությունները խոշորացնել և մեկ համատիրության մեջ ընդգրկել նվազագույնը 20-ից 25 շենք:

Շրջանի 135 բարձրահարկ շենքերում կան 258 վերելակներ, որոնցից 17-ը չեն աշխատում՝ թալանված լինելու պատճառով:

2010թ. ընթացքում այս ոլորտում նախատեսվում են կատարել աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

- հիմնական և մասնակի վերանորոգման ենթարկել բնակելի շենքերի հարթ և թեք լանջավոր տանիքները,
- վերանորոգման աշխատանքներ կատարել բնակելի շենքերի ջրամատակարարման և կոյուղու ներքին ցանցերում, ջրհորդան խողովակների վրա, շքամուտքերում, աստիճանավանդակներում,
- վերանորոգել բազմաբնակարանային շենքերի շքերթային պատշգամբները,
- մշտական ուշադրության կենտրոնում պահել համատիրությունների գործունեությունը՝ նրանց աշխատանքները բարելավելու և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

2010-2013թթ. բազմաբնակարան շենքերի պահպանման համար առաջարկվում է հետևյալ աշխատանքային ծրագիրը.

- Շրջանի տարածքում գտնվող հարթ տանիքները պատված են փափուկ ծածկով՝ իզոգամով, որոնց պիտանիության միջին ժամկետը 5-7 տարի է և որոնք ենթակա են մշտական փոփոխման: Նմանատիպ շենքերի տանիքների վերանորոգման նպատակով առաջարկվում է 2010թ. վերանորոգել 5000 քմ հարթ տանիք, որի համար անհրաժեշտ է մոտ 21,3 մլն. դրամ, 2011թ.՝ 5500քմ-30.0 մլն դրամ, 2012թ՝ 6000քմ՝ 35.0 մլն դրամ, 2013թ՝ 6500 քմ՝ 38.0 մլն դրամ:
- Թեք լանջավոր տանիքները հիմնականում հին են, քայքայված, շենքերի կառուցումից հետո հիմնական նորոգման չեն ենթարկվել: Այդ շենքերի տանիքների վերանորոգման համար 2010թ. անհրաժեշտ է ձեռք բերել 1500

հատ ազբոշիֆեր, որի համար անհրաժեշտ է մոտ 5,0 մլն. դրամ, 2011թ` 1800 քմ` 6.0 մլն դրամ, 2012թ.` 2000 քմ` 6.5 մլն դրամ, 2013թ.` 2200 քմ` 7 մլն դրամ:

- Առաջարկվում է 2010թ. տեղադրել ևս 50 հատ շքամուտքի դուռ, որի ծախսերը կկազմեն մոտ 5,0 մլն. դրամ, 2011թ.` 55 հատ` 5.5 մլն դրամ 2012թ.` 60 հատ` 6.0 մլն դրամ, 2013թ` 65 հատ` 6.5 մլն դրամ:
- 2010թ. բազմաբնակարան շենքերի թվով 20 շքերթային պատշգամբների վերանորոգման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է 7.6 մլն դրամ գումար, 2011թ.` 21 հատ` 8.0 մլն դրամ, 2012 թ.` 23 հատ` 9.0 մլն դրամ, 2013թ.` 25 հատ` 10.0 մլն դրամ:
- 2010թ. թվով 100 հատ նոր աղբարկղների ձեռք բերման համար անհրաժեշտ է 5,0 մլն. դրամ 2011թ` 110 հատ- 5.5 մլն դրամ, 2012 թ.` 120 հատ` 6.0 մլն դրամ, 2013թ.` 130 հատ` 6.5 մլն դրամ:
- Ընդհանուր առմամբ, 2010-2013թթ. շրջանի բազմաբնակարան շենքերի պահպանման, վերանորոգման համար առաջարկվում է 234.4 մլն դրամի աշխատանքային ծրագիր:

Շենգավիթ վարչական շրջանի 2010-2013թթ. կոմունալ տնտեսության և ԲՇԿՄ հետ աշխատանքների կառավարման բաժնի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր

h/h	Նախատեսված աշխատանքների անվանումը	2010թ	2011թ	2012թ	2013թ	Ընդամենը
1	Ասֆ/բետոն. ծածկույթի վերանորոգում և բարեկարգում	63355.7	70 000.0	80 000.0	90 000.0	303355.7
2	Փողոցների և զետևանցումների սանմաքրում	307367.0	322735.0	355000.0	390500.0	1375602.0
3	Գետերի հունների մաքրում	5000.0	8000.0	9000.0	10 000.0	32000.0
4	Կանաչ տարածքների պահպանում	66500.0	69825.0	76807.0	85000.0	298132.0
5	Հասարակական զուգարանների սպասարկում	3620.0	3800.0	4500.0	5000.0	16920.0
6	Հասարակական զուգարանների հիմնանորոգում	3877.8	5000.0	6000.0	8000.0	22877.8
7	Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	26300.0	30000.0	35000.0	38000.0	129300.0
8	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում, շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	5000.0	6000.0	6500.0	7000.0	24500.0
9	Վթարային պատշգամբների նորոգում, շենքերի և շինությունների հիմնանորոգում	7600.0	8000.0	9000.0	10000.0	34600.0
10	Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ, շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	10 000.0	11000.0	12000.0	13000.0	46000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ`	498620.5	534360.0	593807.0	656500.0	2283287.5

2010-2013թթ. նախատեսվում է.

- շրջանի փողոցների և բակերի ասֆալտապատման, եզրաքարերի վերանորոգման և հենապատերի վերականգնման աշխատանքների համար նախատեսվում է 303355.7 հազ. դրամ գումար, այդ թվում,
- հասարակական գուգարանների հիմնակարան վերանորոգման աշխատանքներ, որի գումարը կազմում է 21000.0 հազ. դրամ,
- կանաչ տարածքների խնամք և պահպանում. նախատեսվում է վարչական շրջանի տարածքների 45 հա պուրակների, այգիների, սիզամարգերի խնամքի, բարեկարգման և ընդլայնման աշխատանքներ՝ 298132.0 հազ. դրամ գումարի չափով,
- Գետառ և Ջրվեժ գետերի հունների մաքրման համար՝ 32000.0 հազ դրամ գումար,
- նախագծային-նախահաշվային փաստաթղթերի պատվիրման համար նախատեսվում է 4128.0 հազ. դրամ գումար,
- նախատեսվում վարչական շրջանի հասարակական գուգարանների պահպանման և սպասարկման համար՝ 16920.0 հազ դրամ գումար,
- վարչական շրջանի փողոցների սանմաքրման աշխատանքները և ստորգետնյա, վերգետնյա անցումների սպասարկման և պահպանման համար՝ 1 375 602.0 հազ. դրամ գումար,

Բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավում

Բնակչության կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման նպատակով աշխատակազմն իր մասնակցությունն ու աջակցությունը հանդես կբերի շրջանի ջրամատակարարման և ջրահեռացման, գազամատակարարման համակարգերում բարեփոխումներ իրականացնելու գործում: Ջրամատակարարման բնագավառում խնդիր է դրվում բնակչությանն ապահովել բավարար քանակությամբ խմելու ջրով՝ նպատակ ունենալով ողջ շրջանի տարածքն ապահովել շուրջօրյա

ջրամատակարարմամբ, կանխել ջրի կորուստները և արտահոսքը արտաքին միջավայր:

Տարածքում բազմաբնակարան շենքերի համար առաջարկվում է նախատեսել 30.0 մլն. դրամ գումար՝ վերելակների սպասարկման և պահպանման համար:

Աղբահանություն և փողոցների մաքրում

Նախատեսվում է ավելացնել շրջանի բնակչության կողմից արտադրվող կենցաղային աղբի և փոշու հավաքման և տեղափոխման հաճախականությունը: Կենցաղային աղբի տեղափոխումը կկատարվի ռիթմիկ, ըստ մշակված աշխատանքային գրաֆիկների:

2010թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել 307367.0 մլն. դրամի սանիտարական մաքրման աշխատանքներ, ընդգրկելով 1229.5 հազ. քմ. տարածք, այդ թվում նաև տարածքի շինաղբի տեղափոխումը: 2011-2013թթ. համար նախատեսվում է իրականացնել սանիտարական մաքրման և ստորգետնյա անցումների սանիտարական մաքրման շուրջ 10608.2 հազ դրամի աշխատանքներ:

Կանաչ տարածքների խնամք և ոռոգում

2010թ. նախատեսվում է շրջանում ընդարձակել կանաչ տարածքները 10 հա-ով, որն իրագործելու համար անհրաժեշտ է ընթացիկ և հիմնական վերանորոգման ենթարկել գործող ոռոգման համակարգերը՝ 992 գծմ երկարությամբ, կառուցել նոր խողովակաշարեր: Նախատեսվում է խիտ բնակեցված թաղամասերում 7 հա նոր այգիների, պուրակների ստեղծում, գազոնային տարածքի վերականգնում, 9600 ծառերի և թփերի տնկում, ծաղկային տարածության ընդարձակում՝ 10000 քմ, սիզամարգերի ավելացում՝ 519 հա-ով, ծառերի երիտասարդացում՝ 7000 ծառ, ծառերի և թփերի բուծում՝ տարեկան 2 անգամ:

Ճանապարհային տնտեսություն

Շրջանն ունի 137 փողոցներ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 99.5 կմ: Դրանց ընդհանուր մակերեսը կազմում է 2130200 քմ, երթևեկելի մասի մակերեսը՝

1308000 քմ: Ճանապարհների ասֆալտբետոնե ծածկույթի մակերեսը կազմում է 2260000 քմ: 2010թ. նախատեսվում է կատարել 8473.3 քմ ասֆալտբետոնե ծածկերի վերանորոգման աշխատանքներ՝ 63355.9 հազ դրամ արժողությամբ, իսկ 2011-2013թթ. հեռանկարային ծրագրում նախատեսվում է իրականացնել ճանապարհային ասֆալտբետոնե ծածկույթի վերանորոգման աշխատանքներ՝ 240000.0 հազ. դրամի:

Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանություն

Շրջանի գյուղատնտեսական նշանակության հողերը զբաղեցնում են 913.3 հա տարածություն: Շրջանի բնակավայրի հողերի մակերեսը 1577.0 հա է:

2010-2013թթ. առաջարկվում է իրականացնել հետևյալ խնդիրները.

- *Կատարել շրջանի գյուղատնտեսական նշանակության հողերի հաշվառում, աջակցել շրջանի հողերի հաշվեկշռի կազմմանը,*
- *Ոռոգման ջրի կորուստները նվազեցնելու և ժամանակին հողօգտագործողներին ոռոգման ջուր տրամադրելու նպատակով Երևանի ԶՕ ընկերության հետ համագործակցելով մաքրել, վերանորոգել և շահագործել ներտնտեսային ոռոգման ցանցը (երկարությունը՝ 113 կմ), որի համար անհրաժեշտ է 10 մլն. դրամ,*
- *Վարչական շրջանում նախատեսել տարածք պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներից՝ տնամերձ հողատարածքներ տրամադրելու համար, ինչպես նաև վարչական շրջանի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող բնակիչներին (բազմանդամ, վիրավոր, զոհված ազատամարտիկների ընտանիքներին և այլն),*
- *Շրջանի գյուղատնտեսական նշանակության հողատարածքներից վարձակալությամբ նախկինում տրամադրված պայմանագրերի վերակնքում՝ Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման հիման վրա, հողօգտագործման դիմաց վարձավճարների գանձման սպառնալու,*
- *Վարչական շրջանի կարևոր հիմնախնդիրն է շրջակա միջավայրի պահպանումը, գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների,*

վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի միջոցառումների կազմակերպումը և աջակցումը՝ հողօգտագործողներին անհրաժեշտ պարարտանյութերի և թունաքիմիկատների ձեռք բերման համար:

- Քաղաքային կանոններին համապատասխան՝ տալ շրջանի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվություն և կատարել դրանց ամենամյա հաշվառում, կազմակերպել շրջանի տարածքում անասնաբուժական ծառայության, հակահամաճարակային միջոցառումների, կենդանիների հիվանդությունների կանխման և ազրարային այլ կանոնների պահպանման աշխատանքներ, աջակցել շրջանի տարածքում գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը:

Առևտուր և սպասարկումներ

Վարչական շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների 310 օբյեկտներ, բենզինի և գազի լիցքավորման 23 կետեր: Հիմնականում կարգավորված են այդ օբյեկտների տեղաբաշխման և արտաքին համաչափության հարցերը: Համայնքի բյուջեի սեփական եկամուտների զգալի մասը գոյանում է առևտրի և սպասարկումների օբյեկտներից գանձվող տեղական տուրքերից:

Ներկայումս աշխատանքներ են տարվում փողոցային առևտուրը կանոնակարգելու ուղղությամբ: Բացօթյա առևտուրը վարչական շրջանի տարածքում նպատակահարմար ենք գտնում կազմակերպել փոքր շուկաներում, որով կկանոնակարգվի բացօթյա առևտուրը:

Գովազդ

2010թ. շրջանի տարածքում արտաքին գովազդի ստեղծման և տարածման, ինչպես նաև զարգացման համար անհրաժեշտ է պայմաններ ապահովել հասարակության, գովազդ սպառողների, գովազդատուների, գովազդ արտադրողների, գովազդակիրների շահերին համապատասխան:

Շրջանում 2010թ. արտաքին գովազդը խթանելու և հավասար մրցակցային դաշտ ձևավորելու համար նպատակահարմար ենք գտնում, որպեսզի տեղական տուրքերի դրույքաչափերը սահմանվեն ըստ նրանց գտնվելու վայրի (գոտիականության), ինչը կօժանդակի վարչական շրջանի տարածքում արտաքին գովազդի համաչափ զարգացմանը:

2008թ. բյուջեում արտաքին գովազդի համար նախատեսված 1 քմ-ի համար տեղական դրույքաչափի փոփոխությամբ 1000 դրամի փոխարեն 2009թ. սահմանվել է 1500 դրամ, ուստի գանձումներն աճել են 50 %-ով: Շրջանում արտաքին գովազդի զբաղեցրած մակերեսը 2008թ. համեմատ մնացել է անփոփոխ՝ 4100 քմ:

Նախատեսվում է գովազդային վահանակների նոր տեղերի ավելացում, ինչը կբերի գովազդ տեղադրելու թույլտվության համար տեղական տուրքի մուտքերի ավելացում:

Հարկային և ոչ հարկային եկամուտների հավաքագրում

Շրջանի տարածքում շարունակել իրականացնել ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող փոխադրամիջոցների, շենք-շինությունների գույքահարկի և հողի հարկի գանձման աշխատանքները: Կատարել ֆիզիկական և իրավաբանական անձանց փոխադրամիջոցների, շենք-շինությունների գույքագրում, տարբեր գերատեսչությունների կողմից տրամադրված տվյալների համադրում և բազայի ճշտում:

Նախատեսվում է 2010 թ. ընթացքում գույքահարկի, հողի հարկի և քաղնշանակության հողերի վարձերի գումարների գանձումը հասցնել առավելագույնի:

2010-2013թթ ծրագրերի իրականացման նպատակով հավաքագրել առկա ապառքները:

Ք Ա Ն Ա Ք Ե Ռ - Զ Ե Յ Թ Ո Ւ Ն Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն

Շ Ր Ջ Ա Ն

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը սահմանակից է Արաբկիր, Կենտրոն, Նոր-Նորք, Ավան վարչական շրջաններին և Կոտայքի մարզին: Վարչական շրջանի հեռավորությունը կենտրոնից մոտ 7 կմ է, տարածքի բարձրությունը ծովի մակերևույթից՝ միջինում մոտ 1250 մ, վարչական տարածքը 801.0 հա⁴⁸ է, փողոցների թիվը՝ 78, երկարությունը՝ 68,6 կմ, փողոցների մակերեսը՝ 979,1 հազ. քմ: (մանրամասները տե՛ս «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի» հավելվածը):

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիս արևելյան բարձրադիր մասում, որպես վարչատարածքային կազմավորում ունի՝ ընդամենը 12 տարվա պատմություն: Եթե նրա մասը կազմող Քանաքեռն ունի հազարամյա հարուստ պատմություն, ապա Զեյթունն անվանակոչել են 1946-1947թթ. հայրենադարձված Կիլիկիո Զեյթուն գավառի Մեծ եղեռնից մազապուրծ եղած աշխարհասփյուռ գեյթունցիները, որոնք ցանկացան հայրենիք վերադառնալուց հետո հավերժացնել իրենց և նախնիների ծննդավայրի հերոսական անցյալի հիշատակը:

Շրջանի 2010թ բյուջեն կազմում է 1 113 497.4 հազ. դրամ (տե՛ս «Երևանի 2010թ. բյուջե»:

Ռ ա զ մ ա վ ա ր ու թ յ ու ն

Վարչական շրջանում նախատեսվել են հետևյալ հիմնական ուղղությունները՝

- պաշտպանել շրջանի բնակչության ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը,
- բարելավել շրջանի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները,
- ապահովել շրջանի բնակելի շենքերի և այլ շինությունների պահպանումը,
- աջակցել շրջանի տարածքում փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը,
- հատուկ ուշադրություն դարձնել կրթության, մշակույթի և մարզական օջախների ներդաշնակ ու արդյունավետ գործունեությանը,

⁴⁸ Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2009, Վիճակագրական ժողովածու, էջ 193

➤ միջոցներ ձեռնարկել շրջանի անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ:

Սոցիալ-տնտեսական վիճակի գնահատում

Ժողովրդագրություն

Վարչական շրջանի բնակչությունը կազմում է մոտ 78,7 հազար մարդ, որից սոցիալապես ակտիվ կազմում են բնակչության 46,2%-ը, կանայք՝ 53,8%-ը, ծնվածների թիվը 2008թ.՝ 970 երեխա (մանրամասնությունները տե՛ս «Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ցուցանիշները» հավելվածը):

Կրթություն, մշակույթ և սպորտ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում են թվով 15 նախադպրոցական հիմնարկ, 14 հանրակրթական դպրոց, 1 հատուկ դպրոց խոսքի ծանր խանգարումներով երեխաների համար, 1 կերպարվեստի դպրոց, 2 արվեստի դպրոց, 2 երաժշտական դպրոց, 1 կենտրոնացված գրադարանային համալիր՝ երկու մասնաճյուղով, 1 մարզադպրոց և 1 մշակույթի տուն: Նախադպրոցական հիմնարկներում գործում են 61 խմբեր՝ 1700 հաճախելիությամբ: Դպրոցներում սովորում է 4796 աշակերտ: Վարչական շրջանի նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկներն ապահովված են մասնագիտական կադրերով, որոնց շնորհիվ հաջողվել է պահպանել այդ հիմնարկների աշխատանքային ռիթմը: Հոգաբարձուների խորհրդի հանձնաժողովում ներգրավված են վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի 3 ներկայացուցիչներ:

2010-2013թթ. նախատեսվում է մանկապարտեզների շենքերի տանիքների հիմնական կամ մասնակի վերանորոգման, ինչպես նաև լոկալ ջեռուցման համակարգեր անցկացնելու աշխատանքները:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործող Մինաս Ավետիսյանի անվան կերպարվեստի դպրոց հաճախում են 105 աշակերտներ, դպրոցն ունի թվով 12 աշխատող:

«Զեյթուն» մշակույթի տանը կատարվել են որոշակի աշխատանքներ. մասնակի վերանորոգվել է տանիքը, ընդհանուր թվով 9 սենյակ բերվել է աշխատանքային պայմանների, որտեղ գործում են արհեստագործական և ուսումնական 6 խմբակ՝ 120 աշակերտներով: Հիմնանորոգվել են մշակույթի տան սանհանգույցը և շենք մտնող ջրագիծը: Սակայն կենտրոնն ունի ամբողջական հիմնանորոգման կարիք:

Ս. Բարխուդարյանի անվան թիվ 2 արվեստի դպրոցում գործում են կերպարվեստի, պարարվեստի, թատերական և նոր տեխնոլոգիաներով երաժշտության ուսուցման լրացուցիչ դասարաններ: Արվեստի դպրոցում 26 մանկավարժների կողմից ընդհանուր առմամբ ուսուցանվում է 199 սան: Դպրոցն ունի վերանորոգման կարիք:

Ա. Տեր-Ղևոնդյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցում գործում են կերպարվեստի, պարարվեստի և շախմատի լրացուցիչ դասարաններ: Դպրոցն ունի 314 աշակերտ: 2008թ. հիմնանորոգվել է երաժշտական դպրոցի դահլիճը:

Թիվ 1 մարզադպրոց հաճախում է 504 սան: Դպրոցն ունի բարձր ցուցանիշներ, Ուկրաինայում կայացած Մարիոպոլ քաղաքի մարզադպրոցի ԱՊՀ երկրների պատանեկան միջազգային մրցաշարին դպրոցի հավաքական թիմը գրավել է առաջին տեղը: Վարչական շրջանի թիվ 44 դպրոցի սպորտդահլիճը հիմնովին վերանորոգվել է և ծառայում է սպորտի զարգացմանը:

Կենտրոնացված գրադարանային համալիրը սպասարկում է 4664 ընթերցողների՝ իր 123768 գրքային ֆոնդով:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Սոցիալական ապահովության գերակա խնդիրներից է՝

- ✓ *վարչական շրջանի բնակչության սոցիալական կարիքների հայտնաբերումը, ուսումնասիրումը, գնահատումն ու վերլուծությունը, սոցիալական պաշտպանության քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների ճշգրտումը,*

- ✓ վարչական շրջանի բնակչության զբաղվածության քաղաքականության իրականացումը,
- ✓ սոցիալական աջակցության քաղաքականության մշակումն ու դրա բազմազան ձևերի իրականացումը,
- ✓ շրջանի մակարդակում ընտանիքի սոցիալական իրավական և տնտեսական պաշտպանության մշակումն ու դրա իրականացումը,
- ✓ սոցիալական պաշտպանության ոլորտի պետական նպատակային ծրագրերի իրականացումը,
- ✓ միջազգային կազմակերպությունների (IRD, WORLD VISION, UMCOR, Առաքելություն Հայաստան, Գերմանական կարմիր խաչ, UOU մանկական գյուղեր ԲՀԿ, Առդա) հետ հետագա համագործակցությունը:

Վերը նշված ոլորտներին 2010թ. տրամադրվում է 527 153.2 հազ դրամ:

Առողջապահություն

Առողջապահության բնագավառում անհրաժեշտ է՝

- հիմնախնդիր դարձնել թոշակառու և հաշմանդամ ծերերի, ինչպես նաև սոցիալապես անապահով բնակչության առողջության վերականգման (նաև հիվանդանոցային) անհաժեշտ դեղորայքի ձեռքբերմանը, անվճար (պետպատվերով) բուժմանը, առողջարանային ուղեգրերի ձեռքբերմանը վերաբերող հարցերի լուծումը,
- ընտանեկան բժշկի ինստիտուտը կարևորագույն օղակ հանդիսանալ ընտանիքի առողջության, պաշտպանության մշակույթի քարոզչության, իրազեկման և ներդրման համար,
- լուծել 20000 բնակիչ ունեցող Քանաքեռ թաղամասի ընտանեկան բժշկական կենտրոնի ընդլայնման և նորագույն սարքավորումներով վերազինման խնդիրը,
- իրականացնել սոցիալապես անապահով քաղաքացիների՝ (միայնակ ծերեր, կենսաթոշակառուներից կազմված ընտանիքներ) անվճար հետազոտումն ու բուժումը:

Քաղաքաշինություն և հողօգտագործում

Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառի գերակայություններն են՝

- ✓ *Բնակֆոնդի պահպանումը,*
- ✓ *Միջթաղային ճանապարհների վերակառուցումը և վերանորոգումը,*
- ✓ *Մանկապարտեզների տարածքների բարեկարգումը և վերանորոգումը,*
- ✓ *Փողոցների արտաքին տեսքի ձևավորումը,*
- ✓ *Սյգիների, հանգստի գոտիների և բակերի վերջնական ձևավորման խնդիրները ,*
- ✓ *Հուշարձանների պահպանությունը,*

Վարչական շրջանի 2010-2013թթ. առաջնահերթ խնդիրների թվում են՝

- *Բնակելի շենքերի բակերի բարեկարգման աշխատանքների իրականացման համար նախագծերի կազմում,*
- *Վարչական շրջանի բնակելի թաղամասերի տարածքներում անհատական բնակարանային շինարարության համար հողհատկացումներ կատարելու վերաբերյալ առաջարկություններ,*
- *Ծանրաբեռնված փողոցներում երթուղային տրանսպորտի կուտակումները կանխելու նպատակով վերջնական գառների ձևավորման աշխատանքներին օժանդակում,*
- *Վարչական շրջանի տարածքում տեղադրված առևտրի և սպասարկումների ոլորտի, կրպակների և տաղավարների արտաքին տեսքի արդիականացման գործընթացի շարունակումը, կենտրոնական փողոցների վրա գտնվող չգործող և անհրապույր տեսք ունեցող ժամանակավոր օբյեկտների կազմաքանդում*

2010-2013թթ. նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները

- *Վերգետնյա անցման կառույցներ,*
- *Դ. Անհաղթի փող. թիվ 11 վարչական շրջանի աշխատակազմի շենքի և*
- *Հայաստանում Ֆրանսիական համալսարանի դիմաց վերգետնյա անցում,*
- *Ռուբինյանց և Պ. Սևակի փողոցների խաչմերուկում վերգետնյա անցում,*

- Ռուբինյանց փող., Զեյթունի կահույքի ֆաբրիկայի դիմաց վերգետնյա անցում,
- Ազատության պողոտա Լև Տոլստոյի անվան դպրոցի դիմաց վերգետնյա անցում,
- Պ. Սևակի պուրակ «Արծվաբուն Զեյթուն» հուշարձանի աշխատանքային նախագիծ,
- Մայրաքաղաքի հյուսիս արևելյան մուտքի իրականացում՝ «Հայրուսզագարդ» շենքի դիմացի հատված,
- Զ. Սարկավազի 14-րդ փողոցի վերջնամասում վթարային շենքերի բնակիչների համար նոր բազմաբնակարան շենքերի կառուցում,
- Թբիլիսյան խճուղու և Զ. Սարկավազի փողոցի հատման մասից նոր ճանապարհի կառուցում դեպի Զ. Սարկավազի 14-րդ փողոցի կառուցապատման գոտի:

Բնակարանային կոմունալ տնտեսություն

Շրջանն ունի 359 շենք, որոնցից երեքը 3-րդ կարգի վթարային են: Մեծ անհրաժեշտություն կա շենքերի գնահատման, ամրացման, վերանորոգման աշխատանքների: Ներկայումս վարչական շրջանում գործում է 22 համատիրություն: Սակայն փորձը ցույց է տալիս, որ գործող համատիրություններում շենքերի ֆիզիկական վիճակը չի բարելավվել: Համատիրությունների աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար մշակվել է համատիրությունների միավորումներ ստեղծելու համալիր ծրագիր:

Վարչական շրջանի 212 վերելակներից մեծ մասը վերանորոգվել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող բազմաբնակարան բարձրահարկ շենքերի վերելակների վերանորոգման ծրագրով:

Բնակչության կոմունալ-կեցադային պայմանների բարելավում

Շրջանի բնակչության կոմունալ-կեցադային պայմանների բարելավման նպատակով վարչական շրջանն իր մասնակցությունն ու աջակցությունը հանդես կբերի ջրամատակարարման ու ջրահեռացման, գազամատակարարման համակարգում բարեփոխումներ իրականացնելու գործում: Ջրամատակարարման բնագավառում խնդիր է դրվում բնակչությանը ապահովել բավարար քանակությամբ խմելու ջրով՝ նպատակ ունենալով ողջ տարածքն ապահովել շուրջօրյա ջրամատակարարմամբ: Նախատեսվում է նաև շրջանի գազամատակարարման աշխատանքները հասցնել ավարտին:

Կոյուղատարի կոլեկտորի բացակայության պատճառով շրջանի Քանաքեռի 13-րդ փողոցի և հարակից տների կոյուղագծերը միացված են 12-13-րդ փողոցներով անցնող ջրանցքին, Ջ. Սարկավազի 63-ից մինչև 71 տները և շրջակայքը ընդհանրապես չունեն կոյուղատար:

Արտաքին լուսավորություն

Վարչական շրջանի փողոցների և բակային տարածքների արտաքին լուսավորության ցանցն ամբողջությամբ վերականգնելու համար անհրաժեշտ է շարունակել գոյություն ունեցող ցանցի շահագործման և պահպանման, նոր ցանցերի կառուցման աշխատանքները ներքոնշյալ փողոցներում՝

- *Թբիլիսյան խճուղու սկզբից մինչև Կոկա-կոլա գործարանին հարող տարածք,*

- *Մ. Մելիքյան և Քանաքեռի 14-րդ փողոցները և մինչև 38, 40, 44 շենքերը տանող ճանապարհը,*

- *Քանաքեռի 9-րդ փողոց*

- *Քանաքեռի 6-րդ փողոցն իր նրբանցքներով՝ ներառյալ ս. Հակոբ եկեղեցու շրջակայքը,*

- *Ջ. Սարկավազի փողոցի 3-րդ փոկուղի,*

- Զ. Սարկավազի փողոցից դեպի կայարան երկաթգծի անցումը,
- Քանաքեռի սեփական տնատիրությունները՝ 10,11,12,13,15,16,17 փողոցները նրբանցքներով,
- Ֆանարջյան փողոցի 1-ին նրբանցք,
- Ֆանարջյան փողոցի 1-ին փակուղի,
- Ֆանարջյան փողոցի 2-րդ նրբանցք,
- Զ. Սարկավազի փող. 5-րդ և 6-րդ նրբանցքներ,
- Ռադիոկայմից դեպի 151 շ. տանող ճանապարհ,
- Գոգոլի փողոցի վերին հատվածը (Ռուբինյանց-Դրո),
- Նորաշխարհյան փողոցի վերին հատվածը,
- Շոլրոյան փող. վերին հատված (Դրո-Մ. Ավետիսյան 4-րդ փողոց),
- Պ. Սևակի պուրակ և 1/1,1/2,1/4 շենքեր,
- Փափազյան փողոց (թիվ 59 դպրոցից քոլեջ տանող ճանապարհ),
- Դրոյի 4-րդ նրբանցք:

Ճանապարհային տնտեսություն

Վարչական շրջանն ունի 78 փողոց, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 68.6 կմ, ճանապարհային ցանցի մակերեսը՝ 973194 հազ քմ:

Նախատեսվում է 2010-2013թթ. վարչական շրջանում իրականացնել փողոցների երթևեկելի և մայթերի ասֆալտբետոնե ծածկույթի ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

Նախատեսվում է նաև նորոգել փողոցների եզրաքարերը՝ տարեկան մոտ 280-300 գծմ:

Խնդիր է դրվում նաև վերանորոգել մայթերին հարող առաջնահերթ վերանորոգման կարիք ունեցող սիզամարգերը:

Առաջին անհրաժեշտության խնդիր է Ազատության 62-ից դեպի Լ. Տոլստոյի դպրոց, Դ. Անհալթի 11-ից դեպի Եվրոպական ակադեմիա և Ալմաստ գործարանի հարևանությամբ վերգետնյա անցումների կառուցումը:

Աղբահանություն և սանիտարական մաքրում

Նախատեսվում է ավելացնել կենցաղային աղբի և փոշու հավաքման ու տեղափոխման հաճախականությունը: Անհրաժեշտություն կա «Քանաքեռ-Զեյթուն Սան-մաքրում» ՓԲԸ-ում ավելացնել մեքենա-սարքավորումները, կառուցել և վերանորոգել 18 աղբահարթակ, փոխարինել մաշված աղբարկղերը, մաքրման տարածքը ավելացնել 288.745 քմ մակերեսով փողոց և 332.737քմ մակերեսով բակային տարածքներ:

Կանաչ տարածքների խնամք և ոռոգում

2010-2013թթ. նախատեսվում է վարչական շրջանում ընդարձակել կանաչ տարածքները: Ոռոգումն ապահովելու համար անհրաժեշտ է կառուցել 13620 գծմ, շահագործել և պահպանել 17053 գծմ խողովակաշար: Նախատեսվում է ծառերի երիտասարդացում, ծառատնկում, թփերի տնկում, ծաղկային տարածության ընդարձակում, ծառերի և թփերի բուծում՝ տարեկան 2 անգամ, սիզամարգերի խնամք: Նախատեսվում է նաև վարդանոցների հիմնում և միաշարք կենդանի ցանկապատի ստեղծում:

Առևտուր և սպասարկում

Շրջանի տարածքում գործում են առևտրի և սպասարկումների 165 օբյեկտներ, բենզինի և գազի լիցքավորման 11 կետեր: Հիմնականում կարգավորված են օբյեկտների տեղաբաշխման և արտաքին համաչափության հարցերը: Համայնքի բյուջեի սեփական եկամուտների զգալի մասը գոյանում է առևտրի և սպասարկումների օբյեկտներից գանձվող տեղական տուրքերից և նրանց զբաղեցրած հողի վարձավճարներից:

Վարչական շրջանի զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը մասնավոր բիզնեսի ընդլայնումն է, որը ներկա պահին նոր աշխատատեղեր ստեղծելու լավագույն բնագավառն է:

Մեր կողմից կատարված դիտարկումները ցույց են տալիս, որ առևտրի և սպասարկման օբյեկտների կենտրոնացման և խոշորացման պարագայում նվազում է

կրպակների և բացօթյա առևտրի կետերի թվաքանակը, որն իր հերթին բերում է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի և բացօթյա առևտրի թույլտվության համար գանձվող տուրքերի նվազմանը:

Բնակչության կենսամակարդակի աճի հետ ավելացել է նաև ժամը 24:00-ից հետո գործող զվարճանքի և հանրային սննդի օբյեկտների քանակը: Այս մասով աճը կանխատեսելի է:

Փոքր և միջին բիզնեսը խթանելու և հավասար մրցակցային դաշտ ձևավորելու համար գտնում ենք, որ ոգելից խմիչքների և ծխախոտի, ինչպես նաև բացօթյա առևտրի տուրքերի դրույքաչափերը անհրաժեշտ է կարգավորել, կախված նրանց վայրի գոտիականությունից, իսկ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի պարագայում՝ նաև առևտրի կետերի շրջանառության ծավալներից անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն:

Ներկայումս աշխատանքներ են տարվում և ձեռնարկվում միջոցառումներ բացօթյա առևտրի կանխարգելման ու սահմանափակման ուղղությամբ:

Չնայած այս ուղղությամբ կատարած աշխատանքներին, դեռևս կան բազմաթիվ ապօրինի կառուցած կրպակներ և այլ շինություններ, որոնք խաթարում են շրջակա միջավայրի տեսքը, առաջացնում տրանսպորտային և սանիտարահիգիենիկ խնդիրներ: Աշխատակազմի կողմից գույքագրվել են նշված օբյեկտները, կազմվել է կազմաքանդման իրատեսական ժամանակացույց և դրա մասին տեղեկացվել է այդ օբյեկտները շահագործողներին:

Բյուջեի համալրման համար կարևոր է նաև օրենքով չարգելված վճարովի ծառայությունների ներգրավումը:

Ելնելով շրջանի բնակչության սպասարկման կուլտուրայի բարելավման անհրաժեշտությունից, շրջանում նախատեսվում է կազմակերպել առևտրի և սպասարկումների հստակ կանոնակարգում և մշտական վերահսկողություն, ինչն անմիջականորեն կապված է բնակչության անվտանգության և սպառողների շահերի պաշտպանության հետ: Կարևոր է վարչական տույժերի կիրառումը: Նպատակահարմար ենք գտնում տույժերի խստացումը և այդ տույժերի գանձման առավել պարզ և արագ մեխանիզմի ներդրումը:

Ոլորտի արտահերթ խնդիրներն են՝

- Կարգավորել առևտրի և սպասարկման օբյեկտների տեղաբաշխումը շրջանի տարածքում՝ ուշադրություն դարձնելով նրանց հեռավորությանը կանգառներից, արտաքին տեսքին և համաչափությանը փողոցի կառուցապատմանը,
- Ավելացնել քաղաքակիրթ առևտրի և սպասարկման օբյեկտները,
- Կտրականապես արգելել փողոցային առևտրի, սպասարկումների և բենզինի լիցքավորման անօրինական և անշուք օբյեկտների տեղադրումը շրջանի տարածքում,
- Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի և Հիգիենիկ-հակահամաճարագային տեսչության աշխատակիցների հետ համատեղ կազմակերպել ստուգայցեր՝ առևտուրը կանոնակարգելու և սանիտարական նորմերն ապահովելու համար,
- Ապահովել բյուջեի մուտքերը շրջանի ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարների, տեղական տուրքերի ու վճարների գծով:

Գ Ո Վ Ա Ղ

Վարչական շրջանի տարածքում արտաքին գովազդի ստեղծման և տարածման, ինչպես նաև զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու հասարակության, գովազդ սպառողների, գովազդատուների, գովազդ արտադրողների, գովազդակիրների շահերին համապատասխան:

Շրջանում արտաքին գովազդը խթանելու և հավասար մրցակցային պայմաններ ստեղծելու համար նպատակահարմար ենք գտնում վայրի (գոտիականությունը), որը կբերի շրջանի տարածքում արտաքին գովազդի համաչափ զարգացման:

2009թ. 1 քմ տեղական տուրքի դրույքաչափը կազմում է 1.5 հազ. դրամ:

2010-2013թթ. շրջանում նախատեսվում է գովազդային վահանակների նոր տեղերի ավելացում:

Շրջակա միջավայրի պահպանություն

Շրջանում գործում է Խմելու ջրի մատակարարման և կոյուղու կենտրոնացված համակարգ: Այս ոլորտում սպասարկման անբավարար մակարդակը հետևանք է ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցերի ֆիզիկական մաշվածության: Խմելու ջրի մատակարարումը կատարվում է սահմանված ժամանակացույցով: Համայնքի 359 բարձրահարկ շենքերում կենցաղային աղբը տեղափոխվում է 217 մուտքերի աղբախցերից, իսկ մնացած 220 բազմաբնակարան շենքերի կենցաղային աղբը տեղափոխվում է համայնքի տարածքում հավասարաչափ տեղադրված 280 աղբարկղերից: Աղբահանման աշխատանքներն իրականացվում են «Քանաքեռ-Զեյթուն սանմաքրում» ՓԲԸ-ի կողմից՝ ամենօրյա ժամանակացույցով:

Աղբահանության տարեկան ծավալը կազմում է 23000տ, մաքրման ենթակա ընդհանուր տարածքը 684445 քմ է:

«Քանաքեռ-Զեյթուն սանմաքրում» ՓԲԸ-ում առկա մեքենա կազմը բաղկացած է 23 միավոր մեքենա-սարքավորումներից:

Վարչական շրջանի «Քանաքեռ-Զեյթուն բարեկարգում» ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է 65 հա տարածք, ոռոգման ցանցի երկարությունը կազմում է 13620զծմ:

Հարկային մուտքերի հավաքագրում

Շրջանի հողի հարկի հավաքագրումը կատարվել է 105,8%-ով կամ 2008թ. գերակատարումը կազմել է 2.0 դրամ: 2009թ. ինը ամսվա կտրվածքով հողի հարկի պլանը կատարվել է 89,6%-ով, գույքահարկինը՝ 105,4 %-ով:

Խնամակալություն և հոգաբարձություն

Վարչական շրջանում գործում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով, որի նախագահը վարչական շրջանի ղեկավարն է:

Կազմում ընդգրկված են սոցիալական ծառայության ներկայացուցիչներ, իրավաբաններ, մանկավարժներ, բժիշկներ, աշխատակազմի անդամներ:

Խնամակալության հանձնաժողովի մարմնի և մանկապարտեզների, դպրոցների, մանկատների, սոցիալական ծառայության, համատիրությունների միջև կա սերտ համագործակցություն:

Կատարվում է համատեղ բացահայտված, դժվարին իրավիճակում հայտնված անչափահասների կյանքի հետազոտություն, հավաքագրում և հարկ եղած դեպքում տեղավորում պետական խնամքի հաստատություն:

Դատական մարմիններում խնամակալության և հոգաբարձության մարմնի նեկայացուցիչը հանդես է գալիս որպես անչափահասի իրավունքների պաշտպան:

Վարչական շրջանում գործում է երկու մանկատուն՝ «Զատիկ» և «Մարի Իզմիրյանի» անվան: Սերտ համագործակցության շնորհիվ պարբերաբար կատարվում է հաշվառում, ընդունում և դուրսգրում:

Ստորև ներկայացնում ենք 2006-2009թթ.-ին հանձնաժողովի կատարած աշխատանքների աղյուսակը՝

Հ/Հ	Հանձնաժողովի կատարած աշխատանքի անվանումը	2006 թ.	2007 թ.	2008 թ.	2009 թ.
1	Գումարվել է նիստ	15	22	19	10
2	Խնամակալություն և հոգաբարձություն	57	51	63	45
3	Տեսակցություն	4	13	10	10
4	Գույքի նկատմամբ խնամակալություն	9	13	10	8
5	Որդեգրման հետ կապված հարցեր	-	12	9	5
6	Դատական գործեր	3	16	36	33

Խնամակալության մարմինը սերտ համագործակցում է «Երեխաների աջակցության կենտրոնի», «Հանրապետական №1 հատուկ կրթահամալիրի», «Վարդենիսի նյարդահոգեբուժական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի, այլ հոգեբուժական հաստատությունների, ինչպես նաև ոստիկանության անչափահասների գործերի բաժնի հետ: Կատարվում են այցելություններ ստացված դիմումների հետքերով:

Նախատեսվում են՝

- Հանդիպումներ և քննարկումներ մանկապարտեզների, դպրոցների, մանկատների տնօրենների, համատիրությունների նախագահների, սոց. ծառայության աշխատողների, ՆԳ աշխատակիցների հետ՝ ընտանեկան

դժվարին իրավիճակներում հայտնված անչափահասների բացահայտման և աջակցության նպատակով:

- Այցելություն խնամակալական ընտանիքներին՝ նրանց խնդիրների բացահայտելու և աջակցություն կազմակերպելու նպատակով:
- Ավելի սերտ դարձնել համագործակցությունը Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի «Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի» և քաղաքապետարանի «Երեխաների իրավունքների պաշտպանության» բաժինների հետ:

Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

Վարչական շրջանի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով աշխատակազմում կշարունակվեն կազմակերպվել շրջանի ղեկավարի և տեղակալների ընդունելության օրեր, որոնց շնորհիվ բնակչությունը հնարավորություն կունենա բարձրացնել իրեն հուզող հարցերը, մասնակցելու շրջանի կառավարմանն ու զարգացմանը:

Աշխատակազմի իրավաբանական բաժինը շրջանի քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների համար կկատարի իրավախորհրդատվական աշխատանք, կքննարկի նրանց իրավունքների խախտման վերաբերյալ գանգատներն ու դիմումները, կաջակցի նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում է քիմիական վտանգավոր 1 օբյեկտ («Երևանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ), հրդեհապայթյունավտանգ բենզալիցքավորման և գազալիցքավորման 9 օբյեկտ:

Շրջանն ունի 14 ապաստան՝ 4360 մարդ կարողությամբ, որոնցից 9-ը կարիք ունեն մասնակի վերանորոգման, իսկ 5-ը՝ կապիտալ: Բնակչության պատասպարման համար օգտագործվում են նաև բնակելի շենքերի և սեփական տների նկուղները:

Բնակչության ազդարարման համար վարչական շրջանում առկա են U-40 տիպի չորս և U-28 տիպի 3 շշակ:

Բնակչության ազդարարման համար ստեղծված է տարհանման 9 հավաքակայան (ՏՀԿ), որոնք տեղակայված են հանրակրթական դպրոցներում:

Բնակչության ազդարարման տեխնիկան հնացած է և կա անհրաժեշտություն այն դարձնել ժամանակակից, անհատական պաշտպանության միջոցներ չկան և արտակարգ իրավիճակ ստեղծվելու դեպքում կարող են ծագել լուրջ խնդիրներ:

Ե Զ Ր Ա Փ Ա Կ Ի Չ Դ Դ Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

Երևանի զարգացման 2010-2013 թվականների քառամյա ծրագրի իրականացման գրավականը կհանդիսանա քաղաքացիների վստահությունը վայելող և արդյունավետ գործող քաղաքային իշխանությունը, որը հիմնված կլինի իրավունքների և ազատությունների հարգման, ինչպես նաև քաղաքացիական հասարակությանն ակտիվ երկխոսության միջոցով կառավարման գործընթացներին մասնակից դարձնելու վրա:

Կապահովեն Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակական բարեփոխումները և հասարակության հետ հետադարձ կապի ամրապնդումը: Կներդրվի և արդյունավետ կգործի էլեկտրոնային կառավարման համակարգը (Հավելված 4 «Երևանի քաղաքապետարանի «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲ ընկերության ծրագիրը»), որը www.yerevan.am կայքի միջոցով բնակչությանը կապահովի համայնքային ծառայությունների մատուցում՝ նվազագույնի հասցնելով շփումը համայնքային ծառայողի ու քաղաքացու միջև և դրանով իսկ էապես կրճատելով նաև կոռուպցիոն ռիսկերը:

Կադրային ներուժի հետևողական ամրապնդումը համարելով գերակա խնդիր՝ կիրականացվեն նպատակային ծրագրեր՝ ուղղված համակարգում աշխատելու գրավչությանը, աշխատանքի որակի և համայնքային ծառայողների մասնագիտական մակարդակի բարձրացմանը, որոշումների նախապատրաստման, ընդունման և իրականացման արդյունավետ ընթացակարգերի ներդրմանն ու կիրառմանը:

Օրենսդրությանը և ժամանակակից պահանջներին համապատասխան կներդրվի արդյունավետ գործող համայնքային ծառայության համակարգ, կկանոնակարգվի համայնքային ծառայողների վերապատրաստման ու որակավորման գործընթացը, կապահովվի ատեստավորումների ու թափուր պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների անխափան ընթացքն ու թափանցիկությունը:

Ընտանիքը համարելով որպես ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ, կիրականացվի ժողովրդագրական ակտիվ քաղաքականություն, որն

ուղղված է լինելու ընտանիքի ամրապնդմանը, ծնելիության մակարդակի աճին, մայրության և մանկության պաշտպանությանը, կյանքի տևողության ավելացմանը, մահացության մակարդակի նվազեցմանը, արտագաղթի կասեցմանն ու ներգաղթի խրախուսմանը:

Իրականացվելու են հեռանկարային ծրագրեր, որոնք ուղղված կլինեն բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը, սոցիալական գործընկերության զարգացմանը, արդյունավետ և կայուն աշխատաշուկայի ձևավորմանն ու գործազրկության նվազեցմանը, անվտանգ և արժանապատիվ աշխատանքի ու կատարած աշխատանքի դիմաց համարժեք վարձատրությանը:

Նորաստեղծ ընտանիքների համար կմշակվեն և կներդրվեն բնակարանի ձեռքբերման հնարավոր պայմաններ: Կիրականացվեն նաև հաշմանդամների և այլ սակավաշարժ խմբերի համար շենքերի, շինությունների մատչելիությանն ուղղված միջոցառումներ:

Կմշակվեն և կիրականացվեն բնակչության անապահով և սոցիալապես առավել խոցելի խմբերի համար բժշկական ծառայությունների մատչելիության բարձրացման ծրագրեր՝ նրանց համար ապահովելով կանխարգելիչ, ախտորոշիչ և բժշկական օգնության ծառայությունների լայն շրջանակներ: Նպատակային ծրագրեր կիրականացվեն մոր և մանկան առողջության պահպանման, բնակչության հիգիենիկ և համաձայնակային անվտանգության ապահովման, հաշմանդամների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման և կայուն ընտանիքի ձևավորմանն ուղղությամբ:

Ուշադրության կենտրոնում է պահվելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, մասնավորապես, ծնողազուրկ երեխաների, հաշմանդամների, բազմազավակ ընտանիքների, պատերազմի վետերանների ու ազատամարտիկների ընտանիքների, փախստականների և տեղահանված անձանց սոցիալական պաշտպանվածության խնդիրները՝ ընդլայնելով սոցիալական նպատակային ծրագրերի իրականացումը:

Ժամանակակից կրթական համակարգ ունենալու նպատակով միջոցներ կձեռնարկվեն տեղեկատվական տեխնոլոգիաների և միջոցների կիրառման ոլորտների ընդլայնման, այդ ծառայությունների որակի բարելավման և

մատչելիության ապահովման ուղղությամբ, կկարևորվի ինտերակտիվ էլեկտրոնային կրթության զարգացումը, կներդրվեն ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգեր:

Կարևորելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության հարցերը, բնականոն զարգացման ու սոցիալական ինտեգրացիայի խնդիրները՝ անհրաժեշտ պայմաններ կստեղծվեն նաև այդ երեխաների կրթության համար:

Առաջնային ուղղություն կհամարվի մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրումը, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական շարունակական ուսուցման համակարգի զարգացումը և տնտեսությանը որակյալ աշխատուժով ապահովումը:

Կրթական ծառայությունների որակի բարձրացման առումով կարևորվելու է հանրակրթական դպրոցների ուսումնամեթոդական հենքի արդիականացումն ու դպրոցների շենքային պայմանների և ուսումնամեթոդական հենքի արդիականացումն ու դպրոցների շենքային պայմանների և ուսումնական գործընթացի ապահովման տեխնիկական միջոցների բարելավումը:

Հարկային բազայի ճշտումը և ընդլայնումը համարելով գործունեության գերակա ուղղություն՝ նպատակաուղղված աշխատանքներ կիրականացվեն հարկային եկամուտների հավաքագրման կայուն աճի ապահովման, հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների կատարման և կամավորության սկզբունքի ներդրման համար, որը հիմք կհանդիսանա Երևանի իրատեսական բյուջեի ձևավորման համար (Հավելված 1 «Երևանի 2010թ. բյուջե»):

Երևանի բյուջետային ծրագրերը կհամաձայնեցվեն կառավարության երկարաժամկետ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի, մասնավորապես, աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրերի նպատակների հետ: Երևանի քաղաքապետարանը բյուջետային քաղաքականության առավել կարևոր խնդիր է համարում համայնքային եկամուտների կանխատեսելիությունը: Այն կապահովի բյուջետային գործընթացների թափանցիկությունն ու բյուջեի կատարման ընթացքի նկատմամբ հսկողության աստիճանի բարձրացումը:

Քաղաքաշինության բնագավառում Երևանի զարգացման հեռանկարային ծրագրերի գերակա նպատակը ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումն ու քաղաքաշինական միջոցներով բնակչության կյանքի որակի հետևողական բարելավումն է, որպես քաղաքաշինության կարևորագույն նպատակ՝ «կանաչ քաղաքաշինություն» սկզբունքի արմատավորումը: Կմշակվեն և կներդրվեն քաղաքաշինության բնագավառում ներդրումային գրավչության և գործարար միջավայրի բարելավմանը նպատակաուղղված համալիր ծրագրեր՝ նպատակ ունենալով Երևան քաղաքի համաչափ տարածական զարգացման առանջահերթության սկզբունքի արմատավորումը:

Երևանի տնտեսական զարգացման հիմնախնդիրներից կլինեն գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը: Այդ նպատակով արդյունավետ համագործակցություն կծավալվի ՀՀ Սփյուռքի նախարարության, Ազգային մրցունակության խորհրդի, Զարգացման հայկական գործակալության, Զբոսշրջության զարգացման հայկական գործակալության, գործարարության աջակցության խորհրդի, այլ կառույցների հետ:

Խրախուսվելու է կորպորատիվ կառավարման համակարգի ներդրումն իրական հատվածում: Արդյունավետ պետական, տեղական ինքնակառավարման և մասնավոր հատվածի կառավարման համակարգի ձևավորումը և կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորումը Երևան քաղաքում ենթադրում է՝ Երևանի ինքնակառավարման համակարգում կորպորատիվ կառավարման կանոնների և առավելագույն արժեքի ստեղծման սկզբունքի որդեգրում, որը նշանակում է կառավարել քաղաքի հիմնական միջոցները գործարարության օրենքներով և հետևողականորեն բարձրացնել գործունեության արդյունավետությունն ու թափանցիկությունը: Ցանկալի արդյունքների հստակ ձևակերպումը և դրանց նկատմամբ կատարողականի գնահատումը պետք է դառնա հաշվետվության հիմնական կանոնը:

Երևանի քաղաքապետարանն ապահովելու է Երևանի զարգացման 2010-2013 թվականների ծրագրի կատարման ընթացքի տեղեկատվության ազատությունը, մարդու իրավունքները սահմանող ակտերի իրացումը:

Քաղաքային իշխանությունների աշխատանքը լինելու է առավել բաց: Քաղաքացիները հնարավորություն են ունենալու սպառիչ տեղեկանալ Երևանի քաղաքապետարանի գործունեության մանրամասների, այդ թվում՝ հողերի աճուրդների, մասնավորեցման ծրագրերի, բացօթյա վաճառքի կազմակերպման, գովազդային վահանակների տեղադրման և այլ կարգերի վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանին ուղղված դիմումների վերլուծությամբ հրատարակվելու են հանրամատչելի տեղեկագրքեր, որոնք հստակ կպարզաբանեն, թե որևէ խնդրի լուծման համար քաղաքացին ինչ քայլեր պետք է կատարի, ինչ փաստաթղթեր ներկայացնի, որքան ժամանակ է սահմանված դիմումի քննարկման և պատասխանի համար, որքան կարող են լինել ՀՀ իրավական ակտերով սահմանված վճարումները և այլն:

Մշակվելու են Երևանի քաղաքապետարանում և նրան ենթակա կառույցներում բնակչության սպասարկման հստակ կանոններ, որոնք հնարավորություն կտան մատուցել քաղաքակիրթ ծառայություններ: Կանոններից շեղումը կհանգեցնի պատասխանատվության:

Քաղաքապետարանի գործունեության առաջնահերթությունը լինելու է հրապարակայնությունը, որ իրականացվելու է անհրաժեշտ բոլոր լծակների ներառմամբ:

Կարևորվելու է տեղական ինքնակառավարման ինստիտուտների կողմից մատուցվող ծառայությունների որակի զգալի բարձրացումը և դրանց հսկողության հարցում հասարակության հետ հետադարձ կապի ապահովումը:

Կառավարման համակարգի փոփոխություններն ու դրանցից բխող բարեփոխումներն, ինչպես նաև Երևանի կարգավիճակի փոփոխությունն ու Երևանի ավագանու ինստիտուտի ձևավորումը թույլ կտան ապահովել Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական ոլորտի աստիճանական զարգացումը, ինչը կբերի ոչ միայն մայրաքաղաքի սոցիալական և տնտեսական վիճակի բարելավմանը, այլ նաև կունենա Հայաստանի հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման մեջ իր ուրույն և կարևոր դերը՝ ապահովելով երկրի դինամիկ և համաչափ զարգացումը:

ԵՐԵՎԱՆԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆԻ ԸՍՏ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Տողի N	Եկամտատեսակները	Հոդի սմի N	Ընդամենը	(հազար դրամներով)	
				այդ թվում՝	
1	2	3	4	վարչական մաս	ֆոնդային մաս
5	6				
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		52,045,700.4	50,945,700.4	3,518,988.6
	այդ թվում՝				
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7100	9,949,590.0	9,949,590.0	-
	այդ թվում՝				
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	4,743,090.0	4,743,090.0	-
	այդ թվում՝				
1111	Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		4,043,690.0	4,043,690.0	-
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		699,400.0	699,400.0	-
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	3,402,750.0	3,402,750.0	-
	այդ թվում՝				
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		3,402,750.0	3,402,750.0	-
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	7145	1,363,750.0	1,363,750.0	-
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրքեր	71452	1,363,750.0	1,363,750.0	-
	այդ թվում՝				
1132	ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) թույլտվության համար որից՝		152,525.0	152,525.0	-
1133	աա) Հիմնական շինությունների համար		152,525.0	152,525.0	-
1135	բ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար		28,150.0	28,150.0	-
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար		16,000.0	16,000.0	-
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		239,800.0	239,800.0	-
1138	ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար		37,825.0	37,825.0	-
1139	զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար		62,750.0	62,750.0	-
1140	է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակխաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար		39,300.0	39,300.0	-

(հազար դրամներով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1141	ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար		1,000.0	1,000.0	-
1142	թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		775,400.0	775,400.0	-
1143	ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար		7,400.0	7,400.0	-
1145	ժա) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար		3,600.0	3,600.0	-
1150	1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	7146	440,000.0	440,000.0	-
	այդ թվում՝				
1151	Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր		440,000.0	440,000.0	-
	այդ թվում՝				
1152	ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար		60,000.0	60,000.0	-
1153	բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար		380,000.0	380,000.0	-
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՂՆԵՐ	7300	15,528,261.7	14,428,261.7	1,100,000.0
	այդ թվում՝				
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7331	14,428,261.7	14,428,261.7	-
	որից՝				
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ		9,095,427.9	9,095,427.9	-
1254	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		62.5	62.5	-
	այդ թվում՝				
1255	բա) Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ		62.5	62.5	-
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		5,332,771.3	5,332,771.3	-
1260	2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7332	1,100,000.0	-	1,100,000.0
	այդ թվում՝				
1261	ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		1,100,000.0	-	1,100,000.0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7400	26,567,848.7	26,567,848.7	2,418,988.6
	այդ թվում՝				
1320	3.2 Շահաբաժիններ	7412	167,000.0	167,000.0	-
	այդ թվում՝				

(հազար դրամներով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հորվ սծի NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
1321	Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասսահանումներ (ԲՅՆՅՄՅՆՅՆՅՆ)		167,000.0	167,000.0	-
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	824,791.9	824,791.9	-
	այդ թվում՝				
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		642,362.0	642,362.0	-
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		182,429.9	182,429.9	-
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	7421	24,008,032.3	24,008,032.3	-
	այդ թվում՝				
1341	Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրագուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր		20,000.0	20,000.0	-
1342	Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ		23,988,032.3	23,988,032.3	-
1350	3.5 Վարչական գանձումներ	7422	221,900.0	221,900.0	-
	այդ թվում՝				
1351	Տեղական վճարներ		71,900.0	71,900.0	-
1352	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ		150,000.0	150,000.0	-
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից	7431	100,500.0	100,500.0	-
	այդ թվում՝				
1361	Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ		100,500.0	100,500.0	-
1390	3.9 Այլ եկամուտներ	7451	1,245,624.5	1,245,624.5	2,418,988.6
	այդ թվում՝				
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		-	-	2,418,988.6
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		1,245,624.5	1,245,624.5	-

ԵՐԵՎԱՆԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ
 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆունդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	52,845,700.4	50,945,700.4	4,318,988.6
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5,955,637.7	4,898,955.4	1,056,682.3
				այդ թվում՝			
2110	01	1	0	<i>Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ</i>	5,349,067.1	4,652,384.8	696,682.3
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական	5,349,067.1	4,652,384.8	696,682.3
2130	01	3	0	<i>Ընդհանուր բնույթի ծառայություններ</i>	41,695.6	41,695.6	-
				որից՝			
2131	01	3	1	Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	41,695.6	41,695.6	-
2150	01	5	0	<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ</i>	360,000.0	-	360,000.0
				որից՝			
2151	01	5	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	360,000.0	-	360,000.0
2160	01	6	0	<i>Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)</i>	204,875.0	204,875.0	-
				որից՝			
2161	01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	204,875.0	204,875.0	-
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	15,942.0	15,942.0	-
				այդ թվում՝			
2220	02	2	0	<i>Քաղաքացիական պաշտպանություն</i>	3,500.0	3,500.0	-
				որից՝			
2221	02	2	1	Քաղաքացիական պաշտպանություն	3,500.0	3,500.0	-
2250	02	5	0	<i>Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)</i>	12,442.0	12,442.0	-
				որից՝			
2251	02	5	1	Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	12,442.0	12,442.0	-
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2,617,977.6	5,888,288.7	(3,270,311.1)
				այդ թվում՝			
2420	04	2	0	<i>Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն</i>	211,200.0	11,200.0	200,000.0
				որից՝			
2421	04	2	1	Գյուղատնտեսություն	4,200.0	4,200.0	-
2424	04	2	4	Ոռոգում	207,000.0	7,000.0	200,000.0
2450	04	5	0	<i>Տրանսպորտ</i>	16,852,068.9	5,653,996.8	11,198,072.1
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	14,045,037.9	3,037,996.8	11,007,041.1
2455	04	5	5	Խողովակաշարային և այլ տրանսպորտ	2,807,031.0	2,616,000.0	191,031.0
2490	04	9	0	<i>Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)</i>	(14,445,291.3)	223,091.9	(14,668,383.2)
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	(14,445,291.3)	223,091.9	(14,668,383.2)

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	5,481,403.2	4,892,742.9	588,660.3
				այդ թվում՝			
2510	05	1	0	Աղբահանում	3,233,916.6	3,229,919.1	3,997.5
				որից՝			
2511	05	1	1	Աղբահանում	3,233,916.6	3,229,919.1	3,997.5
2530	05	3	0	Շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքար	29,225.8	29,225.8	-
				որից՝			
3531	05	3	1	Օդի աղտոտման դեմ պայքար	29,225.8	29,225.8	-
2560	05	6	0	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	2,218,260.8	1,633,598.0	584,662.8
				որից՝			
2561	05	6	1	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	2,218,260.8	1,633,598.0	584,662.8
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	11,133,194.1	8,990,958.0	2,142,236.1
				այդ թվում՝			
2610	06	1	0	Բնակարանային շինարարություն	1,323,622.0	23,622.0	1,300,000.0
				որից՝			
2611	06	1	1	Բնակարանային շինարարություն	1,323,622.0	23,622.0	1,300,000.0
2630	06	3	0	Ջրամատակարարում	6,024,827.4	6,024,827.4	-
				որից՝			
2631	06	3	1	Ջրամատակարարում	6,024,827.4	6,024,827.4	-
2640	06	4	0	Փողոցների լուսավորում	1,989,390.5	1,696,000.0	293,390.5
				որից՝			
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	1,989,390.5	1,696,000.0	293,390.5
2650	06	5	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	10,000.0	5,000.0	5,000.0
				որից՝			
2651	06	5	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	10,000.0	5,000.0	5,000.0
2660	06	6	0	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1,785,354.2	1,241,508.6	543,845.6
				որից՝			
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1,785,354.2	1,241,508.6	543,845.6
2700	07	0	0	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	221,000.0	160,000.0	61,000.0
				այդ թվում՝			
2710	07	1	0	Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	160,000.0	160,000.0	-
				որից՝			
2711	07	1	1	Դեղագործական ապրանքներ	160,000.0	160,000.0	-
2760	07	6	0	Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	61,000.0	-	61,000.0
				որից՝			
2761	07	6	1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	61,000.0	-	61,000.0
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՑԹ ԵՎ ԿՐՈՆ	3,603,228.5	1,387,406.5	2,215,822.0
				այդ թվում՝			
2810	08	1	0	Հանգստի և սպորտի ծառայություններ	2,166,210.1	50,388.1	2,115,822.0
				որից՝			
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	2,166,210.1	50,388.1	2,115,822.0
2820	08	2	0	Մշակութային ծառայություններ	1,437,018.4	1,337,018.4	100,000.0
				որից՝			
2821	08	2	1	Գրադարաններ	257,659.9	257,659.9	-
2821	08	2	2	Թանգարաններ և ցուցասրահներ	121,924.2	121,924.2	-
2823	08	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	69,124.9	69,124.9	-

Տարի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	675,122.0	575,122.0	100,000.0
2825	08	2	5	Արվեստ	275,660.1	275,660.1	-
2827	08	2	7	Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	37,527.3	37,527.3	-
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	22,026,039.5	20,501,140.5	1,524,899.0
				այդ թվում՝			
2910	09	1	0	Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն	8,647,722.0	8,353,741.0	293,981.0
				որից՝			
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	3,867,151.0	3,573,170.0	293,981.0
2911	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն	4,780,571.0	4,780,571.0	-
2920	09	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն	10,319,618.1	10,319,618.1	-
				որից՝			
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	7,567,710.1	7,567,710.1	-
2922	09	2	2	Միջնակարգ(ըրիվ) ընդհանուր կրթություն	2,751,908.0	2,751,908.0	-
2930	09	3	0	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	273,814.4	273,814.4	-
				որից՝			
2931	09	3	1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	273,814.4	273,814.4	-
2950	09	5	0	Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	1,533,467.0	1,530,967.0	2,500.0
				որից՝			
2951	09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	1,533,467.0	1,530,967.0	2,500.0
2960	09	6	0	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	1,251,418.0	23,000.0	1,228,418.0
				որից՝			
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	1,251,418.0	23,000.0	1,228,418.0
				այդ թվում՝			
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	561,764.8	561,764.8	-
				այդ թվում՝			
3050	10	5	0	Գործազրկություն	26,874.5	26,874.5	-
				որից՝			
3051	10	5	1	Գործազրկություն	26,874.5	26,874.5	-
3070	10	7	0	Մոցիական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	327,384.5	327,384.5	-
				որից՝			
3071	10	7	1	Մոցիական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	327,384.5	327,384.5	-
3090	10	9	0	Մոցիական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	207,505.8	207,505.8	-
				որից՝			
3091	10	9	1	Մոցիական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	207,505.8	207,505.8	-
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	1,229,513.0	3,648,501.6	-
				այդ թվում՝			
3110	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	1,229,513.0	3,648,501.6	-
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	1,229,513.0	3,648,501.6	-

ԵՐԵՎԱՆԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԵՐԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐՆ՝ ԸՍՏ
 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

(հազար դրամներով)

Տողի N	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հորվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		52,845,700.4	50,945,700.4	4,318,988.6
	այդ թվում՝				
4050	Ա. ԸԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ^ա	x	48,526,711.8	50,945,700.4	-
	այդ թվում՝				
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ	x	3,652,686.0	3,652,686.0	-
	այդ թվում՝				
4110	ԴՐՄՍՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ	x	3,127,365.4	3,127,365.4	-
	որից՝				
4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	2,863,077.0	2,863,077.0	-
4112	-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	264,288.4	264,288.4	-
4130	ՓՄԱՏԱՑԻ ՄՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ	x	525,320.6	525,320.6	-
	որից՝				
4131	-Մոզիայական ապահովության վճարներ	4131	525,320.6	525,320.6	-
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՆՔ ԲԵՐՈՒՄ	x	25,167,906.2	25,167,906.2	-
	այդ թվում՝				
4210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	x	4,760,740.1	4,760,740.1	-
	որից՝				
4212	-Էներգետիկ ծառայություններ	4212	174,105.8	174,105.8	-
4213	-Գոմունայ ծառայություններ	4213	4,247,850.0	4,247,850.0	-
4214	-Գապի ծառայություններ	4214	172,079.7	172,079.7	-
4216	-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	166,704.6	166,704.6	-
4220	ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ	x	97,151.6	97,151.6	-
	որից՝				
4221	-Ներքին գործուղումներ	4221	5,151.6	5,151.6	-
4222	-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222	92,000.0	92,000.0	-
4230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՆՔ ԲԵՐՈՒՄ	x	16,013,089.8	16,013,089.8	-
	որից՝				
4231	-Վարչական ծառայություններ	4231	3,714.0	3,714.0	-
4232	-Համակարգչային ծառայություններ	4232	16,680.0	16,680.0	-
4233	-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233	5,040.0	5,040.0	-
